Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Լակ
1031

2013

23 w

Virgile.

L'Éneide nouvelle traduct[ion]
en vers ann. ancien par Mgr.
L. Hurmuz, œuvre
posthume 1 vol.
Venice 1878 in 1[2]

3 fr 50 c.

20

№ 1158

Ш 5

п 3

№ 839.

15 JUN 2006
19 NOV 2010

Պ. ՎԻՐԳԻԼԵԱՑ ՄԱՐՈՆԻ

# Ե Ն Է Ա Կ Ա Ն

87
Կ - 68
1031

Պ· ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՆԻ

# ԵՆԷԱԿԱՆ

№ 1158.

ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ի ԶԱՓՍ ՀԱՅԿԱԿԱՆՍ

ՅԱՐՀԻԱԳԱՏԻՒ

ԳԵՐ· ԵԳՈՒԱՐԴԱՅ ՀԻՒՐՄԻՒԶ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

1158
839
БИБЛIОТЕКА ... ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ Ս· ՂԱԶԱՐՈՒ

1878

1031-2013
Հ.Բ. 1026
4016
39

# ԱԶԴ

Քաղցր և կարևոր պարտք են մեզ և զառաջիկայս զայս, մի 'ի վերջին և յընտրելագոյն երկասիրութեանց մերոյս բազմերախտ Գեր. Եղուարդայ Հիւրմիւզ, զնորա Թարգմանութիւն ասեմ հրաշարուեստ քերթուածոյն Պ. Մ. Վիրգիլեայ ածել 'ի վայելս մերազնեայց։

Տեսցեն իմաստուն քննադատք 'ի սմա զոգցես զօրինակագրին շնորհ և վայելչութիւն ըստ ընիկ նախնեացս մերոց տաղաչափութեան. որոց թողեալ ինքնին մանր գիտել և յայս վաստակ զճարտարութիւն գրչի արհեստաւոր Թարգմանչիս, և զարմանալ ընդ փափուկ և գաշնակաւոր ոճ հայ շարաբանութեանն խառն ընդ կորովոյ, 'ի տես գրեաթէ ութնամենի հասակին, չմնայ մեզ այլ ինչ ասել՝ քան խրախուսել և ես զհամազգիս 'ի սէր և յուսումն հանճարոյն Վիրգիլեայ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՂՔ

# ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵՍՅ ՄԱՐՈՆԻ

# ԵՆԷԱԿԱՆԻՆ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ենէականն դիւցազներգութիւն յԵնէասայ տրովացւոյ ընկալաւ զկոչումն, այն որ Անքիսեայ էր որդի ծնեալ յԱստղկանէ, և փեսայ Պրիամու: Իբր ոչ եթէ համօրէն զամենայն արութիւնս Ենէասայ բովանդակելով քերթուածոյս, այլ զմի ևեթ յայնցանէ զգլխաւորագոյնն, այս ինքն է զհաստատել նորա յԻտալիա զպետութիւնն: Ի շնորհս հռովմէական ազգին գրեաց Վիրգիլիոս զգիրս զայս, և մանաւանդ ազգատոհմին Յուլեայ, որ 'ի Յուլոսէ կամ յԱսկանեայ յորդւոյն Ենէասայ և Կրեւսայ դստերն Պրիամու առնոյր զսկիզբն: Արդ 'ի սոյն ազգատոհմ 'ի Յուլիոսէ կայսերէ 'ի քեռւոյ իւրմէ խառնեալ էր Ոկտաւիանոս հզօրն 'ի ժամանակին յայնմիկ, այն որ նուաճեալ զԵգիպտոս, և զՄարկոս Անտոնիոս և զԿլէոպատրա սպանեալ, ինքնակալ էր 'ի վերայ հռովմայեցւոց առ հասարակ:

Սկիզբն գրոցս արար Վիրգիլիոս 25 ամօք նախ քան զԹուականութիւն Փրկչին, 'ի վախճան 724 ամի Շինութեան քաղաքին Հռովմայ, 'ի քառասներորդի ամի տիոց իւրոց, և յերեսներորդի երրորդի ամի կենացն Ոկտաւիանոսի, 'ի ժամանակի յորժամ ձմերէրն սա յԱսիա ոչ ինչ հեռի յԵփրատայ: Ուստի յայտ իսկ է Վիրգիլեայ ընդ կատարել զՄշակականն անդէն ձեռնարկեալ յԵնէականն,

և վաստակեալ յայն զամս իբր երկոտասան, այս ինքն է մինչև ցկատարած կենաց իւրոց, որպէս վկայէ զայս Սերուիոս: Եւ որպէս 'ի Հովուականսն նմանող եղև նա Թէոկրիտեայ, և 'ի Մշակականսն Եսիոդեայ, այսպէս և յԵնէականին նմանող լեալ Հոմերի, 'ի վեցեակ յառաջին գիրսն զՈդիսականն կալաւ իւր օրինակ, և 'ի յետին վեցեակսն զԻլիականն: Իսկ թէ յաղթեաց արդեօք նմին, 'ի յերկբայս վէճն է առ գիտունս. վասն որոյ թողումք վարժապետաց քերթողականին զբաղդատութիւն երկոցունց գլխաւոր քերթուածոց դիւցազնականաց, զԻլիականին Հոմերի և զԵնէականին Վիրգիլեայ, թէ ո՛ քան զո՛ գերազանցիցէ. զոր պարագայք դարուց չև ևս կարացին սահմանել:

Այլ ընդ Կուինտիլեայ խոստովանելի է զի 'ի միումն յաղթէն հանճար և բնութիւն, իսկ 'ի միւսումն արուեստ և կիրթ ախորժակք:

Անցք Ենէականին, մերկ 'ի յարակից վիպացն, այս են: Ենէաս, 'ի հրձիգ առնել Յունաց զՏրովադա, մնացորդօք իւրոցն նաւարկէ՝ դէմ եդեալ յԻտալիա, ուստի նախնիքն նորա սերեալ համբաւէին: Յետ աղէտ աղէտ արկածից ընդ ծով և ընդ ցամաք կրելոյ՝ հասանէ անդր, և հիւրընկալի մարդասիրապէս 'ի Լատինեայ՝ որ 'ի ժամանակին յայնմիկ թագաւորէրն անդ, և հանդերձի փեսայանալ նմին՝ հարսանեօք դստեր նորա Լաւինեայ: Բայց Տուրնոս որդի Դաւնեայ արքային Հռուտուլաց վաղ իսկ տարփացեալ առնուլ իւր 'ի կնութիւն զԼաւինիա, հակառակի Ենեայ, և նեղէ զնա ծանր պատերազմաւ. մինչև ապա յաղթահարեալ 'ի նմանէ սպանանի, թողեալ 'ի նա զդուստր և զժառանգութիւն թագաւորութեանն Լատինոսի:

Արդ զի ըստ պայմանաց դիւցազնականին քերթուածեան մի է 'ի սմա գործողութիւնն և երևելի, այն յայտ իսկ է: Այլ զամբողջութիւն նորին ժխտէ Մափէոս Վեգիոս, կարևոր համարելով երեքտասաներորդ իմն չարայարել գիրս յայն, և յաւելուլ 'ի նմա զսուգ Հռուտուլեանց, զկոծ 'ի վերայ Տուրնեայ, զհարսանիս Ենէասայ, և զամբառնալ նորա 'ի կարգս դից ըստ խոստմանն Դիոսի առ Աստղիկ, թէ

. . . . . . . . . . . . . . . Եւ ընկալցիս
Դու զնա երբեմըն ծանրաբեռն ի կողոպուտ արևելից
Յերկինս աներկբայ. [1]

զոր և հաստատէ ապա յասելն.

. . . Զի Ենէաս կացցէ ընդ դիս
Ի յերկինս. [2]

Բայց յանիրաւի ստգտանէ Մափէոս յայսմիկ զքերթողն. զի յետ ժառանգելոյ Ենեայ զԼաւինիա, և զպետութիւն Լատինոսի մահուամբն Տուրնեայ, որպէս ասէ իսկ նա 'ի մեռանելն,

Քո հարսն է արդ Լաւինիա, [3]

այլ ամենայն հանդէսք և կոծք ոչ միայն չէին ինչ կարևորք, այլ և մնոտիք իսկ և անպատկանաւորք:

Տևողութիւն իսկ անցիցն ըստ չափոյ է. զի թէպէտ և զամս իբր ութ տևեն իրքն, այլ քերթողն զյետինն ևեթ ամի առնու, զառաջինսն բովանդակեալ 'ի դրուագին, պատմելով Դիդէի զանցեալսն:

Վէպքն յաւելեալք 'ի գլխաւոր անցս իրացն՝ 'ի նախադրութիւնս միոյ միոյ 'ի գրոցն բացատրեալ կան. այլ առ ուղիղ ածելոյ զկարգ ժամանակին, նախ զերկրորդ և զերրորդ գիրսն իմանալի է, ապա զառաջինն, ապա զչորրորդն, և ապա զայլսն որ 'ի կարգին: Զի զբնականն կարգ, զոր պարտ էր ունել պատմագրի, փոխէ քերթողն ճարտարութեամբ:

1 Ա. 276: 2 ԺԲ. 805: 3 ԺԲ. 948:

Հանդոյցն, որ զերկոտասանեսին զգիրսն զօդէ 'ի մի, սկսանի լուծանիլ մենամարտիւն Ենեայ ընդ Տուրնեայ։

Դրուագք 'ի նմա են՝ խորհուրդն Հերայ կորուսանելոյ զնաւատորմն տրովական, ապաստանել Ենեայ առ Դիդէ, և սէր նոցա ընդ միմեանս, պատմութիւն հրդեհին Տրովադայ, և այլքն առ հասարակ մասունք քերթուածոյն՝ որ յարակիցք են գլխաւոր անցիցն։ Քանզի մարթ իսկ է 'ի բաց բառնալ զայն ամենայն յանցից իրացն, այլ ոչ է մարթ կապտել զայնոսիկ 'ի քերթուածոյ անտի առանց եղծանելոյ զայն։

Իսկ բարք և բնաւորութիւնք յԵնէականին անփոփոխ ամենայն ուրեք պահին, բնականք և ախորժելիք։ Եւ իմաստք 'ի նմա և բացատրութիւն այնպէս գեղեցիկք և անթերիք, զի ըստ այսոցիկ մասանց գերազանցագոյն 'ի քերթողս զՎիրգիլ խոստովանելի է։

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ 'ի 1845 ամին։

# ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՆԻ

# ԵՆԷԱԿԱՆԻՆ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Յայտ առնէ զառաջարկութիւնն, կարդայ զՄուսայն, և սկսանի յեօթներորդ ամէ արշաւանացն Ենեայ զպատմութիւնն. յորում ամի 'ի նաւել տրովացւոց 'ի Սիկիլիոյ յԻտալիա, յարուցանէ Հերա մրրիկ ընդ ծով, յաղերս անեալ զԵւողոս: Պոսիդոն ցածուցանէ զմրրիկն. և նաւք Ենեայ եօթն զերծանին 'ի նաւահանգիստն Ափրիկեայ, այլոցն ամենեցուն ցիր և ցան լեալ: Բողոքէ Աստղիկ առ Արամազդ վասն արկածիցն 'ի վերայ հասելոց որդւոյն. սփոփէ զնա Արամազդ, յայտնելով նմա ըզհանդերձեալ բախտ Ենեայ և զզաւակի նորա: Առաքի Հերմէս ողոքել զդիս կարքեդոնացւոց ընդ տրովացիս: Պատահէ Աստղիկ Ենեայ 'ի կերպարանս որսորդի 'ի լրտեսել նորա զերկիրն ընդ Աքատեայ. և ցուցեալ նմա զհանգամանս գաւառին և զԴիդեայ դշխոյի, ծածկեալս զնոսա ամպով իջուցանէ 'ի Կարքեդոն: Անդ Ենէաս մնեալ 'ի մեհեանն, նախ զպատերազմն տրովական տեսանէ նկարեալ. և ապա հասանէ ուր բազմէրն Դիդէ, և աղերսաւորք առ նմա կային ուղեկիցք իւր՝ զորս համարէրն կորուսեալս ծովահեղձոյց: Յայտնէ զանձն Ենէաս, և հիւրընկալի մարդասիրապէս 'ի դշխոյէն: Կոչի 'ի ձեռն Աքատեայ Ասկանիոս, և փոխանակ նորա՝ դաւով Աստղկան՝ գայ Երոս, կապել տարփանօք զոգւոյն Դիդէի ընդ Ենեայ: Մեկնին գնան ամենեքին 'ի սրահն արքունի 'ի խնջոյս:

# ԵՆԷԱԿԱՆ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Որ նըրբենի եղեգամբ դաշնակելով երբեմըն երգ,
Եւ հրաժարեալ յանտառաց, յորդորէի շուրջ զարտորէս
Ի հլութիւն՝ թէպէտ անյագ՝ շինականին, վաստակելով
Երկրագործաց հաճոյ երկ, զարիականս այժմիկ զահեղ

Ըզզէնս և զայրն երգեմ, որ նախ ի տրովական սահմանաց
Յիտալիա ճակատագրեալ գայր և յափունըս Լաւինեայ.
Բազում ընդ ծով և ընդ ցամաք յածեալ վեհիցըն սաստիւ,
Եւ ի Հերայ անմըռունրի ի չարայուշըն ցասմանէ,
Նա և յոգունս ի մարտի վիշտըս կըրեաց, մինչև կառուց
Քաղաք և ած ի Լատիոն ըզդիս, ուստի ազգըն Լատին
Եւ նախահարքը կացին ալբեանք, և բարձրամուր Հռովմայ պարիսպք:
Ինձ Մուսա դու՝ լեր պատճառացըն թելադիր, վասն ո՞ր ի դից
Յասուցելոյ՝ յայնքան արկածըս դըժընդակ տառապանօք
Գերազանցեալն այր ի կրօն վարեալ գընայր, և դըշխոյն դից
Հիմ դառնացեալ. իցէ՞ իսկ հեռ այնքան ի սիրտ երկնաւորաց:
Էր Կարքեդոն քաղաք նախնի, և գաղթական անդ տիւրացի
Բնակէր հանդէպ Իտալիոյ՝ հեռի ի դրանցըն Տիբերի,
Ճոխ և գոռ ի պատերազմ. հաճոյ Հերայ զայն աւանդեն
Լեալ առաւել քան ըզՍամոս և քան զերկիր առհասարակ.
Անդանօր նըմա կառք և անդ եղեն զէնք և զըրահք.
Եւ անդըստին, եթէ հրամանք ճակատագրին ներէին,
Խորհէր և գուն գործէր իշխան առնել ազգաց զայն դիցուհին:
Բայց էր լըւեալ զի ի տրովեան սերեալ զաւակ արենէ՝
Զամուրս ուրեմըն քակելոց էր տիւրականս. և ապա ազգ
Ծագաց երկրի իշխեցող և խրոխտ ի մարտ հանդերձէր գալ

Ի կործանումըն Լիբեայ, այսպէս Պարկաց կամեցեալ զայս:
Այսր զանգէտ կրօնեան դըշխոյն, զառաջին մարտն ընդդէմ Տրովայ
Ընդ միտ ածէր. չեւ իսկ պատճառք ցասմանն անկեալ էին յուշոյ
Դառնակըսկիծք, խոր ի սըրտին պահէր վըճիռըն Պարիսի,
Նախատինք անարգութեան գեղոյն և ազգըն զըժպըհի,
Եւ պատանւոյն Գանիմեդեայ յափըշտակումըն պատուոյն:
Եւըս քան զեւըս սըքիմք ծանրացասումըն դիցուհին
Ըզմընացուածըս Տրովայ ալըեալս ի պոյ դանայեցւոց
Եւ ոխերմին Աքիլլեայ՝ Լատինէ ի բաց մերժէր.
Թափառէին ծով ի ծովէ վարեալք սաստիւ ճակատագրին:
　Այն ինչ զըւարթք ըզփըրփրադէզ հերձեալ զալիսըն պըղընձեաւ,
Առ սիկուլեան երկրաւ յանդունդըս պարզէին առագաստ,
Առ մըշտակիր վէրըս սըրտին՝ զայս ի մըտի խորհէր Հերա.
Ընդէ՞ր իցէ ի սկըսեալ գործոյս լինել ինձ ձեռընթափ,
Զընկըրկել յետս ի բաց զարքայն տեւկրեանց յիտալիոյ,
Եւ հրամանաց ճակատագրին էր տալ տեղի յաղթահարեալ:
Ըզնաւատորմն արգիւացւոց կարաց հըրկէզ առնել Պալլաս,
Եւ խորասոյզ ըզնոսա յալիս ծովու ընկըղմանել
Վասըն մեղաց ոյիլեանըն միայնոյ մոլեգնելոյն
Էասայ, և զըարկացայտ յամպոց շանթիւ Արամազդայ
Արկեալ ցըրուեաց նա ըզկայմս, ալէկոծեալ հողմովք ըզծով,
Եւ զբոցաշունչն ընդ խոց կողին մըրըրկածն հար ի սուր ժայռ.
Իսկ ես որ դից նազիմ դըշխոյ, քոյր և տիկին Արամազդայ,
Այս քանի ամք են ընդ միում ևեթ ազին պատերազմիմ.
Ո՞ հրամանացն այսուհետև Հերայ երկիր երբեք պագցէ,
Ո՞ աղերաւոր զոհ ի բագին իւր մատուսցէ:
　Զայսոսիկ ի սըրտի յեղյեղելով աստուածուհին
Գայ զայրացեալ յԷւոլիա ի հայրենիս անդր ամպրոպաց.
Եւ ի դադար խեռ հարաւոց, ուր լայնատարր ի քարայրի
Սաստէ հողմոց գիմամարտից արքայն Էւող, և նըւաճէ
Զահեղագոչ մըրրիկս՝ ի բանտ և ի շըղթայս սանձահարեալ:
Նոքա զազխաւքըն մըրմըռան ցասմամբ, մինչէ լեառն ահագին.
Գաւազանաւ ի ձեռին բազմի Էւող բարձր ի դղեկի,
Ողոքել ըզզայրոյթ, մեղմել զոգիս. ապա թէ ոչ,
Փոթորկէին ընդ այերս ըզհետ իւրեանց ազխազխելով
Հողմք ըըռնաշունչք զերկիր ըզծով և զյարկ երկնից անդընդախոր:
Զայս կասկածեալ ամենակալն Հայր ի նըսեմ ըզնոսին
Ցայրըս փակեաց, և լերինըս մեծամեծըս քարաժայռս
Արկ ի վերայ, և թագաւոր կացոյց նոցին՝ յուխտ անյեղլի
Նըւաճել ըզնոսա, և սանձարձակըս մերթ թողուլ:



Առ նա յայնժամ աղաչաւոր երթեալ Հերա եհեղ աղերս.
Քեզ, Էւողէ, եւ անմահիցըն Հայր արքայն մահացուաց
Իշխանութիւն ընկճել զալիս և ամբառնալ մըրըրկածս.
Ազգ ինձ ոսոխ ընդ տիւրենեան նաւէ ընդ ծով, յիտալիա
Զիլիոն և ըզթերափըս իւր պարտեալըս բերելով.
Տո՛ւր զօրութիւն հողմոց, ընկլո ըզլաստափայտըս խորասոյզ,
Կամ զգիլս այլուր ընդ ալիս արկ, և ցըրուեա ըզդիակունս:
Են եօթնևրեակք ինձ երկեակ յաւերժահարսանց չըքնաղագեղք,
Զեւ ի նոսա գեղանին տաց քեզ ի հարսն ըզԴիոպէ՝
Անլոյծ զօդիւ կապեալ ընդ քեզ՝ զոլ կենակից քեզ յամս յամայր,
Եւ որդւոց ըզքեզ հայր կացուցանել գեղաւորաց:
　Յեւ զայս Էւող. Քեզ՝ ո՛վ դըշխոյ՝ որ ինչ կամիդ անկ է գիտել,
Ինձ ըզպատուէրս առ ի քէն ընկալեալ պարտ է կատարել.
Քեւ, որպիսի և իցէ, իշխանութիւնս ինձ այս տուաւ.
Քեւ գաւազանս ի Դիայ, և ճաշակից դիցըն բազմել,
Իշխել մըրըրկաց և ամպրոպաց: Ասաց, ու ի տէգն իւր գալարուն
Եհար ըզկող խոռոչացեալ ժայռիցն, և հողմք գումարտակեալ
Հրոսեն ընդ ո՛ր գըտանեն ելս, և ընդ երկիր փոթորկեն.
Շընչեն ընդ ծով և ի խորոց անդընդոց խուռն ի միասին
Հիւսիս և հարաւ և ափրիկեանն ամպրոպայոյզ
Ըզլեռնաձև ի ծովափունս անդըր զալիսըն թաւալեն:
Անդ ճիչ մարդկան, և ճռչմանց անդ ճարճատիւն. յափըշտակեն
Զերկին և զտիւ ամպք յաչաց. որոտան գունդք, բազմի ի ծով
Թուխ գիշեր. հուր խիտ ընդ խիտ փայլատակէ ընդ եթեր.
Եւ զաւաջեաւ տեկրացւոց արկածքն ըզմահ տան նըկատել:
　Ըզցողանի մասունք մարմնոյն հարան Էնեայ, և զերկոսին
Ձեռս ի յաստեղս ուղերձեալ՝ Ո՜հ երանի, ասէ, և բիւր
Երանի, որոց եհաս դէմ յանդիման հայրենեաց
Առ պարիսպըս բարձրաբերձըս Պերգամայ մեռանել վաղ.
Ընդէ՞ր և ինձ չեղև, հըզօրդ ի դանայեանըս Տիդիոէ,
Անկանել ի քումմէ աջոյդ ի դաշտս Իլիոնի,
Ուր քաջն Հեկտոր նետահար յԷաքիդեայ, և մեծն անկաւ
Սարպեդոն, ուր Սիմոյիս ընդ կոհակօքըն թաւալէ
Յափըշտակեալ զարի արանց ասպար ըզգէն և սաղաւարտ
Եւ զդիակունըս կորովիս: Եւ ընդ ողբոցըն մըռընչեալ
Ի հիւսիսոյ հար ըզկայմիցըն թըռչարանըս փոթորիկ.
Ամբառնայլին մինչև յաստեղս ի վեր ալիք. բեկոյն թիակք,
Առաջք ի բաց ասխեթին, կողք ի բախիւն ալեաց մատնին.
Սեպանայ լեառըն ջրակուտակ, կէսք կան ի ծագըս կոհակաց,
Այլոց բանան ալիք զերկիր՝, եռան յորձանք խառն ընդ աւազ:

Առեալ զերիս բաղխէ հարաւ ի քարաժայռըս թաքթաքուրս
Որ բագինք յԻտալաց ժայռքն այնոքիկ յորջորջին,
Զանարգիլ ցըցուեալ քամակ ցըմըկանունս ալեաց ի վեր.
Եւ զերեսին այլս ի խորոց վարեալ մըղէ Եւր ի ծանծաղ,
Աղիողորմ ի տեսիլ, կոծէ ի խրուտս անդր և ի հուն,
Ածէ զնոքօք աւազակոյտ. և զմին ետես ինքն Ենէաս
Յառաջ կուսէ մինչև ի խելըս յահագին ալեաց հարեալ,
Զայն որ բարձեալ լիկիացիս և զմըտերիմն ածէր Որոնտ:
Նաւապետն ի կայիցըն գըլխիվայր կործան անկեալ,
Եւ զնաւն երիցըս պըտուտկեալ գիւրեաւ յալեաց՝ յորձանք սաստիկք
Ընկըլնուն. և լայնալիր ծովուն ի ծուփըս նըշմարին
Աստ անդ նուաղունք ի լող տախտակք և զէնք արանց, գանձ տրովական:
Վաղ զօղնափայտն Իլիոնեայ ամրակառոյց, վաղ իսկ և զայն՝
Յորում արին էր Աքատ, և զծերունւոյն Ալեթեայ նաւ,
Եւ զԱբասայն պարտեաց հըմեռն. և բնաւք լուծմամբ մածմանց կողիցն
Եւ զըստին՝ զոսոխ հեղեղըն ընդ հերձս ի ներքս ընդունէին:
Ըզգաց Պոսիդ զահեղագոչ մըրրկին ծովուն և զկոծ ալեաց,
Ըզմըրրիկն ըստահակ, և զվեր ի վայր խորոցն յուզմունս.
Ծանրացաւումն ի վեր ըզգեմս առեալ ընդ ծուփըս տեսանէ
Ըզնաւատորմն Ենէասայ շուրջ ընդ անդունդըս ցան և ցիր,
Ըզտրովացիս նըկուն յալեաց, ի վայր զերկինըս կործանեալ:
Զեր ինչ զանխուլ յեղբօրէն զայրոյթ Հերայ և նենգութիւն.
ԶԵւր և Զեփիւռ ձայնէ առ ինքն, ասէ. Ուստի՞ այդքան ի ձեզ
Յանդըգնութիւն, հողմք, ի խառնել զերկին զերկիր ինքնահրաման,
Եւ իշխել զայդպիսի յարուցանել վըրդով ընդ ծով.
Հասցէ պատիժ. այլ առ ժամս առցէ աղմուկ ալեաց դադար,
Ծանրագոյն լիցի ապա ընդ եղեռանըդ տալ վրէժ.
Ապրեցարո՛ւք արդ երթայք, տուք արքային ձերում պատգամ.
Ոչ իւր՝ այլ ինձ իշխանութիւն և եռարձէն մեծասաստ
Ետ բախտն ընդ ծով. թող ճոխասցի ինքն յայրքունիս՝ ուրանօր դուք,
Եւրէ, բնակէք՝ տիրապետել յանհեթեթ ժայռս, ի շըրջափակ
Բանտիդ հողմոց: Ասաց, և վաղ ցածոյց ըզծով ուռուցիկ,
Եւ զբազմահօծ վարեալ ամպրոպըս փախըստեայ՝ դարձոյց զարև:
Կիմոթոյէ և Տրիտոն ի միասին սուր ի ժայռէն
Մըղէն ըզնաւըս յեցք ի բաց, երեքժանեաւն ինքն ըզնոսա
Ամբառնայ, մեղմէ զալիս, հերձու զարձակն աւազուտ.
Թեթև ի թռիչ սահելն գընան անիւքն ընդ ծայրըս մըկանանց:
Որպէս ի խռան ամբոխին յորժամ ըստէպ գըրգռի պայքար,
Զայրագին մոլի խուժանըն սինլըքոր, և սկըսանին
Թռանել ընդ օդ խանձողք և վէմք, և ընձեռէ զէնըս զայրոյթ,



Եթէ երբեք վեհ ոք կրօնիւք և վաստակովք երևի անդ,
Լըռէ աղմուկն, յակճիռըս կայ ամբոխն ի լուր. ինքն ողոքէ
Ըզըրթամբք զոգիս, ամոքէ զսիրտ. այսպէս ծովուն ցածեաւ դըղորդ
Այն ինչ ի ծով ակնարկեաց Հայր և զձիս ընդ ջինջ վարեաց երկին,
Արձակեալ զարփիաճեմ թեթև կառացն երասանակ:
Յայնժամ ենեանք վաստակաբեկք ի ծովափունըս մերձակայս
Ի սահմանըս Լիբիոյ շըրջէն զընթացըս ճեպ ի ճեպ:
Է վայր ի ծոց երկայնաձիգ, ուր նաւակայս գործէ կըղզի
Երկոքումբք հանդիպակայ ծայրիւք, և ծուփք անդ երրադարձ
Ի խորոց անդընդոց դիմեալ ի ժայռըս բեկանին.
Սարք երկուստեք յառնեն բարձունք և սեպք կըրկին երկնադիտակք,
Ոյց ընդ քըլաւ շուրջ ի բաց լըռեն ալիք հողմախաղաղ.
Հովանի վըանաձև ի ճօճելոց անդ ի մայրեաց
Եւ ահարկու ըստուերք նըսեմ ծառաստանին անդր անկանին.
Ընդ ժայռիւք սեպացելովք ի հանդիպոյ է քարանձաւ,
Աղբիւր ի նմա ականակիտ և յապառաժ վէմըս բազմոց
Յաւերժհարսանց օթևան. նաւք տաժանեալք անդ ոչ առնեօք
Կայկային, և ոչ խարիսխ ունի ի կեռ ճանկ ըզնոսին.
Անդ տորմըղին Ենեայ մնացորդ քամեալ եօթնեակ ամրացան նաւք.
Եւ անձկաւէտք երկրի իջեալ՝ ըզցանկալին կալան զաւազ
Տրովացիք, և զծովաթաց արկին զանդամս ի ծովեզր:
Նախ Աքատ յորձաքարէ ստուցեալ կայծ, և տերև չոր
Շուրջ արկեալ առ ի ճարակ, բոց ի լուցկիս յարուցանէ.
Խոնջք յարկածիցն ապա զտամուկ յալեաց Դեմետր և զդեմետրեան
Ածեալ ըզկահըս՝ զարմըտին ապրեալ մըրկեն քարիւ մանրեալ:
Բայց Ենէաս ելեալ ի ժայռ պարադիտէր ըզծով ի բաց,
Թերևս ուրեք զԱնթէոս կամ ըզկապիս հողմակոծեալ
Կամ զերկթիս փըռիւգացիս, և բարձր ի խելս ըզկայիկեայ
Տեսցէ ըզզէնս. այլ նաւ և ոչ մի տեսանէ. բայց նըշմարէ
Ի ծովեզերս անդ եղջերուս երիս ի ճեմ, և զհետ նոցա
Զոլէր երկայն անդէոյ ի հովիտս անդ ճարակաւոր:
Ըզկայ եառ, և բուռն անդէն եհար յաղեղն, և ի սրաթև
Նետս ի կապարճ՝ զոր մըտերիմն իւր Աքատէս բարձեալ բերէր.
Եւ զհեղինակըս նախ հօտին տապաստ եարկ, որք բարձր ի գլուխ
Կրէին զեղջերըսն բազմոստեայս. ապա զռամիկըն խուճապեալ
Ընդ հովանուտ մայրիս նետիւք, ոչ դադարեաց՝ չև յաղթական
Զուգաթիւ նաւուց իւրոց եօթըն շաղիղ յմր ըզգետնեալ:
Անտի դիմէ ի նաւակայս, մասն ընկերաց հանէ բնաւից.
Ապա զգինին, որով լըցեալ էր բարելաւ գիւցազն Աքատ
Ըզթակոյս ի չու առնել նոցա յափանցըն Տրինակրեայ,

Բաշխէ զայն . և ըղձախիծ այսպէս սրտից նոցա սփոփէ .
Նըժդեհակիցք իմ, չեմք անյուշք չարեացն ընդ մեզ ցարդ անցելոց ,
Ծանրագունից տարայք , տացի և այսց ի դից կատարած .
Դուք ի Սկիլլայն կատաղի և ի հաչող ժայռս ի խորոց
Մատերուք , և զԿիկլոպեան քարաժայռից առէք ըղփորձ .
Զօրացարուք , և ըզտըխուր յանձնէ ի բաց դիք արդ զերկիւղ .
Փաղցըր և զայս լեցի Թերևըս մեզ երբեմն յիշատակել :
Ընդ այսքան դէպս և ընդ արկածս անցեալ դիմեմք ի Լատիոն ,
Ուր մեզ անդորր աւետեն կայս Ճակատագիրք . լեցի օրէն
ԸզՏրովադայ անդ վերըստին կանգնել զաւթառ . երկայնամիտ
Լերուք՝ բարեաց ակընկալ : Եւ զայս շըրթամբք չափ ասացեալ՝
Կեղծէր խրախոյս ի դէմս , ընկճեալ ըզկարեվէր հոգս ի սըրտի :
Նոքա յաւարըն ձեռնարկեն ի խորովյս առաջիկայս .
Զերծուն ըզմորթս ի կողից , և մերկանան ըզփորոտին .
Կէսք ի մասունըս կըտրատեն , չամփրեն կոտորըս դողդոջունս .
Այլք պղընձի ի ծովեզեր զետեղեալ սան , բոց ի ներքոյ
Արծարծանեն . և ճաշակաւ ըզզօրութիւնսըն կազդուրեալ ,
Տարածանին ի գալարուոջ վաղեմեաւ յեղջք անապակաւ
Եւ ճենճերոտ մըսեղեաւ . այն ինչ մերժեալ խորտկօք ըզքաղց
Եւ ըզսեղանս ածեալ ի բաց , յածին զըրոյցք ձիգ ի խընդիր
Կորուսելոց ընկերաց , տարտամք ընդ յոյս և ընդ երկիւղ ,
Արդեօք կեն՞ն , թէ հասեալ նոցա վախճան՝ ոչ ևս օգնէր
Զայն տալ նոցին . և մանաւանդ բարեպաշտիկն անդ Ենէաս
Մերթ ըզքաջին Որոնտեայ ողբայր յանձին զարկածըս , մերթ
ԶԱմիկեայ , եր զի զԼիկեայ աղիողորմ Ճակատագիր ,
Ըզկորովին ողբայր Գիաս , և ըզԿլովանթըն կորովի :
Վախճան եղև , և հայեցեալ Արամազդայ շուրջ ի բարձանց
Ընդ ծով առագաստեալ և ընդ երկիրըս ծովափնեայս ,
Եւ ի բնակեալ ազգս ի նոսա , եկաց յերկնից բարձր ի կատար
Ակընկառոյց ի սահմանս արքայութեանըն Լիբիոյ :
Առ նա Աստղիկն ի ծանունս յուզեալ ի հոգս , և գեղափայլ
Աչք իւր հարեալ յարտասուս՝ , խօսի տըխուր . Ո՛վ որ յաւերժ
Իշխանութեամբ տիրապետես իրաց մարդկան և անմահից ,
Եւ ի շանթիս քո ըզնոսա ահաբեկես , զի՞նչ իմս առ քեզ
Յանցեաւ ո՞ճիր Ենէաս , և զի՞ չարիս տրովացիք
Գործեցին , զի ընկճելոցըն ցարդ յայնքան աղետից
Փակին ոլորտք երկրի ի մուտս Իտալիոյ . դու խոստացար
Ի տեւկրական արենէ ի պարագայս ամաց ընդ ծով
Եւ ընդ ցամաք ամենակալս յարուցանել հռոմայեցիս .
Եւ զի՞նչ ըզքո , Հայր , ըզհրաման յեղաշըրջեաց . սովին յուսով



Ըզտըխուր աւերած և զկործանումըն Տրովադայ
Ըսփոփէի , վըճիռ ընդդէմ Ճակատագրին կըշռեալ վըճռոյ :
Արդ նոյն զըրեարն ընկճեալ յայնքան պատահարաց հալածէ բախտ .
Ե՞րբ դու , արքայդ մեծ , արասցես տառապանացըն կատարած .
Զերծ Անտենոր ի միջոյ աքայեցւոց փախըստական
Ի լիւրիկեան եմուտ ի ծոց , և անվըտանգ ի միջերկրայս
Լիբուռնեայց , վազս առեալ ըզՏիմաւեայ աղբերակամբ ,
Ուստի ընդ ինըն ելս հոսէ աչեղ լերինըն դըրընդմամբ ,
Կարկաջահոս խոխոջելով ըզդաշտս ի սփիւռ ծածկեալ յալիս .
Եւ կարաց նա զՊատաւիոն կառուցանել անդ ըզքաղաք ,
Եւ զտեւկրացւոց յարոյց գահ . և սահմանեալ ազգին անուն ,
Ըզտրովական կախեաց անդ զէնս , և հանդարտէ արդ յանխըռով
Խաղաղութեան . իսկ մեք զաւակք քո , հրաւիրեալք յերկնից դըշխեակ,
Նաւակործեալ մերժիմք ի յեւս ընդդէմ յափանց Իտալիոյ ,
Մատն ի զայրոյթ միայնոյն . վի՞շտ անպատում . ա՞յս իցեն վարձք
Պաշտեալ կրօնից , ա՞յսպէս ըզմեզ դարձուցանես անդրէն ի գահ :
Հայրն անմահից և մահացուաց ժըպտեալ ի դէմս , որով պարզին
Երկինք , ամպրոպք փարատին , համբուրէ զդուստրըն , բարբառի
Առ նա զայս . Մի՛ երկընչիր ո՛վ կիթերեանըդ տիկին ,
Անշարժ քոյոցըդ կացցէ բախտ , և տեսցես դու ըզխոստացեալ
Նոցա պարիսպըս լաւինեանս և ըզքաղաք . յառնես ի վեր
Տարցիս ըզվեհըն Ենէաս , կացցէ վըճիռն իմ անյեղլի .
Նա հեռագոյն (քանզի ըզսիրտ քո այս յուզեալ տագնապէ հոգ)
Ահա զգաղտնիս Ճակատագրին կանխաւ այժմէն քեզ ցուցանեմ .
Պատերազմունս ինքըն ծանունըս մըղեսցէ յԻտալիա ,
Նըւաճեսցէ ազգս ամեհիս , դիցէ նոցա կարգ և պարիսպ ,
Մինչև տեսցեն ընդ լըծով ձմերունք երրեակ ըզՀըռուտուլս ,
Եւ երրակի տեսցէ ամառն ըզնա իշխան ի Լատիոն :
Իսկ պատանեակն Ասկանիէ , որ արդ Յուլոսըն կոչեցեալ ,
Եւ յորջորջէր նա Իլոս մինչդեռ կանգուն կայր Իլիոն ,
Ինքնակալեալ մինչև արփին ամսակըշիռ հոլովեսցէ
Պարունակ մեծ երեսներեակ , փոխեսցէ զգահն ի Լաւինեայ ,
Եւ զօրութեամբ մեծաւ զերկայնըն կառուցէ նա զԱլբա :
Անդ հեկտորեանըն զաւակ հրամայեսցէ երեքարիւր
Ամըս լի . մինչև երկնեալ յԱրեայ դըշխոյ քըրմուհին
Իլիա երկուորեակս ածցէ ի լոյս . անտի Հռոմուլ
Կացցէ իշխան ազգին՝ բերկրեալ ի դայեկին խարտեաշ ծածկոյթ .
Նա ըզպարիսպըն կանգնեսցէ արիական , և յանուանէ
Իւրմէ կոչումըն կալցի հռոմայեցին . ոչ ժամանակ
Կարգեմ իրացն և ոչ սահման , տամ պետութիւն անզրաւական :

Աննըւէրն իսկ Հերա, որ այժմ ըղձով և ըղցամաք
Դըղըրդէ ահիւ և զերկին, ի լաւագոյն շըրջեալ խորհուրդ՝
Ցայնժամ ընդ իս խնամեսցէ զՀռոմայեցին, զաշխարհակալն
Որեար և զազգ պատմուճանեալ. այսպէս հաճոյ ինձ այս գոլով:
Ի հոլովել ապա ամաց՝ գալով գայցէ ժամանակ,
Զի զՓթիա ընդ լըծով արկցէ զաւակն Ասարակեան
Եւ զՄիկէնըս քաջազունս, և պարտելոց արգիւացւոց
Տիրեսցէ. ի տրովական ապա պայծառ ազգատոհմէ
Ծընցի Կեսար, որ պետութիւն մինչև ցալիս ովկիականս
Մինչև յաստեղս համբաւ նորա տարածեսցի, և Յուլիոս
Առ ի մեծէն Յուլեայ կալցի նա ըզկոչումն. և ընկալցիս
Դու զնա երբեմըն ծանրաբեռն ի կողոպուտ արևելից
Ցերկինս աներկըւղ, և կարդասցի ինքն եւս ուխտիւք:
Լըռեսցեն պատերազմունք, դարք յայնժամ խիստք ամոքեսցին.
Հաւատք ամբիծ և Եստա, և Հըռեմոս եղբարբն հանդերձ
Կուիրինեաւ իշխեսցէ. դըրունք դըժնեայք պատերազմի
Ամրափակեալ ըղցցին ի նիգըս երկաթեայս, և ամպարիշտ
Զայրոյթ ի ներքս անդ բազմեալ ի շեղջակոյտ անգութ զինուց
Պըղընձեօք ուժգնապինդ ըզձեռս ի յետըս կաշկանդեալ,
Մըռընչեսցէ արիւնըռուշտ շըրթամբք ի մռունչ զարհուրելի:
Ասէ, և զոյգ ընդ բանին հրեշտակ յերկնից զառ ի Մայեայ
Ծընեալ զաւակն արձակէ, զի տեկրացւոց ասպընջականք
Նորոյն Կարքեդոնի բացցին պարիսպք բացցին սահմանք,
Եւ մի՛ անգէտ ճակատագրին Դիդէ ըզդէմ կալցի նոցին:
Նա թեւճակօք թեւոցն ի թիռ ընդ անոլորտ այերս ի սոոր
Հասեալ յեզերըս Լիբիոյ, ի կատարումն անէ զպատգամս.
Եւ յակնարկել վեհին՝ ի բաց դընեն փիւնիկք զամեհութիւն.
Եւ մանաւանդ ի գըշխոյն միտք անխըռով և բարեգութ
Նորոգի սիրտ առ տեկրացիս: Բայց երկիւղածն անդ Ենէաս
Ըզցայգն ողջոյն յոգնավարան յուզեալ ի ծուփըս խորհըրդոց,
Ի ծագել կենդանարար առաւօտունն հաստատեցաւ
Ելանել և զանծանօթ զերկիրըն զայն՚հետազօտել,
Յո՛ր ափունս էր հողմավար անկեալ. մարդկա՞ն թէ երեոց
Էր այն կայեան, զի տեսանէր խոպան՚զերկիրն և անմըշակ,
Եւ լըրտեսեալ շուրջանակի՝ ըստոյգ՚իւրոցն անել զըրոյց:
Կացոյց ըզնաւս ի խոռոչ ժայռից ի ծոց անտառախիտ
Ամրածածուկ ի սոսկալի նըսեմաստուեր հովանեաց,
Եւ ուղեկից միայն ընդ իւր առեալ զԱքատ, մինչդեռ գընայր
Ճօճելով կըրկին ի ձեռըս գեղարդունս ըստուարասուր,
Նըմա ի մէջ անտառին մայրն աւանիկ ել ընդ առաջ,



Ի կերպ օրիորդի դէմք իւր և ձորձ, զինաւորեալ
Հանգոյն կուսի սպարտուհւոյ, կամ զուգատիպ Արպալիկեայ
Թրակուհւոյն, որ ի վարել մըտրակ ի կուշտ երիվարի՝
Քան զԵւր երագաթև գերազանցէ արշաւասոյր:
Զի կրէր ի կախ զուսոյ աղեղըն դիպաձիգ որպէս որսորդ,
Թողեալ ըզվարսըս իւր հողմոյ, և մերկ ի ծունկըս խորշաքաղ
Ըզլայն հանդերձըն հանդըրձեալ զօդիւ ի վեր. և յառաջեալ՝
Ով դուք, ասէ, պատանիք, տեսի՞ք ի քերց իմոց աստ զոք
Դեգերեալ՝ կապարճ ընդ մէջ խայտաբըղէտ լուսաննեաւ,
Կամ արգելլով ի գոշին ըզփըրփրերախ կընճի զարշաւ,
Ուսուցէք ինձ: Աստղիկըն զայս. և առ Աստղիկն այսպէս որդին.
Զիք ինչ ըզքերցըդ քոց լըւեալ իմ կամ տեսեալ. այլ զի՛նչ ըզքեզ
Կոչեցից, ո՛վ օրիորդ, զի չեն քո դէմք մահկանացուի,
Եւ ոչ բարբառ քոյին մարդոյ. աստուածուհիդ դու աներկբայ,
Արդեօք փեբեա՞յ իցես քոյր, թէ ոք յազգէ յաւերժհարսանց.
Ո՛ ոք ի դից և իցես, լեր բարերար, թեթևացո
Ըզվիշտըս մեր. յո՞ր ծագ երկրի և ընդ որո՞վ մեք աստ երկնաւ
Յածիմք վարեալք ի հողմոց, և յահագին կոծեալք յալեաց,
Անտեղեակք վայրաց երկրիս և որոց աստ բնակեն մարդիկ.
Յոգունք քեզ զոհք ի ձեռաց մերոց զենցին առ սեղանովք:
Աստղիկն անդրէն. Ոչ արժանի զիս այդքանոյ ունիմ պատուոյ.
Օրիորդաց տիւրացւոց կապարճ ի յուս բարք են կըրել,
Եւ կօշկօք ըզսըրունըս ծիրանեօք զինավառել:
Դու զպետութիւն փիւնիկեցւոց ըզտիւրացիս տեսանես աստ
Եւ զդաստակերտ Ագենորի. այլ Լիբիոյ են աստ սահմանք,
Ազգ ամեհի ի պատերազմ. Դիդէ այժմիկ դուստըր Ծուրայ
Տիրէ աստ, յերեսաց եղբօր իւրոյ փախըստական.
Երկայն ոճիրք են, երկայն ելք. ընդ ծայրս իրացն անցանեմ:
Էր Սիքէոս այր նորա ճոխ քան զամենայն փիւնիկեցիս
Ի կալուած, զոր սիրով մեծաւ սիրէր հէքըն Դիդէ,
Տըւեալ նըմա ի հօրէն՝ դեռևս անփորձ ի հարսանիս:
Թագաւորէր յայնժամ ի Ծուր եղբայր նորա Պիգմալիոն,
Դաժանագոյն ի մարդիկ. սա գըրգըռեալ ընդդէմ Սիքեայ,
Ամպարիշտն և կոյր ի սէր ոսկւոյ՝ դաւով սրախողխող
Արկ զանըզգոյշն առ բագնաւ, անփոյթ ի քեռ նորին ի սէր:
Ծածկեաց զոճիրն ընդերկար, սփոփէր ըզհարսնըն սիրատարփ՝
Պատրեալ ի յոյս ընդունայն, կեղծեալ բազում ինչ նենգանօք.
Այլ ի տեսլեան յայտնեալ նըմա պատկեր անթաղ ամուսնակցին,
Եւ հրաշապէս ի վեր առեալ ըզկերպարանըն մահատիպ,
Զանգութ բագինսըն հոլանէ, և զխոց կողին սուսերահար.

Այլա զգանխուն յընտանեաց զեղեան համայն ի վեր հանեալ,
Յորդորէ փութալ մեկնել ի հայրենեացըն փախըստեայ,
Եւ առ ի պէտս ուղւոյն յայտնէ ըզվաղեմի գանձըս ծածկեալս
Ընդ երկրաւ, զանծանօթ կշիռ ոսկւոյ և արծաթոյ:
Գան ի մի վայր՝ յորս էր սաստիկ հեռ գոռոզին և աչ դըժնեայ.
Եւ Պիգմալեայ գանձք ագահին աւար առեալ դընան ընդ ծով:
Ի բանից աստի շարժեալ կազմէ Դիդէ զիւրսն ի փախուստ.
Անուն ըզնաւս՝ որ ըստ բախտի կային անդ կազմք, լըննուն ոսկւով,
Տիկնոջն ըզչուն ածելով. և հասանեն ուր արդ տեսցես
Ըզբարձր ամուրս, և ըզնորոյն Կարքեդոնի կանգնեալ զըղեակ.
Գընուածոյ ապա ստանան երկիր, Բիրսա յանուն գաւոյն
Յորջորջեալ, որչափ ինչ վայր պարուրէ մորթ արջառենի:
Այլ դուք յորո՞ց գայք ի ծագաց, և յո՞ ուրեք դիմեալ երթայք:
Առ հարցուած դիցուհւոյն յոգւոց հանեալ նա ի խորոց,
Ասէ, ով աստուածուհի, եթէ անդուստ քեզ ի վերուստ
Զարկածըս մեր առից պատմել, և քեզ պարապ իցէ ի լուր,
Փակեսցի նախ Ողիմպոս, և ընկըլցէ գիշեր ըզտիւ:
Ի վաղեմոյն Տրովադայ, եթէ երբեք անուն նորին
Իցէ հասեալ յունկըն ձեր, մըրրիկ ըզմեզ հալածական՝
Ըստ սովոր արկածից՝ ծովէ ի ծով վարեալ ընկէց
Այսր ի յեզերըս Լիբիոյ: Եմ երկիւղածն ես Ենէաս,
Մինչև յաստեղս համբաւեալ. ածեմ ընդ իս ի միասին
Նաւատորմիւ ըզԹերափըս զերծուցեալս ի թըշնամեաց.
Ըզհայրենիս իմ գամ խընդրել յԻտալիա, և զազգատոհմ
Առ ի մեծէն սերեալ Դիայ. քառիւք հընգօք իջի նաւուք
Ի ծով փռիւգեան ճակատագրին իմում ըզհետ,
Ուղեցոյց ինձ ըզմայր իմ ունելով զաստուածուհի.
Իօթն ինձ արդ նաւք մնան յալեաց և ի հողմոց մազապուր.
Հէք անծանօթ ընդ անապատըս Լիբիոյ թափառիմ արդ,
Յեւրոպայ և յԱսիոյ մերժեալ ի բաց վըտարանդի:
Ոչ ևս Աստղիկըն ժուժկալեալ կեղերջական բանիցն ի լուր,
Ընդմիջէ. Ոչ երկբայիմ՝ զի դու ով ոք և իցես,
Ոչ անհաճոյ երկնաւորաց դից ըզկենաց ձըգես ըզսիւք,
Ի տիւրականս այսըր վարեալ ի դաստակերտ, փութա արդ երթ
Աստի ի սեամըս դըշխոյին. և եթէ ոչ ինձ ի նանիր
Հարք ըզհըմայս ուսուցին, աւետեմ քեզ հասեալ ըզքոյս,
Եւ յանքոյթ ըզնաւս ածեալ՝ հիւսիսականցն ընկըրկելով,
Հայեաց ի վեր, տես ըզգուարթնոց կըրկնակ վեցից տարմ կարապից,
Զորըս սահեալ հաւըն Դիայ ընդ սին այերըս խուճապէր.
Տես զիարդ արդ տողաբար իջեալ ընտրեն կայս ի յերկրի



Կամ զընտրեալըն նըկատեն. որպէս դոքա ոգջամբ դարձեալ
Խայտան երգովք, և տարմովին ճախրեն թևոցն ի խօշիւն,
Ոչ այլազգ կայմք քո և արբանեակք քոյոցդ հասեալ ի նաւակայս,
Եւ հողմուռոյց առագաստիւք առնեն ահա ի ներքըս մուտ.
Երթ դու արդ դէպ ուղիղ՝ ուր դէմ ուղւոյդ ածէ ըզքեզ:
Ասաց, և ցոլք լուսաճաճանչք ի գնալ իւրում հատանէին
Ի վարդագեղ ուլանէն, և ամբրոսեան վարսքըն թաթաւ
Ցաստուածահրաշ զըլխոյն բուրումն անուշահոտ ծաւալէին:
Եւ ձորձք երկայնաձիգք անկեալ ի ստոր ըզգարշապարս
Աստուածուհի իսկապէս ըզնա ի ճեմն յայտ առնէին:
Ծանեաւ նա զմայրն, և զհետ նորին զայս ի խուսելըն ձայնարկէր.
Առ ինչ և դու անկարեկիր խաղ այսքանիցս առնես զորդւոյդ
Անիր պատկերօք. հի՞մ աջ ընդ աջ չիցէ օրէն
Խառնել, և բարբառ ոչ անէակ առնուլ և տալ:
Զայս նա զմօրէն արկեալ բողոք, անդր ի պարիսպըս դիմէ:
Բայց դիցուհին ի գնալ նոցա այեր նըսեմ ած ըզնոքօք
Եւ ամպ հոծ, զի մի ումեք լիցի գնոսա տեսանել,
Մի հուպ լինել, և մի գնացից նոցին կըրճիմն արկանել,
Կամ ըզպատճառս եր աղագաւ դիմեալ գային՝ հետազօտել:
Իսկ ինքն ի կայս իւր ի Պափոս արփաթևեալ դառնայր զըւարթ,
Ուր է մեհեան իւր, ուր բագինք նըմա հարիւր ի սաբայիկ
Ծըխեն ի խունկ, և հոտ անոյշ բոլորք ծաղկանց բուրեն զալարք:
Նոքա ուղւոյ եղին յայնժամ ընդ որ շաւիղն առաջնորդէր,
Եւ ի վերելըս բըլրոյն՝ որ գեր ի վեր քան ըզքաղաքն
Ամբարձեալ, դիտէ զամուրս առ ի վերուստ հանդիպակայս,
Ապշի Ենէաս ընդ դաստակերտըն հոյաշէն
Ուր հովուավանք երբեմն էին, ապշի ընդ սեամս և ընդ աղմուկն,
Ապշի ընդ կուռ պողոտայս. ճեպ ժիրաժիր տան տիւրացիք,
Կէսք ըզպարիսպս ընդարձակեն, կառուցանեն այլք ըզդըղեակ՝
Ձեռամբքացի թաւալեալ վէմ. տեղի ի յարկ կէսք յերիւրեն՝
Ածեալ ակօս շուրջանակի, ընտրեն ատեան այլք, դատաւորս
Եւ ծերակոյտ սուրբ. աստ պեղեն նաւահանգիստ, անդ ըզթատերց.
Հիմունս ի խոր զետեղեն. սիւնս անհեթեթս այլք ի ժայռից
Հատանեն, տաղաւարաց ապառնեաց բարձր ի սեթևեթ.
Որպէս ի նոր ամարայնի ընդ ծաղկաւէտ շէնըս մեղուք
Վաստակեն յարևու, ածեն զազգին սերունդ զարգուն.
Կէսք ըզծորուն մեղրըն թանձրեն, լըննուն ըզմաղս յանոյշ նեկտար,
Զեկուորաց այլք ըզբեռն առնուն ի բաց. մերթ գունդ կազմեալ
Ընդդէմ բոռոց, ըզծոյլ ի բաց վարեն նախիրն ի փեթակէ.
Եռայ վաստակն, և ի ծոթոր բուրէ խորխխըն քաղցրահոտ:

Յայնժամ ասէ. Ո՜հ երանի որոց այժմէն յառնեն պարիսպք,
Եւ բարձր ի ծայրըս քաղաքին դարձուցանէ զաչս Ենէաս.
Եւ միգաւ անճառահրաշ պատեալ ի ներքըս մըտանէ,
Ընդ խուժան որերոյն խառնի անտես ի նոցանէ:
Անտառ ի մէջ քաղաքին կայր գեղազուարճ հովանաւոր,
Ուր երբեմն ի փոթորկէ և ի յալեաց վարեալ փիւնիկք
Պեղեցին զամեհւոյն յերկրէ զկառավին երիվարին,
Զոր Թագուհւոյն Հերայ ցուցեալ էր ի նըշան հանդերձելոյ
Պատերազմող ժողովրդեան դարուց ի դարս անմահացուի:
Անդ սիդոնիկըն Դիդէ մեհեան աշեղ կանգնէր Հերայ
Ճոխ ի նուէր. անդանօր աստուածուհւոյն հանգչէին փառք.
Պղնձաձոյլ ընդ աստիճանս յառնէին սեամք, պըղընձապատ
Ջօդեալ գերանք. և արուրեաց ծըղխնիք դըրանց ճըռընչէին:
Դէպք յեղակարծ նախ յանտառի աստ ցածուցին զերկիւղ Ենեայ,
Աստանօր ի փըրկութիւն իւր նախ իշխեաց նա յուսալ,
Ակն աստանօր չարաբաստիցն յաջողութեան իրացն ունել:
Զի ի մեծի մեհենին մինչ յայց ընաւից շըրջէր մասանց,
Մնալով գալըս դըշխոյին, և զարմանայր ընդ բախտ ազգին,
Ընդ ճարտարացըն զիրերօք ի ձեռակերտսըն ելեել,
Զիլիականս անդ կարգաւ պատերազմունըս տեսանէ,
Եւ ըզմարտիցն ի միտ առնու աշխարհալուր հարեալ հըռչակ.
Եւ զԱտրորդիս և ըզՊրիամ, և զոխերիմն երկաքանչիւր
Նոցին տեսեալ անդ զԱքիլլէս, ըզկայ եառ. և արտասուօք՝
Ո՞ր այն տեղի, ասէ, ո՛վ իմ Աքատ և ո՞ր այն ծագ երկրի
Ընդ տիեզերս ի վաստակոց մերոց Թափուր. ահա Պրիամ,
Ահա և աստ վարձք լաւութեան, աստ իսկ ընդ վիշտս արտօսր հեղեալ,
Ճըմլեն և աստ ըզսիրտս արկածք մահկանացուաց. քաջալերեաց,
Թերևս օճան մեզ փըրկութեան լիցի հըռչակ համբաւոյ:
Ասաց և զսիրտ իւր ի պատիր անդ ի նըկարս ըզբօսեցոյց,
Հառաչելով բստէպ և զդէմս ի գերարտօսըր Թանալով.
Զի տեսանէր իբր անդ Հելլէնք պատերազմեալ ըզՊերգամաւ,
Ի տրովացի մանկըտւոյն զնոյին վարեալ հալածական.
Եւ Աքիլլէս աստ բարձր ի կառս ի գարգմանակ ցըցունաղարդ
Ըզփախուցացիս իբր վանէր. և ըզՀռետեայ անդանօր
Ոչ ինչ ի բաց ծանեաւ լալեօք ըզձիւնաթոյր փեղկըս վրանաց,
Ուր ըզմատնեալըն Տիդիաէս ի քուն նախկին աւար հարեալ,
Ի ճապաղիս յոլովս արեանց, ի բանակետղ իւրոցն ածէր
Ըզձիանն ամեհի, չև ի տրովեան ճեմեալ արօտս
Ի ճարակ, մինչչև արբեալ նոցա զալիս Քըսանթեայ:
Հէք պատանին այլուր Տրոյիլ իշխեալ ի մարտ անհաւասար



Ընդ Աքիլլեայ, և կորուսեալ ըզզէնս, ածի յերիվարաց
Կախ ի յորսայս ըզսին կառաց, այլ ոչ Թողեալ ըզսանձս ի բաց,
Ծոծրակն և վարսք իւր ընդ երկիր ձըգեալ ի քարշ, և ակօսէր
Տէգըն չըրջուն ըզփոշին: Իլիուհիք աղերսաւորք
Երթային ի մեհեան անդըր Պալլասայ չև եըս հաշտք,
Տըխուրք ըզկուրծըս բաղխելով, և ըզլօդիկ չըրջապատիկ
Բարձեալ ի ձեռըս բերելով. յառեալ ասոխ աստուածուհին
Ակընկառոյց կայր ընդ գետին. և Աքիլլէս անդ երեքկին
Ըզպարըսպօք Իլիոնի զանշընչացեալըն շուրջ ածեալ
Ըզդիակնըն Հեկտորի, և ընձեռէր զայն ընդ ոսկւոյ:
Յայնժամ մեծաւ Ենէաս հառաչանօք յոգւոց եհան,
Տեսեալ զաւարն և ըզկառս, և ըզդիակըն մըտերմին
Իւրոյ տեսեալ ըզՊրիամու՝ կարկառելով զաջն ապաղէն:
Զինքն իսկ ծանեաւ անդանօր խառն ընդ Հելլէն աւագանին,
Եւ ըզճակատս Նովեանս, և զՄեմնոնի Հընդկին ըզզէնս.
ԶԱմազոնաց անդ զպյրագին Պենթեսիլէ ըզգունդս ածէր
Ի մահկաձև վառեալս յասպար, փայլեալ ի մէջ բիւրաւորաց,
Կամար ոսկի ընդ հոլանեաւ կողին ածեալ, քաջամարտիկն
Օրիորդ իշխեալ ընդ արըս կաքաւել ի պատերազմ:
Մինչ դեռ հրաշիցս այսոցիկ ակընկառոյց յառեալ ի մին
Դարդանացին Ենէաս կայր հիացմամբ անդ ի զընին,
Եմուտ դըշխոյն գեղանի ի տաճար անդըր՝ պար առեալ
Ի բազմահոյլ պարմանեաց. իբր Արտեմիս յեզր Եւրոտայ,
Կամ ի կինթեան պար ի բարձունս ածելով բիւրք աստի անտի
Խըռնին զկերև Որեադք. կապարճ ի յուս ինքն ամբառնայ
Զամենեքումբք գեր ի վեր, և Լատոնեայ զանխուլ ի սիրտ
Խըրտին հըրճուանք. այսպէս Դիդէ զըւարթագին կայր ի միջի,
Հանդերձելոյ արքայութեանըն ճեպ տալով երկոցն ի գործ:
Յայնժամ ի դրունըս դիցուհւոյն ընդ խորանաւըն տաճարին
Շըրջապատեալ ի զինուց նըստաւ դըշխոյն բարձր ի գահոյս,
Եւ ի միջի անդ տայր օրէնս, իրաւ առնէր բոլորեցուն:
Եւ ի բաշխելըն ի բաժին արդարակշիռ երկս ի վաստակ,
Կամ ի վիճակ արկանել, ետես յանկարծ անդ Ենէաս
ԶԱնթէոս և ըզՍերգեստ, ըզկորովին Կլոանթոս
Եւ այլ տեւկրացիս ընդ յոգնախուռն հրապարակին
Մատուցեալ առ դըշխոյն, զորըս մըրրիկ Թուխ ընդ ալիս
Հողմակոծեալ՝ յայլևայլ ափունս արկեալ էր հեռաւորս:
Յապուշ հարաւ Ենէաս, յապուշ հարաւ ընդ խինդ ընդ ահ
Եւ Աքատէս. և աջ ընդ աջ խառնել միմեանց իղձ լինէին.
Այլ կեղակարծ ելք իրացն յուզէն ըզսիրտ, և դեռ անյայտք

Ի ծոց ամպոյն պարածածկեալ՝ հետազօտեն զինչ ընդ ընկերս
Անցք անցեալ, ուր ըզնաւաց թողեալ տորմիղ, և առ ինչ գան.
Զի ընտրանաւ ի նաւաց աղերսաւորք գային դիմեալ
Ձայնիւ մեծաւ ի տաճարն: Իբրև մուծան անդր առաջի
Դշխոյին, և խօսելոյ եղև հրաման, Իլիոնէ
Մեծն ի նոսա դաշըն ձայնիւ այսպէս խօսել ըսկըսաւ.
Ո՛վ թագուհի, ում Արամազդ հրաման ետ նոր կանգնել քաղաք,
Եւ նըւաճել արդարութեամբ ըզգոռ ազինս. առ քեզ դիմեմք
Տրովացիքս հէքք հողմավարք ծովէ ի ծով. արգել ըզժանտ
Հուր ի նաւաց, գըթա յարկածըս մեր, խնայեա յազգ երկիւղած.
Ո՛չ երկաթով ի Լիբիա գամք ըզթերափս առնուլ աւար,
Ոչ ի ծովեզըր կողոպուտս առեալ ածել. չէ ի մըտի
Բըռնութիւն մեզ այդպիսի, ոչ ի պարտեալըս յանդըգնութիւն:
Է վայր՝ զոր Յոյնք յորջորջեն Երեկօրնեայ, երկիր նախնի
Պարարտ ի գուղձ, հըզօր ի զէն, ուր Ենոտրեան բնակէր որեար,
Այժմ յանուանէ զօրավարին ըստ համբաւոյ Իտալիա
Կոչեն կըրտսերք. անդըր մերոյ նաւատորմիս էր արշաւան.
Այլ Որիոն ամպրոպայոյզ յարեաւ յանկարծ, և զմեզ ի կոյր
Վարեաց ի հունս, և խորշակացն ի սատահակել՝
Ցաղթեաց ծով, և ընդ ալիս և ընդ անանց ժայռըս սըփռեալ,
Նուազո՛ւնք յեզերըս ձեր հասաք. այլ որպիսի բնակէ աստ ազգ,
Ո՞ր ուրեք ներէ գաւառ ըզխուժադուժըդ սովորոյթ.
Զայն տան ի մարտ, ոչ թողուն կոխել զաւազ, արգելանիմք
Յեզր ուր հասաք՝ առնուլ կայս. եթէ զմարդիկ, և զմահացու
Եթէ ըզզէնս արհամարհէք, այլ երկերուք դիցն ի վրիժուց՝
Այն որ չարեաց և բարեաց են յիշեցողք: Էր թագաւոր
Մեզ Ենէաս, քան զոր չեկաց ոք երկիւղած, և ոչ ի զէն
Եւ ի մարտ գըտաւ ի վեր ոք քան ըզնա. զոր թէ պահեն
Հրամանք բախտին, և դեռ ծըծէ սիւք երկնային, և չէ ի ժանտ
Անկեալ ի ստուերս, չիք մեզ երկիւղ, և ոչ քեզ զիղջ լիցի մըրցել
Ի նախաձեռն երախտիս. են մեզ յերկիրըն սիկուլեան
Քաղաքք և զէնք, և անուանին ի տրովական զարմէ Ակեստ.
Ըզխարխարեալ նաւս ի հողմոց ներեա հանել մեզ ի ցամաք,
Հատանել կայմս յանտառաց, տաշել թիակս, և զուարթագին,
Եթէ տացի գտանել զարքայն մեր և զընկերս, յԻտալիա
Դիմեալ գնասցուք ի Լատին. իսկ եթէ չիք մեզ փըրկութիւն,
Եւ եթէ զքեզ՝ ո՛վ որ տեւկրեանցըս բարեգութ դու հայրդ ես՝
Լիբեականք ունին ալիք, և չիք ոչ եւս յոյս Յուլեայ,
Ի սիկանեանըն գէթ ի ծով և ի պատրաստըս մեզ ի կայս՝
Ուստի այսըր վարեցաք՝ առ Ակեստէս արքայ գնասցուք:



Եւ ի խօսել Իլիոնեայ՝ դարդանացիք առ հասարակ
Հըծծէին. յայնժամ Դիդէ, աչք ի խոնարհ, բարբառի սուղ.
Մի՛ ինչ հոգայք, ո՛վ տեւկրացիք, զերկիւղ ի բաց դիք ի սրտէ.
Դէպք դժընդակք, և պետութիւն դեռ ևս նոր, հարկ ինձ առնեն
Պահ խիստ ունել ըզսահմանօք. ո՞ւմ ազգ Ենեայ, ո՞ւմ անծանօթ
Տրովականն իցէ քաղաք, և զինչ գործեալ անդ արութիւնք,
Քանի՛ քաջաց անդ որեար, քանի՛ հրդեհք պատերազմաց.
Ոչ այդքան խիստ կըրեմք յանձին փիւնիկեցիս սիրտ, և ոչ այնչափ
Հեռի զձիանն ի տիւրականըս քաղաքէ լծէ արև:
Թէպէտ ի մեծն Երեկօրնեայ, թէպէտ Կռոնեան ի դաշտորայս,
Կամ յերիքսեան թէ ի սահմանս և առ արքայն թէ Ակեստէս
Ցանկայք նաւել, արձակեցից ըզձեզ անքոյթ՝ տըւեալ ձեզ պահ,
Եւ ձեզ զանձիւք օգնեցից. իսկ հաւասարք ինձ թէ կամիք
Բնակել յերկրի աստ ընդ իս, ձեր դաստակերտս է զոր կանգնեմ,
Լիցի տիւրացին և տրովացի ինձ անխըտիր.
Ածէք ըզնաւս ի ցամաք. ո՜ տայր թէ ինքն իսկ Ենէաս
Արքայն ձեր, ի նոյն վարեալ ի հարաւոյ այսըր մըղէր.
Հաւատարիմս ընդ ծովեզերս արձակեցից ես շուրջ խընդրակս,
Ընդ ափունըս Լիբիոյ պատուիրեցից հետազօտել,
Գուցէ ուրեք յանտառաց կամ ընդ քաղաքըս թափառի:
Խրախուսեալ ի բանից աստի Աքատըն կորովի
Եւ Ենէաս Հայր ըղձային հերձանել զամպըն վաղընդփոյթ.
Կանխէ Աքատ առ Ենէաս. Աստուածորդիդ դու Աստղկան,
Զի՞նչ ի քեզ յուզի խորհուրդ. ահա փրկանդ արդ և ոչ մի,
Գըտան և նաւք մեր և ընկերք. մի եւեթ ոք չէ ի միջի,
Զոր մեզէն իսկ տեսաք ի մէջ ալեաց անդընդասոյզ.
Այլն ամենայն ի ճահ բանից Մօրն ելանեն: Եւ ընդ բանին
Ահա ամպըն շըրջապատ հերձեալ ի սին լուծաւ յայեր.
Կայր ի միջի անդ Ենէաս ուսովք ի վեր, և լուսափայլ
Աստուածահրաշ կերպարանօք, զի ինքն իսկ մայրն յաւել յորդին
Վարսըս չըքնաղ, և ճաճանչ ծիրաներփեան յառոյգ աստիս,
Եւ գեղ զըւարթ յաչըս նորա իբր, ի փըղոսկր աջ ճարտարի
Փայլ շըքեղ, կամ զարծաթով կամ ըզպարեան կըճիւ խառնեալ
Ածեալ ոսկի: Յայնժամ բնաւից եկեալ յանկարծ յերեան,
Այսպէս խօսի առ դըշխոյն. Մերձ զոր խընդրէքդ աւասիկ կամ
Տրովացին Ենէաս, լիբեական յալեաց զերծեալ.
Ո՛վ որ միայն կարեկիր տրովականաց լեալ աղետից՝
Ըզդանայեանց ըսպառելոց յարկածս ընդ ծով և ընդ ցամաք
Ըզնըշխարըս դու ըզմեզ, որ ամենայնց իսկ պիտոյից
Ըմբ կարօտ, հիւրընկալեա՛ տալով մեզ տուն տալով քաղաք,

(4016) 1031-2013 3

Զո՞ր արժանի շնորհակալիս մատուցանել քեզ է մեզ կար,
Դիդէ, և զո՞ր դարդանեանց բոլորեցունց՝ որ համասփիւռ
Ընդ տիեզերըս կայցեն. այլ դիք քեզ վարձըս հատուսցեն
Արժանիս, եթէ երբեք իցեն խնամք դից ընդ բարիս,
Եթէ իցէ ուրեք երբեք արդարութիւն, և գիտակից
Միտք իւրայնոցըն լաւութեանց. ո՞ր այն ըզքեզ բարեբաստիկ
Ծընաւ դար, և ո՞յք ի լոյս ածին ծընօղք զայդպիսիդ վեհք.
Ցորչափ ի ծով ընթանան գետք, ցորչափ ըստուերք չըրջագային
Ընդ գըմբեթարդըս լերանց, ցորչափ զաստեղս հովուէ բևեռ.
Փառք և անուն և գըրուատիք քո միշտ կացցեն ուր և ուրեք
Հրաւիրեսցէ զիս երկիր: Ասաց և զաջն յԻլիոնէ
Ի սիրելին իւր էարկ, ձըգեաց զահեակ իւր ի Սերեստ,
Ապա և յայլս, ի կորովին Գիաս, յարին ի Կլովանթոս:
Պակեաւ դըշխոյն նախ ընդ տեսիլ, ապա ՚նդ արկածս Ենէասայ,
Եւ ասէ. Ո՞ր բախտ ըզքեզ, աստուածորդիդ, հալածէ
Ընդ վիշտ այդքան, ո՞ր զօրութիւն վարեաց ըզքեզ յանդուլթ ափունս.
Դու Ենէա՞ն իցես այն, զոր ծնաւ Աստղիկըն գեղանի
Դարդանացւոյն Անքիսեայ յեզեր փռիւգեանըն Սիմոյեայ.
Յիշեմ եկեալ ըզՏևկեր ի հայրենեացըն սահմանաց
Սիդոն ի Ծայդան վըտարանդի՝ նոր արքունեաց ի խընդիր
Ձեռամբ Բելայ. զի հայրն իմ Բել ըզԾոփսն յայնժամ առեալ աւար
Ըզկիպրոս, ընդ ձեռամբ իւրով ունէր զայն յաղթական.
Անդըստին ինձ ծանօթ էին արկածքըն տրովականք,
Անդըստին անուն քոյին և թագաւորք պելասգունիք.
Ինքն իսկ ոսոխն ըզտևկրացիս գովէր մեծաւ ներբողենեաւ,
Եւ ի նախնեաց անտի տեւկրեանց պանծայր սերեալ յազգատոհմէ:
Համպա եկայք մըտէք մանկունք ի յարկըս մեր. հանգոյն և զիս
Բախտն ընդ արկածըս բազմադէմս՝ած ուր ուրեմն և բնակեցոյց
Յայս երկիր. և փորձ վըշտաց՝ գիտեմ տալ ձեռըն թըշուառաց:
Ասաց, և վաղ ած յարքունիս իւր զԵնէաս. և հրամայեաց
Զոհս ի մեհեանըս դից ածել, և քըսանեակ մի զըւարակ
Ընկերացն ի ծովեզերս, և թաւաստե հարիւր խոզեան
Մեծամեծ, գառինըս մարըքն հանդերձ հարիւրըս պարարակ,
Եւ այլ դահամունս, և զՀըրճանեան հօրըն բերկրանս:
Զարդարի արքունական տունն ի ներքուստ չըքեղ ի սպաս.
Ի միջի ապարանիցըն պատրաստեն առ ի խընջոյս,
Հանդերձանի ճարտարահիւս ընդելուզեալըս ծիրանեաւ.
Անօթք յոլովք արծաթիք ի սեղանի, ոսկեդըրուագ
Հարցն ի նոսա արուեստիք՝ ընդ վաղեմի ազգատոհմին
Աւագ օրեար, երկայնաձիգ անցից երացն յօրինեալ կարգ:



Բայց Ենէաս, (քանզի ոչ եըս հանդուրժէր ծընելասէր
Գութ սըրտին), յըղէ ճեպով ի նաւատորմըն զԱքատէս,
Պատմել Յուլեայ զամենայն, ի քաղաք անդր ածել ըզնա
Զի ամենայն ըզՅուլեաւ խընամք բարւոյ հօրն յուզէին:
Հրամայէ և ա ի պարգև բերել ըզձօրձն ոսկենըկար,
Յիլիոնի աւերածոյն զերծ, և ըզքօղըն շուրջ հիւսկէն
Փըղքմատեսակ ականթիւ, արդիւնհւոյն Հելինեայ զարդ,
Զորըս եբեր ի Միկենաց պարգևըս մօր իւրոյ Լեդայ
Հրաշազանս, երբ յարգելեալըն ուղևորէր ի հարսանիս,
Եւ զգաւազանն արքունի՝ զոր անդ ուրեմն Իլիոնէ
Երիցագոյն ի դըստերացըն Պրիամու կըրէրըն զայն.
Եւ ըզմանեակըն լանջագեղ ըզմարգըրտեայ, և զոսկեղէն
Բերել պըսակն երկկարգեան ընդելուզեալ ականակուռ:
Յայնժամ Աքատ փութայր ի նաւս առնուլ ածել զայն ամենայն:
Բայց կիթերեանըն նոր հընարս, նոր ի սըրտին երկնէր խորհուրդ,
Այլակերպել Երոսի, և գալ փոխան սիրեցելոյ
Պատանեկին Ասկանեայ, և զսիրատարփ սիրտ դըշխոյին
Բորբոքել՝ հուր ընդ ոսկերըս պարգևօքըն ծաւալեալ.
Զի զկեղակարծ արքունեացն ի կասկածի կայր և զերկխօս
Տիւրացւոց, զի պըղտորէր անհամբոյրն Հերա զդըշխոյն,
Եւ հոգք ըզնա գիշերացն դարձադարձիւ տագնապէին:
Աչերս ապա այսպէս Աստղիկն էարկ առ Սէրըն թևաւգեաց.
Որդեա՛կ իմ զօրութի՛ւն իմ մեծազօր, որ դու միայն
Ըզշանթիւք հօրըն վեհի և ըզնետիւք արհամարհես
ԸզՏիւփեայ, առ քեզ յողոք անկեալ խընդրեմ ինձ օգնութիւն.
Ոչ ինչ զանխուլ է ի քէն՝ ե՛րբ հարազատ քո Ենէաս
Հալածական առ քէն Հերայ ընդ ծովեզերըս թափառի.
Կարեկից դու ընդ այն ըստէպ վըշտացըս լինէիր.
Ըզնա դըշխոյն փիւնիկ առ իւր ողոք բանիւք հնարի յամել.
Հիւրոյիցն Հերայ կասկած է ինձ ընդ ելս, և ոչ ըզկայ
Աստանօր որոգայթքն՝ առցեն լարեալք ի նմանէ.
Աստըստին ըզդըշխոյին խորհիմ գրաւել դաւով ըզսիրտ,
Որպէս զի մի՛ ուրուք ի դից շըրջեսցէ զնա սաստ ի մըտաց,
Այլ անձկով սիրոյն Ենեայ կացցէ ընդ իս հաստատուն:
Առ ի կարել քեզ զայդ՝ լուր ինձ որ ինչ երկնեմըս խորհուրդ.
Արքայորդին՝ զորմէ հոգամ յոյժ՝ պատրաստի երթալ ի կոչ
Սիրեցելոյ հօրն ի քաղաքըն տիւրական, ածել ընծայ
Որ ինչ եղեն ի ծովէ և ի տրովեան բոցոյն զերծեալ:
Ըզնա կալայց ի թըմբիր ի վեհավայրն Իդալիոն
Կամ բարձր ի ծայր կիթերական, զի մի՛ դաւոյն լեալ խելամուտ

Եւ գալ ի յայտ կարասցէ. դու ի նորին ծըպտեալ դաւով
Ի կերպարան, ոչ աւելի քան ըզգիշեր մի ըզմանկանն
Արկցես մանուկդ ըզդէմս ըզքեւ, զի հըրճուանօք ըզքեզ Դիդէ
Ի խրախուճս արքունիս և ի լիւեան անապակին
Առեալ ի գիրկըս գըգուեսցէ. և ի համբոյրս անդ անուշունս
Ըզզանխուլ ի դըշխոյն լուցցես ըզհուր դաւեալ դեղով:
Ի լուր բանից սիրուհւոյ մօրն ընկենու զթեւըս Սէր ի բաց,
Եւ ճեմ համգոյն Յուլեայ առնու. իսկ Աստղկան ըզքուն հեղեկ
Արկեալ յանդամըս նորին, բառնայ ի գիրկս ըզնա մեղմով
Դիցուհին, և յիդալեան ածէ յանտառս ի բարձունս,
Ուր քաղցրահոտ խընկողկուզիկ փափկիկ ծաղկամբք ծածկէ ըզնա
Եւ ախորժակ հովանեաւ. և ահա գայր Երոս հըլու
Հրամանին, զարքունականսըն բերելով ընծայս ի Տիւր,
Զըւարթ ըզհետ Աքատեայ. իբրև եհաս, բազմէր դըշխոյն
Անդ ի միջի յոսկեհուռ ի գահ, և գորգ շըքեղաշուք
Ընդ նովաւ. հայրն Ենէաս անդր ընդ մանկտին դարդանացի
Գան բազմին ի յակումբըս կարմրերփեանս ի միասին.
Ալիս վըճիտըս ձեռաց մատուցանեն ըսպասաւորք,
Եւ ի կըտորոց խաշին անկեալ ողորկատարըր զենջակ.
Յիսուն ի ներքըս նաժիշտք ածեն Դիմեռըր սակառեօք,
Երկայնաձիգ պատրաստեալ շար համադամոց, և արկանեն
Ի բուրուռս ապարանիցըն շուրջ ի բոց խունկս անուշունս.
Այլք անդ նաժիշտք հարիւրեակ, և համատիք հանգոյն ի թիւ
Ըզսեղանըս պատանիք ծածկեն խորտկօք և բաժակօք.
Ի զուարթ ի սեամս անդըր փիւնիկք գան համախուռն, և հրամայեալ
Բազմին ի բարձըս նըկարէնս, և ընդ ընծայս ապշին Ենեայ,
Ապշին ընդ Յուլոս, ընդ հրանըշոյլ դէմս աստուածոյն,
Ընդ կեղծ բարբառն, ընդ հանդերձն և ընդ շըղարշն ասղնէնըկար
Շուրջ ի յականթ քըրքըմատեսակ. և մանաւանդ հէք Թագուհին,
Այն որ ժանտին ըմբըռնելոց էր, չըյագէր մանկանն ի տես,
Վառէր ի սէր չարժեալ մանկամբն և պարգեւօք:
Նա գըգուանօք փարեալ զԵնեայ պարանոցաւըն նախ ի կախ,
Զկարծեցելոյ ծնողին իւրոյ իբրև ելից զանձուկ մեծ,
Դիմեաց ապա ի դըշխոյն: Սա անգիտակ՝ զի դարանէր
Աստուածն հէքին, յարի աչօք, և բոլորով յարի սըրտիւ
Ի մանուկն, ողջագուրէ ըզնա ի ծոց իւր գըրկալիր:
Ակիդալեան մօրն ինքն ի յուշ տայ մոռանալ նըմա տակաւ
ԸզՍիքէոս, և բուռն ի սէր ըզդըշխոյին միտս անըզբաղ
Եւ ըզսիրտըն դադարեալ ի տարփանաց հնարի գրաւել:
Այն ինչ կոչնոցն առնի հանգիստ նախկին և սպասք բառնին ի բաց,



Մատուցեալք ըզմեծամեծսըն խառնելիս ածեն ի մէջ,
Պըսակեն ըզգինիս, և ապարանքն հընչեն բոլոր.
Ընթանայ աղաղակ շուրջ ընդ սըրահըս լայնարձակ.
Զոսկի կամարաց կանթեղք ի կախ կան բոցավառք,
Եւ ջահք՝ ըզգիշեր յաղթահարեն լուսաճաճանչք:
Յայնժամ դըշխոյն զոսկեղէն խընդրէ զբաժակն ականակապ,
Որով ըմպել սովոր էր Բէլ, սովոր բելեանն էր զաւակ,
Լընու զայն անապակաւ, լռէ տաճարն համօրէն.
Ինքըն մաղթէ. Վեհդ Արամազդ, քանզի ի քէն ըզհիւրոյից
Աւանդեն օրինադրեալ մեզ զիրաւունս, տուր բարեբաստ
Զօրըս զայս տիւրացւոց և որոց եկք ի Տրովադայ.
Օրս այս յաւերժ յիշեսցի յորդւոց յորդիս մեր առ յապայս.
Մերձ կացցէ ուրախարարըն Դիոնիս և հաշտ Հերա.
Եւ դուք տիւրացիք զուարթացուցէք օն ըզխըրախուճս:
Ասաց, և զփառս ըմպելեաց ծայրիւք շըրթանցըն ճաշակեալ,
Սըրսկեաց ապա ըզսեղանովն, և ետ Բիտեայ հրաւիրանաւ:
Ըզփըրփրադէզ բաժակն առեալ նա ի ճաշակ, և լի զանձամբ
Զոսկի նըւագըն հեղոյր. և զհետ նորա այլք մեծամեծք:
Քնարիւն ոսկւով վարսագեղն Յոպաս երգէր անդ ըզգեղգեղ,
Զոր ուսուցեալ էր մեծն Ատլաս. մերթ ըզյեղմունըս լուսնոյ
Եւ մերթ զարփւոյն նըւաղմունս, ուստի մարդկան ազդ և անդեայց,
Ուստի տարափք և շանթք հրեղէնք. և զԱրջապանըն նըւագէր
ԸզՍայլըն կըրկնակ, և զԱլաւուղս անձրեւաբերս.
Ընդէ՞ր արեւք ձըմերայինք ճեպին թանալ յաշխարհածով
Եւ զի՞նչ գիշերացըն յամրայնոց խոչ և խափան:
Ծափ ըզծափի տիւրացիք ըստէպ ըստէպ հարկանէին,
Եւ զհետ նոցա տրովացիք: Իսկ հէք դըշխոյն ի զրոյց պէսպէս
Ըզցայգն ի բուն ընդ Ենեայ, տակաւ ի սէր նորին արբեալ,
Հարցուած բազում ըզՊրիամայ առնէր, բազում և զՀեկտորէ,
Մերթ զի որո՞վք վառեալ զինուք Արշալուսոյն գայր զաւակ,
Մերթ որպիսի Դիոմեդեայն էր ձիան, ո՜ Աքիլլէս.
Նա՛ ի սկըզբնէ անտի պատմեա մեզ հիւրդ, ասէ, ըզդաւ Յունաց,
Եւ զարկածըս քոյոցդ, և զմոլորել քո վտարանդի.
Զի զքեզ ամառն արդ եօթներորդ վարէ ընդ ծով և ընդ ցամաք:

# ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՆԻ

# ԵՆԷԱԿԱՆԻՆ

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ենէաս պատմէ Դիդէի զկործանումն Տրովայ կարգաւ այսպէս: Յոյնք տասնամեայ պատերազմաւ բեկեալք, խորհին առնուլ զքաղաքն նենգաւ. և կեղծաւորեալ զփախուստ, թաքչին մերձ 'ի Տենեդոս կղզի, թողեալ 'ի բանակի անդ զձին՝ դարանեալովքն 'ի նմա զօրօք: Նենգաւոր խրատուն Սինոնի, զոր մահ Լայոկոոնի հաւատարիմ առնէ, ածեն զայն տրովացիք 'ի ներքս 'ի քաղաքն. և գիշերայն Յոյնք 'ի միջոյ նորա 'ի դուրս յարձակեալ, ընդունին զբանակն 'ի քաղաք անդր, և զՏրովադա մատնեն 'ի սուր և 'ի հուր:

Այդ առնէ Հեկտոր Ենէասայ յանուրջս՝ զերծանել փախստեամբ. այլ նա զմահ լաւագոյն համարեալ քան զփախուստ, գումարտակ առնէ, սպանանէ ոչ սակաւս 'ի Յունաց, և առնու զզէնս նոցա. այլ 'ի նետից թշնամեաց պատեալ պաշարի: Եւ յսար հարկանել արքունեացն, և յանկանել Պրիամու 'ի ձեռանէ Պիւռոսի, դառնայ Ենէաս 'ի տուն. և աւանդեալ Անքիսեայ հօր իւրում զպաշտօն սուրբս և զթերափս, բառնայ զնա յուս իւր, և փախչի հանդերձ Ասկանեաւ որդւովն և կնաւ իւրով Կրեուսաւ: Կորուսանէ զճանապարհայն զԿրեուսա և 'ի խնդիր նորա դառնայ: Երեւութանայ նմա ստուեր մեռելոյ կնոջն, և ասէ զնմանէ կալեալ 'ի Կիբելեայ 'ի Փռիւգիա: Դառնայ նա 'ի լեառն Իդաս, և պատրաստի իւրովքն ընդ ծով 'ի փախուստ:

# ԵՆԷԱԿԱՆ

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Լռեցին ամենեքեան և ի յակնձիւս ի լուր կային.
Յայնժամ հայրն Ենէաս խօսիցն ըսկիզբն արար այսպէս.
Ինձ զանպատումըն նորոգել, դշխոյ, ըզվիշտըս հրամայես,
Ի՛բր հելլէնք ըզճոխութիւնըս տրովական և զեղկելին
Կործանեցին պետութիւն. որոց ես ինքն ականատես
Եղէ վշտաց, որոց եղէ և մասըն ոչ ինչ դուզնաքեայ.
Եւ ո՞ ի պատմելըն զայնոսիկ, թէպէտ Դոլոպ
Թէ Միրմիդոն, կամ դըժնէին ոք Ոդիսեայ իցէ զինուոր
Ժոյժ ունիցի արտասուաց. սահի ահա ցայգ ցօղագին,
Եւ աստեղք խոնարհեալ առնեն հրաւէր մեզ արդ ի քուն,
Այլ զի այդքան իղձք են գիտել զարկածըս մեր, կարճ ի կարճոյ
Եւ ըզվերջին Տրովայ աղէտ, թէպէտ սոսկամ յուշ ածել միտք,
Թէպէտ դըժնեայ աղիողորմ իրացն է վէպ, այլ ըսկըսայց:
Զօրավարք դանայեցւոց ի հրամանէ ճակատագրին
Պարտեալ մարտի և վանեալ, ըզլեռնաձևըն կառուցին
Ընդ ամս յոլովս զերիվար, ի տաշելոց մայրեաց յարեալ
Արուեստիւըն Պալլասայ աստուածուհւոյն ողնաշար:
Կեղծեալ ի նուէր զայն դարձի: Համբաւ իրացըն ծաւալի,
Ի կոյր ի կողս անդըր զարանց իրանս ընտրեալըս վիճակաւ
Փակեն զանխուլ, և լընուն ըսպառազէն վառեալ զօրօք
Ըշտոր ըզխորշ ընդարձակ և զորովայնըն ծայրալիր:
Է Տենեդոս հանդէպ կըղզի քաջածանօթ համբաւով,
Ճոխ անդ ուրեմըն մինչ կայր արքայութիւն Պրիամու.
Ծոց է արդ ի հանգըրըւան ողնափայտից ոչ ապահով.
Անդ գաղտագնաց պատըսպարին ի ծովեզերս ամայիս.

Մեք ի Միկենս ըղձոսս կարծեմք երթեալ հողմովք ի բաց.
Լուծանէ Տեկրիա ըղսուգն երկայն, բանան դըրունք,
Քաղցր է գնալ ըղպատնէշսըն տեսանել անդ դորացիս,
Ջերծ ի զինուց ըղվայրըն շուրջ և ըղլըքեալ ծովեզերս,
Ո՛ւր Դոլոպաց գունդ, ուր գոռոզն եհար խորան
Աքիլլէս. աստ տեղի նաւատորմին, անդ ճակատուց
Յաճախ խառնուրդք. ընդ երիվարն անհեթեթ կէսք կան պակուցեալ,
Կուսին Աթենասայ ընդ մահահոտըն նըւէր:
Նախ առաջին Թիմետէս զայն ի պարիսպս ի ներքս ածել
Եւ խըրատ, և զետեղել ի դըղեկին, կամ առ ի նենգ
Կամ զի այսպէս էր հրաման ճակատագրին Իլիոնի.
Այլ Կապիս, և որց առողջ էին կարծիք, հաւանէին
Ի ծով ընկենուլ ըղկեղակարծըն զայն նըւէր,
Ըղդարան դանայեցւոց, և կամ ածել բոց ի ներքոյ,
Կամ ըղփորոյն ծակել ըղխորս, և ըղներքոյսն հետազօտել.
Պառակտի ի հակառակ կարծիս ռամիկըն տարտամ:
Յառաջադէմ բոլորից համախոհիւքն հանդերձ յոգունք
Լայոկոն վառ ի նախանձ՝ բարձր ի դըղեկէն դիմեալ ի ստոր,
Ո՞ւստի ի ձեզ անմըտութիւն այդքան, ո՛ հէք քաղաքացիք,
Համարել մեկնեալս ի բաց ըղթըշնամիս, և աննենգ
Ըղդանայեանցըն նըւէր. այդպէս զՈդևս ճանաչէք դուք.
Կամ դարանեալ կան ի փայտիդ աքայեցիք, և կամ յաւեր
Պարըսպաց մերոց կազմեալ է մեքենայդ, կամ ի դէտ տանց,
Կամ ի վերուստ առ ի քաղաքըդ մուտ գործել, կամ դաւ ինչ այլ
Ի դմա ծածկի. մի՛ յերիվարըդ վըստահիք ով տեկրացիք.
Որ ինչ և է, ինձ խիթալի են նուիրաբերք իսկ դանայեանք:
Ասաց, և զտէգն ըստուարաստուր ուժգին ի կող արկ երէցն
Ի կորընթարդ որովայնին ի զօդ մածմանց՝ զերերի
Հարեալ դըրաստն եկաց անդրէն. և ի կըրկին բաղխիւն փորոյն՝
Հընչեցին հեծելով խորք կազմածոյն ծերպք և փապարք.
Եւ թէ չէին ճակատագիրք և աչեկանք դիցըն հրամանք,
Մարթէր ի հաւան ածել ըղմեզ Լայոկոնի,
Նըշաւակել երկաթով զարգիականըն նենգութիւն,
Եւ դու կայիր արդ Տրովա, կային պարիսպք քոյին բարձունք:
　　Անդր աւանիկ ձայնիւ մեծաւ ձըգեն հովիւք դարդանացիք
Առ թագաւորն ըղձեռս ի յետըս կաշկանդեալ երիտասարդ,
Կամակար զանձն անծանօթ մատնեալ ի ձեռս եկաւորաց
Առ ի վկայել ըղնոյն, և մուտս աքայեցւոց ի Տրովադա
Ապաբանալ, վըստահ ի նենգ և կամ ի մահ իւր անհրաժեշտ:
Անդըր մանկունն տրովացի խըռնեին ի տես շուրջ ամենուստ



Ըլեալըս զերերօք ի խաղ գերւոյն առնելով:
Լո՛ւր արդ ըղնենգըն դանայեան, և զեղերումս ի միոջէն
Ուսիր ըղըմնաւս. ինքն աղմըկեալ կայ ի միջի ապաղէն,
Եւ զաչս ի հոյլըս զիւրև ի փռիւգացիս յածեալ, ասէ.
Եղո՜ւկ զինև, ո՞ր երկիր, և ո՞ր արդ ծով զիս ընկալցի,
Եւ զի՞նչ հէքիս մընայ յոյս հալածելուս ի դանայեանց,
Թէ դարդանեանք ևս ոսոխք խընդրեն արեամբ յինէն վըրէժ:
Ընդ հեծութիւնըս գերւոյն յուզեցան գութք, զիջաւ գըրգիռ.
Քաջալերեմք յայնժամ ըղնա պատմել յորմէ՛ էր ինքն յազգէ,
Եւ զի՞նչ աղէ բերէր զըրոյց, և զո՞ր մեզ տայր առհաւատչեայ:
Նա անդ ուրեմն ի բաց եդեալ զերկիւղ այսպէս բարբառի.
Զամենայն, ո՛վ արքայ, որ ինչ անցին անցք պատմեցից
Հաւաստեաւ. և նախ՝ զի եմ ծընեալ հելլէն, ոչ թաքուցից,
Իթէ բախտըն ձախողակ արար թըշուառ ըզՍինոն,
Ոչ և զըախօս ցուցցէ ըղնա և խաբեբայ. եթէ երբեք
Յունկըն քո հասեալ բըլեանն իցէ անուն Պաղամեդեայ
Եւ փառք նորա գերահըռչակ, զոր զըրպարտեալ ի մատնութիւն
Անօղորմ բարբանօք՝ եստուն զանմեղն հելլէնք ի մահ,
Փոխանակ զի արգելոյր նա զպատերազմ, և արդ ողբան
Զարկեալն յարևէ, նորին ես սերտ եմ ազգակից.
Ընմա զիս հայր իմ չըքաւոր համհարզ ի զէն ի տղայ տիոց
Այսըր առաքեաց. և ցորչափ կայր նա անվըտանգ ի պետութեան,
Եւ պետութիւնըն խորհըրդով նորա ցորչափ հըզօրանայր,
Եղէն և մեզ փառք և անուն ոչ դուզնաքեայ. այլ մախանօք
Խաբեբային Ոդիսեայ (ոչ զանծանօթըս բարբառիմ)
Յորմէհետէ ի սահմանաց աստի վերնոց փոխեցաւ նա,
Վըշտակիր կեի կենցաղ ի սուգ տըխուր և ի մըթան,
Սըրտառուչ ընդ արկած անպարտակիր բարեկամին:
Անմըտացայ, ոչ լուռ եղէ, զի թէ երբեք շնորհէր ինձ բախտ
Յաղթական ի հայրենիս իմ դարձ առնել անդր ի յԱրգոս,
Ըսպառնայի խընդրել վըրէժ. և հեռ անհաշտ յիս ձըգեցի:
Այս ըսկիզըն ինձ աղէտից, աստի ակըսաւ ինձ Ոդիսևս
Լինել աչընկեց ի նորանոր միշտ ի բարուրս.
Այսըր աղագաւ ի ռամիկըն ծաւալէր զինէն կասկած,
Եւ եղեռանըն գիտակից՝ ընդդէմ ինձ միշտ զէնըս խընդրէր.
Եւ ոչ ըղկայ երբեք էառ, մինչև քըրմին Կալքասայ...
Այլ ընդէ՞ր ըղդըժպըհիս զուր յեղյեղեմ, զի՞ յապաղեմ,
Շատ իսկ լուայք. ձեզ անխըտիր են Յոյնք, առէք յինէն վըրէժ,
Զայդ իթակեանըն խընդրէ, զայդ մեծագնի և Ատրիդեանք:
　　Յայնժամ իղձք եղեն մեզ զաղագս իրացն հետազօտել,

Պեղասգեան արուեստից և եղերանցն անդէտք ծանուցն:
Երկիւղագին ինքն ըզվէպս ի կեղծ սրտէ յառաջ մատոյց.
Դանայեցիք վաստակաբեկք յերկարատև պատերազմէն
Ըստէպ ցանկային խոյս տալ թողուլ ըզՏրովադա,
Եւ իցի՜ւ թողուին. այլ ըստահակ ծովուն մրրիկ
Արգել ըստէպ ըզնոսա, և խեռ Հարաւ ահ արկ ի չու,
Մանաւանդ յորմէ հետէ ի յակրեից հիւսնեալ փայտից
Եկաց սա ձիդ, ընդ բոլոր երկին ամպրոպք միշտ հընչէին:
Վարանեալ առաքեցաք զԵւրիպիլէ հարցանել
զԱպոլոն. նա ի Ներքուստ պատգամ տրխուր էած առ մեզ.
Ի գալ ձերում, ո՛ Հելլէնք, յիլիական այսր ի յեզերս,
Ըզկոյս ի սպանդ ածեալ՝ արեամբ ըզհողմս ընդ ձեզ հաշտ կալայք.
Արեամբ ըզդարձ պարտ է խընդրել, և արգոլեան տալ կեանս ինուէր:
Լուր եղև յունկըն ռամկին, յապուշ հարան միտք բոլորից,
Եւ ցուրտ սարսափ յոսկերս ի ներքս անկաւ թէ ո՛ւմ ճակատագիրք
Պատրաստեն մահ, և զո՞ խընդրէ զոհ Ապոլոն: Անդ իթակեանն
Աղմըկաւ մեծաւ ձըգէ ի մէջ ըզքուրմըն Կալքաս,
Հարցանել զի՞նչ գիցն էին կամք. այլ ինձ զոճիրն անգութ յօգունք
Պատմէին, հանդերձեալըզըն լռելեայն գուշակք չարեաց:
Երիցս հընգեակ աւուրս եկաց Նա լուռ ղօղեալ, և հրաժարէր
Ոչ ցուցանէր զոք առ ի մահ դատապարտել. այլ ըստիպեալ
Ուր ուրեմն ի մեծաստատ ըսպառնալեացն Ոդիսեայ
Ըստ սադրանաց սահմանեալ. հաւանեցան բոլորեքեան
Ընդ միոյս հիքի կորուստ, յորմէ անձնիւր խիթայր զանձնէ:
Հասանէ օրըն մահաբեր, և սպասք ահա սուրբք պատրաստին,
Մուրկ աղի, և ժապաւէն ինձ վարսակալ զիրանամբք:
Մազապուր ի մահուանէ զերծայ, զկապանս ի բաց խըզեալ,
Ոչ ժըխտեմ. և ի տըղմուտ լըճին ի մութ գիշերի
Թաքեայ ի սէզ, մինչև թերևըս զառագաստըս պարզէին:
Չիք ինձ արդ յոյս տեսանել ըզհայրենիս, ըզքաղցր որդիս,
Եւ ոչ ըզհայր իմ ցանկալի, զորս ընդ իմումըս փախըստեան
Խընդրեսցեն, զիմոց մեղաց արեամբ հիքացն առնուլ վըրէժ:
Արդ վասըն դից սըրտագիտաց, և վասն ամբիծ հաւատոյ՝
Որ թէ երբեք դեռևս ուրեք կայցէ ի սիրտ մահկանացուաց,
Գըթա ի վիշտս իմ, յիս տէր, գըթա ի հեգս անպարտակիր:
    Վըրիպագութք ի յօգորմ՝ կեանս արտասուացըն շնորհեցաք.
Ինքըն Պրիամ ետ նախ պատուէր բառնալ յանձնէն ըզձեռակապս
Եւ զուժգնապիրկ խըզել կապանս. և մարդասէր բանիւք յաւել.
Մոռա այսուհետև դու ըզՀելլէնս, և լեր ընդ մեզ
Ո՛ ոք և իցես: Պատմեա մեզ արդ ըստոյգն առ ինչ



Կազմեալ ձիոյդ է յաղթանդամ պատկեր, և ո՞ գործին ճարտար.
Է՞ր ի խընդիր, յուխտ թէ յանօթ պատերազմի է պատրաստեալ:
    Առ այսոսիկ Նա ի Հելլէն հըմուտ ի հնարս և ի Նենգ,
Բուզէ զարձակ ի կապանաց ձեռսն ի յաստեղըս գոչելով.
Ըզձեզ ով բոցք յաւէրժք, և զձեր անդըրժելի զօրութիւն
Կարդամ ի վկայս, դուք ինձ վըկայք բագինք և տէգք եղերականք՝
Յորոց զերծայ, և ժապաւէն գիցանըւէր՝ զոր առ ի զոհ
Կրեցի ի գլուխ, լիցի օրէն ինձ լուծանել ըզՀելլենաց
Գաղտնիս սըրբազանս. լիցի զօրեարըն զայն ատել,
Եւ հօլանել զամենայն՝ որ ինչ ուրեք քօղասուզեն.
Ոչ ևս օրէնք հայրենիք դընեն ինչ պարտ ինձ ի վերայ.
Դու միայն ո՛ Տրովադա կացցես ի քում առ իս խոստման,
Եւ զերծ ինև ի վտանգէ՝ կալցիս առ իս սերտ ըզհաւատ,
Թէ զհաւաստիս քեզ պատմեմ, թէ մեծ ինչ քեզ տամ փոխարէն:
Յոյս դանայեցւոց և ամենայն վստահութիւն
Ի Պալլաս ի սկզբանէ անտի մարտին էր հաստատեալ.
Այլ ամպարիշտն յորմէհետէ Դիոմեդէս, և եղերանց
Հնարագէտն Ոդիսեւս, զաղետաբերն յափըշտակեալ
Ի վեհավայրըն մեհենէ զՊալլադիոն, և կոտորեալ
Ըզբարձու դըղեկին ըզպահապանս, ածին ի բաց
Սուրբ ըզպատկերն, և ըզձեռսըն շաղախեալս արեամբ ձըգեալ
Ի կուսականըն վարսակալ աստուածուհւոյն յանդըգնեցան,
Եղանէր յայնըմհետէ դանայեցւոց յոյսն ի դերև,
Բեկաւ նոցայն զօրութիւն, և յետս ընդդէմ բախտն ընկըրկէր.
Ուծացաւ ի նոցանէ սիրտ դիցուհւոյն, զոր տրիտոնիկն
Անշուշտ նըշանօք ի յայտ էած աստուածուհին.
Զի ընդ կանգնել ի բանակի անդ պատկերին՝ բոցք ի խոժոռ
Աչացն հատան շառագոյնք, անդամըն ընդ քիրտն աղի հարան,
Եւ երեքկին ինքն ի յերկրէ ընդոստուցեալ ո՜վ հրաշք անճառ,
Շարժէր ըզվահան, ճօճէր ըզտէգ ի ձեռըն:
Անդէն Կալքաս երգէ պատգամ փորձել փախուստ ընդ ալիս,
Գոլ անառիկ ըզպարիսպըս Պերգամայ Հելլէն զինուց՝
Զև անդրէն խընդրեալ հըմայս յԱրգոս, և չև դարձուցեալ
Ըզդիցուհին՝ զոր ընդ ծով ածին ի կոր եղեռնափայտ.
Դիմել ապա ի հայրենիս իւրեանց հողմով ի Միկենս:
Եւ հաշտ ըզդիս արարեալ՝ դառնալ անդրէն կազմեալք ի զէն:
    Այսպէս Կալքաս հըմայիցն առնէր վախճան. և Յոյնք խրատեալ՝
Զայդ փոխանակ Պալլադեայ, ցասուցելոյ աստուածուհւոյն
Պատկեր ինուէր կանգնեցին, մեծի ոճրին ի քաւութիւն.
Սակայն պատուէր ետ Կալքաս ըզբոլորըդ զայդ առկավիթխար

Հիմնեալ ի կաղնեաց յարուցանել բարձրակառոյց,
Զի մի ընդ դրունս մուծեալ, մի ի պարիսպս ի ներքս անեալ,
Ըստ կրօնից հարց պաշտպանել ժողովրդեանդ կարասցէ:
Զի թէ ի նուէր Աթենասայ սեղանազերծ ձեռն արկանէք,
Համակործան հասցէ կորուստ և Պրիամու և փռիւգացւոց,
Զոր դիք ի գլուխ իւր ըզհըմայսն չարագոյժս դարձուսցեն.
Այլ եթէ դուք զայդ ի քաղաք ձեր մուծանէք, մարտիւ մեծաւ
Ասիա գայցէ յամուրըս պելոպեանըս կամակար,
Եւ ի թոռունըս մեր յապայս ճակատագիրքն հասանիցեն:
 Սըտերդմանըն Սինոնի այսու նենգաւ և արուեստիւ
Հաւատարիմ եղեն վէպք, և զորըս ոչ Դիոմեդէս,
Ոչ լարիսեանն Աքիլլէս, ոչ պարագայք ամաց տասանց
Նըւաճել կարացին և ոչ հազարք ողնափայտից,
Պարտեաց նենգութիւն, պարտեաց արտօսըր բըռնազբօս:
 Մեծ ևս ինչ անդ և առաւել յոյժ ահարկու պատահար
Դիպեալ հիքացըն՝ զանըզգոյշ սիրտըս նոցա խըռովեցոյց.
Լայոկոն վիճակաւ ընտրեալ ի քուրմ Պիսիդոնի,
Ցորժամ եզն ի բագնի զենոյր ըստուար հրապարակաւ,
Ահա վիշապք երկու (սոսկումն է ինձ պատմել) ի Տենեդեայ
Ընդ ծով հողմախաղաղ վերաբազմեալ ի մըկանունս
Լայնասփիւռ ոլորտիւք գան զուգահետ յեզերըս կոյս
Ուղղաբերձք ի ծուփս անդ լանջք, գեր ի վերոյ քան զալիս
Բաշք հարթուցեալք արիւնաներկք. այլովք մասամբքըն յեցք ի ծով,
Զանհեթեթ ըզտըտունսըն պատ ի պատ գալարելով.
Հընչէր սօսափիւն ընդ փըրփրադէզ ալիս ծովուն:
Եւ ահա հասեալ յերկիր՝ բոց ի հրացայտ յարիւնըռուշտ
Աչսն զինվարեալ (…) Ըզձուներ, և ըզշըշօղ շըրթամբք ճապուկ ճօճեն լեզուս:
Խոյս ի տեսոյն տըւաք ի ցուրտ հարեալ սարսափ. նոքա դիմեն
Դէպ ուղիղ ի Լայոկոն, և ըզմատաղ նախ ըզմարմնով
Որդեկացն երկուց պատեալ՝ զանդամս հիքացըն խածատեն.
Ապա և յինքն յարձակեալ, մինչ զէն առեալ գայր յօգնութիւն,
Կապեալ ըզնա ի պարոյրըս մեծամեծըս կաշկանդեն,
Երկիցս ընդ մէջըս նորա, երկիցըս շուրջ զուլամբն արկեալ
Ըզքըսթըռնոցսըն թեփամորթ, և զպարանոց ի վեր ցըցուեալ
Գըլխովին: Նա ըզհանգոյցըս մերթ խըզել ճըգնի ձեռօք,
Վարսակալքըն թաթաւին ի ժահըր թուխ և ի շարաւ,
Եւ մերթ սոսկալի բառնայ յաստեղս աղաղակ.
Որպէս պոչիւն զըւարակի փախուցելոյ խոց ի բագնէ,
Ըզդերևեալըն ի հարուած հերքեալ ըզսակր յուլանէն:
Ապա վիշապքըն երկոքին սողոսկելով բարձր ի դըղեակ



Անըւիրին տրիտոնեան աստուածուհւոյն դիմեալ ի վեր
Առ ոտըս նորա ընդ ասպարաւն ապաւինին:
 Յահաբեկեալ սիրտըս ընաւից նոր անկանի յայնժամ երկիւղ.
Զարժանին ասեն լուծեալ Լայոկոնի ըզվըրէժ
Թըշնամանացն արկանելոյ ի սուրբ կաղնին տէգ ամպարիշտ:
Ածել ի ներքս ըզպատկերն աղաղակեն, և հաշտ առնել
Ըզդիցուհին: Համայն խրամատ ի քաղաքորմ անդըր գործեմք,
Բանամք ըզպարիսպս. ամենեքեան կազմք ի վաստակ
Ածեն զանուոց ընդ ոտնակօքըն ճախարակս, և կանափեայ
Արկանեն յուլըն պարան. և մեքենայն աշխատաբեր
Ելանէ ընդ պատուարն, յղի յորեար ըսպառազէն.
Շուրջ պար առեալ պատանիք և օրիորդք անհարսնացեալք,
Օրհներգ ի շուրթըն բերկրին լինել ի տռնըն ձեռընմերձ:
Ինքն ի միջի քաղաքին սաղապաճեմ կայ սպառնալից.
Ո՛վ հայրենիք, ո՛վ Իլիոն, ո՛ բնակարանըդ դուռ վեհից,
Ո՛վ հըզօրքդ ի մարտի դարդանականքըդ պարիսպք:
Չորիցս առ սեամըս երիվարն ի մըտանելն ըզկայ եառ,
Չորիցս ի փորոյն շաչիւնք զինուց ետուն գանգիւն.
Այլ յամառիմք կուրացեալք մոլեգնութեամբ, անսաստք խրատուց,
Ի սըրբազան դըղեկին ածել կանգնել ըզհրէշըն ժանտ:
Յայնժամ եբաց Կասանդրէ ի գոյժ չարեաց հանդերձելոց
Ըզշըրթունս, յաստուածաստատ ի հրամանէ՝ ոչ լըսելի
Երբեք եղեալըս տեկրացւոց: Մեք ըզմեհեանըս դից, աւա՜ղ,
Զի էր վերջին մեզ այն օր, սաղարթապատըս յօրինեմք
Ընդ քաղաքն ամենայն: Պարագայի գիւրեաւ երկին,
Բազմի գիշեր յՈվկիան, ծածկէ զերկիր և ըզբեեռ
Միրմիդոնեան դաւոյն հանդերձ համապարփակ. լըռեն տեկրեանք,
Շուրջ ի պարիսպս անդ տարածեալ, դրաւէ թըմբիր ըզխոնջ անդամս.
Եւ ահա արգիականըն գայր բանակ ի Տենեդեայ,
Ըսպառազէն նաւուք պատեհ գըտեալ ի լուռ լուսնակի,
Դէմ ի ծանօթ եզերս եդեալ: Բոց արքունին յայնժամ ցըռուկ
Էառ ի վեր. և նոյնհետայն, ի հրամանաց դիցն անհաշտից,
Բանայ Սինոն գաղտ ըզդարանըն եղևնեայ, և ձին ի լոյս
Ածէ զփակեալ Ցոյնս ի փորի. և ի գոգեալ կաղնոյն զըւարթք
Գան ի դուրս ընդ իջուցիկ սահեալք ընդ տռըն զօրավարք
Տիսանդր և Սթենելոս, Թովաս և ժանտն Ոդիսևս,
Ագամաս, Մաքաւոն և զհետ նորին Պիւռոս պելեան.
Եւ ապա՝ ինքըն դաւոյն ճարտարապետ Եպէոս.
Ի՛ քաղաք անդըր դիմեն թաղեալ ի քուն և յանապակ,
Եւ զպահպանըս ընդ սուր հանեալ, բանան ըզդրունըս մուծանեն

Զընկերս ի ներքս, և ընդ գունդըս դաւակիցս համախըմբին։
Էր ժամ՝ յոր քուն նախկին տիրէ վաստակելոց մահկանացուաց,
Շնորհիւ դից ընդ անդամս ախորժելի խըլըրտեալ.
Եւ ահա ինձ ի տեսլեան մտի Հեկտոր ծանրաթախիծ,
Հեղլով աղբիւրս արտասուաց, որպէս երբեմն յափըշտակեալ
Յերկձիոց, և թաթաւեալ յարիւնախառըն թուխ փոշի,
Յուժգնապիրկ ի փոկոց ոտքն ուռուցիկք ի քարշ ածեալ.
Աւա՜ղ, որպիսի՜ տեսի ըզնա այլակերպեալ
Ի Հեկտորէ՝ որ զԱքիլլեայն արկեալ զանձամբ կողոպուտ՝
Գայր դարձեալ, կամ ըզփռիւգեանն յորժամ ըզհուր արկանէր
Ի խելըս դանայեանց. մօրուսք ի տիղմըն շաղախեալ,
Հերքըն մածեալ յարենէ, յանձին ըզվէրսըն բերելով՝
Զորս ընկալեալ էր յոգունս առ պարըսպօքն հայրենեօք։
Թըւէր ինձ ձայնարկել նախկին առ նա արտասուելով,
Աղաղակել տըխրագին յոգեալ բարբառ. Ո՛վ լոյս Տրովայ,
Ո՛վ անսասան յոյս տեւկրացւոց, առ ի՞նչ յամել քոյին այդքան,
Անձկալիդ Հեկտոր, յորո՞ց գաս ի ծագաց, ո՞րպէս ըզքեզ,
Յետ բազմազան աղխտից և քաղաքիս և որերոյ,
Եւ յետ քոյոց այդքանեաց կոտորածի, տեսանեմք արդ.
Ո՞ր ապառում արկածք եղծին ըզկերպարան քո ըզվըսեմ,
Զի՞նչ են վէրքդ այդոքիկ, զոր տեսանեմ։ Ինքն յայնժամ լուռ,
Ոչ ինչ բանից իմոց մտաեաց տըւեալ տեղի, այլ լուրջ ի դէմս
Յոգւոց հանեալ ի խորոց, փախիր, ասէ, աստուածորդիդ,
Խոյս ի բոցոյդ տուր ի բաց, ունի զամուրսըդ թըշնամին,
Հիմն ի վեր կործանի բարձրակատարն ահա Տրովա.
Եթէ մարթէր Պերգամայ բազկաւ ուրուք կալ անկործան,
Իմովս իսկ կայր. քեզ ըզթերափս իւր աւասիկ Տրովադայ,
Եւ զըրբութիւնըս տայ յաւանդ, կալ ըզդոսա քեզ բախտակից,
Դոցա պարիսպըս խընդրեսցես, մինչև յածեալ ծըփեալ ընդ ծով
Կառուսցես ուր ուրեմըն բարձրաբերձըս զայնոսիկ։
Ասաց, և ի խորոց դաբիրային արտաքս եած
Զվեստայն մեծազօր, ըզհուրնանշէջ և զվարսակալ։
Դըղըրդէին յայնժամ պարիսպք յաշխարանաց ի ձայն պէսպէս.
Եւ թէպէտ հօրն Անքիսեայ հեռի անտի էր բնակարան
Շըրջապատեալ յանտառաց, եըս քան զեըս սաստկանայր
Շըռինդն ի լուր և արհաւիրք մերձեցելոց շխահման զինուց։
Ընդոստ ի քնոյ բարձր ի տանիս ելի կացի ես ի յակճիռ.
Որպէս ի բուռն հարաւահողմ յորժամ ի հունձ անկանի բոց,
Կամ յորժամ ուղխ գահավէժ ապականէ զարտօրայս,
Աշաւաշէ զեզանց վաստակ, աղխաղխելով ըզհետ ածեալ



Ըզմայրիս ընդ զառ ի թափ. յայնժամ հովիւ յեղակարծում
Ի լուր հընչմանն յառնէ ի ծագ բարձու վիմի կայ հիացեալ։
Հաւատարիմ անդ Հեկտորի եղանին բանք, և հոլանի
Դանայեցւոցըն դարան. յաղթէ Հեփեստ, վաղ Դիփոբեայ
Կործանի տուն հըյակապ, վաղ և մօտիկն Ուկալեգոն
Հըրդեհի, շուրջ ի սիգեան ալեաց ի բաց բոցք հատանին.
Զայրանայ գոյժ աղաղակին և ձայն փողոց։ Այպուշ ի զէն
Ընթանամ, վառի եռանդն ի յիս կազմել ի պատերազմ,
Դիմել յամրոց անդր ընկերօք ի միասին. հեռ և զայրոյթ
Մըղէն զիս, յուշ անկանի մահ գեղանի զէն ի ձեռին։
Եւ աւասիկ Պանթոս զերծեալ յաքայեցւոց անտի զինուց,
Պանթոս օթրեան քուրմըն փեբեայ, քուրմ ամրոցին, յափըշտակեալ
Ըզսըրբութիւնս և զդիս պարտեալս, եղբօրորդեաւն հանդերձ մանկամբ,
Ոգեսպառ յարշաւանաց առ սեամըս մեր գայր դէպ ուղիղ։
Զի՞նչ ելք իրացն, ասեմ, Պանթէ. յո՞ր ի դըղեակ դիմեալ երթամք.
Զև ըզբանս իմ կատարեալ, հեծեծելով նա զայս կըրկնէ.
Եհաս յետին Դարդանիոյ օր, անհրաժեշտըն եհաս ժամ.
Եղաք երբեմըն տրովացիք, եղև երբեմըն Տրովադա,
Եղեն վաղ փառք տրովականք. ետ զամենայն արգիւացւոց
Անողորմն Արամազդ, տիրապետեն դանայեցիք
Ի քաղաքն այրեցաւեր, և ի միջի անդ դըղեկին
Երիվարըն բարձրաբերձ կացեալ զեղու սպառազէնս.
Բոց ընդ քաղաքըն Սինոն յաղթանակաւ տարածանէ,
Լեալ տըմհար պարտելոց. ընդ փեղկեալ հրոսեն դըրունս
Բիւրք բիւրուց, որչափ ինչ ոչ երբեք եկին զօրք Միկենաց։
Այլք դիմամարտ ունին զանձուկըս՝ ճակատեալ ի սայր փայլուն
Կազմք ի նախաճիր. պահք իսկ դըրանցն հազիւ իշխեն ի կռիւ ի մարտ։
Ի բանից աստի Պանթեայ և ի կամաց դից՝ դիմադրաւ
Արկի ի բոց զիս և ի զէնս, ուր անողորմըն Երինիս
Ուր աղաղակ մինչև յերկինըս բարձրագոչ զիս կոչէին։
Հըռիփէոս, և Եպիտոս երիցագոյն հասակաւ.
Դիմաս և Հիպանիս յաւելան մեզ ի լուսնակի
Նըպաստք ի կռիւ ի թեւէ, և միգդոնեանըն Քորեբոս,
Որ եկեալն էր յայնժամ ըստ դիպուածոյ ի Տրովադա,
Կաթոգին վառեալ սիրովըն Կասանդրեայ, յօգնութիւն
Աներոյ իւրում ածեալ Պըրիամու և փռիւգաց.
Հէքն անլըսող հարսին իւրոյ վաղ ըզճարիսըն զուժելոյ։
Զորոց տեսեալ խրախոյս ի մարտ, խօսիմ այսպէս իրացն ի դէպ.
Տարաժամ, ո՛վ մանկունք, կըրէք զայդ սիրտ արիական.
Թէ անյողդողդ կամք իցեն յանդըգնելումըս զալ ըզհետ

Ի փորձ յետին, (զի տեսանէք յոր իրք մեր կան հասեալ ի ծայր,
Խոյս ետուն դիք՝ որովք կանգուն կայր պետութիւն մեր, և լքին
Ըզգաւիր և ըզսեղան, ) և քաղաքիս հըրկիզելոյ
Յօգնութիւն, համպա մեացուք դիմեալք ի զէնըս միջամուխ.
Զեք փրկութիւն պարտելոց, բայց ի կենաց լինել անյոյս։
Ի կորով մանկըտւոյն այսպէս զայրոյթ յաւելեալ,
Որպէս գայլք գիշախանձք, զորս ամպարիշտ սովըն գըրգիռ
Ի մառայլ ամպրոպաց կոյրս ի յորջոյ ձըգէ ի դուրս,
Եւ ըսպասեալ մընան կորիւնք պապակելով որկորով,
Դիմեմք ի խուռըն զինուց դիմեմք ի խուռըն թըշնամեաց,
Ընդ մէջ քաղաքին հատեալ ուղի յանշուշտըն մահ։
Խոր խաւարաւ թուխ ըզմեօք պատէր գիշեր. ո՞ զգիշերոյն
Այնորիկ կարիցէ պատմել մահունս և զկոտորած.
Աչեռիցն այնոցիկ ո՞ արտասուս հաւասարել.
Անկաւ քաղաքըն վաղեմի տիրող ընդ ամս յոգնայոլով.
Դիակունք ընդ պողոտայս ընդ տունս ընդ սեամըս մեհենից
Անկեալ դընին. ոչ տեկրացիք եւեթ վըրէժըս տան արեամբ,
Այլ պարտելոցն անդրէն ի սիրտ երբեք երբեք դառնայ կորով,
Եւ յաղթականք եւ անկանին դանայեցիք. համայն ուրեք
Ողբ աղիողորմ, և արհաւիրք ընդ ամենայն,
Եւ մահուն համայն ուրեք բազմադիմի սփռեալ պատկեր։
Նախ ի դանայեանց Անդրոգէոս պատահէ մեզ
Յոգնախուռըն մարտակցօք. և համարեալ իւրս ըզմեզ,
Բարեկամ բանիւք առ մեզ բարբառելով ասէ. Ո՛ արք
փութացարուք, զի՞ է ձեզ ապաժամանըդ յամեցումն.
Աւերեն այլք, յափըշտակեն, հըրկէզ առնեն ըզՊերգամայս.
Դուք դեռ այժմիկ բարձր ի նաւաց իջանէք գայք։ Ասաց և զգաց
Զի կայր ի խառն թըշնամեաց, չառեալ անկեղծ պատասխանի.
Եւ խուճապեալ յետս ընկըրկէր ըզգնացըս իւր և ըզբարբառ.
Որպէս յանկարծ թէ ոք ի ժանտ փուշըս կոխէ զօձ ընդ երկիր,
Կասի սոսկացեալ ընդ ամբառնալ սողնոյն ի վեր
Զուլըն կապոյտ ուռուցիկ. ոչ ինչ այլազգ Անդրոգէոս
Զահի հարեալ յերեսաց մերոց ընդ կրունկըն նահանջէր։
Հասաք ի վերայ, և թանձրախուռըն շուրջ զինուք
Պատեալ զահաբեկեալըն զանհըմուտըս վայրաց,
Խիտ ընդ խիտ արկաք տապաստ, օժանդակեալք ի բախտէն
Ի նախաձեռըն մարտին. և յաղթութեամբս այսուիկ Քորեբ
Խրախոյս առեալ, Զինուորակիցք իմ, ասէ, ո՛ն երթիցուք
Ուր բախտն հորդէ մեզ ճանապարհ, ուր բախտն յաջող զինքն ընծայէ.
Այլս ընդ մերոցս առցուք ասպարս, ձև դանայեան արկցուք զանձամբ.



Զի՞նչ խըտիր պարտել դաւով կամ քաջութեամբ ըզթըշնամին.
Ինքեանք մեզ զէնըս մատուսցեն։ Ասաց և ինքըն նախ վառեալ
Ի սաղաւարտն Անդրոգեայ ըըցունազարդ և ըզսուսեր
Արգիացի եան յագդեր. ըզնոյն արար Հըռիփէոս,
Ըզնոյն Դիմաս, ըզնոյն մանկտին առհասարակ զըւարթագին,
Եւ ըզգեցան իւրաքանչիւր ըզկողոպուտն այն ինչ առեալ։
Համպա դիմեալ ի դանայեանս, ոչ հաչտս ընդ մեզ ունելով դիս,
Ի կոյր գիշերի պատերազմունըս տամք բազումս,
Եւ ըզբազումս ի դանայեանց խոր ի դըժոխս իջուցանեմք.
Կէսք ի նաւըս դիմեն, այլք ի փախուստ աճապարեն,
Սըփռին յանքոյթ ի ծովեզերս, և այլք անդրէն ելեալ ծածկին
Վատ երկիւղիւ ի փոր ծանօթ հըսկայաձև երիվարին.
Աւաղ չէք և չէք յուսալ իմիք հակառակ դիցըն հրամանաց.
Ըզպըրիամեանն աւասիկ արտաքս ըզկոյսըն ձըգէին
Ի սըրբութեանցն Աթենասայ ըզԿասանդրէ գիսաճապաղ.
Ընդունայն ըզհըրափայլ զաչս ընդ երկինս ինքն ամբառնայր,
Զի զբազուկսըն փափուկըս ձեռակապք արգելուին։
Զըհանդուրժեալ Քորեբայ ընդ այն տեսիլ, արկ զայրագին
Զանձն ի սպայն, դիմագրաւեալ ի մահ. և մեք միահամուռ
Ըզհետ նորա յարձակիմք նիզակախուռն ըսպառազէնք.
Անդր ի բարձուէ մեհենին տեղան մերոցըն նետք ըզմեօք.
Առնի ողորմ կոտորած, օտար զինուցըն կերպարան
Եւ բաչք արգիացի զարդմանակաց գործեն պատրանս։
Յայնժամ խռովեալ դանայեցիք ընդ ապշոպումն օրիորդին,
Եւ գունդ կազմեալ շուրջ ամենուստ գան զայրագին, դըժնեայն Էյաս
Եւ Ատրորդիք երկոքեան և Դոլոպաց բանակն ողջոյն.
Որպէս հողմունք հակառակք յորժամ մըըրկեալ յառնեն ի մարտ,
Զեփիւռ Նոտոս և Էովեանն Եւրոս ձիովքըն խայտալով,
Յայնժամ անտառք մըռընչեն. եռաժանեաւըն Ներէոս
Փըրփրալից վայրենացեալ յուզէ զանդունդս ի խորոց։
Նոքին ինքեանք, զորս ի մըթան խոր գիշերոյ վարեալ էր մեր
Դաւով ի փախուստ, և ընդ քաղաքն էին ցըրուեալ,
Դառնան անդրէն՝ ծանուցեալ զասպարըս մեր, ըզզէն ծըպիտ,
Ըզտարաձայն հընչիւն շըրթանց, և ի խառնէ նոցին ընկճիմք։
Նախ Քորեբ առ սեղանով քաջազինի աստուածուհւոյն
Ի Պենելեայ անկաւ աջոյն. ապա նա ինքն Հըռիփէոս,
Այն որ արդար և ուղիղ քան ըզըընաւ էր տեւկրացիս,
Անկաւ տապաստ, այսպէս ընդդէմ մեր յանմահից եղեալ վըճիռ.
Անկան Դիմաս և Հիպանիս յիւրեանցայոց անտի զինուց,
Եւ ոչ ըզքեզ, ով Պանթէ, ոչ գերազանց քոյին կըրօն

Եւ ոչ խոյր Ապողոնի յօրհաս մահուդ պահպանեցին։
Դուք ինձ աճիւնք Իլիոնի, դու ինձ իմոցըս բոց յետին,
Լերուք վկայք, եթէ երբեք ի կորըստեան ձերում աշխե
Խոյս ի զինուց կամ յարկածից դանայեցւոց ետու ի բաց,
Կամ եթէ կամք ճակատագրին էին և ինձ անկանել անդ,
Գուցէ արդեօք գըտանէի՞ անգործ ձեռամբ արժանապարտ։
Հարկիմք անտի տալ ի բաց, Իփիտ ընդ իս և Պելիաս.
Նա ծանրաբեռն հասակաւ, սա յՈւղիսեայ վիրաւորեալ.
Շըռինդն ըզմեզ կոչէ ստիպաւ ի Պրիամու արքունիս.
Մըղէր անդ մարտ աչագին, որպէս թէ չէր այլ ուրեք մարտ,
Որպէս թէ ոչ և ընդ քաղաքն ողջոյն մահուանք գործէին։
Անպարտելի տեսաք զԱրէս, տեսաք խուժեալ ի տամալիս
Ըզդանայեանս, և ըզդըրունըս պաշարեալ ասպարափակ.
Կանգնին ըզպարըսպօք սանդուղք բազըմօք յեց ի դրանդիս.
Ամրածածուկք ի ձախումն ունին ընդդէմ նետից վահան,
Աջովըն բուռն ըզբարձանց հարեալ ի վեր սողոսկելով։
Ընդդէմ նոցա դարդանացիք ըզյարկըս տանց և ըզծածկոյթ
Եւ զաշտարակըս խըլէին, օճան անձանց փոխան զինուց
Պատրաստել ի յետին աչա հասեալ վըտանգ մահու.
Կէսք զոսկեզօծ ձեղունս ըզզարդըս բարձրաթիւս հաւուց նախնեաց
Ամանն ի ստոր. այլք ի խոնարհ սուսերամերկ ի պահ դըրանց
Կան շուրջանակի զումարտակեալ զօր բազմահօծ։
Զարթեաւ յայնժամ հոգիս յիս դիմել օգնել տանն արքունի,
Նըպաստ ի կալե լինել արանց, և տալ խրախոյս պարտասելոց։
Սեամք անդ և դրունք էին կոյրք, և գողունի ի յետկուսէ
Թողեալ դրանդիք ընդ մէջ յարկացըն Պրիամու դիւրանցիկք,
Ընդ որըս հէքն Անդրոմաքէ՝ մինչ պետութիւնըն կայր կանգուն՝
Յաճախ սովոր էր միայնիկ առ ըսկեսուրն և ըսկեսրայր
Ածել ըզմանկիկն Աստիանաքս առ հաւ նորին.
Բարձր ի կատար ապարանիցն ընդ այն դիմեմ, ուստի ընդ վայր
Թըշուառքըն տեկրացիք տեղային նետս ի թըշնամիս։
Աշտարակ ի գահաւանդ լերին կանգնեալ կայր երկնաբերձ,
Ուստի էր տեսանել լըրիւ իւրով զՏրովադա,
Ըզնաւատորմըն դարդանիկ և ըզճամբար աքայեցւոց։
Երկաթ ի գործ շուրջ արկանեմք՝ ուր ի վերուստ տախտակամածք
Դիւրափուլ ըզկըցուածըս գործէին. խըլեցաք զայն
Բարձր ի կայից և մըղեցաք, անկաւ շինուածըն դըղորդմամբ,
Յեղակարծում ըզդանայեանց ծածկեաց ըզգունդըս շուրջ ի բաց։
Այլք պարտելոցըն յաջորդեն, և ոչ ըզկայ քարինքն առնուն,
Եւ ոչ զինուց և նետից ազգիազգեաց դադարեն տեղք.



Ի մուտ գաւթին փայլէր Պիւռոս ի զէն ի զարդ պըղընձի,
Որպէս օձ ուռուցիկ ի չարաթոյն ճարակեալ բոյս,
Որջացեալ ի յերկիր եղեմնապատ, և ընկեցեալ
Ըզխորխ ի բաց՝ ելանէ նոր մանկութեամբ պայծառափայլ,
Գալարելով զագդըրըն լպիրծ, և զեռասայր տատանելով
Ըզլեզուն, յարեգակն ի վեր լանջիւքն ըմբերձիկ։
Հըսկայն Պերիփաս, և ընդ նըմա Աւտոմեդոն
Զինակիր Աքիլլեայ և ձիավար, և սկիւռացին
Մանկտի բոլոր ընդ նոսին ելեալ ի վեր՝ հուր ըզտանեաց
Հարկանեն. ինքն ընդ այլս յափըշտակեալ նախ ըզտապար,
Խորտակէ զսեամս ամրակուռս, և ըզդըրունըս պըղընձիս
Խըլէ ի ծըղխնեաց, հերձու զգերանըն և փորէ
Ըզկարծրատօրըր կաղնիս, և մեծաբաց առնէ ի նմա
Պատուհան. ըշտեմարանք ապարանիցն յայտնին խորինք,
Սըրահք երկայնաձիգք, և Պրիամու և թագաւորաց
Նախնեաց սեննակքըն ներքինք գան յերևան, և սպառազէն
Զօրականք ի նախադրունս անդ երևին կացեալք ի պահ։
Դըղըրդին աղխողորմ հեծեծանօք խորք արքունեաց,
Եւ ի խորոց անտի հընչէր ողբ և կական ճիչ կանացի,
Մինչև յաստեղս ոսկեղէնս հասանէր գոյժ աղաղակին։
Երկընչոտ տիկնայք ընդ յարկըն լայնատարըր թափառին,
Գիրկ ընդ խառն ընդ բարաւորս համբուրելով. հարկէ ստիպէ
Պիւռոս ուժով հայրենեաւ, ոչ նիգք զօրեն ոչ պահք ընդդէմ.
Դըրդուին դըրունք ի խիտ ընդ խիտ հարուած խոյին, և կործանին
Դրանդիք ընդոստք ի ծըղխնեաց. բանայ բըռնի ուղի, և Յոյնք
Ըզմուտըս խորտակեն, զառաջապահըս խողխողեն,
Եւ շուրջ ի բացեայ լընուն ըզվայրըս զինուորօք.
Ոչ այնպէս գետ փըրփրալից, յորժամ ըզթումբըս պատառէ,
Տապալէ յորձանօքըն զամբարտակս ընդդիմարգելս,
Եւ բերի կուտակադէզ ընդ անդաստանըս մոլեգին
Աշխաղխելով ձըգեալ ըզհետ զոմ և անդեայ ընդ դաշտօրայս։
Զինքըն իսկ տեսի ըզՊիւռոս գազանացեալ ի կոտորած
Ընդ Ատրորդիս երկոսին, և զՀեկաբէ հարիւր նըւովք.
Տեսի և ըզՊրիամ զի կայր բագնաց առընթեր
Շաղախելով արեամբ ըզհուր՝ զոր իւր իսկ դից էր նուիրեալ։
Տապալին սըրսկապանքն յիսնեակք՝ յուսոյ յոյս թոռնէից,
Եւ դրանդիք պանծալիք ոսկւով խըժից և աւարաւ.
Ուր հուր խնայէ՝ ըռնակալն դանայեցիք անդանօր։
Իսկ որպիսի լեալ Պրիամու ճակատագիր՝ թէ խընդրիցես,
Ըզգերելոյ քաղաքին իբրև ետես նա զաւերած,

Եւ զսեամբս տանցըն խարխարեալ, և անդ ի ներքս ըզԹըշնամիս,
Ըզգէն և զրաՀ՝ ոյց անսովոր էր ընդերկար Հասակ զառամ՝
Ջուր ըզդողդոջ ուսովքն առնոյր, և ընդունայն ըզսուսեր
Ածեալ յազդեր, ի մաՀ ի խուռըն Թըշնամեաց դիմագրաւէր։
Էր ի միջի ապարանիցն ընդ բաց երկնիցըն գըմբէԹաւ
Բագին մեծ, և սարդենի անդ Հինաւուրց սաւառնաԹեւ
ԸզԹերափովք Հովանացեալ. անդ դըստերօքըն Եկաբէ
Ի նանիր շուրջանակի ըզսեղանով պատըսպարեալ,
Իբր աղաւնիք երամովին փախըստականք ի սեաւ մըրրկէ,
Գիրկս ըզպատկերօք արկեալ ըզդիցըն նըստէին։
Իբրև ետես նա ըզՊրիամ վառեալ ի զէն պատանեկան,
Ո՞ր, ո՛վ փեսայդ իմ Հէք, ասէ, վարեն ըզքեզ միտք դըժընդակ՝
Առնուլ զանձամբ զէն, և յո՞ դիմեալ գընաս. ոչ այդպիսեաց
Նըպաստից է ժամանակ, ոչ նըմանեաց ախոյենից.
Ի նանիր և իմում էր Հեկտորի գտանել աստ մերձ։
Եկ աստ ուրեմըն տուր տեղի, լիցի բագինս այս բոլորից
Մեզ ապաւէն, կամ մեռիր և դու ընդ մեզ։ Զայս ասացեալ,
Նըստոյց առ իւր ի սըրբազան բազմոցի անդ ըզծերունին։
Եւ աՀա Պոլիտէ, մի յուստերացըն Պրիամու,
Խոյս ի Պիւռեայ կոտորածէն, ընդ մէջ զինուց և Թըշնամեաց
Գայր փախըստական ընդ ընդարձակ գաւիԹն ունայն.
Ում ոխերմաւըն մոլեգին ըզՀետ մըտեալ Պիւռոս տիգաւ,
Եւ ի բուռն ըզնա ածեալ՝ կայր ի կըշռել ի նա զՀարուած։
Այն ինչ Հասեալ ինքն առաջի աչաց ծնողացն, անդէն և անդ
Անկանէր յերկիր՝ ըզշունչ ընդ ճապաղիս արեան Հեղեալ։
Յայնժամ Պրիամ Թէպէտ և կայր ի տագնապի Հասեալ մաՀուն,
Ոչ Համբեր, ոչ ի զայրոյԹ խնայեաց և ոչ ի բողոք,
Այլ գոչէր. ԵԹէ կայցէ յերկինըս գուԹ խնամակալ,
Քեզ զարժանին ընդ եղեռնըդ ժըպրՀուԹեան Հատուսցեն դիք,
Քեզ՝ որ ետուր ինձ տեսանել ըզմաՀ որդւոյս ակն յանդիման,
Եւ ըզդէմս Հայրենիս յարիւն որդւոյ իմոյ Թանալ.
Զայդ և ոչ Աքիլլէս, զոր տարապարտ կոչես քեզ Հայր,
Արար ընդ Թըշնամին իւր Պըրիամ. այլ իրաւանց
Ակն ածեալ և օրինաց, զանշունչ դիականըն Հեկտորի
Հատոյց շիրմի, և զիս դարձոյց ի Հայրենին իմ պետուԹիւն։
Եւ ընդ բանին ծերունին ձըգեաց ըզտէգ իւր ապիկար
Թափուր ի Թափոյ. կերկերաձայն յետս ի պըղնձոյն
Կախէր գեղարդըն դերևեալ ի վաՀանին ուռոյց կըմբեայ։
Առ որ Պիւռոս. Զըրոյց ուրեմըն տար, ասէ, առ Պելիդէս
ԵրԹեալ առ Հայր իմ Հրեշտակ, և պատմեսջիր որ ինչ Պիւռոս



Գործէ անարժանս որդի նորին ստարախորԹ։
Ասաց և զծերըն դողդոջուն ի բագին անդըր գայԹ ի գայԹ
Յողող արեան որդւոյն էարկ, բուռն ըզվարսիցն Հարեալ ձախով,
Եւ ըզփայլուն ի վեր ըզտէգն առեալ աջով, և գոչելով
Մեռիր սատակեաց, արկ զայն ցըբունն ի կող նորին։
Այսպիսի եղև վախճան ճակատագրին Պըրիամու,
Այսու կատարածիւ եբարձ ըզնա բախտն ի կենաց,
Տեսեալ Հրածախ ըզՏրովա, և կործանեալ ըզՊերգամայս.
Եւ որ երբեմըն գերապանծ ընդ Ասիա Թագաւորէր
Ազգաց և գաւառաց, անկեալ դընի դիակըն յաղԹ
Դիակն անանուն՝ խըլեալ կառավին յուսոցն ի բաց։
Անդ նախ սոսկումըն դըժընդակ պատեաց զինև, յապուշ Հարայ,
Միտեցելոյ Հօրն իմոյ տիպ պատկերանայր ինձ յանդիման,
Ի տեսանելըն ըզՀամատի նորին զարքայն անկեալ ի մաՀ
Ցանողորմ վիրաց անտի. և անտէրունչն ինձ գայր ի յուշ
Կրեուսա և տունն աւար Հարեալ, և որդեկին վըտանգ Յուլեայ։
Շուրջ Հայէի տեսանել՝ որ ինձ ուստեք մընայր նըպաստ.
Կէսք վաստակաբեկք, այլք ի յերկիր և կամ ի Հուր
Ընդոստուցեալ առ վըշտին, Թողուին զիս ամենքեան։
Միայնակ յայնժամ մնացեալ՝ տեսի զի կայր Տինդարուհին
Լռելեայն ի մեՀենին Եստեայ ծածկեալ ի զանխուլ վայր.
Ի լոյս պայծառ Հըրդեհին գնայի բոտէպ շուրջ զաչս ածեալ.
Ինքն ի կասկած յերկաքանչիւրցն ի ցասմանէ, ի տեկրացւոց
Վասն Հիմն ի վեր Պերգամայց կործանելոյ, և ի վըիժուց
Դանայեցւոց և ըզբերլոյ ամուսնակցին ի զայրանաց,
Նըշաւակ սըրտմըտուԹեան և տրովացւոց և Հայրենեաց,
Նըստէր ԹաքԹաքուր առ սեղանովք, դիցն ատելի։
Հուր ի սըրտի իմում լուցաւ ըզՀայրենեաց խընդրել վըրէժ,
ՊատուՀասել զոճիր եղեռն. ընդէ՞ր ողջամբ զըՍպարտա
Եւ զՀայրենիս իւր ըզՄիկենըս տեսանել մեղապարտին,
Ընդէ՞ր յաղԹանակաւ ի յառագաստ իւր և ի տուն
Դառնալ տիկնօրէն առ ծնօղըս իւր և առ որդիս,
Մինչ Պըրիամ սրախողխող անկեալ դընի, և Տրովադա
Եղեալ Հըրկէզ, այսքանիցըս ծովեզերք Դարդանիոյ
Թանան յարիւն. մի այդպէս, Թէ և չիցեն փառք ի կնոջէ
Առնուլ վըրէժ, և ոչ գովից ինչ յաղԹանակ արժանաւոր,
Այլ գովեցայց ըսպանուԹեամբ անօրինին, արդարացի
Կըշռեալ պատիժ եղեռան, չիջցի յիս բոց վըրէժխընդիր,
Աճիւնք իմոցըն յագեսցին։ Զայս ի մըտի յեղյեղելով
Ի գնալ իմում զայրագին, և աՀա մայր իմ վեՀափառ

Երևի ինձ յայտնատեսիլ քան յայլ նըւագս, ի լոյս պայծառ
Փայլեալ ի մութ գիշերի, երևելով աստուածուհի
Իբր և որքան երկնաբնակաց սովորութիւն է երևել.
Արկ զինև զաջ իւր, կասեցոյց, և վարդագեղ շըրթամբքն յաւել.
Վիշտ դառնակըսկիծ ըզքեզ, որդեակ իմ, գըրգըռէ
Ի ցասումըն ծայրայեղ. զի՞ զայրանաս, զի՞ կաս անփոյթ
Մերոյս իրաց. ո՞չ ապաքէն կանխել քեզ պարտ էր և խընդրել
Ուր ըզհայր քո ծանրաբեռն ամօք թողեր դու զԱնքիսէս,
Իցէ՞ մանուկն Ասկանիոս, իցէ՞ Կրեուսա դեռ կենդանի:
Ճակատք դանայեցւոց շըրջապատեն զամենեքումբք.
Եւ եթէ ոչ ըզդէմ խընամք իմ ունէին, վաղ իսկ նոցա
Հասանէր գոլ ճարակ բոցոյ կամ ոխերիմ երկաթոյ:
Ոչ Հելինեայ լակոնուհւոյ դէմք ատելի, և ոչ Պարիս
Դատեալ չարեացըն պարտաւոր, այլ դիցըն սաստ ըզտրովական
Հար պետութիւն, դիք ըզՏրովայ կործան արկին յարկըս բարձունս:
Ահա բառնամ զամպդ ի սպառ, որ զմահացու բըբօքդ անէ
Ըստուերած, և թուխ և նամ պատէ ըզքև շուրջ մառախուղ.
Հայեաց, և մի՛ ի բանից մօր քո վըհատիր, մի՛ ստունգաներ
Խրատուց նորին. ուր զամբարտակըդ տեսանես տապաստ անկեալ,
Քար ի քարէ քայքայեալ, ծուխ փոշեխառն ընդ օդս ի ծուփ,
Երկրաժանեան անդ մեծաւ շարժէ զպարիսպըս Պոսիդոն,
Եւ ի հիմանց բովանդակ ըզդաստակերտըդ տապալէ.
Զըսկէական ըզդրունս ահա կանխէ գրաւէ անդ Յունոյ,
Եւ ի նաւաց զայրագին ձայն տայ կոչէ զըսպառազէն
Գունդս ընկերաց. հայեաց ի վեր, բարձր ի դըղեակս ահա բազմի
Տրիտոնեանըն Պալլաս՝ ի մէջ ամպոց փայլատակեալ,
Եւ վառեալ ի կառափըն դըժնէին Գորգոնիայ:
Ինքն իսկ Հայր ազդէ ի սիրտ դանայեցւոց կորով ի մարտ.
Նա ինքն ըզդիս յարուցանէ դարդանական զինուց ընդդէմ.
Փախիր որդեակ, ընդ քեզ եմ ես, լեր ձեռընթափ ի գործոյդ,
Եւ կացուցից անվըտանգ ըզքեզ ի սեամըդ հայրենիս:
Ասաց ու ի ստուերըս թանձրախիտըս գիշերոյ եղև անտես.
Եւ ահա ցնորք ընդդէմ Տրովայ և զօրութիւնք դից դիմամարտք
Երևէին. տեսանէի անդ զԻլիոն՝ բազմեալ ի հուր,
Եւ ի հիմանց ըզդաստակերտըն պոսիդեան կործան անկեալ.
Որպէս ի գլուխ բարձու լերին հացի զառամ, զոր մայրենորք
Երկաթով և տապարաց ի տեւէպ հարուած զուն գործեն
Կործանել, նա սպառնալից երկար ըզգլուխ իւր տատանէ,
Սարսին կողերքըն սաղարթունք, մինչև տակաւ յաղթահարեալ
Ի վիրաց անտի հեծէ, և ըզլեռին հանեալ հառաչ,



Յանկանելն արմատախիլ ձըգէ զաւեր լերինն ըզհետ:
Յայնժամ իջի առաջնորդեալ ի դիցուհւոյն զերծ անվըտանգ
Ընդ թըշնամիս և ընդ հուր, տեղի տան զէնք, բոցն ամփոփի.
Այն ինչ ի սեամս անդր հայրենիս ապարանից եկի հասի
Եւ ի յարկըս նախնիս, հայրն իմ՝ զոր նախ բառնալ տանել
Ըղձանայի ի բարձրաբերձ ծայրըս լերանց, և կանխեցի
Ի խընդիր, հրաժարէր, յետ կործանմանըն Տրովադայ
Զարև տեսանել ի հայրենեացըն տարագիր:
Դուք ասէ, որոց առոյգ տիոցդ արիւն, ոյց կորովի
Է ի յաստիս զօրութիւն, դուք փախերուք. թէ կամք էին
Երկնաբնակաց դից՝ զի կեցից, պահէին ինձ ըզտուն իմ.
Շատ է ինձ և աւելի՝ զի միանգամ տեսի զաւեր
Քաղաքին և զգերութիւն, լեալ քան ըզնա յերկարակեաց.
Այսպէս դուք թողէք անկեալ այսպէս զիս աստ, և ըզվերջին
Տըւեալ ողջոյն՝ երթայք ի բաց, ինձէն զանձին գըտից ըզմահ,
Ողորմեսցի ինձ թըշնամին, անկցի զինև ի կողոպուտ.
Թեթևադոյն լիցի ինձ վիշտ մընալ անթաղ. վաղ իսկ ումպետ
Եւ դըժպըհի դիցըն կեամ, յորմէհետէ Հայրն անմահից
Եւ արքայն մահացուաց ի շանթ ու ի բոց ինձ պատահեաց:
Զայսոսիկ բարբառելով կայր և մընայր անդըրդուելի.
Իսկ մեք հարեալ յարտասուս, հարսն իմ Կրեուսա և Ասկանի,
Եւ տունն ընդ մեզ համօրէն, աղեմք. Մի՛, հայր, մի՛ զամենայն
Քև կործաներ, մի՛ ըզհարկ ճակատագրին մեզ յաւելուր:
Նա հրաժարէր ի սպառ անշարժ ի խորհըրդոց և ի կայից.
Զէն առնում անդրէն, մահու հէքս ըղձանամ. զի՞նչ այլ հընար,
Ո՞ր յոյս բախտին յաջողուածոյ. կարծէի՞ր, հայր, թէ հնար էր ինձ,
Թողուլ ըզքեզ և գնալ ի բաց. է՞ր իսկ խըրատն այն անարժան
Ի ճահ շըրթանց քոց հայրենի. եթէ չիցէ հաճոյ վեհից
Զի այնքանոյ քաղաքին մնայցէ նըշխար, այսպէս վըճռեալ,
Եթէ քեզ և քոյոցդ ընդ կորստեանըն Տրովադայ
Արժան իցէ կորընչել, բաց կորստեանն է ճանապարհ.
Ահա Պիւռոս գայ հասանէ ներկեալ յարիւն Պըրիամու,
Թող յանդիման հօրըն զորդի և զհայրն հարցէ աստ առ բագնօք:
Ա՞յդ աղագաւ, մայր իմ արհի, ընդ սուր ընդ հուր զիս զերծուցեր
Զի զթըշնամին ի ներքս ի տան և զԱսկանի ընդ հօր իմում
Եւ ընդ Կրեուսայ սրախողխող տեսից ողողս յարեան միմեանց:
Առէք ինձ զէն, արք, զէն առէք. ձայն տայ վերջին տիւ պարտելոց.
Դարձուցէք զիս ծ՛ն ընդդէմ դանայեցւոց, թոյլ տուք տեսից
Նախճիրս արեանց, մի՛ անվըրէժ լիցի ընաւիցըս կորընչել:
Յայնժամ անդրէն ըսպառազէն վառեալ ածեմ յահեակ զասպար.

Այլ ի դիմել խմում ի դուրս, աՀաւասիկ Հարսն իմ Կրեւսա
փարեալ զոտիւքս առ սեմովք, մատուցանէր Հօրն ըզՅուլոս,
Ասէր. Ի մաՀ եթէ դիմես, ա՛ծ և ըզմեզ ընդ քեզ ի մաՀ.
Իսկ եթէ փորձդ ի մարտ՝ ի զէնըս վըստաՀիս, յապաՀովեա
Ըզտուն քո, ուր ըզմանկիկդ Յուլեակ և զՀայր քո թողուս,
Ուր և ես՝ Հարսնըս երբեմըն քո գոլով՝ արդ թողանիմ։
Զայսոսիկ Հեծեծելով՝ մինչ դեռ լընոյր ըզյարկն ողբովք,
ԱնճառաՀրաշ անդ ցուցաւ յանկարծ նըշան. զի ի գըրգուել
Տըխուր ծնողացն ըզմանուկն և ի Համբոյրըս տալ նըմին,
ԱՀա թեթև ինչ ճեղենակ ըզգագաթամբըն լուսափիւռ
փարէր մեղկաշօշափ, և զիրանամբքըն ճարակէր
Բոց անկէզ. ըզդողանի Հարեալ ըզՀերսըն թօթափեմք,
Գուն գործեալ աղբերբ ըզՀուրըն սըրբազան շիջուցանել։
Բայց Անքիսէս զաչս ի յաստեղըս խընդագին վերամբարձեալ,
Բազկատարած ընդ երկինս աղաղակէ ձայնիւ մեծաւ.
Ամենակալ Արամազդ Հայեաց ի մեզ, որք ըզմի զայս,
Եթէ լըսես Հայցուածոց, խընդրեմք ի քէն. օգնեա մեզ Հայր,
Թէ արժանի իցեմք կրօնիւք, կացո զՀըմայքըս զայսոսիկ։
Եւ յասել զայս ծերունւոյն՝ որոտընդոստ յաՀեակ կուսէ
Լինէր Հընչիւն լըսելի, և աստղ յանկարծ սաՀեալ յերկնէ
Ալանայր ընդ խաւար ածելով ջաՀ լուսաճաճանչ.
Տեսաք զայն, և աւասիկ ըզբարձամբք տանըն քերելով
Գընայր ծածկէր յԻդեան մայրիս, երկայնաձիգ թողեալ ըզՀետ
Լուսաշաւիղ, և ծըխէին վայրք ի ծըծմբոյ շուրջ ի բացեայ։
Յայնժամ պարտեալ ծերունւոյն, և ընդ երկինըս վերակնեալ,
Աղերսէր դից. և սուրբ աստեղն երկըրպագեալ՝ Հնա՛պա, ասէ,
Ո՛չ կամք և զի՛ յապաղեմք, գամ ձեզ ըզՀետ ո՛ւր և ածէք.
Դիք Հայրենիք, դուք պաՀեցէք ըզտունըս զայս, պաՀպանեցէք
Զթոռըս թոռնեակ. ձեր են Հըմայքս, ի խնամըս ձեր յանձն է Տրովա։
Տեղի տամ արդ, ոչ Հրաժարեմ լինել, որդեակ, քեզ ուղեկից։
Մինչ դեռ էին բանքն ի բերան, աՀա բոցոյն ի պարըսպաց
Սաստկանայր ճարճատիւն, և մերձագոյնըս ՀըրդեՀին
Ծաւալէին շուրջ յորձանք, ասեմ. Ե՛կ Հայր իմ սիրելի
Յուս իմ բարձիր, մըտից ընդ քև, չէ ինձ վաստակըս ծանրակիր.
Որ ինչ և դէպք տացեն, նոյն երկաքանչիւր լիցի վըտանգ,
Մի փըրկութիւն Հասարակաց. մանուկն Յուլոս գայցէ ընդ իս
ԶուգաՀետ, և ի բացեայ ըզՀետ իմ Հարսն իմ եկեսցէ.
Իսկ դուք յուշի կալջիք, արք, որ ինչ լընիմըս թելադիր.
Է Դեմետրեայ վաղեմի մեՀեան ի յելըս քաղաքիդ,
Կառուցեալ ի բըլրակի, նոճի զառամ անդ առընթեր,



ՊաՀպանեալ ընդ պարագայս ամաց յոգունց Հարցըն կրօնիւք.
Անդր ի մի վայր ժողովեսցուք. դու զըրբրութիւնքըս զայսոսիկ
Բարձցես, Հայր, ի ձեռին և ըզթերափքըս Հայրենիս.
Ինձ, որ յայնքան կոտորածէ այն ինչ դարձեալ գամ, չէ արժան
Հըպել ի դոսին՝ չև լըւացեալ ի վտակ վըճիտ։
Ասացի, և զպարանոց իմ, և ըզլայն ծածկեալ ձորձով
Եւ խարտեաշ առիւծենեաւ ըզթիկնամէջս արկի բեռինն
Ի ներքոյ. անՀաւասար քայլիւք որդեակն իմ Ասկանի
Գայր յեց ի յիս Հետևելով յաջմէ շաւղացս Հայրենի,
Եւ Հարսն իմ ի յետուստ, գընամք ընդ ուղ նըսեմաստուեր.
Եւ որ յառաջ ոչ տեգք նետից, ոչ Յոյնք ընդդէմ գումարտակեալք
Արկանէին յիս երկեղուկ, արդ շունչ Հողմոյ, արդ ձայն աղօտ
Տագնապէր զիս վասն ուղեկցիս վասըն բեռինն իմ վըտանգի։
Այն ինչ ի դրունս անդըր մերձեալ՝ մինչ կարծէի զանձն ի բնաւից
Զերծ ի յուղւոյն արկածից, դըրնդիւն ոտից լինէր յանկարծ
Եւ խիտ ընդ խիտ լըսելի. և նըշմարեալ ինչ ի մըթան
Հայրն իմ ձայնէ. Փախիր, որդեակ, փախիր աՀա գան մերձենան.
Եւ տեսանեմ փայլ ասպարաց, և պըղընձեաց ցոլ զինուց.
Ոչ գիտեմ ո՛ յասոխաց յայնժամ ի դից յափըշտակեալ,
Ազմըկեաց զուշ պակուցելոյս. զի յընթանալն իմ ընդ անկոխս,
Արտուղի ի ծանօթ ճանապարՀաց, եղո՛ւկ զինև,
Անտես եղև Հարսն իմ Կրեւսա, ճակատագրի՞ն ըզնա բարձեալ
Ի Հիքոյս, թէ մոլորեալ յուղւոյ կամ խոնջ ուրեք նըստեալ,
Անգիտելի. այլ ոչ ես աչաց մերոց գայր ի տեսիլ,
Եւ ոչ գիտել ըզկորուստըն զայն անկաւ ինձ ուշ ի կուրծ,
Մինչև ի բլուր Հինօրէին եկեալ Հասաք մեք Դեմետրեայ
Եւ ի մեՀեան անդր ի սուրբ. ուր ի բնաւիցըս ժողովել
Ի մի վայր՝ պակասէր մին, անցեալ զաչօք ես ուղեկցաց
Որդեկիս և ամուսնոյ. ո՛ւմ ի դից, ո՛ւմ ի մարդկանէ
Զեղջէ յայնժամ յետսամիտըս մեղադիր, և զի՞նչ երբեք
Աղխագոյն ի կործանել անդ քաղաքին պատաՀեաց ինձ։
Յանձն ընկերացս առնեմ ըզՀայրն իմ Անքիսէս և զԱսկանի,
Եւ ըզթերափըս տեկրականս անդ ի խոնարՀ Հովտին ծածկեալ,
Դարձ ի քաղաքն առնեմ, վառեալ անդրէն ի զէն և ի զըրաՀ.
Անդրէն զարկածս ամենայն ի յանձն առեալ, շըրջիմ դարձեալ
Ընդ ամենայն Տրովադա ի նոյն վըտանգըս դիմադրաւ։
Նախ ի պարիսպըս և ի սեամս՝ ընդ որս ելեալն էի՛ դառնամ,
Հետազօտեալ աչօք ըզՀետս ոտից թողեալըս գիշերայն.
ԱրՀաւիրք Համայն ուրեք, և լըռութիւն իսկ զըլխովին
Սոսկումն ի սիրտ իմ ազդէին. ի տուն ապա գամ վերըստին,

Զի անդըր դարձ թերևս անդրէն իցէ թերևս արարեալ:
Խուժեալ ի ներքըս տիրէին ընդ յարկն ողջոյն դանայեցիք.
Եւ ահա հուր յանկարծ ծախիչ պատի զտանեօք ի շունչ հողմոյ.
Ամբառնան բոցք գեր ի վեր, յորձանք ընդ օդըս պըտուտկին ;
Ի Պրիամու արքունիս և ի դըղեակն ելանեմ յայց.
Վաղ ի գաւիթս անդ ամայիս և ի Հերայն ապաստանի
Պահնակք ընտիրք փիւնիկեցիք և Ոդիսևս անագորոյն
Կային ի պահ աւարին, անդր ամենուստ իլիականք
Ածեալ գանձք՝ յափըշտակեալք յայրեցելոցըն դաճարայց,
Եւ բաժինք դիցանուէրք, ընդ խառնարանս ոսկիակուռս,
Եւ հանդերձանք աւար առեալք, շեղջակուտեալ անդ դիզադէզ.
Շուրջ ի կարգ երկայնաձիգ մանկտի և մարք կան ահաբեկք:
Իշխեցի ձայնարկել, աղաղակաւ լցի զուղիս.
Եւ տըխրագին ըզնա ի մթան անդ կոչէի յանուանէ,
Կըրկին և կըրկին Կրեուսա ի զուր յեղյեղելով:
Եւ մինչ ընդ յարկըս քաղաքին գնայի մոլեալ ի խընդիր,
Եւ վըշտագին ինձ ընդ առաջ ըստուեր նորին իսկ Կրեուսայ
Մեծագոյն քան ըզբընիկըն կերպարան. յապուշ հարայ,
Խըրձացան հերք իմ ի վեր, ձայն ի հագագ իմ կըցեցաւ.
Ինքն այսպիսեօք յայնժամ բանիւք մեղմել ըզհոգ իմ ըսկըսաւ.
Ոչ առանց դիցըն կամաց, քաղցր ամուսին, դէպքըդ դիպան.
Չէ քեզ օրէն, և ոչ արքայն քեզ Դիւցընկէց բարձանց ներէ
Ուղեկից ըզԿրեւսա ածել աստի ընդ քեզ ի բաց.
Մընայ շըրջել քեզ ընդերկար վըտարանդի, և ակօսել
Ըզծով լայնալիր, մինչև հասցես յԵրեկօրնեայս,
Ուր լիւդականըն Տիբերիս գետահոսէ դանդաղաքայլ
Ընդ դաշտավայրս ազգաց բերրիս. անդ գեղեցիկ քեզ նըսեհ
Եւ պետութիւն, և հարսըն քեզ անդ արքայազն է պատրաստեալ.
Մի՛ ևս ողբար ըզցանկալին քո ըզԿրեւսա. ըզՄիրմիդայց
Եւ զԴոլոպաց ոչ տեսից ես ըզճոխ գաւառ, և ոչ ի մարց
Դանայուհեաց առից ըստպաս դարդանուհիս նու Աստղկան.
Աստանօր դիցամայրըն մեծ կարգէ ինձ սահման,
Ողջամբ մընա. որդեկիս մերում անձկով կալջիր խընամ:
　Զայս ասացեալ, մինչ կամէի բանըս բազումս ասել նմա,
Եթող նա զիս, և եղև աներևոյթ ի նուրբ այեր.
Երիցըս գուն գործեցի զպարանոցաւ նորին փարել,
Երիցս ըստուեր սին ընդգըրկեալ՝ խոյս ի բազկացըս ետ ի բաց,
Հանգիտարագ թեթև հողմոյ, որպէս երազ փախըստական:
Առ ուղեկիցս իմ անագան ընդ առաւօտն արարի դարձ.
Եւ բազմութիւն յոյժ ընդ նոսա գըտի այլոց ևս ընկերաց,



Արըս կանայս և մանկտի և հէք ռամիկ փախըստական
Անդր ի մի վայր ամենուստ պատրաստք ոգւով պատրաստք ընչիւք
Համախըմբեալք՝ գընալ յոր վայր և կամք էին ածել ընդ ծով:
Ի յառնել արուսեկին ընդ ծայրս Իդայ բերելով տիւ,
Մինչ ըզսեմովք դըրանցըն՜ շուրջ պահ ունէին դանայեցիք,
Եւ ոչ ուստեք յոյս օգնութեան գոյր քաղաքին, տեղի ետու,
Եւ յուս ըզհայր իմ ըստանձնեալ՝ ի ծագ լերինըն դիմեցի:

# ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵՍՅ ՄԱՐՈՆԻ

# ԵՆԷԱԿԱՆԻՆ

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Շարայարէ Ենէաս զվէպս արկածից իւրոց 'ի լուր Դիդեի. յորոց միացորդք, այս ինքն են նաւարկութեանն անցք, բովանդակին ի գիրս յայս: Յայրել Տրովադայ՝ Ենէաս նաւատորմաւ քսան նաւաց կառուցելոց դաշտ յԱնտանդրոն անցանէ ի Թրակիա. և ի կանգնել անդ քաղաք՝ զարհուրեալ ի հրաշից Պոլիդորի սպանելոյ ի Պոլիմնեստորեայ արքայէ, նաւէ 'ի Դելոս կղզի՝ խնդրել հրաման պատասխանեաց յԱպոլոնէ, որ ազդէ նմա զնախամայրն խնդրել: Մեկնութեամբն Անքիսեայ համարեալ նախամայր տրովացւոց զԿրետէ՝ ուստի սկիզբն նոցա էր, անդր դիմէ, և կառուցանէ անդ քաղաք նոր: Անտի ևս հալածեալ սրածութեամբ, և ազդեալ յանուրջս ի Թերափից՝ զի յԻտալիա էին բնիկ խանձարուրք տրովացւոց, անդր դիմէ: Եւ վարեալ զճանապարհայն ի մրրկէ ի Ստրոփադս անդր ի կղզիս, պատահէ Արպեայց օխորման. և 'ի միջէ 'ի նոցանէ տեղեկանայ, զի մինչև զկայ առեալ իւր յԻտալիա՝ պարտ էր նմա սպառել զպարէնս ի սովս: Եւ վարեալ յԵպիրոս գտանէ անդ զԱնդրոմաքէ Հելենոսի լեալ կնութեան, և յետ մահուն Պիւռոսի իշխեալ 'ի Քաւոնիա 'ի սահմանս Եպիրոսի: Հելենոս արքայ նոյն և գուշակ յայտ առնէ՝ քաղաք յԻտալիա պատրաստեալ նմա 'ի դից 'ի տեղւոջ, ուր պատահեսցէ նմա խոզ սպիտակ՝ խոճկորակս երկնելով երեսուն: Դարձեալ ազդ առնէ նմա՝ մի 'ի մօտակայ վայրս Իտալիոյ ըղկայ առնուլ, վասն վտանգին յերեսաց Յունաց՝ որք անդր 'ի հողմոց վարեալ էին, և մի ընդ ոկուլեան անցանել ընդ ծով առ ահին յերեսաց Սկիլլայ և Քարիբդեայ, այլ ընդ արեւմուտս շրջան առեալ գնալ 'ի Սիկիլիա: Վասն որոյ մեկնեալ յԵպիրոսէ, անցանէ ընդ Տարենտոն՝ որ է 'ի մերձակայ սահմանս Իտալիոյ, և ընդ կողմն Սիկիլիոյ՝ որ է մերձ յԵտնա լեառն. և անտի ընկալեալ զԱքիմենիդէս ընկեր Ոդիսեայ աղաչաւոր, և 'ի նմանէ ուսեալ զանգթութիւն Կիկլոպայց, պահէ զամենայն խրատս Հելենեայ, և հասանէ ուր ուրեմն 'ի Դրեպանոն. ուր վախճանի Անքիսէս: Անտի 'ի խորս ամարայնոյ դէմ եդեալ յԻտալիա, վարի 'ի մրրկէ յԱփրիկէ: Եւ աստ կատարին վէպքն:

# ԵՆԷԱԿԱՆ

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Յորմէհետէ զասիականըն պետութիւն և ըզՊրիամ
Անպարտական ժողովըրդեամբըն հաճոյ թուեցաւ դից կործանել,
Եւ պերճն անկեալ Իլիոն, և պխոդեանն ողջոյն Տրովա
Ծըխէ ի հիմանց, նըժդեհք ըստ դիցըն հըմայից
Ի խընդիր ամայեաց վարիմք ի վայրըս հեռաւորս:
Նաւատորմիղ մերձ յԱնտանդրոն առ փռիւգայնոյն Իդայ լերին
Կառուցաք, անգէտք ուր բախտն ածէր ըզմեզ, և ուր ըղկայ
Հասանէր մեզ առնուլ. ժողովեցաք զորեարն ի մի,
Եւ առաջին այն ինչ ամառն ըսկըսանէր, հայրն Անքիսէս
Հրամայեաց տալ զառագաստ ուր զմեզ կոչէր ճակատագիր:
Յայնժամ թողի արտասուագին ըզհայրենիս և զնաւակայս;
Ըզվայր ուր վաղ եկաց Տրովա, վըտարանդի դիմեմ ի խորս,
Ընդ իս ընկերք իմ և որդեակ, ընդ իս Թերափք և դիքըն վեհք:
Արիսական բնակէ երկիր հեռի յարձակ դաշտավայրի.
Թըրակք այժմիկ ակօսեն, Լիկուրգ երբեմն անդ խիստն իշխէր.
Ասպընջական վաղ ուրեմըն Տրովադայ, եղեն Թերափք
Մեզ անդանօր հասարակորդք յորժամ էաքըն բարեբաստք:
Անդր ի ձախող բախտէն վարեալ, անդ նախ պարիսպ ի կոր ափան
Կառուցի, Ենէակերտ կոչեալ յիմմէս նըմա անուն.
Դիոնուհւոյ մօրն և դից՝ ի ձեռնարկն իմ օգնականաց,
Նըւէրըս մատուցի, և արքային երկնաբնակաց
Վեհին զենի սպիտակափայլ ի ծովեզեր անդ զըւարակ:
Մերձ ի տեղին ըստ դիպուածոյ էր հողաբլուր, ուր չըմենիք
Ի գագաթան էին թուփք, և մըրտենի մացառախիտ
Ի ստեղունըս տիգաձևըս քըստմնափուշ վերաբուսեալ.

Մատեայ և գուն գործէի խըլել յերկրէ զգալար Թըփեարն
Առ ի ծածկել ըզբագինըս դից ոստովք սաղարթադեղ.
Եւ ահա գէպք ահեղահրաշ, զի ի կորզել անդ ըզնախկին
Թուփն ի հողոյ արմատախիլ՝ արիւն անտի թուխ կայլակէր,
Յապաժոյժ զերկիրըն շուրջ ներկանելով. յայնժամ սարսուռ
Ցուրտ ընդ անդամս իմ ընթացաւ, ղահի հարեալ սասանեցայ,
Պաղեալ արիւն իմ մածաւ. միւս ևս առնում ուղէշ ճապուկ
Յայլմէ ստեղնէ խըլել ի փորձ, առ ի զգաղտնիսն հետազօտել.
Եւ ի միւսմէն ևս ի ստեղնէ սեաւ ընդ կեղևս հոսէր արիւն:
Պէսպէս ի միտս իմ յուզէին խորհուրդք, աղերս արկանէի
Յաւերժհարսանց անտառայնոց և Գրատիւեայ Հօր՝ որ խնամէն
Ըզթրակայինսըն ծովափունս, տալ նըշանացն ելս յաջողակ,
Եւ ըզձախող հըմայս ի բաց աղերսէի դարձուցանել:
Հըզօրագոյն ապա ճըգամբ զերրորդն ընձիւղ առնում խըլել.
Եւ մինչ ծընգովք յեց ի գետին ճըգնիմ, (իցէ՞ արժան ասել
Թէ լըռել) ողբ ի խորոց բըլրոյն լըսեմ աղիողորմ
Եւ ձայն առ իս. Զի՞ կեղեքես զհէքըս զիս, ո՛վ Ենէաս,
Խնայեա յիս՝ որ աստ թաղեալըս կամ, խնայեա և մի պըղծեր
Ըզձեռըն քո երկիւղած. ոչ զիս օտար ի քէն Տրովա
Ծած ի լոյս. ոչ արիւնդ ի ստեղանէ այտի բըղխէ.
Փախիր յանգութ երկրէս, փախիր եղուկդ ի ժլատ ծովեզերէդ.
Ես ինքն եմ Պոլիդոր, զոր հունձք նետից աստ երկաթիք
Ծածկեցին, և աճեցին ի գեղարդունըս սայրասուրս:
Յայնժամ ապշեալ ահիւ և միտք իմ երերեալ տատանէին.
Հերքս հարթուցեալ ըզգըլխով, ձայն ի կոկորդ իմ կըցեցաւ:
ԸզՊոլիդորըս զայս ի վարժ յըղեալ երբեմն էր Պրիամու
Առ արքայն Թրակիոյ հանդերձ գանձիւք, խէթ ի սըրտի
Ըզգլխուց դարդանացւոց ի պաշարել անդ քաղաքին.
Իբրև բեկան տևկրացիք և ուծացաւ բախտն ի նոցունց,
Արքայն ի կողմն Ագամեմնեայ և ի յաղթող զէնս հակամէտ
Կոխեաց առ ոտըն զամենայն օրէնս, և սպան ըզՊոլիդոր,
Յափըշտակեալ ըզգանձս ոսկւոյ. յո՞ր խաղ եղեռն ոչ հրապուրես
Ըզսիրտըս մահացուաց ո՛վ ժանտաժուտ քաղց ոսկւոյ:
Ի դադարել յիս արհաւրաց՝ ցուցի ծնողին իմում նախ,
Ապա պետաց ընտրելոց ժողովըրդեան ըզհրաշըս դից,
Հարցի խորհուրդ ի նոցանէ. բոլորեցուն նոյն էին միտք,
Խոյս յանօրէն տալ յերկրէն, թողուլ ըզպիղծ հիւրոյս ի բաց,
Եւ ի շունչ հարաւոյ զնաւատորմին տալ թըռչարան:
Համա անդրէն Պոլիդորի սպասաւորեալ ըզմեռելոյթ,
Ամբառնամք բարձրադէզ ըզգամբանաւըն հողակոյտ,



Կանգնին ուրուի նորին բագինք, ի կապուտակ ըզնոքօք
Ածեալ ի գոյն ժապաւէն, և սեաւ նոճեար: Իլիուհիք
Շուրջ պար առեալ հերարձակք ըստ օրինի, և փըրփրադէզ
Ի կաթըն եղկ տաշտըս լի, և յարենէ զոհից բաժակս
Հեղումք զեղունս. և բարձրաձայն ի նուագ յետին կոչելով
Զըստուերըս նորա հանգուցանեմք ի դամբանին:
Այն ինչ ապա հանդարտեցին ալիք, և էր ծովն ապահով,
Եւ քաղցրաշունչ դըդըջմամբ կոչէր յանդունդս ըզմեզ հարաւ,
Ածին ընկերքս ըզնաւատորմ, լըցաւ ծովեզըրն, թողաք
Ըզնաւակայս, տեղի ետուն քաղաքանին և ցամաք:
Բազմազըւարճ բնակէ երկիր դիցանըւէր ի ծովու անդ՝
Սըրբազանեալ մօրըն Ներեայց և Պիսիդեայ եգէայնոյ,
Որ անկայուն երբեմըն շուրջ ըզծովեզերըքըն թափառէր
Ի՝հեռաստան, և Գիպաղեղնըն բարեգութ անշարժ ըզնա
Բնակեցոյց ընդ Միկոնէ և ընդ Գիար հեստել հողմոց:
Անդըր եղև մեզ հասանել, և վայրն ըզմեզ խաղաղաւէտ
Յաներկեան նաւահանգիստ իւր ղաշխատեալըս հիւրընկալեաց.
Եւ իջեալ երկըրպագեմք ապոլոնեան դաստակերտին.
Անդ Անիոս իշխան երկրին, նոյն ինքըն քուրմ Ապոլոնի,
Եւ ընդ առաջ մեր, վարսակալ ի ճակատուն, պըսակազարդ
Սուրբ սարդենեաւ. ծանեաւ ըզհին իւր բարեկամ զԱնքիսէս,
Աջ ի հիւրոյթ տըւաք միմեանց, մըտաք ի ներքս անդր ընդ յարկաւ.
Երկիր պագի ի մեհենին ի վաղեմեաց շինեալ վիմաց.
Ո՛վ Թիմբրեան Հայր, տո՛ւր մեզ տուն, տաժանելոցըս տո՛ւր պարիսպ,
Ազգ և քաղաք տո՛ւր մեզ մնայուն, և պահպանեա ըզմիւս ևս այլ
ԸզՊերգամ տրովական ի դանայեանց ապրեալ նըշխար
Եւ յանողորմն Աքիլլեայ. ո՞ւմ հետևել տաս մեզ հրաման,
Ո՞ւր գընալ ո՞ւր ըզկայ առնուլ, տո՛ւր Հայր հըմայս, ի սիրտ մեր էջ:
Եւ յաղօթել իմում զայս՝ սասանէին յանկարծ զինև
Սեամք և դափնին դիցանըւէր, և լեառն ողջոյն շուրջ դըղըրդէր.
Որոտայր եռոտանին բացմամբ խորոցըն դաբիրայց:
Խոնարհ յերկիր յայնժամ անկաք, և լըսելի եղև բարբառ.
Դարդանացիք կորովիք, երկիր որ զձեր բարձեալ բերէր
Ըզնախահարս ի սկըզբանէ՝ նոյն և ըզձեզ ընկալցի
Ի ծոց իւր արգաւանդ, ըզդարձաւորսդ առ ինքն ողջամբ.
Ըզնախամայր ձեր խընդրեցէք. ազգատոհմն Ենէասայ,
Անդ ընդ երկիրն ամենայն, տուն և որդիք իւր իշխեսցեն
Եւ թոռունք, և որք յապայս ի նոցանէ ծնանիցին:
Զայսոսիկ Ապոլոն. դըղըրդիւն մեծ յայնժամ յարեաւ
Խառն ընդ խրախոյս խընդութեան, և խընդրէին ամենեքեան

Ո՜ր այն պարիսպք՝ ուր Ապողոն ըզթափառեալքըս հրաւիրէ ,
Եւ ուր դառնալ հրամայէ . անդանօր հայր իմ յուղ ածեալ
Ըզյիշատակըս նախնեաց՝ Լուարո՛ւք , ասէ , ինձ ո՛վ իշխանք .
Վեհին Արամազդայ է ի ծովու կըղզի Կրետէ ,
Ուր լեառն Իդաս , ուր մերոյ ազգատոհմիս եղեն որրանք .
Քաղաքք հարիւր մեծամեծք և պետութիւնք բնակեն անդ ճոխք .
Անտի , թէ քաջ յիշեմ ի լոյ , եկըն Տեւկրոս նախահայր
Ի Հռետական անդր ի սահմանս՝ ուր զպետութեանըն կամէր կալ՝
Զի Իլիոն մինչև պարիսպք կանգնեալ էին պերգամականք ,
Եւ խոր ի ձորս ազգըն բնակէր . անտի և մայրըն Կիւբելէ
Խնամակալ , և արուրեայքն անտի ծընծղայք կորի բասեանք ,
Անտառն Իդայ , և սըրբութեանցըն լըռութիւն անդըրժելի .
Եւ անտի առիւծունք լծեալք ի կառըս տիրուհւոյն :
Հա՛պա եկայք երթիցուք՝ ուր դիցն ըզմեզ ածեն հրամանք ,
Հաշտ արարեալ ըզհողմս , և դէմ ի գնոսական եդեալ սահմանս .
Ոչ ինչ ի միջի երկայնաձիգ է մեզ ուղին .
Երրորդըն տիւ , եթէ միայն ընդ մեզ լիցէ Արամազդ ,
Ի կրետական ծովեզերս ըզնաւատորմ մեր կացուսցէ :
Ասաց , և զոհս արժանաւորըս դից եղեն ի բագինս ,
Ցուլ Պիսիդոնի , ցուլ գեղանւոյդ քեզ , Ապողոն ,
Սեաւ մաքի ձըմերայնոյ սպիտակ՝ աջող զեփիւռաց :

Մինչ այս մինչ այն , թռանի համբաւ՝ զի զօրավարն Իդոմենէ
Հալածական ի հայրենեաց մեկնեալ յափանցն էր ի Կրետայ ,
Եւ զի յարկք էին թափուրք ի թըշնամեաց , երկիրն ունայն .
Զօրտիգեանն յայնժամ թողաք նաւահանգիստ , սլացաք ընդ ծով .
Եւ քերեալք զայգեւէտ դարեւանդիւքըն Նաքսոսի ,
Անցաք ընդ Դոնիսա կանաչագեղ , ընդ Ոլէար
Եւ ընդ Պարոս ձիւնատեսիլ , ընդ Կիւկլադայս ըսփիւռս յալիս ,
Եւ ընդ ծով ի խիտ ընդ խիտ անջըրպետեալ ցամաքանւոյ :
Պէսպէս ճըգանց դըղըրդիւն ըսկըսանի ի նաւաստին .
Խրախոյս ընկերք տան՝ դիմեսցուք առ նախահարս անդրէ ի Կրետ .
Հողմ ի խելաց կուսէ շընչէ , մըղէ զնաւորդըքըս , և բերիմք
Ցետոյ ուրեմն ի ծովեզերըս Կուրետացըն վաղեմիս :
Ըզցանկալւոյն կազմեմ ըզձիւք անդ ըզպարիսպըս քաղաքին ,
Եւ Պերգամայս զայնըս կոչեմ , հա՛պա զորեարըն՝ խընդամիտ
Ընդ կոչումն այն՝ յորդորեմ յարկս ամբառնալ , կանգնել դըղեակ :
Վաղ ի ցամաք ըզլաստափայտս ածեալ գոգցես զամենեսին ,
Այն ինչ մանկտին պարապէր ի հարսանիս և ի գործել
Ըզնորն երկիր , մինչդեռ օրէնս և բնակութիւն տայի նոցա ,
Ժանտախտ յանկարծ ապականիչ պերց և ամ մահաբեր



Անկանի եղեռնագործ ի շունչ ի ծառս և յարմըտի .
Կէսք յանուշակ ոգւոցն անկեալ , այլք զախտակիր անդամս ի քարշ
Ածէին . կիզոյր Շըներկըն զանդաստանս անպըտղաբեր ,
Ցամաքէին արօտք , և հունձք խօթք ժըխտէին ըզնըպարակ :
Յօրտիգեանն յայնժամ անդրէն հայրն իմ խրատէր դիմել ընդ ծով
Ի դարեր առ Ապողոն ի քաւութիւն և յաղերս՝
Զի՞նչ արկածից տաժանելացըս հանդերձեալ էր կատարած ,
Եւ ուստի՞ հրամայէր խընդրել նըպաստ , յո՞ դընել դէմ :

Էր ցայգ , և նինջ մինչ ընդ երկիր շընչաւորաց տիրէր ընաւից ,
Դիցըն պատկերք սուրբք , և թերափք փըռիւգականք , զորս ի Տրովայ
Ի հըրդեհել քաղաքին՝ ածեալ էր իմ զերծեալս ընդ իս ,
Երեւեցան ինձ ի տեսլեան լուսաճաճանչք ընդ պատուհան՝
Ընդ որ լուսին լուսապատար ճառագայթէր ի ներքս ըզլոյս ,
Եւ բանիւքս այսոքիւք ըզհոգս յինէն փարատեցին .
Որ ինչ ի գնալ քում ի Դելոս՝ ունի ասել քեզ Ապողոն ,
Երգէ ասէն՝ ինքնին ըզմեզ ահա ի սեամըս քո յղեալ .
Մեք ի Տրովայն հրակիզմանէ ընդ քեզ և զհետ զինուց քոց գամք ,
Նաւատորմաւ մեք ընդ քև ըզհողմուռոյց հատաք ըզծով .
Նոյնք ըզթոռունըս քո յապայս մինչև յաստեղըս վերաւեալ ,
Ինքնակալ ընդ տիեզերս ըզդաստակերտ քո կացուսցուք .
Օ՜ն դու ապա վեհըս վեհից ձեռն արկ պարիսպըս պատրաստել .
Մի՛ վըհատիր յընդերկար մոլորանացըդ վաստակոց .
Պարտ է քեզ տեղափոխել , ոչ ի յեզերս աստ Ապողոն
Եւ ոչ ի Կրետէ ըզկայ առնուլ տայ հրաման :
Է վայր՝ զոր Յոյնք Երեկորնեայ կոչեն , երկիր վաղընջական ,
Հըզօր ի զէն , բերրի ի գուղձ , ուր Ենոտրեան բնակէր որեար ,
Իտալիա զայն յանուանէ զօրավարին , որպէս լըսեմք ,
Կոչէ զարդիս ազգ կըրտսեր . անդ են բընիկ մեր հայրենիք ,
Անտի Դարդան , յորմէ զրոհիս մերոյ ըսկիզբըն եկն ի լոյս ,
Եւ Յասիոս նախահայր . հա՛պա արի պատմեա զուարթ
Ծերունւոյն Անքիսեայ որ ինչ անշուշտ լըւար պատգամ .
ԸզԿորիտոս խընդրեսցէ նա , և զաւսոնեանսըն դաշտորէս ,
Ոչ շնորհէ Արամազդ զերկիրըն քեզ դիկտէական :

Յայնժամ կայի ես հիացեալ ընդ տեսիլ դիցն և ընդ բարբառ .
Զի ոչ ի քուն էր այն տեսիլ , այլ ակներև նըկատէի
Ըզկերպարանս և զըսքօղեալ վարսիւք ըզդէմս ինձ յանդիման .
Եւ քիրտըն ցուրտ հոսէր առուիւ յայնժամ բոլոր ի մարմնոյս :
Յարեայ ընդոստ յանկողնոյ , և զձեռս յերկինըս մեծաձայն
Տարածեալ , անապակս հեղի զըոցովք ի քաւութիւն .
Եւ զոհըս դիցըն մատուցեալ , արարի զհայր իմ իրազեկ ,

Կարգաւ ըղձրաշս ի յայտ ածեալ. ծանեաւ նա զազգն երկթեւեան
Եւ զերկոսին նախաՀարս, և զանկանել իւր ի պատրանս
Ի վայրացըն վաղեմեաց յարդի վոլպակ յորջորջմանէ,
Եւ ասէ. Ո՛վ դու որդեակ իմ ի բախտէն Հալածական,
Ինձ Կասանդրէ արար զարկածըս զայսոսիկ նախապատում.
Արդ ինձ ի յուշ գայ զի ասէր՝ պաՀեալ ըզդէպըս ազգի մերում,
Եւ յաճախ ըզպետութիւն խտալական, յաճախակի
ԶՀեսպերիոնեայս յեղյեղէր. այլ ո՞ երբէք գալ տեկրացւոց
Հաւատայր ի ծովեզերս Հեսպերինեայց, կամ ո՞ց յայնժամ
Գուշակըն Կասանդրէ ի յերկիւր անդըր տայր Հրաւէր:
Հըլուք Փեբեայ և խրատեալք՝ լաւագունին Հետեւեսցուք:
Ասաց. և խընդալիցք ամենեքեան Հնազանդեալ՝
Մեկնիմք և անտի, թողեալ եւեթ անդ նըւազունս,
Եւ գոգելովք մայրեօք դիմեմք առագաստեալ ընդ ծով անդրոյր:
Այն ինչ Հասին կայմք ի խորս, և չերեւէր ոչ ևս երկիր,
Երկինք էին ամենուստ, և ամենուստ պատեալ ալիք,
Յայնժամ ամպրոպ մըթին եկաց մեզ ըզգըլխով, ածեալ գիշեր
Եւ մըրրիկ, և արՀաւիրըս խաւարաւն էած ընդ ծով.
Կոծեն յանկարծ Հողմք զալիս, և լեռնաձեւ ամբառնան ջուրք.
Ցածեալ ծըփիմք ի յորձախոր՝ վարեալք յանդունդըս ցան և ցիր.
Ծածկեն ըզլոյս ամպք, և գիշեր թօնուտ ի բաց բառնայ զերկին.
Հուր խիտ ընդ խիտ ընդ Հերձս ամպոց մըզէ ըզմեզ ի սոսկումն,
Ընդ կոյր ալիս տատանիմք. ինքն իսկ ոչ եւս Պալինուր
Խըտրէ յերկինս տիւ և գիշեր, և ոչ ի մէջ ալեաց ուղի.
Արեգակունս երիս տարտամս, և երեսին գիշերս ընդ ծով
Առանց աստեղաց ի կոյր միգի անդ մոլորիմք.
Ի չորրորդում ապա աւուր երեւեցաւ ցամաք, լերինք
Նըշմարէին ի Հեռուստ, և ծառացեալ ծուխ ի վեր:
Թուլացան առագաստք, յարեաք Հարաք բուռն ըզթիոց.
Հապա նաւազք գուն գործեն ըզփըրփրադէզ շըրջել զալիս,
Հերձուն ըզդաշտըն կապուտակ. ըստրոփատեան ծովեզըրն նախ
Ընկալաւ զիս զերծ ի յալեաց. անդ ի յոնեան ծովու մեծի
Ըստրոփադք ի Հելլենացըն կոչեցեալ սըփռին կըղզեք,
Յորըս ժանտըն Կելենով և այլքըն ժանտք բնակեն Արպեայք
Յորմէ Հետէ փինեականըն փակեցաւ առ նոսա տուն,
Եւ թողին ըզսեղանսըն զառաջինս առ երկիւղի.
Ոչ Հըրէշ քան ըզնոսա խոժոռագէմ, ոչ զայրոյթ դից,
Եւ ոչ ժանտախտ դըժնէագոյն ել ի ստիւգեան ալեաց ի վեր:
Հաւուցն այնոցիկ՝ են կուսակերպ երեսք, և թաթք
Կորամագիլք, խոխոջանք առ ի ներքուստ զազրաթորմք,



Դալկագոյն առ քաղցի յաւէրժ նոցին է կերպարան:
Անդըր վարեալք, իբրեւ մըտաք ի նաւակայսըն՝ տեսանեմք,
Եւ աՀա ջոկք արջառոց ի դաշտորայս անդ պարարակք,
Եւ անտէրունչք ընդ արօտ Հօրանք այծից ճարակէին.
Յարձակեցաք ի վերայ նոցա զինուք, և կարդացեալ
Ըզդիս, և զԱրամազդ ինքնին ի մասն աւարին,
Եւ բազմոցս ի գոգաձեւ ծովեզերին կազմակերպեալ,
Մինչ այն ինչ ըսկըսաք ըզդէր խորտիկսըն ճաշակել,
Յանկարծ ի թռիչըս պակուցիչս Հասեալ Արպեայք անդր ի լերանց,
Յափըշտակեն ըզխորտիկս՝ ուժգին թեւոցըն շառաչիւք,
Եւ զազիր շօշափմամբ ապականեն զըսպասն ի սպառ,
Կըռինչ զարՀուրելի ընդ ժաՀ Հոտոյն արձակելով:
Դարձեալ ի խորշ ուրեք Հեռի ընդ փապարեալ քարաժայռիւ
Ի մայրեաց և յաՀարկու շուրջ ի ստուերաց ամրափակեալ
Ուզղեմք սեղանս, և ի բագինըս վերըստին լուցանեմք բոց.
Դարձեալ ընդ այլ կողմն երկնից յանտես ծերպից գայ Հասանէ
Ամբոխ մեծակառաչ, և զաւարաւըն կոր մագլօք
Շուրջ թեւածեալ՝ աղտեղէ ըզկերակուրսըն պիղծ լորձամբք:
Զէն առնուլ Հրաման յայնժամ տամ ընկերաց, ճակատամարտ
Մըղել ընդդէմ ժանտ ամբոխին. կազմք ըզՀրամանըն կատարեն,
Ծածկեն ըզզէնս ընդ դալարեօք, թաքուն զասպարըս պատրաստեն:
Այն ինչ ընդ կոր ծովափունս Հընչէ ապա թեւոց շառաչ,
Միսէն նըշան տայ ի բարձուէ դիտանոցին խոր պըղընձեաւ.
Յարձակին ուղեկիցք ի պատերազմ նորանըշան,
Ըզծովայնոց Հաւուց նըկուն առնել զինուք զազգ գարշելի:
Այլ ոչ Հարուածք երգիծանեն ինչ ի փետուրս, ոչ վէրս յազդերս
Ընդունին. արագաթռիչք դիմեն յաստեղըս փախըստեայք,
Թողուն զաւարըն կիսակեր, զազիր Հետոց թողուն խոՀեր:
Բայց Կելենով եւեթ կացեալ բարձր ի վիմի գուշակ գուժկան,
Զայսոսիկ ի խորոց սըրտի պատգամս եղերերգէ.
Որդիք Լաւոմեդեայ, ի պատերա՞զմ եւս ընդդէմ մեր,
(Հարեալ ըզՀօտ, և ըզնախիր արկեալ տապաստ) և տակաւին
Ի պատերա՞զմ եւս կազմիք, վանել զանպարտ Արպեայըս ի բաց
Ի Հայրենի պետութենէ. արդ լուարուք զոր ձեզ գուժեմ.
Եւ սերտ յուշի կալեցէք. ամենակալն Հայր զայս Փեբեայ,
Եւ ինձ Փեբոս ծանոյց կանխաւ, վըՀկապարկաց ձեզ պետս ազգեմ.
Յիտալիա դիմեալ երթայք, և կարդալով ըզՀողմս ի նպաստ՝
Հասջիք յԻտալիա, լիցի օրէն ձեզ մըտանել
Ի նաւակայս, այլ ոչ լիցի ածել պարիսպ ըզքաղաքաւ՝
Որ ձեզ տացի, չև ըստիպեալ ի խիստ սովդ և ի վըիժուց

Կոտորածոյն՝ ածել ատամն ի կըրծոտեալ սեղանս ի ճաշ:
Ասաց, և խոյս ետ թեւածեալ յանտառ, և ցուրտ մածաւ արիւն
Առ ահի ընդ երակունս իմոցս յանկարծ. լըքան անկան,
Ոչ ևս ի զէն, այլ ուխտիւք խընդրէին հաշտ առնել զԱրպեայս,
Թէպէտ հաւք ժանտաժուտք, թէպէտ իցեն աստուածուհիք.
Յայնժամ հայրն Անքիսէս ձեռս ընդ ծովեզրըն տարածեալ՝
Կարդայր ըզդիս վեհս, արժանիս նոցա նուէրըս պատուիրէր.
Մի՛ սպառնալիքն հասցեն մեզ դիք, դարձուցէք դիք զարկածս ի բաց,
Եւ հաշտք ընդ մեզ՝ երկիւղածաց ձերոց լերուք դիք ապաւէն:
Հա՛պա խըզել ըզպարան և արձակել զապաւանդակս
Հրամայէ. ձըգոտեն հարաւք զառագաստիցըն թըռչարան,
Ընդ փըրփրալից սահիմք ալիս՝ ուր կոչէին հողմք և ղեկավար.
Նըշմարին ընդ ծուփս ալեաց անտառախիտըն Զակինթոս,
Դուլիքիոն և Սամոս և երկնաճեմ ժայռք Ներիտեայ:
Զերծք յիթակեան խարակաց խուսեալք ի բաց ընդ պետութիւն
Լայերտեայ և ընդ երկիր՝ ժանտին դայեակ Ոդիսեայ՝
Անցաք անէծս արձակելով. և Լեւկադեայ ահա լերին
Ծայր ամպապատ, և ահարկուն նաւաց ի յայտ գայ Ապոլոն:
Անդր ի քաղաքըն փոքրիկ դիմեալ, մատեաք վաստակաբեկ.
Արկան խարիսխք ընդ նաւաառաջըս, կացին խելք առ ծովեզերբ:
Ցանկուսալին ուր ուրեմն իջեալք յերկիր, զոհ Դիոսի
Մատուցանեմք, և ուխտիւք բոց ի բագինսըն բորբոքեմք:
Խաղք իլեականք յակտիական ի ծովեզերս
Ածան ի հանդէս, և ուղեկցաց մերկակըռուի
Ի հայրենին ըմբշամարտ լըպիրծք ի յիւղ կըրթին անդամք.
Քաղցր էր յիշել զարգիականս, ընդ որս անցաք, քաղաքանին
Ընդ մէջ թըշնամեաց փախըստականք լեալ մազապուրծք:
Բոլանդակէր յայնըմ վայրի արփին ըզմեծըն պարունակ.
Զըմեռըն սառնապատ յուզէր զալիս հիւսիսակօք.
Ըզկըմբեայն պըղընձի, զոր մեծն Աբաս երբեմըն կրէր,
Կախեմ ըզդրանդեաց՝ դրոշմեալ ի նմա ի յիշատակ.
Ի յաղթողաց դանայեցւոց աւար առեալ զայս Էնէաս:
Հրաման յայնժամ տամ նաւաստւոյն բազմել ի թի, և չու առնել.
Նախանձընդդէմ հերձուն ըզծով, մըղեն զալիս. և վաղ ընդ փոյթ
Ընդ փէակեան անցեալ դըղեակըս բարձրաբերձս, ըզծովափամըք
Եպիրոսի քերեալ, մըտեալ ի քաոնեան նաւահանգիստ,
Մատչիմք ի բարձրըն Բութրոտ. անդ յունկըն մեր եհաս համբաւ
Յեղակարծ, զի Պրիամու որդին Հելեն թագաւորէր
Ընդ քաղաքս Եղադայ, զէակիդեանըն Պիւռոսի
Յինքըն գրաւեալ ըզգաւազան և զհարսանիս, և վերըստին



Անդրոմաքէ առ հայրենին իւր ամուսին դարձ արարեալ:
Յապուշ հարայ, եղև յիս բուռն իղձ խօսակից գոլ ընդ նըմա,
Գիտել զանցիցըն ծանունց ըզվէպ. և անդր ընդ նաւակայս
Խաղամ ի ներքըս, թողեալ ըզնաւաստորմն ի ծովեզերս:
Դիպ եղև զի կոչունս և քաւութիւն եղերական
Յայնըմ վայրի Անդրոմաքէ մերձ ի քաղաք անդր յանտառի
Կատարէր մեծահանդէս առ գետափամբ կեղծ Սիմոյեայ,
Զայնեալ զըստուերս առ շիրմին՝ զոր էր կանգնեալ իւր Հեկտորի
Դալարակերտ վայր արտասուաց թափուր ի մէջ երկուց բագնաց:
Իբրև ետես նա զիս առ ինքըն մատուցեալ, և շուրջ զինև
Ըզտրովական զինուորութիւն, ընդ նորահրաշ տեսիլն ընդ այն
Պակուցեալ ապշեցաւ, և ցուրտ զոսկերան ընդարմացոյց,
Անկաւ յերկիր, և ուր ուրեմըն բարբառեալ՝ ասէր նա ցիս.
Ցընո՞րք իցեն թէ ճըշմարիտ. աստուածորդիդ դու Աստղկան
Ճըշմարտի՞ւ գաս դու առ իս բերել զըրոյց, տակաւին կեա՞ս
Թէ մեկնեցաւ ի քէն լոյս կենդանարար. ո՞ւր է Հեկտոր.
Ասէր և լայր, և լընոյր աշխարանօք ըզվայրն ողջոյն:
Հազիւ սուղ ինչ զօրեցի յուզեալ սըրտիւ կիսահագագ
Արտաբերել ի չըրթանց տըխրեցելումն ընդհատ բարբառ.
Այո՛ կեամ, հէք և թըշուառ բնաւից ի փորձ պատահարաց.
Այլ ճըշմարիտ զոր տեսանեսդ է, մի՛ ընդ այն երկբայիր.
Աւա՜ղ, և զի՞նչ յետ զըրկելոյ քոյ յայնքանոյ ամուսնակցէ
Անցին ընդ քեզ անցք, կամ ո՞ր քեզ յայց եկ բախտ արժանաւոր.
Հեկտորի՞ թէ Պիւռեայ, Անդրոմաքէ, իցես արդ կին:
Ըզդէմս ի վայր յայնժամ արկեալ՝ ետ ի մըրմունջ պատասխանի.
Ո՜վ երջանիկ ի մէջ կուսից օրիորդ դուստըր պրիամեան,
Ընդ բարձրամուր պարըսպօքըն Տրովադայ ստիպեալ ի մահ
Առ շիրմաւ թըշնամւոյն, ոչ ի վիճակ երբեք արկեալ,
Ոչ յառագաստ յաղթականի ելեալ գերի. մեք վարեցաք
Ծովէ ի ծով ի հեռաստան յետ հայրենեացս հըրկիզելոյ,
Ըզաստ տոհմին Աքիլլեայ կրեցաք ի սպաս վէս պատանւոյն,
Որ լեդեանն Երմիոնեայ այնուհետև եղ ի խընդիր
Ի սպարտական հարսանիս, զիս զաղախին իւր եթող
Գերւոյ իւրում Հելենեայ ժառանգութիւն. բայց Ովրեստէս
Բորբոքեալ տարփանօք հափափելոյ հարսին իւրոյ,
Եւ ի ժանտից եղեռանըն վըրէժակաց ըզգըրգըռեալ,
Եհաս յանկարծ ի վերայ և արկ ըզնա յանըզգաստից
Սրախողխող առ բագնօքըն հայրենեօք դիւթաւալ:
Մահուամբըն Պիւռոսի մասն աշխարհին տըւաւ բաժին
Հելենեայ, որ Քաոնեան ի Քաոնէ տրովադացւոյ

Զայն յորջորջեաց, և զերկիրն առ հասարակ Քաւոնիա.
Եւ զՊերգամայս և ըզդըղեակ Իլիական եդ ի բըլրին:
Այլ ըզքեզ ո՞ր հողմունք և ո՞ր ճակատագիր ուղղեն ըզդէմ,
Եւ ո՞ յաստուածոց ած ի սահմանըս մեր ըզքեզ.
Զի՞նչ զԱսկանեայ մանկանէ տաս ինձ զրոյց, ողջո՞ն իցէ,
Կեա՞յ տակաւին, զոր վաղ խոկ քեզ Տրովադա....
Կըրէ՞ մանուկն ի սըրտի ընդ կորուստ մօր իւրոյ մորմոք.
Իցէ՞ թէ զնա հայրն Ենէաս, թէ զնա քեռի նորին Հեկտոր
Կըրթեն նախնեացն ի քաջութիւն և ի հանդէս արիական:
Զայսոսիկ մինչդեռ լալեօք եղերըս ձիգ հեղոյր ի զուր,
Դիւցազն աջա պրիամեան գայ Հելենոս ճոխ ըսպասուք.
Ճանաչէ զիւրսըն խընդութեամբ, և յարքունիսն ածէ զնոսա,
Արտասուս յորդահոս ընդ մէն մի բանըս իւր խառնեալ:
Յառաջ անցի և տեսանեմ փոքրիկ իմն անդ Տրովադա,
Եւ Պերգամայս մեծամեծացն հանգունատիպ ձեւակերպեալ,
Եւ համանուն Քսանթեայ տեսանեմ անդ գետ անջրդի:
Դրանդւոյ սկէականին դըրանն յայնժամ զիրկս արկանեմ.
Մըտանեն և տեկրացիք ի համազգի քաղաքն ընդ իս,
Եւ թագաւորն ըզնոսա ի լայն գաւիթս հիւրընկալէ.
Հեղուն ի մէջ գահըլճին բաժակս ի նուէր Դիոնիսի.
Կեսք ըզխորտիկս յոսկի սկըտեղ, այլք ունէին ըզխառնարանս.
Օրն այն էանց, էանց և միւսն, հողմք ձայն տային առագաստից.
Շընչէր հարաւահողմ, ուռուցանէր ըզկըտաւին.
Մատչիմ առ հարցուկն, և այսպիսի ածեմ աղերս.
Ո՛ տրովացի թարգմանըդ դից, որ խելամուտ ես հրամանաց
Ապողոնի և աստեղաց, և կլարենեանցըն սարդենեաց,
Որ ըզկըռինչս հաւուց խըտրես և ըզթեւթեւ փետրոց հըմայս,
Ասէ սաս. ինձ աջողակ ըզդէմ ուղւոյս ցուցին կըրօնք,
Եւ դից բնաւից են կամք դիմել ինձ հասանել յիտալիա,
Խընդրել զերկիր՝ որ պահի ինձ. բայց միայն ժանտըն Կելենով
Նորանըշան ինչ սաստ տըխուր և դառըն սով մեզ ըսպառնայ.
Ցորո՞ց արդ նախ ի վըտանգաց խոյս տալ, և ես լեցի յաղթել
Ինձ արկածից այնքանեաց: Յայնժամ Հելէն զուարակս ի զոհ
Ըստ օրինի նախ մատուցեալ հաշտել ըզդիս, և զվարսակալ
Ի սըրբազան գըլխոյն լուծեալ, ի սեամըս քո ով Ապողոն
Ըզսասանեալս յամբաւից աստուածային փառացըդ քոց,
Ըզձեռանէ կալեալ ածէ, և զայսոսիկ ասպա նուագէ
Քուրմն ի դիմաց դիցըն պատգամ. Աստուածորդիդ դու Աստղիկան,
Քանզի անշուշտ ընդ հովանեաւ վեհից ընդ ծով դիմեալ գընաս,
Այսպէս արքայն դից տնօրինէ զճակատագիր՝ շըրջեալ ըզբախտ.



Արդ ո՛ր իրաց հոլովի կարգ, պատմեցից քեզ փոքր ի շատէ,
Զի ապահով ընդ ալիս ասպընջականըս քո գնայցես,
Եւ լիցի քեզ յաւսոնեան նաւահանգիստըն ժամանել:
Գիտել ինչ այլ Հելենեայ չներեն Պարկայք, և արգելու
Սատուրնեանն Հերա ասել ինչ աւելի. զիտալիա,
Զոր մօտ անդէտըդ վարկանիս, և մըտանել աջա ընդ հուպ
Պատրաստիս ի մերձակայ նաւահանգիստ անդըր նորին,
Երկայն ուղի դըժուարագնաց անջըրպետէ զայն ի քէն
Հեռաստան վայրօք ի բաց. ընդ տրինակրեան նախ ընդ ալիս
Պարտ է վարել ձեզ թիակ, ընդ աւսոնեան նաւել ընդ ծով,
Ընդ լիճըն դըժոխոց և ընդ կոլքեան կըղզին Կիրկեայ,
Զև ի տեղի անքոյթ լիցի կառուցանել քեզ ըզքաղաք:
Տամ քեզ նըշան, կա՛լ սերտ յուշի. սպիտակատեւ ուր խոզ ըստուար
Առ եզերբ հեռաստանեայ գետոյ բազմեալ ուրեք յերկիր
Ընդ սըղոցեօք գետափնեօք տաժանելումըդ դիպեսցի
Երեք տասին մայր առ ըստեամքըն խոճքորից ըսպիտակաց,
Անդ է վայր քաղաքին, անդ վաստակոցդ անշուշտ հանգիստ:
Մի՛ կիսակեր սեղանոցն անկցի ի սիրտ քոյին երկիւղ.
Մերձ Ապողոն կացցէ հայցեալ, ցուցցեն քեզ ռահ ճակատագիրք.
Այլ դու փութա, խոյս տուր յերկրէս, և ի ծայրից իտալիոյ
Ծովափանց՝ որ ի մերմէ աստի թանան մօտ ի ծովէ.
Ուր ժանտաժուտք շուրջ ի պարիսպս առ հասարակ բնակեն Հելլէնք,
Ուր և Լոկրիք Նարիկեանք եղին պարիսպ, և սպառազէնք
Լիկտեանն Իդումենեայ պատեն ըզդաշտըս սալենտեանս.
Անդանօր և մելիբեան զօրավարին Փիլոկտետեայ
Փոքրիկըն բնակէ Պետիլիա պարըսպապատ:
Նա աւանիկ յորժամ յայնկոյս ծովուդ կացցէ քոյդ նաւատորմ,
Եւ կանգնեսցես առ ծովեզերբ բագինըս դից ի պատարագ,
Լօդիկ ըզքեւ ծիրանի և ըզվարսիւք քովք արկցես քող,
Զի մի առ դիցանուէր բոցովքըն դէմք հակառակորդ
Աչացըդ քոց հանդիպեսցին՝ աղմուկ ի հմայս քո արկանել:
Զայս սըրբութեանց կայցին ընկերք քո սովորոյթ, ըզսոյն և դու.
Այսոցիկ և թոռունք պատկառ կացցեն կալդաց կրօնից:
Այլ ի մեկնել քո՝ երբ ըզքեզ վարեսցէ հողմ ի սիկուլեան
Ծովափունս, և լայնեսցին քեզ Պելորայ պահակք անձուկք,
Ընդ երկիր ահեակակողմն, և ընդ ահեակ գնայցես ընդ ծով
Յածեալ պատ ի պատ, յաջակողմեանց խոյս տուր յափանց.
Վայրքն այնոքիկ մեծաւ երբեմն աւերածով պատմին հերձեալ.
Այսքան հըզօր ի փոփոխումն հեռի դարուց է հնութիւն:
Զի մօտ ցամաքք երկաքանչիւր էին, և ծով անջըրպետեալ

Բուռն ալեօք զՆերեկորննայս ի սիկուլեան զատոյց յերկրէ,
Եւ զքաղաքաց և ըզդաշտաց բացատ եզերս ողողանէ
Անձուկ ընդ մէջ յորձանօք. յաջմէ Սկիլլա և յահեկէ
Քարիբդ անհաշտելի կայ դարանեալ, և ըստուտից
Խորոց ի վիհ կլանէ երիցս ըզյաղթաջուր յանկարծ ալիս,
Եւ ամբարձեալ անդրէն ընդ օդըս դարձադարձ բաղխէ զաստեղս:
Բայց զՍկիլլա խաւարարգել փակէ քարայր ի կոյր խոռոչ.
Ուստի ձըգէ բերանաբաց ի քարաժայռ ըզնաւատորմ.
Վերնով մասամբն առնակերպ, գեղեցկալանջ մինչև ցըմէջս
Օրիորդ, անտի ի վայր նըհանգ մարմնեղ և վիթխարի՝
Դըլփինական ըստուներս կից ընդ գայլենի բերեալ արգանդ:
Ըզտրինակրեանըն Պաքինեայ քեզ լաւ լիցի դիտել զերկիր,
Երկայն ըստոյտս անդ ի յամել քո գործելով շուրջանակի,
Քան միանգամ ի լայնատարըր քարայրի յակն արկանել
Ըզձառադէմն ըՍկիլլա, և զապառաժս՝ որ ի հաջիւն
Կապուտակ շանց տան արձագանգ. Թէ է հըմուտ Հելէն ի հմայս,
Թէ ընծայել հաւատս արժան իցէ հարցկի, Թէ Ապոլոն
Ազդէ նըմա ճըշմարտութիւն, նախապատուամ ըզմի ինչ զայս
Աստուածորդւոյդ քեզ առնեմ, ըզմի ինչ նախ քան զամենայն,
Կըրկին և կըրկին յեղյեղելով զայն քեզ ի խրատ.
Մեծին երկիր պագ երեսաց նախ Հերայի աղաչաւոր,
Ուխտըս նըմա մատուսջիր յորդորամիտ, և հաշտ արա
Պաղատանօք և նըւիրօք ըզմեծազօրըն տիրուհի.
Այսպէս ապա ուր ուրեմն ի բաց մեկնեալ ի Տրինակրեայ,
Ընկալցիս ի սահմանս Իտալիոյ յաղթանակաւ:
Անդր հասեալ ի քաղաքըն կումական յորժամ մտցես,
Ի լիճըն դիցանուէր ի սօսաւին աւերնական
Անտառին, տեսցես անդ աստուածարեալ ըզհարցուկն՝
Որ ընդ խոր քարայրիւ յեղանակէ զճակատագիրս,
Որ ի տերևս ըզհըմայս իւր աւանդէ նըշանագրեալ.
Եւ զոր գըրէն տաղս ի տերևս՝ կարգաւ կուսին անդ զետեղեալ,
Փակի ի քարայրին, մնան ի կայս իւրեանց անշարժ,
Եւ ոչ տեղի տան ի կարգէն. այլ ի շըրջել յորժամ ծըղխնոյն՝
Դոյզն ինչ շնչեալ սիւք, և ցըրուէ դուռն ըզտերևսըն թեթևս,
Ոչ ևս է հոգ օրիորդին ըզթըռուցեալսն ի ներքս առնուլ
Ի խորափիտըն քարայր, կոչել ի կայսըն վերըստին,
Շարայարել ըզտաղս, այլ սին ի հրամանէ պատասխանւոյ
Դառնայ որեարն անտի ի բաց, ատեայ զդարբիր Սիբիլլային:
Եւ զի մի լիցի ի տոյժ քեզ անդանօր յամել այնքան,
Թէպէտ ընկերք քո դըժկամակք, և զառագաստըս քո ալիք



Բուռն ի յանդունդըս կոչեսցեն, և աջողակք լըցցեն հողմունք,
Մատիր առ գուշակն, աղերսաւոր խընդրեա պատգամ.
Բացցէ յօժար ըզշըրթունս, արասցէ զձայն իւր լըսելի.
Պատմեսցէ զազգս իտալականս և զհանդերձեալ պատերազմունս,
Որ ինչ մնայ քեզ կըրել և յորոց խոյս տալ յարկածից.
Եւ ուղի բարեյաջող տացէ նա քեզ, պաշտեալ ի քէն:
Այսոքիկ են աւասիկ, զորս ինձ օրէն է ազդ առնել.
Ե՛րթ ո՛ն ամբարձ արդեամբք ըզմեծըն գեր ի վեր ըզՏրովադա:
Զայսոսիկ մեզ գուշակին խնամող շըրթամբք յայտ արարեալ,
Ապա ընծայս հրամայէ ծանունս յոսկւոյ և ի փղոսկրէ
Ի նաւս ածել, շեղջակուտել ի լաստափայտս արծաթ յոլով,
Եւ դոդոնեան կաթսայս, և ճօշ ի վերտս ոսկի եռահիւսեակ.
Եւ սաղաւարտ խորանարդ ցըցունազարդ վարսագեղեալ,
Որովք վառէրըն Պիւռոս. յաւել և հօրն իմում պարգևս,
Ուղեցոյցս ընդ մեզ յաւել, յաւել ձիան, և ըզթիւոյ
Թիավարաց ելից Թերին, մարզեաց զընկերս ի վարժ զինուց:
Ցայնըմ վայրի մինչ Անքիսէս ըզնաւատորմն առագաստել
Հրամայէր՝ զի մի յամեալ և կորուսցեն ըզհողմն աջող,
Խօսի հարցուկն Ապողոնի առ նա բազում մեծարանօք.
Արժանացեալըդ գերափառ առագաստի Աստղիկան,
Ո՛վ Անքիսէս, ընդ հովանեաւ դիցըն խնամոց պատըսպարեալ
Եւ երկիցըս պահպանեալ ի տրովական կործանմանէ,
Քեզ աւսոնեանն ահա երկիր, անդըր կայմիւքըդ փութա երթ.
Սակայն հարկ է անցանել յայնկոյս ծովուդ, հեռի ի քէն
Աւսոնականն է բաժին՝ զոր Ապողոն քեզ պատրաստէ.
Ե՛րթ ո՛վ որդւոյ երկիւղածի հայրդ երջանիկ, զի՞ երկարեմ,
Ցամեցուն արկեալ բանիւքըս հարաւոցըն շընչելոց:
Ոչ ինչ ընդհատ Անդրոմաքէ, տըխուր ընդ այն յետին հրաժեշտ,
Զորձըս ծաղկեայս ոսկեթել և փռիւգացի ածէր քըղամիդ,
Ոչ թերացեալ ի պատիւ, և անկուածոյ նըւէրս Յուլեայ,
Այսպէս նըմա ասելով. Ընկալ մանկիկ ի յիշատակ
Ըզձեռագործս իմ զայսոսիկ, ամուսնակցին Հեկտորի
Առ քեզ սիրոյն Անդրոմաքեայ կացցեն յաւէրժ առհաւատչեայ.
Ա՛ռ ընկալ ըզքոյոցըդ զայսոսիկ յետին նըւէրս
Ո՛վ միակդ իմոյս պատկեր Աստուանակեայ. այսպէս նորա
Էին աչկունք, այսպէս շըրթունք, այսպէս ձեռաց իւրոց դաստակք:
Եւ զուգասի արդ ընդ քեզ լինէր նըմա գալ ի յարբունս:
Իսկ և ես ի հրաժարել իմում՝ այսպէս արտասուելով
Ասէի. բարեաւ մնայք դուք՝ որոց վաղ լըցեալ է բախտ.
Մեք վարիմք տակաւին յայլմէ ի յայլ ճակատագիր.

Դուք ի հանգիստ հասեալ՝ ոչ ևս ի յոյզ դաշտաց Աւսոնից,
Որ յետս ընդդէմ միշտ ընկըրկին, պարտիք ըղձով ակօսել.
Դուք ըզպատկեր Քսանթեայ և ըզՏրովայ տեսանէք աստ.
Զեզ լաւագոյն մաղթեմ հըմայս՝ նըւազ կոխան եղ Հելլենաց.
Եթէ տացի ինձ մըտանել ի Տիբեր՝ կալ ի դաշտորայս
Մերձակայս Տիբերի, և ըզպարիսպըս սահմանեալս
Իմում գրոհի տեսանել, քաղաքք երբեմըն համազնեայք
Եւ շուրջ բնակեալ ժողովուրդք, Երեկորնեայն և Եպիրոս,
Որոց նոյն հայր է Դարդանոս, նոյն և արկածք, միաբանք
Ի մի Տրովա կացցուք, և նոյն թոռանց մերոց լիցի միշտ հոգ:
Հապա խաղամք յառաջ ընդ ծով առ Կերաւնեօք՝ որ մերձ կան անդ,
Ուչ ինչ հեռի յԻտալիոյ, սուղ ի միջի է ռահ ընդ ծով:
Արեգն ի մուտըս խոնարհի, ըստուերանան թաւուտ լերինք.
Անձկալըւոյ երկրին ի ծոց տարածանիմք մերձ ի յալիս,
Սփռեալք ի յափըն ցամաքուտ, և ըզմարմինըս կազդուրեմք:
Յայնժամ ի խոնջ խըրոխտ անդամըս քուն. չև ըզգիշեր
Վարեալ ժամուց ի կէս ուղւոյն, ժիր ի մահճաց յառնէ ընդոստ
Պալինուր դիտել ըզհողմս ի լուր շընչմանցըն հետազօտ.
Զըննէ ըզմէն մի յաստեղաց՝ որ ճեմ ընդ լուռ առնուն երկին,
ԶԱրջպանըն, զԱլաւսունս անձրևաբերս, ըզՍայլ կըրկնակ,
Եւ ըզՀայկ ոսկիազէն շուրջանակի վերադիտէ.
Եւ տեսեալ ի ջինջ երկնի դիպող ըզընաւ ինչ առ ի չու,
Տայ լուսափայլ ի խելաց նըշան. շարժեմք ըզնաւատորմ,
Յուղի անկանիմք պարզեալ ըզթևս առագաստից:
Այն ինչ այգ հալածական վարեալ զաստեղըս կարմրանայր,
Նըշմարեմք նըսեմ բըլուրս և ի խոնարհ զԻտալիա.
Նախ առաջին Իտալիա գոչեաց Աքատ, և ցընծալից
Աղաղակաւ բոլորեքեան կըցեն ըզհետ Իտալիա:
Յայնժամ հայրն Անքիսէս առեալ բաժակ մեծ ելից զայն,
Պըսակեաց անապակաւ, և բարձր ի խել արձանացեալ
Կարդայր ըզդիս. Ո՛վ դիք իշխանք երկրի ծովու և ամպրոպաց,
Տուք աջողակ մեզ ուղի ի թևս հողմոց, շընչեցէք հաշտք:
Յաւելան հողմք ըղձալիք, բանայր մօտէր նաւահանգիստ,
Աթենասայ մեհեանն ի յայտ գայր ի բարձու. ամփոփէ
Զառագաստըս նաւաստին, զառաջս ի յափըն շըրջէ:
Նաւահանգիստն այն ի յեւրեան ալեաց ի բաց աղեղնաձև
Պարուրի ծոց, ցայտեն ժայռք ընդդիմակայք փըրփուր աղի.
Ինքն ի միջի անդ ամրանայ, թեւք երկուստեք կարկառին
Որպէս պատուարք աշտարակեայք, խոյս տայ մեհեանն ի ծովափնէ:
Նախկին հըմայս տեսի քառեակ ի դաշտի անդ ձի ձիւնափայլ



Ճարակաւոր. և յաւել յայնժամ անդրէն հայրն Անքիսէս.
Մարտ, ո՛վ երկիրդ ասպընջական, պատրաստես մեզ. ձիանդ ի մարտ
Խրախուսեն, երիվարքըդ պատերազմ մեզ ըսպառնան:
Սակայն կառաց երբեմն ի լուծ քառասըմբակքըդ սովորեալ՝
Հըլու ըզսանձըն բերելով, խաղաղութեան ևս ազդեն յոյս:
Աղերս յայնժամ մատուցաք քաջազինի աստուածուհւոյն
Պալլասայ, այնըմ որ նախ զըւարթս ըզմեզ հիւրընկալաւ.
Եւ քող փըռիւգացի, ըստ Հելենեայ պատուիրանին,
Զոր մեծապէսըն մեզ յանձնեաց, ածեալ ի գլուխ ըստ օրինի,
Ըզհրամայեալ նըւէրս Հերայ արգիւհւոյն ճենճերեցաք:
Եւ անյապաղ զուխտըս մեր լըցեալ կարգաւ, շըրջեմք ի բաց
Զառագաստեալ կայմիցն ըզթևս ի կեղակարծ կայիցն Յունաց:
Անտի, թէ ստոյգ պատմեն զըրոյցք, տեսանի ծոցըն Տարենտեայ
Հերակլեան, և Լակինիկն յառնէ հանդէպ աստուածուհին,
Եւ դըղեակք կաւլոնականք և նաւակոծն ըՍկիլակէ.
Ըզտրինական յայնժամ զԷտնա ի ծուփս ալեաց տեսաք ի բաց,
Եւ լըսէաք ի հեռուստ զահեղագոչ մըռունչ ծովուն
Եւ ըղձայն կոհակաց ի ծովափունըս բեկելոց.
Ամբառնային հունք ի վեր, յառնէր աւազ խառն ընդ յորձանս:
Ասէ յայնժամ հայրն Անքիսէս. Այս այն արգեօք իցէ Քարիբդ,
Ըզպարեխըս զայսոսիկ նուագէր Հելեն և զահագին
Քարաժայռս. ի բաց, ընկերք, խոյս տուք աստի, թի վարեցէք:
Նոքա ճեպին ի կատարումըն հրամանին. և Պալինուր
Նախ քան զայլս յահեկակողմըն կոյս շըրջէ զառաջ նաւուն,
Եւ զգումարտակն համօրէն մըղեն յահեակ հողմք և թիակք:
Մերթ երկնաբերձ ընդ լեռնացեալ յորձանս ի վեր ամբառնամք,
Եւ մերթ ի խոր սանդարամետս ի յերրադարձ ալեաց մըղիմք.
Երիցըս ժայռք ընդ խոր անձաւս ետուն գանգիւն, և զբեկելոց
Ալեաց երիցս ըզփըրփուր և ըզցօղել տեսաք արփից:
Ըզտաժանեալքս յայնժամ եթող արև, թողին ըզմեզ հողմունք,
Եւ ի սահմանըս Կիկլոպայց անգէտք ուղւոյն սահեալ գնայաք:
Է լայնատարր և անմատոյց անդ ի հողմոց նաւահանգիստ.
Այլ որոտայ ահարկու աւերածովք առ իւր Ետնէ,
Մերթ ծըխաշունչ ամպ ընդ երկին և թուխ ամպրոպ կըպրային
Եւ շանթ հրաշէկ արձակեալ, մերթ բոցեղէն մինչև յաստեղս
Ամբառնայ գունդըս գեր ի վեր, և է զի ժայռըս ժայթքէ
Յընդերաց լերին կորզեալ, և ըզհրահալ վէմս ընդ այեր
Զըգէ շառաչմամբ, է զի եռայ անդընդախոր:
Զէնկելադեայ ըզկիսակէզ դի շանթահար անդ աւանդեն
Ծանու բեռինն ընթադրեալ, և ահեղին կալով Ետնայ

Ընթոստ՝ բոցաշրջնչել ընդ պայթուցեալ հրնոցն ի վեր.
Եւ քանիցըս Ենկելադ ըզկոչկոճեալ կողմըն շըրջէ,
Հարկանէ դըղըրդմամբ Տրինակրիա ըըրեւ իւրով
Ըզգողանի, և ծըխամած զերկին բոլոր պարածածկէ:
Հրէշիցն աՀեղից զօղեալք յանտառս ի գիշերին
Ըզփորձ առաք. այլ ոչ գըղորդն այն ներգործէր՝ անիրազէտք.
Զի ոչ անդ բոցք էին արփից, և ոչ բևեռ աստեղափայլ,
Այլ միգապատ եԹեր մըԹին, և տարադէպ ծածկէր գիշեր
Ամպովք ըզլուսին. և այն ինչ տիւըն վաղորդայն
Յառնէր յելից, և այգ զըստուերըս խոնաւուտըս փարատէր,
Այր ոմն յանկարծ անծանօԹ նորանըշան կերպարանօք
Թըմբեալ ծիւրեալ ողորմելի ի ցընցոտիս ել յանտառէն,
Եւ առ ափն աղաչաւոր անդր ի ծովեզըրն կարկառէր:
Տեսաք և էր նա զազիր գարշատեսիլ, խըռուեալ մօրուօք,
Զորձ իւր փըշովք էր կցկցեալ, այլովք մասամբք Հելլենացի,
Ցըղեալ երբեմն Հայրենի զինուք յիւրոցն ի Տրովադա:
Իբրև ետես նա զդարդանիկ ձևս ի բացուստ և զէն տրովեան,
Զահի առ վայր մի ընդ տեսիլն Հարեալ և յետըս նաՀանջէր.
Դիմեալ ապա ի ծովափն՝ աղերսաւոր ողբովք ասէ.
Երդուեալ յաստեղս, երդուեալ ի դիս, երդուեալ ի լոյսըդ կենարար,
Բարձէք զիս ով տեւկրացիք, տարայք զիս ուր և կամք իցեն,
Շատ է ինձ, գամ ի Հելլէննաւատորմէն, ոչ ժըխտեմ,
Տրովականացըդ Թերափից ընդդիմամարտ առի զէն.
ԵԹէ այնքան է ծանր ոճիր իմ, ընկեցէք զիս ի յալիս,
Ի ծով ծայրածաւալ ընկըղմեցէք զիս խորասոյզ.
Լաւ իցէ ի ձեռանէ մարդկան մեռանել ինձ ի կորուստ:
Ասէր, և ըզծընգովք մերովք փարէր առ ոտս անկեալ:
Խրախուսեցաք ըզնա պատմել՝ ո և յորմէ էր յազգէ.
Ինքն իսկ Հայրն Անքիսէս, ոչ ևս յամեալ, աջ ետ նըմա՝
Ըզպատանւոյն գրաւականաւն այնուիկ ըզսիրտ քաջալերեալ:
Նորա զերկիւղ ուր ուրեմն ի բաց եդեալ, ասէ. Այո՛
ԻԹակացի եմ Հայրենեօք, ընկեր Հեքին Ոդիսեայ,
Աքիմենիդ յորջորջիմ. մինչ Ադամաստ Հայր իմ դեռ կեայր
Զըքաւոր, (իցիւ և իմ Հանգոյն նըմին էր կեցեալ)
Եկի ես ի Տրովադա. և մոռացեալ ընկերք իմ զիս
Թողին ի լայնատարըր Կիկլոպայ քարանձաւին,
Ի փախչել իւրեանց աՀիւ յանագորոյն սեմոց անտի:
Վայր մեծ մըԹին լի ի շարաւ, լի ի շաղիղ արիւնայեղը,
Ինքն ի կոյտ Հասակին մինչև յաստեղըս երկնաբերձ,
Գըժոխադէմ և անՀամբոյր, աչեօք Հեքաց և Թուխ արեամբ



Կերակրեալ. կալայք զերկեր, գէք, ի ժանտէ այնպիսւոյ զերծ:
Ես ինքն եղէ ականատես յորժամ յորսայս ի մէջ այրին
Երկուս ի մենջ իրանունս ըստուար ըըռամբն յափըշտակեալ
Եհար ըզժայռի, և լուղային սեամք ի յարիւն.
Տեսի ես ինքն ի կլանել իւրում զանդամըս մարդկեղէնս
Շարաւալիցըս ջերաջերմս ընդ ատամամբքըն դողդոջունս:
Այլ ոչ Թողաւ անպատուՀաս. ոչ Համբերեաց զայն Ոդիսևս,
Եւ ոչ յայնքան վըտանգին մոռացաւ զանձն ԻԹակացին.
Քանզի խորտկօքն այն ինչ ի լի և խորասոյզ ի յանապակ,
Խոնարհեալ զուլն, արկեալ զիրան իւր անՀեդեդ ի քարայրին,
Աւիշ ի վեր ժայԹքէր ի քուն, ժայԹքէր պատառըս ԹաԹաւեալս
Յարիւնախառըն զինի. կարգամք ըզդիս վեՀս յօգնուԹիւն,
Եւ վիճակաւ կարգեալք ի գործ՝ շուրջ յարձակիմք, և խոցոտեմք
Սայրասուր սըլաքօք ըզլայնաբիբ ակնըն միակ
Ըզծածկեալն ի ներքոյ դըժնէակերպըն ճակատուն,
Իբր ասպար արգոլեան, որպէս լամբար ապոլոնեան,
Եւ խընդրեալ ըզվըրէժ ուրուաց մերոցըն՝ գոՀանամք:
Այլ փախերուք դուք յերկրէ աստի խըզեալ Հէքք ըզպարան.
Զի որքան և որպիսի փակէ խաշինըս գեղմնաբարձ
Ի խորափիտ քարայրին, և ճըմլէ ստինըս Պոլիփեմ,
Հանգոյն նոցին բիւրք բիւրուց ըզկոր ափամբքըս Կիկլոպայք
Բնակեն ժանտք, և ի լերինս աստ ի բարձունըս Թափառին:
Լընու երրորդ մաՀիկ լուսնին յորմէՀետէ կեամ ի մայրիս,
Ի խըշտիս ունայնացեալս ի գազանաց և ի վանկունս,
Եւ զյաղԹանդամ Կիկլոպայս բարձր ի վիմէ աստի դիտեալ,
Ի դըրնդիւն ոտից նոցա և յաղաղակ աՀաբեկիմ.
Պարէն ողորմ ինձ տուն կողճուտ տան և խոզակըս բարունակք.
Կերակրիմ արմատախիլ բուսովք եղեալ խոտաճարակ:
Շուրջ ակնարկեալ տեսի նախկին ի ծովեզր այսըր եկաւոր
Ըզնաւատորմ ձեր, և եդի ի մըտի՝ ո՛յց և նաւքդ իցեն,
Լինել անձնատուր, ի ժանտ եւԹ ազգէն զերծեալ.
Դուք մանաւանդ զիս ըսպանէք, որով մաՀուամբ և իցեն կամք:
Զոյգ ընդ բանին տեսանէաք աՀա ի ծայր լերինն Հովիւ
Ի մէջ խաշանց ըզՊոլիփեմ, դէմ ի ծովափն եդեալ ծանօԹ.
Հըրէշ աՀարկու բարձրաՀասակ և ձառադէմ
Զուրկ ի լուսոյ առ խարխափ յեցեալ ի բուն նոճիաճաց,
Իւ ըզգընացըն Հաստատէր. Հետևէր գայր ըզՀետ նորա
Հօտ ապարաբերձ միակ սըրտին իւրոյ սփոփումն, և դիւր վըշտաց.
Հասեալ ի ծայրս ալեաց ի ծով, լուանայր զակնըն խորեալ
Զարիւնն Հոսեալ, զատամունս Հեծեծանօք կըրճըտելով.

Եւ ի գնալ իւրում ընդ խորս՝ ոչ թանայլն կողք իւր բարձունք
Ի յալեաց։ փութացաք անտի ահիւ մեք ի փախուստ,
Եւ ընկալեալ զարժանին աղաչաւոր՝ հատաք լռելն
Ըզպարան, և կորովի այր քան զընկեր թիավարեմք։
Ըզգաց նա, և ի հընչիւն ձայնից դարձոյց ըզշաւիղ իւր .
Այլ քանզի չէր Նըմա հրաման գոլ ի Նաւ անդըր ձեռընմերձ
Եւ ոչ յոնիական ալեացն ըզհետ գալ հասանել,
Եդ աղաղակ սաստկագոչ՝ յորմէ բոլոր ալեօքըն ծով
Դըղըրդեցաւ, և մըռընչէր Ետնէ խորովքըն խոռոչիւք։
Շուրջ ի մայրեաց և ի լերանց յայնժամ բարձանց ի Նաւակայս
Խուժէ ի կոչն ազդ Կիկլոպայց, լընուն ի սպառ ծովեզերբ .
Տեսաք զեղբարց եռնականաց ըզսոսկալի խուժան ընդ վայր
Ճակատեալ գըժնէհայեաց, յամպս ըզգըլուխսըն ծըրարեալ,
Որպէս կաղնիք երկնաբերձք և կոնաբեր կանգնին նոճիք
Ընդ եթեր, անտառ Դիայ և արտեմեանըն մայրեստան։

Երկիւղ սաստիկ մըղէ յայնժամ ըզնաւաստին խըզել հապճեպ
Շուրջ ըզպարանս, աջող հողմոց պարզել ըզթեւս առագաստից։
Բայց Հելենեայ ընդ հակառակն ազդեն հրամանք՝ մի՛ գործել ռահ
Ընդ ըՍկիլլա և ընդ Քարիբդ, ուր կորըստեան սուղ է խըտորոց։
Խորհիմք շըրջել ըզկըտաւիս, և ընդ անձուկն ահա Պըլորեայ
Շընչէ հիւսիս, ի պանտագեան վարիմք ի դրունս որձաքարեայս,
Անցեալք ընդ ծոց մեգարեան և ընդ Տափսոսըն տափարակ,
Զայսոսիկ Աքիմենիդ ընկեր հիքին Ոդիսեայ,
Ցուցանէր մեզ ծովափունս՝ ընդ որս ի գալն էր թափառեալ։

Ի սիկանեան ընակէ ի ծոց կըղզի հանդէպ ալէկոծին
Պլեմիրեայ, ի Նախնեաց առեալ կոչումն Որտիգիա .
Ալփէոնի ելիսական գետոյն ասեն՝ անդըր ընդ ալեօք
Հորդել գողուղի, և ընդ քոյին հոսեալ բերան
Ո՛վ Արեթուսա, ի սիկուլեան խառնել յալիս։
Երկըրպագեալ դիցըն վեհից անդ, որպէս էր առեալ հրաման,
Ցանդըս բերրիս Ելորեայ գետալըճին անցաք անտի,
Անտի ընդ վախըս բարձրաբերձըս Պաքինեայ քերեալ կից,
Եւ ընդ ժայռըս կարկառեալս՝ հայիմք հեռի զԿամարինէ
Ճակատագրեալ անշարժելի, ըզդաշտավայրըս պելորեանս
Եւ զայնանիստըն Գելա՝ առեալ զանուն իւր ի գետոյն։
Բարձր Ակրագանդ եցոյց ապա ըզբարձրամուր պարիսպըս իւր
Ի բացէ, ամէհեաց բերրի երբեմն երիվարաց .
Թողի և զքեզ աջող հողմովք արմաւաստանըդ Սելինէ,
Եւ ընդ հունըս Լիլեբայ անցի ընդ խիստս ի կոյր ժայռից։
Անտի ապա տըրեպեանն ընկալաւ զիս Նաւահանգիստ



Ի ծովեզըրըն տըխուր, ուր յայնքաննեաց մըրրկաց վարեալ,
Աւա՛ղ, ըզհայրն իմ կորուսի անդ զԱնքիսէս, այն որ ընաւից
Ինձ արկածից էր ըսփոփումն։ Աստ դու թողեր հայր բարելաւ
Ըզտաժանեալըս զիս, աւա՛ղ, զուր ի յոգունց զերծդ ի վտանգաց .
Եւ ոչ հարցուկն Հելեն, այնքան ինձ գուժարկեալ արհաւիրս,
Ըզսուգըս զայս գուշակեաց. ոչ ինձ և ժանտըն Կելենով։
Այս վիշտ յետին, աստանօր կէտ բազում երկայն ճանապարհին .
Անտի ապա ի ծովեզերըս ձեր ածին զիս այսըր դիք։

Այսպէս Հայրն Ենէաս, կալով ընաւից յականջս ի լուր,
Զարկածս ի դից ճակատագրեալս ածեալ ի վէպ և զարշաւանս,
Լըռեաց՝ բանիցըն վախճան արարեալ աստ, և հանգեաւ։

# ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵՍՅ ՄԱՐՈՆԻ

# ԵՆԷԱԿԱՆԻՆ

## ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Յայտնէ Դիդէ Աննայի քեռ իւրում զտարփանս իւր ընդ Ենեայ, և խորհրդով նորա հաստատի ի հարսանիս: Հերա առ ի բաց կացուցանելոյ զԵնեաս յԻտալիոյ, խօսի ընդ Աստղկան ի յաջողութիւն հարսանեացն: Ենեաս և Դիդէ ելանեն յորս. և խոյս տուեալ ի մրրկէն՝ զոր հնարի Հերա յարուցանել, ամրանան յայրի ուրեք, ուր տարապարտ և թշուառ հարսանիքն կատարին: Յարբաս արքայ Գետուլաց, որդի ամմոնեանն Արամազդայ, տարփաւոր Դիդէի, սրտմտեալ ընդ օտարին քան զինքն մեծարանս՝ սրտառուչ բողոք ունի առ Արամազդ: Արամազդ շարժեալ յաղաչանաց նորա և յանհրաժեշտ ճակատագրէն, արձակէ առ Ենեաս զՀերմէս, որ հրամայէ նմա մեկնել գնալ յԻտալիա: Ենեաս պատրաստէ գաղտ զամենայն կարևորս ինաւարկութիւն. զորմէ կասկած առեալ Դիդէի, հնարի աղաչանօք և արտասուօք, անձամբ և՛ի ձեռն քեռ իւրոյ, շրջել զնա 'ի խորհրդոյն: Ենեաս վերստին 'ի Հերմեայ հրաման առեալ 'ի տեսլեան, տարաժամ ի գիշերի խարիսխ 'ի վեր առեալ մեկնի: Դիդէ առ չժուժալ վշտին՝ կազմէ խարոյկ իբր առ 'ի հմայս սուրբս, և ելեալ անդր՝ սուսերաւն Ենեայ գնայ զիւրովին:

# ԵՆԷԱԿԱՆ

## ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

Բայց թագուհին վաղ ի ծանունց հարեալ ի կրիցըն կարեվէր,
Տածէր ըզխոց յերակունս, և ի զանխուլ բոցոյն մաշէր.
Լաւութիւնք առնըն բազումք, բազում և փառք ազգատոհմին
Ի միտըս իւր յեղյեղեալ, դրոշմեալ ի սիրտ իւր խօսք նորին
Եւ կերպարան, ոչ ներէին մասանց մարմնոյն անդորրըր նինջ:
Եւ մինչդեռ այգըն վաղորդայն փիբեան ջահիւ լոյս ի յերկիր
Ածեալ՝ հալածէր ըզխոնաւուտ ըստուերս յերկնէ,
Այսպէս առ քոյր իւր մըտերիմ կալաւ խօսել հիւանդագին.
Քոյր իմ Աննա, զի՞ տըքնութիւն յահ է վարանս արկանէ զիս.
Ո՞ այն յերկիր մեր եկաւոր հիւր, որպիսի՜ կերպարան,
Քանի՜ արիասիրտ, և քանի՜ն հըզօր ի զէն.
Ի դիւցազանց ազգէ անշուշտ թըւի ինձ ոք, ոչ վայրապար.
Ըզվատազգին մատնէ երկիւղ. ո՜հ յորպիսեաց նա արկածից
Վըտարանդեալ, և քանի՜ պատերազմունս աստ հարեալ:
Իմ եթէ չէր ի մըտի եդեալ անշարժ և անյեղլի՝
Մի՛ ևս ընդ ումեք յարիլ ի զօդ հարսանեկան,
Յետ պատրանօք դաւելոյ մահուն ըզսէր իմ նախընծայ,
Եթէ չէին տաղտկալի եղեալ ինձ ջահ և առագաստ,
Էր ինձ թերևս ի մեղս ևեթ յայս անկանել քոյր իմ Աննա.
Յետ արկածից առն իմոյ հէքին Սիքեայ ճակատագրին
Եւ թերափից ըսպանութեամբ եղբօրն յարիւն ներկանելոյ,
Խոստովանիմ զի սա ևեթ զըզգայութիւնս իմ ողոքեալ՝
Ըզդեդևեալ միտս իմ դըրդեաց, և զհին բոցոյն առնում ըզփորձ:
Այլ ինձ լիցի՛ բացցի երկիր նախ ի խորոց, և ընկլուզցէ
Ամենակալըն զիս Հայր ի սեաւ ի ստուերըս դըժոխոց

Ի խոր գիշեր, քան 'քեզ դըրժել, ո՛ զգաստութիւն, և զքո օրէնս
Ա՛ռ ոտըն կոխել. այն որ նախկին զօդեալ ընդ իս՝
Գրաւեաց զիմ սէր, կալցի միշտ զայն, և սրահեսցէ իւր ի շիրմի։
Զայս ասացեալ՝ ելից ըղծոց իւր յորդահոս արտասուօք։
Առ նա Աննա. Ո՛վ, քան զարև ինձ սիրելի քոյր իմ, ընդէ՞ր
Միայնակ ըղմանկութիւն քո անցուսցես ի սուգ յաւէրժ,
Զուրկ յանուշակ որդւոց, ունայն ի պարգևաց Աստղըկան.
Համարիցի՞ս թէ աճիւնոյ կամ ըստուերի իցէ ինչ փոյթ
Յետ մահու. իցէ իսկ. ըզքեզ ոչ արք ի Լիբիա,
Ոչ վաղ ի Տիւր ըզօրըգաւորըդ ձըգեցին ի հարսանիս.
Արհամարհեալ ի քէն Յարբաս և զօրավարք այլք մերժեցան,
Զորս ի ծոց իւր Ափրիկէ տածէ ըղճոխս ի յաղթանակ.
Արդ և բաղձից բոցոյ ըզրոխտ ըղդէմ կալցիս. ո՞չ խորհիս յորս
Կաս ի յերկրի. աստի Գետուլք, ազգ ի մարտի անպարտելի,
Անտի Նումիդք ապերասանք և Աւազուտն հիւրամերժ,
Անապատըն ծարաւի, և ամեհիք պատեն Բարկայք.
Զի՞նչ ըզմարտից յաւելից յարուցելոց ի Տիւր, և զի՞նչ
Զեղբօր քո սպառնալեաց. անշուշտ խնամօքն աստուածոց
Եւ Հերայ՝ իլիականքդ այսր ի հողմոց վարեցան նաւք.
Որպիսի՜ ըզդաստակերտ քո հարսանեօքդ այդուիկ տեսցես,
Քոյր իմ, և հաստահիմն ըզպետութիւն քո հաստատեալ.
Զինակիցք ընդ տեւկրացիս ո՜րք ամբարձցին փառք փիւնիկեան։
Դու հաշտ եւեթ արա ըզդիս, զոհըս մատո, յաւել և ես
Հիւրընկալիս, և բաղբաղյս ի յամեցուցմըն կըցկըցես,
Մինչև ձըմեռն և Որիոն ամպրոպայոյզ մոլեալ ընդ ծով,
Լիցին երկինք անհամբոյր, քայքայեսցին եղևնափայտք։
Այսպիսեօք բանիւք ելոյց ըզսիրան ինքնին սիրայորդոր,
Խրախոյս մըտացն ետ յուզելոց, ելոյծ ըզքեաըն պատկառանս։
Դիմեն զընսան նախ ի մեհեանս և ի բագինս անդր ի յաղերս
Հաշտութեան, զենուն խաշինս Ապողոնի ըստ օրինի,
Օրէնըսդրին Դեմետրի և Հընձաննեան հօր ընտրանաւ.
Մանաւանդ խնամակալութին հարսանեկաց զօդից Հերայ։
Ինքն իսկ Դիդէ չըքնաղագեղ, կրելով բաժակ յաջում՝ հեղու
Ի սպիտակ երընջոյն յեղջերամէջս ըզքաւութիւն,
Ճեմ առաջի երեսաց դից ընդ ճենճերոտ բագինս առեալ.
Նըւիրէ զօհս համապազօր, և 'ի հերձեալ կուրծըս խաշին՝
Պըշուցեալ ի ջերաջերմ նոցին ընդերս խընդրէ հըմայս։
Եղո՜ւկ հարցկացն անգէտ մըտաց. զի՞նչ օգնեն ուխտք տարփաւորի,
Եւ զի՞նչ մեհեանք. ոչ դադարէ ծախել ախորժ զաղխըն բոց,
Ճարակին ըռելեայն ի ներքըս վէրքըն. տոչորի



Եւ ընդ քաղաքն ողջոյն շուրջ հէքըն Դիդէ անըզգայեալ.
Որպէս եղն՝ ում հետամուտ լեալ ի կրետեան մայրիս հովիւ,
Զանըզգոյշն ի հեռուստ վիրաւորէ, զերկաթն ի նմա
Թողեալ թռուցիկ, և ոչ գիտէ. նա մահաբեր ծըղօտ ի կողն
Ընթանայ ընդ մայրիս և ընդ անտառըս Թափառի։
Մերթ ընդ պարիսպըս զԷնէաս շուրջեցուցեալ, և մերթ զանձուց
Տիւրականաց և քաղաքին հանդերձելոյ ածէր ի տես.
Խօսել ըսկըսանէր, և զկայ ի մէջ խօսիցն առնոյր.
Ի հոլովել աւուրն ըզնոյն խրախունս անդրէն տայր պատրաստել,
Իլիական անցիցն ի լուր խընդրէր անդրէն կալ ըզմայլել։
Ապա մեկնեալք, յորժամ լուսին նըսեմ ըզլոյսըն վերըստին
Թողարկէ, և աստեղք անկեալ՝ հրաւէր առնեն ի նինջ,
Տըխրէր ի լուռ տան միայնակ, յեց ի լըքեալն իւր ի բազմոց,
Եւ բացակայ ըզբացակայն և տեսանէր և լըսէր.
Կամ ի տիպ մայրենի գըգուէր ի գիրկըս զԱսկանի,
Պատրել ըզսէր աննըւէր՝ եթէ կարէր. ոչ աշտարակք
Ըսկըսեալք յառնէին, ոչ ևս ի զէն մարզէր մանկտին.
Ոչ նաւակայք և մարտկոցք անքոյթք ի մարտ պատրաստէին,
Խափանեալ ամենայն. թերի թողեալ բարձրակատար
Պարըսպացըն մահարձանք, և մանգղիոնքըն բարձրաբերձք։
Այն ինչ հարմըն սիրելի Դիոյ ըզգաց՝ զի էր մատնեալ
Դիդէ ի ժանտ այնպիսի, և ոչ համբաւ զախտըն պարտէր,
Հարաւ դըշխոյն սատուրնեան այսու բանիւք ընդ Աստղըկան.
Պերճ արդարև յաղթանակ, և քանի մեծ տարայք աւար
Դու և մանուկ քո և անուն յաւէրժական և գերապանծ,
Մատնել դաւով դից երկուց կընոջ միոյ ի պարտութիւն։
Ոչ զանխուլ է յինէն՝ քո ի մերոցըս պարըսպաց
Զանգիտել, և կասկածել ի տանց բարձուն Կարքեդոնի.
Զի՞նչ այդուցիկ կատարած, ո՞ր այսքանեաց վիճից ելք,
Եթէ ոչ խաղաղութիւն յաւէրժ և ուխտ սերտ հիմնեալ
Հաստատեսցի ի միջի. հասցես այսպէս ում ցանկայիր։
Դիդէ սիրով տոչորի՝ տարփումն յոսկերսըն թափանցեալ.
Հասարակաց լիցին մեզ արդ խընամք ազգին, և համիշխան
Տնօրինեսցուք. լիցի օրէն հըպատակել փըռիւգացւոյն,
Եւ զտիւրացիս աւանդել ի ձեռըս քո պաշտպանական։
Որում Աստղիկն այսպէս ընդդէմ բարբառեցաւ, (ի միտ առեալ
Ըզկեղծիս՝ որով հնարէր զարքայութիւն Իտալիոյ
Մուծանել ի յերկիր Լիբէաստան). Ո՞ր այն անմիտ
Զառցէ զայդ յանձն, և ընտրեսցէ կալ հակառակ քո ի վըսեր.
Եթէ միայն խորհըրդոյդ, զոր թելադրես, օգնեսցէ բախտ.

Այլ կեղակարծ լինձ թըւի ճակատագիրն, իցէ՞ն արդեօք
Կամք Դիոսի՝ սիդոնացւոց և ի Տրովայ եկաւորաց
Ունել քաղաք հասարակաց, և հաճեսցի՞ խառնել ազգացդ
Ընդ իրեար և ուխտ կռել. օրէն տիկնոջդ է աղերսիւք
Ըղձիտըս իւր հետազօտել. ընթա և զհետ քո եկից ես։
Կրկնեալ անդրէն յայնժամ դըշխոյն Հերա այսպէս էառ խօսել.
Ցիմ վերայ հոգդ այդ, մտ դիր, և ուսուցից քեզ սուղ բանիւք
Որով օրինակաւ առաջիկայդ է հնար մեղ իր.
Յորս արշաւել հանդերձին ի միասին հէքըն Դիդէ
Եւ Ենէաս ընդ անտառ՝ այն ինչ Տիտան վաղիւ ծագեալ
Ճառագայթիւք իւրովք ածցէ ըզտիեզերս ի յերևան.
Սեաւ ըզնոքօք ի վերուստ կարկըտախառն արկից ամպրոպ.
Ի ճեպել ասպականւոյն պատել ղանտառն երագաղիւք,
Զերկինս առհասարակ որոտընդոստ դըղըրդեցից,
Ցըրուեսցին որսակիցք և ծածկեսցին խոր գիշերաւ.
Անկցին ի նոյն անձաւ Դիդէ և զօրավարըն տրովացի.
Հասից և ես, և եթէ ստոյգ քեզ կամք իցեն, յանլոյծ ըզնա
Զօդեցից ի հարսանիս, տաց ամուսին ըզնա Ենեայ,
Մերձ անդանօր կացցէ Հիմէն։ Յանձն էառ զայն անդիմադարձ
Դիցուհին կիթերեան, ժըպտեալ ընդ դաւն հանճարահնար։
Մինչ արշալոյս յաշխարհաման ալեաց յառնէր, և ծագէր այգ,
ԵԼ ի դրանց մանկտի ընտիր ի ստուարասուր զինեալ շամփուր,
Վարմք ընդ նոսա և երագագք, և հետազօտ ըռընգունք շանց.
Խուժեն հեծեալք մասիլականք. աղատանին փիւնիկեցի
Սպասէ առ սեամըս դըշխոյին ի սրըսկաղանաըն յամելոյ.
Ի վարւանդ ծիրանեփայլ սալասըմբակն ոսկեսար
Կայր անդ չըքեղ, ծամելով ըզփըրփրերախ սանձս ամեհին։
Ի դուրս ապա գայր ամբոխիւ մեծաւ՝ արկեալ զխրեւ լօդիկ
Սիդոնացի, շուրջ ի քըղանցսըն նըկարէն ասղնէգործեալ.
Ոսկեաձոյլ կապարճ ի յուս, ոսկի զվարսիւքըն ծամակալ,
Եւ ամփոփէր ոսկեղինիկ ճարմանդ ըղձորձըն ծիրանի։
Գային ի սպաս և փռիւգացիք, զըւարթ ընդ իւր գայր և Յուլոս,
Ինքն իսկ իւրովքն Ենէաս՝ ընաւից գեղովըն գեր ի վեր՝
Գայր որսակից, հետ ընդ հետ գումարտակացըն ժամանեալ.
Որպէս յորժամ Ապոլոն թողեալ ըզցուրտըն Լիկիա
Եւ ըզհոսանըս Քըսանթեայ՝ ի մայրենին դիմէ Դելոս,
Ցօրինելով պար, և խառն ըզսեղանովք կըրետացիք
Ընդ Տըրիոպս, և խայտաբղէտք դըրինդըս տան Ագաթիրսայք,
Ինքն ի կատար Կինթեայ ճեմի, գիրգ տերևովք պըսակազարդ,
Զըսպեալ զըսփիւռըս վարսից ոսկեթել հիւսածոյից.



Եւ չառաջէն նեաք ըզթիկամբ. ոչ ինչ այլազգ գայր Ենէաս
Այնքան փայլէր գեղեցկութիւն ի հրաշազան դէմըս նորա։
Իբրև հասին բարձր ի լերինս և ի խըշտիս անմատչելիս,
Ի ծայրից ահա ժայռից ընդոստք ի ստոր այծեմունք
Բըլրոց ի բլուրըս վազվազէն. այլուր ի դաշտըս լայնալիր
Դիմեալ եղջերուք արշաւասոյր փախըստականք
Տեղի տըւեալ ի լերանց՝ կազմին ի ջոկըս փոշելիցք։
Իսկ պատանեակն Ասկանիոս բերկրէր ի ձի ամեհի
Ի հովիտս անդ, մերթ ըզսոքօք մերթ ըզնոքօք զանց արարեալ,
Եւ յամի ի ջոկս անդ անդէոց դէտակն ունէր իջանելոյ
Շէկ առիւծու ի լեռնէ, կամ փըրփրերախ յանկարծ կընճի։
Խառնակեցան յայնըմ վայրի երկինք ի դըղորդ ահագին,
Հաս կարկտախառն ըզհետ ամպրոպ, ցըրուեաց զօրաւորըն տիւրացի.
Աստ անդ մանկտին տրովական, և դարդանիկ թոռն Աստղկան,
Ընդ դաշտավայրս այլք այլուր դիմեն ի հիւղս ահաբեկեալ,
Գահավիժին գետք ի լերանց. գան ի մի վայր ապաստանին
Ի նոյն քարայր ինքըն Դիդէ և զօրավարըն տրովացի։
Հարսնաւէրըն նախ Հերա, ձայն և երկիր տայ ի ներքուստ.
Ցոլանան փայլատակունք, և հարսանեացըն կան երկինք
Վըկայ, և բարձր ի ծայրէ լերին ճըչեն յաւէրժհարսունք։
Այն առաջին օր մահառիթ, օր առաջին աղետաբեր.
Դիդէ ոչ ևս ընդ տեսիլ, ոչ ևս ընդ լուր չարեաց չարժի,
Ոչ ևս ըզսէր իւր գողունի թծաքուցանէ, յորջորջէ զայն
Հարսանիս, ըզմեղանսըն բարեբեկ անուամբ ծածկեալ։
Վաղ ընդ քաղաքըս մեծամեծըս Լիբիոյ գընայ համբաւ,
Համբաւ չարագոյժ՝ քան զոր չիք ինչ երագընթաց.
Գնալով երթայ և ստուարանայ, աճէ գնացիւք ի զօրութիւն.
Դոյզն ի սկըզբան առ երկիւղի, յայերս ընդ հուպ վերամբառնայ.
Ցածի ընդ երկիր, և յամպս ըզգլուխ իւր ծըրարէ։
Մայր երկիր ի ցասմանէ դիցըն դըրդեալ, ըստ զըրուցաց,
Ենկելադեայ և Կէոսի ծընաւ ըզնա քոյր կըրտսեր.
Երագոտն երագաթև հըրէշ ահեղ հըսկայաձև,
Որոյ որչափ են փետուրք՝ նոյնչափ հըսկեն աչք ընդ նոքօք,
Նոյնչափ լեզուք, նոյնչափ բերանք հընչեն, նոյնչափ լսեն ականջք.
Ոչ խոնարհէ զարտեանունըս քաղցր ի նինջ, բազմի ի տուէ
Դէտ ի տանեաց բարձր ի գըմբէթ և յաշտարակըս բարձրաբերձ,
Արհաւիրս ի մեծամեծ քաղաքանին արկանէ,
Մերթ եղերանց և կեղծեաց, մերթ հաւատեաց պատգամաւոր։
Սա յայնժամ խայտայր, լընոյր զերկիր ի զըրոյցըս պէսպէս,
Զանգործս անխըտիր և զգործեցեալըս պատմելով,

Զենէաս ի տրովական զարմէ ի Տուր եկաւորեալ,
Եւ զեղանւոյն Դիդէի հաճեալ լինել նըմա ի կին.
Անցուցեալ ըզձըմեռն երկարատև ի միասին,
Ի ցեղխութիւն և ի բերկրանըս գըժպատեհս յօրացեալ,
Արկեալ երկաքանչիւր զարքայութիւն ի մոռացօնս:
Զայսոսիկ շըրթամբք յոգունց աստուածուհին ժանտ ծաւալեալ,
Առ Թագաւորն ապա Յարբաս շըրջէ ըզթուիչս արագարագ,
Բորբոքել ըզսիրտ նորա, և ի զայրոյթ ըզնա գըրգռել:
Գարամանտեայ էր սա որդի յաւերժհարսին հափափելոյ
Յամմոնեանն Արամազդայ, ում կառուցեալ էր հըյակապ
Մեհեանս հարիւր ի լայնասփիւռըն տէրութեան, և հարիւրեակ
Կանգնեալ բագինըս նըմա, սըրբազանեալ բոց մըշտավառ.
Եւ ըսպասեակս անքունըս դից, արեամբ խաշին երկիր պարարտ,
Եւ սեամս ի դրասանգըս ծաղկեղէնս երփնազարդեալ:
Նա սըրտառուչ խելայեղեալ ի լուր դառինըն համբաւոյ,
Առ բագնօք դից՝ ի մէջ դիցըն պատկերաց աղաչաւոր
Ասի բազում առ Դիոս բազկատարած հեղեալ աղերս.
Ամենակալ Արամազդ, որում մաւրեանն այժմիկ որեար
Բազմեալ յակումբըս նըկարէնս հեղու զլենեան փառս ի խրախունս,
Ո՞չ տեսանես զայսոսիկ, կամ ընդունայն, Հայր, զարհուրիմք
Յարձակել քո շանթիւ, և ի նանիր ընդ ամպըս բոցք
Ահ արկանեն, և ի զո՞ւր դոռան երկինք որոտընդոստ:
Փաղաք փոքրիկ արծաթագին կառոյց յերկիր մեր կին նըժդեհ,
Որում ի վար ըզծովեզր, որում զօրէնըս մեր տըւաք,
Մերժեալ նորա ըզհարսանիս մեր՝ ընկալաւ յարքայութիւն
Զենէաս, և վայելէ այժմիկ Պարիսն այն յիւրն աւար,
Կիսարս ըզհետ իւր ածեալ, զօդեալ ըզվարսըս իւղաթուրմ,
Եւ մէոնիկ խոյր զերանամբք, մինչ մեք նըւէրըս քեզ ածեմք
Ի մեհեանս, և ունայն զաստուածորդւոյ կըրեմք համբաւ:
Եւ յաղօթել նորա այսպէս՝ բուռն ըզբագնին հարեալ զեղջերց,
Լըւաւ նըմա ամենակալն, և ի պարիսպս անդր արքունիս
Զաչըս դարձոյց ի տարփաւորսըն մոռացկոտըս համբաւոյ,
Եւ զայս Հերմեայ ետ պատգամ. Ե՛րթ որդեակ ձայն տուր զեփիւռոց,
Է՛ջ թեւածեալ առ դարդանեանըն զօրավար՝ որ կայ այժմիկ
Ի տիւրականըն Կարքեդոն, արհամարհեալ զոր սահմանէ
Ճակատագիր նըմա քաղաք. ած ընդ թեթեւ այերս առ նա
Զիմ պատուէր. ոչ այդպիսի մեզ ըզնա մայր իւր գեղանի
Խոստացեալ՝ զերծոյց երկիցս ի հելլենացն ըզնա զինուց,
Այլ ընդ ձեռամբ ունել նըմա զիտալիա լի պետութեամբք
Ըզգոռ ի մարտ պատերազմի, և ցուցանել ի տեւկրական



Զինքըն սերեալ ի վեհ զարմէ, օրէնըս տալ տիեզերաց:
Թէ այսքանեաց ըզնա իրաց ոչ շարժեն փառք, և չէ ինչ փոյթ
Նըմա զիւրոցըն պարծանաց, ընդէ՞ր զորդեակն իւր Ասկանի
Հռովմէական ի պարըսպաց անտի զըրկէ. ի՞մ վաստակի,
Եւ յի՞նչ վըստահ առ ոխերիմ ազգին բնակէ, ոչ յիշելով
Զաւսոնականըն զաւակ և զդաշտավայրըս Լաւինեայ:
Ասաց, և նա հօրըն մեծի պատրաստ ի լուր հրամանի,
Ի գարշապարս արկ ըզկօշիկս ոսկիս՝ որ զնա թեւոցն ի թիռ
Մերթ ընդ ծով, մերթ ընդ ցամաք հանգիտարագ ածեն հողմոց.
Եւ զգաւազանն ապա առեալ՝ որով զըստուերըս մահատիպս
Ի դըժոխոց վերակոչէ, իջուցանէ զայլս ի մըթին
Տարտարոս, և երազըս մահացուաց տայ և բառնայ,
Եւ բանայ ի ստուերաց մահու ըզբիբս աչաց ի լոյս,
Որով զինեալ վանէ ըզհողմս և ընդ ամպրոպս անցեալ գընայ.
Նա ինքն յայնժամ խոյացեալ՝ զապառաժուտ լերինն ըզգլուխ
Ատլասայ և ըզկողսըն բարձրաբերձըս տեսանէ.
ԶԱտլասայ՝ որ ի վե՛ր ունի զերկինըս գագաթամբ,
Որոյ կատար եղեւնաբեր շուրջ միշտ պատի ի թուխ ամպոց,
Զինախաղաղ ուսք իւր ծածկին, գետք ի ծնօտիցն յորդահոսեն,
Սառամանեօք կարծրացեալ մօրուք ծերոյն հիազարհուր:
Անդ ըզկայ Կիլլենեանըն նախ էառ թեւատարած,
Եւ բոլորով անձամբ անտի վայրաբերեալ էջ ի ծով,
Զօրէն հաւու թռուցելոյ առ ձըկնախիտ քարաժայռիւք
Ըզծովեզերբ ի խոնարհ քերեալ զալեօք. ոչ ինչ ընդհատ
Օդահերձ ընդ երկիր և ընդ երկինըս թեւածեալ՝
Եկաւորէր ի մայրենի հաւոյն զաւակըն Կիլլենեան:
Այն ինչ ըզտամբք հոլաթեւեան գարշապարօք ըզկայ էառ,
Զաչս յԵնէաս դարձոյց, մինչ նա դըղեակս հիմնէր, յարկըս կանգնէր.
Ականակուռ սուսեր յագդեր աստեղազարդ ի շէկ յասպեաց,
Եւ ծիրանի տիւրացի արկեալ զիւրև բոսորագեղ,
Զոր մեծագանձըն Դիդէի տըւեալ նըմա էր ի պարգև,
Նըրբաթել ոսկեմանեալ, և կըշտամբէ ըզնա այսպէս.
Ըզբարձո՞ւն Կարքեդոնի դու ըզհիմունըս զետեղես,
Եւ քաղաք հոյակապ կանգնես կընոջ, եղո՜ւկ դու,
Մոռացօնս արարեալ արքայութեան և իրաց քոց.
Արքայն երկնից, այն որ բազկաւ շըրջէ զերկիր շըրջէ զերկին,
Ի լուսափայլն Ողիմպեայ նա ինքն առ քեզ զիս առաքէ,
Զայս ընդ թեթեւ այերս ածել քեզ պատգամ. Զի՞նչ կառուցանես,
Որո՞վ յուսով ընդ երկիրըդ դեգերիս լիբէական.
Այնքանեաց պարծանաց թէ ոչ ըզքեզ յորդորեն փառք,

Եւ ոչ ըզգուշից անձինըդ քեզ լիցէ՞ինչ փոյթ,
Այլ ի զարդուն տես Ցուլեայ, սակայն ի յոյս պայազատիդ
Խնայեսջիր Ասկանեայ, ում պետութիւն Իտալիոյ
Ում երկիր Հռովմէական պատրաստեալ կան: Զայսոսիկ
Կիլլենեանըն բարբառեալ՝ զոյգ ընդ բանիցն ելեք յանկարծ
Ըզկերպարան մահկանացու, ի նուրբ այեր եղեւ աներեւ:
Իսկ Ենէաս կարկեալ եկաց յապուշ հարեալ ի տեսլենէն,
Հարթեան յահէ հերք իւր ի վեր, ձայն ի հագագ իւր կըցեցաւ.
Խոյս տալ անձկայր, ըզքաղցր երկիրըն լըքանել, ահաբեկեալ
Ի մեծաստաստ դիցն ազդմանէ. այլ զի՞նչ, աւա՜ղ, առնել էր իւր.
Զիա՞րդ իշխէր ըզդըշխոյն մօլեալ ի սէր յողոք ածել,
Ուստի՞ ըսկիզըն առնել բանից. մերթ յայս մերթ յայն յափըշտակեալ
Ի խորհուրդըս պէսպէս, ընդ ամենայն միտքն յածէին:
Եւ ի վարանս անդ նըմա հաճոյ խորհուրդս այս թըւեցաւ.
Կոչէ զՄերգեստ, ըզՄընեսթ և ըզԿլովանթ քաջակորով,
Կազմել զանխուլ ըզնաւատորմն, համախըմբել յեզըր ծովուն
Զընկերս ըսպառազէն, գյեղակարծիցըն թաքուցեա՛լ
Զիրաց պատճառ, մինչև մըտցէ ինքն առ դըշխոյն բարեկաւ,
Եւ ժամ պատեհ առեալ խօսել՝ յելս գործոյն յաջողեսցի,
Մինչ դըշխոյն անիրազեկ ոչ կասկածէր ըզկաթոգին
Սիրոյն քակտումն: իսկոյն ահա դիմէ որեարըն մըտադիւր
Ի կատարումըն հրամանին: Բայց թագուհին ըզգաց անդէն
Ըզնենգըն զայն, զի արկանել ի խաբս ըզսէր ո՞ք է հընար.
Ծանեաւ նա ըզհանդերձանս ի չու, զանգէտ յամենայնէ՝
Թէ և անքոյթ: Նոյն ինքն համբաւ չար ած ի լուր չըւարելոյն
Ըզզինուորել նաւատորմին և զարշաւանըն պատրաստեալ.
Եւ խելայեղ սըրտաառուչ ընդ դաստակերտն ողջոյն մոլէր,
Որպէս Թիաս յուզեալ ի ճօճ սըրբոց դրօշից, մինչ եռամեայք
Ըզհետ Բաքեայ գըրգռեն ըզնա գիցապարարկք մոլեալ յաւիւն,
Եւ Կիթերոն կարդայ հրաւէր գիշերախառն աղաղակաւ:
Այսպէս ապա ինքըն նախ էառ խօսել առ Ենէաս.
Ծածկե՞լ զեղեռըն քո յինէն կարծէիր, ո՜ հաւատադրուժ,
Եւ լըռելեայն խուսել յերկրէս. ո՞չ ըզքեզ սէր մեր արգելոյր,
Ո՞չ աջ տըւեալ, ո՞չ Դիդէի աղխօղորմ ընդ հուպ մահ.
Մանաւանդ ի ձմերային աստեղ կազմել նաւատորմիդ,
Ընդդէմ հիւսիսակաց աճապարել նաւել յանդունդս
Ո՛վ անողորմ. և առ ի՞նչ. գէթ մի՛ գնայիր յերկիր օտար
Ի ընակութիւն անծանօթ, գէթ վաղեմին կայր Տրովադա,
Եւ անդ ընդ ծով մըրըրկալից նաւատորմաւըդ դիմէիր:
Ցինէ՞ն փախչիս. այլ ողորմեա ինձ վասն իմոց արտասուաց,



Զի ո՞չ ինչ այլ հէքս ինձ թողի, վասն Հիմենեայ, վասն աջոյ քո,
Վասըն դեռևս ըսկըսելոցս արդ հարսանեաց: Եթէ գըտայ
Ես քեզ իւիք բարերար, եթէ իցէ յիս տակաւին
Քաղցր ինչ քեզ, խնայեսջիր ի կործանումըն տան իմոյ,
Աղաչեմ, եթէ կայցէ ինձ դեռ տեղի աղաչանաց,
Թող ըզխորհուրդ քո զայդ ի բաց, զի քև եղէ ես ատելի
Ազգաց Լիբիոյ, և արքայից նումիդացւոց.
Եզեն ոսոխք ինձ տիւրացիք, և վասըն քո լըքի զամօթ.
Վաղ իսկ համբաւ իմ կորեաւ, որով յաստեղըս ճեմէի:
Ո՞ւմ լըքանես զօրհասականըս հիւրըդ զիս. զի այսպէս ինձ
Այսուհետև մընայ կոչել ըզքեզ, ոչ ևս այլ ամուսին:
Ո՞ւմ արդ մընամ, զի ըզպարիսպս իմ աւերե՞լ գայցէ Պիգմալ
Համահայր, կամ զի Ցարբաս Գետուլ գերի՞ վարեսցէ զիս:
Թէ գէթ յառաջ քան ըզփախուստ քո լեալ ի քէն էր ինձ որդի,
Եթէ Ենեակ մանկիկ խաղայր ինձ յարքունիս՝ ըզհայրենին
Վերըներևլով կերպարան, ոչ արդեօք զիս բոլորովին
Պատրեալ, և ոչ ամայի մնացեալ ի սպառ համարէի:
Ցայս վայր դըշխոյն. իսկ նա խրատեալ յԱրամազդայ՝ կայր պղ-
Անդրդուդ, ըզկիրըս իւր նըւաճելով ի սըրտի, (շուցեալ
Եւ ուր ուրեմն ասէ հակիրճ. Ոչ ժըխտեցից, դըշխոյ տիկին,
Որչափ յօգունս ինձ երախտիս կարես ածել ի համար.
Լիցի յաւէրժ սիրելի յիշատակել ինձ ըզԴիդէ
Ցորչափ իցէ ի յիս շունչ, ցորչափ իցեմ ինձ անմոռաց:
Այլ սուղ զիրացս ասացից. ո՞չ ըզփախուստ իմ յուսայի
Ծածկել լըռելեայն, մի՛ լիցի քեզ կարծել զայդ,
Ոչ այսր ի դաշն ամուսնական եկի, և ոչ ի հարսանիս.
Թէ ինձ հրամանք դից ներէին ըստ հաճոյից վարել կենցաղ
Եւ տնօրինել զիրս իմ ինձէն, նախամեծար ըզՏրովադա
Վանէի, և զցանկալի իմոցս աճիւն, և Պրիամու
Կանգուն կային դեռ արքունիքըն բարձրաբերձք, և պարտելոց
ԸզՊերգամայս կըրկնակործանըս կանգնէի նորանկերտեալ:
Այլ արդ ըզմեծն Իտալիա գրինիոնեանն ինձ Ապոլոն,
Զիտալիա ինձ հրամայեն խընդրել պատգամք լիկիոնեանք.
Անդ է իմ սէր, անդ հայրենիք. թէ զքեզ ամուրք Կարքեդոնի,
Եթէ զփիւնիկդ ունի տեսիլ լիբէական դաստակերտիդ,
Զի՞ ոչ ներես տևկրացւոց բնակել յերկիր աւսոնական.
Օրէն և մեզ լիցի խընդրել արքայութիւն ի տար աշխարհ.
Քանիցս ատեգք յառնեն հրափայլք, քանիցըս ցայգ ի ստուեր նամէտ
Ծածկէ զերկիր, զիս Անքիսեայ ծնողիս պատկեր խռժռադէմ
Ահաբեկէ ի տեսլեան, զիս և մանուկն Ասկանիոս,

Եւ զորկումն անիրաւ սիրեցելոյ պսակազատի,
Ում խափանեմ ժառանգել զՆերկորնեայց արքայութիւն
Եւ զերկիր ճակատագրեալ. արդ և թարգմանըն դից առ իս
Յըղեալ նոյն ինքն ի Դիոսէ (երդնում ի գլուխ երկաքանչիւր)
Ած ընդ թեթև օդս ինձ պատգամ. տեսի յայտնի՝ զի մըտանէր
Լուսափայլ ընդ պարիսպս, և զդիցական լըւայ բարբառ:
Արդ դադարեա, և մի ըզսիրտ իմ ընդ քոյումըդ խըռովեր
Գանգատանօք. ոչ կամակար մեկնիմ գընալ յԻտալիա:
Այլ ի խօսելըն զայսոսիկ՝ խեթիւ ի նա հայէր դըշխոյն,
Այսր և անդըր զաչըս իւր շըրջշըրջելով, և անբարբառ
Դէտ ի զընին բոլոր անձինն՝ այսպէս ապա խօսի ցասմամբ.
Ոչ դիցուհւոյ ըզքեզ երկնեալ մօր, ոչ Դարդան քեզ նախահայր,
Այլ սոսկալըոյն Կովկասու յապառաժից ըզքեզ վիժեալ,
Իցեն վագերք վըրկանիկք եղեալ դայեակ քեզ, ո՜ դրուժան:
Զի՞ թանգուցեմ, իմ այլ իմիք չարագունի սպասեալ մընամ.
Հեծեա՞ց երբեք ընդ ողըբս մեր, դարձո՞յց երբեք զաչս ի մեզ.
Ողորմեցա՞ւ ի տարփաւորն, արկ արտասուս սիրայորդոր:
Զո՞ր ինչ քան զո՞ր նախ ասացից, և ոչ արհին արդ Օդոյի,
Ոչ յայսոսիկ և սատուրնեանն իսկ հայր հայի արդար աչօք.
Ձիք իսկ և չիք հաւատ անքոյթ. զանկեալ լըքեալն ի ծովեզր
Ընկալայ անխորհուրդ հաղորդ իմուս արքայութեան,
Ըզնաւատորմըն կորուսեալ և զուղեկիցսըն կեցուցի:
Վառի զայրոյթ յիս, եղո՜ւկ, արդ և հարցուկն Ապոլոնի,
Լիկիականն իսկ արդ գուշակ, արդ աստուածոց եւս թարգման,
Յըղեալ նոյն ինքն ի Դիոսէ, դըժնեայ ընդ օդս ածէ պատգամ.
Իբր այն թէ դից անկ այսպիսեաց իցեն խընամք, հոգ ըզնոցին
Խաղաղաւէտ աղմըկէ կեանս: Ոչ արգելում ըզքեզ, և ոչ
Ըզբազըբաղայս քո հերքեմ. երթ դու գընա յԻտալիա
Ի շունչ հողմոց, խաղա ընդ ծով արքայութեան դու ի խընդիր.
Այլ յուսացեալ եմ ո՛ն և ո՛ն, զի վըէժխընդիրք թէ զօրեն դիք,
Տացես պատիժ ի մէջ ժայռից՝ յեղյեղելով զանուն Դիդեայ.
Ըզհետ մըտից նըսեմ բոցովք քեզ ի բացեաստ, կացից առ քեզ՝
Մերձ ամենայն ուրեք ուրու, ի լուծանել անդ ցուրտ մահուն
Ըզհոգի ի մարմնոյս, լուծցես վրէժ ո՛վ անօրէն.
Հասցէ համբաւն առ իս, լըւայց զայն ի դըժոխս անդընդախորս:
Եւ ասացեալ զայս, լուռ տխուր խոյս ի լուսոյ ետ ի բաց
Անտես եղև, թողեալ ըզնա մինչ առ ահի յամէր ասել
Բազում ինչ, մինչ բազում ինչ դեռ հանդերձէր բարբառել:
Դիմեն նաժիշտք, և բարձեալ ըզնըւաղեալն՝ ի մարմարեայն
Ածեն ըզնա ի սրըսկապան, և յանկողինս հանգուցանեն:



Իսկ բարեգութն Էնէաս, թէպէտ ցանկայր ցածուցանել
Ողոքանօք ըզվըշտացեալն, և փարատել ըզդըշխոյին
Ցաւըր թախիծ, հեծէր ըստէպ և թալանայր առ յոյժ սիրոյն,
Այլ հրամանաց դիցն ի լըրումն ի նաւատորմըն դարձ արար:
Ճեպին ի գործ տեւկրեանք, ձըգեն ըզբարձրակող նաւս ի փախուստ
Շուրջանակի ի ծովափանց. լեղին ձիւթեալ ողնափայտք,
Սաղարթունս ածեն թիակս, և յանտառաց կաղնի անտաշ.
Եւ ահա չու առնեն՝ խուժեալ համայն ուստեք ի քաղաքէն.
Որպէս մըրջիւնք յորժամ աւար առնուն ըզշեղջ մեծ ցորենոյ,
Ամբարել ընդ յարկաւ նախահոգակք ձըմերայնոյ,
Գունդ սեաւ գընայ յանդաստանի՝ տողաբար ընդ արօտ
Բարձեալ զաւարըն բերելով. կէսք ըզյուռթի հատս ի յուսի
Մըղեն տանին, այլք վերջապահ կան ըստիպեն զապաժամանս.
Եռայ վաստակըն ժիրաժիր ընդ արահետն համաբոլոր:
Դու որպիսի՜ կրէիր յայնժամ կիրս ի տեսիլն յայն, ո՛վ Դիդէ,
Փանիո՜ն հառաչէիր ի նըշմարել բարձր ի դղեկէն
Եռացեալ ըզծովեզերբս շուրջ ի բաց, և աղմըկեալ
Ցանդիման աչաց ըզծով ի խառնաձայն աղաղակէ:
Ո՛վ սէր անգութ, յո՞ր ինչ ըզսիրտ մահկանացուի ոչ ըստիպես.
Ըստիպի դարձեալ յարտասուս ապաստանել, դարձեալ ի փորձ
Աշաչանաց խոնարհել, նուաճել ըզսէր աղերսանօք:
Ոչ ինչ թողթու նա անփորձ՝ չև զանձն ի մահ մատնեալ ի զուր:
Դու տեսանես, քոյր իմ Աննա, շուրջանակի ի ծովափունս
Ըզճեպ չըւոյդ. ամենուստ աստ դիմեալ գան ի մի վայր,
Հրաւէր հողմոց տայ առագաստ, դընէ պըսակըս նաւաստին
Զըւարթ ի խելըս նաւաց. եթէ մարթէր ինձ կասկածել
Ըզվիշտ այսքան, կարէի քոյր իմ համբերել. այլ արդ հիքիս
Ըզմի ինչ զայս արա, Աննա. ի քէն միայն նենգաւորն այն
Ակն ածէր, քեզ ըզգաղտնիս անգամ ըզկիրսըն հաւատայր,
Դու միայն գիտես ըզժամ և ըզհեշտեաւ առ այրըն մուտ.
Ե՛րթ ապա քոյր իմ առ գոռոզ ոսոխն, ասա աղերսաւոր.
Ոչ ես երդուա ի յԱւլիս զանայեցւոց եսու ազին
Ցաւէր Տրովադայ, ոչ նաւատորմ հանի ընդ ծով
Ընդդէմ Պերգամայց, և ոչ զաճիւն ծնողի նորին
Անքիսեայ և զըստուերսըն պղծեցի ի գամբանէ.
Ընդէ՞ր ի խիստ լըսելիս չըտայ բանից իմոց տեղի.
Յո՞ ճեպի, տացէ հիքիս տարփաւորի յետին շընորհ.
Մնասցէ դիւրին փախըստեան, և շընչելոյ յաջող հողմոց.
Ոչ ես հայցեմ ըզնախընծայս՝ որոց դըրժեացն՝ ըզհարսանիս,
Ոչ հրաժարել ի գեղանւոյն Լատինէ, և ոչ մերժել

Զարքայութիւն. սուղ ինչ տացէ ինձ ժամանակ, տացէ պարապ
Ամոքելոյ զաւիւն սիրոյ, մինչև պարտեալ իմ ի բախտէ՝
Ընդելացայց աղիտիս. զայս ի վերջին խնդրեմ շնորհ.
Խնայեա ի քոյր քո ի յիս. և եթէ զայս ևեթ շնորհէ,
Լիապարգև ընդ մահուամբ իմով ի բաց արձակեցից:
    Զայսոսիկ աղերս էարկ, և զայսոսիկ քոյրն եղկելի
Կրկնէր և յեղյեղէր եղերս ի յունկն Ենէասայ.
Այլ նա անողոք՝ ոչ ի յողբոց անտի շարժէր,
Եւ ոչ բանից ունկըն դնէր. ընդդէմ ունին ճակատագիրք,
Ըզհեշտալուրսըն լսելիս առնըն խընուն աստուածք ի սպառ.
Որպէս յորժամ ըզհաստարմատ զառամ կաղնի հողմք հիւսիսոյ
Ալպեանք աստի և անտի, ի հակառակ մրտեալ միմեանց՝
Մըրցին ի խլել բըռնաշունչ, գնայ ճարճատիւն, բունն ի յարմանց
Տատանի, և ծածկեն զերկիր սաղարթք շուրջ համասփիւռ.
Ամրակառոյց ինքն ի ժայռըս կանգնաղեալ կայ խորարմատ,
Որչափ ընդ օդըս գագաթամբըն բարձրաբերձ ամբառնայ:
Ոչ այլազգ բազմեր դիւցազն աստի անտի ի լուր ձայնից
Անլըռելի, և ի սըրտի իւրում մեծի կըրէր տագնապ.
Այլ անսասան միտքըն կային. ի զուր արտօսր հոսէին աչքն:
    Ի սաստէ ճակատագրին սըրտաբեկեալ յայնժամ Դիդէ
Խընդրէր ըզմահ եղկելին. ձառն էր նըմա հայել յերկինս.
Եւ ի լըրումն առաջարկեալ գործոյն և ևս ի հրապոյր
Թողլոյ զարև, ի դնել զընծայս ի խընկանոցեր անդր ի բագինս,
Սոսկումն է ինձ ի պատմել, սևս զաւիշըն սըրբազան
Շըրջեալ ի թոյխ, և զանապակն հեղեալ յարիւն զազրատեսիլ.
Այլ ոչ ումեք ըզտեսիլըն յայտնեաց, և ոչ քեռ իւրում:
Էր առաւելին դարձեալ կըճեայ առնըն նախնոյ մեհենեակ,
Զոր ըսպասուք երևելեօք պաշտէր դըշխոյն, սաղարթազարդ
Յօրինեալ զայն տօնաբար, և ձիւնափայլ աստւեօք պատեալ,
Անտի նըմա թըւէր լսել զառնըն բարբառ՝ զի զնա կոչէր,
Յորժամ գիշեր մըթին պատէ զերկիր, և բու բարձր ի տանիս
Յեղյեղէ մենաւոր երկարաձիգ ողբ չարագոյժ:
Յոգունք և ևս առաջնոց ըզձից պատգամք նախապատումք
Ազդմամբք զարհուրելեօք սոսկումն ի նա արկանէին.
Ինքն իսկ անգութ Ենէաս ըզմոլեգնեալըն տագնապէր
Ի տեսլեան. թըւէր նըմա լըքեալ թողեալ միշտ միայնակ,
Միշտ ընդ երկայն ճանապարհ թըւէր նըմա գընալ անոք
Ի խընդիր տիւրացւոց թափառական յանապատի.
Որպէս Պանթէ մոլեգնեալ տեսանէ զգունդ վըշկապարեաց,
Արև երկուորեակ, և կըրկնակի ըզԹեբէ.



Կամ Օվրեստ ագամեմնեան հալածական ի թատեր,
Մինչ ըզնա մայրն ըսպառազէն ջահիւք և թոյխ վարէ օձիւք,
Եւ վրէժխնդիրք առ սեմովք բազմին ի պահ վըշկապարիք:
    Արդ ի վըշտաց պարտեալ դըշխոյն և ի ժանտից անտի հարեալ,
Եդ ի մըտի մեռանել, խորհէր ևեթ յերբըն և ի կերպ.
Ապա առ քոյր իւր տըխուր խօսի այսպէս, ծածկեալ ի դէմս
Որ ինչ խորհէրն ի սըրտի՝ զըւարթ յուսով՝ի ճակատուն.
Գըտի ով քոյր իմ ըզհընարս, ուրախակից լեր ընդ իս,
Որ կամ ըզնա տացեն ինձ, կամ ի նմանէ արձակեսցեն
Ըզտարփացեալըս զիս ի սպառ. մերձ ի սպառուած Ովկիանու
Է յարևմուտըս վայր ի ծայր Եթովպիոյ, ուր մեծն Ատլաս
Շըրջէ ուսով զառանցս երկնի բոցանըշոյլ աստեղըք յեռեալ.
Անտի առ իս մասիլական ազին յայտնեալ քըրմուհի
Երեկորնեայց մեհենին ըսպասաւոր, և կերակրիչ
Վիշապին, պահապան սըրբազանից ոստոց ծառոյն,
Մեղըր ծորուն և քընէած նըմա կակաչ ջամբելով.
Սա խոստանայ սփոփել ըզսիրտ՝ զորոց կամի, հոգըս դըժնեայս
Այլոց ի սիրտ արկանել. ուղխից գետոց տալ զկալ առնուլ,
Շըրջէ զընթացս աստեղաց, ձայն տայ ուրուաց գիշերայնոց.
Լըւիցես դու ընդ ոտիւք ըզմըռընչել երկրի, տեսցես
Զէջս որնեաց ի լերանց. երդուեալ ի գլխ, քոյր սիրելի,
Երդուեալ ի քեզ, և ի քոյին երդուեալ ի գլուխդ ցանկալի,
Պարտ է ինձ ակամայ գիմել ի հնարըս մոգականս.
Դու լըռելեայն խարոյկ ի խորս անդ արքունեացըս կանգնեսջիր
Ի բացի. և զոր եթող եղեռնաւորն ի կախ զըրմովք
Ասպազէնս յառագաստին, և զամենայն ձորձըս նորա,
Եւ զանկողին հարսանեկան՝ որով կորեայ, դիր ի վերայ.
Զի զժանտաժուտ առնըն զաւանդս ոչնչոյն ընաջինջ ասէ առնել
Եւ հրամայէ քըրմուհին: Զայս ասացեալ և լուռ եկաց,
Գունատեալ զոյգ ընդ բանիցըն դէմք նորա մեռելատիպ.
Իսկ Աննայի ոչ ուշ ի կուրծս անկեալ՝ զի քոյր իւր ծածկէր
Ընդ սըրբովք նորանըշան այնու սպասիւք ըզմահ անձին,
Եւ ոչ զայրոյթ ի նմա այնքան կասկածելով դըժնէագոյն
Քան ի մահուն Սիքէի, ըզհրամայեալըն կատարէ:
    Իբրև խարոյկն աճագին եդաւ ի խորս անդ արքունեաց
Ընդ երկնաւ ի հատելոց կազմեալ աղոցեաց և ի մախեաց,
Եւ ըզնովաւ դըշխոյն դրասանգըս ծաղկեղէնըս շուրջ ածել,
Պըսակել ըզտեղըն եղերական սաղարթուք,
Եւ ըզձորձ և ըզսուսեր, թողեալս յԵնեայ, և ըզպատկեր,
Ոչ ինչ անգէտ ապառնոյն, զառագաստիւըն զետեղել:

Ղան բագինք շուրջանակի, և քրմուհին անդ հերարձակ
Կարդայ ի ձայն զերեքարիւր դիս, զԷրեբոս և զՔաւոս,
Զեռանունըն Եկատէ և զերեքկին դէմըս կուսին
Արտեմեայ, սրսկեալ ըզկեղծ աւերնական աղբերն ալիս:
Խընդրին հընձեալք ի լուսնակի բոյսք ի մանգաղըս պղընձիս
Ի յարբունըս ժամանեալք, ի ժահըր թուխ կաթնալիցք.
Խընդրի ի ճակատէ նորածնելոյ յովատակի
Քեցեալ ի բաց սէր մայրենի. Ինքըն իսկ ի մահ օրհասական,
Փոխինդ ի ձեռըս գիցանուէրս, լուծեալ ըզհեռկ միոյ յոտից
Հանգուցըն ի ձորձ, կարդայր ըզդիս, կարդայր զլուրոյ ճակատագրին
Գիտակ աստեղս, և որ արդար ոք յաստուածոց թէ գոյր տեառէ
Եւ վրէժխընդիր դըրժողաց սիրոյ՝ և զնա յայնժամ կարդայ:
Էր գիշեր, և ընդ համայն երկիր մարմինք վաստակաբեկք
Կային ըննալք քաղցր ի քուն, հանգչէին մայրք և ծով ցասկոտ.
Աստեղք ընդ կէս ասպարիզին սահեալ գնային, լռէին
Դաշտավայրք առ հասարակ, խաշն և նախիր, հաւք նըկարէնք,
Եւ որք ի լճըս հոսանուտըս շուրջ բնակեն, որք յագարակ
Հոծ ի փուշ դըժընդակ, ըզհօգս ի լուռ գիշերի
Եւ զանդորր ի վաստակոց ըսփոփէին ըզսիրտ ի քուն.
Միայն փիւնիկըն թըշուառ, ոչ անկանէր ի նինջ, և ոչ
Ըզհանգիստ յարտևանունըս կամ ի սիրտ ընդունէր:
Յաճախէին հոգք, զայրանայր վերըստին սէր ընդոստուցեալ,
Եւ յուզէր ցասմամբ մեծաւ այսպէս յանձին յեղյեղելով.
Զի՞նչ գործեցից, առ տարփածուս իմ առաջինս արարից դարձ՝
Ծաղր կալ. ըզՆումիդացւոց աղերսեցից ըզհարսանիս,
Զորս ի բազում նըւագս ի բաց արհամարհեալ մերժեցի.
Յիլիակա՞նս անկայց ի նաւս, ըզտեկրացւոց աղախնօրէն
Լընուլ հրամանս: Օգնեցեն հիւրընկալքս ինձ աներկբայ,
Փաղջ առ նոսա կայցէ շնորհաց՝ զոր ընկալանըն՝ յիշատակ.
Սակայն թէպէտ և կամք իցեն երթալ ըզհետ, ներեսցե՞ն զայն.
Ընկալցի՞ն ըզծանակեալս ի նաւատորմ անդր ի գոռոզ.
Ո՞չ գիտիցես եղուկ դու, չե՞ւ ըզդըրժանս ի միտ առնուս
Լաւոմեդեան ազին, և զի՞նչ այնուհետև իցէ առնել:
Երթա՞լ զըահետ մենաւոր ընդ նաւաստւոյն յաղթականի,
Թէ տիւրացւովք և քոյովքդ ամենեքումբք վանել զօրօք
Ըզնոսա, և զորս հազիւ ձըգեալ հանէր ի Սիդոնէ,
Վարեսցե՞ս անդրէն ընդ ծով, և զառագաստըս տալ հողմոյ
Հրամայեսցես. նա աւանիկ մեռիր մահու դու արժանիդ,
Եւ լոյծ ըզվիշտըս քո սուսերբ: Դու յարտասուաց իմոց պարտեալ,
Քոյր իմ, դու նախ զանըզգայեալս արկեր յաղէտըս դըժընդակս,



Եւ մատնեցեր զիս թըշնամւոյն. չէ՞ր իսկ արժան անմեղապարտ
Անփորձ հարսանեաց կեալ երէոյ հանգունաստիպ,
Բան զայսպիսի կըրել աղէտ՝ հաւատադրուժ յաճիւն Սիքեայ:
Զայսոսիկ կեղերջական ողբըս հեղոյր նա ի սըրտէ:
Բայց Ենէաս անշարժ ի մտաց ի բարձր ի խելս անդ կայր ի քուն,
Կազմ և պատրաստ վաղ ի չու, և ահա նոյն այն դիցական
Դարձեալ պատկեր ի տեսլեան նովին դիմօք յայտնէր նըմա,
Ամենևին հանգոյն Հերմեայ ի ձայն ի գոյն ի գէս խարտեաշ,
Վայելուչըս բերելով անդամս ի տիպ պատանեկան,
Եւ այսպէս միւսանգամ թըւէր ըզնա յանդիմանել.
Աստուածորդիդ Աստղիկան, ի՞բր յայսպիսում պահու նընջես.
Ո՞չ տեսանես, շամբուշ արանց, որ ի վերայ կայ քեզ վըտանգ.
Ո՞չ լըսես շընչելոյ արևմըտից աջողակաց.
Ահա Դիդէ յաշըս եդեալ ըզմահ, երկնէ նենգ ի սըրտի
Եւ դառն ոճիր՝ ալեկոծեալ ի պէսպէս ծուփըս զայրանաց.
Հի՞մ ոչ աստի խուսես ի բաց, մինչդեռ քեզ կար է հապճեպոյ:
Վաղ ի ձաղկից յուզեալ ըզծով և զթուխ ջահից տեսցես փայլիւն,
Ըզծովափանց տեսցես դու վաղ ըզխիտ բոցովք եռալ,
Եթէ յամեալ ըզքեզ յերկրի աստ տեսցէ այգըն վաղորդեան:
Օն արդ փութա, զի յեղյեղուկ է, զի յոդդոդդ է յաւէրժ կին:
Զայս ասացեալ, աներևոյթ եղև խառնեալ ի թուխ գիշեր:
Իսկ Ենէաս ահաբեկ ի յեղակարծ երևմանէն,
Ընդոստ ի քնոյ սաստէ իւրոցն. Արիք ո՛ արք, փութացարուք,
Անցէք ի տախտըս նըստարուք, և՛ ըսփռեցէք փոյթ զառագաստ.
Աստուածակերպ յերկնից բարձանց իջեալ դարձեալ պատգամաւոր,
Ահա տուիպէ ըզկարկամ խըզել պարանս փախչել հապճեպ:
Գամք սուրբդ ի դից, ըզհետ քո գամք ո՛ և իցես, լըսեմք դարձեալ
Հրամանի քում մըտադիւր, մերձ լեր և հաշտ ընդ մեզ, օգնեա
Եւ տո՛ւր աստեղս աջողակս: Ասաց, և զսուրըն մերկացեալ
Փայլակնաձև ի պատենէն, եհատ ի սուր սայր ըզպարիս.
Նոյն ըզմանկտին առ հասարակ վառէ եռանդն. աճապարեն,
Դիմեն, թողուն ըզծովեզերս, ծածկեն զալիս նաւք, թաւալէ
Փըրփուր նաւազն յեցեալ ի թի, և զկապուտակ ակօսէ ծով:
Ի քըրքմագոյն առագաստէն Տիթոնի այգ լուսանորոգ
Ծագէր յերկիր, տեսանէ յարևածայրըս թագուհին
Ի բարձունէ դիտանոցին ըզնաւատորմըն տարաշնաց
Հողմուռոյց առագաստիւք, և զծովափունս և զնաւակայս
Դատարկացեալ ի նաւորդաց. երիցս յայնժամ և չորիցս
Ըզգեղանի կուրծսըն բախէ, և ըզդեղձան գէասըն խըզեալ,
Գոչէ. Աւա՜ղ, ո՛ Արամազդ, հիւրն այն երթեալ ծաղր արասցէ

Զարքայութեամբըս մերով. Ի՞ր չառնուն զէն քաղաքովին,
Պընդել ըզՀեա, ընդէ՞ր ոչ ճեպ տան լաստք յամէն ի Նաւակայս։
Համպա ածէք բոց, առագաստըս պարզեցէք, թի վարեցէք...
Այլ զի՞նչ խօսիմ, ո՞ւր իսկ կամ, ո՞րպէս ցնորեալ խելայեղիմ.
Քեզ հէք Դիդէ, ա՞յժմ անողորմ ճակատագիր բուռն առնէ զայդ.
Յայնժամ էր անկ, յորժամ տայիր ըզգաւազանդ արքունական.
Ահա քեզ աջն, ահա երդումն հաւատարմին այնորիկ,
Որոյ զԹերափսըն հայրենիս ի միասին ասեն ածեալ,
Զորմէ ըզհայր իւր ծերունի պատմեն ուսով բարձեալ բերեալ։
Ո՞չ կարէի ի բուռն ածել, վատնել յօշյօշ ըզնա ընդ ծով,
Ո՞չ և զընկերըս նորա, ո՞չ և նոյն ինքըն զԱսկանի
Սրախողխող ի հայրենին պաշտել խորտիկ ի սեղան. —
Այլ ի յերկբայս լինէին ելք պատերազմին. —
Պատրաստ ի մահ՝ յումմէ՞ երբեք երկընչէի. դիմեալ ջահիւք
Ի բանակետըղ՝ լընուի բոցովք ըզնաւս, և ազգովին
Զորդի և զհայր շիջուցեալ՝ զանձն ի վերայ նոցին տայի։
Ակն արեւու՝ որ ես ընաւից էից լուսովըդ դիտող,
Եւ դու Հերա, հարսանեկան հոգոց գիտօղ և յանձանձիչ,
Եւ որ ի կիցս ուղեաց ճըչիւք գիշերախառըն կարդացեալ
Եկատէ, և ժանտաժուտքըդ դըժոխոց վըրէժխընդիրք,
Եւ դուք աստուածք Ելիսայ՝ որ առ դըրունըս կայ մահու,
Ընկալարուք զայսոսիկ, և դարձուցէք ըզշպրոյթ ձեր
Յարժանաւորըն պատուհոց՝ պաղատանաց մերոց ի լուր.
Թէ հարկ լիցէ առնըն ժանտի ի Նաւակայս հասանել
Կոխել ի ցամաք՝ այսպէս վըճռեալ յԱրամազդայ,
Այս սահմանեալ կատարած, նեղեսցէ ազգ ըզնա հըզօր
Ի պատերազմ և ի զէն, և տարագիր ի հայրենեաց
Ի գըգուանաց Յուլեայ զըրկեալ՝ պաղատեսցի օգնութիւն,
Եւ զեւրայոցն ըզդըժընդակ տեսցէ մահունս. յանձն իսկ առեալ
Ըզպայմանս անողորմ խաղաղութեան, մի՛ զպետութիւն
Մի՛ զըղձալի լիցի նըմա վայելել լոյս, այլ տարաժամ
Անկցի մահուամբ, կացցէ դիակն անթաղ լըքեալ յաւազի.
Զայս մաղթեմ, զայս ընդ արեան հեղում յետին ձեզ պաղատանս։
Եւ դուք տիւրացիք, լերուք որդւոց և ապառնոյ
Բոլոր ազգին թըշնամիք. զայս աճիւնոյ մերում նըւէր
Մատուցէք. մի՛ սէր և մի՛ դաշն ի միջի նոցա կռեսցի.
Ամբարձիր յոսկերոտւոյ աստի մերմէ վըրէժխընդիր,
Հալածել ի հուր ի սուր զգաղթականըն դարդանեան.
Այժմ և յապայս և յամենայն ժամանակի զափունս ափանց
Զալիս ալեաց, զէնըս զինուց հակառակորդըս պաղատիմ.



Պատերազմ և թոռունք տացեն յաւէրժ ընդդէմ միմեանց։
Զայս ասացեալ, այսըր և անդր ըզմիտըս իւր հէքն հարկանէր,
Խընդրելով վաղագոյն հերքել զարեւըն դըժպըհի.
Հակիրճ յայնժամ առ Պարկէ դայեակ Սիքեայ առնէ աշերս,
Զի զիւրըն սեաւ ի հայրենիս իւր ի նախնիս ծածկէր փոշի.
Կոչեա դայեակըդ սիրելի զԱննա ըզքոյր իմ առ իս,
Ասա ցօղել վաղ զանձն ի ջուր գետոյ, ածել ըզխաշն ընդ իւր,
Եւ զըսպասս օրինաւորըս քաւութեան առնուլ և գալ.
Դու զըրբրազանն ած ի ճակատ ըզմանեակ, զի կատարել
Կամք են ինձ զոր ըստիւգեանըն Դիոսի սկըսայ նըւէր
Ըստ օրինի պատրաստել, վախճան վըշտաց իմոց առնել,
Եւ տալ բոցոյ ըզդարդանեան զօրավարին փայտակոյտ։
Զոյդ ընդ բանին ըստիպաւ երագէ զքայլ պառաւն անզօր.
Յայնժամ Դիդէ կայր ի խորհուրդըս ոսկալիս յափըշտակեալ,
Աչքն ի կապիճս արիւնըռուշտք թաւալէին, նիշք ի դողդոջ
Այտսըն սըփռեալ, դէմք տըժգունեալ առ մօտալուտ հասեալ մահուն.
Դիմէ ի ներքսակողմն ապարանիցըն մըլեգին,
Յառնէ ի բարձրըն փայտակոյտ, և զդարդանեանըն մերկանայ
Ըզսուսեր՝ ոչ առ ի պէտս ինչ այնպիսիս խընդրեալ նըւէր.
Եւ ակնարկեալ յիլիական ձորձս, ի ծանօթն առագաստ,
Հեղու արտասուս, և յամեալ սուղ ինչ մըտայոյզ,
Յանկողինս անդր անկանի յօդեալ յետին զայս բարբառ.
Ո՛վ նըշխարք ցանկալիք ցորչափ ներէր ճակատագիր,
Եւ ցորչափ դիք ներէին, առէք զոգի իմ զայս, լուծէք
Զիս ի հոգոց. կեցի ցարդ, և զոր տըւեալ էր ինձ բախտին
Ըզկենաց ասպարէզ կատարեցի. իջցէ արդ ծն
Ընդ երկրաւ ըստուերակերպ տիպ հոյակապըս պատկերի,
Մեծակառոյց հիմնարկեցի քաղաք, տեսի ըզպարիսպս իմ.
Խընդրեցի զառն ըզվըրէժ, ի թըշնամւոյ առի ըզքէն
Յեղըօրէ. ո՜հ երջանիկ էի և յոյժ իսկ երջանիկ,
Եթէ ոչ կայմք դարդանացիք ի ծովեզր այսըր մատչէին։
Ասաց, և զդէմս ի յառագաստն արկեալ՝ Մեռցուք, ասէ, անվրէժ..
Այո՛ մեռցուք, այո՛ ի ստուերս անդր իջանել բարւոք է մեզ.
Տեսցէ ըզբոցն ի ծովէ դարդանացին անագորոյն
Եւ ըզմահուն մերոյ տարցի ըզչարագոյժ հըմայս ընդ իւր։
Զոյդ ընդ բանին տեսին նաժիշտքն ըզնա անկեալ ըզսուսերաւ,
Տեսին զերկաթն ի փըրփրախառն արիւն ողող, տեսին ըզձեռս
Արիւնաներկ. աղաղակ գընայ ընդ խորըս դահլըճին,
Մոլի համբաւ ընդ քաղաքըն դըղըրդեալ, մըռընչէին
Ի ճիչ կանացի և ի հառաչ արքունիք.

Հընչէին այերք ի ձայն աղիողորմ աշխարանաց ,
Որպէս այն թէ Կարքեդոն կամ վաղեմին ողջոյն Տիւրոս
Աւերեացաւեր կործանէր անկեալ ի ձեռըս թշնամեաց ,
Եւ բոցք մոլեալ ընդ յարկըս դից և ընդ մարդկան ծաւալէին:
Լըւաւ զայն քոյրն , և սըրտաթունդ աճապեկեալ ոգեսպառ
Դիմէ ի մէջ ըշտապաւ , ղընգամբք ըզդէմսըն ցըտելով ,
Բըռամբք ըզկուրծսըն կոծելով , և յանուանէ ըզնա կարդայ
Որ կայրն աճա ի մեռանել , և գոչէ . Քոյր իմ այս իցէ ,
Զոր ընդ խաբըս խընդրէիր յինէն , զայս հուրն և փայտակոյտ
Պատրաստէին ինձ և բագինք . զոր նախ լըքեալս արկից բողոք .
Անարժան համարեցար զիս մահակից գոլոյ ընդ քեզ .
Ընդէր ի նոյն ճակատագիր չետուր ինձ ձայն , զի նոյն մի ժամ ,
Նոյն մի աղէտ և սուսեր նոյն զըաւէր ըզմեզ երկաքանչիւր .
Առ այս իմովըս ձեռամբ ըզփայտակոյտըդ կանգնեցի ,
Ըզհայրենիս կարդալով դիս , զի դու այդպէս անկեալ դնիցիս ,
Եւ ես անգութ անկարեկիր կայցից ի քէն զուրկ ի բացեայ .
Շիջուցեր քոյր իմ ընդ քեզ և զիս և զազգդ ի միասին ,
Եւ ըզհարըս Սիդոնի և զգաստակերտ քո կորուսեր:
Թողէք ըզվէրսըն լըւանալ ինձ կայլակօք , և ժողովել
Շըրթամբք ըզշունչըն նըշխարեալ , զոր թէ ընչէ . . .
Զայս ասելով բարձր ի վեր ընդ աստիճանսըն ելանէր ,
Եւ զկիսամեռ քոյրն ընկալեալ ի գիրկըս իւր հեծեծանօք
Ոգջագուրէր , և քըղանցիւք ըզթուխ արիւնըն ջընջէր:
Իսկ նա զաչկունսըն ծըգնեալ ըզծանրացեալս ի վեր առնուլ ,
Նուաղի անգրէն , խոց ըզսըրտիւըն կարեվէր հըռընչելով .
Երիցս ի վեր կանգնի ի նիստ յեց ի յարմուկն , երիցս անդրէն
Գըլըրեալ ի բարձն անկանի . զաչս ընդ երկինս յածեալ ի վեր
Խընդրէ ըզլոյս , և յառկայծել աչացն ի լոյս յոգւոց հանէ:
Ամենազօրն յայնժամ Հերա խնայեալ ի ձիգ վիշտն և ի մահ
Տաժանաւոր , առաքէ ի Դիւցընկէց բարձանց զԻրիս ,
Լուծանել ի մարմնոյն զընդդիմամարտ հոգւոյն ըզզօդ .
Զի չև օրհաս իւր ժամանեալ անպարտակիր պատուհասիւ
Տարաժամ կորընչէր՝ վառեալ յանկարծ հէքն ի զայրոյթ ,
Զև ըզդեղձան գէս գագաթանն ի բաց հատեալ Պերսեփոնեայ ,
Զև ի ստիգեանըն տակաւին ըզնա ի վիհ դատապարտեալ:
Հանպաւիրիս ցօղալեր սլացեալ ի թևըս քըրքմագոյնս
Ընդ երկին , և բազմերփեան առեալ երանգս հանդիպակայ
Ի յարփւոյն , հասանէ ըզգագաթամբ կայ դըշխոյին ,
Եւ զհերս աջովըն փըքըեալ՝ նուիրել , ասէ , զայս Պլուտոնի
Գամ պատուիրակ , և ի մարմնոյ զքեզ լուծանել: Եւ ընդ բանին
Սահեալ տապոյն՝ ըսպառըսպուռ , չունչըն անդի առ ի յայերս :

# ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵՍՅ ՄԱՐՈՆԻ

# ԵՆԷԱԿԱՆԻՆ

## ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ենէաս 'ի նաւարկելն 'ի Լիբիոյ յիտալիա՝ վարի 'ի մրրկաց 'ի Սիկիլիա. և հիւրընկալեալ անդ յԱկեստեայ տրովացւոյ, զտարեկան մահու հօր իւրոյ՝ որ հերուն հետէ անդ վախճանեալն էր՝ տօնախմբէ, խաղս չորեքկին 'ի հանդէս ածեալ, զնաւարշաւս, զհետի ընթացս, զըռնամարտ և զնետաձիգ մրցութիւնս. յորս յաւելու Ասկանիոս և զձիընթացս: Յայնմ վայրի կանայք տրովացիք, տաղտկացեալք 'ի բազում երկայն նաւարկութենէ, սադրանօք Հերայ հուր հարկանեն զնաւաց. չորք 'ի նոցանէ այրին, այլոցն ապրեալ՝ տեղալով Արամազդայ անձրեւս: Խրատ տայ Ենեայ Նաւտէս՝ առնուլ ընդ իւր զընտիր մանկունս, թողեալ զծերս և զկանայս 'ի Սիկիլիա. զնոյն և Անքիսէս հաստատէ 'ի տեսլեան, և յաւելու տալ նմա խրատ, զի 'ի ժամանելն յիտալիա՝ երթիցէ առ Սիբիլլայն, և առաջնորդեալ 'ի նմանէ՝ իջցէ 'ի սանդարամետս, ուր յայտնեսցին նմա սերունդք և դէպք զաւակի նորա: Լսէ Ենէաս խրատուց հօրն. և կառուցեալ 'ի Սիկիլիա զԱկեստէ քաղաք, և Աստղկան հաշտ առնելով ընդ նմա զՊիսիդոն, նաւարկէ յիտալիա: Ի ճանապարհի անդ Պալինուր ղեկավար նաւուն 'ի քուն լեալ, յափըշտակի յալեաց:

# ԵՆԷԱԿԱՆ

## ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Բայց Ենէաս նաւատորմաւըն ծովամուխ խաղայր անքոյթ,
Հողմով հիւսիսակաւ ըզկապուտակ հերձեալ ալիս:
Ակն ի պարիսպս յայնժամ արկեալ, տեսանէր զայնըս լուսափայլ
Բոցով հէքին Եղիսայ. զանխուլ հրատին մեծի վառման
Ելին պատճառք. այլ ընդ դըրժանս անձուկ սիրոյն վիշտ դըժընդակ,
Եւ կանացի ըռըմըտութեան ցօր վայր է կար՝ ոչ անծանօթ,
Գուշակութիւն չարագոյժ ազդէն ի սիրտըս տեկրացւոց:
Այն ինչ հասին կայմք ի յանդունդս, և չերևէր ուրեք երկիր,
Այլ շուրջ երկինք, շուրջ ալիք, եկաց ի վեր ամպ կապուտակ
Ածեալ գիշեր և մըրրիկ, ահ խաւարաւն արկանէր ծով.
Բարձր ի խելաց ղեկավարըն Պալինուր գոչէ. Աւաղ,
Քանի ամպրոպք պատեն զերկին, զի՞նչ մեզ արկած Հայրըդ Պիսիդ
Ըսպառնաս: Զայս ասացեալ՝ առնուլ սարիս հրամայէ,
Եւ ճիգն ուժգին գործել ի թի. շեղէ զթևոց ի հողմն ըզծոց,
Եւ ձայնարկէ. Մեծդ Ենէաս, ամենակալն իսկ Արամազդ
Եթէ ինձ խոստանայր երկնաւս այսուիկ յիտալիա
Ժամանել, ոչ յուսայի. քանզի հողմք յեղաշըրջեալ՝
Ի նըսեմ երեկոյէ խոտորնակի մըռընչեն.
Թանձրանան այերք ի յամպ, չեմք բաւական ի դիմամարտ,
Եւ ոչ ի գնալ յառաջադէմ. անյաղթելոյ բախտին ըզհետ
Ուր կոչէ զմեզ՝ երթիցուք, դարձուսցուք ըզդէմ ուղւոյս.
Զեն ինչ հեռի հաւատարիմքն ափունք եղբօր քո Երիքսի՝
Որպէս կարծեմ, և սիկանեանքըն նաւակայք՝ թէ քաջ յիշեմ,
Ըզչափ և ըզդիրս արփից զըննեալ յառաջագոյն:
Ում երկիւղածն Ենէաս. Վաղ իսկ թըւին հողմք հարկ առնել

Մեզ շայդ, ի զուր ճըգնիս ընդդէմ, դարձո ըզԹեւս առագաստից.
Ի՞նչ ինձ վայր հաճոյագոյն՝ ուր ըզխոնջեալըս նաւատորմ
Պատըսպարել կամիցիմ, քան ուր Ակեստ կեայ դարդանիկ.
Քան որ ըզհօրն Անքիսեայ զոսկերս ի ծոց իւր պահպանէ:
Զայս ասացեալ՝ ի նաւակայս անդըր դիմեն. շընչեն աջող
Ի յառագաստըս զեփիւռք, սահին երագ նաւք ընդ յորձանս,
Եւ ի ծանօԹըն ցամաք յետոյ ապա մատչին զըւարԹք:
Բայց Ակեստէս բարձր ի ծայրէ լերին տեսեալ ըզհամազգեաց
Գալուստ լաստից, ըմբէացուլ ինքն արջիննաւ ել ընդ առաջ,
Ի տէգընկէցըս սոսկալի. ըզսա ծընաւ մայր տրովուհի
Ի Կրիմիսեայ երկնեալ գետոյ. որ անմոռաց հաւուց նախնեաց՝
Եղեալ ընդ դարձ նոցա ոլջամբ ուրախակից, հիւրընկալէ
ԶըւարԹագին ըզնոսա ըստ գեղջկայինըն ճոխուԹեան,
Եւ կազդուրէ ըզտաժանեալըն մարդասէր առատուԹեամբ:
Ա՛ն ինչ պայծառ տիւ վաղորդեան անդէն ընդ ելըս իւր վարէր
Հալածական յերկնից զաստեղս, Ենեայ զընկերսըն կոչեցեալ
Շուրջ ի յափանց ի ժողով ի հողակոյտ բեմէ ճառէ.
Դարդանացիք վեհք, ի վեհից սերեալք ի դից յարենէ.
Տարւոյ լիովք արդ ամսովք լըանայ ոլորտ՝ յորմէհետէ
Ըզդիւցազնն ի յերկիր զոսկերըս հօր ամփոփեցաք,
Բագինըս դից կանգնեալ տըխուրս, եԹէ ոչ զօրն իսկ սըխալեմ,
Օրն այն մերձ պատահէ, որ ինձ միշտ դառն ի յիշատակ,
Եւ միշտ պաշտելի, զի այսպէս կամք եղեն ձեզ դիք:
ԵԹէ ի խորուստ իսկ գետուլեանս այս օր նըժդեհ գըտանէի,
Կամ ալէծուփ յարգոլեան ծով, կամ ի քաղաքըն միկենեան,
Սակայն շըքով ըզտարեկանս և ըզհանդէս եղերական
Կատարէի ըստ օրինի, ածեալ ըմբոն ձօնս ի բագինս.
Իսկ այժմ ինքնեկ կամք առ ոսկերս և առ աճիւնս հայրենի
Ոչ անհրաման ի դից, և ոչ՝ որպէս կարծեմ՝ առանց խնամոց
Նոցին հասեալք հողմավար այսր ի նաւակայս ասպընջականս:
Համայն եկայք մատուսցուք ի միասին ըսպաս զըւարԹ,
Հողմ ի նմանէ աղերսելով, և զի տացէ ամի ամի
Ինձ ի կանգնելըն քաղաք՝ ըզօրըրուԹիւնըս զայսոսիկ
Ի մեհեանս նըմին ինքեան նըւիրականըս կատարել:
Ձեզ տրովացին Ակեստէս տայ զոյգ եզին առ մէն մի նաւ.
Տուք ԹերափոցըդՀայրենեաց հրաւէր ի ճաշ, տուք և նոցին՝
Որոց ըսպաս ինքն հիւրընկալ մեր Ակեստէս մատուցանէ.
Եւ եԹէ այդն իններեակ ածէ պայծառ տիւ մահացուաց,
Ճաճանչագեղ ըզախեզերըս վերըստին լուսաւորեալ,
Եդից սեւկրեանց ի հանդէս գերագաԹե նաւաց գուպար.



Որ ի հետի ընԹացս է ժիր, որ ի կորով յանդըգնագոյն,
Որ քաջագոյն ոք յարդընկէց և ի ԹեԹև նետից ի ձիգ,
Որ խիզախէն կարծու փոկով ի բըռնամարտ, յառաջ կացցեն,
Արժանւոյն՝ իւրաքանչիւր ակընկալեալ մըրցանակի.
Բընաւք ուղէշ ածեալ ի գլուխ՝ լերուք շըրԹամբք օժանդակ:
Զայս ասացեալ, մայրենեաւըն մըրտենեաւ պատէ զճակատ.
Ըզնոյն Ելիմ, և ծերունին առնէ Ակեստ, և ըզնոյն
Պատանին Ասկանի. ըզ հետեւի մանկտին բոլոր:
Ինքըն բիւրուք բիւրուց ելեալ ի ժողովոյն, և ի միջի
Բազմախուռն ուղեկցաց ի գերեզման անդըր երԹայ.
Բաժակ կըրկին անապական լի անդ հեղու ըստ օրինի
Ի յերկիր, և ջերմ ի կԹ կաԹին բաժակըս լի երկուս,
Եւ այլ կըրկին արեամբ սըրբով լի. և կարմիր ըփռեալ ծաղկունս,
Զայսօրինակ բարբառի. Ողջոյն ընդ քեզ Հայր սուրբ, և քեզ
Աճիւնդ ի զուր պահպանեալ. ողջոյն և ստուերըդ հայրենի,
Զեղէ ընդ քեզ արժանի խընդրել զերկիր խտալական
Եւ զաւսոնեանըն Տիբերիս, որպիսի ոք և իցէ նա:
Եւ ընդ բանին ի խորոց շիրմին ըսպիրծ օձ մեծ ի դուրս
Զըգէր եօԹնեակ ոլորս ի քարշ, և եօԹներեակ պարոյր ըստուար.
Ըզշիրմաւըն շուրջ պատէր մեղմով ի մէջ բագնաց սահեալ,
Խայտաբըղէտ, նիշք ըզԹիկամբքըն կապուտակք, և փայլ ոսկւոյ
Ի սողոսկէն ածէին Թեփք, որպէս ընդ ամպըս ծիածան
Երանդ երփնունակ ի հանդիպոյ արփւոյն առեալ:
Պակեաւ ընդ այն Ենէաս. նա գալարեալ երկայն ըրտամըն
Ընդ խառնարանս և ընդ ողորկ բաժակս ի սող, և ճաշակեալ
Ըզխորտիկս՝ էջ ի շիրիմն անդրէն ի խոր անվըզենակ,
ԹողեալըզբագինսինըւիրացանտիԹափուր:
Բայց նովին իսկ Ենէաս յորդորագոյն ըզհայրենին՝
Զոր ըսկըսեալըն էր՝ կատարէր ըսպաս, ի կարծ ընդոստուցեալ՝
Զի վայրացըն շահապետ և կամ զի հօրն էր նա սպասեակ:
Զոհէ յայնժամ զառինս հընգեակ ըստ օրինի և հինդ խոզեան,
Զոհէ զուարակըս սեւաստեւս հինդ, և բաժակս հեղու գինւոյ,
Զըստուեր մեծին Անքիսեայ և զարձակեալըն յԱխերոնէ
Զուրու նորին կարդալով. ըզնոյն և իւրքն ածեն յօժարք
Ի բագինս ըստ անձնիւր գոյից նըւէրըս լի:
Զենուն զուարակըս, զետեղեն կարգաւ ըզպանս այլք պըղընձիս.
Եւ ըփռեալք ի գալարուռջ արկանեն անդ ըզփորոտին
Ի խորով, կայծակունըս տարածեալ ընդ շամփրովք:
Հասանէ օրն ակընկալեալ, փայետոնեանն ածէ ձիան
Պայծառ լուսով զայգն իններեակ, և Ակեստեայ անուանւոյն

Կոչէ համբաւ զազգըս դրացիս, ծանկէ զծովափն ամբոխ զըւարթ,
Կէսք ի զընին Ենեանց, և կէսք ի մըրցամարտըս պատրաստեալ։
Դընին ի մէջ ասպարիզին նախ մըրցանակք ակն յանդիման,
Նուիրականք սուրբք և պըսակք դալարք ի վարձ յաղթականաց,
Արմաւենիք և զէնք, և ձորձք ծիրանեփնեալք, կըշիռք ոսկւոյ
Եւ արծաթոյ. փող ի թըմբէ զառաջարկեալըն խաղս ազդէ։
Մըտանեն նախ ի գուպար, հանդէտք ծանումբք թիակօք,
Ի բոլոր նաւատորմէն ընտրեալ քառեակ եղենափայտք.
Զերագաթեւըն Պրիստիս գռ նաւաստեօք վարէ Մնեսթէս,
Մնեսթէս ընդ հուպ իտալացին, յորմէ Մեմմեանցըն սերեալ ազգ։
Գիաս վարէր ըզՔիմեր ըզվիթխարին յաղթ իրանաւ,
Հանգունատիպ քաղաքի, զոր եռակարգ մըղէր մանկտի
Դարդանիկ. համայն երրեակ կարգ թեւճակացն ամբառնային։
Ի բարձրակողըն Զիացուլ բարձեալ Սերգեստ, յորմէ սերգեանն
Նառ կոչումն ազգատոհմ. և Կլովանթոս ի խաժագոյնն
Ի Սկիլլա, յորմէ քոյդ է զրոհ Կլովենտ հռովմայեցի։
Է ի ծովու անդ ի բացեայ ժայռ՝ փըրփրելոց ծովեզերաց
Հանդիպակայ, զոր ուռուցեալ երբեմն ալիք կոծեն ջրասոյզ,
Յորժամ հողմք ձըմեռայինք ծածկեն զաստեղս. այլ յանդորրու
Լըռէ և կայ ցամաքաթեւ յանշարժ ալիս վերըմբերձիկ,
Հողամաղից յարագելոց հաճոյ ի կայս. անդ նըշանակ
Եդ նաւորդաց Հայրն Ենէաս ոստ ըզղօցի սաղարթաւոր,
Զորով զերկայն ընթացս ածեալ շուրջ ի պարոյր, արասցեն դարձ։
Առնուն ըզկայս իւրաքանչիւր ըք վիճակաւ, և ի խելաց
Ոսկւով և ծիրանեաւ ցոլան շըքեղ պետք ի բացեայ.
Կաղամախեայ ուղէշ ի գլուխ ածեալ մանկտին, և իւղաթուրմ
Փայլեալ ի յուս մերկ կայ ի նիստ՝ յեց ի թիակս անդըր բազկօք,
Կալեալ դէտակըն նըշանին առնելոյ ազդ. տրոփէ զընդոստ
Սիրտըն կասկած, և անձկաւէտ իղձ ի յակճիռըս գըրուատեաց։
Ընդ սաստկաձայն գոչել փողոյն՝ հա՛պա դիմեն առհասարակ
Յիւրաքանչիւր տեղւոջէ, և յաղաղակըս նաւորդաց
Հընչէ եթեր. փըրփրեն ալիք յուժեղ բազկաց անտի յուզեալք,
Հանդէտք ի ճիգըն պատառեն ակօս, և ծով ծայրածաւալ
Ի թիակաց և յեռարձէն ցըռկաց հերձեալ ալէկոծի.
Ոչ այնպէս երագաթեւ կառք ի մըրցանըս երկձիոց
Սուրան ընդ դաշտ, և թողեալք յարգելանէն դիմեն ի դուրս.
Ոչ այնպէս կառավարք արձակելով զերկձի յարշաւ՝
Յունգըս սանձից տան ծըփելոց մէտք ի հարուածըս կորովիք.
Յայնժամ անտառն համօրէն հընչէ ի ծափ առ ի խրախոյս,
Ի գոչիւն դըրուատեաց. շուրջ ծովափունք կըրկնեն անդրէն



Ըզբարբառ որերոյ, և բլուրք հարեալք յաղաղակէն՝—
Անդրէն ընդոստ ձայն արձակեն։ Յառաջ քան զայլս անցեալ Գիաս
Սաղապաճեմ զընայ զալեօք ընդ աղաղակն և ընդ ամբոխ.
Որում ըզհետ ճեպի Կլովանթ հըզօրագոյն թիակօք,
Այլ ըստուար եղեւին ըզնա ի գնացըս դանդաղէ։
Ըզհետ նոցա գրաւել ըզվայրն առաջին ճիգըն գործեն
Պրիստիս և Զիացուլ, անջատք հանդէտ խըտրոցաւ.
Մերթ յառաջէ Պրիստիս, և մերթ կանխէ աշեղըն Զիացուլ
Յաղթօղ նըմին, և զուգընթացք մերթ արշաւեն երկաքանչիւր,
Զաղտաղտուկ ալիս երկայն ողնափայտիւքն ակօսելով։
Այն ինչ ի ժայռ անդըր մօտեալք ըզնըպատակն ըմբռնէին,
Նախամարտիկն ահա Գիաս ի յորձանս անդ գուպարայաղթ
Զայնարկեալ առ ղեկավարըն Մենետէս խօսի այսպէս.
Հի՞մ յաջակողմըն խոտորիս այդչափ ի բաց, քերեաց զեզերբ,
Այժըր զընթացս ուղերձեա, հարցին զահեակ վիմաց թիակք,
Այլոց ընդ խորըս թող զընալ։ Սակայն Մենետ, առ երկիւղի
Ծածկելոց խարակաց, շըրջէ զառաջս յալիս ծովուն։
Յո՞ զարտուղիս ո՛վ Մենետ, կըրկնէ Գիաս աղաղակաւ.
Հուպ առ ժայռիւըդ խաղա. ասէ և զհետ իւր տեսանէ
Զի Կլովանթ, որ ներքսագոյն ընդ մէջ նաւուն Գիասայ
Եւ բազմագոչ քարաժայռից կալեալ ուղի՝ գայր ի ձախմէ,
Յանկարծ զիւրև զանց արարեալ խուսէ ի բաց ի նպատակէն
Ի ծով անքոյթ, հարկանի մինչև ցոսկերս դառն ի կըսկիծ.
Պատանին, թանան ծընօտք իւր յարտասուս, և ոչ զանձին
Ածեալ ի յուշ ըզպատիւ, ոչ զընկերացըն փըրկութիւն,
Մըղէ ի ծով բարձր ի խելաց ի ստոր ըզհեղգըն Մենետէս,
Ինքըն կայ նաւապետ, նոյն ինքըն կայ ղեկավար,
Եւ խրախուսեալ ըզնաւաստին, շըրջէ զուղղեակն ի նըպատակ։
Իսկ Մենետէս ծանրաբեռն հազիւ ի խոր անդընդոց զերծ,
Ջուր ի ձորձոցըն ծերունին ողողելոց սորսորելով,
Դիմեալ ի ծայր քարաժայռին՝ անդ ի ցամաք վիմին նըստէր։
Ըզնա տեւկրացիք և յանկանելն և ի լուղալ,
Եւ ի կըրծոց զաղի ալիս ի վերբերելըն ծաղրէին։
Յայնժամ զըւարթ յոյս յերկոսին ի յետամնացս արծարծանի
Ի Մնեսթէոս և ի Սերգեստ՝ յապաղելումն յաղթել Գիայ.
Սերգեստ գրաւէ զնախկին տեղին՝ ի քարափլուր անդըր մերձեալ,
Ոչ բոլորով ողնափայտիւն յառաջադէմ, այլ ըստ մասնէ,
Քանզի ըզմասն իւր յետնորդ ցըռկաւն սոսկն ընկճէր Պրիստիս.
Իսկ Մնեսթէոս ի նաւին՝ ճեմ ի միջի իւրոցն առեալ
Յորդորէր ըզնոսա. Զինուորակիցքըդ Հեկտորի,

Զորս ի յօրհաս Տրովայ ընկերս ինձ ընտրեցի, ժամ է այժմիկ,
Թի վարեցէք, ցուցէք ըզնոյն արդ ըզկորով և սիրտ ըզնոյն
Զոր ի մալեան կոծեալ ալիս, զոր ի ծովուն յոնիական,
Զոր երբեմն ի հանդէս ածիք ի խորուտըս գետուլեանս.
Ոչ զառաջնոյ թեկն անեմ կայից, և ոչ մըրցիմ ի վարձ
Յաղթանակի, թէ և իցէ ինձ ըղձալի. թող յաղթեսցեն
Որոց ետուր զայն, ով Պիսիդ, դարձցին յետինք ամաչեցեալ.
Այժմ ամօթոյ ընդդիմամարտք, քաջաքակիցք իմ, յաղթեցէք:
Նոքա մըրցին յեցք ի թիակս այր քան զընկեր բուռըն ճըգամբ.
Յուժգին բաղխմանցըն դըղըրդի պըղընձապատըն նաւառաջ,
Ծով ի ներքուստ խուսէ ի բաց, ոգի զոգւով անեն նաւազք.
Անդամքն ի դող հարկանին, և շըրթունք ծարաւահիւծք,
Քիրտն ամենուստ հոսէ առուիւ, և դէպք ինքնին ըզտենչալին
Ածեն ըզփառս որերոյն. քանզի Սերգեստ եռանդնալից
Մըղէ ընդ խուլթս ըզնաւառաջն, և ներքսագոյն կալեալ ուղի,
Մըտեալ յանձուկն անջըրպետ ընդ քարաբլուրն և ընդ Սերգեստ,
Կըռուի ի ժայռըս թաքթաքուրս ընդ ալեօք հէքն, և դըրդուին վէմք.
Բեկտին ի սուր հարեալ սեպըս թիք, ջախջախ ցըռուկն ի կախ:
Յառնեն յոտին կան նաւաստիք, և մեծաձայն աղաղակաւ
Ըզկայ առեալ, վարեն ի գործ նիգս երկաթիս, երկաթաղէն
Զողս և բեկորըս թիակաց ըզծովածուփըս ժողովեալ:
Իսկ Մընեսթ յաջողուածովըն դոհ՝ ըզհողմըս կարդալով,
Հըզօրագոյն ըզդիւրաստահ հերձեալ զալիս երագաշարժ
Թիակօք, յառաջ խաղայ, դիմէ ի ծով ընդարձակ.
Իբր աղաւնի, ում տուն և բոյն քաղցր ի խորշկէն է ի վիմի,
Վանեալ յանկարծ ի քարայրէն՝ թռուցեալ բերի ի դաշտավայր
Եւ ահաբեկ կայ ըզտանեօք, թեւովքն ուժգին ծափս հարկանէ.
Ապա սլանայ ընդ այեր հողմախաղաղ, հատեալ ուղի
Ընդ լըյծ ուղի, ոչ իսկ ըզթեւսըն երագունըս շարժելով.
Այսպէս Մընեսթ, այսպէս նոյն ինքն ի փախըստին հերձոյր Պրիստիս
Ըզծայր ծովուն, և այսպէս վարէր ըզնաւն երագաթռիչ
Թափն ինքնին, նախ ըզՍերգեստ թողեալ յետոյս, մինչ նա զըարձու
Քարաժայռիւըն ճըգնելով և ի ծանծաղ հունս՝ ի նանիր
Կարդայր օգնութիւն, բեկտեալ թիովք պընդեալ ի փորձ:
Ապա զԳիաս և զահագինն անէ զՔիմեր հալածական,
Որ ի վարչէն զուրկ՝ եւ տեղի. մընայր ի կէտ անդըր մերձեալ
Կղովանթ միայն, զոր բոլորով ճըգամբ ըզհետ մըտեալ վարէր:
Զայրանայ աղաղակն, ամենեքին ճիգըն գործեն
Խրախուսել ըզհետամուտն, հընչէ երկին ի քաջալեր:
Սայք ի նախանձ պատուոյ, զի մի զըստացեալ փառսըն կորուսցեն՝



Յօժարք ի տալ և ըզկեանըս փոխանակ յաղթութեան.
Ամէք յաղթութեամբըն զօրացեալ, կարեն՝ զի թուի նոցա կարել.
Եւ էր թերևս առնուլ նոցա զուգորդ ցըռկօք հանդէտ պըսակ:
Յայնժամ Կղովանթ բազկատարած հեղյր յոլով աղերս առ ծով,
Կարդայր ըզդիս յօգնութիւն. Ո՛վ որ իշխէքըդ դիք ալեաց,
Ընդ պետութիւն ձեր ընթանամ. յօժարամիտ նըւիրեցից
Ի ծովափունս աստ ըսպիտակ ձեզ ի բագինըս զուարակ
Ուխտիւ պարտապան. արկից զընդերսն յաղի ալիս,
Հեղից ծորուն անապակ: Եւ ընդ բանին լըւան նըմա
Ի խորոց ալեաց Ներեայցըն գումարտակ, երամք Փորկեանց,
Օրիորդըն Պանոպէ. և հայրն ինքնին հըզօր բազկաւ
Մըղեաց ըզնաւըն Պորտունոս, և նաւն արագ քան ըզհարաւ
Եւ քան ըզնետ թեթևաթռիչ դիմեալ յերկիր, պատըսպարէր
Ի խոր նաւահանգիստ. յայնժամ զաւակն Անքիսեայ
Համախըմբէ ըստ օրինի զամենեսեան, հրատարակէ
Բարձր ի բարբառ քարոզի դուպարայաղթ ըզԿղովանթոս,
Դալար սարդենի անեալ ի գլուխ նորին պըսակ.
Եւ հրամայէ ընտրել նըմա ըզմըրցանակս ի նաւամարտ
Զուարակս երիս, թակոյս գինեաւ լի, և կըշիռ մեծ արծաթոյ.
Յաւել ի պարգև զըլխաւորաց ևս վարչաց,
Յաղթականին քղամիդ յոսկի ընդելուզեալ, զորով առնոյր
Ծեմ ի Մէանդրըր կըրկնակարդ ծոխ ծիրանի մելիբեան:
Ի նմա մանուկն արքայորդի աղնէնըկար կորովաձիգ
Յանտառախիտն Իդա նետիւ ըզհետ մըտեալ արշաւասոյր
Իբր հեւալով, զեղջերուս երագոտունս աշխատ առնէր.
Եւ զնակիրն Արամազդայ երագաթեւ ըզնա մագլօք
Յափըշտակէր յԻդայ ի թռիչըս բարձր ի վեր. ի նանիր
Ըզձեռս յատեղս հինօրեայքըն պահակերք ամբառնային,
Եւ ի նանիր բարակաց հաջիւն ընդ օդըս զայրանայր:
Որ զերկրորդն ապա ճըգամբ կալաւ տեղի, նըմա ի զարդ
Եւ պատըսպար ի մարտի եւ եռահիւս զըրահ ըստուար
Դըրուագեալ ի վերայըս նուրբ ոսկիակուռ, զոր Ենէաս
Յաղթական Դեմոլեայ առ բարձրաբերձն Իլիոնիւ
Աւար առեալ էր ի նմանէ մերձ ի սըընթացըն Սիմոյիս,
Եւ զոր հազիւ արբանեակք իւր Փեգէոս և Սագարիս
Բառնալ բերել շալակաւ զերեքկաչեանըն զօրէին.
Զայն ըստանձնեալ Դեմոլեայ, և զհետ մըտեալ արշաւանօք
Ըզցըրուեալըն տրովացիս վարէր երբեմըն փախըստեայ:
Գիայ զերրորդըն մըրցանակ կաթսայս կըրկին եւ պըղընձիս,
Եւ ըմպանակս արծաթաձոյլ շուրջ քանդակեալըս պատկերօք:

Վարձատրեալ բոլորեքեան, և ճոխութեամբք պերճացեալ,
Մինչ երթային՝ ժապաւէնս ածեալ կարմիրըս զիրանամբք,
Ահա Սերգեստ բազում ճըգամբ ի սուր ժայռէն մազապուր,
Անթիակ և կորուսեալ մի ի տախտիցըն բազմոցաց,
Անփառունակ ըզծաղըալիցըն լաստափայտ վարեալ մըղէր.
Որպէս յաճախ ի կոչտս ուղեաց հանդիպեալ օձ, զորով ի չեղ
Անցեալ անուով պըղընձեաւ, կամ կարեվէր հարեալ քարամբ,
Կոչկոճ և կիսամեռ թողու ըզնա ճանապարհորդ,
Զուր ճըգնի ի փախուստ՝ ձըգեալ երկայն գալարս ըզհետ.
Կէս իւր դըժնեայ, աչք բոցատիպ, ի սոյլ ուլան ուղղաբերձ,
Կէս առ խոցոյն կաղ՝ դանդաղէ ըզնա ի գնացըն կամակոր,
Ոլորելով ի պարոյր զիւրև զազդերսըն պատ ի պատ.
Այսպէս դանդաղ նաւն այն մըղէր ի նաւաստւոյն, մինչև պարզեալ
Ըզթևս եմուտ հողմուռոյց առագաստիւք ի նաւակայս:

Բայց Ենէաս և Սերգեստեայ ըզխոստացեալն հատոյց ըզվարձ,
Ուրախ եղեալ ընդ փըրկութիւն նաւուն, ընդ դարձ իւրոցն ողջամբ.
Ետ նըմա աղախին, Ֆաննեան երկոց ոչ անտեղեակ,
Կրետուհի ազգաւ, անուն իւր Փոլոյէ, մանկունք կըրկին
Զըստեանցն ի կախ: Եւ ի զըսւել նաւամարտիկն հանդիսի՝
Երկիւղածն Ենէաս ի խոտաւէտ դիմեաց ի դաշտ,
Զոր շուրջ պատէին անտառք ի բըլուրըս զառ ի վայր,
Էր ի միջի հովտին կըրկէս շուրջ տեսարան, ուր պար առեալ
Դիւցազն ի մէջ ակըմբահոյլ բիւրաւորաց բազմեցաւ.
Անդր ի հրաւէր մըրցանակաց ձայն ետ քաջաց՝ որ կամէին
Գուպարել ի յարշաւ, եդեալ նոցա վարձս առաջի:
Դիմեն տեկրեանք ամենուստ ընդ սիկանեանս ի միասին.
Առաջինք ի նոսա էին Նիսոս և Եւրիալ,
Եւրիալ առոյգ տիովք երևելի և գեղով,
Նիսոս ամբիծ սիրով կապեալ ընդ պատանւոյն. ըզհետ նոցա
Գայր Դիորէս ի պըրիամեան պերճապայծառ ազգատոհմէ.
Սալիոս ապա ըզհետ ընդ Պատրոնի. յորոց էր մին
Ակառնացի, միւսն ի տեգեան սերեալ ազգէ արկադացի.
Ապա Ելիմ և Պանոպէ տրինակրացիք, յանտառային
Սովորք ի կեանըս պատանիք, ընկերք ծերոյն Ակեստեայ.
Եւ այլք յոգունք, զորըս նըսեմ ծածկէ համբաւ. յորոց միջի
Արձանացեալ Ենէաս այսպէս ուրեմըն բարբառի.

Ունկըն դիք, և զայս ուշիւ և խընդամիտ ի միտ առէք.
Ոչ ոք ի թուոյ ձերմէ գնասցէ ունայնաձեռն անմըրցանակ.
Գեղարդունըս ձեզ կըրկին տաց գնոսկանս երկաթիս
Ողորկ և փայլուն, և արծաթով քանդակածոյս,



Եւ սակր երկսայրի. այս հաւասար ընաւիցպատիւ:
Իսկ երեքեան առաջինք տարցին ի վարձ այլ մըրցանակ.
Նոցա ի գորշ ձիթենւոյ պըսակ ի գլուխ բոլորեսցի.
Առաջինն ի յաղթականս ընկալցի ձի շըքեղ ի սար.
Երկրորդըն լի թըրակացւովք նետիւք կապարճ ամազոնիկ,
Պատեալ ի լայն կամար ոսկի զօդեալ ի յօղ և ի ճարմանդ,
Ընդելուզեալ ի նմա գոհար. երրորդն ի բաց երթիցէ գոհ՝
Զարգոլեանըս զայս առեալ ի մըրցանակ ըզսաղաւարտ:

Անցեալ կացին յայնժամ յանձնիւր կայս, և ի տալ անդ նըշանին՝
Վազեալ արագ ըզսեմովք ընդ ասպարէզն յարձակեցան
Հանդոյն մըրըրկի ի նըպատակ անդըր դիմեալք:
Նիսոս նախկին քան զայլս ի բաց սրանայ թեթև քան ըզհողմ,
Արագաթև քան ըզշանթիս. ըզհետ նորա քան զայլըս մերձ,
Այլ ոչ սակաւ ինչ միջոցաւ, գայ Սալիոս. ապա երրորդ
Եւրիալոս խըտորոց ընդ մէջ. Ելիմ ըզհետ Եւրիալեայ,
Եւ մերձ նըմին ի վերջէ գայ հասանէ ահա Դիոր
Ցեց ուս ի յուս, և գարշապար ընդ գարշապարըս քերելով.
Եւ թէպէտ ասպարէզ բազում դեռ գոյր, սահեալ յառաջ
Անցանէր, կամ գէթ յերկբայս ըզյաղթանակ մարտին թողոյր:
Այլ մինչ ի ծայր անդըր գոգցես հուպ ի նպատակ հասին խոնջեալք,
Հէքն ի տամուկ սահլի Նիսոս յարեան՝ որ էրն ըստ դիպուածոյ
Ի զուարակացըն զոհելոց հեղեալ յերկիր և ընդ արօտ:
Անդ պատանին՝ գոհ իբր յաղթող ի գայթ ի գայթ ոտն անըշգոյշ
Անկաւ ի տիղմ աղտեղի ընդ ապաժոյժըն սըրբազան.
Այլ ոչ արկեալ ի մոռացօնըս զԵւրիալ, ոչ և ըզսէր,
Ցարեաւ եկաց ի լըպիրծ տեղւոյն ընդդէմ Սալիոսի.
Սա ի թանձու աւազին թաւալգըլոր անկաւ յորսայս,
Եւ յառաջեալ Եւրիալ յաղթող շնորհիւ սիրեցելոյն,
Զառաջին կալաւ տեղին՝ սլացեալ ընդ ծափս և ընդ խրախոյս:
Զերկրորդն ըզհետ նորա Ելիմ, երրորդ զարդիս յաղթող Դիոր:

Անդ Սալիոս զակումըբն մեծ և զնախաթոռս հարց լի արար
Աղաղակաւ, բողոքէր զյափըշտակեալն յիւրմէ նենգաւ
Հատուցանել ըզպատիւ. գեղեցկաբուխ արտասուք,
Սիրելութիւն, և ի չըքնաղ մարմնի կորով հաճոյագոյն,
Պաշտպանէին Եւրիալեայ. օգնէր նըմա և մեծաձայն
Բողոք Դիորի, որոյ ի զուր ըզյաղթութիւն
Կալեալ լինէր և զմըրցանակ, եթէ Սալեայ շնորհէր պատիւ:
Ցայնժամ խօսի հայրն Ենէաս. Ձերքդ անկապուտ, ով պատանիք,
Կացցեն վարձք, և անշարժ կալցին ըզկարգսըն մըրցանակք,
Այլ ողորմել արկածից անպարտակիր բարեկամին

Լիցի օրէն ինձ ասէ, և տայ Սալեայ մորթ անհեթեթ
Առիւծու գեստուլացեալ ոսկեծիրան և թաւագեղ:
Յայնժամ Նիսոս. Եթէ շնորհես, ասէ, զայդ վարձ պարտելոց,
Եւ սահելոյն ողորմիս, զո՞ր մրցանակ տացես Նիսեայ՝
Որ դըրուատեօք առաջնումըն պըսակի գայր արժանի,
Թէ չէր նըմա ըդդէմ կալեալ՝ նոյն որ Սալեայ՝ բախտ ոխերիմ:
Եւ ընդ բանիցըն ցուցանէր զերեսըս իւր ողող ի տիղմ
Եւ զանդամըն շաղախեալ: Ժըպտեցաւ Հայրըն բարեկաւ
Եւ հրամայեաց ածել զասպարըն ձեռակերտ Դիդիմաւեայ,
Զօն արգադիր ի դրանդիս Պիսիդոնի ի դանայեանց.
Զայն ազնըւոյ պատանւոյն ետ ի պարգև վարձ գերազանց:
Ի կատարել ընթացից, ի բաշխել Հօրն ըզմըրցանակս,
Համպա, ասէ, յառաջ անցցեն արդ քաջալանջք և կորովեք,
Ամրակուռ դաստակօք ի վեր առցեն ըզբազուկս.
Եւ եդ ի մէջի վարձըս կըրկին ի բըռնամարտ.
Յաղթականին զըւարակ՝ ծածկեալ ոսկեով և նարօտիւք,
Սուսեր և պերճ սաղաւարտ առ ի մխիթումըն պարտելոյն:
Ոչ յապաղեն. իսկ և իսկ մատչի Դարէս հըսկայազօր
Բարձր ի գլուխ գայ ի մէջ մեծաւ մարդկանն աղաղակաւ,
Այն որ միայն ընդդէմ Պարեայ ի մարտ սովոր էր խիզախել,
Որ զյաղթանդամն յաղթող Բուտէս առ Հեկտորի մեծին շիրմաւ
Ի չէկ փոշւոջ արկ կիսամեռ, զայն որ պանծայր սերեալ յազգէ
Բեբրիկեանն Ամիկեայ. սա ինքըն նախ Դարէս ի կռիւ
Ամբարձ ըզգլուխ իւր ի վեր, ըզլայն թիկունսն ածեալ ի ցոյց,
Եւ մերթ ըզմին և մերթ ըզմիւս բազուկս ընդ օդըս ձըգեալ,
Ծեծէր զայերըս բըռամբք. խընդրի նըմա ոք ախոյեան,
Եւ ոչ ոք ոստս ընդդէմ յանդգան խառնէ հրապարակին
Դաստապանս ըզձեռօք իշխէ ածել ի բըռնակռիւ:
Նա զուարթագին որպէս բնաւից գեր ի վերոյ՝ առ ոտս Ենեայ
Անցեալ եկաց, և անդէն ածեալ զահեակ զեղջերբ ցըլույն,
Աստուածորդիդ, ասէ, թէ չիք ոք որ իշխէ մատչել ի մարտ,
Ո՞ւմ կամք. և ցե՞րբ պարտ իցէ ինձ կալ ըսպասել.
Տուր ածել ըզմըրցանակս: Յայնժամ բոլոր Դարդանացիք
Զայն բարձին՝ ըզխոստացեալըն տալ նըմա յաղթանակ:
Անդ Ակեստ սաստկագոյնըս զԵնտելըս յանդիմանեալ,
Որ ի յակումբ դալարագեղեաց կայր առընթեր բազմեալ, ասէ.
Զուր, Ենտելլէ, հզօր երբեմն ի դիւցազունըս կացեր.
Արդ ժուժկալե՞ս, թողո՞ւս բառնալ ըզմըրցանակս անպատերազմ.
Ո՞ւր է աստուածն այժմիկ Երիքս՝ զոր մարտուսոյց քո ասէիր,
Ո՞ւր և համբաւն համասփիւռ ընդ համօրէն Տրինակրիա,



Ո՞ւր են ի յարկըս քո կախեալ կապուտք երբեմն և կողոպուտք:
Իսկ նա. Ոչ փառք, ոչ դըրուատեաց սէր խուսափէ առ երկիւղի,
Այլ ընդ դանդաղ ծերութեամբ պաղեալ ըզկայ առնու արիւն,
Եւ ըսպառեալ ի մարմնի կորով անզօր յարգասիս.
Թէ էր ինձ արդ այն որ երբեմն առոյգ հասակ՝ յոր և խրոխտեալ
Խիզախէ այրդ անազգակ, թէ էր արդ նոյն ինձ մանկութիւն,
Ոչ ի վարձուց ածեալ գայի վասըն չըքնաղ ցըլոյդ ի մարտ,
Ոչ ըսպասեմ մըրցանակի: Ասաց և արկ ի մէջ երկուս
Ծանրաբեռըն դաստապանս, որովք սովոր էր կորովին
Զինել Երիքս ըզձեռս ի մարտ, կարծր ըզբազկօք փոկըս պատեալ:
Պակեաւ որեարն ընդ շեղջակոյտ մորթս արջառոց եօթանեցունց
Ի կարծրակուռ պատեալ յերկաթ և ի կապար. ինքն իսկ Դարէս
Տեղի ի բաց ետ քան զայլս ամենեսին յապուշ հարեալ.
Եւ վեհագն Անքիսեան յայսկոյս և յայն շըրջէ ըրջէր
Զահագին պարաւանդիցըն շեղջակոյտ և ըզկըշիռ:
Յայնժամ յոգւոց հանեալ ծերոյն ասէ. Եւ զի՞նչ եթէ նորին
Հերակլեայ կայր ոք ի տես դաստապանացն և զինուց,
Եւ սաստ ի սմին ծովեզեր տըխուր նորուն բըռնամարտի.
Երիքս եղբայր քո զայսոսիկ կըրէր երբեմըն զիւրև զէնս.
Երևին դեռ ևս ի դմա ցայտմունք ուղղոյ և նիշք արեան.
Դիզօք մեծին Ալկիդեայ ըդդէմ կալաւ. դըզօք և ես
Սովոր էի յորժամ արիւն չև եղկացեալ՝ տայր ինձ կորով,
Զև նախանձորդըն ծերութիւն յերկոսին այտս ըսպիտակեալ:
Բայց տրովացին եթէ Դարէս ոչ յանձն առնու գալ ի պայքար
Ընդ զէնըս մեր ընդ այսոսիկ, և այսպէս կամք երկիւղածին
Իցեն Ենեայ, թէ հաւանի և ձայնատուր մարտին ընդ այն
Ակեստէս. հաւասար զինուք մըտցուք ի մենամարտ.
Ես զԵրիքսայն թողից ի բաց զարջառենիս, աներկիւղ լեր.
Այլ և դու ըզտրովականըդ մերկացիր ըզդաստապանս:
Զայս ասացեալ, եարկ յուսոց զիւր եռկպատիկ կըրկնոցն ի բաց,
Եւ զյաղթ անդամս ըզյաղթ ոսկերս և ըզբազուկըն հոլանեալ,
Հըսկայաձև արձանացեալ եկաց ի մէջ ասպարիզին:
Յայնժամ զաւակն Անքիսեան, Հայրն Ենէաս, ի մէջ ածեալ
Զոյգըս կըրկին ձեռելից, զերկաքանչիւր պատեաց ըզդաստ
Հանգէտ զինուք, և իսկոյն երկաքանչիւր անցեալ կացին
Յոտն ի մատն անվեհեր՝ բազուկս ի վեր յօդս ամբարձեալ,
Յետս ի բաց ընկըրկեալ բարձր ըզգըլուխս ի հարուածոց
Եւ ձեռս ի ձեռըս խառնեալ ձայն իրերաց տան ի գուպար.
Նա ի ճապուկ շարժմանն ոտից յառոյգ հասակ իւր ապաստան,
Սա հըզօր անդամօք և վիթխարի, այլ դեդևեն

Ծունկքըն դողդոջք, և յամր ըզյաղթ շարժէ զանդամըս շունչ ի հև։
Յոլովս ընդ վայր իւրերաց կըշռեն հարուածս, յոլովս ի խոր
Կուռծն ի կողս, և լայնատարր հընչէն ի բաց ձայնք ի լանջաց.
Իջանեն թանձրախիտ կըռուփք ընդ քունս և ընդ ականջ,
Եւ արձակեն ի կարծրակուռ բաղխմանց ծընօտքըն ճարճատիւն։
Ծանր Ենտելլոս կայ և անշարժ ի նմին կայի՝ վանել ևեթ
Ըզզէնս ի բաց, հըսկել աչօք. իսկ միւսն ի բարձր իբր ի քաղաք
Մանգղինօք յարձակեալ, կամ ըզգըղեակ լեռնահանդէտ
Զինուք պաշարեալ, է զի ընդ այս, է զի ընդ այն,
Դառով ըզմուտս ամենայն հետազօտէ շուրջանակի,
Եւ ըստէպ դիմեցմամբ՝ զուր արկանէ ըզնա ի նեղ։
Կանգուն ի վեր Ենտելլոս ցուցանէ զաջ իւր ուղղաբերձ.
Նա զհարուածըն էջս ըզգըլխով տեսեալ կանուխ, խուսէ երագ
Մարմնովն ի բաց. Ենտել ընդ հողմս ըզթափ բազկին ցըրեալ ի վրէպ,
Յամր ի յերկիր ծանու բեռամբն իրանըն յաղթ կործանի.
Որպէս սոճի փապարեալ բարձր ի կատար Իդայ լերին
Կամ յԵրիմանթ կործան երբեմըն տապալի արմատախիլ։
Յառնեն յոտին կան տեկրացիք, յառնէ մանկտին տրինակրացի,
Յուզեալք ի կիրըս պէսպէս, բարձր ընդ երկին գնայ աղաղակ։
Դիմէ Ակեստ նախ ողորմեալ, և զծերակիցն իւր բարեկամ
Յարուցանէ. և ոչ անկմամբն յամեալ դիւցազն, այլ անվեհեր
Դառնայ ի մարտ սաստկագոյն, զայրոյթ ի նմա գըրգռէ զկորով,
Յայնժամ ամօթ և գիտակիցըն քաջութիւն վառեալ ի նմա,
Վարէ ուժգին ըզԴարէս արշաւասոյր ընդ դաշտն ողջոյն,
Մերթ ահեկաւըն տեղացեալ հարուածս ի նա և մերթ աջով
Անդուլ անդադար. որպէս ամպրոպ ի յորդ կարկուտ
Թօթափէ զտանիս, ոչ ինչ ընդհատ ի խիտ հարուած կըռփահարեալ
Զեռօք երկոքումբք վանէ դիւցազնըն ըզԴարէս։
Յայնժամ ոչ ևս Հայրն Ենէաս թողացուցեալ Ենտելլոսի
Յառաջ վարել ըզզայրոյթ և բըռնանալ դառնացելոյն,
Վախճան մարտին հրամայէ, և զկոշկոճեալըն զերծուցեալ
ԸզԴարէս, այսպիսեօք ըզնա բանիւք արգահատէ.
Ուստի՞ այդքան անմըտութիւն ի քեզ, չառնո՞ւս, ո՜վ հէք, ի միտ
Զոյժն այլազան, և զդիցըն կամս յեղաշըրջեալ. տեղի տուր դից։
Ասէ և զբաւ առնէ կըռուոյն. յայնժամ ընկերքըն հաւատարիմք
Հիւանդաքայլ ըզԴարէս, գըլխոյն այսր անդըր տատանմամբ,
Թանձր ապաժոյժ ի բերանոյ և ատամունըս ժայթքելով
Արիւնախառն, ածեն ի նաւս, և հրաւիրեալ՝ առնուն ըզսուրն
Եւ զսաղաւարտ, զարմաւենին և զցուլ թողեալ Ենտելլեայ։
Սա սոնքացեալ յաղթանակաւն, և զուարակաւըն պանծացեալ.



Աստուածորդիդ դու, ասէ, և տեկրացիք, ի միտ առէք
Քանի՛ կորով էր յիս ի տիս պատանեկան, և յորպիսւո՛յ
Մահուանէ ապրեցուցէք վերակենցաղ արդ ըզԴարէս։
Զայս ասացեալ, ուղղաբերձ եկաց հանդէպ զուարակին՝
Որ առընթեր կայր մըրցանակ, և ընկըրկեալ զաջ իւր՝ կըշռեաց
Ցեղջերամէջըս նորին ըզկարծրակուռսըն դաստապանս,
Եւ խորտակեաց ըզնոսին ընդ ուղղաբոյն ոսկերօքն։
Զերերի հարեալ անկաւ անշընչացեալ ցուլըն ի յերկիր.
Ինքն ըզնովաւ կացեալ այսպէս բարձրաձայնէր. Զայս ո՛վ Երիքս,
Փոխան կենացըն Դարեսի հաճոյագոյն զենում քեզ կեանս,
Եւ աստ յաղթող թողում ի բաց ըզդաստապանս իմ և զարուեստ։
Հրաւէր ապա տայ Ենէաս գալ ի գուպար ոյց կամք էին
Ի նետ երագաթև. և մըրցանակս առաջի եդ.
Ըզկայմն նաւուն Սերեստեայ հուժկու բազկաւ կանգնեաց ի մէջ,
Աղաւնեակ ի ծագ բարձու կայմին լարիւ թողեալ ի թռիչ,
Նետիցըն նըպատակ. անդր ի մի վայր եհաս որեար,
Ի սաղաւարտ պըղընձի արկան վիճակք, և առաջին
Ել իրտակեանն Իպպոկոոն, աղաղակաւ հարեալ խրախոյս։
Նըմա ըզհետ գայր պըսակեալ դալարագեղ ձիթենեաւ
Մնեսթեւս դեռ այն ինչ յաղթող ի նաւական մարտի կացեալ.
Եւրիտեայ ապա եղբօր քում եղանէր վիճակն երրորդ.
Անուանիդ Պանդարէ, որ հրամայեալ երբեմն ի ցրել
Ըզդաշինս, արկեր նախկին դու նետ ընդդէմ աքայեցւոց։
Վերջին ի խորս անդ ի յատակ սաղաւարտին մընայր Ակեստ,
Իշխեալ և ինքն ի փորձ ճըգանց ընդ մանկըտւոյն բուռն հարկանել։
Յայնժամ այր այր կորովակի թեքեալ ճապուկ աղեղն անձին,
Կորզեն ըզնետս ի կապարճից. և իրտակեան նետ պատանւոյն
Հերձու նախկին զայեր թեւթև. հընչեն երկինք ի ճարճատիւն
Լարին, և սլաքն հասանէ մըխի ի կայմն հանդիպակայ.
Տատանի կայմն, ըզդողանի հարկանի հաւն ահաբեկեալ.
Ի ծափածայն դըրուատեաց դըղըրդին վայրք շուրջանակի։
Քաջին ապա լարեալ Մնեսթեայ զաղեղն ի վեր ի նըպատակ,
Զակն և ըզնետ միանգամայն արձակէ անդըր դէպ ուղիղ.
Այլ ոչ զօրէ հէքն ի թըռչնիկըն պատահել երկաթով,
Ըզկըտաւի լարն ևեթ և ըզհանգոյցն հատանէ,
Որով կապեալ կայր զոտանէ հաւն ի բարձու կայմին ի կախ.
Եւ թռուցեալ ընդ հողմս ի բաց, ի թըխատիպ ամպըս խուսէ։
Յայնժամ իսկոյն Եւրիտէս, զի էր ըզնետ իւր վաղ լարեալ,
Կարդաց զեղբայր իւր ուխտիւք, դէտակն ի հաւն՝ որ խայտալով
Ճախր ընդ երկին արձակավայր առնոյր թևոցն ի ծափիւն,

Նշար ընդ թուխ ըզնա ամպոյն. անկաւ սաստեալ թռչնիկն ի ստոր
Դիակն անշունչ, բեւեռեալ ըզնետն ի յինքըն բերելով,
Թողեալ ի վեր ըզկեանս ի մէջ եթերաճեմ աստեղաց:
Ակեստ միայն մնացեալ առանց մրցանակի, ձըգեաց ընդ օդս
Ըզնետն ի ցոյց արուեստին և բարկաճայթ իւր աղեղան.
Եւ ահա հրաշք յանկարծակի երեւեցան՝ հանդերձելոց
Հըմայք մեծ, զորս ահաւորք ապա ի յայտ ածին արկածք,
Եւ զապագայս ահարկուք նըւագեցին կիւսահըմայք.
Զի բարձրաթռիչ նետն եղեգնեայ լուցեալ ընդ ամպս, և բոցանիշ
Թողեալ շաւիղ, լուծանէր յանօսր ի հողմ, որպէս յաճախ
Աստեղք սլացեալք ըզբոց ի թռիչըս վարսաձև թողուն ըզհետ:
Յայնժամ տեկրեանք և տրինակրեանք ապշեալ՝ աղերս արկանեն դից,
Եւ ոչ մեծն Ենէաս ըզհըմայիցն անփոյթ եղեալ
Գիրկս էարկ Ակեստեայ ուրախակից, և մեծամեծ
Տըւեալ պարգեւս՝ Ա՛ռ ընկալ, ասէ, ո՛ հայր, զի Ողիմպեայ
Արքայն մեծ կամի հըմայիւքդ ունել պատիւ քեզ անվիճակ.
Ըզծերունւոյն Անքիսեայ կալցիս զայս քեզ ի մրցանակ
Ըզխառնարան շուրջ քանդակեալ նըկարադրոշմ, զոր Կիսէոս
Երբեմն արքայն Թրակիոյ ծնողին իմում ետ Անքիսեայ
Պարգեւ մեծ, առհաւատչեայ սիրոյն թողեալ ի յիշատակ:
Եւ ընդ բանին և գլուխ նորա դալարադեղ ած սարդենի,
Եւ առաջին յաղթողաց բոլորեցունց կացոյց զԱկեստ.
Եւ ոչ քաջն Եւրիտ նախանձ ընդ մեծագոյն պատւոյն եւեր,
Թէպէտ և իւր ըզհաւիկն էր ընկեցեալ յերկնից ի վայր:
Մատեաւ ըզհետ ի մրցանակ՝ այն որ ըզլարն հարեալ խըզեաց.
Եւ յետին՝ որ ըզթեւթև եղէգն ի կայմ անդըր վարեաց:
Բայց չև վախճան եղեալ մարտին՝ կոչեալ առ ինքն հայրն Ենէաս
Զեպիտիդ ըզպահապան և աջակից մանկանն Յուլեայ,
Զայս ետ պատուէր հաւատարմին. Աղէ դու երթ առ Ասկանի,
Ասա ըընա՝ զի թէ առ իւր դեռևս իցէ գունդ մանկըտւոյն,
Եւ կազմ յընթացըս ձիան, ածցէ այսրէն ըզգումարտակն
Ի սպաս հաւոյն, և սպառազէն վառեալ և ինքն հանդիսասցի:
Հրաման ապա ետ Ենէաս ժողովըրդեանըն խըռնելոյ
Մեկնել յերկայն ասպարիզէն, թողուլ ըզվայրըն թափուր:
Մատչին արբունք դէմ յանդիման հարցն ի հանդէս, հանդունատիպք
Փայլեալ ի ձի կազմ ի սանձ. յապուշ հարեալ հըծծէ մանկտին
Տըրինակրեան և տրովացի. բոլորեցունց ըստ օրինի
Փըքրեալ ըզվարսըս և զըսպեալ ընդ պըսակաւ. իւրաքանչիւր
Կըրէ կըրկին նիզակ հացեայ՝ զինեալ ի տեգ երկաթի.
Կիտոյն ի յուս կապարճ ոզորկ, և ոսկեհիւս մանեակ ճապուկ



Իջանէ ընդ պարանոցըն ըրապառուած կըրծոցն ի վայր:
Երրեակ ի թիւ հեծելազինն են գումարտակք, և շուրջ երրեակ
Երթևեկեն հեծելապետք, և երկվեցեակ մէն միոյ զհետ
Ի գունդ ուրոյն փայլէ մանկտի, զուգահանդէտ գընդապետաւ:
Ածէ ըզմին ի ճակատուց ուրախ և զուարթ պատանեկաց
Պրիամ մանուկ, անուանակիր հաւոյն, սերունդ քո հոյանուն
Ո՛վ Պոլիտէս, փառքն Իտալացւոց առ ի յապայս, զոր թրակացի
Ճարտուկ նիշս ի սպիտակս ածէ ի նուս երիվար.
Ըսպիտակք զընան սըմբակքըն նախաճեմք, և բարձր ի վեր
Խրոխտապանծ կանգնէ զճակատ իւր ըսպիտակ: Եւ միւսն Ատիս,
Յորմէ Ատեանցըն Լատինաց էջ ընկալաւ ազգըն սերունդ.
Ատիս մանուկ, կաթոգին Յուլեայ մանկանըն սիրելի:
Յետին Յուլոս գեղեցկագոյն յամենեսին, ի սիդոնիկ
Հեծեալ ի ձի, զոր գեղանին նըմա Դիդէ ետ յիշատակ
Եւ սիրոյն առհաւատչեայ. իսկ զայլ մանկտին բարձեալ բերէ
Տըրինակրացին, զոր ծերունւոյն էր Ակեստեայ տըւեալ ձիան:
Ողջունեն կայթիւք ձեռաց դարդանացիք ըզմանկտին
Սըրտատրոփ, և բերկրին՝ ըզկերպարանս հարցն առաջնոց
Ի դէմս որդւոց տեսանելով: Այն ինչ նոքա ձիավարեալ
Շուրջ ընթանան զօհ և զըւարթ՝ դիտել զակումբն առ հասարակ,
Դիտել զաչըս իւրայոց. Եպիտիդէս ձայն տայ հեռուստ
Կազմ մանկըտւոյն աղաղակաւ և ի շառաչ խարազանին:
Նոքա դիմեն միահամուռ, և գընդապետքըն երեքին
Յերիս գումարտակս ըզհեծելազնըն բաժանեալ,
Դառնան անդրէն կոչեցեալ՝ ձըգեն ըզտէգսըն թըշնամիս.
Ի հակառակ ապա վայրաց դարձադարձիւ արշաւեալ
Զայն տան ի զէն, և ըզշըրջանըս շըրջանօք ի տիպ մարտի
Խառնանեն. և մերթ կապարճըս դարձուցեալ, մերթ դիմամարտք
Շըրջէն ըզնիզակ, և է զի հաշտք զուգընթանան.
Որպէս վիպեն բարձր ի Կրետէ եղեալ բաւիղ, կոյր որմովք
Յանկեալ ուղի ընդ բիւր շաւիղըս բերելով դաւ կեղակարծ,
Ուր խաբուսիկ հետք, և անդարձ անխուսելին էր վրիպակ.
Ոչ այլազգ մանկտին տրովեան խափանէ զհետս արագադարձ,
Ըզփախուստ ընդ յարձակումըն խառնելով փոխեն ի խաղ.
Հանգոյն դելփնաց՝ որք ընդ ատմուկ ի լող ընդ ծով ըզկարպաթեան
Կամ ըզլիբեան հերձուն ալիս, ընդ մըկանունըս խաղալով:
Ասկանիոս նախկին եմուծ զայս սովորոյթ արշաւանի
Եւ զձիամարտ ի պատելըն պարըսպօք զերկայնն Ալբա,
Եւ ի հանդէս ուսոյց ածել զայն Լատինացըն վաղընջուց.
Եւ որով ինքն օրինակաւ և տրովացի մանկտին ընդ իւր,

Նովին խորոցն ալբայեցին ուսոյց, և մեծն անտի Հռովմ
Ընկալեալ պահեաց ըզխաղսն հայրենիս. ուստի Տրովա
Կալաւ մանկտին ցարդ անուն, և տրովական յորձորձի գունդ:
Մինչև ցայս վայր ածան ի պատիւ սըրբոյ ծնողին մարտք ի հանդէս.
Աստ ի սկըզբան յեղաշըրջեալ բաղդին յօղդողդըն կերպարան.
Եւ մինչ պէսպէս ըզխրախուսըն տօնք խաղուց կատարէին,
Կրօնեանն Հերա յըղէ յերկնից զԻրիս ի նաւս Իլիականս,
Այօդեալ ի թևս հողմոց զէջըս նորին, չև կըշտացեալ
Յագեալ զայրոյթ իւր վաղեմի, երկնեալ բազում ինչ ի սըրտին:
Կոյսն ընդ աղեղըն բազմերփեան էջ ճեպընթաց անտես ի ստոր,
Եւ տես զամբոխըն բազմահոյլ, և հետազօտ ընդ ծովեզերս
Ըզնաւատորմն ամայի և զնաւակայս ետես լըքեալ:
Բայց տրովուհիք յայնժամ մեկնեալք ի ծովեզերս ամայիս,
Լային ըզմահ Անքիսեայ ակընկառոյցք յանդունդս ի խոր,
Ողբս առեալ ի միասին. Աւա՜ղ քանի՜ դեռևս ալիք
Քանի՜ ծով պարտասելոցըս մեզ մընայ. և խընդրէին
Հասանել ի քաղաք, ձանր էր կըրել վիշտս ի ծովու:
Ի մէջ նոցա արկ զանձն Իրիս, ոչ անհըմուտ ի չեան գործել,
Ի բաց եդեալ ըզկերպարան և ըզհանդերձըս դիցուհւոյ,
Երևեալ խամրացւոյ ծերոյն պառաւ կին Դորիկլեայ,
Այն որում տոհմ և համբաւ երբեմն էին լեալ և որդիք.
Ո՛վ հէքք, ասէ, զորըս չեղեն աքայեցիք ձեռըն հաս
Մատնել զենուք ի կորուստ առ պարըսպօքըն հայրենեօք,
Ազգ թըշուառ, որպիսո՞ւմ ըզքեզ մահու պահէ արդ բախտ.
Վաղ եօթներեակն յետ կործանման Տրովայ ամառն առնէ մեզ դարձ,
Յորմէհետէ ծովէ ի ծով ընդ ամենայն յածեալ երկիր՝
Զափեմք զառապս և զքարաժայռըս հիւրամերժս, ի խընդիր
Փախըստէին Իտալիոյ ի խոր անդունդս ալէկոծեալ.
Աստ Երիքսի եղբօր սահմանք, աստ է Ակեստ ասպընջական,
Զի՞նչ արգելու դընել պարիսպ և տալ բնակչաց աստէն քաղաք.
Ո՛վ հայրենիք, ո՛վ ի նանիր թափեալ թերափք ի թըշնամեաց,
Ո՞չ ևս ամուրք յորջորջեսցին տրովեանք, և ո՞չ ևըս տեսից
Ըզգետս հեկտորեանս, ըզՔըսանթոս և զՍիմոյիս.
Հա՛պա հարէք հուր ըզդըժբաղդ կայմիցդ ընդ իս ի միասին,
Զի Կասանդրեայ հարցկին պատկեր ինձ ի տեսլեան երևեալ,
Բոցավառ ընձեռէր ջահ և տայր պատգամ. Աստ խընդրեցէք
ԸզՏրովադա, աստ է ձեր տուն. բաւական զայդ ձեզ ժամանակ,
Մի՛ հրաշիցդ այդքանեաց յամէք լըսել. ահա քառեակ
Ուղղեալ բագինք Պիսիդոնի. նա ինքըն տայ բոց և խրախոյս:
Զայս ասացեալ՝ յափըշտակեաց ուժգին ըզհուրն աղխտաբեր



Ինքըն նախկին, և ամբարձեալ կորովակի աջ ի վեր՝
Շողացոյց զայն և արկ հեռի: Իլիուհեաց անդանօր միտք
Ընդոստնուն, հիանան սիրտք. մին ի յոգունց անտի յայնժամ
Պիրգով անուն անցեալ զաւուրբք, և յարքունիս կացեալ դայեակ
Որդւոց բազմաց Պրիամու. Մարք, ասէ, չէ դա Բերոյէ,
Չէ հռետուհին Դորիկլեայ կին, ո՛չ ի դըմա ըզդիւցական
Տեսանէք գեղ, քանի՜ հրափայլ ականողք, քանի՜ կորով,
Որպիսի՜ դէմք, ո՛րբ ոտին ճեմ, և զի՜նչ հընչումըն բարբառոյ:
Վաղ ի մեկնելըն իմում թողի ըզԲերոյէ խօթ վըշտագին:
Զի յարժանին Անքիսեայ պակասէր ինքն ևեթ ի պատիւ:
Զայսոսիկ նա. բայց կանանին տարակուսեալ անդ ի սկըզբան,
Այն ինչ հայեալ ընդ ակամբ ի նաւատորմն ըսկըսանի,
Տարտամ ընդ սէր իւր եղկելի առ վայրն ուր կայր, և ընդ երկիր
Ուր հրաւիրէր ճակատագիր, ահա ընդ օդըս դիցուհին
Սաւառնաթև ամբարձեալ՝ ձըգէ աղեղըն լայնալիր
Ի խուսափելըն զամպովք. պակնու ընդ հրաշըլն կանանին,
Եւ գըրգըռեալ ի զայրոյթ, և ճիչ բարձեալ բոլորեքեան
Յափըշտակեն հուր ի խորոց վառարանաց, կեայք կողոպտեն
Ըզբագինս, տերև և խոլի կուտեն ի հրատ անդըր և ջահս.
Ապերասան մոլի բոց ընդ նըկարէն խելս եղևնեայս,
Ընդ տախտ և ընդ թիակ: Անդէն հրեշտակ հասեալ Եւմել,
Ի գերեզման Անքիսեայ և շուրջ ի կայս ասպարիզին,
Գուժէ զնաւացն այրեցումն. և ընդ երկին միգապատեալ
Հայի որեարն ըզկայծականցըն պըտտուտկեալ ըզթուխ յո[ղ]ձանս:
Իսկ Ասկանի, որ զընթացս հեծելազին վարէր զուարթ,
Այնու թափով ձիավարէ ի ճամբար անդըր դըղըրդեալ,
Զի զնա և ոչ հեծելապետքըն չընչասպառք զըսպել կարեն.
Եւ գոչէ նա. Առ ինե՞ կատաղութիւնդ այդ յեղակարծ.
Ո՞ւր դուք, աւա՜ղ, ո՞ւր դիմէք քաղաքակիցք հէք և թըշուառք,
Ոչ ըզճամբար ոսոխաց արգիւացւոց, և ոչ զըստի.
Այլ ըզյոյս ձեր ի հուր մատնէք, ահաւասիկ ձերդ Ասկանի:
Ասաց, և արկ ըզսաղաւարտն ունայն առ ոտըս կանանւոյն,
Որով ծածկեալ ածէր ի խաղս անդ ըզպատկեր պատերազմի:
Ճեպի և ինքն անդր Ենէաս, ճեպին և գունդքըն տեկրացւոց:
Ահի այսր անդըր կանանին ընդ ծովեզերըս փախըստեայ
Գաղտ ի մայրիս և ի խոռոչս ուրեք ժայռից ապաստանի.
Զիղջ ընդ ոճիրն առնէ տաղտուկ նըմա ըզլոյս, և զգաստացեալ
Ճանաչէ զիւրսըն, և Հերա լեալ ատելի հերքի ի բաց:
Այլ ոչ հըրդեհն ի բաց դընէ զանպարտելին իւր զօրութիւն.
Ընդ տամուկ կաղնեաւըն կեայ խըծուծ, ժայթքէ ծուխ յամրային.

Հուր զողնափայտս ուտէ տակաւ, ժանտն ընդ իրանն ողջոյն խանձի.
Ոչ արեաց օգնէ կորով, և ոչ հեղեալ ուղխք ըմպոց:
Յայնժամ զօձիս պատառեալ բազկատարած կարդայր ըղձիւ
Երկիւղածն Ենէաս. Ամենազօր Արամազդ,
Եթէ չիցեն տրովացիք առհասարակ քեզ ատելիք,
Եւ գթութիւնք քո առաջինք եթէ խնայեն տակաւին, Հայր,
Ի վիշտըս մահացուաց, տուր զերծանել նաւատորմիս
Ի բոցոյ, և անկորուստ պահեա զնեղեալքըս տեւկրացիս,
Կամ ինքնին դու վրէժխնդիր շանթիւքդ ի մահ զիս մատնեսջիր,
Եթէ իցեմ մեղապարտ, և հար աջովդ քով զիս աստ:
Եւ ընդ բանիցն ահա թօնուտ մոլի մրրիկ թուխ անսովոր,
Սարսեն հովիտք և բարձունք որոտընդոստ, հեղեղ պղտոր
Երկին բոլոր թօթափէ, լի թանձրախիտ սեաւ հարաւովք.
Լընուն խելք մինչև ի վեր, և կիսայրեաց եղեւնափայտք
Ողողանին. շիջանի հրրդեհն ի սպառ, և զերծանին
Բաց ի չորից լաստափայտք առհասարակ ի ժանտախտէն:
Բայց ի դառն արկածից անտի հարեալ Հայրն Ենէաս,
Յանհընարին յուզէր ի հոգս՝ այսըր և անդըր տատանեալ,
Տարակուսեալ՝ ի սիկուլեա՞նս անդ ի սահմանս ըղկայ առնուլ,
Ըստահնգանե՞լ ճակատագրին, թէ գնալ յերկիր իտալական:
Յայնժամ Նաւտէս ծերունի, զոր տրիտոննեանըն Պալլասայ
Էր ուսուցեալ, անուանի ի քաջահմուտ գուշակութիւն,
Արար հրաման պատասխանւոյ զըսպառնալեաց սրրտմըտութեան
Մեծի դից, և որ ինչ ճակատագրին պահանջէր կարգ,
Եւ բանիւք այսպիսեօք քաջալերեաց ըզսիրտ Ենեայ.
Աստուածորդիդ Աստղըկան, գնասցուք ըզհետ ճակատագրին
Ուր և ուստի կոչէ ըզմեզ. պատահարաց բախտին ընաւից
Ժուժկալութեամբ պարտ է յաղթել. դարդանացին դիւցազն Ակեստ
Է աստ առ քեզ, ըզնա կալջիր խորհրդակից հաւանըմկեր,
Թող առ նըմա որք ի նաւաց կորուսելոց յաւելուն քեզ,
Եւ որոց ծանր է ձեռնարկ առաջարկեալ գործոյդ մեծի.
Ընտրեա ըզծերս հինօրեայս և զկանանին խումբ ի ծովէ,
Եւ որ հիւանդք իցեն ընդ քեզ, որ վեհերոտք ի վտանգէ.
Թող դոցա վաստակել կանգնել պարիսպս ի յերկրի աստ,
Կոչել յանուն բարեբարին ըզգաստակերտն Ակեստա:
Ի բանից աստի ծերոյն բարեկամի սրրտապընդեալ,
Ի յանձանձանս այնուհետև ընաւից իրացըս պարապէր:
Կառավարէր յայնժամ գիշեր թուխ ընդ բևեռն ի յերկնից,
Եւ ահա Հօրն Անքիսեայ յանկարծակի երևեալ տիպ
Ընդ երկին, ձայնէր առ նա. Ո՛վ քան ըզկեանըս սիրելի



Լեալ ինձ որդեակ մինչդեռ կէի, յուզեալդ յարկածս իլիականս,
Գամ յերեսաց Արամազդայ՝ որ արդ ուրեմն ի գութ շարժեալ
Ցերկնից ի բարձանց՝ արգել ըզհուր նաւատորմիդ.
Լո՛ւր խրրատուց, զոր խոհական ծերունին տայ քեզ Նաւտէս.
Զարիասիրտ ընտրեալ մանկտին ածցես ընդ քեզ յԻտալիա.
Զազգ հուժկու և խըստերախ կայ քեզ նուաճել ի Լատիոն.
Այլ նախ ի կայս Պլուտոնի ընդ ջաւերնեան սանդարամետս
Իջցես որդեակ իմ ի ստորինս, լինել ընդ իս խորհրդակից.
Ոչ տարտարոսք զիս ամպարիշտք և ոչ տխուրք ունին ըստուերք,
Այլ ի զուարթ հոյլս արդարոց և յելիսեան բնակեմ ի դաշտ.
Անդր ըզքեզ, արիւն բազում նախ սևաստև խաշին հեղեալ,
Ածցէ ըզգաստըն Սիբիլլա, անդ ծանիցես զազգ քո ողջոյն,
Եւ ո՞յք տացին քեզ պարիսպք. բարեաւ որդեակ իմ արդ մընա.
Ահա գիշեր խոնաւուտ հատանէ զկէս ասպարիզին,
Անողորմ արև ի յելս հեւոզ ձիովք շընչէ արդ յիս:
Ասաց, և խոյս ետ որպէս ծուխ ի նուրբ այեր. իսկ Ենէաս
Զայնէր ըզհետ. Յո՞ գիմես, յումմէ՞ փախչիս, զի՞ խուսափես,
Ո՞վ ըզքեզ ի գըրկաց աստի մերոց մերժէ ի բաց:
Եւ ընդ բանին արծարծանէ զհուրըն նիրհեալ ընդ գազախն,
Եւ խընկալից առեալ բուրվառ և սուրբ նաշիհ, ըզպերգամեան
Պաշտէ Թերափս, և սպիտակին Եստայ խընկեալ աղաչաւոր
Ըզսրրբութիւնս, անդէն զընկերըս իւր կոչէ, և նախ զԱկեստ,
Եւ զպատգամս Արամազդայ և սիրելւոյ հօրն ըզպատուէրս
Յայտնէ նոցա, և որ ինչ իւր եդեալ խորհուրդ էր ի մըտի
Ածի խորհուրդն հաւանեալ ի գործ, և ոչ Ակեստ հրաժարէ
Ի հրամանացն. արձակի ի քաղաք անդըր կանանին.
Թողուն զորեարըն դըժկամակ, և որոց չէր փոյթ ըզփառաց.
Ինքեանք ըզտախտըս նորոգեն թիավարաց, և զկիսայրեաց
Կողըս լաստից եղևնեայս, կազմեն ըզթիս և ըզպարանս.
Նուազունք ի թիւ, այլ եռանդունք ոգւով ի ճիգըն նահատակք:
Հա՛պա գըծէ Ենէաս ըզքաղաքին վայր արօրով,
Բաշխէ ըզտունս, աստ զԻլիոն, և ըզՏրովա անդ սահմանէ.
Բերկրի տրովիկն Ակեստ ընդ նոր իւր վիճակ, գըտնէ ատեան,
Օրէնըս տայ ծերակուտին. յառնէ մեհեան կիպրականին
Աստղըկան ի գլեառն Երիքս հուպ ի յաստեղըս բարձրաբերձ.
Քուրմ Անքիսեայ շիրմին կարգի, անտառ արհի սրրբազանեալ.
Խընջոյս որեարն ինն օր խըմբէ, մատուցանէ զոհս ի բագինս.
Եւ ահա հողմք քաղցրաշունչք ի դաշտ ըզծով դարձուցանեն;
Եւ թանձրախիտ հարաւ ի խորըս վերըստին առնէ հրաւէր:
Յառնէ լալիւն մեծ շուրջ ի կոր անդ ծովեզեր, յամէ որեարն

Ըզտիւըն զայն և ըզգիշեր զըրկախառնեալ այր ընդ ընկեր .
Նոքին իսկ մարք , և այնոքիկ՝ որոց երբեմն էր աշարկու
Դէմք ծովուն , և սաստ ալեաց թըւէր նոցա դըժոխըմբեր ,
Զու խընդրեն , յօժարք ի կրել զամենայն վիշտըս փախըստեան .
Զորըս զըթածն Ենէաս ողոք բանիւք մըխիթարեալ ,
Ակեստեայ համազգւոյն իւրում յանձնէ արտասուելով :
Երրեակ ապա որթ Երիքսի , և մըրըրկաց զենուլ որոջ
Հրամայէ , և ըզպառանըս լուծանել կարգ ըստ կարգէ .
Ինքըն պըսակ ածեալ ի գլուխ սաղարթագեղ ոստ ձիթենի ,
Եւ բաժակ ի ձեռին կացեալ ի հուսկ առաջ նաւուն ,
Հեղու ծորուն անապակ , ամայ զընդերս յաղի ալիս .
Ցայնժամ վարէ ըզնաւաստըմըն հողմ շընչեալ ի խելաց ,
Հերձուն ըզծով , մըղեն զալիս իւրքն ի նախանձ մըտեալ միմեանց :
Բայց Աստղիկն յուզեալ ի հոգս էարկ բողոք առ Պիսիդոն .
Զայրոյթ Հերայ անողոք , և սիրտ անյագ բուռն ինձ առնեն
Խոնարհել , ով Պիսիդէ , ի խընդըրուած յոր և իցէ .
Ոչ ժամանակ ըզնա և ոչ ամոքէ գութ . ոչ ի Դիայ
Հրամանաց , ոչ ի սաստից ճակատագրին ընկճեալ կասէ .
Ոչ շատացեալ՝ զի դըժընդակ հեռիւ կորոյս ըզփռիւգայնոյ
Ազին քաղաք , և զկայ մընացն ընդ ամենայն վիշտս յածեցոյց ,
Արդ և զաճիւն և զոսկրոտի կորուսելոյն Տրովադայ
Հալածէ . պատճառ ցասմանն այնքանոյ իւր է գիտելի .
Ինքնին գիտես քանի՛ և արդ գիզան ալեաց յարոյց ընդդէմ
Ի յորձանըս Լիբիոյ , վըստահ ի հողմս արևելից ,
Խառնեալ ընդ ամպս ըզծով ի զուր , իշխեալ ի քումըդ պետութեան ,
Ոճիր մեծ . ահա և զմարս Իլիուհիս անարգաբար
Դըրդեաց յայրումըն կայմից , և կորըստեամբ նաւատորմին
Ըստիպեաց թողուլ զընկերս յերկիր օտար . արդ աղաչեմ
Լիցի օրէն մնացորդաց պարզել անքոյթ քև առագաստ ,
Լիցի օրէն ժամանել ի լաւրենտեանըն Տիբերիս ,
Եթէ երբեք արժանահայց խընդրեմ շընորհ , եթէ երբեք
Պարիսպքըն այնոքիկ տացին նոցա ի Պարկայից :
Ցայնժամ կրօնեանըն՝ Նըւաճօղ անդընդոց՝ ետ պատասխանի .
Օրէն է քեզ , ով կիթերեան , ապաստանել ի պետութիւն՝
Ուստի ածարդ ի լոյս , և է իսկ անկ ինձ այդ՝ որ ստէպ ըզսաստ
Եւ զահագին ցասումն երկնից և ըզծովու նըւաճեցի .
Ոչ ինչ ընդհատ և յերկրի ածեալ խընամ քումըդ Ենեայ ,
Վըկայ Քսանթոս և Սիմոյիս . տրովականացն յորժամ գընդաց
Զարհուրելոց ըզհետ մըտեալ՝ մինչ ի պարիսպս անդր ըզնոսա
Մըղեալ զարկոյց Աքիլլէս , ըզբիւրաւորս ի մահ մատնեալ ,



Մինչ հեծէին լի դիականք գետք , և Քսանթ ոչ գըտանէր
Ուղի ի գնացս հոսել ի ծով , ես անդ զիշխեալն ընդ Պելիդեայ
Քաջին ի մարտ՝ անօգնական ի դից ուժով անհաւասար
Զերծուցի զԵնէաս խորանաձև պատեալ ամպով ,
Թէպէտ և էր ինձ ցանկալի զուխտազանցին Տրովադայ
Կործանել ըզպարիսպս , ըզդաստակերտս իմ , ի հիմանց :
Նոյն ինձ և արդ են կամք , ի բաց մերժեա զերկիւղ , հասցէ անքոյթ
Ի նաւակայս Աւերնեայ՝ ուր ըզձանաս . ըզմին եթէ
Խընդրեսցէ ըզկորուսեալն յորձանասոյզ , միոյն եթէ
Փոխան բազմաց տացին կեանք : Այսու բանիւք ըզդիցուհւոյն
Ըսփոփեալ սիրտ , ըլծեաց ի կառս Հայրն ըզձիան , արկ փըրփըրախ
Սանձս ամեհեացն , եթող երյծ զերասանակս համարձակ :
Թըռեաւ թեթև ընդ ծայրս ալեաց ի խաժագոյն բազմեալ ի կառս .
Մէտ ի մէտ խոնարհին ծուփք , ծաւալի հարթ ծով ուռուցիկ
Ընդ որոտող առեղաւ , խուսեն ամպրոպք ի լայն եթեր :
Գան այլակերպք յերևան կէտք անհեթեթք , և ծերունւոյն
Պար Գլաւկեայ , Ինովեանըն Պալեմոն և Տրիտոնք
Երագունք , և զօրք Փորկեայ գան համագունդ . կան յահեկէ
Մելիտէ և Թետիս և օրիորդըն Պանոպէ ,
Նեսէա և Սպիով , Կիմոդոկէ և Թալիա :
Ցայնժամ խրախոյս խընդագին ի տարտամ միտս ազդեալ տակաւ
Հօրըն Ենեայ , հրամայէ կանգնել իսկոյն ըզկայմս ողջոյն ,
Պարզել ըզթևս առագաստից . համայն նաւազըն լուծան
Զըստորոտիցըն պարանս , մերթ զահեկին և մերթ զաջոյ
Ուռուցեալ ծոց , համայն ըզթևսըն շըրջշըրջէ բարձր ի կատար ,
Եւ հողմք աջողակք ըզնաւատորմն առեալ մըղեն :
Պարառաջ ամենեցուն վարէր ըզմեծըն կարաւան
Պալինուր , զնային ըզհետ նորին պատուէր այլք ընկալեալ :
Այն ինչ հասեալ գիշեր նամէտ ի միջակէտ ապարիզին ,
Մինչ նաւաստին յախորժ հանգիստ հեղեալ զանդամս ընդ թիակօք
Կայր ի տախտըս կարծրայինդըս տարածեալ , թեթևաթռիչ
Քուն յաստեղաց բարձանց սահեալ , վանեալ զայեր խաւարային
Եւ հալածեալ զըստուերս ի բաց , դիմէր առ քեզ ով Պալինուր ,
Նիրհ անպարտիդ ածել տըխուր , և նըստեալով ի կերպ Փորբայ
Աստուածն ի խելս անդ ի բարձու , զայս ի շըրթանց հեղոյր բարբառ .
Ո՛վ յասնեանըդ Պալինուր , ալիք ինքնին ածեն ըզնաւս ,
Շընչէ հողմ աջողակ , ժամ արդ պատեհ է հանգըստեան .
Դիր ըզգըլուխ քո , հանգո ըզպարտասեալ աչս ի յերկոց .
Ես ինքնին կացից վայրիկ մի փոխանակ քո ի պաշտօն :
Ում Պալինուր ծանրարթուն աչօք ասէ . Անգիտանա՞լ

Ինձ դու խրատես ըզկերպարան խաղաղ ծովու, և ըզհանդարտ
Ալեաց ըզդէմ, և ի հրէշն յայն վստահել. Իբր է ինձ մարթ
Հաւատալ զԵնէաս խաբերայիցըն հարուից,
Մանաւանդ՝ քանիցս ի դաւ անամպ երկնից խարդաւանեալ:
Զայսոսիկ բարբառելով կայր յեց ի ղեակըն սևեռեալ,
Եւ ոչ թողոյր զայն ի բաց՝ յաստեղս ի վեր ակընկառոյց:
Յայնժամ աստուածն ի ցօղ լեթեան թացեալ ուղէշ, և մըխեալ զայն
Ի ստիգական քնաբեր ալիս, զերկաքանչիւր արտևանամբք
Նորին սըսկէ, և մեղկէ ըզճիգն աչացն յեղյեղելոց:
Այն ինչ թըմբիր յեղակարծ լուծեալ զանդամսըն թուլացոյց,
Ինքն ըզնովաւ յեցեալ՝ մասամբ խելացնաւուն, զեկաւն հանդերձ
Ընկեց ըմնա տապալեալ ի լոյծ ալիս, մինչ նա ընդ վայր
Կարդայր ըստէպ զընկերըս իւր, և թևածեալ ինքըն թըռեաւ
Ի նուրբ այեր. այլ նաւատորմն ոչ ինչ նըւազ խաղայր ընդ ծով
Անվըտանգ, խրախոյս առեալ ի Պեղիդեայ Հօրն ի խոստմանց.
Եւ աւասիկ մերձենայր ի քարաժայռըս Համբարուաց
Անմատչելիս երբեմն յոգումբ ոսկերոտւոց ըսպիտակ,
Ուր հընչէին ժայռք ի բաց յաւէրժ ալեօք կերկերաձայնք:
Իբրև ետես Հայրն Ենէաս ընդ ծուփս ըզլաստըն մոլորեալ
Կորըստեամբ ղեկավարին, ինքն ընդ մըթին ուղղեաց ալիս,
Եւ կարեվէր ընդ արկածըս մըտերմին յոգւոց հանեալ,
Ո՜վ Պալինուր, ով կարի վըստահացեալդ ի ջինջ երկին,
Եւ ի ծով զուարթադէմ, անկցիս անթաղ յերկիր օտար:

---

# ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵՍՅ ՄԱՐՈՆԻ

# ԵՆԷԱԿԱՆԻՆ

## ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Նաւարկեալ Ենէաս յիտալական Կումս, դիմէ 'ի քարայր Դիփոբեայ Սիբիլլայի. և 'ի դիտել զքանդակեալսն 'ի մեհենի անդ Ապողոնի զպատկերս, հրամայի զենուլ զոհս: Եւ 'ի զոհելն հարցանէ զՍիբիլլայն վասն առաջակայիցն նմա իրաց, և վասն իջանելոյ իւրոյ 'ի դժոխս: Երիս ինչս նմա պատասխանէ Սիբիլլայն. զի ծանր 'ի վերայ կայր նմա պատերազմ յիտալացւոց. զի ուղէշ ոսկի դժուարին յոյժ առ 'ի գիւտ՝ կարեւոր էր նմա յիջանելն 'ի դժոխս. և զի մի ոմն 'ի սիրելեացն իւրոց զրաւեալ էր առ ծովեզերբն 'ի կենաց: Դառնայ Ենէաս առ իւրսն, և գտանէ զՄիսենոս մեռեալ. և 'ի հարկանել մայրիս յանտառէն առ 'ի փայտակոյտ խարոյկ մեռելոյն, աղաւնիք՝ հաւք սիրելիք Աստղկան՝ 'ի ծառն ոսկի առաջնորդեն Ենեայ: Կատարեալ զյուղարկաւորութիւնն, և զիշերապաշտօն զոհիւք յաւերնեան անձաւին զսանդարամետական պատուեալ զդիս, 'ի դժոխս առաջնորդութեամբ Սիբիլլային իջանէ: Անդ տեսանէ նախ հրէշս այլակերպս յանդաստակին. ապա առ սանդարամետական գետեզերբքն զստուերս մեռելոց 'ի ներքս անդր դիմելոց, ընդ որս և զՊրոնտեայն և զՊալինուրայ: Անդ 'ի նոյն գետ տեսանէ զՔարոն նաւավար նոցին, և ողոքէ զնա ոսկի ոստովն՝ 'ի հակառակել նորա 'ի մուտսն: Ապա տեսանէ զԿերբեր շուն 'ի սեամս անդ, զոր և թմբեցուցանէ՝ արկեալ նմա ըլիթ: Եւ ապա 'ի ներքս անդ ուրոյն յիւրաքանչիւր օթեւանս բնակեալ, նախ զմանկունս, ապա զտարապարտ սպանեալս, ապա զանձնասպանս, ապա զտարփաւորս, ընդ որս և զԴիդոն. ապա զպատերազմողս, ընդ որս և զԴիփոբոս, և զայլ տրովացի և զյոյն զօրավարս: Յետ այսորիկ տեսանէ հեռի 'ի ձախմէ ըզբանտ ամպարշտաց պատապարտելոց. և ոչ կարացեալ մտանել առ նոսա, ուսանի 'ի Սիբիլլայէն զբազմաց բազմօրինակ պատուհաս. զՀսկայիցն, զՍալմոնեայ, զԼափիթայցն, զԻքսիոնի, զԹեսեայ, այլովքն հանդերձ: Եւ ապա յաջ կոյս յառաջ խաղացեալ, ժամանէ յԷլիւսեան 'ի դաշտս. ուր դնեալ զբազուկն 'ի դիւցազանց, և ստուգեալ 'ի Մուսէոսէ զպայման տեղւոյն և զբնակչացն և զԱնքիսեայ, նմին ինքեան Անքիսեայ պատահէ: Սա բազում ինչ նմա զբնութենէ հոգւոց ըստ պիթագորական աղանդոյն ուսման ճառէ, և զմի մի յորդւոց և 'ի թոռանց նորա մինչև ցՕգոստոս լուսափառս յանդիման առնէ: Ենեայ տեսեալ անդ և հետազօտեալ զամենայն, ընդ փղոսկրեայ դուռն Քնոյ դառնայ անդրէն առ իւրսն, և 'ի կումական ափանց անտի նաւարկէ 'ի Կայետա:

# ԵՆԷԱԿԱՆ

## ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

Այսպէս ողբայր Ենէաս, և սանձարձակ յառաջ վարէր
Ըզնաւատորմըն՝ մինչև գայր ի ծովեզերբս Եւբիոյ
Ի կումականս հասանէր. շրջեն նաւագք զառաջս ի ծով,
Խարիսխ ըզլաստըս կայկայէ կարծըր ժանեօք, ցանկապատեն
Խելք ըզծովափըն կորք, ոստնու կազմ և պատրաստ գունդ մանկըտւոյ
Ցերեկորնեանն ի ցամաք. կէսք ըզսերմանս հըրոյ խընդրեն
Ի յերակունըս կայծքարի, այլք զերեոց հատանեն տունս
Ըզթանձրախիտ մայրիս, և զգետս հետազօտեալ ածեն ի յայտ:
Բայց երկիւղածն Ենէաս բարձր ի դըղեակ անդըր դիմէ,
Ուր Ապոլոն տայ պատգամ, ի դարիրայն զարհուրելույ
Սիբիլլային, ի քարայրըն լայնատարր, ուր ներշընչէ
Ի նա գուշակըն դելեան հոգի և միտըս վեհիմաստ,
Եւ զհանդերձեալս առնէ ազդ. և ահա անդըր մըտանեն
Յանտառն անահտական և ի մեհեանն ոսկիակուռ:
Դեդալոս ի սահմանացըն Մինովայ փախըստական,
Երագաթռիչ փետրովք իշխեալ ըստ զըրուցաց թևակոխել
Ընդ երկին, ի սառնապատըն Սայլ նաւեաց փախըստական
Եւ թևածեալ ապա եկաց ըզքաղկիսեանըն դըղեկաւ.
Եւ ի դառնալ իւրում այսրէն՝ քեզ, ով Փեբէ, մատոյց ի նուէր
Ըզթիակըս թևոցն, և հոյակապ կանգնեաց մեհեան.
Է ի դրունս անդ քանդակեալ մահ Անդրոգեայ, և Կեկրոպեանք
Պարտաւորեալք ի տալ, եղո՜ւկ, ամի ամի ուստերց եօթանց
Իրանս ի տոյժ. կայ վիճակացն արկանելոյ մերձ անդ սափոր:
Գնոսականն ի հանդիպոյ յառնէ կանգնի երկիր ընդ ծով.
Անդ ընդ ցըլոյն սէր անագգակ, և ենթադրեալ Պասիփայէ

Ընդ դաւով, և ազգախառն երկկերպ զաւակըն մարդացուլ
Ժանտաժուտ Հարսանեացն արձանացեալ՝ ի յիշատակ:
Ընդ և տագնապ ձեռակերտին և մոլորումն անուղղայ,
Ուր Դեդալ ողորմեալ առ կաթոգին սէր դըշխոյին,
Լուծ զաղամող պատրանս յարկին՝ ուղղեալ ըզկոյր հետըս թելիւ:
Ի հրաշագան քանդակին մեծ իսկ և քո գրաւեալ էր մասն
Իկարէ, եթէ ներէր կըսկիծ զարկածոյն նըկարել.
Երկիցըս գուն գործեաց յոսկւոջ, երկիցս անկան ձեռքն հայրենիք:
Զև զամենայնըն նըկատեալ նոցա, եհաս ահա Աքատ՝
Զոր էր յըղեալ Ենէասայ յառաջագոյն, և Դիփոբէ
Դուստըր Գլաւկեայ, եռուղենւոյն քուրմ Անահտայ և Փեբեայ,
Զայս առ արքայն բերեալ պատգամ. Չէ ժամանակդ շըրջելոյ
Ի զընին տեսարանաց. փութա զեն օն եօթըն զուարակ
Ի տըրմուղ անդէոյն, և 'ստ օրինի զառն եօթն ընտիր:
Զայս քըրմուհին տըւեալ պատուէր Ենէասայ, կոչէ ապա
Բարձր ի մեհեանն ըզտևկրեանս. և ոչ յամեն մատուցանել
Պաշտօնեայք ըզպատուիրեալս ի քըրմուհւոյն զոհս ի բագին:
Խորի ի ձև անձաւոյ եւբիական քարալերին
Կող ահագին. ածեն ի ներքս անդր ընդարձակ մուտք հարիւրեակ,
Դըրունք հարիւր, ընդ որս արտաքըս նոյնքանիք դիմեն բարբառք
Ըզհրամանըն բերելով պատասխանւոյ Սիբիլլային:
Ի հասանել նոցա ի սեամս անդր օրիորդըն ձայնարկէր.
Ահա նա ինքն, ահա աստուած, ժամ է ձեզ օն արդ խընդրելոյ
Ըզհանդերձեալս: Եւ իբրև զայս առ դուրս այրին կայր բարբառէր,
Յանկարծակի դէմքն այլայլեալ, գոյն երեսացն յեղաշըրջէր,
Վարսք ըզգըլխովըն խոզանեալ, սիրտն ուռուցիկ յաւեն սաստիկ,
Եւ կուրծքն ի հև, երևելով ինքըն քան զինքըն վեհագոյն
Ի մօտել դիցն աստուածաբեալ, ոչ ևս ի տիպ մահկանացուի,
Զայս տայր պատգամ. Զի՞ դադարես ո՜ տրովացիդ դու Ենէաս,
Զի՞ դադարես, ընդէ՞ր ոչ ուխտ և պաղատանս մատուցանես.
Ոչ բացցին յառաջ քան զայդ՝ լայնք անձաւոյն ահարկուի մուտք:
Զայս ասացեալ՝ լռեաց, և ցուրտ ընդ կարծր ոսկերըս տևկրացւոց
Գընայր սարսուռ. և ի խորոց սըրտին հեղոյր արքայն աղերս.
Որ գըթացարըդ միշտ ի վիշտս անհընարինըս Տրովադայ,
Ո՛վ Ապոլոն, և զդարդանիկ նետըս Պարեայ և ըզբազուկս
Ուղղեցեր ի գարշապար Էակիդեայ. քև ընդ այնքան
Անցի ընդ ծով՝ որ զերկիր մեծ շըրջապատեն, և ընդ խըրուտս
Առ խարխափ, և ընդ ազինըս Մասիլաց հեռաստանեայս:
Արդ ուրեմն ահա հասաք փախըստէին Իտալիոյ
Ի ծովափունս. ցայս վայր ըզկայ առցեն արկածք տրովացւոց:



Արժան է արդ խնայել և ձեզ, գըթալ ի զրոհ պերգամեան,
Դիք համօրէն և դիցուհիք, ոյց Իլիոն և դարդանեան
Փառք մեծ կացին հակառակ. և դու գուշակըդ սըրբազան
Հանդերձելոցըն կանխագէտ, տուր կայս տևկրեանց ի Լատիոն
Եւ ծովածուփ դից նոցա և թերափոյ վըտարանդեաց
Տրովադայ. ոչ անարժանս հայցեմ իմում ճակատագրի:
Ընդ յորձաքար վիմէ մեհեանս յանժամ Փեբեայ և Անահտայ
Կառուցից, կարգեցից տօնըս տարեկանս յանուն Փեբեայ.
Կացցէ և քեզ վեհավայր ի պետութեան մերում դաբիր.
Ընդ ըզպատգամըս քո ծանեայց և ըզգաղտնիս ճակատագրին
Ազգեալս ի քէն իմում զրոհի, ո՜վ սըրբուհի, և պաշտօնեայս
Նըւիրեցից քեզ ընտիրս. բայց միայն զայս խնդրեմ ի քէն,
Մի՛ գրեր ըզտաղս ի տերևս, գուցէ թռուցեալ աղմըկեսցին՝
Թեթև հողմոց լեալ խաղալիկ. այլ դու ինքնին երգեա զնոսին:
Զայս աղօթիցն արար վախճան. սակայն գուշակն աստուածաբեալ
Դեռևս անսաստ Ապոլոնի՝ մոլէր յայրին, հնարէր վանել
Ի սըրտէ զաստուածն արհի, այլ առաւել ես Ապոլոն
Ըզխեռ շըրթունսըն նըւաճէր՝ ըստիպելով զայնս ի բարբառ:
Եւ ահագինքն ահա ինքնին բացան դըրունք հարիւրք այրին,
Բերելով ընդ այերս ըզգուշակին պատգամս ի դուրս.
Որ ի ծանունցըն վըտանգաց զերծար ընդ ծով, ծանրագոյնք
Քեզ ընդ ցամաք մընան արկածք. ժամանեսցեն դարդանացիք
Ի սահմանըս Լաւինեայ, թող անդր ի բաց զահ ի սըրտէ.
Այլ ցանկալի լիցի նոցա թէ չէր իսկ լեալ անդըր ժաման.
Պատերազմունըս տեսանեմ, պատերազմունըս սոսկալիս,
Եւ ի հեղեղ արեան ներկեալ ի փըրփրախառն ըզՏիբերիս.
Ոչ Սիմոյիս քեզ, ոչ Քըսանթ, ոչ դորացիք պակասեսցեն
Քեզ բանակք. միւս այլ մընայ քեզ Աքիլլէս ի Լատիոն,
Ի դիցուհւոյ ծընեալ և ինքըն նոյնպէս, և Օդոյի
Ոխերիմըն տևկրացւոց մերձ ամենայն ուրեք կացցէ.
Ե՞րբ դու յարկածս անդ ի դառինս և զո՞րս յազգաց իտալացւոց,
Զո՞րս ի քաղաքաց ոչ կարդայցես աղաչաւոր:
Այնքանեաց առիթ չարեաց լիցի դարձեալ հարսն հիւրընկալ
Տևկրացւոց. լիցին դարձեալ և եկամուտ հարսանիք:
Մի՛ ի չարեացըն վըհատիր, այլ մանաւանդ խիզախեա
Քան զոր ներէ քեզ բախտ քոյին. բացցի ուղի քեզ փըրկութեան
Նախ ուստի ոչըն կարծես հելլենական ի քաղաքէ:
Զայսոսիկ կումականըն Սիբիլլա ի դաբիրայն
Եղերերգեաց, ըզսոսկալի գաղտնիս յայրէն որոտալով,
Պատեալ զըստոյգն ի մըռայլ, այնպէս փեբեայ ըզմոլելոյն

Կոծեալ ըզսանձ, սոյնպէս ըզնա մըտրակ ի կուշտ հըպատակեալ:
Իբրև ըզկոյս Սիբիլլային առեալ աւիւն՝ շըրթունքն անսասանք
Զիջանէին, այսպէս ըսկիզբն արար դիւցազնըն Ենէաս.
Ոչ նոր ինչ ինձ և յեղակարծ դէմք արկածիցըդ պատահեն
Ո՛վ կուսան, խորհէի զամենայնէ կանխածաւոր:
Մի՛ ինչ խընդիր է ինձ ի քէն. աստ դըժոխոց Թագաւորին
Համբաւի դուռն և լիճ մըթին Ախերոնեան ալեօքն յորդեալ,
Լիցի գըտնալ ինձ սիրելւոյ հօրն իմոյ յայց, լեր ուղեցոյց,
Բաց ինձ ըզդրունսըդ սըրբազանս, տեսից ըզդէմըսն հայրենի.
Բարձեալ ի յուս ընդ մէջ բոցոյ և թըշնամեաց ածի ըզնա
Զերծ ի բիւրուց տեղացելոց յետուստ նետից ապրեցուցեալ.
Ծով ի ծովէ ինքն ամենայն ուրեք եղև ինձ ուղեկից,
Կրելով զերկնից և զալեաց ի սպառ ըզսաստ ըսպառնալեաց,
Անզօրն ի վեր քան ըզկար քան ըզպայման ծերոցն ալեաց.
Ինքն ինձ պատուէր ետ՝ յաղերս ի սեամըս քո առ քեզ դիմել.
Արդ աղաչեմ, սըրբուհի, խնայեա ի ծնօղն և ի յորդի,
Զի դու կարես զամենայն, և ոչ ի զուր ինչ Եկատէ
Աւերնեան անտառին կացոյց ըզքեզ շահապետ:
Եթէ զհարսինն Որփէոս վերակոչել կարաց զըստուեր,
Ի Թրակացին վըստահ ի քնար և ի լարիցըն դաշնակ,
Եթէ զեղբայր իւր ապրեցոյց փոխըն մահուամբ Պոլիտեւկէս,
Եւ դարձադարձ ընդ նոյն ուղի առնէ քանիցըս երթևեկ.
Զի՞ զԹէսէոս, զի՞ և ըզմեծըն յիշեցից քեզ զԱլկիդէս,
Ի վեհէն Արամազդայ և զրոհըս մեր զայ իջանէ:
Զայս Ենէաս, բուռըն հարեալ ըզսեղանոյն, հեղոյր աղերս.
Յայնժամ դուշակն էառ խօսել. Աստուածորդիդ դու տրովացի
Անքիսեանըդ զաւակ, դիւրին են էջք ի յԱւերնոն,
Պղուտեայ դրունք նըսեմաստուերք բաց են ըզցայգ և ըզցերեկ.
Այլ յետս անտի առնել դարձ, խոյս ի վերին տալ ի յայերս,
Այս է գործ, աստ է վաստակ. Նուազունք ոմանք ի դիւցազանց,
Արդարոյն Արամազդայ եղեալ հաճոյ, կամ զօրս ամբարձ
Եռանդըն լաւութեան յաստեղս ի վեր, կարացին զայդ:
Ըզմիջավայրն առհասարակ ծածկեն անտառք, և Կոկիտոն
Սաղապաճեմ ի պարոյրըս Թըխատիպըս շուրջ պատի.
Այլ եթէ սէր ի քեզ այդքան, և այդքան իղձ եթէ իցէ
Երկիցս ընդ ըստիւգեան լիճ նաւալիդ լինելոյ,
Երկիցս ըզԹուխ տարտարոս տեսանելոյ, և յանձն առնուլ
Զընդունայնըդ քեզ վաստակ իցէ հաճոյ, ի միտ առ արդ
Որ ինչ քեզ պարտ է նախ գործել. ուղէշ ոսկի սաղարթաւոր,
Եւ ճապուկ, որպէս պատմեն, ծածկի ի թաւ ծառ սըրբազան



Դըժոխային Պերսեփոնեայ յանտառախիտ մայրիս անտես.
Խաւարային ըզնովաւ հովտաց ըստուերք շըրջափակեն,
Եւ ոչ շնորհի ի ստորերկրեայս անդր իջանել ումեք, թէ ոչ
Զոսկեհերըն զայն ուղէշ նախ ի ծառոյ անտի կորզեալ.
Զայս գեղանին Պերսեփոնէ ածել նըւէր իւր հրամայէ,
Ընդ կորզելոյն միւս այլ ոստ ոսկեղինիկ վերընձիւղէ:
Համպա ի վեր զաչս ի խընդիր յածեալ ի գիւտ, արկ զայն ի խիլ
Ըստ հրամանին, զի կամակար քեզ և հեշտեաւ տացէ տեղի,
Եթէ կոչէն ճակատագրին ըզքեզ հրամանք. ապա թէ ոչ,
Ոչ զօրութեամբ յաղթել կարես, և ոչ կարծու զայն երկաթով
Ի բաց կորզել. և թո՛ղ զայս, ահա դիակըն մըտերմիդ
Անկեալ դընի անշընչացեալ, և դու, աւա՜ղ, անգիտանաս.
Եւ զնաւատորմըն բոլոր ահա դիակն ապականէ,
Մինչ դու առ սեամըս մեր կացեալ՝ խընդրես պատգամ աստ ի մէնջ.
Ա՛ծ ի հանգիստ զինքըն կանխաւ և ամփոփեա ի շիրմի,
Մատո նախընծայ ըզխաշըն սեաւ ի քաւութիւն,
Ապա զանտառս ըստիւգեանս և զանմատոյցսըն կենդանեաց
Տեսցես սահմանս: Ասաց և զկոյս էառ դուշակն անբարբառ:
Յայնժամ մեկնեալ Ենէաս ի քարայրէն տըխուր դիմօք
Աչք ի խոնարհ գընայր՝ ընդ միտս ըզպատահարսըն մըթագինս
Յեղյեղելով. ընդ նըմա և մըտերիմն իւր Աքատէս
Հանդոյն ի հոգըս մըտայոյզ ուղեկցելով զուգահետ,
Երկարագոյն նըւագօք՝ ճառս ընդ իրեարս արկեալ պէսպէս,
Թէ զո՞ յիւրոցն անշընչացեալ, և զո՞յր դիակըն տալ հողոյ
Հարցուկն ասէր: Այլ ի ծովեզր անդր ի ցամաք իբրև հասին,
Տեսանեն անդ ըզՄիսեն աղիողորմ մահու անկեալ.
ԸզՄիսեն եւոլեան գեր ի վերոյ ամենեցուն
Ի խրախուսել պըղընձեաւ զօրեարն ի մարտ, և ի վառել
Երգով զԱրէս. այն որ մեծին Հեկտորի լեալ զուգոստատ,
Ճեմ ընդ նըմա ընդ ռազմս առնոյր հըզօր ի փող և ի նիզակ:
Այն ինչ ապա Աքիլլէս յաղթող եղեալ՝ եարկ ըզնա
Յարեւէ, դարդանացւոյն Ենեայ դիւցազնըն կորովի
Աջակցեալ, ոչ քան ըզնա ստորնագունի եկաց համհարզ.
Այլ մինչ եհար անդ անըզգոյշ ըզփողաւորըն կոնքեղ
Ցանկարծակի ընդ ծով, և ձայն ի պատերազմ ետ զից երգով,
Շարժեալ Տրիտոն նախանձընդդէմ, թէ հաւատալ իցէ արժան,
Ի մէջ ժայռից ի փըրփրադեզ ալիս ըզնա խորասուզեաց:
Յայնժամ ի կոծ մեծ ըզնովաւ բոլորեքեան շուրջ պար առեալ,
Հեծեծէին. և մանաւանդ բարեպաշտիկն Ենէաս:
Ապա զպատուէր Սիբիլլային փութան լընուլ անյապաղ.

Ճեպի ոտեարն, այր քան զընկեր առնեն ի փոյթ ելեել,
Կանգնել բազկին ըզփայտակոյտըն գերեզման յեթեր ի վեր.
Դիմեն յանտառ վաղընջական ի խոր դադարս երէոց.
Տապալին սոճք, հընչեն հարեալ ի տապարաց կոճեղք հացեայք
Եւ սըղոցեայք. սեպք ըզկաղնեաց ճեղքեն ըզբունըս դիւրահերձ.
Յաղթք ի լերանց թաւալին որնիք, և ինքն իսկ Ենէաս
Խրախոյս իւրոցըն տայ՝ դիմեալ նախկին ի գործ հանդէտ զինուք.
Եւ զայսոսիկ տըխուր ի սիրտ իւր յեղյեղեալ, և յառեալ
Ի յանտառ անդր անոլորտ, այսպէս ի ձայն հեզու աղերս.
Յանկարծ ուղէշն այն ոսկեղէն մեզ ընդ առաջ աստ պատահէր
Ի մեծի անտառիս. զի զամենայն ինչ, ով Միսեն,
Աւա՜ղ, կարի ճըշմարտիւ գուշակն ըզքեզ նախապատմեաց:
Եւ ընդ բանին զոյգ աղաւնեաց յանկարծ հանդէպ աչաց նորին
Թռուցեալ եկեալ ընդ երկին, դադարեցին ի դալարուոջ:
Յայնժամ դիւցազնըն մեծ ըզհաւսըն ծանուցեալ ըզմայրենիս,
Բերկրալից մատոյց աղերս. Ո՜վ դուք, ընդ օդըս թեւածեալ՝
Դէպ ուղիղ լերուք յանտառն ինձ ուղեցոյց, ուր մեծագին
Ուղէշն այն ծածկէ զերկիրն արգասաւոր. և մի՛ դու, մայր
Դիցուհի, լըքեալ թողուր զիս յայսպիսում տարակուսի:
Ասաց և զկայ առեալ դիտէր զինչ նըշանակ հաւքըն տային,
Ո՛ւր դէմ եդեալ ընթանային. նոքա անդէն ի սկըզբան
Ճարակաւորք ճախր ընդ արօտն առեալ գնային ցոր վայր զօրէն
Բիբք կորովիք. այլ Աւերնեայ ժահահոտին մօտ ի բերան
Ամբարձան երագաթեւ, և անդր ի վայրըն ցանկալի
Սահեալ ընդ նուրբ օդս ի վերայ ծառոյն հանգեան երկոքեան,
Ուստի ոսկւոյն փայլ երփնագոյն ի մէջ կողերցըն շողշողէր,
Որպէս յաճախ սընձի յանտառս ի ձմերային սառնամանիս,
Նոր տերեւովք փըթթինազարդ ոչ յիւրայինն ի ծառ բընիկ,
Ըզքըրքմագոյն բարունակս ածէ զողորկ շուրջ ըզկոճեղբ.
Նոյն էր տեսիլ տերեւելոյ ոսկւոյն ի թաւըն սըղոցի.
Ըզնոյն թիթեղն այն ի շունչ մեղմոյ օդոյ տայր ճարճատիւն:
Զեռն Ենէաս արկ իսկոյն ի յամր ուղէշն, և անձկանօք
Խըլեալ զայն՝ էած ի յարկ կանխագուշակ Սիբիլլային:
Բայց տեւկրացիք ի ծովափան անդ անդադար աշխարէին
ԸզՄիսեն, ըսպաս յետին տըխուր դիոյն մատուցանել.
Կառուցանեն նախ խարոյկ՝ բարձր ի պարարտ ոստոց մախերց
Եւ ի կաղնեաց հարելոց, ցանկեն զայն շուրջ սեաւ սաղարթիւք,
Կանգնեն նոճեար եղերական անդ զառաջեաւ, և զարդարեն
Փայլուն զինուք ի վերոյ. կէսք ջերաջերմ վիժակըս ջուրց
Եւ յորձնեռանդն ի բոց անօթըս պըղընձիս առեալ ածեն



Առ ի լուանալ ըզցուրտ դիականըն, և իւղովք օծանել զայն.
Ալունի կոծ մեծ, և ի մահիճըս զողբացեալըն հանգուցանեն.
Ծիրանիս ըզնովաւ և ըզսովոր ծածկոյթս արկեալ.
Այլք ընդ ծանու դագաղօքն ուս ի ներքոյ մատուցանեն
Հարկանել ըսպաս տըխուր, և ըստ բարուց հաւուց նախնեաց
Ի յետս ընդդէմ դարձուցեալ ըզդէմս՝ ունին ջահ ի ներքոյ.
Ծըխեն կուտեալ նըւէրք խընկոց, ճենճեր և ձէթ հեղեալ տաշտիւք:
Եւ իբրեւ քոցըն շիջանէր և ննկանէր աճիւնն ի վայր,
Գինեաւ նըշխարքըն ոռոգէին և ծարաւուտքըն կայծակունք.
Եւ ի սափոր պըղընձի քաղէր զոսկերսըն Քորինէ.
Նոյն ինքն երիցըս զընկերօքըն շուրջ եկեալ սըրսկէր մըշտկաւ
Ի պըտղաբեր ձիթենւոյ՝ ջուր սըրբարար ի ցօղ նըրբին,
Քաւել զորեարն, և ըզվերջինսըն լռելի առնէր բարբառս:
Իսկ երկիւղածն Ենէաս կանգնեաց շիրիմ բարձրակառոյց,
Եդեալ ի վերայ ըզզէն և զթի առնըն և զփող,
Առ երկնաբերձ լերին՝ որ արդ Միսեն յանուն նորին կոչի,
Եւ կոչեսցի, արձանացեալ ի յիշատակ յաւերժական:
Ճեպի ապա ի կատարել ըզպատուիրան Սիբիլլային.
Անդընդախոր աչագին ապառաժուտ լայնաբերան
Էր անդ անձաւ, նըսեմաստուեր մայրեօք պատեալ և թուխ լըճիւ,
Ուր ոչ մի ի հաւուց կարէր թռանել անվտանգ,
Շունչ ի մըթին որկորոյն այնպիսի ժանտ վերածըխէր
Ի խորանարդըն վերին, ուստի Անհաւ կոչեն զայն Յոյնք:
Աստ քըրմուհին զուարակըս չորս նախ սեւաստեբս կացուցեալ,
Ի ճակատըս նոցին շըրջեաց ըզձեռն հեղ անապակ.
Եւ ինուէր նախընծայ հատեալ ըզծայրս եղջերամէջ
Ըստեւոցն, արկեալ ի հուրըն սըրբազան, կարդայր զՀեկատ
Ըզհըզօրն յերկինս ի վեր, և ի դըժոխս հըզօրն ի վայր:
Այլք ի ներքուստ մըխեն սուսեր, և ժողովեն զեղկն ապաժոյժ
Ի բաժակ. ինքն Ենէաս զենու որոջ սեւագիսակ
Մօրն Եւմենեայց, և քեռ նորին մեծի, և քեզ Պերսեփոնէ
Արջառ ամուլ. ապա ստիգեան թագաւորին կատարելով
Յայգապաշտօն, ածէ զըոցով ողջակիզէ ցուլս ի բագնի,
Զէթ պարարտ հեղեալ զընդերըքն այրեցելովք, և մըռընչէր
Ահա երկիր ընդ ոտիւքն ի սկըզբնածագ լոյս արփենի,
Գագաթունք մայրեաց շարժեալ տատանէին, և կաղկանձել
Ի ստուերս անդ շանց թըւէր ի ժամ մերձենալոյ աստուածուհւոյն:
Յայնժամ հարցուկն աղաղակեաց. Ի բաց կացէք, ո՛ն անդր ի բաց
Կացէք անսուրբք, մեկնեցարուք բացէ ի բաց յանտառէս.
Իսկ դու անկիր սուսերամերկ ի ճանապարհ, ով Ենէաս.

Արիութեան ժամ է արդ, արդ քաջասիրտ խրախուսանաց :
Եւ ընդ բանին էջ զայրագին ի քարանձաւ անդըր խորին :
Նա անվեհեր ի ճեմ ըզհետ առաջնորդին զուգահետէր :
Ո՛վ որ հոգւոց էքդ իշխեցող դիք, ո՛վ ըստուերք, ո՛վ Թոհ և բոհ.
Ո՛ Փլեգեթոն, ո՛վ վայրք լռամունք շուրջանակի լայնածաւալք,
Լիցի օրէն ինձ ըզլըւեալս իմ բարբառել, և հրամանաւ
Ձերով յայտնել զիրըս ծածկեալըս միգապատ ի խորս երկրի :
Գնային ի մենաւորըն գիշերի աղջամղջինք
Ընդ սին սահման ամայիս ընդ արքունիսըն Պլուտոնի.
Որպէս այն որ ընդ աղօտ լուսնով ուղի է ընդ անտառ
Ի լոյս աններշղյլ՝ յորժամ միգաւ ինքն Արամազդ
Պատէ զերկին, և Թուխ գիշեր յէից ի բաց բառնայ ըզգոյն :
Ի նախադրունս անդ Որկեայ՝ կան որջացեալ յանդաստակի
Ողբ, և հեռ քինախընդիր. բնակեն տըժգոյն ախտք և տըխուր
Ծերութիւն, երկիւղ և քաղց չարահրապոյր, և վատշըւէր
Կարօտութիւն, ահարկուք ի տեսանել. մահ և երկունք,
Ազգակից մահուն Թըմբիր, և բերկրութիւն ժանտ ընդ չարիս.
Իսկ ի սեամս հանդիպակայս՝ պատերազմունք արիւնարբուք,
Երկաթիք Եւմենեայց տունք, և խելագարըն գըժտութիւն՝
Հերքն օձակերպք, ժապաւինօք զըսպեալ յարիւն Թաթաւելովք :
Անդ նըշդարի մեծ հովանուտ տարածէ զոստըս վաղեմիս,
Երազոց անէից համբաւէ վայրն այն կայեան,
Մէն միոյ ընդ տերեւովք իւրաքանչիւր կըռուելոյ :
Եւ այլ բազում հըրէշք ի դրունս անդ կերպ ի կերպ խառնագազանք
Ըզկայ առնուն, յուշկապարիկք և ըՍկիւլայք երկկերպիկք,
Բրիարեւս հարիւրաձեռն, և ի շըչիւն զարհուրելի
Լեռնեայն վիշապ, և Քիմերըն բոցաշունչ, վըշկապարիկ,
Եւ Արպեայք, և կերպարանք ըստուերակերպք եռանձնեայք :
Անդ Ենէաս ըմբըռնեալ յանկարծակի զարհուրանօք,
Ըզսուր սայր սուսերի յարձակելոցն ունէր ընդդէմ.
Եւ եթէ ոչ ուղեկիցն իմաստուհի ազդէր նըմա
Զի Թափառող ընդ սին դիմօք էին հոգիք նուրբք անմարմինք,
Ջուր ի վերայ յարձակէր՝ սուսերբ զըստուերսըն հարկանել :
Աստի ստորէջք են ի յալիս դըժոխայնոյն Աքերոնի.
Աստ յորձանք և պըտոյտք անդընդախորք պըղտորք ի տիղմ
Եռացեալ, զաւազակոյտն ողջոյն ժայթքեն ի Կոկիտոն :
Պահակ ի ջուրս անդ և գետոյն զարհուրելի նաւավար
Քարոն տըժգոյն մահատիպ, ալիք ի կզակ իւր Թաւք խըռուեալք,
Աչք հրացայտք, աղտեղի զօդեալ զուասլքն ի կախ գըրդլեակ,
Մըղէ ըզլաստըն ձողով, և զառագաստըն շըրջըբըջէ,



Երկաթագոյն մակուկաւ կրելով զըստուերըս մեռելոց,
Ծեր զառամեալ, այլ ծերութիւն որպէս ըզդից ժիր և առոյգ :
Խըռնէր ամբոխ բազմութեան ի գետեզերս անդըր խուժեալ,
Արք և կանայք և կենազրաւ մարմինք արի դիւցազանց,
Տըղայք և բամք օրիորդաց չև յառագաստ մատուցելոց,
Եւ պատանիք դէմ յանդիման ծնողացն եդեալք ի խարուկի,
Բազմահոյլք որչափ տերեւք անկեալ յանտառս Թօթափին
Ի նախկին ցուրտ աշնայնոյ, և որչափ հաւք երամովին
Ի խորոցանդընդոց խուռըն դիմեն ի ծովեզերս,
Յորժամ ձըմեռն ի ծովէ վարէ զնոսա ի վայր ջերին :
Բազկատարածք պաղատէին հանդիպակայ ափանն ըղձիւք
Կանխել քան զայլս ընդ յորձանուտն ի չու, յայնկոյս անցանել.
Այլ անողորմըն նաւաստի մերթ ըզսոսա մերթ զնոսա
Ընկալեալ, զայլըս մերժէր ի գետափնէ անտի ի բաց :
Յայնժամ ապշեալ Ենէաս, և ընդ ամբոխն ի գութ շարժեալ,
Ասէ. Ասա ո՛վ կուսան, ընդէ՞ր խըռնի ամբոխդ ի գետ,
Եւ զի՞նչ հոգիքըդ պաղատին. էր աղագաւ կէսք ընկըրկին
Յափանց գետոյդ, այլք Թիակօք հերձուն ըզհունըդ տըժգոյն :
Որում պառաւըն քըրմուհի պատասխանի ետ հակի՛րճ.
Դիւցազն իսկապէս, ո՛վ Անքիսեանըդ զաւակ,
Դու զԿոկիտեանըն տեսանես լի՛ճ յորձախոր, և ըզճա՛հի՛ճն
Ստիւգեան՝ յոր դիք իսկ խիթան երդնուլ, և զօրութեան
Նորա դըրժել. այդ ամենայն, զոր տեսանես ամբոխ բազում,
Են չըքաւորք և անԹաղք, և նաւավարդ այդ է Քարոն.
Այդոքիկ, զորըս բարձեալ տանին ալիք, են ոգիք
Թաղելոց. զի չէ օրէն ընդ գետեզերսըդ սոսկալիս
Եւ ընդ յորձանսըդ կարկաջունըս նաւարկել ի յայնկոյս,
Որոց չիցէ ոսկերացն առեալ ի կայս իւրեանց հանգիստ.
Թափառականք ի գետափունս աստ շուրջ յածին ամս հարիւրեակ,
Ապա ուրեմն ընկալեալք ընդ ցանկալին նաւեն ընդ լի՛ճ :
Կառեաւ զաւակն Անքիսեան եկաց ի միտըս բազմայոյզ
Գըթացեալ ի սըրտէ ընդ դըժընդակ նոցին նըսէհ.
Եւս տըխուրս անդ ի սպասուց մահու զըրկեալ ըզԼեւկասպիս
Եւ զՈրոնտ առաջնորդ լիկիական նաւատորմին,
Զորս ի նաւելն ի Տրովադայ հարաւահողմն ի միասին
Ըզնաւն և զորեար ընկլոյզ ի ծով մըրըրկայոյզ :
Եւ ահա գայր ղեկավարըն Պալինուր, որ ի խելաց
Նաւուն էր սուղ ինչ յառաջ Թաւալգըլոր անկեալ յալիս
Ի գալն ի Լիբիոյ, յորժամ արփից կայր ի զըննին.
Եւ զնա հազիւ ծանուցեալ տըխուր ի ստուեր աղջամղջին,

Այսպէս նախ ինքն էառ խօսել. Պալինուրէ, ո՞ յաստուածոց
Յափշտակեաց զքեզ ի մէնջ խորասուզեալ յալիս ծովու.
Զի բնաւ երբեք Ապոլոն սուտ ինչ ցարդ չէր ինձ գուշակեալ,
Միով այսուիկ պատրեաց զիս, որ անվտանգ քեզ ի ծովէ
Գալ ի սահմանս Իտալիոյ. այս իցեն արդ խոստմանն արդիւնք:
Ում Պալինուր. Ո՛վ անքինեանըդ զօրավար, ոչ պատրեաց ոչ
Ըզքեզ Փեբեանըն դաբիր, ոչ դիք յալիս ընկլուզին զիս,
Այլ յեց յուղղեակն՝ որ ինձ էր յանձն ի պահ, յուղղել զընթացս ընդ
Ծանու բռնամբ խըլեալ զայն արկի ընդ իս համակործան: (ծով
Երդնում ի ծով ալէսաստ. ոչ սաստկագոյն այլ ինչ երկիւղ
Կալաւ զիս. բայց զի մի՛ նաւ քո անուղղեակ և անուղղիչ
Մատնէր ի կորուստ ի փոթորկել ըզքեւ ալեաց:
Գիշերս երիս մըրըրկալից հարաւահողմ բըռնաչունչ
Ած զիս ընդ ծով անդընդախոր. հազիւ ի լոյս աւուր չորիր
Վերաբերեալ՝ ի ծայրից ալեաց տեսի զԻտալիա:
Գնայի ի լող և ի յանքոյթ տակաւ յերկիր ելանէի,
Եթէ ոչ ազգ անողորմ ի խօթամիտ անկեալ կարծիս,
Իբր ի յաւար սուսերաւ յարձակէր յիս ի կողոպուտ,
Մինչ ճըգնէի ես ծանրաբեռն ողողելովք հանդերձիւք
Խիզըբս ձեռամբ արկանել ըզծայրասուր սեպովք ժայռին:
Ալիք այժմիկ ունին զիս, ի ծովափունըս վարեն հողմք.
Երդմնեցուցեալ ըզքեզ ի լոյս երկնից ի զուարթ և ի սիւք,
Ի ծնող քոյին և ի յոյս քո դեռափթթիթ յԱսկանեակ,
Յաղեսից սաստի զերծո զիս, ով դիւցազն անպարտելի:
Արկ ընդ հողով զիս, զի կարես, եւ ի Վելեան նաւահանգիստ.
Կամ եթէ մայր քո դիցուհի քեզ ընդ ուրեք եցոյց ուղի,
(Զի ոչ կարծեմ թէ դու առանց դից հրամանի պատրաստիցես
Ընդ լի՛ճն ստիգական ընդ ահագին գետըդ նաւել,)
Տո՛ւր աջ հէքիս, բա՛րձ զիս ընդ քեզ, ա՛ծ ընդ ալիս՝ հանգչել ինձ գէթ
Ցեռ մահու յանդորր ի կայս: Առ որ գուշակն այսպէս յաւել.
Ուստի՞ ի քեզ, Պալինուրէ, իղձ այդպիսի դըժընդակ.
Դեռ անթաղ՝ զստիգեան տեսանել ծուփ, և զԵւմենեայց
Գետ ահագին, և ընդ գետափնըդ խիզախել ինքնահրաման.
Դադարեա, մի աղերսիւք յուսար շըրջել ըզդից վըճիռ.
Այլ ի սփոփումն արկածիցըդ կա՛լ ըզբանս իմ ի յուշի.
Սահմանակից բնակեալ ազինք ի քաղաքնեարըն շուրջ ի բաց
Ի յերկնայնոց հրաշից ազդեալ՝ հաշտ արասցեն զոսկերըս քո,
Կանգնեսցեն քեզ շիրիմ, բերցեն նըւէրըս շիրմիդ.
Պալինուրեայ տեղին այն մինչև ի սպառ կալցի զանուն:
Այսու բանիւ ամոքեցան հոգք, և վայրիկ մի մերժեցան



Ցաւք ի տըխուր սըրտէ նորին ընդ համանունըն բերկրեալ վայր:
Ցառաջ խաղան ընդ ըսկըսեալն ուղի, ի գետըն մերձենան.
Իբրև եւես նաւաստին ի ստիգական ալեաց անտի
Զի ընդ անտառըն լուռ գնայլն ի յափըն կոյս գետոյն մերձեալ,
Այսպէս կանխեաց առ դիւցազնըն բարբառել կըշտամբանօք.
Ազէ՛ ո՞ ոք և իցես՝ որ ի գետ այսր ըսպառազէն
Մերձենաս, առ ինչ գաս, դարձո դու զոտըս քո ի բաց,
Աստ ըստուերաց են կայք, քընոյ, և թըմբրաբեր գիշերոյ.
Ի ստիգականըս լաստ բառնալ կըրել մարմինըս կենդանիս
Ոչ է օրէն. զիրդ իսկ է ինձ զի ուղեոր այսր ի լըճիս
Ընկալայ զԱլկիդէս, ըզԹեսէոս և զՊիրիթոս,
Թէպէտ և արիս դիւցազունս և զօրութեամբ անպարտելիս.
Ըզպահակերըն դըժոխոց կապեաց ձեռամբ մին ի շըղթայս,
Եւ յաթոռոյ թագաւորին ձըգեաց ըզնա ահաբեկեալ.
Այլք ի Պլուտեայ առագաստէն ածին ի բաց ըզթագուհին:
Առ որ հակիրճ այսպէս գուշակն ամփրիսեան ետ պատասխանի.
Մի խռովիր, չիք այդպիսի ինչ ստանօր դաւ, և ոչ
Ըսպառնան զէնք բըռնութիւն. թող բարապանն ըստուար անլուռ
Ի հաչիւն՝ արկցէ յանշունչ ի ստուերս երկիւղ, թող առ սեմովք
Հօրեղբօրն ըզգաստասէրըն պահ կալցի Պերսեփոնէ.
Տրովացին Ենէաս երևելին ի կրօն ու ի զէն
Հօրն ի խընդիր այսր ի ստուերըս դըժոխոց գայ իջանէ.
Թէ այնքանոյ կրօնից պատկեր ըզսիրտ քո ոչ շարժէ ի գութ,
Գոնէ զու ակն ած ի յոստոյս: Եւ ընդ բանին զոստըն ծածկեալ
Ընդ ձորձովն էած ի յայտ. յայնժամ ցածեաւ սիրտ նաւաստոյն
Ուռուցեալն ի ցասմանէ. ոչ ևըս վէճք այնուհետև.
Ընդ նըւէրըն խընկելի, ընդ անհրաժեշտըն բարունակ
Զարմանայ, տեսանելով զայն յետ երկայն ժամանակի.
Եւ յափըն կոյս շըրջեալ զառաջըն կապուտակ մատուցանէ:
Ապա զուրսս՝ որ ի տախտըն բազմէին երկայնանիստ՝
Հըրեալ յիրեար, լայնէ տեղի, և ընդունի զմեծն Ենէաս
Ի ծոց նաւուն. հեծէ մակոյկըն կարկատուն ընդ բեռամբ,
Եւ լի՛ճ յոլով ըրկախառն ընդ հերձս ի ներքս ընդունի.
Յետոյ ուրեմն հանէ յայնկոյս անվըտանգ զայրն և ըզհարցուկ
Ի սիկն աղտաղտուկ, ի խաժագոյնըն սիզուտ:
Կերբեր ահեղըն դըղըրդէ անդ երեքկին որկորովք
Զարքայութիւնն առհասարակ հընչեցուցեալ ի հաչիւն,
Բազմեալ ի հանդիպոյ ի լայնատարըր քարայրի.
Զորոյ զուլամբքըն իբրև ետես գուշակն ի վեր օձս հարթուցեալ,
Արկ առաջի թըմբրադեղ զանգեալ նաշիհ հայս ընդ մեղու:

Նա զերեցունց փողս որկորոցըն զայրագնեալըս սովամանք
Փեռեկեալ՝ եկուլ ըզջամբըն մատուցեալ, և զանհեթեթ
Արկեալ իրանն ընդ երկիր՝ ծածկէր զանձաւըն բովանդակ.
Եւ ի Թըմբրեւ պաշտակերին՝ մըտեալ ի ներքս անդր Ենէաս,
Խոյս ետ արագ. յալեաց գետոյն՝ ընդ որըս չիք վերադարձ։
Եւ ահա ձայնք հընչեցին ողբայերամ հոգւոց ճիչ մեծ
Ի նախադրունս անդ կոծելոց, զորըս զըրկեալ քաղցր ի կենաց
Օր սեաւ ընկլոյզ ի դառն աղէտ՝ յափըշտակեալ ի ստենէ։
Կան մերձ սոցին դատապարտեալքըն ի պատուհաս անպարտակիր.
Եւ ոչ անդ կայք առանց քուէից բաշխին առանց դատաւորի.
Յուզէ զսափորըն Մինովս, ինքըն կոչէ զլռութերս յատեան
Դատի ըզվարս և զեղերունս։ Ըզհետ նոցին ունին կայեան
Լուսատեացք՝ որք տարապարտ մահուամբ երթեալ զկերովլին,
Ջոգիս ի բաց ընկեցին. զի՞ ցանկալի է արդ նոցա
Ցոգըս վերինըս ցականել ի խիստ ճըգունըս տըւայտեալ.
Այլ խափանեն ըզնոսա ճակատագիրք շըրջապատէ
Տըխուր ալեօք լիճն ատելի, և իններկի հոսեալ ըՍտիւքս
Ըզնոքօք խուշ արկանէ։ Ոչ ինչ հեռի կան շըրջակայ
Վայրք ձորք, քանզի այսպէս նոցա անուանք յորջորջեցան.
Աստ գողուզեք և մըրտենեաց շուրջանակի պատեն անտառք,
Զորս ի Թալըւկ անողորմ ծախեաց եկեր սէր դըժընդակ.
Անմեկնելիք ի նոցանէ և յետ մահու հոգք և մըղձուկք։
Աստ տեսանէ նա ըզՓեդրա և ըզՊրոկրիս. աստ կայ տըխուր
Երիփիլէ՝ ըզվէրս առեալս յանգութ որդւոյն ցուցանելով.
Աստ Եւադնէ, Պասիփայէ, և ընդ նոսին Լաւոդամէ,
Եւ որ երբեմըն պատանի Կենէոս, և այժմ անդրէն ի կին
Ի հրամանաց դից ի նախնին յեղաշըրջեալ կերպարան։
Փինիկն ի մէջ նոցա Դիդէ արդի վիրօքըն դեգերէր
Ի մեծի անտառին. ում տրովացին մերձեալ դիւցազն,
Իբրև այն ինչ ծանեաւ ըզնա ի մէայլ մըթին ստուերաց,
Որպէս այն որ տեսանէ, կամ տեսանել ըղմա Թըւի
Ըզլուսին նորածին ի մէջ ամպոց, հարաւ ի յորդ
Արտասուս, և քաղցրագութ սիրով առ նա բարբառեցաւ.
Ճըշմարտիւ ուրեմն ինձ մահ քո գուժեցաւ, ո՛ հէք Դիդէ,
Սուսերը զըսւեալ. աւա՜ղ ընդէ՞ր ես ինքն եղէ քեզ մահառիթ.
Երդուեալ յաստեղս և ի դիս, և եթէ է ինչ հաւատք
Ընդ երկրաւ՝ երդնում և յայն, ոչ կամակար ո՛վ Թագուհի
Ի ծովափանց քոց խոյս ետու, այլ հրամանաւ դիցն անմահից,
Որք մեծասաստ ինձ հարկ առնեն շըրջել ի ստուերս արդ յայսոսիկ
Ընդ ժահահոտ վայրս, ընդ գիշեր աղջամըղջին և սոսկալի.



Զեր ինձ մարթ կասկածել՝ զայդ քեզ ի չուոյ իմմէ աղէտ.
Կա՛ց արդ և մի՛ յերեսաց իմոց ծածկիր, յումմէ՞ խուսես.
Խօսել ընդ քեզ ի նուագ յետին տան ինձ հրամանք ճակատագրին։
Այսպէս Ենեայ ողոքելով ըզնա հեզըսր արտասուս։
Իսկ նա խոժոռ զայրագին ակընկառոյց ալիշ ընդ երկիր
Անդըստին ի սկըզբանէ բանիցըն կայր անշարժ ի լուր,
Որպէս վէմ որձաքար, որպէս ըզժայռ մարպեսական.
Եւ ուր ուրեմըն խոյս տըւեալ անհաշտելի, սրացաւ ի բաց
Ի հովանուտ մայրիս՝ ուր այր իւր նախընծայ փոխադարձէ
Նըմա գորով կարեկիր, հաւասարէ նըմա ի սէր։
Բայց Ենէաս կարեվէր ընդ դըժընդակըն պատահար՝
Ըզհետ գընայր աղիողորմ արտասուելով ցերթեալն ի բաց։
Ի շնորհեալն ապա յառաջ խաղայ ուղի, և ահասիկ
Հասեալ կային ի դաշտավայրն յետին, ուր կան մեկուսի
Առաքինեալք ի մարտի. դիպի նըմա աստ Տիդէոս,
Եւ Պարթենոպ յաղթողն ի զէն. աստ Ադրաստայ տըժգոյն պատկեր.
Աստ անկեալքըն ի ճակատու և ողբացեալք դառնապէս
Ի վերնոց դարդանացիք. զորոց երկայն տեսեալ ըզկարգ
Բոլորեցունց, յոգւոց եհան. և զերեսին Անտենորեանս
Ետես աստ, ըզԳըլաւկոս ըզԹերսիլոք և ըզՄեդոն,
Եւ ըզքուրմըն Դեմետրեայ ըզՊոլիփետ. և զԻդէոս,
Դեռ զերկձիոց կալեալ ըզսանձ, դեռևըս զէն ի ձեռին։
Շուրջ կան հոգիք յոգներամ յաջ և յահեակ. ոչ շատանան
Տեսանել միանգամ, ցանկան յամել կալ նըմա անդ,
Մերձ մատչել, և ըզվասներըն գալըստեան իւրոյ պատմել։
Իսկ զօրավարք Հելլենաց և լեգէոնք ագամեմնեանք
Իբրև տեսին զԵնէաս և ըզզինուց ի ստուերս ըզփայլ,
Զերկիւղի մեծի հարան, և կէսք Թիկունըս դարձուցին,
Որպէս երբեմն ի նաւատորմըն փախըստեայք. այլք նուրբ ինչ ձայն
Բարձեալ, ընդ վայր բերանաբացք ճիգն ի սկըսեալն առնեն բարբառ։
ԸզՊրիամեանըն Դիփոբեայ ետես մարմին պատառոտեալ,
Կեղեքեալ անխընայ զբերան նորա, ըզբերան
Եւ ըզձեռսըն զերկոսին, աւար հարեալ զկրանունս,
Կտրեալ ըզլըսելիս և ըզռընգունըս ժանտ վիրօք.
Հազիւ ծանեաւ՝ մինչ դողալով նա զդըժընդակ վէրսըն ծածկէր,
Եւ ինքըն նախ ծանօթ ձայնիւն ըզնա կարդաց. Հըզօրդ ի մարտ
Դիփոբէ, ի տեւկրական սերեալդ ի վեհ ազգատոհմէ,
Ո՞ այդպիսի խուժադուժ վըրէժս ի քէն իշխեաց առնուլ,
Ո՞ւմ անողորմել ի քեզ այդքան եղև օրէն։
Ըզքեզ համբաւ ի յետնումըն գիշերի, ասէր, անկեալ

Ի խառն ի խուռըն դիակոյս՝ խոնջ ի մեծէ կոտորածէ
Պելասգեանց. ես ինքն յայնժամ չիրիմ ունայն քեզ կառուցի
Ի Հռետեան ծովեզեր, երիցս ի ձայն մեծ կարդալով
Զբստուեր քոյին. պահի անունդ քո ի տեղւոջ անդ, պահին զէնք:
Ոչ կարացի ի մեկնել իմում ըզքեզ տեսանել,
Ո՛վ բարեկամ, և զքեզ յերկիր քո հայրենի հանգուցանել:
Առ որ զաւակըն Պրիամու. Ոչ ինչ թողեր դու, բարեկամ,
Զամենայն Դիփոբեայ և դիական նորա ստուերի
Հարեր ըսպաս. Ճակատագիրն իմ, և ոճիր Լակոնուհւոյն
Աղխտաբեր, ի չարիս յայսոսիկ զիս ընկղմեցին.
Նա եթող յիս զերաշխէպքըս զայսոսիկ ի յիշատակ:
Ոչ ինչ զանխուլ է ի քէն, այլ կարևոր է յուշ ածել,
Ի՛բր ըզվերջինըն զայն գիշեր ի խաբուսիկ բերկրանս հանաք,
Մինչ ի բարձունս ընդոստ ի վեր Ճակատագրեալն եկ երիվար
Ի Պերգամայս, և սպառազէն հետևակօքն ի փորի
Ծանրաբեռն եմուտ ի ներքս. ինքն ի կաքաւ կեղծ շուրջ ածէր
Դիցապարարկըս մոլեգնեալ փռիւգուհիս, բարձր ի դղեկէն
Վերառեալ ի միջի բոց մեծ ի կոչ դանայեցւոց:
Կայի յայնժամ ես ի թըշուառ առագաստին խոնջ ի հոգոց
Ծանրաքուն, կալաւ զանկեալս հանգիստ խորին և քաղցրախորժ
Հանգոյն խաղաղ մեռելութեան. յայնժամ բարձեալ գաղտ ի տանէ
Զէն զամենայն հարսն արժանի, և ըզսուսեր հաւատարիմ՝
Որ ի սնարից իմոց կայր, կոչէ ի տուն ըզՄենելաւ,
Բանայ ըզսեամս, կարծէ պարգև մեծ ամուսնոյն սիրեցելոյ
Առնել, և ըզչարեացըն վաղեմեաց ջնջել ըզկեղտ:
Զի՞ յերկարեմ. յարձակին յառագաստ անդր, և ընդ նոսին
Հրապուրիչն Եւոլիդես. հատուցէք դիք ըզնոյն նոցին
Հելլենաց, եթէ արդար ըզրթամբք մաղթեմ նոցա չարիս:
Այլ որպիսի՞ ինչ պատահար ածէ ըզքեզ աստ կենդանի,
Ծովածուփ մոլորեալ, թէ հրամանաւ աստուածոց գաս,
Կամ ո՞ր ըզքեզ մըղեն արկածք ի բնակութիւն այսր ի տըխուր,
Ուր արեգակըն ոչ ծագէ ի բազմախռով յայս ի տեղի:
Մինչդեռ նոքա խօսակցէին, այգ վարդագոյն քառաձիովք
Ամպախաղաց անցեալ էր վաղ ընդ միջակէտ ասպարիզին.
Եւ հանէին արդեօք ի զոյգս ըզժամանակըն պայմանեալ,
Այլ Սիբիլլայն ուղեկից ազդ արարեալ՝ ասէ հակիրճ.
Ճեպի գիշեր, ո՛վ Ենէաս, մեք յողըս ըզժամս անցուցանեմք.
Աստ է տեղին՝ ուր արահետս այս ի յերկուս մեկնի ուղիս.
Աջակողմեանն ի Պլուտեայ մեծին դիմէ ի յարքունիս,
Ընդ այն է մեզ ռահ յելիսեանս. ահեակն ի ժանտ ածէ ըզմեզ



Ի պատժարան ամպարըշտաց: Առ որ յաւել յայնժամ Դիփոբ.
Մի բարկանար քըրմուհիդ մեծ, երթայց ի բաց, լըցից ըզթիւ,
Դարձայց անդրէն ի խաւար. երթ դու ո՛վ փառք մեր, երթ ըզհետ
Լաւագոյն Ճակատագրի: Ասաց և զհետս ի բաց դարձոյց.
Եւ հայեցեալ Ենէաս ետես անդէն յահեակ կուսէ
Պարիսպ մեծ ընդ ժայռիւ երիւք որմովք շըրջապատեալ,
Եւ ըզնովաւ զանդընդայինըն Փլեգեթոն հրեղէն ուղխիւք
Արագընթաց գետահոսեալ՝ վէմըս դըրնդմամբ թաւալելով:
Դուռն ահագին կայ ընդդէմ, և սիւնք կարծունք ադամանդեայք,
Զոր ոչ կորով արանց զօրեն, և ոչ ինքեանք իսկ երկնաբնակք
Հերձուլ երկաթով. յառնէ յայերըս դեր ի վեր
Աշտարակ երկաթի. Տիսիփոնէ անդանօր
Հանգրիճելովն արիւնաներկ ըզգեաւ բազմի սեմոցն ի պահ
Անքուն ըզցայգ և ըզցերեկ. և լըսելի լինին անդ ձայնք
Հառաչանաց, ողորմելի զանից թօպմունք, և շառաչիւն
Երկաթոյ, և ձըգելոց ի քարշ շաչիւնք ըզղթայից:
Կառեաւ եկաց Ենէաս ահիւ ի լուր աղաղակին
Եւ ասէ. Զի՞նչ անդ, ո՛վ կոյս, ազդ եղերանց իցեն, ասա,
Եւ զի՞նչ նոցին պատուհաս. ե՞ր ողբք այդքան ընդ օդս հընչեալ:
Յայնժամ դուշակն յաւել այսպէս. Ո՛վ դու տեկրեանց զօրավար մեծ,
Չէ իսկ և չէ օրէն սըրբոյ զամպարըշտաց կոխել ըզսեամս,
Այլ Եկատէ յորժամ կացոյց զիս աւեռնեանցըն շահապետ
Անտառաց, ինքն ինձ ուսոյց ըզսահմանեալ պատիժս ի դից,
Ընդ ամենայն ուրեք ընդ իւր ի ներքս անդ զիս յածեցուցեալ:
Հռադամանթ գնոսացին վարէ դըժնեայ անդ պետութիւն.
Դատի ըզնենգ, և բռնի առնէ պատուհասիւք խոստովանել
Որ ինչ ոք գործէ ոճիր յերկիր ի վեր, կամ վայելէ
Ի սին գողօն, և ցըմահ անագանի յամէ քաւել:
Տիսիփոնէ վրէժխընդիր խարազանաւ զինուորեալ զաջ՝
Աշեգանէ ըզյանցաւորս, իժս ահեկաւն ըսպառնացեալ,
Զայն տայ քերց վըշկապարեաց: Յետոյ ուրեմն յայնժամ բացան
Ճըռընչելով ահագնաձայն ծըղխնեաց՝ դըրունքըն սըրբազանք.
Տեսանե՞ս յանդաստակի անդ որպիսի նըստեալ կայ պահ,
Եւ զի՞նչպիսի դրաւէ ըզսեամըս կերպարան. դըժնէագոյն
Վիշապ ի ներքս ըզկայ առնու բերանաբաց, զարհուրելի
Յիսնիւք կապոյտ որկորովք. և տարտարոս անդ կառ ի թափ
Իջանէ կըրկնապատիկ՝ լայնատարած ներքոյ ստուերաց,
Որչափ անտի ցեթերայինն Ոլիմբ երկինք տարածանին:
Անդ տիտանեան մանկունք, Նախնի սերունդ երկրի ամպահարեալ
Յանդընդախորըս թաւալին. անդ զերկուսին Ալոիդեանս

Ցաղթամարմինըս տեսի, ըղյանդըղնեալս ի կործանել
Բազկըք զերկնից խորանարդ մեծ, և յարքունեաց ի բոց բարձանց
Ընկենուլ զԱրամազդ. տեսի և ես ըզՍալմոնէ
Պատուհասեալ անողորմ, զայն որ ըզբոց Արամազդայ
Եւ զոլիմպեան կեղծէր բոմբիւնս, որ ի քառից ձըգեալ ձիոց,
Ջահ ի ձեռին ճօճելով, ընդ Հելլենացըն ժողովուրդ
Ընդ Եղիսեան քաղաքամէջըս ճեմ առեալ յաղթանակաւ,
Ըզդիցական խնդրէր ըսպաս, սալասըմբակ երիվարօք
Ի կառըս պղընձիս ծանծաղամիտըն զամպրոպաց
Եւ ըզշանթից զաննըմանեացըն բերելով նըմանութիւն:
Ցայնժամ Հայրն ամենակալ ընդ թանձրախիտ ամպըս երկնից
Նետ բոցեղէն արձակեալ, ոչ ըզջահից բոց ծըխամած,
Կործանեաց թաւալգըլոր ի ստոր աչեղ ըզնա մըրրկաւ:
Էր տեսանել և զՏիտիոն անդ սան երկրի բոլորից մօր,
Ծածկեալ մարմնովըն համագրաւ ինն արտավար, և անգըղ մեծ
Կեղեքէր կռածագ կըտցաւ ըզլեարդն յաւէրժ և զփորոտին
Բերրի վըիժուց, բունեալ ներքըս կըրծոցն ի խոր, ճարակ ի նմա
Խընդրելով. չիք և չիք վերարուսիցն հանգիստ աղեաց:
Զի՞ յիշեցից ըզԼապիթայս, զի՞ զԻքսիոն և զՊիրիթով,
Զորովք ի թիռ վէմ թուխ անկումըն մօտալուտ միշտ ըսպառնայ:
Բարձրագահոյք հեշտալիք փայլեն յոսկի յենարանս,
Եւ պատրաստեալ առաջի խորտիկք ի լի արքունականք,
Մերձ անդ բազմի վըշկապարեացն աւագագոյն՝ ոչ ներելով
Գուլ ի սեղանըն ձեռըննմերձ. յառնէ յոտին կայ, ամբառնայ
Ջահ ի վեր, և ձայն բարձեալ աղաղակէ ըերանալիր:
Անդ որք եղբարցն ատեցօղք եղեն ի կեանս, և հայրատանջք,
Որք նիւթեցին վըստահելոց յինքեանըս դաւ, որք միայնակ
Զինչս ըմբոշխնեն՝ զիւրսըն զըրկեալ, (որ բազմախուռն է խուժան),
Ոյք առ շընալ մատնին ի մահ, և որք առնուն զէն անօրէն՝
Աջոյ տէրանցըն դըրժեալ, անդ արգելեալ մընան պատժոց:
Եւ մի՛ խընդրեր ուսանել՝ ո՛ր պատուհաս մընայ նոցա,
Ո՛ր ազգ վըիժուց, ո՛ր ըղնոսա հանդերձի բախտ ընկլուզանել:
Կէսք զանհեթեթ թաւալեն վէմ, այլք զըստեղանց անուոց ի կախ
Կան կաչկանդեալ. տառապեալըն Թեսէոս կայ անդ ի նիստ,
Եւ յաւիտեան նըստեալ կացցէ, և Փլեգիաս աղիողորմ
Գոչէ ի ստուերս անդ վըկայեալ ընաւից ի լուր. Ուսարո՛ւք
Խրատեալ ինև զարդարութիւն, և մի՛ զաստուածս արհամարհէք:
Որ զհայրենիսըն վաճառեալ ոսկւոյ՝ էարկ ընդ լըծով,
Որ եդ օրէնըս կաշառով, և որ զեդեալըն եբարձ,
Որ յառագաստ դըստերն անկաւ, և յարգելեալ հարսանիս,



Որք իշխեցին յոճիր եղեռն, որք ձեռընհաս եղեն ի նոյն:
Եթէ ինձ բիւրք տացին լեզուք, բիւրք ինձ բերանք, ձայն երկաթի,
Ոչ զեղեռանցըն կարացից բովանդակել զազգ բազմազան,
Եւ ոչ զանուանըս պատմել պատուհասիցըն բոլորից:
Զայսոսիկ պատմեալ պառաւըն քըրմուհին ապոլոնեան,
Ասէ. Օ՛ն էկ արդ զընկալեալըդ կատարել ըզպաշտօն,
Վաղվաղեսցուք տեսանեմ զդարըննեալ պարիսպս ի Կիկլոպայց
Եւ ըզդըրունս ի հանդիպոյ ընդ զըմբեթաւ, ուր հրամայէ
Գիցականըն մեզ պատգամ ըզնուէրըս զայս աւանդել:
Ասաց, և զուգաճեմ մըտեալ ի վայր աղջամըղջին,
Կալան ուղի միջնաշաւիղ, և մերձ ի դրունս անդըր մատեան.
Կառեաւ ի մուտս անդ Ենէաս, և ջուր անդրէն ցօղեալ զանձամբ,
Եդ անդ զուղէշն առ սեմովք. և կատարեալ զայս ամենայն
Ի սպաս դիցուհւոյն, ի գըրգարան անդըր հասին
Ցարօտ դալարագեղ յերանաւէտ ծառաստանեայս,
Ի կայս երջանկաց, ուր լայնատարր այերք օդոց
Լուսազգեստեն ծիրանեփայլ ըզդաշտօրայս. ծագէ ընակչաց
Անդ արեգակըն սեպհական, ծագեն աստեղք սեպհական պարք.
Կէսք ի մըրցանըս խաղուց կըրթեն զանդամս ըմբշամարտիկք,
Գուպարին ի դալարւոջ, մարտ ի խարտեաշ տան յաւազի:
Կաքաւաձև կայթս ոտիւք յերգըս տաղից հարկանեն այլք.
Թրակացին ևս անդանօր քուրմ պըճղնաւոր արկեալ հանդերձ,
Զեօթնեակ ձայնից զանազանակս, է զի թըւովք, է զի մատամբք
Նըւագէ, է զի հարեալ ի կընտընտոցըս փըղոսկրեայս:
Անդ վաղընջուց ազգըն Տեկրեայ չըքնաղագեղըն սերունդ,
Եւ դիւցազունք մեծանձունք ի լաւագոյն ամըս ծընեալք,
Իլոս և Ասարակ և Տրովադայ հայրըն Դարդան:
Զէնք ի բացէ անդ երևին, երևին կառք անվերելեակք.
Գեղարդունք ցըցեալք յերկիր, ձիան բազում ընդ դաշտօրայս
Արձակեալ ի ճարակ. որ ինչ զինուց սէր և կառաց,
Որ ինչ եռանդըն գուեղից երիվարաց դարմանելոյ
Լեալ կենդանեաւ, նոյն այն ի հող աւանդելոց զընայ ըզհետ:
Ետես և այլս անդ բազմեալ ի դալարւոջ յաջ և յահեակ
Ի խընջոյս, որ երգէին զուարթ պարուք օրհներգութիւն
Ի քաղցրահոտ սարդենտանեայս, ուստի աչեղն Երիդանոս
Գետահեղեալ ընդ անտառն՝ առ վերնաշխարհըս թաւալի:
Անդ և որք վէրս ընկալան վերամարտիկ լեալ հայրենեաց,
Եւ քուրմք ի կեանըս պարկեշտք, և երկիւղածք ի դից գուշակք,
Տըւինք պատգամացն Ապողոնի արժանաւորք.
Որ հնարագէտք արուեստից ըզկենաց պէտս հայթայթեցին,

Եւ որք զանձանց յիշատակ թողին այլոց վաստակաւորք.
Ըզբոլորից սոցա պըսակ ըզձիւնափայլ պատէ ճակատ։
Առ սոսա Սիբիլլայն համախըմբեալըս բարբառի.
Մանաւանդ առ Մուսէ՛ որ ի միջի խուռն ամբոխին
Ցանէր ուսով չափ ի վեր. Ո՛վ երջանիկ հոգիք, և դու
Քերթողդ վեհ, յորում կողման յորում տեղւոջ կայ Անքիսէս,
Այսըր նորին ի խընդիր ընդ ահագին գետս Երեբայ
Նաւարկեալ գամք։ Առ որ հակիրճ դիւցազն արար պատասխանի.
Ձիք հաստատուն ուրուք աստ կայ. ի հովանուտ մայրիս բնակեմք,
Ի գետեզերս և ի մարգըս դալարիս առ վըտակօք.
Այլ եթէ այդ ձեզ կամք իցեն, անցէք բըլրոյդ ընդ կատար,
Եւ կացուցից ի դիւրին այնուհետև ըզձեզ յուղի։
Ասաց, և ինքն առաջնորդեալ եցոյց ըզդաշտըս լուսաւորս
Ի վերուստ. և իջին՝ բարձր ի ծայրէ անտի ի վայր։
Ի ստորակայ դալարագեղ հովտի կայր հայրն Անքիսէս,
Դիտէր ուշիւ ըզհոգիս՝ որ անդ ուրոյն կային պատրաստք
Գընալ ի լոյսըն վերին, և հանդիպէր իւրոցն յանկարծ
Թոռանց յոգունց սիրեցելոց, զիւրաքանչիւր ճանաչէր բախտ,
Ըզբարս արանցն և ըզգործ, և ըզնոցին ճակատագիր։
Իբրև ետես նա զԵնէաս ի դալարւոջ՝ զի դիմեալ գայր,
Բազկատարած ձըգեաց ըզձեռսըն զերկոսին առ խընդրին.
Եւ գերարտօսր ի ծնօտի՝ ասէ ի ձայն լըսելի.
Եկիր ուրեմն, որդեակ իմ, և կրօնք քոյին՝ անկեղակարծք
Քումըդ ծնողի՝ յաղթեցին դըժուարութեան ճանապարհիդ,
Եւ տեսանել շնորհեն ինձ դիք զերեսըս քո՛, և ըզծանօթ
Բարբառդ ըղտուրևառ. այսպէս ընդ միտըս խորհէի,
Այսպէս ինձ չափ ժամանակի ըզհանդերձեալըն ցուցանէր.
Եւ ոչ զիս հոգք արկին ի խաբս. ընդ ո՛ր սահմանս, ընդ քանի՛ ծով,
Ընդ որպիսի՛ վարեալ վըտանգս ըզքեզ որդեակ իմ լըսէի.
Քանի՛ երկիւղ զիս տագնապեաց՝ զի մի՛ գուցէ եղեռն ինչ քեզ
Արքայութիւն լիբէական հասուցանէր։ Իսկ ինքն առ նա.
Քանիցս ինձ, հայր, տըխուր պատկեր քո երևեալ բստիպէր զիս
Դիմել ի սեամս յայսոսիկ. կան նաւքս ի ծով արդ տիւրենեան.
Տուր աջ ընդ աջ խառնել հայր, մի՛ ի գըրկաց աստի խուսեր։
Եւ ի խօսելըն զայսոսիկ՝ առուք յաչացն իջանէին
Արտասուաց. երիցըս գուն գործեաց բազկօք ըզհայրենի
Պարանոցաւըն փարել, երիցըս սին պատկերն ընդ վայր
Ողջագուրեալ, խոյս ի գըրկաց անտի նորին ետ ի բաց,
Որպէս ըզշունչ թեթև հողմոյ, իբրև զերազ երագաթև։
Յայնժամ ետես Ենէաս ի մեկուսի հովտի անտառ



Շըրջափակ, և խարշափուն յանտառի անդ թըփաստան,
Եւ ըզգետըն Լեթեան՝ շուրջ ըզխաղաղ վայրօքն հոսեալ.
Անհամար ըզգետովն ազգ և ազինք ճախր առնուին,
Որպէս ի ջեր ամառայնի թռուցեալ ընդ մարգըս պար մեղուաց
Ցածի զամբիծ շուշանօք, և յերփնագոյն բազմի ծաղկունս.
Գընայ բըզզիւն շուրջանակի ընդ դաշտավայրն համօրէն։
Անգէտ իրացն Ենէաս և ահաբեկ ի տեսլենէն
Հարցանէր. Զի՞նչ գետդ է այդ, և ո՞րք արդ խըռնեալ
Առ գետեզերբ։ Յայնժամ հայրն Անքիսէս. Հոգիք՝ ոյց այլք
Ճակատագրեալ են մարմինք. դոքա յաւէրժ մոռացօնս
Ըմպեն յանշուշտ ապըերէդ առ լեթական գետոյդ ալեօք։
Նախապատմել ատըստին և ցուցանել քեզ իղձք են ինձ,
Եւ ի հանդէս ածել զիմոցս ապագայից քեզ ըզսերունդ,
Որով յաւէտ բերկրեսցիս ի ժամանել յիտալիա։..
Ո՛ հայր, իցէ՞ թէ վեհք ոմանք հոգիք ի վեր աստի գնայցեն,
Ի դանդաղկոտ ի մարմինըս վերըստին առնել դարձ.
Ուստի՞ հեքացն այնոցիկ այդքան լուսոյ տենչ դըժընդակ։
Պատասխանի ետ Անքիսէս. Ասացից արդ որդեակ իմ՛ քեզ,
Ոչ թողից ըզքեզ յերկբայս. և սկիզբն արար պատմել կարգաւ.
Ի սկըզբանէ զերկին զերկիր և զդաշտավայրըս ջըրեղէնս,
Ըզլուսալիր գունդ լուսնի և զտիտանեան աստեղաց պար
Տածէ հոգի ի ներքուստ, և ծաւալեալ միտք ի մասունս՝
Վարէ ըզհամագոյս խառնեալ ընդ մեծըն մարմին.
Ուստի մարդկան և անդէոց ազինք, և կեանք օդականաց
Եւ որ ինչ կըրէ նըրհանգս ընդ հարթ մըրդակ դաշտիւըն ծով։
Հրեղէն ի բնաւս է զօրութիւն, և երկնաւոր սարր ի սերմանս,
Այլ մարմին մեղանչական ծանրէ զնոսա, այլ երկրաւոր
Ըզնոսա յօդ և մահացու զամենեսեան բըթեն անդամք.
Աստի երկիւղ հոգւոց՝ և իղձք, աստի թախիծ և բերկրութիւն.
Եւ ոչ ըզսիւք ձըգել կարեն խաւարարգելք ի կոյր բանտի.
Եւ ի խուսել կենաց ընդ լոյսըն հուսկ յետին, ոչ համօրէն
Զարիք հեքացն ի բաց մերժին, և ոչ բնաւին բիծք ազցաւորք,
Այլ յարընչեալ ի նոսին հարկ անհրաժեշտ է կալ յոգունց
Ընդ երկար զարմանազան եղանակօք բնաւորակիցք։
Այսր աղագաւ պատուհասին՝ տալ զառաջնոց մեղացն ըզվրէժ.
Կեսք կան ընդ օդս ի կախ ընդդէմ դատարկ հողմոց, այլոց քաւին
Լուացեալ ոճիրք ի ծուփս ալեաց, և կամ ի բոց հըրոյ ծախեալ։
Ամենեքին մեք աստ կըրեմք, իւրաքանչիւր յիւրմէ ոգւոյ,
Եւ յանդորր Եղիսիոն յետոյ ուրեմն յուղարկիմք,
Սակաւուց է հասանել ի բերկրալիցըն դաշտավայր,

Յորժամ որ երկարաձիգ ի կատարել գիւրըն շըրջան՝
Զընջէ զարատ ընդակից, և զերկնաւորն իմացութիւն
Ընդ փայլակըն չընչոյ պարզականի թողու ամբիծ:
Ի հոլովել ամենեցուն սոցա զանիւ ընդ հազար ամ,
Կոչէն հրամանք դից բամովին ի Լեթեան գետ՝ զառ ի յետոյ
Ի մոռացօնս արկանել, ի խորանարդ անդր ի վերին
Ելանել, և վերըստին դարձ ի մարմինս ըղձանալ:
Զայս ասացեալ՝ ձըգեաց զորդի իւր ընդ գուշակն ի միասին
Ընդ մէջ ամբոխին, որ յոգնախուռնըս հըծծէին,
Եւ ել ի բըլուրն՝ ուստի մարթէր Ենեայ դիտել դէմ յանդիման
Երկայն կարգաւ, և ուսանել զեկաւորացըն բոլորից
Ըզկերպարան, և ասէ. Եկ արդ ցուցից քեզ որ ինչ
Դարդանեան զաւակին առ ի յապայս հանդերձին փառք,
Ո՛յք ի յապայս իտալական ազին թոռունք, ո՛յք վեհազունք,
Եւ ո՛յք յանուն մեր նկեսցեն. ցուցից և զքոյդ ճակատագիր:
Տեսանե՞ս ըզպատանին՝ որ կայ յեցեալ ի ջինջ նիզակ
Մերձ ի լոյս վիճակեալ վայր. յարփիականն այեր ի վեր
Դա ինքըն նախ յարիցէ, խառն ընդ արիւն իտալական,
Սիլուիոս կոչեցեալ ալբայեցի, զաւակ յետին,
Զոր ծերունւոյդ յամրածին ածցէ ի լոյս Լաւինիա
Հարսն ի մայրիս, ըզհանդերձեալն արքայ և հայր ինքն արքայից,
Ի նմանէ լիցի դրոհիս մերում տիրել յերկայնն Ալբա:
Այդր աւընթեր կայ Պրոկաս՝ տրովականի ազգին պարծանք,
Եւ Կապիս և Նումիտոր, և Սիլուիոսն Ենէաս
Զանուն քո բերելով, հանգոյն ի կրօն քեզ և ի՛ զէն
Գերազանցեալ, թէ հուսկ ապա լիցի նըմա իշխել յԱլբա:
Հայեաց քանի՜ յոլով մանկտի, քանի՜ կորով բերէ յանձին,
Եւ քանի՜ք պըսակաւ քաղաքայնով արտախուրեալ,
Կըրեն կաղնի հովանի. կէսք ըզՆոմենտոս քեզ կառուցեն,
ԸզԳաբիոն և ըզքաղաքըն Փիդենա. և այլք ամուրս
Ի լերինըս կանգնեսցեն ըզԿոլլատեանն, ըզպոմետեան,
Զաւանն Ինուեան, և ըզԲոլա և ըզԿորա.
Այսոքիկ յայնժամ սոցին լիցին անուանք, որ զարդիս
Են անապատք անանուանք. զարիականն ապա Հռոմուլ
Յասարակեան արենէ ածցէ ի լոյս մայր Իլիա,
Ցաւելուլ հաւուն իւրում նիզակակից ի պատերազմ.
Տեսանե՞ս իբր ըզգըլխովըն երկուորեակք յառնեն ցըցունք.
Հայրըն վեհից արդէն ըզնա երևելի առնէ փառօք.
Ահաւասիկ ընդ ո՛յր որդեակ իմ հովանեաւ տարածեսցէ
Փառաւորեալըն Հըռոմ զիւր պետութիւն ընդ տիեզերս,



Եւ միով պարըսպաւ զեօթնեակ բըլուրսըն պատեալ,
Ըզդիւցազունըս իւր ի վեր մինչև ցՈլիմպ բարձրացուսցէ.
Բարեբաստիկ ի սերունդ քաջորերոյ, բերեկինթեան
Մօրն ի տիպար՝ որ ընդ փռիւգեան քաղաքանին ածի ի կառս
Աշտարակօք պըսակաւոր, և դիցազարմ որդւովք բերկրեալ,
Թոռունըս բիւրաւորըս գըգուելով երկնաբընակս
Առ հասարակ, զեր ի վերոյ վիճակեալ կայս բոլորեցունց:
Այժմ ըզկըրկնակ զաչըդ դարձո, և տես զորեարդ հռովմայեցի
Զազգ քոյին. աստ է Կեսար, աստ ամենայն սերունդ Յուլեայ,
Որ հանդերձեալն է ընդ մեծաւ երկնից գըմդաւ երևել.
Աստ խոստացեալըն քեզ յաճախ աճա դիւցազն Աւգոստ Կեսար.
Այն որ ըզդարն ոսկեղէն նորոգեսցէ ի Լատիոն,
Ի տեղւոջ՝ ուր վաղ ուրեմըն Սատուրնոս թագաւորէր,
Եւ ձըգեսցէ ցըԳարամանտս և ցըՀընդիկս ըզպետութիւն.
Անդրագոյն երկիրն այն է քան զաստեղաց և ըզտարւոյ
Եւ քան զարփւոյն ճանապարհ, ուր երկնաբերձն Ատլաս ի յուս
Հոլովէ ըզբևեռն յեռեալ արփիւք բոցեղինօք.
Յոյժ նորա սարսեն արդէն կասպիականքըն պետութիւնք
Ի դիցասաստ պատգամաց, մէովտական սարսէ երկիր,
Եւ եօթնեկի դրունք կըրկնակնեանըն Նիլոսի ահիւ դըղրդին:
Ոչ Ալկիդէս ցայն վայր ընդ ծագս երկրի յածեալ շըրջեցաւ,
Այն որ զեղնիկըն պըղընձոտն հարեալ՝ հանգոյց զանտառախիտն
Երիմանթ, և ի Լերնա արկ աղեղամբըն սարսափիւն.
Եւ ոչ Բաքոս, ուռենեօք սանձիւք շըրջեալ յաղթող զերկձիս,
Եւ ըզվագերս հալածեալ բարձր ի ծայրէ Նիսայ լերին:
Զի՞ ես յամեմք կացուցանել արդեամբք յաւէրժ ըզքաջութիւն.
Զի՞նչ խափանէ ըզմեզ երկիւղ կալ ի յերկիր աւսոնական:
Իսկ այդ ո՞վ է երևեալըդ պերճափառ, որ ուղէշիւ
Ձիթենեաւ ի ձեռին՝ բարձեալ բերէ ըզսըրբութիւնս.
Արքային հռովմայեցւոյ ալխտակ ծընօտ ինձ և ալիք
Զեն անծանօթք. դա ըզքաղաքն հաստատեսցէ նախ օրինօք,
Ցըղեալ ի մեծըն պետութիւն ի դուզնաքեայ և յաղքատին
Յերկրէն Կորաց. ըմա Տուլլոս գայցէ ըզհետ, որ զհայրենեացն
Ազմըկեսցէ զխաղաղութիւն, և շարժեսցէ ի պատերազմ
Զորեարն հանդարտ, և ըզգունդըս դադարեալս ի յաղթութեանց:
Ում հետ ընդ հետ յաջորդէ ամափառն Անկոս, այժմէն կարի
Շնորհի ռամկին ըզձակերտ: ԸզՏարկունեանս իսկ թագաւորս
Թէ կամիցիս տեսանել, և ըզԲրուտեայ վրէժխընդրին
Գոռոզ ոգի, և ըզխուրձըս զառաջեաւ իշխանականս,
Սա առաջին կացեալ բըդեաշխ՝ կալցի զտապարսըն դըժընդակս,

Եւ ի վերայ գնդեցին ազատութեան՝ ի պատուհաս
Մատնեսցէ զորդիսն անդրէն շարժեալս ի զէն, հայր թշուառ.
Որպէս և ապա յետնորդք հատցեն զիրացըդ վճիռ,
Յաղթեսցէ սէր հայրենեաց, և գովութեան իղձ անպայման:
Հայեաց ի բաց, տես զԴեկեանս և զԴրուսեանս, զՏորկուատոս
Ժանտ տապարաւ, և զդրօշուցըն դարձուցիչ զԿամիլլոս:
Իսկ որ փայլենդ հաւասարք ի զէն հոգիք արդ միաբանք
Ցորչափ գիշեր ընկճէ զդոսա, աւա՜ղ քանի՜ պատերազմունս
Ընդ միմեանս տացեն՝ եթէ ելցեն ի լոյս կենաց.
Քանի՜ ճակատս մղեսցեն, քանի՜ նախճիրս գործեսցեն,
Աներն իջեալ յալպեան լերանց, և ի դղեկէն Մոնեկայ
Փեսայն օգնեալ յարեւելեայց ի մարտակից գումարտակաց:
Մի՛, ո՜վ մանկունք, մի՛ զհետ զինուց այդքան պնդեալ զակատք.
Մի՛ զհայրենեաց շըրջէք յաղիս իւր զհզօր զօրութիւն.
Եւ դու արիւն իմ, դու նախ, որ յՈլիմպեայ իջուցանես
Զազգ քոյին, խնայեա և ա՛րկ ի ձեռանէ քումմէ զզէնս:
Ինքն յաղթող Կորընթեայ, փառաւորեալ կոտորածիւ
Աքայեանց, ի կատար Կապիտողին վարէ զկառս.
Նա պարտեսցէ զԱրգիացիս և զՄիկենս ագամեմնեանս,
Զինքն իսկ զԹոռն Էակեայ, զազգ հզօրին ի պատերազմ
Աքիլլեայ, զհաւուց իւրոց նախնեաց տրովացւոց
Խընդրեալ վրէժ, և զմեհենին Աթենասայ պըղծութեան:
Եւ զքեզ, մեծդ Կատոն, ո՞ արասցէ անյիշատակ,
Ո՞ և զքեզ, Կոսսէ, լռել. ո՞ զԳրակքեանցըդ զազգատոհմ,
Եւ զերկոսին շանթսըդ մարտի և զհարուածսըդ Լիբիոյ
Սկիպիոնեանս, և զՖաբրիկըդ մեծազօր յաղքատութեան.
Կամ զքեզ ընդ ակօս սերմանահանըդ Սերրանէ.
Եւ դուք Փաբեանք ո՞ւր զխոնջեալըս զիս անէք յափըշտակեալ.
Եւ դու մեծըդ Փաբիէ, որ յամեցմամբըդ միայն
Բեկեալ զըս մեզ անդրէն դարձուցանես զյաղթութիւն:
Փանդակեսցեն փափկագոյնս այլք պղընձի շընչող պատկերս,
Ածցեն ի վէմ այլք կերպարանըս կենդանիս, գիտեմ իսկ քաջ.
Կացցեն գըժնեայ դատաստանս, գրեսցեն ցըպով զերկնի շըրջանս,
Գոգցեն զաստեղց զելս և զմուտ. իսկ դու յիշեա հռովմայեցիդ
Վարել զազինս, իշխել նոցին, քեզ այսոքիկ լիցին արուեստք,
Խաղաղութեան դընել պայմանս, քեզ զգոռոզըս նըւաճել
Եւ խնայել ի հնազանդեալս: Այսպէս ցայսվայր հայրն Անքիսէս
Խօսեցեալ, զայսոսիկ առ հիացեալսն ապա յաւել.
Հայեաց քանի՜ փառաւորեալ ճոխ աւարաւըն Մարկեղլոս
Զէն առնու յաղթական գեր ի վերայ ամենեցուն.



Նա զպետութիւն հռովմէական կայկայեսցէ ձիախռով
Ընդդըղըրդեալըն յաղմուկ մեծ, և զՓիւնիկն և զապըստամբ
Գաղղիացին կործանեսցէ. և զայս երրորդ առեալ աւար,
Ի Նըւէր արգադիր Կըւիրինեայ հօր կախեսցէ:
Աստ Ենէաս ի տեսանել անդ ընդ նըմին ընթացակից
Պատանեակ գեղանի փայլեալ ի զէն և ի զարդ,
Այլ թաղծադէմ զաչս ի խոնարհ արկեալ, ասէ. Ո՞վ է դա, հայր,
Որ ի դէմս այդպիսի զընայ ընդ առնըդ զուգահետ.
Որդի՞ գորին, թէ ի թոռանց ոք վեհազանց ազգատոհմին.
Զի՜նչ աղաղակք է խըռնելոց շուրջ զդովաւ ուղեկցելոց.
Քանի՜ ի դմա է նմանութիւն, այլ գիշեր սեաւ պարածածկէ
Տըխուր զգլխով իւր ըստուերաւ: Յայնժամ հայրն Անքիսէս
Վըտակայեղց արտասուօք. Որդեակ իմ մի՛ դու զզօրոգ
Հետազօտեր զսուգ ամբաւ: Ցուցցեն եւեթ զդա երկրի
Հրամանք ճակատագրին, ոչ անդ յամել թողցեն զդմա:
Կարի հզօր հռոմէականըն ձեզ թըւէր գըրոհ ով դիք,
Եթէ երբեք պարգեւդ այդ շնորհէր նըմա երկարատեւ.
Որ զմեծաւ արխականըն քաղաքաւ բնակեալըն երկիր,
Քանի՜ կոծ որերոյ կականաւոր արձակեսցէ,
Եւ որպիսի՜ սուգ և աշխար տեսանիցես ո՜վ Տիբերիս,
Զարդի շիրմաւըն շուրջ սահեալ. յիլիական ազգատոհմէ
Ոչ այլ ոք պատանեակ զՂատինացն հաւուց զյոյս
Այնպէս ի վեր ամբարձցէ, և ոչ ի սան ոք այնպիսի
Հռոմուլեանն երկիր երբեմըն պանծասցի. աւա՜ղ կըրօնք,
Եղո՜ւկ հաւատք վաղընջականք և աններկուն աջ ի մարտի:
Ո՞ւմ ումեք էր խիզախել անպատուհաս ի ճակատ
Զինեալումն ըստառաղէն, թէպէտ հետի, թէ հեծեալ,
Փըրփըրերախ երիվարին մըտրակ ի կուշտ եթէ առնէր.
Ո՛վ հէք պատանեկիկ, եթէ լիցի քեզ խուսափել
Ի խիստ ճակատագրէն, դու եղիցիս Մարկեղլոս:
Ծիրանագեղս անէք շուշանս ինձ բըռնալիր. սփռեսցից
Ծաղկունս զնովաւ, գոնեա զըստուեր իմոյ թոռին
Ծածկել ձօնիւք, գէթ հարկանել այսպէս նըմա ըզպաս սնոտի:
Այսպէս յածեալ համայն ուրեք ընդ լայնատարըն դաշտավայր
Օդեղէն գաւառին, հետազօտեն անդ զամենայն:
Զայսոսիկ Անքիսէս ցուցեալ որդւոյն կարգ ըստ կարգէ,
Եւ ի սըրտի նորին վառեալ զառ ի յապայ համբաւոյն բոց,
Յիշեցուցց ապա նըմա զառաջիկայ պատերազմունս,
Ըզլաւրենտեանսըն ժողովուրդս և զքաղաքըն Լատինեայ,
Եւ զո՛ր ուրեք վիշտըս կըրել, և յորոց խոյս կալ նըմա տալ:

*Քընոյ դըրունք են երկեակ, յորոց ըզմին աւանդեն գոլ*
*Եղջերեայ, և դիւրին ընդ այն էից ըստուերաց ելք.*
*Միւսն ի սպիտակ փըղոսկրէ պայծառափայլ, ընդ որ ստորինք*
*Զանըրջական երազս անէս յեթեր ի վեր առաքեն դէք:*
*Արդ Անքիսէս զայս ամենայն որդւոյ խրում և Սիբիլլայ*
*Ուսուցեալ, ընդ փըղոսկրեայ դուռն ըղնոսա ուղևորեաց.*
*Իսկ նա ի նաւըս դէմ եդեալ, առ ուղեկիցըս իւր դառնայր.*
*Յայնժամ քերեալ զափամըք եհաս ի Կայետեան նաւահանգիստ.*
*Արկան խարիսխ ընդ նաւառաջըս, կացին խելք առ ծովեզերըս:*

---

# ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵՍՅ ՄԱՐՈՆԻ

# Ե Ն Է Ա Կ Ա Ն Ի Ն

## ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ենէաս ի կումական ծովափանց նաւեալ ընդ արեւմուտս, և թաղեալ զկայետա զդայեակ իւր ի ծովեզերս Աւրունկաց, յառաջ խաղայ անդր քան զկիրկէոն լեառն չարահամբաւ վասն բնակութեանն անդ և դեղատուութեանցն Կիրկէի, և գայ հասանէ ի բերան Տիբերի: Զայնու ժամանակաւ Լատինոս թագաւորէր Աբորիգինացւոց. և էր նորա դուստր միածին Լաւինիա, ի պատգամացն Փաւնի գուշակեալ առն օտարազգւոյ ի հարսնութիւն, բայց յԱմատեայ մօրէ իւրմէ խոստացեալ Տուրնոսի արքային Հռուտուլաց: Յղէ Ենէաս հրեշտակս ի Լաւրենտոն քաղաք արքունի Լատինոսի: Սա ոչ միայն ի նիզակակցութիւն, այլ և ի փեսայութիւն իւր ընդունի զԵնէաս, յիշելով զպատգամն: Յայնժամ Հերայ գժգմեալ ընդ յաջողութիւն իրացն տրովացւոց, կոչէ զԱլեկտով ի դժոխոց, և ի ձեռն նորա գրգռէ նախ զԱմատէ զկին Լատինոսի, որ զմոլեգնութիւնս սպանդարամետական պաշտամանցն կեղծելով ծածկէ զդուստրն ի լերինս: Եւ ապա զնոյն ինքն զՏուրնոս նովին մոլեգնութեամբ գրգռէ 'ի մարտ, և զտրովացիս և զլատինս ընդ միմեանս արկանէ, սպանանելով Ասկանեայ զեղջերուն սիրելի Տիւռոսի հովուին արքայորդւոյ: Ամենեցուն 'ի մարտ խիզախեալ, Լատինոս եւեթ ընդդէմ դառնայ. բայց ստիպի տեղի տալ ճակատագրին, Հերայ զդրունս մարտին բանալով: Գումարին յամենայն կողմանց իտալիոյ նիզակակիցք Տուրնոսի, Մեզենտիոս և որդի նորա Լաւսոս ընդ ագիլլինացիս, Կատիլոս և Կորաս ընդ տիբուրացիս, Կեկուլոս ընդ պրենեստացիս, այլովքն հանդերձ:

# ԵՆԷԱԿԱՆ

## ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Եւ դու դայեակդ Ենէասայ, ով Կայետա, թողեր համբաւ
Յաւերժական մահուամբդ քով ի ծովափունըս մեր աստ.
Յա՛րդ յիշատակ քո պահէ զպատիւ տեղւոյն, ուր անուն քո՝
Թէ փառք են քեզ՝ ցուցանէ զոսկերսդ ի մեծն Եբեկորնեայ:
Բայց երկիւղածն Ենէաս դամբանական նըմա ըսպաս
Մատուցեալ ըստ օրինի, և ըզշիրմին կանգնեալ բըլուր,
Ի հանդարտել յարուցելոց ալեաց՝ թողու ըզնաւակայս,
Առագաստեալ ընդ ուղին. շընչէն աջող հողմք գիշերայն,
Եւ ոչ լուսին լուսափայլ ժըխտէ նըմա ուղի դիւրին.
Ընդ դողդոջ լուսակաւ վէտ վէտ ալեաց ծածանին ծուփք:
Քերեն զափամբք մերձ ի յերկիր կիրկէական, ուր անմատոյցք
Հընչէն անտառք յերգ անդադար ընչաւէտին դըստեր արփւոյն,
Որ բուրեան մայրի ի լոյս գիշերային ընդ հոյակապ
Յարկաւ վառեալ, ընդ նուրբ առէջըս սուր սանտերբ երթեւեկէ:
Ձայնք ի ներքուստ հեծեծանաց, և մըռընչիւնք առիւծուց՝
Դըժկամակաց կալ ի կապանս՝ ի տարաժամ գիշերի
Լինին լըսելի, և ստեւակիր խոզից խանչիւն,
Արջուց ի գոմըս բոհմունք, և անհեթեթ գայլոց գոռմունք,
Զորս էր Կիրկեայ ժանտ դիցուհւոյ ազդու բուսովք յեղաշըրջեալ
Ի մարդկային կերպարանաց յանասնեղէն դէմս և ի մորթ:
Այլ զի մի տրովացիք վիշտս ի հրէշից անտի կրեսցեն
Երկիւղածք դից, զի մի յափունսըն դըժընդակըս մատիցեն,
Ելից Պիւխդ զառագաստից նոցին ըզծոց սաստիկ հողմովք,
Եւ զերծոյց փախըստեայս ընդ յորձանուտ ալիս ի բաց:
Այն ինչ կարմրէր ծով ի շողից լուսոյ, և այգ ծիրանեփայլ

Ի վարդագոյնըս իւր երկձիս բարձր ընդ եթեր կառավարէր,
Զիջան հողմք, դադարեցին յանկարծակի ալք ի սպառ,
Եւ ընդ նամետ սալայատակըն մըրցէին թիք ընդ իրեար.
Աստանօր Ենէաս ետես անտառ մեծ ի ծովէ.
Ընդ այն Տիբեր զըւարճալի գետահետեալ սուր յորձանօք,
Խարտեաշ բազում աւազով հոսէ ի ծով. երամք հաւուց
Բազմազան շուրջ և ի վեր ըզգետեզերըն յաճախաւորք
Գեղգեղելով զայերս ի նուագ, ճախր յանտառի անդ առնուին:
Անդըր պատուէր ետ իւրոցն ուղղել զուղին, շըրջել զառաջս
Ի ցամաք, և եմուտ զըւարթ ի գետոն հովանաւոր:
Բե՛ր արդ օ՛ն, Երատով, առից պատմել ո՛յք ի նախնին
Լատիոն կային արքայք, և զի՛նչ յայնժամ էին անդ իրք՝
Ի մատչել բանակին եկաւորի ի ծովեզերս
Աւսոնիոյ, և զնախաձեռըն մարտին խանձ ածել ի վէպ:
Դու դիցուհիդ, լեր քերթողիս ինձ թելադիր՝ ասել զահեղ
Ճակատամարտս, ոգել ըզզօրս և զարքայից դըրդումն ոգւոց
Ի կոտորած, ըզբանակըն տիւրենեան և զգումարեալ
Ի միասին զըրնկօրնեայս միահամուռ ի պատերազմ.
Ծանր ինձ իրաց հասանէ կարգ, ի մեծ ինչ գործ ձեռն արկանեմ:
Զերկիրըն զայն անդորրաւէտ և ըզքաղաքս յայնժամ վարէր
Ծերունին Լատինոս արքայ յերկար խաղաղութեան:
Որդի ըզսա Փաւնոսի աւանդեն վէպք, ի Մարիկայ
Լաւրենտիկ յաւէրժհարսնէ. և Փաւնոսի հայր ըզՊիկոս,
Եւ զսա որդի քո, Սատուրնէ, դու ինքն հաւակ ազգատոհմին:
Բայց Լատինեայ չեկեաց ուստր, յափըշտակեալ ամենքին
Ի սկըզբնարոյս հասակի ըստ հրամանաց ճակատագրին:
Դուստըր միակ, ում հայրենին անկանէր տուն և աշխարհ մեծ,
Զարգացեալ ի տիս հասեալ էր հարսնութեան, և զնա յոգունք
Ի մեծըն Լատիոն և ընդ բոլոր Աւսոնիա
Խընդրէին. առաւել քան ըզըընաւս անձկայր նըմա
Զըքնաղագեղն և ի հաւուց նախնեաց հըզօրըն Տուրնոս,
Զոր ի փեսայ իւր առնուլ սիրով մեծաւ փութայր դըշխոյն:
Բայց նըշանք աստուածասաստք արգելս ընդդէմ արկանէին
Պէսպէս արհաւրօք. կայր սարդենի սուրբ սաղարթիւք
Ի ներքս անդ ի մէջ յարկին, պահեալ կրօնիւք ընդ ամս յամայր,
Զոր Լատինեայ հօր ի հիմնել իւրում զամրոցըն գըտեալ անդ,
Ի նըւէր Ապողոնի ըրբազանեալ էր ըստ վիպաց,
Լաւրենտեանս ի սարդենւոյ* անուն ըզբնակս յորջորջելով:

* Քանզի Լատինք Լաւրուս կոչեն զսարդենի, ուստի Լաւրենտեանք:



Ընճառահրաշ դէպք. թանձրախիտ մըղուաց զընդարձ բարձր ի կատար
Ծառոյն ընդ լոյծ այերս ի թիռ բուռն ի բըզզիւն ըզկայ առեալ,
Ոտք ընդ ոտըս խառնեալ ըզսաղարթուն կախին զոստոյ.
Պատգամ գուշակըն տայր յայնժամ. Ահա մերձեալ տեսանեմ հիւր,
Եւ գունդ ի նմին կողմանէ այսըր դիմեալ տիրապետել
Բարձու դղեկիս: Եւ ի ծըխել դարձեալ կուսին Լաւինեայ
Զահիւք սըրբովք խունկ ի բագինս՝ հօրն առընթեր, նո՛ր զարմանք,
Երևէր զերկայնաձիգ վարսիւքըն հուր բորբոքեալ,
Ծախելով ճարճատմամբ բոցոյն ըզզարդս ըսպառըսպուռ.
Գէսքըն վառեալ արքունիք, վառեալ պըսակն ականակուռ,
Եւ ծըխախառըն շառագոյն պատեալ լուսով, հո՛ւր ի բոլոր
Ապարանիցն էր տեսանել շուրջանակի բոցածաւալ:
Ահեղահրաշ տեսիլ, և այն էր մանաւանդ հիանալի,
Զի զնա ի բախտ և ի համբաւ մեծ երգէին ճակատագրեալ,
Այլ մարտ ահագին ըմպառնալով ժողովրդեան:
Ի հրաշիցս արքայն յուզեալ ի հայրենին դիմէ դաբիր
Ըշձին Փաւնեայ՝ խընդրել պատգամ յանտառ բարձուն Ալբունեայ,
Որ ստուարագոյն ի մայրիս, հովանաւոր ի կարկաջիւն
Սուրբ աղբեր, ըզՄեփիտիս վերածըխէ ժահահոտ:
Աստի Իտալք ի վարանս և Ենոտրեան երկիրն ողջոյն
Խընդրեն պատգամ. աստանօր ընծայաբեր քուրմն ի յօդեաց
Մատուցելոց ի զենումն, ընկողմանեալ ի մաշկենի
Ի քուն ի լուռ գիշերի, պատկերս յոգունըս տեսանէր
Ընդ օդս ի թիռ յածեալս ի տեսլ զարմանահրաշ, և ձայնք պէսպէս
Լըսելի լինէին, ինքըն ըզըօսնոյր ընդ դիս ի զրոյց,
Եւ յաւերնեան սանդարամետըս բարբառէր առ Աքերոն:
Աստ և հայրըն Լատին խընդրեաց հրաման պատասխանւոյ,
Զենեալ ըստ օրինի հարիւր գառինըս գեղմնաբարձ.
Եւ ի վերայ դըզալթուն և գետնամած գեղման նոցա
Մինչդեռ անկեալ կայր տարածեալ, ձայն ի խորոց անտի մայրւոյն
Հընչեաց յանկարծ. Ըզգոյշ լեր մի՛, որդեակ իմ, մի՛ ըզդուստըր քո
Տալ ի Լատին հարսանիս. մի՛ յառագաստըն պատրաստեալ
Վըստահիր. ահա փեսայ օտար առ քեզ եկաւորէ.
Նա յարենէ իւրմէ զանուն մեր ամբարձցէ յաստեղս ի վեր,
Եւ ի զարմէ նորին թոռունք՝ ցորվայր արփին օրակըշիռ
Հոլովեալ դիտէ զկըրկնակ աշխարհածով տեսանիցեն
Խոնարհեալ զամենայն յոտըս իւրեանց և հնազանդեալ:
Ըզպատգամըս զայսոսիկ հօրըն Փաւնեայ, և ըզպատուէրս
Առեալս ի լուռ գիշերի, ոչ կարաց ինքըն իսկ Լատինոս
Ունել ի ծածուկ. և վաղ համբաւըն թեւածեալ

Շուրջ ի բաց ծաւալէր ընդ աւտնեան քաղաքանին ։
Մինչդեռ մանկտին Լաւրենտեան ի սիզաւէտըն ծովեզեր
Ըղնաւատորմըն կայեր, անդ Ենէաս ընդ գըլխաւոր
Զօրավարս, և գեղանին Յուլոս բազմին ընդ հովանեաւ
Բարձու ծառոյն, և սկըսանին ըսպասք, բըլիթ ի նաշհոյ
Արկեալ ընդ խորտկօք ի դալարւոջ, որպէս պատուէր
Ինքնին տըւեալ էր Արամազդ. և յաւելուն ածել կուտել
Խայրիս վայրենիս ի դեմետրեանն անդր ի սկըտեղ.
Եւ ի սպառել յանկարծ այլոց ուտելեաց՝ հարկ առնէ քաղց
Ուտել ըղնուրբ հացն, և անսուրբ առնել ձեռօք զայն, և ժըպիրհ
Ատամամբք ըզբոլորակ ճակատագրեալ նըկանակն,
Եւ ոչ ի տափարակըն քառակուսի խընայեն ։
Անդ Ասկանի. Աւա՜ղ ծախեմք և ըզսեղան, ասէ ընդ խաղ
Եւ լռէ. բայց լըսելի եղեալ նախկըն բանն այն յայնժամ,
Զեւս արկածիցըն յայտ արար. և զայն նախկըն հայրն ի շըրթանց
Որդւոյն հըմայս յափըշտակեալ, գոչեաց անդէն ի հիացման.
Ողջոյն երկիրդ լինձ յաստուածոց ճակատագրեալ, ողջոյն ընդ ձեզ
Թերափք Տրովայ հաւատարիմք. այս հայրենիք, աստ է մեզ տուն,
Յիշեմ այժմիկ, զի զայսոսիկ լինձ Անքիսէս եցոյց գաղտնիս
Ճակատագրին. Որդեակ, ուր հարկ առնէ քեզ քաղց՝ վարեցելումդ
Ի տար ափունս առ ի չգոյէ խորտկաց ծախել ըզսեղանս,
Անդ յուսասցիս վաստակեալըդ գըտանել տուն և տեղի.
Անդ յուշ լիցի քեզ նախկըն կանգնել քաղաք և պարըսպել.
Այս քաղցն էր այն, այսոքիկ մեզ՝ աղէտք յետինք հանդերձէին
Առնել վախճան արկածից. ո՜ն արդ ելցուք ուրախամիտք
Ի ծագել արփիասկիզըն առաւօտու հետազօտել
Ո՛ւր կամք, և ո՛յք են աստ բնակիչք, և ուրանօր ազգին պարիսպք.
Ի հեռաստան ուրեք ի վայր ի ծովափանց աստի գնասցուք.
Հեղէք բաժակս արդ Դիոսի, և կարդացէք ուխտիւք ըզհայրն
Անքիսէս, անապակս ածէք անդրէն ո՛ն ի սեղան ։
    Զայս ասացեալ՝ ոստ ի ճակատ ած սաղարթուն, և զչահապետ
Տեղւոյն կարդայր և ըզդից բոլորեցունց նախնին զԵրկիր,
Զանծանօթըս տակաւին գետս, և ըզպար յաւերժհարսանց,
Ըզգիշեր և զգիշերոյ ծագեալ նըշանս, զիդականն
Արամազդ և ըզմայրըն փըռիւգեան, և զերկոսին
Ծընօղս յերկնէ և յԵրեբեայ կոչէր կարգաւ ի յօգնութիւն ։
Յայնժամ հայրն ամենակալ երիցս յերկնէ որոտաց
Ի պարզոյ, շարժեաց աջովն ամպ ընդ եթեր ոսկեճաճանչ ։
    Վաղ իսկ համբաւ ընդ տրովական գունդս հըռչակէր՝ ահա հասեալ
Զօրն յորում պարտ էր կանգնել ըզսահմանեալըն ի դից քաղաք.



Փութան խրախունս առնել անդրէն, և՛ ի հըմայս աւետաւորս
Ածեն ըզբաժակըս, զանապակըս պըսակեն ։
    Այն ինչ այգըն վաղորդեան ի սկըզբնալոյս պատէր զերկիր,
Սըփռեին հետազօտել զազգին սահմանս, ըզծովեզերս,
Եւ ըզքաղաք. աստ Նումիկեան աղբերն է լիճ, անդ Տիբերիս
Հոսէ գետ, և աստանօր բնակէ հըզօր ազգըն Լատին ։
Յայնժամ զաւակն Անքիսեան ճարտարախօսս ընտրեալ հարիւր
Ի կարգաց իւրաքանչիւր, և ի ձեռին ամենեցուն
Ոստ պալլասեան, ի հոյակապ անդր ի քաղաքն արքունական
Երթալ հրամայէ, նըւէրս ածել թագաւորին,
Խընդրել ի նմանէ խաղաղութիւն ընդ տեկրացիս ։
    Հա՛պա փութան ճեպընթացք ի կատարումըն հրամանին.
Ինքն ըզտեղի քաղաքին և զպարըսպացըն խոր պարկէն
Գըծագրէ, կանգնէ զնախկըն ի ծովեզեր անդ կայս ի ձև
Բանակետեղ, ածէ պատուար, և մահարձանըս շուրջ պատէ ։
Վաղ իսկ մանկտին հատեալ զուղին, և ի պարիսպըս մերձ հասեալ,
Զաշտարակս և զբարձրաբերձ տեսանէր յարկըս Լատինաց.
Անդ մանկունք առ քաղաքաւն և պատանիք դեռածաղիկք
Հրահանգէին կէսք ի ձիան, վարէին կառս այլք ի փոշւոջ,
Կէսք աղեղունըս լարէին կարծունս, և այլք ճօճեալ ճապուկ
Նիզակ յաջում ձայն իրերաց տային յարշաւ և յարդնընկեց.
Եւ սուրհանդակ ահա հեծեալ յունկն արքային ած ծերունւոյ,
Զի՛ ի ձև անծանօթ հըսկայակերպ գային անդր արք ։
Նա հրամայէ ըզնոսա ի ներքս ի յարկ իւր մուծանել,
Ի գահոյս հաւուց նախնեաց բազմեալ իւրոցն ինքն ի միջի ։
    Էր ի բարձունըս քաղաքին մեծակառոյց յարկ հոյակապ
Ահարկու կրօնիւք նախնեաց և անտառօք, բարձր ի հարիւր
Յեցեալ ի սիւն, լաւրենտացւոյն Պիկեայ էին անդ արքունիք ։
Անդ արքայք առնուին թագ, անտի նախ խուրձս ամբառնային.
Անդ էր ատեան և մեհեան, և դահամուտք անդ սըրբազանք,
Եւ ի զենումն ածեալ խոյս՝ բազմել սովոր էին անդ հարք
Յերկայնաձիգ ի սեղանս. և նախահարց պատկերք կարգաւ
Անդանօր ի վաղեմի մայրւոյ դրօշեալք, և Իտալոս
Եւ Սաբինոս հայր տընկագործ այգեաց մանգաղ ի ձեռին.
Եւ ծերունին Սատուրնոս, և երկդիմւոյն պատկեր Յանեայ,
Յանդաստակի անդ կային. և այլ արքայք ի սկըզբանէ,
Որք հայրենեաց վէրամարտիկք արիական ընկալան վէրս,
Եւ զէնք յոլով և կառք գերեալք, և մեծամեծ փականք դըրանց,
Գեղարդունք և վահանք, ցըցունք գըլխոց և կոր տապարք,
Եւ ի նաւաց խըլեալ ցըռուկք, ի սըրբազան դրանդիս ի կախ ։

Ինքըն Պիկոս բազմէր անդ կլւիրինեան ցուպ ի յաջում,
Եւ ի ձախումըն փաշանակ, ըզիկ հանդուցն արկեալ զիւրեաւ.
Պիկոս նուաճող երիվարաց, զոր սիրուհին Կիրկէ հարեալ
Ցըպովն ոսկւով և դեղով այլակերպեաց առ յոյժ սիրոյն
Ի հաւ փոքրիկ, երփնազարդ ըզնա ի թեւսըն երգունեալ։
Ի սըմին մեհենի ի հայրենին բազմեալ ի տան
Կոչեաց ի ներքըս Լատինոս ըզտեւկրացիս, և ինքըն նախ
Ի մըտանել նոցա սկըսաւ հեզաբարբառ. Ո՛վ դարդանիկք,
Գիտեմ զազգ ձեր և ըզքաղաք, ոչ անծանօթք այսր ուղղեցիք
Ջառագաստ. խօսեցարուք արդ, զի՞նչ խընդրէք, է՞ր աղագաւ
Եւ ի՞մ իմիք կարօտք յեզերս Աւսոնիոյ ընդ կապուտակ
Ծուփս ալեաց այսքանեաց ըզլաստափայտըս ձեր ածէք.
Թէպէտ անկեալք արտուղի, և թէ վարեալք ի մըրըրկէ,
Որպէս յաճախ պատահէ արկած յանդունդըս նաւորդաց,
Մըտիք ընդ ափըն գետոյս ի նաւակայս, մի հրաժարէք
Ի հիւրոյիցըս մերոց, և մի զանխուլ լիցի ի ձէնջ՝
Զի Սատուրնեայ Լատինքս եմք ազգ, ոչ օրինաց սաստիւ արդարք՝
Այլ կամակար զաստուածոյն նախնոյ ըզբարըս բերելով.
Քանզի յիշեմ ի ծերունեաց մեզ աւանդեալ յԱւրունկաց,
(Թէպէտ համբաւ աղօտ յամաց), զի յագարակս յայսոսիկ
Ծընեալ Դարդան՝ եմուտ յիդեան քաղաքանին ի փռիւգիա
Եւ ի Թրակեանն ի Սամոս, որ արդ կոչի Սամոթրակէ.
Անտի ըզնա ի Կորիտեայ տիւրենական քաղաքէ
Ընկալան արքունիք աստեղազարդըն կամարի
Ի գահ ոսկի. և զաստուածոցն յաւել բագնաց նա ըզհամար։
Եւ ի խօսել նորա զայս, Իլիոնէ ած ի վերայ.
Ո՛վ Թագաւոր, ո՛վ փաւնեանըդ պերճ զաւակ, ոչ սեաւ մըրրիկ
Վարեալ ալեօք ըստիպեաց ըզմեզ յերկիր ձեր այսըր գալ,
Ոչ աստղ ըզմեզ և ոչ ծովեզըրդ պատրանօք արկ արտուղի.
Այլ խորհըրդով ամենեքին և կամակար դիմեալ եկաք,
Հալածեալք ի քաղաքէ՝ քան զոր չետես մեծագոյն
Ցեկաւորեըն երբեմն արփին ի դիւցընկէց վերջին ծայրից։
ՅԱրամազդայ է սկիզբն ազգիս, և յԱրամազդ ի հաւ իւր
Պանծայ մանկտին դարդանիկ. և Ենէաս արքայն ինքնին
Տրովացի՝ սերեալ ի վեհն Արամազդայ յըղէ ըզմեզ
Ի սեամըս քո. քանի մըրրիկք ընդ իդականըն դաշտորայս
Գնացին ի ժանտ Միկենաց յուզեալք, և ի՞բր ոլորտք կըրկին
Եւրոպայ և Ասիոյ ճակատագրեալ դըղըրդեցան,
Գիտեն զայն և զորըս ծագ երկրի տրոհէ ի հեռաստան
Ցովկիական ալեաց պատեալ, և զորըս վայր ի մէջ գօտեաց



Զօրեցունց ընդ բոցակեզ արեգակամբ անջըրպետէ։
Ի հեղեղէ անտի վարեալք ընդ այսքան ծով ծայրածաւալ
Գամք վասըն դից ընտանեաց հայցել դադար ինչ գուզնաքեայ,
Ծովեզը անքոյթ, անխափան ջուր և այեր հասարակաց.
Ոչ եղիցուք ի նախատինըս պետութեանդ, և ոչ թեթև
Ցաճախեսցէ ձեզ համբաւ, լիցին չընորհք ձեր անմոռաց.
Մի՛ լիցի զիղջ Աւսոնիոյ ընդ ժողովել յինքն ըզՏրովա։
Երդուեալ ի բախտ Ենեայ, և յաջ նորին հըզօր, (եթէ դաշամբ
Եւ թէ մարտիւ և զինու առեալ ուրուք իցէ ըզփորձ),
Զի ժողովուրդք ըզմեզ յոլովք ազինք յոգունք ցանկացան
Եւ խընդրեցին ունել իւրեանց նիզակակից. մի՛ թըւիցիմք
Ձեզ արհամարհք զի գամք մըզէն կրելով ի ձեռըս ժապաւէն
Աղերսաւորք. զի հրամանք դիցն արարին մեզ հարկ խընդրել
Զերկիր ձեր. աստի Դարդան եղ, և այսրէն արասցէ դարձ.
Զի Ապոլոն աչեղ սաստիւք ի տիւրենեանըն Տիբերիս
Վար է ըզմեզ, և նումիկեան աղբերն ի յուղխ սըրբանըւէր։
Ցաւելոլ զկորուսելոց բախտին նըշխարըս գուզնաքեայս
Ի տրովական հըրոյն ապրեալըս նըւիրել քեզ Ենէաս.
Ոսկեղինաւս այսու ըզաղնօք քաւէր նուագաւ հայրն Անքիսէս.
Այս Պրիամու էր զարդ յառնել իւր իրաւունս, կոչեալ առեան
Ժողովրդեան ըստ օրինի, և այս նորին խոյր սըրբազան,
Այսոքիկ արկանելիք իլիուհեացըն ձեռագործք։
Եւ ի խօսել Իլիոնեայ անշարժ ի լուր կայր Լատինոս,
Արկեալ ըզդէմս ի խոնարհ, շըրջըըջէր զաչըս մըտայոյզ.
Ոչ ծիրանիք Պրիամու շարժեն ըզնա, ոչ գաւազան.
Այլ ի դըստերն իւր խորհէր ի հարսանիս և յառագաստ,
Ըզնախնոյն ի մըտի յեղյեղելով փաւնեայ պատգամ,
Զի ինքն արդեօք էր փեսայն տարաշխարհիկ ճակատագրեալ,
Հրաւիրեալ համապատիւ իշխանութեամբ յարքայութիւն,
Եւ ի նմանէ էր հանդերձեալ զաւակ հըզօր և հրաշալի
Տիրել բոլոր տիեզերաց։ Եւ ուր ուրեմն ասէ զըւարթ.
Ցաջողեսցեն դիք ըզձեռնարկ մեր, կացուսցեն զիւրեանց պատգամ.
Շնորհեալ լիցի քեզ զոր խընդրես, ո՛ տրովացիդ, և ո՛չ ի բաց
Մերժեմ ըզնուէրս. և Լատինոս ցորչափ իշխէ, մի՛ լիութիւն
Բերրի անդոց, և մի՛ Տրովայն ձեզ ճոխութիւն պակասեսցէ։
Ինքն իսկ Ենէաս, եթէ այդչափ իւր իղձք իցեն
Ասպընջականս ունել ըզմեզ և անուանել նիզակակից,
Թող եկեսցէ, յերեսաց բարեկամաց մի՛ երկիցէ
Խաղաղութեան ուխտի լիցի առհաւատչեայ՝ ընդ արքայի
Ձեռում խառնել աջ ընդ աջ. զայս դուք յինէն արդ դարձուցէք

Զբրոյց առ Նա․ է ինձ դըստրիկ՝ զոր ոչ Հըրաշք բազմապատիկք
Երկնաւորք, ոչ Հայրենեացըս դարիրայց ներեն պատգամք
Տալ Համազգւոյ առն ամուսին, այլ այլազգւոյ տարաշխարհիկ
Փեսայի նախապատմեն Հանդերձել գալ ի Լատիոն,
Որ ըզՀամբաւ մեր յարենէ իւրմէ յաստեղս ածցէ ի վեր.
Եւ Համարիմ, եթէ զըստոյգն ինձ գուշակեն միտք, և ցանկամ՝
Զի սա նոյն ինքն իցէ այն՝ զոր Հրամայեն Ճակատագիրք։

Զայս ասացեալ՝ ընտրէ ձիան Հայրն ի բոլոր ասպաստանէն.
Կային նըմա գաւեղք ի գոմս անդ ի բարձունս երեքարիւր.
Եւ Հրամայէ օթարեալս ի գորգ երփնանըկար ծիրանածուէն
Ածել տեւկրացւոց երագոտունըս մէն միում,
Փառամանեակ արկեալ ոսկի զպարանոցաւ նոցին ի կախ,
Որք ըզխարտեաշ ծամեն ըզսանձ, ոսկիասար պարածածկեալք։
Իսկ Ենեայ՝ որ կայր ի բաց՝ առաքէ կառս և զոյգ ձիոց
Մուղ և մարզիկ, երկնացեղիկըս բոցաշունչս, յազգէ նոցին՝
Զորըս Կիրկէ Ճարտարամիտ գաղտագողի ի Հօրէն
Ծընոյց Հարճորդիս։ Սոքիմբք ինքեանք Ճոխք պարգևօք
Դարձ առնեն յԱրեաց Լատինոսի պատգամաւորք,
Բարձունք ի նուս երիվարաց աւբերելով խաղաղութիւն։

Եւ աՀա դարձաւոր գայր յԻնաքեանց արգիւացւոց
Դըշխոյն Դիոսյ ընդ այերըս դառնացեալ. և ի բարձանց
Տեսանելով ի Հեռուստ ի սիկուլեանըն Պաքինեայ
Զըւարթ զԵնէաս, և զդարդանեանցըն նաւատորմ,
Ըզկառուցումըն տանց, և անդ ըզկայ առնուլ նոցա յերկրին
Թողեալ ըզնաւս ի բացեայ, կառեաւ եկաց դառնակըսկիծ,
Եւ զայսոսիկ ի սըրտէ չարժեալ ըզգլուխ իւր բարբառէր.
Ո՜վ դըժպըՀի ազգ, և մերոյս Ճակատագրի ընդդիմամարտ
Փըռիւգայնոց Ճակատագիր. մի՞թէ անկան նոքա ի դաշտ
Սիգէական, մի՞թէ գերեալք կացի՞ն Հնացի՞ն ի գերութեան.
Մի՞թէ մաշեալ Տրովա ի Հուր կարա՞ց զորեարն ընդ իւր ծախել,
Զերծան ընդ բոց և ընդ Ճամբար Հորդեալ ուղի։ Թերևս արդեօք
Աստ ուրեմըն զօրութիւն իմ ընկՃեացի՞ վաստակաբեկ,
Դադարե՞ թերևս 'ի յիս Հեռ կըշտացլինդ. նա՝ ոխերիմ
Հալածելոցն 'ի Հայրենեաց ըզՀետ մըտեալ ընդ ալիս,
Իշխեցի ծովէ ի ծով փախըստէիցն ընդդէմ դառնալ.
Սաստք երկնից և ծովու ըսպառեցան 'ի տեւկրացիս.
Զի՞նչ ինձ խըրուտք և Սկիլլա, զի՞նչ և Քարիբդ ըստուար օգնեաց.
Ի ցանկալին ձոր Տիբերի կան ամրացեալ՝ աներկեւան
Ի ծովէ և յինէն. ըզԼապիթայց ազգ ամեՀի
Կարաց Արէս կորուսանել, և Հայրն իսկ դից ըզԿաղեմին



Մատնեաց ցասմանն Արտեմեայ ըզԿալիդոն. և զո՞ր ոՃիր
Կալիդոնի և Լապիթայց գործեալ այնքան էր դըժընդակ.
Իսկ ես տիկինըս մեծ դըշխոյ Արամազդայ, ոչ ինչ թողեալ
Ցարդ անփորձ՝ որ ինչ Հընար էր ինձ, և յո՛ ուրեք դիմել,
Յաղթիմ յԵնեայ. եթէ չիցէ յիս զօրութիւն բաւական,
Ոչ յերկուացայց խընդրել զայն՝ ուր և իցի ինձ գըտանել.
Եթէ զվերինս ոչ կարացից յողոք ածել դիս, չարժեցից
Զըստորինս. Թող մի՛ տացի ինձ խափանել նոցա ըզմուտ
Ի սաՀմանըս Լատինեայ. թող Հարսն Ենեայ Ճակատագրեալ
Կացցէ անշարժ Լաւինիա. սակայն ձըգել ինձ յերկարել
Լիցի օրէն զեւս իրաց, սակայն լիցի ինձ օրէն
Զերկոցունց իսկ արքայից ըզժողովուրդըս կործանել.
Այս աներոյն ընդ փեսային դաշնակցութեան՝ լիցի ազգաց
Իւրեանց ի վարձ. և քեզ՝ յօժիտ, ո՛ օրիորդ, տացի արիւն
Ոչ դուստր ևեթ Կիսեէի ջաՀիւ երկնեալ՝ ծընցի որդի
Աւանիկ և Աստղական ծընունդ Հանդոյն, միւս այլ Պարիս,
Եւ ջաՀ դարձեալ աղիտաբեր կըրկնակործանըն Պերգամայ։

Զայս ասացեալ, էջ աՀարկու յերկիր ի սոսր, ձայնեաց ի վեր
ԶԱլեկտով եղեռնագործ յաղջամըղջին դըժոխոց
Ի կայից քերցըն ժանտից, որում տըխուր պատերազմունք
Զայրոյթ դարան և եղերունք՝ դաՀիՃք սըրտի՝ գըրեան ըզՀետ.
Հայրն ինքնին ատեայ Պլուտոն, ատեան ըզՀրէշըն զայն և քորք
Դըժոխայինք, յայնքան ի դէմս այլակերպի, այնքան դըժկերպ
Ի կերպարանս, և այնքանիս սեաթորմի օձս ընձիւղէ։
Ըզնա Հերա դըրդէ բանիւք, այսպէս առ նա բարբառելով.
Ո՜վ կոյսըդ դուստըր Գիշերոյ, մատո ըզքոյդ զայս ինձ վաստակ,
Զայս օգնութիւն. և մի՛ պատիւ մեր և Համբաւ նըկուն եղեալ
Տացէ տեղի, և մի՛ ենեանք Հարսանեկան Հայթայթանօք
Պաշարեալ ըզԼատինոս՝ 'ի բուռն ածցեն զԻտալիա։
Կարող ես դու զինուորել ըզմիաբան եղբարս ի մարտ,
Հեռիւ ըզտունըս կործանել. կարես ըզջաՀ եղերական,
Գանս և Հարուածս ի յարկս ածել. քեզ բիւր ազգի ազգի անուանք
Եւ Հընարք բիւրք են եղերունըս գործելոյ. ըզբեղնաւոր
Կուրծըս քո Հար, ըզկըռեալս խաղաղութեան ցըրեա դաշինս,
Գըրգիռըս սերմանեա պատերազմի. զէն կամեսցի,
Զէն խընդրեսցէ, դիմեսցէ յափըշտակել մանկտին ըզզէն։

Համպա խաղաց Ալեկտով, ներկեալ ի թոյնըս գորգոնեան,
Ի Լատիոն նախ յապարանըս Լաւրենտեայ թագաւորի
Ի բարձունս, և անդ ըզկայ եառ ի լուռ սեամս Ամատայ.
Կիզուին ըզսիրտ Հիքին Հոգք և զայրոյթ կանացի

Ընդ գալուստ տեւկրացւոց, ընդ հարսանիսըն Տուրնոսի։
Ի սա ըզմի ի կապուտակ իժից վարսիցն արկ դիցուհին,
Եւ մինչ ի խորըս սըրտին ընդ ծոցն ի ներքըս խաղացոյց,
Զի հրէշիւն այնուիկ մոլեալ՝ ածցէ ըզտունն ողջոյն ի խռով։
Սահեալ իժին մեծի ընդ ձորձ և ընդ ողորկ կուրծ մոլելոյն
Գալարելով թեթեւակի, պատրէ ըզնա. և օձային
Ազդէ ոգի, մերթ ոսկեղէն որպէս մանեակ պատեալ զուլամբ,
Մերթ մանեկոր զերդ ժապաւէն երկայն ընդ հերսըն մանեալ՝
Եւ լըպիրծ ընդ բոլոր մարմնոյն մասունըս սողոսկի։
Մինչդեռ անդէն ի սկըզբան սողեալ ժանտին ողող ի թոյն
Զըզգայութիւնսըն յուզէր և վարակէր զոսկերան ի հուր,
Զև բոցոյն ծաւալեալ յոգիսն ի սպառ, հանդարտագոյն՝
Այսպէս զօրէն սովորական մարց խօսեցաւ յորդ արտասուօք,
Ըզդուստըր իւր և զհարսանիսն աշխարելով փըռիւգային.
Վըտարանդեացըն տեւկրացւոց տացի, ո՜ հայր, Լաւինիա,
Ո՞չ խնայես ի դուստըր քո, և ո՞չ ի քեզ, ո՞չ և ի յիս
Ի մայր նորին՝ զոր նենգաւորն ի շունչ նախկին հիւսսոյ թողցէ,
Եւ ի բաց ընդ անդունդս ածցէ ըզկոյսն աւար առեալ.
Ո՞չ այսպէս ի Սպարտա և փռիւգացին եմուտ հովիւ,
Եւ ըզլեդեանըն Հեղինէ ի տրովական պարիսպս եած.
Ո՞ւր է խոստումն անդըրժելի, ո՞ւր քո նախնին գորով ի քոյս,
Եւ այնքանիցըս տըւեալ արենակցին քում աջ Տուրնեայ։
Եթէ փեսայ օտարազգի խընդրի ածել ի Լատին,
Այսպէս վըճռեալ, և քեզ փաւնեայ հօր քո պատգամք հարկ առնեն
Երկիր ամենայն ի հրամանաց մերոց ազատ (զպյս,
Բնակեալ ի բաց՝ օտար է ինձ. այս իսկ և դիցն իցէ պատգամ.
Նա աւանիկ եթէ զըսկիզբըն հետազօտեմք տոհմին Տուրնեայ,
Հայր իւր Ակրիս է և Ինաք, և հայրենիք Միկենք միջինք։
Այլ իբրև բանք իւր ի դերև ելին, և չետ արքայն տեղի,
Մինչ մոլեկանքըն թոյնք օձին թափանց յաղիսն անցանէին,
Ցայնժամ ապա սաստկայոյզ հէքն ի հրէշիցըն տոսկալեաց,
Ընդ քաղաքըն լայնալիր մոլեգնոտի այլանդակեալ,
Լործն ի չըրթանցըն ծորելով, որպէս փոթոր պըտուտկելով
Ընդ կարկամ խարազանաւ, մինչ խաղասէր վարէ մանուկ
Զայն ընդ դաւիթ ընդարձակ. նա գանակոծ յածի ի հիռ.
Ապշի ռամիկն և մանկըտեակ, պիշ ընդ չըրջկէն տօսախըն կայ,
Խրախոյս գանիցըն տան հարուածք. ոչ ինչ ընդհատ շուրջ գայ դըշխոյն
Ընդ մէջ քաղաքին և ընդ ամբոխըն վայրենի։
Նա աւանիկ և ընդ անտառս իբր ի Բաքեայ պաշտամունս,
Ի մեծագոյն իշխեալ ոճիր և ի սաստիկ հարեալ աւիւն,



Ի լերինս հովանաւորս ըզդուստըր իւր թաքուցանէ
Զերծուցանել ըզնա անդ ի տեւկրական առագաստէն,
Ցամեչ ըզջահ, եհ եհէ եհ մըռընչելով քեզ ո՜վ Բաքէ,
Ըզքեզ միայն ձայնելով արժանաւո՛ր օրիորդին.
Համբաւ ըզնըմանէ թեւապարէ՝ գեղարդըն քեզ
Բաղեղնապատ ծօճել ճապուկ, և շուրջ ըզքև պար յօրինել,
Եւ քեզ ըզգիսակըն դարմանել սըրբանըւէր։
Նոյն եռանդն ի Գորգոնայց ի սիրտըս մարց բորբոքեալ,
Վարէ ի խընդիր նորոց յարկաց զամենեսին.
Ելեալ ի տանց՝ տան հերարձակ հողմոց ըզգէս և զպարանոց.
Կեաք ի դողդոջ լընուն ի ճիչ կականաւոր օդըոց զայերս.
Այլք մաշկահանդերձք կըրեն գեղարդըն սաղարթուն.
Ինքըն ի միջի բարձեալ բեւեկըն բոցավառ՝ երգէ զՏուրնեայ
Եւ ըզդըստերըն հարսանիս. և շուրջ ածեալ զարիւնըռուշտ
Ականողիս՝ գոչէ. Ի՜ մարք ամենեքեան լատինուհիք՝
Որ ի ափիւռսդ էք, լըւարուք. եթէ երբեք կայցէ դեռևս
Ի բարեգութ սիրտըս ձեր գորով ընդ հէքս Ամատէ,
Եւ մայրենի իշխանութեան եթէ կայցէ դեռ փոյթ ի ձեզ,
Ըզվարսակալըս ձեր լուծէք, եկայք առէք ընդ իս աւիւն։
Այսպիսեօք Ալեկտով դիւնիսեան մըտրակօք
Վարէր ըզդըշխոյն ընդ գաղանուտ վայրս ամայիս
Եւ ընդ անտառս. այլ ցայսվայր ըզնախաձեռըն զայն գըրգիռ
Մոլեգնութեան չատ համարեալ, չըրջէ զխորհուրդս ամենայն
Ի յարկըս Լատինեայ եղեռնագործ դիցուհին.
Եւ ի թեւըս թըխատիպս անտի մեկնեալ ճեպ ըզճեպի՝
Ի պարիսպըս գոռոզին Հըռուտուլեայ բարձեալ բերի։
Դանայեայ զքաղաքըն զայն ասեն հիմնեալ ի բնակութիւն
Ակրիսական գաղթականին՝ զոր անդր ուժգին վարեաց հարաւ.
Արդուա տեղին այն ի հաւուց նախնեաց երբեմն յորջորջէր.
Պահէ զանունըն գերապանծ ցարդ Արդէա, այլ բախտն եանց։
Աստ մինչ Տուրնոս ի բարձրաբերձ կայր յապարանըս իւր ի նինջ,
Ըզկէս հանդըստեան առեալ ի խոր սեաւ գիշերոյ,
Դընէ ի բաց Ալեկտով ըզմոլեգին և ըզխոժոռ
Կերպարան, փոխի ի դէմըս պառաւոյ, և անգեղեայս
Բերէ խորշոմս ի ճակատու, ածէ զալեօքըն ժապաւէն,
Կեղծաւորի ի յաւարդ՝ յեռեալ ի հերսըն ձիթենի
Իբր ըսպասեակ աստուածուհւոյն Հերայ և քուրմ մեհենին.
Գայ երեւի պատանւոյն, և զայսօրիկ առնա խօսի.
Ո՞չ ինչ, Տուրնէ, փոյթ է քեզ. ընդ վայր այդքան հեղեր վաստակ,
Զի գաւազան քո տացի գաղթականաց դարդանացւոց.

Ըզհարսանիս և զօժիտ, զորս ըստացար արեամբըդ քով,
Զկնայ արքայն քեզ, և օտար խընդրի ժառանգ արքայութեան.
Ե՛րթ ընդունայն արդ դիմագրաւ լեր վըտանգաց՝ ծաղըր կացեալ,
Ըզտիւրեննեան հար ըզճակատըս խորտակեա, տուր լատինաց
Բաղկաւ քով խաղաղութիւն. ամենազօր դուստըրն Կրոնեայ
Ետ յայտնապէս ինձ հրաման, մինչ դու աննկեալ դընիս ի քուն
Ի խաղաղ գիշերի, ածել առ քեզ զայս պատգամ.
Օ՛ն արի սպառազինեա ուրախամիտ ըզմանկտիդ,
Խաղացո հան ընդ դըրունս. և որ նըստինըդ զօրավարք
Փռիւգացիք առ գեղեցիկ գետովդ՝ ընդ նաւսըն նըկարէնս
Ի հուր մատնեա. զայս հրամայէ քեզ աստուածոցըն սաստ ահեղ.
Ինքն իսկ արքայն Լատինոս եթէ ոչ յանձն առցէ լընուլ
Ըզխոստումն, և տալ քեզ ըզդուստր իւր ի հարսանիս,
Ըստըրջասցի. և ըզՏուռնեայ քինուն ըզփորձ առցէ մարտիւ:
Յայնժամ ծաղր արարեալ ըզգուշակաւըն պատանին,
Զայս ետ նըմա պատասխանի. Չէ ինչ զանխուլ, որպէս կարծես,
Յինէն համբաւ մըտանելոյ նաւատորմին ի Տիբերիս,
Մի՛ դու այդքան խէթ տարապարտ կասկածանաց ինձ յաւելուր.
Դըշխոյն Հերա չարկցէ ըզմեզ ի մոռացօնս, այլ ալեւոյթ
Պարտեալ յամաց և ապիկար ի ճանաչումըն ճըշմարտին
Յուզէ ի զուր ըզքեզ ի հոգս, ո՛վ մայր, և տայ ահիւ սնոտեաւ
Արկեալ ի խաղըս գուշակել զէն արքայից ընդդէմ միմեանց.
Քեզ ըզբագնաց լիցի հոգ, և ի հըսկումըն մեհենաց.
Խաղաղութեան և մարտի թողցի ոյց պարտն է հոգ՝ արանց:
Ի բանից աստի լուցաւ ծանրացասումն Ալեկտով,
Եւ պատանին ի խօսելն հարաւ յանկարծ ըզդողանի
Պակուցեալ ահաբեկ, այնքան բազումք շըչէին օձք
Զերինեաւ, և այնպէս տեսիլ դիմացն էր սոսկալի:
Ինքն ըզհրաշէկ աչսըն շըրջեալ՝ մերժեաց ի բաց ըզպատանին,
Մինչդեռ յամէր նա և խընդրէր բազում ինչ այլ բարբառել.
Եւ ի վարսիցն օձըս կըրկին ցըցուեալս ի վեր, և զխարազան
Հնչեցուցեալ, կատաղելովք շըրթամբք յաւել զայսոսիկ.
Ահաւասիկ պարտեալս յամաց, զոր ալեւոյթ՝ ապիկար
Ի ճանաչումըն ճըշմարտին՝ արկեալ ի խաղս ահիւ սնոտեաւ
Զէն արքայից ընդդէմ միմեանց տայ գուշակել. հայեաց և տես,
Գամ ի կայից քերցըս ժանտից մարտ ի ձեռին ահա և մահ:
Զայս ասացեալ՝ արկ ըզջահըն բոցավառ 'ի պատանին,
Եւ հար մըխեաց ըզծըխամած բեւեկն ի կուրծըս նորին:
Ըստոյց ըզնա ահ մեծ ի քնոյ, և ընդ ոսկերս և ընդ անդամս
Եւ ընդ բոլոր անձըն նորին քիրտն ուղխօրէն իջանէր.



Զէն մըռընչէ խելայեղեալ, զէն յանկողինըս իւր խընդրէ
Եւ 'ի տան. մոլի 'ի նմա իղձ երկաթոյ, եղեռնագործ
Աւիւն մարտի և զայրոյթ. որպէս յորժամ բոց 'ի ներքոյ
Յորձնեռանդըն պըղընձւոյ 'ի ճարճատիւն մեծ կուտակեալ
Խանձողիւք բորբոքի, եռան ընդոստ ալիք 'ի վեր,
Զայրագնի 'ի ներքուստ բըռնութիւն ջուրց, և ծըխախառն
Ամբառնայ ուղխ փըրփրադեզ, և թուխ ընդ օդս յառնէ շոգի:
Հապա հրաման տայ առաջաց 'ի մանկըտւոյն, տանել բողոք
Զադմըկելոյ խաղաղութեան առ Լատինոս, կազմել 'ի զէն
Պաշտպանել Իտալիոյ, վանել զոսոխն 'ի սահմանաց.
Ասէր զինքըն բաւական ընդդէմ ազգացն երկաքանչիւր,
Տեւկրացւոց և լատինաց, և զգիս կարդայր յօգնութիւն:
Յայնժամ Հռուտուլք այր քան զընկեր խրախոյս միմեանց տային ի
Կէսք ի գեղջ պատանւոյն և ի յառոյգ տիոց շարժեալ, ( զէն
Կէսք ի հաւուց նախնեաց նորին թագաւորաց, այլք ի պայծառ
Քաջութեանց բազկի նորա. բայց մինչ Տուռնոս ըզՀռուտուլեանց
Յանդըգնութեամբ լընոյր ըզսիրտ, գայ հասանէ Ալեկտով
Ըստիւգական թեւովքն ի նոր դըրդել 'ի դաւ ըզտեւկրացիս,
Ուր գեղանին Ասկանի ի ծովեզերըս գարանէր
Ըզջոկ երէոց խուճապելով արշաւասոյր.
Անդ կըկխտեանն օրիորդ արկ ի շըներն յանկարծ զայրոյթ,
Եւ ի հոտըն ծանօթ հար ըզնոցին հոտոտելիս,
Հալածել սրարշաւ ըզմի ի յեղջերուաց. աստի եղեւ
Նախասկիզբըն չարեաց, լուցան ոգիք գեղջկաց ի մարտ:
Եղջերուին այնորիկ չըքնաղագեղ էր կերպարան,
Եղջերք բարձունք. և տածէին ըզնա մանկունք որդիք Տիռռեայ
Քեցեալ ի ստեանցըն մայրենի, տածէր և հայրն ինքնին Տիռռէ,
Որում անդեայն հնազանդէր արքունական, և լայնալիր
Դաշտօրայք նըմա յանձն էին ի պահ. և քոյր նոցին
Սիլուիա զամենայն ածեալ խընամ զարմանէր
Զուսեալն 'ի հլութիւն, և բոլորիւք փափկիկ ծաղկանց
Զեղջերս երեոյն գեղազարդէր, սանդրէր ըզնա,
Լուանայր յաղբիւր ականակիտ. Նա ձեռնընդել կայր սովորեալ
Առ սեղանովըն տէրունի, և ընդ անտառըս թափառեալ՝
Դառնայր ինքնին ապա անդրէն ի տուն ի սեամս ընտանիս,
Անագան իսկ մընացեալ ի տարաժամ երեկոյի:
Սըմա բարակք Յուլեայ յորսըս կատաղիք, մինչ դեգերէր
Ըստ դիպուածոյ ի բացեայ՝ ընդ հեղասահ լուղեալ ընդ գետ
Եւ զգետեզերը ի դալարուոջ մեղմէր ըզտօթ, մըտին ըզհետ:
Ինքն իսկ Յուլոս, գեղեցիկ գովից յայնժամ վառեալ ի սէր,

*Ոստոյց ի կոր եղջերէն սըլաք, և ոչ աստուածուհին*
*Եթող անօգնական վրիպել աջոյն. թըռեաւ ծըղօտն*
*Ի շըկահիւն սասուիկ, եանց ընդ փոր Նորին և ընդ երանս.*
*Կարեվէր քառոտանին դիմեալ ի յարկ անդր ի ծանօթ,*
*Անկաւ հառաչանօք ի գոմ՝ յարիւն թաթաւեալ,*
*Եւից ըզյարկն ի պոռոչ՝ իբր օգնութիւն պաղատելով։*
*Նախ Սիլուիա քոյր ըզծըղիս հարեալ զուսովք ձայնէր Նըպաստ*
*Աշաղակաւ, և զտոկս ի ծիգն ըզլինականըս կարդայր։*
*Նոքա իսկոյն գան հասանեն, զի հրապուրիչն անողորմ՝*
*Կայր դարանեալ ի լուռ մայրիս. կէսք ի խանձողըս կիսայրեաց,*
*Այլք ի կոճեղս ոստալիցըս զինուորին, հայթայթէ*
*Զայրոյթ ի զէն որ ինչ ումեք և պատահէ առ ձեռին։*
*Եւ Տիւռոս ի պատառել ըզբուն կաղնւոյ քառահերձ՝*
*Սեպս ի ներքս արկեալ ուժգին, մոլեգնոտի զարհուրելի,*
*Ցափըշտակէ ըզտապար, կոչէ զամբոխն անդր ի մի վայր։*
*Ցայնժամ պատեհ գըտեալ յեղեռըն ժանտաժուտ աստուածուհին,*
*Իջանէ ի բարձուէ դիտանոցին, և զկայ առեալ*
*Ի գըմբեթարդ յարկ գոմոյն, տայ ի ծայրէ անտի Նըշան*
*Հովուական, և կոր եղջերբ անդընդային ածէ շառաչ.*
*Շուրջ ընդ անտառն առ հասարակ գընայ յանկարծ սօսաւիւն մեծ,*
*Մայրիք խորինք տան արձագանգ, եռուզեկան աստուածուհւոյն*
*Լըսէ լիճ ի հեռուստ, լըսէ սպիտակ՝ծըծըմբայնով*
*Ջուրբ գետըն Նար, և վելինեանք լըսեն ի բաց աղբերակունք.*
*Սըրտաթունդ ահիւ փարին մարք ըզմանկամբքըն գըրկապինդ։*
*Ցայնժամ մըշակք ամեհիք դիմեն ի ձայնըն երագունք,*
*Համախըմբին ուր եղջերեայն կոչ առնէ փող ահեղագոչ.*
*Նոյն և արբունք տրովացի բացեալ ըզդրունըս պատնիշաց՝*
*Հըոսեն ի յօգն Ասկանեայ, և յարդարեն ճակատամարտ,*
*Ոչ ևս ի կռիւ գեղջկային ըսպառազէնք ի բիրտ մահակս*
*Եւ ի խանձողըս կիսակէզ, այլ երկսայրեօք գոռան սուսերբք.*
*Նիզակախուռն յառնէ հունձ սեաւ, փայլեն պըղինձք յարփւոյն ի ցոլ,*
*Լոյս մինչև յամպս արձակեն. որպէս մինչ ծուփք Նախկին հողմով*
*Ըսպիտակել առնուն, ուռնու ապա տակաւ ծով, կուտակէ*
*Կոհակս ի վեր, և յանդընդոց մինչև յաստեղս անդր ամբառնայ։*
*Աստ պատանին Ալմոն, երէց յորդիս Տիւռեայ, ի չկահելոյ*
*Նետէ հարեալ՝ անկաւ տապաստ դէմ յանդիման ճակատուն.*
*Փանզի ի փողըն խոցեալ՝ եխից արիւն ըզխօնաւուտ*
*Ձայնին ուղի, հեղձամըղձուկ ըզշունչըն Նուրբ արարեալ։*
*Անկան յոգունք արանց իրանք, և ծերունին անկաւ Գալէս՝*
*Հաշտարար ի մէջ մըտեալ, այն որ ընաւից էր գերազանց*



*Արդարութեամբ, և ճոխագոյն երբեմն անդովք յաւսոնացիս.*
*Հընգեակ Նըմա հօտ բառաչօղ, հընգեակ Նախրաց ի յարօտոյ*
*Դառնային ջոկք, և հարիւրեակ զանգըս խոփովք պատառէին։*
*Մինչդեռ հանդէտ արիսիւ այս անցք ընդ դաշտս անցանէին՝*
*Կարող եղեալ ժանտ դիցուհւոյն զըսպառնալիսն ածել յարդիւնս,*
*Այն ինչ ըսկիզբն առին Նախճիրք և Նախաձեռըն եղերունք*
*Պատերազմին, յԵրեկօրնեայց անտի մեկնեալ ինքն երկնաչու*
*Գայ առ Հերա յաղթողօրէն, և բարբառի խրոխտաձայն.*
*Ահա հերձուած դառնաղէտ կատարածի քեզ յաջողեալ.*
*Արդ հրամայեա գալ Նոցա ի հաշտութիւն և կըռել ուխտ.*
*Թացի յարիւն աւսոնական ըզտեւկրացիս, յաւելից արդ՝*
*Թէ իցեն կամք քո ինձ ծանօթ՝ գըրգռել ի շփոթն ըզշըրջակայ*
*Քաղաքս ի մարտ, վառել զոգիս յարիական իղձ մոլեգին.*
*Հասցեն ի նպաստ ամենուստ, և ծածկեցից ըզդաշտս ի զէն։*
*Առ Նա Հերա. կացցեն արդ դաւք և արհաւիրք, են իսկ հերիք*
*Գըրգիռք մարտի. գայցեն ի վէգ զէնք մօտաւորք, զէնք զորըս դէպք*
*Ետուն անդէն ի սկըզբան, զորըս Ներկեաց Նոր իմն արիւն.*
*Նոյնպիսի հարսանիս և Նոյնպիսի ազգախառնունս*
*Արասցեն արքայն Լատին և Աստղըկան զաւակըն պերճ.*
*Ի բարձունս անդ Ոլիմպեայ հայրն իշխեցող ոչ Ներէ քեզ*
*Շըրջել ազատ ընդ եթերն արփիական, տեղի տուր արդ.*
*Լըցից ինձէն եթէ լիցին այլ ևըս պէտք ինչ վաստակոց։*
*Ի հրամայել կրօնեան դըստերըն զայսոսիկ, հոլաթեւեալ*
*Ժանտն ի շըչիւն օձից էջ ի կոկիտեան կայս ի բարձանց։*
*Է գեղազուարճ ի միջերկրայս Իտալիոյ Ամսանկտ հովիտ*
*Ի ստորոտ լերանց բարձանց, հըռչակաւոր ցըհեռաստան.*
*Սաղարթախիտ մայրեաց ըզվայրն աստի անտի Նըսեմաստուեր*
*Պատեն թեւք. հընչէ ընդ ժայռս ուղխ ի միջի կոր յորձանօք.*
*Է տեսանել անդ քարանձաւ զարհուրելի, և զդըժնէին*
*Պլուտոնի անդ ըզսեամս, ուր զմահաբերըն փեռեկեալ*
*Որկոր ահագին ախերոնեանըն բանայ վիհ.*
*Անդ Երինիս ժանտ դիցուհին խորասուզեալ, եթող ազատ*
*Զերկիր և զերկին. բայց սատուրնեանըն թագուհի*
*Ոչ դանդաղէր ըզձեռն յետին ի պատերազմ անդր արկանել։*
*Ի ճակատուն տեղւոջէ ամբոխ հովուացն առհասարակ*
*Ի քաղաքըն խուժեն, ըզպատանւոյն Ալմոնի*
*Բերելով դի, և զշաղախեալ արեամբ կառափըն Գալեսայ,*
*Կարդան ըզդիս, և առ արքայն Լատին աղերս արկանեն։*
*Կայր Տուրնոս ի միջի անդ եղերանց՝ յաճախելով*
*Զարհաւիրս արեան և հրոյ, չառնոյր ի յանձն ըզտեւկրացիս*

Ի պետութիւն անդր ընդունել, ազգախառնել ընդ փոխեցացիս,
Մերժել նոցա զինքն յարքունեաց: Յայնժամ դիմեն շուրջ ամենուստ
Ի մի վայր, որոց մարք մոլեգնոտեալ Դիոնիսեաւ
Ընդ անտառս անմատոյցս ընթանային դիցապարարկք.
Կազմեն ի պատերազմ, եր մեծազօր սաստ Ամատեայ.
Բռնաւք ընդդէմ Հըմայից և հակառակ ճակատագրին,
Հակառակ դիցըն կամաց խընդրեն ըզդառըն պատերազմ,
Ելեալք առնելով շուրջ ըզյարկօքըն Լատինեայ.
Ինքն իբրև ժայռ ի ծովու արձանանայ անդրրդուելի
Իբրև ժայռ ի ծովու՝ որ ի բաղխել յոգունց զիւրև
Շառաչելոց կոհակաց՝ կայ ժուժկալէ ամրակառոյց.
Ի զուր պարիսք և փրփրադէզ մըռընչեն վէմք շուրջանակի,
Ջուր ի կողըս նորին բախին մամուռք երերածուփք:
Այլ իբրև ոչ ըզմոլեկանն յեղաշըրջել կարաց խորհուրդ,
Եւ դըժնէին Հերայ կամք յաջողէին, կարդաց յայնժամ
Հայրն յոլովիցս ըզդիս վըկայ, կարդաց զայեր սին, և ասէ.
Աւա՜ղ, նըկուն լինիմք ի սաստ ճակատագրին, յափըշտակիմք.
Ի մըրըրկէ. դուք ինքնին տայցէք վըրէժ ո՜վ եղկելիք.
Քեզ իսկ, Տուրնէ, քեզ իսկ մընայ աղետալի պատուհաս,
Դու զաստուածոց տարաժամ ուխտիւք զերեսըս պաշտեսցես.
Իսկ ինձ առ սեամբս կայ հանգիստ, պատրաստ ամուր ապաստանի
Մընայ ինձ մահ, թէպէտ և ոչ բարեբաստիկ: Ասաց, և խոյս
Ետ յարքունիս, ըզտեսչութեան իրաց ի բաց թողեալ ըզսանձ;
Էր սովորոյթ յԵրեկորնեայն ի Լատիոն, զոր միշտ կալան
Քաղաքք ալբայեցիք ընդ սըրբազան պաշտամունս.
Զայն և ցարդ ի դըրդել Արեայ ի զէն՝ պաշտէ Հռոմ
Աշխարհակալ, թէպէտ ընդ գետս հասանէ տալ մարտ եղկելի,
Թէ ընդ Վըրկանըս գումարել, դիմել ընդդէմ Արուայկաց,
Թէպէտ գըրոհ տալ ի Հընդիկս, ընդ Արշալոյս արշաւել,
Թէ ի ձեռաց պարթևազանց ի բաց ըզդրօշըս թափել:
Դըրունք երկեակ են մարտի, նովին անուամբ և յորջորջին,
Սըրբազանեալք ի կրօնից, և դըժնէին Արեայ ի սաստ.
Յաւերժական դժ երկաթոյ և պըղընձի նիգք հարիւրեակք
Ամրափակեն. Յանոս ի պահ կայ անդ առ սեամս անմեկնելի:
Զայնոսիկ, յորժամ ի հարց կընքի վըճիռ ի պատերազմ,
Բըդեաշխն ինքնին ծիրանէխառն ըզգեցեալ ձորձ կըւիրինեան,
Եւ գաբինիկ ածեալ կամար պերճ, ճըռընչմամբ շըրջէ զծըխնիս.
Նա ինքըն ձայն տայ մարտի, կըցէ ապա մանկտին ըզհետ,
Կերկերաձայն հընչեն եղջերք համանգամայն պըղընձիք:
Հարկ էր յայնժամ և Լատինեայ ազդել նովին օրինակաւ



Ընդդէմ Ենեանց պատերազմ, գաղտաբեր բանալ դըրունս.
Այլ հրաժարեաց հայրն արկանել ձեռն ի նոսին, և դարշեցեալ
Ի մահաբեր պաշտամանէն՝ ի կոյր ի ստուերըս ծածկեցաւ:
Յայնժամ դըշխոյն դից սատուրնեանըն դուստր իջեալ ի յերկնից,
Եհար իւրով ձեռամբ ըզդուրս ընդդիմակայս, և դըղորդեալ
Ըզծըխնիս, խորտակեաց զերկաթապատ դրանդիս մարտին:
Խաղաղն երբեմն և հանդարտն Աւսոնիա՝ եռայ յայնժամ,
Կէսք պատրաստին դիմել ընդ դաշտըս հետևակք, այլք բարձրաբերձ
Ի նուա ձիոց աշտանակին՝ մըրըրկելով փոշի ի վեր.
Զէնըս խընդրեն առհասարակ, կէսք ի պարարտ ճըճէն ի ճարպ
Զողորկ ասպար և զտէգ փայլուն, այլք յեսանեն ըզսակուր.
Փաղըր է բառնալ բերել ըզդրօշ, քաղցր ըզփողոց լսել հընչիւն:
Հա՜պա քաղաքք հինգ մեծամեծք սալըս կանգնեալ՝ զէնըս դարբնեն,
Հըզօրն ատի Ատինա, բարձրակառոյցն անտի Տիբուր,
Արդեա, Կրուստումեր և Անտեմնայն աշտարակեայ.
Գոգեն գըլխոց սաղաւարտ ամրածածուկ, և կըմբէից
Վահանաց թեքեալ յուռեաց կազմեն հիւսկէն հաստարան:
Անդ դադարէ յարդ խոփոյ և մանգաղի, դադարէ փայլթ
Արօրոյ. եփին ի բովս անդրէն սուսերք հայրենականք.
Հընչեն արդէն շեփորայք, և քառակոյս գընայ նըշան
Հրաւիրակ ի պատերազմ. ոմն ի յորմոյ արագարագ
Յափըշտակէ ըզկորդակ, ըզխըրխընջոտ այլ ոք նուաճէ
Զիանն ի լուծ, առնու զասպար, և զեռահիւս ի վերոյ ոսկի
Արկեալ զիւրեաւ ճօշ, ըզսուսերն հաւատարիմ ածէ ընդ մէջ:
Բացէք Մուսայք արդ զՀելիկոն, և տուք երգել ինձ ո՞յք ոմանք
Ի պատերազմ անդր արքայք գումարեցան, և ո՞յք ըզհետ
Իւրաքանչիւր նոցին բանակք ըզդաշտավայրըս ծածկեցին,
Որո՞վք յայնժամ աւսոնեանն արի արամբք ծաղկէր երկիր
Մայր և դայեակ, և որպիսեա՞ք վառեալ զինուք հըրդեհէր.
Քանզի յիշէք դուք դիցուհիք, կարէք վիպել դուք զամենայն.
Հազիւ աղօտ ինչ համբաւոյ մինչև առ մեզ եհաս շըշուկ:
Նախաձեռն ի պատերազմ ի տիւրեննեանցըն սահմանաց
Արհամարհողըն դից դըժնեայն Մեզենտիոս կազմէր բանակ.
Մերձ և որդին իւր դայր Լաւսոս, քան զոր չեկաց ոք գեղեցիկ
Բայց լաւրենտիկըն Տուրնոս. երիվարաց Լաւսոս նուաճող
Եւ գազանաց դուպարայաղթ, յագիլլինեանըն քաղաքէ
Զուր ածելով հազար որեար, որ արժանին իսկ էր ժառանգ
Հայրենեացըն գահոյից, և չունելոյ զՄեզենտ ի հայր:
Ըզհետ սոցին գեղանին ի գեղանւոյ ծընեալ հօրէ
Ի Հերակլեայ Աւենտին, ըզդերապանծ վարէ ըզկառս

Ընդ արօտ, ըզձիանըն քաջայաղԹ ածեալ ի ցոյց,
Ըզհայրենին կրելով նըշան ի վահանի իժըս հարիւր
Եւ վիշապ պատեալ յօձից. ըզսա Հռեա ած քըրմուհին
Ուստր ի լոյս, գողունի երկամբք՝ անկեալ ընդ աստուածոյն
Յաւէնտինեան անտառախիտ բըլրին, մինչ գայր և հասանէր
ՅաղԹական ՏիրինԹեայ 'ի լաւրենտեան դաշտօրայս
Դարձաւոր 'ի սպանմանէն Գերիոնի, և լըւանայր
Զարջառս իբերունիս ի տիւրենեան գետոյն ալիս:
Կըրեն գեղարդն ի ձեռին և խիստ մըկունդ զօրքն ի մարտի,
Զինեալ ի սուինըս սայրասուրս և ի շամփուրըս սաբելլեայս:
Ինքն հետեակ ըզԹաղկաստեըն սոսկալի զառիւծենին
Ըսպիտակօք հանդերձ ժանեօք արկեալ զանձամբ, և շուրջ ածեալ
Ըզգըլխով, և հերակլեան զօդեալ զուսովըն քըղամիդ,
Այսպէս աճարկու գայր մըտանէր յարքունիս:
Եղբարք ըզհետ գան երկուքին ի տիւուրեանցըն պարըսպաց,
Ուր յանուանէ Տիբուրի եղբօր նոցա ազգն յորջորջի,
Պատանիք արգիացիք, արին Կորաս և Կատիլլոս,
Յառաջընթացք ճակատուն ընդ Թանձրախիտ զէնըս դիմեալք.
Իբր ամպածինքն երկոքեան մինչ ի ծայրից լերանց բարձանց
Ջիացուլք արշաւասոյր վայրաբերին՝ Թողեալ զՈմոլ
Եւ զձիւնապասն Ոթրին. տեղի տան դիմելոցըն զառաջեաւ
Մայրիք աճաւորք, և ի շըրչիւն մեծ Թըփատուտն:
Ոչ յետնեցաւ և պրենեստեանըն քաղաքի հիմնադիր
Կեկուլ, զոր դարք ամենայն ի Հեփեստեայ կալան ծընեալ
Արքայ ի հօտըս գեղջկից, գըտեալ ի մէջ կայծականց:
Գընայր ըստուար լեգէոն չինականաց շուրջ ըզնովաւ,
Եւ որք ի դաշտըս գաբինեանն Հերայ բնակեն, որք ի Պրենեստ
Բարձրաբերձ, որք յԱնիեն ցըրտասառոյց, որք ի հերնեան
Վէմս ոռոգեալս ի վըտակաց, և զորըս դու ճոխդ Անագնի
Սնուցանես, և զորըս հայրդ Ամասենէ. ոչ չըկահէ
Նոցա զէն և ոչ վահան, ոչ շառաչեն մնիւք կառաց.
Բազմագոյնք ի նոցանէ ձըգեն գընդակըս գորշագոյն
Կապարեայս. կէսք երկոքումբք ձեռօք ճօճեն գեղարդունս,
Դեղնորակ ի գայլենւոյ ածեալ ի գլուխ սաղաւարտ,
Բոկս ըզձախոյ հետսըն Թողեալ, ծածկէ ըզմիւսըն փոկ անեփ:
Անդ Մեսապոս նուաճող ձիոց պիսիդոնեանըն զաւակ,
Ըզժողովուրդ տաղտուկ ի բնէ, և յուլացեալս խոկ վաղ ի մարտ,
Կոչեալ ըզգունդս յանկարծ ի զէն, բուռն ըզզէնուց հար վերըստին:
Ըզփեսկեննեան կէսք ըզճակատս ի մարտ վարեն, և զփալեսկեան
Որեարն արդար. այլք սորակտեանցըն դըշեկաց կացեալ ի պահ.



Ըզփլաւինեան պահեն դաշտս, ըզկիմինեան լեառն և ըզլիճ,
Եւ զանտառըս գաբինեանս. յարմարաւոր գնային կարգաւ՝
ԸզԹագաւորն առեալ ի նուագ, որպէս կարապք ձիւնակերպիկք
Խաղան ընդ լոյծ երբեմն ընդ ամպըս դարձաւորք ի ճարակէ,
Ընդ պարանոց երկայնաձիգ գեղգեղ նըւագս յօրինելով,
Գետըն գանգէ, և Ասիա ձայն տայ հարեալ լիճ ի բացէ:
Ոչ անդ ճակատ պըղընձի Թըւէր կազմեալ յայնքան խռանէ,
Այլ ամպ. եԹերաճեմ կերկերաձայն հաւուց Թըռչնոց,
Ի խորոց անդընդոց վարեալ ընդ օդս ի ծովափունս:
Ահա Կըլաւսոս ի սաբինիկ հին արենէ ածէ գունդ մեծ,
Մեծի գընդի հանգունատիպ ինքըն գոլով. այն՝ յորմէ արդ
Սերի ընդ Լատին ցեղըն կլաւդեան և ազգատոհմ,
Յորմէ հետէ ըստ մասին տըւաւ Հռովմ սաբինացւոց:
Գային ի միասին ամիտերնեանըն ձեռն ըստուար,
Եւ կուիրինեանք նախնիք, և գունդք առ հասարակ Երետացւոց
Եւ Մուտուսկաց ձիԹաստանեայց. որք ի Նոմենտ բնակեալ քաղաքք,
Որք ի շէնըս ռոսականս առ Վելինաւ, որք ի տետրեան
Քարաժայռըս սոսկալիս և ի լերինըն Սեւերոն:
Որք ի Կասպեր, որք ի Փորուլ, և որք յեզերըս Հիմելլայ.
Որք ըմպեն ըզՓաբարիս և ըզՏիբեր, զորս առաքեր
Յըրտասառոյցըն Նորսիա. որտինացւոց բանակք զօրաց,
Ազինք բնակեալք ի Լատինոն, և զորըս գետըն վատշուէր
Անջըրպետէ Ալլիա: Որչափ ի ծով լիբէական
Ալիք Թաւալին յորժամ դըժնեայն Որիոն
Ի ձմերային ալիս ծածկի, որչափ ի նոր արև եփին
Քիստք յոգնախուռն ի դաշտ հերմեան, և ի լիկեան չէկ արտօրայս,
Շկահէին վահանք, և ի բաղխիւն ոտից դըրնդեալ սարսէ երկիր:
Ասոի Հալես ագամեմնոնեան, ոսոխ անուանըն Տրովադայ,
Լծէ ի կառս ըզձիան, ածէ Տուռնեայ նըպաստ ի կռիւ
Ազինըս բիւրաւորս, որք ի տըրմուխըս պատառեն
Ըզգինեբերսըն Մասիկայ. զորըս հարանց աւրունկեցւոց
Բարձր ի բըլրոց եր զընուորեալ. որք 'ի կալաց եկաւորեալք,
Որք ի ծովափըն սիտիկեան բնակեալ որեար, որ գետափնեայք
Ծանծաղուտըն Վուլտուրնեայ, և Սատիկուլք տոկունք 'ի մարտ,
Եւ Ոսկեաց գումարտակք, ոյց զէն գեղարդն է՝ փայլուն,
Սովորեալք ճապուկ փոկով շըրջապատել զայն 'ի յաջում,
Ծածկէ զահեկեայն ամրածածուկ վահանակ
Սուսեր գերանդաձև կըրեն ի տալ մարտ ի մօտոյ:
Մի և ըզքեզ անյիշատակ արասցեն տաղք մեր, Եբալէ,
Զոր Տըլոնի 'ի սեբեԹեան յաւերժհարսնէ ի լոյս ածեալ

Աւանդեն վէպք, մինչ ծերունին իշխէր յերկիր Տելէբոյաց
Ի Կապրիա. այլ որդւոյն ոչ շատացեալ ընդ հայրենին
Սահմանս՝ տիրէր յայնժամ ազգաց սարրաստացւոց շուրջ ի բաց,
Եւ վայրաց զորս թանան ալիք Սառնեայ, և բնակչաց
Ի Հռուփս և ի Բատուլս և ի սահմանըս Կելեննեայ,
Եւ յորս ամուրք Աբելլայց պտղաբերից դիտեն ի ստոր.
Ազգք՝ որ սովոր են ի ձև տևտոնական ծօճել աշտեայ,
Սաղաւարտք նոցա կեղեւք ի սընկենեաց կողոպտեալ.
Պղնձիք ցոլան վահանք, ցոլան նիզակք պղնձիք։
Եւ զքեզ Ուփենտ յաղթող ի զէն, հռչակաւորդ համբաւով,
Նորսայք լեռնայինք առաքեցին ի պատերազմ,
Որ նըւաճես ընդ քև զհէկուիս, զազգ վայրենի սովոր ի յորս
Յար ընդ անտառս, որ զրահազգեստ փըշրէ ըզկոշտս հողոյ կարծունս,
Վարէ զերկիր. քաղցր է նըմա ածել կուտել միշտ անդադար
Աւար նորանոր, կեալ ի կապուտ կողոպուտ։
Գայր և Ումբրոն քուրմ յԱրքիպպայ թագաւորէն ի հրամանէ,
Մարրոբ յազգէ քաջակորով, երջանկաւէտ ձիթենւոյ ոստ
Կրելով ի զարդ սաղաւարտին. այն որ սովոր էր թովչութեամբ
Եւ երգովք արկանել յազգ իժից թըմբիր, և մահաշունչ
Վիշապաց, ողոքել ըզկատաղեալս, առնել հնարիւք
Խայթուածոյ նոցին դարման. այլ ոչ զօրեաց նա բըժըշկել
Ըզդարդանեան նետին հարուած. ոչ թըմբրաբեր երգք ի բոյժ,
Եւ ոչ ի Մարսից լերանց քաղեալ օգնեցին բոյսք։
Ըզքեզ անտառք Անգիտեայ, և բիւրեղեայք ըզքեզ լացին
Ալիք Փուկինեանք, լացին նամետք ըզքեզ լիճք։
Գայր և զաւակըն գեղեցիկ Իպպողիտեայ ի պատերազմ
Գերահռչակըն Վիրբիոս, զոր յըղեաց մայրն Արիկիա,
Ըզսընեալըն յանտառին Եգերական՝ առ խոնաւուտ
Լըճեզեր, ուր Անահտայ է հեշտալուր բագին պարարտ։
Զի Իպպողիտ, որպէս զըրոյցք ի համբաւոյ առեալ վիպեն,
Դաւաճանեալ ի մօրուէն, լուծեալ ըզհօրն արեամբ ըզվրէժ,
Եւ յօշատեալ ի խեռելոց երիվարաց, յաստեղս անդրէն
Եթերաճեմս ել ի վերին երկնից կամար, վերկենցաղեալ
Ի սիրոյն Անահտայ պէոնական բուժեալ բուսովք։
Յայնժամ հայրն ամենակալ ծանրացասումն ընդ մահացուին
Ի ստուերաց դըժոխոց յառնել ի լոյս կենցաղական,
Ամպահարեալ խորասոյզ ի ստիւգական ալիս ընկլոյզ
Ըզգեղոյն այնորիկ և զարուեստին հընարագէտ
Ըզփիբեանըն զաւակ. այլ Եռուղեանն անմահ թագոյց
Զիպպողիտ ի վայր զանխուլ, վարեալ ըզնա ի մայրիս



Յաւէրժհարսին Եգերայ, կեալ միայնակ և աննըշան
Յիտալական անտառին՝ փոխեալ զանունն ի Վիրբիոս.
Այսր աղագաւ հալածի սալասըմբակ ձիանն ի բաց
Ի դիցանուէր անտառէն և ի բագնէ Եռուղենւոյն.
Զի ի նհանգաց ծովայնոց ահաբեկեալ՝ տապալեցին
Ի ծովեզերս անդ ըզկառս, կործան արկեալ ըզպատանին։
Սակայն որդին ոչ ինչ ընդհատ ձիավարէր ի դիւրի
Ամեհի երիվարօք, և արշաւէր կառօք ի մարտ։
Ինքըն Տուրնոս անձնադեղն ընդ նախամարտըս զէն առեալ
Շահատակէր, բնաւից ուսովք չափ գեր ի վեր. ոյր սաղաւարտ
Բարձրաբերձ՝ եռիւք բաշխիւք վարսադեղեալ, կըրէր ի վեր
ԸզՔիմեր՝ եռնական հուր ընդ որկորըն շընչելով,
Այնչափ սաստիկ ի մըռընչիւն և բուռն ի բոց աղետաբեր
Որչափ արեանց ճապաղիք պատերազմին առաւելեալ.
Ըզվահանն ոսկեղէն գեղազարդէր Յով բազմափայլ
Վերըմբերձիկ եղջերօք, և կով տակաւ ըստեւաքոյս,
(Դըրուագ երևելի). կայր պահապան կուսին Արգոս,
Եւ Ինաքոս հայրն ի քանդակ հոսէր ըզգետ ի սափորոյ։
Խաղայր ըղձեռ Տուրնեայ ամպրոպ հետևակաց, գունդք թանձրա- (խիտք
Վահանաւորք ծայրալիր ըզդաշտավայրըս ծածկէին,
Արգոսք արգիւացիք, և զումարտակք աւրունկացւոց,
Հըռուտուլք և նախնի սիկանացիք, սակրանացւոց
Ջօրաց ճակատք, լաբինացիք ի նըկարէն վառեալք յասպար.
Եւ որք յանտառըս քո բնակեն Տիբերինէ. որք արօրեն
Ըզծովափունըս սըրբազանըս Նումիկեայ, և որք խոփով
Ըզհռուտուլեան հերկեն բըլուրս, և որք ըզլեառըն Կիրկէի.
Ոյց անքուրեանն Արամազդ վերակացու է արտորայց,
Ուր բերկրի Փերոնիա դալարագեղ մայրեստանօք,
Ուր ստուրեանն է ծովալիճ սևաթորմի, և ուր Ուփենտ
Ցըրտասառոյց ընդ խոր ծործոր հորդեալ ուղի՝ ծածկի ի ծով։
Ըզհետ սոցին գայր և Վոլսկըն Կամիլլա, ածեալ ընդ իւր
Հեծելազօր և սպառազէն գունդըս փայլունըս պղընձիւ.
Օրիորդ պատերազմող, ոչ յաղեկատ ձեռք իւր վարժեալ,
Եւ ոչ ի սապատըս կանացիս Աթենասայ,
Այլ դըժընդակ մարտից ժուժկալ, և քան ըզհողմ երագընթաց.
Որ ընդ ծայրըս հընձոց եթէ սլանայր թեթեւակի,
Ոչ ինչ փափկիկ քըստից զեան արշաւանօքն հասուցանէր.
Եւ ճանապարհ ընդ ծովուն դիզան ալեաց եթէ առնէր,
Ոչ թանային ծուփք ըզնորին թեթև ոտիցըն գարշապար։
Մանկտին և մարք շուրջ ամենուստ խուժեալ ի տանց և յարտորայց՝

*Ակընկառուցք ընդ ճեմ ոտիցըն հիացեալ բերանաբացք*
*Զարմանային երբ ըզփափուկ ուսըս նորա սքողէր քող*
*Արքունական ծիրանի, երբըր ճարմանդ ընդելուզեալ*
*Ոսկւով ըզվարսըն զըսպէր, երբ ըզկապարճ լիկիական*
*Ըստանձնեալ, և զհովուական կըրէր մըրտի զինեալ ի ուսք:*

---

# ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵՍՅ ՄԱՐՈՆԻ

# Ե Ն Է Ա Կ Ա Ն Ի Ն

## ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Տուրնոս յղէ զՎենուղ առ Դիոմեդէս, յորդորել զնա 'ի նիզակակցութիւն: Ենէաս ազդեալ 'ի Տիբերեայ գետոյ, 'ի նոյն միտս ուղևորի առ Եւանդրոս, որ փախուցեալ յԱրկադիոյ՝ նստէր 'ի Պաղատինոն լեառն: Եւանդր զՀերակլեայ տօնս կատարելով, անդր զԵնէաս ընծայեցուցանէ, և զսկիզբն տօնիցն ուսուցանէ նմա, զյաղթութիւն Հերակլեայ ընդդէմ Կակոսի յելուզակին մեծի՝ որ ասպատակէրն երբեմն զերկիր նորա: Նա հեծեալս չորեքարիւր տայ Ենեայ յօգնութիւն, զօրավար նոցա կացուցեալ զՊաղլաս զորդի իւր. և զԵնէաս արձակէ առ տիւրենացիս՝ 'ի յոյս թագաւորութեան և օգնականութիւն 'ի նոցանէ գտանելոյ. քանզի հալածեալ նոցա ըզՄեզենտիոս՝ խնդրէին իւրեանց թագաւոր: Ենէաս 'ի վաղիւ անդր զկէսս 'ի զօրացն 'ի վայր կոյս գետոյն առ իւրսն յղեալ, այլովքն չու առնէ առ տիւրենացիս: Դարձեալ Աստղիկն ածէ իւրումն Ենեայ զէնս դարբնեալս 'ի Հեփեստոսէ, և մանաւանդ զասպարն՝ յորում նկատէ Ենէաս զարմացմամբ զքաջայաղթարութիւնս որ առ յապայ 'ի հռոմայեցւոց գործելոց էին՝ սքանչելարուեստ քանդակեալ: Օգոստեայ երևելագոյն 'ի քանդակին է դրուագ, յորում քերթողն ճշգրտագոյն զպայծառ յաղթութիւն նորա ընդդէմ Անտոնիոսի և Կլէոպատրայ դշխոյին Եգիպտացւոց և զերեքկին յաղթանակ նորա նկարագրէ:

# ԵՆԷԱԿԱՆ

## ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

Ի լաւրենտեանըն դըղեկէ այն ինչ Տուրնոս ամբարձ ի վեր
Նըշան մարտի, և հընչեցին փողք եղջերեայք ի նուագ կերկեր,
Այն ինչ զարթոյց նա զամեհին ձիան, և ետ խրախոյս ի զէն,
Յուզեցան անդէն ոգիք, և Լատիոն ողջոյն հասաճեալ
Ամբոխիւ միաբանեաց. մոլէր մանկտին վայրենացեալ:
Զօրավարք աւագք Ոփենտ և Մեսապոս, և աստուածոց
Արհամարհողըն Մեզենտ, խըմբեն ուժգին զօր ամենուստ
Եւ զագարակըս լայնալիրըս մըչակաց յաղարտ վարեն:
Առաքի ի քաղաք Դիոմեդեայ մեծին Վենուղ՝
Խընդրել օգնութիւն, և ցուցանել զի տեկրացիք
Մըտանէին ի Լատիոն, զի Ենէաս նաւատորմաւ
Հասեալ բերէր ըզթերափան անդ, կոչելով զանձըն թագաւոր
Ի հրամանաց ճակատագրին, և զի ազինք բազմայոլով
Գումարէին ընդ տրովացւոյն, և զօրանայր անուն նորա
Շուրջանակի ի Լատիոն, զի յայտնագոյնք էին նըմա
Քան Լատինեայ արքայի և քան Տուրնեայ՝ յինչ ակնարկէր
Ձեռնարկ Ենէասայ. զինչ նա ցանկայր յելըս մարտին:
Այս իրք էին ի Լատիոն. բայց ի տեսիլ ամենայնի
Լաւոմեդեան դիւցազն ի հոգս ալէկոծեալ սաստկապէս,
Մերթ յայս և մերթ յայնկոյս ըզմիտսըն տատանէր արագարագ.
Որպէս դողդոջ լոյս արփենի կամ տիպ լուսնոյ ճառագայթեալ
Ցայտէ ի ջրոյ ընդ շըրթունըս պըղընձեաց սանից ի բաց,
Եւ հարկանի յածեալ յայերս՝ ի խորանարդ յարկին ի վեր:
Էր գիշեր, և շընչաւորք խոնջք ընդ երկիր առհասարակ
Հանգչէին, թեւաւորաց և անդեոց ազգ խոր ի քուն.

Հայրն Ենէաս առ գետեզերբ ընդ ցըրտագին երկնից գընդաւ,
Ցուզեալ ի հոգ տըխուր մարտին, ընկողմանեալ՝ տայր անագան
Հանգիստ մարմնոյն. և ահա ինքն աստուած երկրին Տիբերինոս
Ծերունի, երևեալ ի բազմազուարճ գետոյն ի վեր
Ի մէջ վարսից կաղամախեաց, կանաչատիպ նուրբ բեհեզեայ
Արկեալ լօդիկ, ի հովանուտ եղէգըն հերքըն քօղարկեալ,
Այսպիսեօք բանիւք էառ ըզդիւցազնին մեղմել հոգ.
Աստուածորդիդ, որ այսր առ մեզ ի թըշնամեաց ըզՏրովադա
Ածես քաղաք, առ ի պահել յաւերժական ըզՊերգամայս.
Կաց ի յերկիրըդ Լաւրենտեան ի դաշտավայրըս Լատինաց,
Աստ քեզ տուն աներկեան, աստ անվըտանգ լիցին Թերափք.
Մի ձեռընթափ լինիր, և մի ի սպառնալեաց մարտի սարսեր.
Ցածեաւ ըսպառըսպուռ սըրտմըտութիւն դից և զայրոյթ։
Եւ զի մի անոտի կեղծիս զայս քեզ ի քնոյ վարկցիս նիւթեալ,
Գըտանիցես խոզ ըստուար ընդ սըղոցեօք գետեզերեօք,
Երից տասանց մայր խոչքորից, ինքն ըսպիտակ բազմեալ յերկիր,
Սպիտակաստեւք ձուրջանակի անկեալ զըստեամբքըն խոչքորակք.
Անդ լիցի վայր քաղաքին, անդ ի ճըգանց հանգիստ անքոյթ.
Անցեալ ապա ի վերայ երից տասանց շըրջան ամաց,
Կառուսցէ Ասկանի զԱլբա քաղաք հըռչակելի.
Ոչ անըստոյգս ինչ նըւագեմ, այլ ուսուցից քեզ սուղ բանիւք,
Միտ դիր զիարդ ի սահմանեալըն յաղթանակ յաջողեսցիս։
Արկադացիք ազգ սերեալ ի Պալլասայ, նիզակակիցք
Արքային Եւանդրի, դրօշուց նորին ըզհետ երթեալ,
Ի սահմանս յայսոսիկ ըզկայ առին՝ կանգնեալ քաղաք
Ի լերին, որ յանուանէ նախնոյն կոչի Պալլատինեան։
Սոքա մարտ անդադար տան ընդ ազգին Լատինացւոց.
Արա զնոսա նիզակակից, և կըռեսջիր ուխտ ընդ նոսա.
Ես ինքն ըզքեզ ածից ուղիղ ընդ դարափունս իմ և ընդ գետ.
Ընդդէմ ջուրցն հոսանաց յաղթեալ թիովք ելցես ի վեր.
Արի արդ մն աստուածորդիդ, ընդ անկանել աստեղաց՝ հեղ
Աղերս Հերայ ըստ օրինի, ցածո ուխտիւք պաղատանաց
Զըսպառնալիս և ըզզայրոյթ. զիս ի յաղթել քում պաշտեսցես։
Ես եմ զոր դու ընդ դարևանդըս լիաջուր յորդահոսեալ
Տեսանես, ընդ անդաստանս արգասաբերս հատեալ անցեալ,
Տիբեր կապուտակ հաճոյագոյն երկնից գետ
Աստ յարիցէ քաղաք մեծ, մայր բարձրաբերձ քաղաքանւոյ։
Եւ ընդ բանին սուզաւ ի խորս անդըր գետոյն. գիշեր և քուն
Թողին յայնժամ զԵնէաս, և յարուցեալ տեսեալ ըզլոյս
Երկնաճեմ արփւոյն ծայրից, էառ յալեաց անտի ահիւ



Ափովք գոգելովք, և զայս ընդ օդս եհեղ աղերս.
Հարսունք յաւերժք, յաւերժհարսունք լաւրենտուհիք, յորոց բըղխեն
Գետոց ազգի ազբերակունք, և դու ով հայրըդ Տիբերիս
Ընկալ զԵնէաս ի սըրբազան ալիս քոյին,
Եւ աստ ուրեմըն պահպանեա ի վըտանգաց. և յոր ուրեք
Ջուրք քո յաղբեր առցեն ըզկայ՝ շարժեալ ընդ վիշտըս մեր ի գութ,
Եւ ուր ուրէք չըքնաղագեղ բըղխեալ ի վեր երևեսցիս,
Պաշտեսցիս յինէն միշտ, միշտ քեզ նըւէրըս մատուցից.
Եղջերագեղըդ բոլորից երեկորնեայց ջուրց իշխեցող,
Մերձ միայն լեր, և ըզխոստմանցըդ կացո զօրութիւն։
Եւ զայս աղօթըս մատուցեալ, ընտրեաց կըրկին ապա երկթիս
Ի տորմըղէ անտի նաւաց, և կազմէ ի չու պատրաստեալ,
Վառէր զիւրսըն նոյնհետայն ըսպառազէնս ի պատերազմ.
Եւ ահա զարմանահրաշ յանկարծ տեսիլ երևի,
Խոզ ըսպիտակ յանտառի ընդ խոչքորակս հանգոյն ի գոյն
Ի գալարուոջ առ գետեզերըըն տեսանեն ընկողմանեալ։
Զայն երկիւղածն Ենէաս զենեալ վեհիդ քեզ ով Հերա,
Մատոյց պատարագ, հանեալ կորեամբքըն ի սեղան։
Յայնժամ ցածոյց Տիբեր ըզգետ իւր ուռուցիկ, և յետս ընդդէմ
Ընկըրկեալ ընդ գիշերն երկայնաձիգ կացին ալիք
Որպէս խաղաղ լիճ, իբր հանդարտ եղտիւր անշարժ և անձայն,
Եւ այնպէս հարթածաւալ, զի թիք անճիգըն վարէին։
Համպա վարեն ի զուարթ դոչիւն ըզչուն ի դէմ եդեալըն ուղի.
Սահեալ գընայ ընդ մըկանունս եղենափայտըն ձիւթազօծ.
Ապշին ալիք, և ընդ փայլումըն վահանացն հեռի ի բաց
Եւ նըկարէն լաստիցն ընդ լոյղ ապշի անտառն անսովոր։
Նոքա ըզցայգ և ըզցերեկ թիավարեալ, անցանեն
Պատ ի պատ հատեալ ուղի ընդ հովանեաւ պէսպէս ծառոց
Ի մէջ գալարագեղ մայրեաց ընդ գետն անդորրաւէտ։
Արփին հրեղէն ի միջակէտ պարունակին էր ժամանեալ,
Եւ տեսանեն ահա ի բաց ըզքաղաքորմն և ըզդըղեակ
Եւ յարկս աստ անդ, զորս արդ երկնից հաւասարեաց հռովմէական
Մեծութիւն, ուր Եւանդր յայնժամ տիրէր սակաւաւոր։
Վաղվաղակի շըրջեն զառաջս, և ի քաղաք անդըր մատչին։
Դէպք եռուն, զի ի նըմին աւուր արքայն Արկադացի
Զոհ հանդիսիւ մատուցանէր դից և մեծին Ամփիտրիդեայ.
Ի միասին և Պալլաս արքայորդին անդ յանտառի
Առ քաղաքաւն, ի միասին մանկտին բոլոր ազատորդի,
Եւ ծերակոյտն անփառունակ, խունկս աստուածոցն արկանէին.
Ջերաջերմ ի բագնի ծըխէր արիւն և ապաժոյժ։

Իբրև տեսին ըզբարձրաբերձ նաւս, և զօրեարն եկաւոր
Ընդ ծըմակ անտառին՝ Թի վարելով լուռ անմըռունչ,
Զահի հարան յեղակարծում. յարեան Թողին առ հասարակ
Ըզսեղանս. այլ ի վերայ եհաս Պաղլաս, և անվեհեր,
Արգել զի մի խափանեսցեն ըզպաշտամունս. և զէն առեալ
Դիմեալ ընդառաջ, ձայն ի բարձունէ ետ ի բըլրոյն.
Ըզմ՞ մանկունք այսըր գոյք, փորձել ուղի ձեզ անծանօԹ.
Յ՞ դիմէք, յորմ՞ ազգէ էք դուք, յորմ՞ աշխարհէ.
Խաղաղուխծին ածէք Թէ զէն: Առ որ այսպէս հայրն Ենէաս,
Ըզհաշտուխծեան ոստ ձիԹենւոյ բարձր ի խելաց ցուցեալ ձեռամբ,
Պատասխանէ. Տրովացիք եմք և ընդդէմ լատինացւոց
Բերեմք զէն, որք ըզմեզ վըտարանդիս գոռոզ մարտիւ
Հալածեն. առ Եւանդըր գամք, տարայք առ նա զըրոյց.
Յուցէք նըմա զայսոսիկ, և զի ընտրեալք ի տրովացւոց
Զօրավարաց դիմեմք առ նա, ունել ըզնա նիզակակից:
Ի լուր անուանըն մեծի յապուշ հարեալ՝ ասէ Պաղլաս.
Ե՛ջ դու ո ոք և իցես, խօսեաց առ հօր իմում, և մուտ
Առ մեզ հիւր: Եւ զձեռանէ առեալ, զաջով նորին փարեալ,
Ի բաց մեկնեալ ի գետոյն, գան ընդ անտառն յառաջ խաղան.
Եւ բարբառի Ենէաս առ Թագաւորըն քաղցրուխծեամբ.
Ո՛վ քաջ արանց ի Հելլէնս, առ որ դիմել բախտն ինձ շնորհէ,
Եւ ածել մատուցանել քեզ բարունակ ժապաւինեալ.
Ոչ առ ահի, զի զօրավարըդ դանայեանց արկադացի
Արենակից ի նախնեաց ես ատրորդւոց երկաքանչիւր.
Այլ ուղղուխծիւն և սըրբազան դիցըն պատգամք, հարք ազգակիցք,
Եւ ընդ աշխարհ ամենայն հընչեալ համբաւ քո համասփիւռ,
Եւ հրամանք ճակատագրին ածեն յօժար զիս առ քեզ:
Նախահայր և հիմնադիր իլիականըն քաղաքի
Յատլանդուհւոյն Ելեկտրայ, որպէս զըրոյցք վիպեն Հելլէնք,
Ծընաւ Դարդան և ածաւ առ տեկրացիս, և զԵլէկտրա
Մեծն ընծայեաց Ատլաս ի լոյս, այն որ զերկնից բերէ կամար
Ի յուս իւր. ըզձեզ Հերմէս՝ զոր գեղափայլ երկնեաց Մայա
Ի Կիլլենեան սառնապատըն գագաԹան. և ըզՄայա,
Թէ հաւատամք համբաւոյ, նոյն ինքն Ատլաս եած ի լոյս,
Նոյն ինքն Ատլաս՝ որ զերկին աստեղազարդ կըրէ յուսի.
Երկաքանչիւրցն ի միջէ այսպէս սերեալ ազգ յարենէ:
Վըստահ ի սոյն, ոչ հրեշտակս առաքեցի, և ոչ հընարս
Յառաջագոյն արկի ի կիր առ ի փորձել ըզկամըս քո,
Այլ ես ինքնին եդեալ ըզգլուխ իմ ի կըշիռ, աղաչաւոր
Ի սեամըս քո ահա եկի. դաւռնացին ազգ՝ որ ըզքեզ,



Նոյն և ըզմեզ հալածէ անագորոյն պատերազմաւ.
Եւ ի վանելն ըզմեզ ի բաց, ոչ ինչ ըզնա արգելուցու
Ի նուաճելոյ զԵրեկորնեայն լըրիւ իւրով, և զծով
Որ ի վերուստ Թանայ զայն, և որ Թանայն ծով ի ստորուստ:
Ընկալ ապա և տուր ուխտ. են առ՞ի մարտ մեզ լանջք հուժկուք,
Սիրտք անվեհերք, և յարուխծիւն զինուց մանկտի առաքինի:
Բայց ի խօսել Ենէասայ դիտէր Եւանդըր նըկատէր
Զաչս և ըզդէմս, և բովանդակ ըզդիւցազնըն կերպարան.
Եւ ապա այսպէս առ նա սուղ ինչ բանիւք բարբառեցաւ.
Քանի՜ յօժար ըզՀըզօրդ ի տեկրացիս հիւրընկալեմ,
Եւ ի ծանօԹըս գամ ընդ քեզ. քանի՜ ծնօղիդ մեծի ի քեզ
Զայն և բարբառ Անքիսեայ ի յուշ գան ինձ. քանզի յիշեմ
Զի ի գնալ լաւոմեդեանըն Պրիամու ի Սալամին
Յայց արքայուխծեան Եսիոնեայ քեռ իւրոյ,
Եւ յանցանելն ուղևոր ընդ ցուրտ սահմանս Արկադիոյ,
(Նորափըխծիթ յայնժամ ըզծնօտս իմ մանկուխծիւն ծաղկաւետէր),
Զարմանայի ընդ զօրավարըս տրովացիս, զարմանայի
Եւ ընդ ինքն իսկ ընդ որդին Լաւոմեդեայ. այլ Անքիսէս
Գեր ի վերոյ ընաւից էր ինձ, և բորբոքէր յիս մանկական
Իղձ ընդ նըմա խօսելոյ, և աջ ընդ աջ կըցորդելոյ.
Մատեայ առ նա, և անձկանօք ածի յամուրն ի փենէոս.
Նա ինձ ի գնալ իւր ի բաց՝ կապարճ ըզքեղ լիկիացւովք
Լի նետիւք պարգևեաց, և քըղամիդ ընդելուզեալ
Ոսկեխծել, և ոսկեղէն սանձըս կըրկին՝ զոր արդ վարէ
Իմըս Պաղլաս. ապա զոր դուքըդ խընդրէք աջ, վաղ իսկ ուխտիւ
Զօդեալ ընդ ձեզ է և ընդ իս. և այն ինչ լոյսըն վաղորդեան
Դարձցի յերկիր, արձակեցից զուարխծս ըզձեզ, օգնեալ զօրօք.
Այլ արդ ըզզոհըըս տարեկանս, յորըս հասէք խաղաղուխծեամբ
Այսր առ մեզ, և չէ օրէն ինձ յապաղել ըզպաշտամունս,
Հաճեսջիք կատարել դուք աստ ընդ մեզ, և աստըստին
Սովորել ընդ զինակիցըս լինելոյ խրախճանակից:
Զայս ասացեալ՝ հրամայեաց ածել անդրէն ըզխորտիկս
Եւ ըզբարձեալ բաժականին, և զետեղէր զօրեարն ինքնին
Ի սիգաբոյս բազմոցի, և զգըլխաւորըն զԵնէաս
Հրաւիրեալ ընկալաւ յառիւծենին բարձ Թաւարծի,
Ի գահոյս յակրենիս. յայնժամ ընտիրք ի մանկըտւոյն
Եւ պաշտօնեայ բագնին քուրմ, փուԹան միմեանց նախանձընդդէմք,
Ածել զընդերըս ցըլուց ըզճենճերեալս, ի սակառս
Լընուլ զեփեալ ձօն դեմետրեան, և զԲիոնիս մատըըւակել:
Ճաշակեաց Ենէաս, և տրովացի ճաշեաց մանկտին

Ջերկայնաձիգ եղին ազդերս և զքաւչական փորոտին:
Իբրև բարձաւ սով, և լուծաւ քաղց ի ճաշակ, բարբառի
Արքայ Եւանդր և ասէ. Ոչ թէ կրօնք նանրահաւատք
Անգէտ նախնեացըն գից մուծին առ մեզ ըզտօնքըս զայսոսիկ,
Ըզգահամանց սովորոյթ, և ըզմեծի դիցս ըզսեղան,
Այլ ի ծանունց վըտանգաց ապրեալք, ո՛ հիւրըդ տրովացի,
Կատարեմք զայս՝ զարժանին նորոգելով միշտ ըզպաշտօն:
Տես ի բացեայ ըզքարաժայռըդ սեպացեալ ընդ վէմս ի վեր
Իբր ամբարտակ վաղափուլ, իբր ամայի յարկ ի լերին,
Իբր աւերակ ահագին քարակարկառ շեղջակուտեալ.
Էր անդ երբեմըն քարանձաւ անդընդախոր և ընդարձակ,
Զոր կիսաւնըն Կակոսի գրաւէր դըժնեայ կերպարան,
Անմատոյց ճառագայթից արեգական. ծըխէր երկիր
Անդանօր ջերաջերմ, միշտ ի նախճիր նորանոր.
Կախեալ կային յահագին դէմք ի դրանդիս անդ մարդկեղէնք
Տըժգոյնք ծիւրեալք մահատիպք: Հրէշիս այսմիկ Հեփեստ էր հայր,
Զորոյ ըզհուր թուխ յորկորոյ ժայթքէր խոշտարն հըսկայաձև:
Ցետոյ ուրեմըն ժամանակն ած անձկանաց մերոց օճան
Ըզգալուստ աստուածոյն. զի վրէժխընդիր վեհ Ալկիդես,
Խըրոխտ ի մահ և ի կապուտ եռանձնէին Գերիոնի,
Ածէր ընդ այսըր զըւարակս ընդ իւր ըստուարս յաղթանակաւ.
Ըզհովիտն և ըզգետ ծածկէ նախիր լայնալիր:
Այլ միտք Կակոսի մոլեալ զի մի ինչ ոճիր
Թողցէ կամ դաւ՝ յոր չիշխիցէ, բառնայ քառեակ ցուլս յաղթանդամս
Ի գոմոց, և երընջոց զոյգըս կըրկին գեղանիս.
Եւ զի մի հետք կըճղակաց մնայցեն ուղիղք, զագեացն ի քարշ
Զըգէ ածէ ի քարայր, և ըզգողօնս յետախաղաց
Ծածկէ անտես յետկոյս ժայռին, հետըս և ոչ մի թողեալ յայց
Հետազօտից քարանձաւին. բայց ամփիտրեանն Հերակլեայ
Արտաքս ի գոմոց ըզկըշտապինդ անդեայն ի չու
Մինչ հանէր, արջառք ի յելս անդ բառաչել ըսկըսանին,
Լընուն զանտառս ի պոչիւն, թողուն ըզբըլուրս աղաղակաւ:
Ցայնժամ մի յարջառոց ի լայնատարըր քարայրէն
Կըրկնեալ անդրէն բառաչէր, բանտեալըն ըզյոյս Կակեայ պատրեալ:
Անդ Ալկիդեայ դառնակըսկիծ զայրացեալ ցաւք ի թուխ լեղի,
Ցափըշտակէ ձեռամբ ըզզէնս, և զծանրաբեռն ստովք կաղնին,
Դիմէ բարձու լերինն ի ծայր. անդ նախ տեսին մերքն ըզԿակոս
Ահաբեկ յուզեալ աչօք. փախչէր ի յայրըն արշաւակի
Երագ քան զԵւր, թեւս երկիւղին ի գարշապարըն յաւելեալ:
Իբրև ի ներքս անդ ծածկեցաւ, հար խորտակեաց ըզշըղթայս,



Եւ ըզժայռն անհեթեթ՝ որ երկաթով կայր առկախեալ
Ըստ հայրենի արուեստին, իջուցեալ զայն թաւալեցոյց,
Ըզդրանդիս անձաւոյն խոչին այնուիկ ամրափակեալ:
Եւ աւասիկ անդր հասանէ գայ Տիրընթեանըն զայրագին,
Եւ մըտիցըն հետազօտ՝ յածի մերթ յայս կոյս և մերթ յայն
Կըրճըտելով զատամունս. երիցըս շուրջ զաւենտինեան
Լերամբըն ողջոյն պատի վառեալ սըրտմըտութեամբ, երիցըս փորձ
Ի վիմարդեան սեամըն փորձէ ճիգն ի նանիր, երիցըս խոնջ
Վճատակաբեկ տեղի տըւեալ՝ դառնայ բազմի ի ձոր հովտին:
Էր ապառաժ սուր ի յետ կոյս քարանձաւին զերծ ի վիմաց
Շուրջանակի, ամենաբարձըր կանգնաւոր ի տեսիլ,
Զարագուժից հաւուց ի բոյն պատկանաւոր. յեցեալ ի նոյն
Դիւցազն յաջմէ, զի յահեկէ ի գետըն կոյս ժայռըն միտէր,
Դըրդուեցոյց զայն, և ի խորոց խըլեալ ի բաց յարմատոց,
Մըղեաց յանկարծակի. թընդաց եթեր մեծ յանկմանէն,
Դըղըրդեցան գետափունք, և զարհուրեալ գետն ընկըրկէր.
Բացաւ անձաւըն Կակոսի, և արքունիքըն ահագինք
Երևեցան. ի յայտ եկին վիրապք խորինք նըսեմաստուերք.
Ոչ ինչ այլազգ քան յորժամ բուռըն զօրութեամբ հերձեալ երկիր
Բացցէ ըզկայս դըժոխոց և զմահատիպն ի յայտ ածցէ
Զարքայութիւն ատելի դից, և ի բարձանց տեսցին անդունդք
Զարհուրելիք, սոսկալով ուրուաց ընդ լոյսն ի ներքս հեղեալ:
Ցայնժամ Հերակլ ի վերուստ զընկճեալըն յանկարծ ի շող լուսոյ,
Մինչ ըմբռնեալ ի խոր ժայռի անդ մըռընչէր նորանըշան,
Նետիւք խոցոտեաց, և զամենայն առեալ ի զէն,
Կոճեղըք և մեծամեծ վիմօք արար չարակոչկոճ:
Իսկ նա, զի ոչ այնուհետև գոյր ի վտանգէ անտի փախուստ,
Ծուխ սաստիկ յորկորոյ ժայթքեալ ի դուրս հրաշապատում,
Պատեաց ըզտունն ի կոյր խաւար՝ բարձեալ յաչաց զէից տեսիլ,
Եւ գիշէր ծըխամած ի քարայրի անդ թանձրացոյց
Հուր խառն ընդ մէգ. այլ ոչ ժուժեաց Ալկիդես, արկ զանձն ի սոր
Ընդոստ ի հուրըն գահավէժ՝ ուր թանձրագոյն ծըխոյն յորձանք
Յորդէին, և թուխ ամպրոպ կուտէր անձաւըն սոսկալի.
Անդ ըզԿակոս, որ ի զուր ի խաւարի անդ ժայթքէր հուր,
Ըմբըռնեալ և կաշկանդեալ և ընդ իւրև ըզնա ընկճեալ,
Զաչըն խըլեաց, հեղձոյց զորկորըն ցամաքեալ յարենէ:
Ցայնժամ քարայրըն մըթին բացաւ դրանդիւք խորտակելովք,
Եւ անդեայն յափըշտակեալ և երդմնակուռ ժըխտեալըն աւար
Եկն ի լոյս. ինքըն ձըգի զոտիցն ի քարշ դի անգեղեայ,
Ոչ յագին սիրտք ընդ տեսիլ զարհուրելեացն ականողաց

Եւ դիմաց, և Թաւաշեր լանջաց նորա, մարդադիմին
Գազանի, և ընդ շիջումըն բոցաշունչ որկորոյն։

Ցայնըմհետէ հըռչակեցան փառք Ալկիդեայ, և պաշտեցին
Ցետինք տօնիւք զօրըն զայն, ի Պոտիտեայ ըսկիզըն առեալ.
Եւ պինարեանըն տոհմ ի պահ կարգեալ տօնիցըն Հերակլեայ,
Կանգնեցին ըզբագինըս զայս ի ամին անտառի,
Որ կոչեսցի յաւերժ աւագ առ մեզ, և միշտ կացցէ աւագ.
Հապա մանկունք ածէք օ՜ն սաղարթագեղ պըսակ ի գլուխ
Ի սպաս մեծի այսըր շնորհի. առէք բաժակ, և կարդալով
Զըւարթք զաստուածըն բոլորից, հեղէք նըմա անապակ։

Եւ ահա զոյգ ընդ բանին Թեղօշ՝ երկգոյն ըզբոլորից
Հերակլեան հովանեաւ ծածկեաց ըզհերս, շուրջ բոլորեալ
Տերեւք ի կախ. և սըրբազան կալեալ բաժակ ի յաջում
Հեղուն հըրճուիւք նոյնհետայն ի քաւութիւն, կարդան ըզդիս։
Մինչ այս մինչ այն շըրջի Ոլիմպ, և արեգակըն խոնարհի.
Գան ահա քուրմք, և նախ Պոտիտ, մաշկահանդերձք ըստ օրինի,
Բերեն բոց, և վերըստին պաշտեն ախորժ դահամուտս
Ի մակընթրիս, և ի սկուտեղս լիս ծածկեն ըզբագինս։
Ցայնժամ Սալիք կաղամախեայ ածեալ սաղարթս ի ճակատու,
Խունկս արկանեն ըզսեղանովք. առա պատանեաց պար, անդ ծերոց
Օրհնեն զԱլկիդ, արկեալ ի վէպ ըզքաջութիւնըս նորին,
Ի՛բր ըզմօրուն նա ըզհըրէշըն մեծամեծս օձըս կըրկին
Ճըմլեալ ձեռամբ ջախջախեաց, և Ի՛բր յաղթող մարտիւ կործանեաց
Ըզքաղաքըն մեծամուրս ըզՏրովադա և զԵքալի.
Ի՛բր ի բիւր դըժնեայ վաստակս ընդ Եւրիսթեաւ արքայիւ
Ըստ ոխերմին ճակատագրեալ կամացն Հերայ չահատակեաց։
Դու զամպածին երկկերպիս անպարտելիդ ըզՀիլէոս
Եւ ըզՓոլ սատակեցեր, դու ըզգազանս ի Կրետէ
Եւ ընդ ժայռիւն ի Նեմէա հարեր զառիւծն անարգիլ։
Սարսեցին ի քէն լիճք ըստիւգականք, զահի հարաւ
Պահակն Որկեայ յարինըռուշտ այրին բազմեալ ի կիսակեր
Ոսկերատին, և ոչ ի քեզ ահ կերպարան ուրուք էարկ,
Ոչ Տիւփէ բարձրադիտակ ըսպառազէն, և ոչ Լերնեան
Բազմագըլխի վիշապըն շուրջ զանըզգաստիւըդ պաշարեալ.
Ողջ լեր իսկապէս աստուածորդիդ Արամազդայ,
Ցաւէլ ի շուք դից, եկ հաշտ և բարիոտն ի զոհըս քո։

Զայսոսիկ յեղանակեն երգս, յաւելեալ ի սոսին
Եւ զանձաւըն Կակեայ և ըզնա ինքըն բոցաշունչ.
Հընչէ անտառն ողջոյն երգոցըն ձայնակից, կայթեն բըլուրք,
Եւ ի զրաւել դիւցականացըն պաշտամանց՝ ամենքեան



Ի քաղաք անդըր դարձ առնեն, դառնայ և լի ամօք արքայն
Առեալ մերձ իւր զԵնէաս, առեալ զորդի իւր ուղեկից,
Եւ ափոփէր զուղին պէսպէս խօսակցութեամբ. իսկ նա ապշեալ
Ի շուրջ ածել զաչս ի զընին վայրացն, հըրճուէր, և հարցանէր,
Եւ զմէն միոյ ի նախնեաց լըսէր յօժար ըզյիշատակ։
Ցայնժամ Եւանդըր, հիմնադիր հռովմէական ապա դղեկին.
Բնակիչք յանտառս յայսոսիկ յառաջագոյն էին բընիկք
Ցաւէրժհարսունք և փաւոնայք, և ազգ ծընեալ ի կոճեղաց
Եւ կարծրատոհմ ի կաղնեաց, ոյց ոչ կըրօնք էին ոչ բարք,
Եւ ո՛չ լծել գիտէին զամոլս ի լուծ, ոչ ժողովել
Մեծութիւնս, և խնայօրէն տընօրինել զըստացուածս,
Այլ ոստք և որսք ըզնոսա կերակրէին տաժանաւորք։
Ցեթերային Ոլիմպեայ Կրոնոս՝ նախկին եկաւորեալ
Վըտարանդի ի կապտելոցըն սահմանաց, հալածական
Ի զինուց Արամազդայ, ած ի մի վայր զազգն ամեհի
Ցըրուեալ ի ծայրըս լերանց, կարգեաց օրէնս, և Լատիոն
Ըզվայրըն զայն անուանեաց, անդր անվըտանգ պատըսպարեալ.
Եւ ոսկեղէնն ըստ զըրուցաց ընդ արքայիւս ըսկըսաւ դար,
Այնպէս յանխռով խաղաղութեան ըզժողովուրդըս վարէր.
Մինչև տակաւ յաջորդեաց դարն յոռեգոյն դարըն գունատ,
Կատաղութիւն պատերազմի, ագահակամք ըստացուածոյ։
Ցայնժամ գունդք աւսոնականք, և սիկանեանք հասին ազինք,
Եւ կրոնեան աշխարհին փոփոխեցան ըստէպ անուանք.
Ցայնժամ եկին թագաւորք, հաս յաղթանդամըն զոռ Տիբեր,
Ուստի ապա գետն Ալբուլա՝ յիտալացւոցըս կոչեցաւ
Տիբերիս, ըզբնիկ անուն իւր կորուսեալ վաղընջական։
Զիս ըզմերժեալս ի հայրենեաց ըզտարագիր ի ծայր ծովու,
Բախտն ամենազօր և անհրաժեշտ ճակատագիր
Եւ մօրն իմոյ Կարմենտայ յաւերժհարսին ազդեցութիւն
Ահարկու, և պատգամք Ապոլոնի աստուածոյն
Ի վայրս յայսոսիկ առաջնորդեալ կացուցին զիս։

Եւ զոյգ ընդ բանիցն յառաջ անցեալ յայտնէ զբագինն
Եւ ըզդուռն՝ յորջորջեալ հռովմայերէն կարմենտական,
Յորմէ ասեն լեալ ի վաղուց փառք Կարմենտեայ յաւէրժհարսին,
Այն որ գուշակ ճակատագրին՝ նախկին զԵնեանցըն նըւագեաց
Եւ զազնըւոյ Պաղատինեան լերին յապայս ըզմեծութիւն։
Եցոյց ապա զանտառըն մեծ՝ զոր ամեհին Հըռոմուլոս
Կացոյց յետոյ ապաստան, և զԼուպերկալ ընդ ցուրտ ժայռիւ
Նուիրեալ լիկեանըն Պանայ ի պարրասեան պաշտամանէ։
Եցոյց ապա և զանտառըն դիցանուէր արգիլետեան,

Եւ գվայրըն զայն կոչեալ ի վկայ՝ զԱրգեայ հիւրոյն պատմեաց ըզմահ։
Անտի եած ի Տարպէոն, և յոսկեղէնն արդ Կապիտոլ
Մացառախիտ ի դըժնեայ երբեմն ի փուշըս վայրենիս։
Արհաւիրս անդըստին տեղւոյն ահեղըն սըրբութիւն
Արկանէր ի շինականսըն պակուցեալս, և անդըստին
Ի մայրեաց անտի գեղջկայք և ի վիմէն զարհուրէին։
Ցանտառի աստ ի կատար հովանաւոր բըլըրոյս բնակէ
Ոմն ի դից, ո՛ ոքն անյայտ. արկադացւոց թըւի տեսեալ
Ըզնոյն ինքն անդ ըզԴիոս ամպրոպայոյզ որոտալով,
Ըզվահանն այծենակաճ ըստէպ աջովն բաղխելով։
Տեսանես և ըզքաղաքըսըդ զերկոսին, պարիսպք դոցա
Խարխարեալ. դոքա նըշխարք են յիշատակք նախնի արանց.
Ըզսա Յանոս կառոյց հայր, ըզդա Կրոնոս. սա Յանիկուլ,
Դա Կրոնիա կոչեցեալ։ Այսպէս նոցա խօսակցելով
Մօտին յաղքատ յարկս Եւանդրի, և տեսանեն աստ անդ անդեայս
Բառաչելով ի հռովմէական հրապարակին և ի փարթամ
Կարինայս. և զկայ առեալ ի մուտս՝ ասէ. Ո՛ հիւր, ընդ այս
Եմուտ յաղթող Ալկիդէս. այս արքունիք են՝ որ ըզնա
Ընկալան. ցո՛յց ըզքեզ արժանաւոր աստուածոյն՝
Արհամարհօտ մեծութեանց. մատիր ի ներքս անդըժկամակ
Ի յարկդ անպաճոյճ։ Ասաց և զմեծն անդր Ենէաս
Ընդ դուզնաքեայ յարկաւն եմոյծ, և ի բազմոց տերևալից
Լիբէական արջենեաւ վերածածկեալ՝ հանգոյց ըզնա։
    Ճեպի գիշեր, պարունակէ նըսեմ թեւօքն ըզտիեզերս.
Բայց Աստղիկըն մայր Ենեայ, ոչ վայրապար ինչ երկուցեալ
Ցահէ սպառնալեաց լատինացւոց, և ի սաստէ
Ազմըկին, այսպէս աղերս արկեալ խօսի առ Հեփեստոս
Յոսկեհուռ առագաստին, սէր դիւցական ազդեալ ի նա.
Յորժամ արքայք արգոլեանք աւերէին պատերազմաւ
ԸզՏրովադա՝ որ իւրեանց էր սահմանեալ, և ըզդըղեակս
Ի բոցոյ թըշնամեաց ի կործանումըն պատրաստեալս,
Ոչ խընդրեցի եղկելեացն ինչ օգնութիւն, ոչ զէնս ի քէն
Ո՛վ փեսայդ իմ ցանկալի, արուեստօրէն ձեռակերտեալս,
Ոչ ըզքեզ, և ոչ ըզքո ինչ կամեցայ յայնժամ վաստակ,
Թէպէտ և յոյժ Պրիամու որդւոցն էի ես շնորհապարտ,
Թէպէտ լինէր ինձ լալ ըստէպ ըզտառապանս Ենեայ ծանունս.
Ինքն ի Հռուտուլս է այժմիկ ըստ հրամանացն Արամազդայ,
Ես ինքն աղաչաւոր զինուց ի քէն մայր ընդ որդւոյ
Գամ ի խընդիր, առ պաշտելիդ ինձ գեր ի վեր բոլորից դից։
Ըզքեզ զոր դուստրըն Ներեայ և ինքն իսկ հարսնըն Տիթոնի



Կարացին արտասուօք ածել յողոք. հայեաց և տես
Քանի ազինք, քանի քաղաքք փակեալ դըրամբք սըրեն սուսեր
Ընդդէմ ինձ և իմոցըս կործանման ըսպառնացեալ։
    Ասաց, և գիրկս ըզնովաւ ձիւնատեսիլ ծըղեօք արկեալ,
Մինչ նա յամէրըն, փարեցաւ քաղցր ի գըգուանըս դիցուհին։
Նա նոյնժամայն ընկալաւ զընտել հըրոյն յինքն ըզբորբոք.
Եւ ընդ մըտեալ բոցըն ծանօթ յընդերսն ի ներքըս թափանցանց
Ընդ թմալեցեալ ոսկերոտին արագարագ ծաւալէր.
Ոչ ինչ ընդհատ քան յորժամ հետք հրեղէնք ընդ հերձս ամպոց զընան
Շառագոյնք, ի դըղըրդիւն որոտընդոստ փայլակնացայտք։
Ըզգաց զըւարթ դիցուհին գեղեցկութեանըն գիտակից
Ջեղըս դաւոյն. յայնժամ ասէ հայրըն պարտեալ յաւերժ սիրով.
Հի՞մ ի հեռուստ խընդրես պատճառս, ընդէ՞ր ոչ ես յիս վըստահիս
Դիցուհիդ. դիւրին և անդ էր մեզ՝ թէ կամք նոյն էին քեզ՝
Վառել ի զէն ըզտեկրացիս, և ոչ իսկ հայրն ամենակալ
Եւ ոչ հրամանք ճակատագրին արգելուին՝ կալ Տրովադայ,
Եւ Պրիամու տասնեակ մի ևս ամաց շըրջան յերկարակեաց։
Թէ արդ իսկ կամք իցեն և միտք քեզ ի մարտ, խոստանամ
Որ ինչ հընարք են արուեստիս, որ ինչ դարբնել է յերկաթոյ
Եւ ի հրահալ ելեկտրեայ, և զոր կարեն բոց և փուք.
Դադարեսջիր յաղաչանաց, մի երկմըտիր ընդ կար քոյին։
Զայս ասացեալ՝ ետ զանձկալին գըգուանմն հարսինըն սիրալիր,
Հեղ զանձն ի ծոց ամուսնոյն, քաղցըր զանգամն էառ թըմբիր։
    Ի հասանել գիշերոյ ի միջակէտ արշաւանին,
Մինչ հանգիստ առաջին մերժէր ըզնինջ, յորժամ յառնէ
Կին, և իլով և ստայնիւ դուզնաքեիւ հայթայթէ զկեանս,
Ըզնիրհեալն արծարծէ հուր՝ բարձեալ զաճիւնն անտի ի լաց,
Եւ յաւելեալ յերկ ըզգիշեր՝ մատուցանէ ի լոյս ճրագի
Զաղախնայս ի սակ երկայն, առ ի կարել զառըն իւրոյ
Պահել ըզգաստ զառագաստ, և զմանրեբամ տածել մանկտին,
Ոչ ինչ ընդհատ յայնժամ հրազօրըն փութացեալ վաղայարոյց
Ի փափուկ անկողնոյ, կանխէր ի հնարըս դարբնականս։
    Մերձ ի Սիկուլ և յեւոլեանըն Լիպարիս՝ յառնէ կըղզի
Ծըխող ժայռիւք սարաւանդեալ. այրք ընդ նովաւ և եոնականք
Գանգէն անձաւք ի բովուցըն Կիկլոպայց խոռոչացեալք.
Եւ ահագինք յուռնադըղորդ սալից անտի հընչէն թընդիւնք.
Գուղձք քալիբեանք ի քարանձաւս անդ ճարճատեն պողովատիկք.
Հինինայ հուր ի հնոցաց. անդ Վուլկանեայ են արքունիք,
Եւ յանուանէ իւրմէ երկիրն այն յորջորջի Վուլկանիա։
    Անդըր հրազօրն էջ ի բարձանց. և դարբնեէին յայրին մեծի

Կիկլոպայք մերկանդամք Ստերոպով և Բրոնտ և Պիրակմոն.
Կայր ի ձեռին նոցա սկսեալ կազմ ի մասնէ, և մասն անկազմ,
Մի ի շանթից՝ որպիսիս արձակէ ստէպ Հայրն աստուածոց.
Էր դըրուագեալ ի նմա երիս կարծու ստեղունըս տարափոյ,
Ամպոյ երիս անձրևածնի, երիս հըրոյ շառագունի,
Եւ հարաւոյ դարձեալ երիս արագաթեւ մըրըրկի։
Յաւելուին ի վաստակ յայնժամ ահեղ փայլատակունս,
Որոտ և ահ, և բարկաճայթ բոց ըզնոցին մըտեալ ըզհետ.
Թեթեւ անիւս Արիսի և՛ կառս այլուր կէսք կազմէին
Որովք զօրեար, որովք յուզէ նա ըզքաղաքս ի պատերազմ.
Եւ զահաւորըն վահան այծենակաճ ի վերոս ոսկի,
Զայրացելոյն զէն Պաղլասայ ելևելիւք այլք դարբնէին,
Օձըս պատեալըս զիրերօք, և ըզնոյն ինքն ըզԳորգոնա
Ի լանջըս դիցուհւոյն, հատեալ կառավին ի յուլանէ՝
Զականողիս շուրջ յածելով։ Խօսի հրազօրն առ նոսա.
Ո՛վ Ետնականքըդ Կիկլոպայք, թողէք որ ինչ երկք ի ձեռին,
Զուշ ի մի յայս ժողովեցէք՝ առնըն քաջի պատրաստել զէն.
Աստ միաբան կորովոյ, բուռն աստ և ժիր բազկաց են պէտք.
Այժմ ամենայն ճարտարութեամբ փութացարուք անյապաղ, ո՛ն։
Ոչ աւելի ինչ ասաց. և ահա ձեռն արկին ի գործ,
Բաշխեալ կըշիռ ըզվաստակն. հոսէ առուիւ ոսկի հրահալ
Եւ արոյր. ի լայնատարըր ձուլարանըս բովուց
Արիւնախանձն հալի պողպատ. կոփեն ապար ահագնակերպ
Բոլորեցունց ընդդէմ զինուցըն Լատինաց պատըսպարան,
Եօթնեակ ոլորտըս զոլորտիւք շուրջանակի պարունակեալ։
Կէսք հողմալից փըքովք առնուն և տան ըզշունչ, մըխեն ի լիճ
Ամէք ըզպըղինձըն շառաչուն. հեծէ թօպեալ այրն ընդ սալիւք.
Ըզբազկաց ելևէջ ուժով մեծաւ փոխանակեն
Ինքեանք ի թիւ. խածեալ շըրջէ գըլծուարն աքցան ի հոլով։
Մինչդեռ երկոցս այսոցիկ Հայրըն Լեմնեան ճեպ տայր յերկիր
Եւոլեան, լոյս պայծառ և երգք հաւուց առաւօտին
Ըզտանեօք՝ զարթուցին զԵւանդր ի յարկն անփառունակ։
Յարեաւ ծերունին, և զվըտաւակն արկեալ զանձամբ,
Ըզտիւրենեան հեւկս ոտիցըն պատատեաց ի գարշապարս,
Ած ըզտեգեան սուսերն յազդեր ուսընդանութ, և զահեկէ
Ուստի ի կախ ի յաջակողմըն կոյս էարկ զյովազենին։
Շունք կըրկին բարապանք բարձր ի սեմոց անտի ի ստոր
Շաւղացըն տերունեաց հետևելով իջանէին.
Դիմեալ երթայր նա ի ներքին անդր ի սենեակս՝ յուշ ածեալ
Ըզհիւրընկալ խոստումըն իւր, լինել Ենեայ ձեռընտու։



Գայր և ինքըն դիւցազն, ոչինչ ընդհատ կանխայարոյց.
Ծերոյն որդի իւր Պալլաս, ըսմա Աքատ էր ուղեկից.
Հասանեն ի մի վայր, և աջ ընդ աջ կըցորդեալ՝
Բազմին ի մէջ յարկին, և սկիզըն առնեն խօսել սերտ ի սըրտէ
Եւ նախ արքայն. Ո՛վ զօրավարըդ վեհագոյն ի տեւկրացիս.
Կենդանւոյ քով մի՛ երբէք տըրովականըն պետութիւն
Անկցի, մի՛ ազգն ընկճեսցի. մեր դուզնաքեայ է զօրութիւն,
Զիք մեր ըսպաստ ի պատերազմ մեծի անուանդ արժանաւոր.
Աստի փակիմք ի տուսկեան գետոյ, անտի նեղէ ըզմեզ
Հըռուտուլ, և ըզմերովքըն պարըսպօք շաչէ զինուք.
Այլ ես հըզօր ազինըս քեզ նիզակակիցս ի պետութեանց
Եւ ճոխ ճամբարըս հոգացայց. զայս յեղակարծ քեզ ճանապարհ
Յուցանէ բախտ ի փըրկութիւն, այսպէս ըզհետ ճակատագրին
Ե՛րթ հրամանաց. ոչ ինչ աստի բնակէ հեռի Ագիլլենէ
Քաղաք կառուցեալ ի քարաբլուր վաղեմի,
Ուր լիւդացին բնակէր երբեմն ազգ ի լերինս ետրուրականս,
Պայծառացեալ ի մարտի, բարգաւաճեալ ընդ ամս յոլով.
Յետոյ ուրեմն արքայն Մեզենտ գոռոզ սաստիւ անգութ զինուք
Էարկ ըզնա ընդ լըծով։ Զի՞ զանպատումըն յիշեցից
Արեան ճապաղիս, զի՞ զգոռոզին խուժ եղերունս.
Ի գլուխ նորին և ընտանեացըն շըրջեսցեն դիք ըզչարիս.
Նա զդիակունս ընդ կենդանի մարդկան իրանըս կըցորդէր
Դէմք ընդդէմըս գիրկ ընդ գիրկ, ի պատուհաս նորանըշան,
Եւ զթաթաւեալս աղիողորմ զօդիւն ի ժահ և ի շարաւ,
Յամըր մահուամբ ըսպանանէր։ Բայց պարտասեալ քաղաքացիք
Յետոյ ուրեմն յերեսաց մոլեգնելոյն յանլուր ոճիրս,
Շուրջ պատեցին ըզնա զինուք ի տան, զընկերսն ըսպանին,
Եւ հուր հարին ըզտանեաց. նա ի միջոյ կոտորածին
Զերծեալ անկաւ ի Հռուտուլս, հիւրընկալին իւրոյ Տուռնեայ
Զինուքըն պաշտպանեալ։ Յարեաւ արդար ըսրտմըտութեամբ
Ետրուրիա համօրէն, և պահանջէ պատերազմաւ
Ըզբըռնաւորն առ ի վրէժ. բիւրաւորաց զօրացն ըզքեզ
Կացուցից զօրավար. մըռընչեն կայմք անտառախիտք
Ըզծովափամբք ողջոյն, և ձայն տան ամբառնալ դըրօշ ի մարտ.
Բայց հինաւուրցն հաւահըմայ կարճէ զնոսա, երդեալ պատգամ.
Ո՛վ մէոնեան մանկունք ընտիր, ծաղիկ նախնեաց քոց և կորով,
Զոր արդար ըսրտմըտութիւն մըղէ ընդդէմ թըշնամեաց,
Եւ ընդդէմ Մեզենտեայ վառէ զայրոյթ վըէժխընդիր,
Ոչ ումեք իտալացւոյ է զազգըն մեծ նըկուն առնել.
Հիւրըս խընդրեա զօրավարս։ Էտրուրականն յայնժամ բանակ

Կայր ի դաշտիս զարհուրեալ յերեսաց դիցըն պատգամաց․
Ինքն իսկ Տարքոն հրեշտակս առ իս աղաչաւորս առաքեաց,
Թագ գաւազան յղէր և սպաս արքունական, հրաւիրելով
Զիս ի բանակն առ իւր՝ առնուլ ըզտիւրենեանն արքայութիւն։
Այլ ծերութիւն ցուրտ և դանդաղ անաւագեալ ամաց ի հեռ,
Եւ զօրութիւն ի վաստակըս քաջութեան ապաժաման
Ոչ ներեն ինձ թագաւորել․ մարթ էր զորդի իմ յորդորել,
Եթէ ոչ խառն ի մօրէ սաբելուհւոյ՝ հայրենակից
Նոցին գտանէր․ դու, զի տիոց քոց և ազգի պատգամն ի ճահ
Պատահէ, և զի կոչէն ըզքեզ աստուածք, երթ ով տեկրեանց
Եւ իտալաց քաջազօրըդ զօրավար, և յաւելից
Տալ ըզսա քեզ, ըզմըխիթար իմ և ըզյոյս, ըզՊալլաս․
Ընդ քև ուսցի սա ի զէն, ուսցի ի տոկ դըժընդակաց
Արիական վաստակոց, և արութեանց քոց ի տեսիլ
Զարմանալ աստըստին ի սկըզբնաբոյս տիոցն ընդ քեզ․
Երկերիւր յաւելից նըմա հեծեալս արկադացիս,
Նոյնչափ և ինքըն Պալլաս յաւելուցու քեզ յիւր անուն։

Եւ ի խօսել նորա այսպէս՝ զաչս ի յերկիր արկեալ կային
Անքիսեանն Ենէաս և մըտերիմն իւր Աքատ,
Տըխուր ի սիրտ հոգըս բազումըս դըժուարինս յեղյեղելով․
Բայց կիթերեանն ի վերուստ ետ ի պարզի յայնժամ նըշան,
Զի ցոլանայր յանկարծակի փայլակն յերկնէ որոտընդոստ,
Եւ էր տեսանել զահի հարեալ զամենեսին,
Եւ տիւրենեանց ընդ եթեր թըւէր հընչել փողոց շառաչ։
Ի վեր հային, և ահա անդրէն կըրկին ձայն ահագին
Որոտայ՝ և զէնս ընդ ամպ ի ջինջ երկնի տեսանեն
Շողացեալ ի պարզոյ՝ շըկահելով և շառաչմամբ։
Վըհատեցան այլք, բայց դիւցազնըն տրովացի ըզդիցուհւոյ
Մօրըն ծանեաւ ըզբարբառ, և ըզխոստումն ի յուշ ածեալ,
Ասէ․ Մի՛, ասպընջականդ իմ զեըս հրաշիցդ հետազօտէր․
Կոչէ Ողիմպ ահա զիս․ զայս ինձ երգեաց դիցուհին մայր
Տալ նըշան ըսպառնալեաց պատերազմի, ածել առ իս
Զէնս ընդ այերս ինձ յօգնութիւն ձեռակերտեալս ի Հեփեստեայ․
Աւա՜ղ քանի նախճիրք հիքացն ի վերայ կան լաւրենտացւոց․
Քանի՜, Տուրնէ, տացես վըրէժ․ քանի՜ն, հայրըդ Տիբերիս,
Թաւալեսցես ընդ ալեօքդ ասպարս արեաց և սաղաւարտ
Եւ իրանըս կորովիս․ խընդրեսցի մարտ, լուծցին դաշինք։

Ասաց, և բարձր ի գահոյիցն իջեալ՝ զարթոյց նախ ի բագնին
Հերակլեայ զհուրըն նիրհեալ, և յերիկեանն եմուտ ի յարկ
Ցուարթագին, առ թերափսըն փոքրըկունս ըստ օրինի



Եզլն զառինս ընտրանաւ․ ընդ իւր Եւանդր, և տրովական
Ընդ իւր մանկտին։ Ի նաւատորմն ապա առ իւրսըն գայ, ընտրէ
Ըզգերազանցսըն քաջութեամբ՝ ի մարտ ըզհետ իւր դիմել․
Ընդ հոսանս յամրահոս գետոյն սահին այլք մէտ ի մէտ,
Ածել զբոյց Ասկանեայ զանցից իրացն և ըզհօրէն։
Որոց ի դաշտըս տիւրեննեանըս խաղալին գալին տեկրեանք,
Ածան նոցա երիվարք, և դիւցազին ևըս Ենեայ
Ածաւ, այլ ոչ վիճակաւ․ առիւծենի խարտեաշ ըզձին
Ծածկէր օթոց, ճիրանօք ոսկեզօծիւք գերափայլեալ։
Ճախրէ համբաւ, փոյթ ընդ քաղաքն յածեալ փոքրիկ տարածանի,
Զի վաղ ի սեամս արքային տիւրենացւոց գայր այրուձի․
Ցաճախեն մարք ըզպաղատանս, գայ մերձենայ ահ վըտանգին,
Ահեղագոյն ի սաստ ազդէ արիականն անդ կերպարան․
Յայնժամ Եւանդր անկեալ զաջով հրաժարելոյ որդւոյն, ասէ
Անհատահոս արտասուօք․ Ցանկա՜րծ Գիոս դարձուցանէր
Զամն ինձ սահեալս, և գտանէի որպէս մինչ անդ առ Պրենեստեաւ
Հարի զնախկինըն բանակ, ետու ի հուր զասպարաց կոյտ,
Եւ բազկաւս այսուիկ արկի զՀերիլ ի վիհ տարտարոսին,
Զայն՝ որում մայրըն Փերոնէ, ահեղահրա՜շ ի պատմել,
Երրակի տըւեալ հոգիս էր ի ծնանելն, որ երեքկին
Միանգամայն զէնըս շարժէր, և երեքումբք հարկ էր մահուամբք
Տապաստ ըզնա արկանել․ սակայն բազուկս այս ինմանէ
Եւ ըզզէնսըն զերեսին և զերեսին հոգիս կապտեաց․
Թէ այնպիսի դեռևս էի, ոչ ի գըրկաց արդ մեկնէի,
Որդեակ իմ․ և ոչ Մեզենտ սահմանակից իմ ատընհար
Եզեալ զինև, այնքան մահուանըս սուսերաւ գործել զօրէր,
Ոչ յայնքանեաց ի բնակչաց այրի զքաղաքըս զայս առնել։
Այլ դուք ո՜վ դիք, և դու ո՜վ դիցըն վեհագոյն Արամազդ,
Գըթացարուք, մաղթեմ, յարքայն Արկադիոյ, և լըսել
Զեզ հայրենի ուխտք իմ լիցին․ եթէ կամք ձեր, ճակատագրին
Եթէ հրամանք ըզՊալլաս ողջամբ այսրէն ինձ դարձուսցեն,
Եթէ ի տես նորին դարձեալ և իրերաց ի հանդիպումն
Ինձ մընան կեանք, խընդրեմ կեալ՝ պատրաստ ի կրել վիշտ և վաստակ․
Իսկ թէ արկած ինչ, ո՜վ բախտ, աղխաբեր ինձ ըսպառնաս,
Այժմէն իսկ օ՜ն, այժմէն լիցի յանդուգն կենացս ինձ լուծանել,
Մինչ դեռ ի կարծ յուզին յիս հոգք, մինչ յոյս ելիցն է ի յերկբայս,
Մինչ դեռ, որդեակ իմ սիրելի, հուսկ և միակ իմ բերկրութիւն,
Փարեալ ըզքև կամ, զի մի՜ գոյժ հասեալ տըխուր յունկն իմ հարցի։

Զայսոսիկ հայրն, ի հրաժարել յորդւոյն՝ յետին հեղոյր աղերս
Եւ նուաղեցաւ․ ածին ի ներքս ըզնա ի տուն ըսպասաւորք։

Բայց հեծելազօրն վաղ ելեալ էր ընդ դըրունս, և Ենէաս
Ընդ առաջինս, հաւատարիմն ի միասին ընդ իւր Աքատ.
Եւ այլք ըզհետ նոցին աւագք ի տրովացւոց զօրավարք.
Ինքն իսկ Պալլաս ի մէջ գընդին ի նըկարէն վառեալ ի զէն
Եւ ի քղամիդ, իբր Արուսեակըն սիրելի Ափրոդիտեայ
Քան զայլ աստեղս, յորժամ յալեաց Ովկիանու թուրմ ընդ եթեր
Առնու ըզսուրբ դէմս ի վեր, և ըզգիշեր հերքէ ի բաց:
Կան մարք երկչոտք ըզպարըսպօք, հային ըզհետ փոշեայ ամպոյն,
Եւ փայլելոց պըղընձեօք գունդարտակաց. նոքա խաղան
Ըսպառազէնք ընդ մացառուտս, ուր հըպագոյն են ելք ուղւոյն.
Գընայ ղօղինդն աղաղակի, և ի գընդել այրուձիոյն՝
Քառասըմբակ դըրընդիւն ոտից դոփէ ընդ դաշտըն փոշելից:
Է անտառ մեծ առ ցուրտ գետովըն Կերիտեաւ շուրջ լայնալիր,
Սըրբազանեալ հարցն ի կրօնից. պատեն բըլուրք զայն գոգաձև
Նըսեմ մայրեօք ամենուստ. Սիլուանեայ՝ դիցն անդաստանաց
Եւ խաշին՝ զանտառըն զայն վիպեն ըզրոյցք նըւիրական,
Եւ տարեկան տօն ի նախնեացըն պելասգեանց օրինադրեալ,
Որք անդ ուրեմն ի սահմանըս Լատինաց ի սկըզբանէ
Բնակէին. ոչ ինչ հեռի անտի Տարքոն և Տիւրենք
Բանակէին յամուր վայրի, և բարձր ի բլէրն էր տեսանել
Ըզլեգէոնն առհասարակ յարձակ ի դաշտս հարեալ խորան:
Հայրն Ենէաս և մանկտին ընտրեալ ի մարտ անդր հասանեն.
Եւ տաժանեալք, ըզձիանըն և զանձինըս կազդուրեն:
Անդր և Աստղիկըն լուսափայլ աստուածուհին էր ժամանեալ
Ընդ ամպս երկնից ընծայաբեր. և ի բացեայ ի ձոր հովտին
Տեսեալ զորդի իւր մեկուսի ի ցուրտ գետոյն առանձնացեալ,
Ինքըն նախ յառաջ մատեաւ, այսպէս առ նա բարբառելով.
Ահա խոստումն իմ և պարգևք յառնէ իմմէ հրաշակերտեալք.
Մի ևս որդեակ իմ երկիցես ձայն տալ զոռոզ լաւրենտացւոց
Եւ ամեհւոյն Տուռնեայ ի մարտ: Ասաց և գիրկս արկեալ որդւոյն,
Ըզզէնսըն պաղպաջունս եդ ընդ կաղնեաւն ի հանդիպոյ:
Նա ընդ պարգևըս դիցուհւոյն և ընդ այնքան փառսըն բերկրեալ,
Հայէր անյագ, զըննէր ըզմի մի ի մասանց և հրաշանայր.
Առնոյր ի ձեռս իւր և ի գիրկս ըզսոսկալին ցըցունազարդ
Ըզբոցաշունչ սաղաւարտ, և զմահահոտ սուսերն և զրահ
Արիւնըռուշտ լայնատարըր կարծրակուռ ի պըղընձոյ.
Որպէս ամպ կապուտակ յորժամ յարփւոյն ճառագայթից
Հրավառեալ շուրջ ի բացեայ արձակէ փայլ. զըննէ ապա
Ըզբարձպանս ելեկտրեայս և ի յոսկւոյ զըտոյ յըղկեալս,
Եւ ըզնիզակն և զանպատում հրաշակերտեալն ապա զասպար:



Զարկածս ի նմա Իտալաց և զյաղթանակըս Հռոմայ
Էր դըրուագեալ, ապադայից դարուց հրազօրն ոչ անտեղեակ.
Անդ զԱսկանեայ զրոհին սերունդ և ըզմարտից անցըս կարգաւ.
Եւ զգայլըն մայր ի քարայրին Արեայ կողմնեալ ի դալարւոջ
Երկուորեակք զըստեանցն ի կախ կորիւնք ըզւարթըս խայտալով,
Եւ մօրն ըզզօրկ շըրջեալ զուլն ի փայփայել է զի ըզմին
Եւ մերթ ըզմիւս, և լեզուաւըն զիրանունսըն լիզանել:
Ոչ ինչ անտի ի բացեայ ըզՀռովմ քաղաք, և զդըստերաց
Սաբինուհեաց՝ ի խըմբել կըրկէսական աւագ տօնից՝
Անօրինակ յափըշտակումն ի թատերաց՝ էր յաւելեալ,
Եւ զնոյնհետայն մարտին խանձումն անդրէն ի մէջ Հռոմուլեանց
Եւ ծերունւոյն Տատիոսի և Կորացւոց խըստակրօնից:
Թողեալ արքայք ըսպառազէնք այս ի բաց ըզպատերազմ,
Կային բաժակ ի ձեռին առ սեղանով Արամազդայ
Կըռեալ ընդ միմեանս ուխտըս դաշանց, զենեալ խոզեան:
Ոչ ինչ հեռի՝ քառաձիք ի հակառակ դէհըս վարեալ
Հերձուին ըզՄետիոս, (զի՞ ոչ կացեր ալբայեցիդ
Ի դաշին), զուխտադըրժին ընդ մացառուտս ածէր Տուլլոս
Զաղիս ի քարշ, ցօղէին ներկեալ ողող փուշք յարենէ:
Անդ Պորսեննա ի նեղ արկեալ ըզՀռովմ պատնէշ պաշարմամբ,
Ընդունել հրամայէր ըզհալածեալըն Տարկուինոս.
Ենեանք ի զէն դիմէին վերամարտիկք ազատութեան.
Զինքն ի կերպի զայրացելոյ էր տեսանել ըզՊորսեննա,
Եւ սպառնալեց՝ զի զկամուրջըն բեկանել իշխէր Կոկլէս,
Զի Կղելիա անցանէր կապակոտոր ընդ գետն ի լող:
Ի վերնակողմըն վահանին կայր Մանլիոս առ մեհենաւ
Ի պահ տարպեան դըղեկին, ի պահ բարձու Կապիտոլին.
Եւ արքունեացըն Հռոմուլեայ այն ինչ ծածկէր յարկ ի խոզան:
Սագ արծաթի անդ թեւածէր ընդ ոսկեղէն կամարակապս,
Հասեալ առ սեամըս գուժելով զգալլիացիս, և մերձ կային
Գալլիացիք ընդ մացառուտս ի նըւաճումըն դըղեկին,
Օգնեալք նըսեմ գիշերաւ, ի խաւարէն պատըսպարեալք:
Ոսկեղէնիկք էին նոցա վարսիցըն հիւսք, ոսկի և ձորձք,
Ոսկեճամուկք ի լոդիկըս շերտաւորըս փայլէին,
Ոսկեհուռ ի պարանոցըն կաթնաթոյրս յեռեալ մանեակ.
Մէն մի կըրկնակ գեղարդն ալպեան փայլուն ի ձեռըս ճօճելով,
Եւ ասպար երկայնաձև պարածածուկ բոլոր անձին:
Էր անդ ածեալ և ըզՍալիս կաքաւաձև ի քանդակ,
ԸզԼուպերկըս մերկանդամըս, բերելով ցըցունս ասուիս,
Եւ զերկնընկէց վահանակս. անդ ի դեսպակ բազմեալ փափուկ

Ածէին ընդ քաղաքըն մարք պարկեշտք ըզպատարագս :
Նոյն և ըզկայս տարտարոսին էր յաւելեալ անդ ի բացեայ ,
Բարձր ըզդըրունըս Պլուտոնի և զպատուհասըս եղերանց:
Եւ ըզքեզ, Կատիլինա , զըսպառնական ժայռէ ի կախ,
Դողալով յերեսաց դըժոխայնոց վըշկապարեաց .
Եւ զերկիւղածըս մեկուսի , իրաւարար Նոցա զԿատոն :
Ընդ այսոսիկ և ըզծովու մըրըրկելոյ պատկեր ոսկի ,
Այլ կապուտակ ծուփք ըսպիտակ ցայտեն փըրփուր և շուրջ դըլփինք
Արծաթափայլք ըզտամբն ի ձիգ հերձուն ըզծովս ոլորտալար :
Էր տեսանել ի միջի Նաւատորմից , ի պղընձի
Վառեալ ի ցռուկ , զակտիականն ածելով մարտ , և եռացեալ
Տեսանէիր բովանդակ ըզԼևկատա կազմ Արեսիւ ,
Եւ զծով վէտ վէտ փայլեալ ոսկւով. աստի Աւգոստ Կեսար ի կռիւ
Զիտալս հանդերձ Հարբք վարելով, հանդերձ ռամկաւ , և զԹերափիմս ,
Եւ զմեծամեծ դիս ընդ Նոսա , կացեալ ի խելս անդ ի բարձու .
Բոցք երկուորեակ ի զուարթագեղ դիմացն ի սփիւռ ցոլանային ,
Եւ հայրենին երևեալ աստղ ըզգագաթամբըն շողալով:
Այլուր կանգուն կայր Ագրիպպաս , և աջողակ հողմով մըղէր
Ճակատ ընդ դիցն հովանեաւ , և ցըռկազարդ ի ճակատուն
Փայլէր պըսակ , Նաւականի մըրցանակին պերճ Նըշանակ:
Անտի յաղթող յայլեայլ պատերազմունս Անտոնիոս ,
Ցարուսեկին ժողովըրդոց և ի Կարմիր ծովեզերաց
Ածէ ընդ իւր յԵգիպտոս ըզզօրութիւնս արևելից
Եւ ըզբատրեաց հուսկ յետին ծագ. և անարժան ի տեսիլ
Գայ հասանէ ամուսինն ըզհետ Նորա եգիպտուհի :
Հրոսեն բընաւք ի միասին , փըրփրեն ծովուն ալիք բոլոր ,
Կոծեալք ի Թևճակաց , յերեքարձէն ցըռկաց հերձեալք.
Խաղան յանդունդըս գոգցես անկեալ ի ծուփըս Կիւկլադայք
Խըլեալ ի բաց , կամ բարձրաբերձ լերինք լերանց անդ հանդիպեալ:
Այնքան ի յաղթ յաշտարակեայ խելըս բարձեալ բերի որեար:
Զըգին խըծուծք բոցավառեալք և գեղարդունք երագաթեւք ,
Կարմրանան ի Նոր Նախճիրըս դաշտավայրքըն պիսիդեանք:
Զայն ի միջի անդ տայ դըշխոյն ճօճանակաւըն հայրենեաւ ,
Կոչէ ըզգունդս ի Նահանջ, չև ի կըրկնակ իժս ի յետկոյս
Ակնարկեալ . զէնըս հըրէշք ազգի ազգի դից , և Անուբ
Ի հաջիւն , բերեն ընդդէմ Պիսիդոնի և Աստղըկան ,
Եւ զէնս ընդդէմ Պալլասայ . մոլի Արէս ի ճակատուն
Երկաթակուռ ի քանդակ , և ժանտաժուտ վըշկապարիք .
Ճեմի ի ձորձ պատառատուն զըւարթ ի դէմըս Գըժտութիւն,
Եւ զհետ Նորին արիւնըռուշտ խարազանաւ գայ Բելլոնա :



Ակտիոնեանն ի վերուստ , ի տեսանել զայս ամենայն ,
Լարէ զաղեղն . և Եգիպտոս լըրիւ իւրով զահի հարեալ,
Հընդիկք , սաբայեցիք , և համօրէն Արաբիա ,
Դարձուցանեն ըզԹիկունս ամենեքեան . ինքն իսկ դըշխոյն
Պարզէ առագաստ , և կարգալով ըզԹևս հողմոց
Յօգնութիւն , հրամայէ՝ վաղ ըզպարանըս լուծանել:
Ըզնա հրազօրն ի միջի կոտորածին էր պատկերեալ
Գունատ ի դէմս յահէ մահուն ըսպառնալեաց , և ալէծուփ
Ի յապիգեան վարեալ հողմոյ , և զյաղթանդամըն Նիլ տըխուր
Գըրկատարած ի հանդիպոյ հրաւիրելով ըզպարտեալս
Ի ծոց իւր կապուտակ , և ի խորշկէն պըտոյտս ալեաց :
Իսկ Կեսար մըտեալ ի Ներքս անդր ի պարիսպըս՝ երեքկին
Յաղթանակաւ , ուխտս իտալաց մատուցանէ յաւէրժըս դից ,
Կանգնէ տաճարըս մեծամեծ երեքարիւր ի քաղաքին:
Հընչեն ի տօն ցընծութեան ի կայթս ի խաղըս ճանապարհք .
Մարք ի մեհեանս աստուածոց , մարք ի բագինըս պարաւորք.
Եւ առ բագնօք ծածկեն զերկիրըն զուարակք ածեալք ի սպանդ :
Ինքըն բազմեալ ըզձիւնաթոյր սեմովք Փեբեայ լուսեղէնի ,
Զըննէ զընծայս ազանց , կարգէ ի հոյակապ զայնս ի դըրանդիս .
Երկայնաձիգ կարգաւ գընան ազինք պարտեալք այլաբարբառք ,
Ի ձև ի զէնըս զանազանք . ըզՆոմադից աստ ուրեք զազգ ,
Անդ զանգօտեաց ափրիկեցւոց Հրազօրն ածեալ էր ի պատկեր ,
Եւ ըզԿարս և ըզԼելեգս և ըզԳելոնս աղեղնաւորս .
Խաղայր Եփրատ անդ հեզասահ , և ծայրագոյնք ընակչաց երկրի
Մորինք հեռաբնակք , և երկեղջիւրըն Հըռենոս ,
Դահք անպարտելիք , և կամըրջաց անհաստ Երասխ:
Ընդ այնպիսի պարգևըս մօր իւրոյ դիւցազնըն զարմացեալ
Ի վահանին Հեփեստեայ , բերկրի ի տուերս՝ իրացն անգէտ ,
Եւ ըստանձնէ զճակատագիր Թոռանց իւրոց և ըզհամբաւ :

# ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵՍԱՅ ՄԱՐՈՆԻ

# ԵՆԷԱԿԱՆԻՆ

## ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Մինչ դեռ Ենէաս 'ի խնդիր օգնականութեան առ Արկադացիս և առ Ետրուրացիս դեգերէր, Հերա առաքէ զԻրիս պատգամաւոր առ Տուրնոս՝ յարձակել 'ի պատնէշս նորոյն Տրովադայ: Տրովացիք կացեալք 'ի պատուէր Ենեայ, ոչ ելանեն 'ի պատերազմ. և Տուրնոս պատրաստի հրձիգ առնել զնաւս նոցա, որք մերձ յաւան անդր առ 'ի կողմն կուսէ կային: Այլ 'ի մայրեաց Իդեան անտառին այնոքիկ կազմեալ, Կիբելեայ Իդական դիցամօրն խնամօք փոխին 'ի յաւերժահարսունս ծովայինս. և գիշերոյ 'ի վերայ հասեալ, գիշերապահք շուրջ զաւանաւն կարգին: Մինչդեռ տրովացիք խորհին փութալ կոչել զԵնէաս, Նիսոս և Եւրիալոս մտերիմք իրերաց բարեկամք ազնուագութք յանձն առնուն զպաշտպանութիւն գաւառին: Գովէ զնոսա Ասկանիոս, և արձակէ. նոքա գիշերային կոտորած մեծ Ռուտուլացն առնեն. այլ 'ի դառնալն իւրեանց ստանձնեալ զաւարս նոցա, հանդիպեալ հեծելոց լատինաց՝ 'ի նոցանէ սպանանին: Տրովացւոց տեսեալ զգլուխ նոցա ի հեռաստանէ կանգնեալ 'ի բանակատեղն 'ի տեգ նիզակի, առնուն կոծ մեծ. և մանաւանդ մայրն Եւրիալեայ: Տուրնոս դառնայ ընդ այգն անդրէն 'ի պատերազմ 'ի վերայ աւանին: Ասկանիոս զՆումանոս, որ ըմբռստագոյն նախատէրն, նետահար 'ի վերուստ պարսպացն առնէ: Պանդար և Բիտիաս յաջողութեամբն խրախուսեալք՝ բանան զդրունս, և զՌուտուլս յարձակեալս 'ի ներքս անդ վանեն 'ի հարուածս մեծամեծս: Յարձակի ապա Տուրնոս զօրութեամբ. այլ 'ի փակել դրանցն, և 'ի պատել զնովաւ ամբոխի թշնամեաց, նահանջի տակաւ 'ի կողմն աւանին՝ ընդ որ գնայ Տիբեր, և սպառազէն 'ի գետ անդր զանձն ընկեցեալ դառնայ առ իւրսն 'ի լող:

# ԵՆԷԱԿԱՆ

## ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

Իբրև այս անցք անցանէին ի հեռաստան, կրոնեանն Հերա
Առ յանդուգնըն Տուրնոս յղեաց զԻրիս ի յերկնից,
Մինչ նա բազմեալ կայր ընդ դիպաց առ Պիլումնեայ հօրն անտառի
Ի դիցանուէր հովտին. և դուստրըն Թաւմասեան զայս ի Հերայ
Վարդագեղ շըրթամբքըն ածէ առ նա պատգամ. Ո՛վ Տուրնէ,
Զոր ոչ իշխէր ոք ի դից ցանկացելումըդ խոստանալ,
Ահա՛ շըրջան ժամանակի ածէ ինքնին. ահա թողեալ
Ենեայ զքաղաք իւր և զընկերս հանդերձ իւրով նաւատորմիւ,
Երթեալ է յարքունիս պալատինեանըն Եւանդրի.
Եւ ոչ ըզկայ առեալ անդ, խաղայ ի ծագըս կորիթեան
Քաղաքանւոյ՝ զինուորել ըզգեղջկեից անտի ամբոխ,
Զօրաժողով առնել գուգաղ մեծ լիւդացի. զի՞ դանդաղիս,
Ժամ է արդ, կոչեա ըզկառս և ըզձիան, մի՛ յամենար.
Հա՛ս ի ճամբար անդր, աղմկեա, հա՛ր զայն աւար: Ասաց զայս,
Եւ ամբարձաւ ընդ երկինս հոլաթևեալ, ձըգեալ ըզհետ
Աղեղըն լայնալիճ՝ ի գնալըն ի բաց՝ ընդ ամպովք:
Ծանեաւ ըզնա պատանին, և զձեռս յաստեղս ի վեր առեալ
Զերկոսին, ձայնարկէր այսպէս ըզհետ հրաժարելոյն.
Ո՛վ Իրիս, ո՛վ զարդ երկնից, ո՞ զքեզ առ իս յղեաց յերկիր.
Ուստի յանկարծ այսքան օդոց պայծառութիւն. ահա երկինք
Փեռեկեալ, յածին ընդ գունդըն ահա աստեղք. հաւա հմայեցդ
Աժդեհանեաց գամ ըզհետ, որ ոք ի դից և իցես՝
Որ զիս ի զէն խրախուսես: Զայս ասացեալ՝ մատեաւ ի գետ,
Եւ ի ծայրից անտի ալեաց առեալ կայլակ, աղերս բազում
Իջեղ աստուածոց, ելից ուխտիւք բազմօք զայերս:

Հա՛մա բանակն համօրէն ընդ բացարձակ դաշտըս խաղայր,
Ճոխ ի ձիան, ճոխ ի հանդերձըս նըկարէնըս, ճոխ յոսկի.
Զառաջապահ գունդըս Մեսապ, ըզվերջապահըս վարէին
Որդիք Տիւռեայ. Տուրնոս ուսովքըն դեր ի վեր զէն ի ձեռին
Ըզգնայր ի բուն բանակին. որպէս Գանգէս յառնէ լռուին
Զեօթանեքումբք խաղաղ գետովք, կամ որպէս Նիլ պարարտ ալեօք
Հեղեղատեալ ի դաշտորայս՝ դառնայ ի ձոր իւր ամփոփ:
Յայնժամ տեկրեանք տեսանեն յանկարծ ի բաց ըզթուխ փոշւոյ
Կուտակեալ ամպ, և ծածկեալ ըզդաշտավայրըս խաւարաւ:
Նախ Կայիկոս յընդդիմակայ բըլրոյ անտի բարձրաձայնէ.
Զինուորակիցք իմ որպիսի՞ սեաւ փոթորիկ մըրըրկեալ գայ.
Փութայք ելէք ի պարիսպըս, զէն առէք, ածէք սուսեր.
Մերձ աւասիկ կայ թըշնամին: Դիմեն մեծաւ աղաղակաւ
Տեկրեանք ի դրունս առհասարակ, և ի պարիսպս անդըր խըռնին.
Զի Ենէաս հըմուտ իրաց պատերազմի այսպէս նոցա
Էր պատուիրեալ, եթէ ինչ դէպք յանըմ վայրի պատահէին,
Մի ընաւ ճակատ յարդարել, մի յասպարէզ դիմագրաւել,
Այլ կալ ի պահ բանակին, պահել զամուրըս պատնիշօք:
Թէպէտ ամօթ, և թէ զայրոյթ գըրգռէր ի կռիւ ըզնոսին,
Սակայն ըզգրունս առարկեալ, և ըստ խրատուն Ենեայ զինեալ,
Կազմ և պատրաստ կային ի խորս աշտարակաց ընդդէմ հինից:
Բայց Տուրնոս, զի վաղագոյն քան ըզբանակըն յամրընթաց
Քըսանեքումբքն հանդերձ ընտիր այրուձիով էր խաղացեալ,
Մատեաւ յանկարծ ի քաղաքն. ածէր ճարտուկ ըզնա նըժոյգ
Թրակացի, սաղաւարտ ոսկի ի գլուխ կարմրացըցուն.
Հա՛մա, ասէ, ո՛վ մանկունք, ո՞ գայ ընդ իս ի ձէնջ ընդդէմ
Թըշնամեաց. և նետ խոյոյն ձըգէ նըշան պատերազմի
Ընդ օդս ի վեր, և բարձր ի գլուխ նախայարձակ խաղայ ի դաշտ.
Խրախոյս ըզհետ նորա բարձեալ դիմեն ընկերքն ահագնաձայն,
Զարմացեալ՝ զի տեկրացիք կային յամուրըս վեհերոտք,
Ոչ ի դաշտ ելեալ ի դիւր, և ոչ ընդդէմ բերէին զէն:
Նա զայրագին յայս կոյս և յայն ձիավարեալ ըզպարըսպօք,
Հետազօտէր մուտ ընդ անկոխ կողմանս ի ներքս. և որպէս գայլ,
Որ առ լիով փարախիւ դարանակալ՝ ոռնայ զցանկով
Ի խոր գիշերի ընդդէմ թօնից և մըրըրկաց,
Յայնժամ գառինք պատըսպարեալ ահիւ ընդ մայրքըն բառաչեն.
Ինքն անողորմ ամպարիշտ մոլի վառեալ կատաղութեամբ
Ընդ մակաղեալս ի բացեայ, և յամեցմամբըն սով ի նմա
Զայրանայ, ըղկէ որկոր ըզնա արեան ծարաւի:
Ոչ ինչ ընդհատ Ռուտուլացւոյն վառի զայրոյթ ի տեսիլ



Պարըսպաց և բանակին, և գնայ ընդչկարծր ոսկերացըն բոց,
Զիա՞րդ առնել ի ներքըս մուտ, որո՞վ հնարիւք ըզտեկրացիս
Զըգել արտաքս ի ճամբարէն, ածել յարձակ դաշտավայր:
Յարձակի ի նաւատորմն՝ որ առ թևով կայր բանակին
Պատըսպարեալ հողաբըլըրովք և ի գետոյն պատեալ ալեաց.
Զայն առնէ ի հըրձիգ խրախուսելոցըն մարտակցաց,
Եւ ինքն հապճեպ ի բևեկըն բոցավառ բուռն հարկանէ:
Յայնժամ և խըրքըն գուն գործեն օրինակաւն յորդորեալ.
Զինի ի թուխ մանկունս ի ջահ, յափըշտակեն բոլորքեան
Խանձող և բոց ծըխամած. հուր կըպըրային խառն ընդ շանթիւ
Ցայտէ յաստեղս. և ո՞ ի դից դարձոյց ի բաց ի տեկրացւոց,
Ո՛վ Մուսայք, ուսուցէք ինձ, ըզժանտաժուտըն զայն հըրդեհ,
Եւ ի կայմից անտի ո՞ զըոցածաւալ հուրըն հալածեաց:—
Մըթին իրացն է հնութիւն, սակայն համբաւն յաւէրժական:
Յորմէ հետէ Ենէաս ի փռիւգականն Իդա կազմէր
Ըզնաւատորմն, և պատրաստէր դիմել ի խոր անդունդս ընդ ծով,
Այսպէս առ վեհն Արամազդ վիպեն զըրոյցք՝ բերեկնթեան
Դիցամօրըն բարբառեալ. Ընկալ, որդեակ, զոր սիրեցեալ
Մայր քո աղէրս արկանէ նըճաճողէդ քեզ Ոլիմպեայ:
Ի եղևնեաց անտառ ի վաղ ժամանակաց ինձ սիրելի,
Անտառ ի ծագ բարձու լերին, ուրանօր զոհք ինձ մատչին,
Նըսեմաստուեր ի բևեկնեաց և ի փայտից յակրեաց ծածկեալ.
Զայսոսիկ պատանւոյն դարդանացւոյ, յորժամ նաւաց
Կարօտէր, ետու յօժար. տանջէ երկիւղ զիս արդ և հոգ.
Լոյծ ըզկասկած, շնորհեա ծնողի քում մաղթանացըն զօրութիւն,
Զի մի՛ բեկցին նաւքն ի յալեաց, մի՛ ի հողմոց մըրըրկէ.
Մի՛ ի դերև լիցի նոցա աճումն ի մեր առնուլ լերին:
Առ որ որդին, այն որ զարփից վարէ շըրջան յերկինս, ասէ,
Ո՛վ մայր, յո՞ զճակատագրին կոչես հրաման, զի՞նչ խընդրես.
Իցէ՞ թէ նաւք, ի ձեռանէ մահկանացուէ կառուցեալք,
Զանմահական կալցին նըսեհ, և Ենէաս ընդ ահագին
Գնայցէ վըտանգս աներկեան. ո՞ւմ զօրութիւն այդպիսի
Տըւաւ ի դից. նա աւանիկ յորժամ անցեալ նաւքն ընդ արկածս
Հասցեն ի կէտ, և զկայ առցեն ի յաւսոնեան նաւահանգիստ,
Զապրեալս յալեաց և որք զիշխանըն տեկրացի ի լաւրենտեան
Ածցեն ի դաշտ, բարձեալ ըզկերպ ի նոցանէ մահկանացու,
Արարից ըզնոսա ծովուն մեծի դիցուհիս,
Որպէս ներեանըն Դոտով և Գալատէ ըզփըրփրադէզ
Հերձուն լանջիւքըն զալիս: Ասաց ու ի գետ եղբօրն երդուեալ
Ի ստիգական ալիս, ի թուխ ի կըպըրային ուղխիցն ափունս,

Ակնարկեաց. և յակնարկելն դողացաւ Ողիմպ բոլոր:
Հասեալ էր օրն արդ խոստացեալ, և Պարկայից ի լրումն աճեալ
Ըստահմանեալըն ժամանակ՝ յորում Տուրնեայ մարտ տարապարտ
Բռնիպէր ըզդիցամայրն ի սըրբազան լաստից անտի
Հալածել ըզջահս ի բաց. անդ տեւկրացւոց լոյս նոր ծագեաց,
Երևեալ ընդ երկին ամպ մեծ անցեալ յարևելից,
Եւ պարք ընդ ամպն Իդականք, և ահագին հընչեալ բարբառ
Ընդ այերս՝ ելից ըզգունդըս տեւկրացւոց և Հռուտուլաց.
Մի՛ խռովիք ո՛ տրովացիք ի պահ իմոցըս նաւաց,
Մի՛ զինուորիք. հըրձիգ նախ առնել ըզծով տացի Տուրնեայ
Քան զեղևինըս սըրբանուէրս. երթայք արձակ ընդ ծով ի ճեմ
Ո՛վ դիցուհիք, հա՛պա երթայք, ձեզ դիցամայրըն տայ հրաման:
Եւ նոյնժամայն ահա խելք իւրաքանչիւր ի ծովափանց
Խըզեալ ըզպարանս, հանդոյն դըլփնաց սուզեալ ըզցռուկ,
Դիմեն յանդունդըս ծովուն. ապա յանկարծ, ո՛ հրաշք անճառ,
Անդրէն ի վեր երևին՝ գնալով ընդ ծով դէմք կուսականք,
Այն որ յառաջ պըղընձիք կային յեզերս անդ նաւացուկք:
Յապուշ հարան Հըռուտուլք. ինքն իսկ Մեսապ զահի հարաւ,
Խուճապեցաւ այրուձին, ըզկայ եառ և Տիբեր,
Ընկըրկէին ի խորոց ալիք գետոյն կերկերաձայն:
Այլ ոչ Տուրնեայ տեղի տայր քաջայանդուգն արիութիւն.
Խրախուսէր բանիւք զօդիս, խօսէր սաստիւք և յեղյեղէր.
Ի տրովացիս դիմեն նըշանքդ, ոչ ևս օգնէ նոցա Դիոս.
Ոչ հուր և ոչ զէնք հռուտուլեանց սխտին ընդդէմ նաւատորմին
Արդ անդնալի է ծով տեւկրեանց, չիք արդ նոցա յոյս փախըստի.
Կորեաւ նոցա միւս մասն երկ. է ի ձեռին մերում երկիր.
Բիւրաւորք Իտալիոյ այսքան ազինք ընդդէմ նոցա
Բերեն զէն. ոչ յիս երկիւղ ինչ արկանեն ճակատագիրք.
Եթէ ի դիցըն պատգամ պարծել պարծին փըռիւգացիք,
Շատ իսկ ցայսվայր լըցան կամք ճակատագրին և Աստղկան,
Յորժէ հետէ ըզդաշտորայս Աւսոնիոյ կալան բերրիս
Տրովացիք. է և ինձ ընդդէմ նոցին ճակատագիր,
Կորուսանել զազգն ամպարիշտ ի վրէժ հարսին հափշտակելոյ.
Ոչ զԱտրորդիս ևեթ եղեան այն գըրգըռէ ի զայրոյթ,
Եւ ոչ Միկենաց միայն օրէն է զէն առնուլ:..
Սակայն չիցէ՞ շատ միանգամ մատնել ազգին ի կորուստ. —
Պարտ էր բաւել նախնին ոճիր չև գարշելոյ յազգէ կանանց:
Թէ ի կըրճիմըն պատնիշաց վըստահացեալ արդ խիզախեն
Եւ յանջըրպետըս պարկէնից տըկարս ընդդէմ մահու արգելս,
Ո՞չ իսկ տեսին այրեցաւէր ըզկառուցեալս ի Պերգամայ



Ըզպարիսպըս Տրովադայ. այլ արդ, ընտիրք իմ զօրականք,
Ո՞ ի ձէնջ խրախուսէ նըզախարխար առնել ընդ իս
Ըզպատնէշս, և յարձակել յահաբեկեալըն անդր ի ճամբար.
Ոչ զինուց Հեփեստեայ և ոչ կայմից բիւրաւորաց
Պէտք են ինձ ընդդէմ տեւկրեանց. թող և Ետրուրք միահամուռ
Յաւելցին ի նոսա արագ արագ նիզակակիցք.
Մի՛ նոցա արկցէ խաւար, մի՛ Պալլադեայ վատըն գողօն,
Եւ սրախողխող պահակերացն ըսպանութիւն բարձու դղեկին.
Ոչ ի կոյր արգանդ ձիոյ լիցուք երբեք դարանամուտք,
Այլ համարձակ ըզպարիսպս ի տուէ հըրով շուրջ պատեսցուք:
Ցուցից նոցա՝ զի ոչ ևս աստ ընդ դանայեանս է պատերազմ
Եւ ընդ մանկտին պելասգեան, ընդ որս Հեկտոր ժուժեաց տասն ամ:
Արդ զի դառնայ օրս ի յերեկ, զուարթք ցըլյանդ տուընջեան ժամ արք,
Աջողակի սկըսեալ առնել ցարդ ձեռն ի զէն, կազդուրեցէք
Զանձինս, և կազմք և պատրաստք կացէք դիմել ի պատերազմ:
Գիշերապահս յայնժամ ի դրունըս կարգելոյ յանձն եղև հոգ
Մեսապեայ, և ըզպատուարըս շուրջ բոցովք պատելոյ:
Կըրկին եօթնեակք ընտրին Հռուտուլք՝ առնել զօրօք պահ պարըսպաց,
Հարիւրեակք իւրաքանչիւր նոցա՝ ըզհետ գընան մանկունք
Վառեալք յոսկի, սաղաւարտեալք ծիրանեգոյն ի գարգմանակ.
Երթևեկեն, փոխանորդեն զիրեար, բազմին ի դալարուոջ,
Զըմպուն ի յումպ, շըրջեն բաժակըս պըղընձիս. փայլեն հըրատք,
Եւ ըզգիշերն ի բուն անքուն անցուցանէ հըսկումն ի խաղ:
Զայսոսիկ ի վերուստ հողաբըլըրոցըն տեսանեն
Տրովացիք, և ի բարձանց անտի զինուք ըզգուշանան
Դըրանցն ի պահ, և ըզմարտկոց և ըզկամուրջ ահիւ մեծաւ
Ամրապընդեալ, վառին ի զէն. խրախոյս նոցին մատուցանեն
Մընեսթ և քաջըն Սերեստ, զորս ի տեսուչըս մանկըտւոյն
Եւ իրաց պատերազմի վերակացուս էր կացուցեալ
Հայրն Ենէաս, եթէ արկածք ինչ յեղակարծք պատահէին:
Լեգէոն իւրաքանչիւր կայր վիճակաւ ի պահ ամրոյն,
Եւ ի գործ՝ որ մէն միում էր սահմանեալ ի զգուշութիւն:
Իրտակեանըն Նիսոս կարգեալ դըրանն էր պահապան,
Գոռ ի մարտի, զոր զինակից Ենէասայ որսորդն Իդա
Էր առաքեալ, ըզգիպաղեղն երագ ի ձիգ թևթևնեաց.
Ընկեր նըմա Եւրիալ, քան զոր ոչ ոք գեղեցկագոյն
Եկաց յենեանս, և ոչ էարկ ըզտրովական զէնըս զանձամբ.
Մանուկ՝ ում այն ինչ նըշանակ պատանեկան փըթթէր ի ծնօտն
Անմօրուս. երկոցունց նոցա էր նոյն սէր փոխադարձ,
Սովորք ի կռիւ դիմադրաւել զուգակըցորդք, ի միասին

Եւ յայնժամ առ դըրան ի նմին վայրի պահ ունէին։
Խօսի Նիսոս. Արդեօք դի՞ք, Եւրիալէ, արկանեն զայս
Եռանդն ի սիրտ, թէ բուռըն տենչ անձնիւր ումեք իցէ աստուած.
Ինձ ի բազմաց հետէ դիմել ի պատերազմ միտք իմ ազդեն,
Կամ ձեռնարկել ի մեծ ինչ, ոչ ժուժեմ կալ ի հանգըստեան.
Տեսանես քանի՜ վստահ կան Հըռուտուլք յելս մարտին,
Ի՛բըր ցանցառ փայլեն հըրատք. նոքա ի նիրհ և յանապակ
Խորասոյզ անկեալ դընին, և լըռեն վայրք շուրջ ի բացեայ.
Լո՛ւր զոր երկնեմըս խորհուրդ, որ ինչ ընդ միտս իմ արդ յածի.
Ամենեքեան ռամիկն և հարք խընդրեն կոչել զԵնէաս,
Եւ յղել արս՝ որք հաւաստի ածցեն զըրոյց ըղնըմանէ.
Թէ խոստասցին զոր վասըն քո խընդրեմըս վարձ, (զի շատ է ինձ
Համբաւ եւեթ քաջութեան), առ բըլըովս այսուիկ թըւի
Ինձ գըտանել ուղի յամուրս և ի քաղաքըն պալլանտեան։
Ցապուշ հարաւ Եւրիալ, հարաւ մեծի փառացն ի սէր,
Եւ այսպէս առ սըրտեռանդըն բարեկամ իւր խօսեցաւ.
    Հրաժարիցե՞ս, Նիսէ, առնուլ մեծի գործոյդ զիս հաղորդ,
Թողի՞ց ինչ քեզ միայնում դիմագրաւել յայդքան վըտանգ.
Ոչ այդպէս ինձ Ոփելտէս հայրն իմ ուսոյց ներկուռն ի մարտ
Ի հրահանգելըն զիս ի վտանգս արգիականս և ի տրովեան
Ճակատամարտս. իմ այդպիսի ինչ չիք ընդ քեզ արարեալ
Ցորմէհետէ ըղհետ մեծին Ենեայ յարկածս յետինըս գամ.
Է իսկ և է ինձ արհամարհ՞ լոյս, և թըւի ինձ դիւրագին
Փոխանակել ըղկեանս ընդ փառս՝ յոր դու դիմես։ Առ որ Նիսոս.
Ձեր ինչ ըղքէն ինձ կասկած, և ոչ օրէն էր կասկածել,
Քա՛ւ լիցի. այլ զիս առ քեզ յաղթանակաւ դարձուսցէ
Մեծն Արամազդ, և որք ի դից արդար աչօք զայս նըկատեն։
Իսկ թէ ձախող ինչ պատահար, որպէս ի վտանգըս պատահեն
Ոչ դուն ուրեք, կամ ոք ի դից եթէ բարձցէ զիս ի կենաց,
Ողջ լինել քեզ ըղձանամ, վայելչագոյն տիոցդ է կեալ,
Այլ լիցի ոք՝ որ ի մարտէ անտի ի բաց յափըշտակեալ,
Կամ գրաւաթափ արարեալ, տացէ հողոյ զիս մեկուսի։
Եթէ և զայս բախտն արգելցէ, իցէ որ սպաս ինձ ի հեռուստ
Մատուսցէ՝ պատուել շիրմաւ. այլ մի՛ տաց սուգ դառնակըսկիծ
Մօր քում հեզի, որ միայն ի մարց յոգունց ըղհետ քո գալ
Խրախուսեաց, ըզմեծին լըքեալ պարիսպս Ակեստեայ։
Իսկ նա ասէ. Ընդ վայր ածես դու ինձ պատճառս, ոչ յողդողդիմ
Ի միտաց. ո՛ն փութասցուք։ Յայնժամ զարթոյց ըզպահակերս.
Նըքա անդէն փոխանակեն, և ի կարգեալըն կան ի պահ.
Ինքն ի խընդիր արքային մեկնեալ գընայ ընդ Նիսոսի։



    Այլ ամենայն շունչ կենդանի կայր ընդ երկիր յանդորր ի քուն
Մոռացեալ զերկ և ըզհոգ. աւագք տեկրեանցըն զօրավարք
Եւ ընտրեալք ի մանկըտւոյն խորհուրդ զիրաց կարեւորաց
Արքայութեանն առնուին՝ զի՞նչ էր առնել, և զո՞ հրեշտակ
Առ Ենէաս արձակել. կային ի մէջ դաշտավայրին
Ի պատնիշի՝ յեցք ի նիզակըս ձիգս, ասպար ի ձեռին,
Յայնժամ Նիսոս և Եւրիալ մուտըս խընդրեն ի միասին.
Վաղվաղեն, առ մեծ ինչ ասեն եկեալ, և ոչ ընդ վայր
Զընդհատումըն խորհըրդեան։ Նախ Ասկանի ըզփութացեալս
Ի ներքս ընդունի, և հրամայէ Նիսեայ խօսել։
Յայնժամ ասէ Իրտակեանն. Ո՛վ դուք ենեանք արդարամիտք,
Լըւարուք մեզ. մի՛ զոր խընդրեմքըն դատիցիք մանկական
Տիոց եռանդըն տարապարտ. լըռեն Հռուտուլք խորասուզեալ
Ի քուն և յանապակ. տեսաք մեզէն ըզգողուղի՝
Որ ի կիցըս երկուղեաց, ոչ ինչ հեռի ի ծովէ,
Անցս ի դրանէ անտի տայ. աստ անդ հըրատք ընդհատք, և թուխ
Մինչև յաստեղս ամբառնայ ծուխ. եթէ ներէք ի կիր առնուլ
Յօգուտ ըզբախտ, տեսջիք ընդ հուպ ի պալլանտեան պարիսպս ընդ մեզ
Զոր խընդրէքըն զԵնէաս, լի աւարաւ դարձ արարեալ,
Գործեալ ամբաւ կոտորած. ոչ պատրեսցէ ըզմեզ ուղին,
Տեսեալ է մեր յաճախ ի յորսըս մերձակայ ի ծմակ հովտին
Ըզքաղաքն, և ըզբոլոր գետոյն ընթացս հետազօտեալ։
    Յայնժամ ըզգօնն Աղեթէս ծանրաբեռնեալն ամօք գոչեաց.
Ո՛վ դիք հայրենիք, հովանաւո՛րք միշտ Տրովադայ,
Ոչ ուրեմն ըզտեկրացւոց կամիք ի սպառ ըզկորուստ՝
Ցորչափ ոգի այսպիսի և սիրտ արի տայք մանկըտւոյն։
Ապա զուսովք նոցին փարեալ, անկեալ զաջով երկաքանչիւր,
Թացեալ ըզդէմս և ըզծընօտս ի գերարտօսր, ասէ. Ո՛ արք,
Զո՞ր մըրցանակ արժանաւոր արիութեանըդ ձերում
Գատեցայց. նախ դիք ինքնին, նախ ճիգըն ձեր առաքինի
Հատուսցեն վարձ ձեզ գերազանց, ապա և զայլս յաւելցէ
Երկիւղածն Ենէաս. և առոյգանձնըն Ասկանի
Ոչ արկցէ երբեք ըզձեր այդքան վաստակ ի մոռացօնս։
    Իսկ ես, յաւել Ասկանի, որոյ ի դարձ եւեթ ծնողին
Է փըրկութիւն, յանուն վեհիցըն թերափոց մաղթեմ, Նիսէ,
Եւ տանն Ասարակեայ, և սպիտակին Եստայ երդնում
Ի դաբիրայ, զի որ ինչ բախտ ինձ առաջի կայցէ և յոյս,
Զամենայն ի ձեզ դընեմ. ածէք ըզհայր իմ, կացուցէք
Ըզնա աստ, և ոչ հասցէ ինչ ի դառնալ նորա մեզ չար.
Նըկարակերպ ի քանդակ բաժակ կըրկին տաց արծաթի,

Զորս յաւարի հայր իմ էառ՝ ի նուաճելըն զԱրիսբա.
Եռոտանիս կըրկին, քանքարըս մեծամեծս ոսկւոյ երկուս,
Եւ խառնարան մեծ վաղեմի, զոր սիդոնիկն ետ ինձ Դըդոյ.
Իսկ թէ յաղթել ինձ և տիրել Իտալիոյ և թագ առնուլ
Եւ արկանել ի վիճակ զաւառ և զաւար յաջողեսցի,
Տեսեր իսկ յոր երիվար հեծնոյր Տուրնոս, տեսեր որպէս
Զինուք գընայր ոսկեհուռ, առից ի բաց ի վիճակէ
Զայնոսիկ և ըզվահան և ըզցըցունսըն կարմրերփեանս,
Այժմէն Նիսէ զայնոսիկ քեզ սահմանեալ ի մըրցանակ.
Վեցեակ դարձեալ օրիորդըս քեզ ընտիրս հայր իմ տացէ,
Նոյնքանիս և ըստրուկս հանդերձ իւրեանց զինու զարդու.
Ընդ այսոսիկ և որ ինչ անդք են Լատինեայ թագաւորի:
Եւ ըզքեզ, որ ոչ բազում ինչ խըտրոցաւ յառաջադէմ
Քան զիս ի տիս ընթանաս, ով պատուականըդ պատանի,
Գըրկալիր ընդունիմ կըցորդ ի դէպս իմ ամենայն,
Չեղէց փառաց ինչ ի խընդիր, ոչ ի մարտի, ոչ յանդորրու
Խաղաղութեան առանց քո, վըստահ ի քեզ յիր և ի բան:
Յայնժամ յաւել Եւրիալ. Մի զիս յետնեալ ցուցցէ արփին
Յարիականըս գործոյ, եթէ միայն ինձ յաջողակ
Եւ ոչ ներհակ դիպեսցի բախտ. այլ մի ինչ զայս հայցեմ ի քէն
Քան ըզպարգևս ամենայն. ի պրիամեան ի հին տոհմէ
Է իմ մայր, զոր ոչ երկիր Իլիական, ոչ Ակեստեայ
Պարիսպք ըզհէքն արգելլին ի տարադէմ ընդ իս գալոյ.
Ըզնա արդ, առանց տալոյ հրաժարական ողջոյն նըմա,
Թողում անգէտ՝ որ ինչ ինձ և առաջի կայցէ վըտանգ.
Յաջ քո երդնում և ի գիշերս յայս, ոչ ժուժեմ ընդ մայրենի
Արտասուս. պաղատիմ կարօտելումն ի քէն նըպաստ,
Դու ձեռընտու լեր լըքելոյն. ածից ընդ իս զայս ի քեզ յոյս,
Յանդըգնագոյն արկից սովաւ զանձն ի վըտանգս ամենայն:
Դարդանացիք ի գութ շարժեալ՝ հեղին բազում անդ արտասուս,
Եւ մանաւանդ չըքնաղագեղն Յուլոս յարտոսր հարեալ ընդ տիպ
Ծնողասէրըն գորովոյ, այսպէս յայնժամ բարբառեցաւ.
Խոստանամ զամենայն ըստ արժանեաց գործոյդ մեծի.
Լիցի նա ինձ ի մայր՝ անուամբն եեթ ընդհատ ի Կրեւսայ.
Ոչ ինչ նըւազ անկ են շընորհք մօր որ երկնեաց ուստր այսպիսի,
Որ ինչ և ելք գայցեն ըզհետ արիական քումըդ գործոյ.
Երդուեալ ի գլուխ իմ՝ յոր ցարդ սովոր էր հայր իմ երդնուլ,
Որ ինչ և քեզ ի յաջողել ելից խըրացըդ խոստացայ
Տալ ի դարձիդ, նոյն ծընողի քում և ազգի պահեսցի:
Զայսոսիկ արտասուելով ողբաձայնեալ, հան յազդերէ



Ըզսուսեր իւր ոսկեհուռ, զոր գնոսացւոյն Լիկայոնի
Հրաշակերտեալ, և ի պատեան փըղոսկըրեայ էր ագուցեալ:
Մընեսթ Նիսեայ զառիւծենին տայ թաւագէս, և Ալեթէս
Հաւատարիմն ըզսաղաւարտ իւր ընդ նորայն փոխանորդէ:
Մեկնին զինեալ նոյնհետայն, և զհետ նոցա մինչև ի դրունս
Ուղեկցի աւագանին, և մանկըտւոյն գունդ և ծերոց,
Ուխտ ի շըրթունս. և գեղանին Յուլոս երթայր ի միասին,
Գեր քան ըզտիսն առնացի կրելով յանձին հոգ և խրախոյս,
Եւ պատուիրէր զըրոյց յոլով ածել առ հայր իւր, այլ հողմունք
Առեալ ցընդէին ըզբանս ընդ օդըս վայրապար:
Նոքա մեկնեալ և վաղս ընդ փոսս առեալ դիմեն գիշերախառն
Ի բանակերըդ թըշնամեաց, մահուչս յոգունըս նախ գործեալ.
Տեսանեն համասփիւռ ի դալարւոջ իրանս ի քուն
Եւ յանապակ ընկըղմեալ, կառըս կանգնեալս առ ծովեզերբք,
Զէնս և թակոյս և արս անկեալ խառն ընդ անիւս և ընդ սանձ:
Նախ Իրտակեանըն բարբառի. Եւրիալէ, ժամ է առնել
Ձեռն ի գործ. դէպք ինքնին առնեն հրաւէր ի ձեռնարկ.
Ընդ այսր է ռահ, կաց դու ի պահ աստ ի բացէ դէտ ի թիկանց,
Թէ զուցէ գունդ թըշնամեաց հասցէ ըզհետ մեր յետկուսէ.
Իմ՝ շուրջ եկեալ, ընդ անխափան ապա ածից ըզքեզ ընդ ուղ:
Զայս ասացեալ, դիմեաց սուսերըն ի խրոխտապանծն ի Հռամնէս,
Որ ըստ դիպաց բարձր ի պաստառս ընկողմանեալ՝ կոկորդալիր
Խորդայր ի քուն, նոյն ինքն արքայ, և արքային Տուրնեայ հաճոյ
Հաւահըմայ. այլ ոչ կարաց նա հըմայիւքն հերքել ըզմահ:
Եւ զըրբանեակսըն զերեսին հար առընթեր, որք խառն ի խուռն
Անկեալ դնէին անդ ընդ զէնս. և զզինակիրըն Հըռեմեայ
Եւ զկառավար գըտեալ ընդ ձիս, ըզկառափունս եհատ նոցին
Անկելոց ի կախ. և ըզտեառն իսկ ըզնոցին բարձեալ ըզգլուխ,
Եթող զիրանըն կառափնատ՝ հըռընչելով հեղձամըղձուկ
Յարենէ. արիւն զերկիրն և ըզպաստառս հոսեալ թանայր
Ջերաջերմ. և ըզԼամիր և ըզԼամոս էարկ տապաստ,
Եւ զպատանին հրաշագեղ ըզՍերրանոս, որ զայն գիշեր
Ընդ ժամըս ձիգըս պարապեալ ի գինեըրբուս էր և ի խաղ,
Եւ զըմբեալ Դիոնիսեաւ՝ անկեալ դընէր անդ թալացեալ.
Բարեբախտիկ, եթէ յամեալ երկարագոյն ևս էր ի նոյն,
Եւ գիշերոյ մինչև ցըլոյս տուընջեան ըզխաղ հաւասարեալ:
Ոչ ինչ նըւազ Եւրիալեայն էր կոտորած. բորբոքեալ
Ի զայրոյթ՝ դիմէ ի խուռն անդր աննըշան զօրականին,
Եւ ըզՓադոս ընդ Եբէս և ըզՀռետոս ընդ Աբարիս
Ցեղակարծում հարկանէ. Հռետոս անքուն կայր տեսանէր

Որ ինչ անդ անցք անցանէին, այլ ի յաՀէն էր թագուցեալ
Յետկոյս բատուար խառնարանին. եՀաս սուսն անդր ի վերայ,
Եւ ի յառնելն արկ ըզսուսերն ի սիրտ նորա ցերախակալն,
Ոչ ամփոփեալ զայն չև ընդ մաՀ նորին եղեալ աներկբայ.
Հեղ նա զՀոգին ծիրանեգոյն, խառն ընդ արեան ժայթքեալ գինի:
Ինքն եռանդուն յառաջ վարէ ըզկոտորածըն թաքթաքուր,
Դիմէ յընկերըս Մեսապեայ՝ ուր շիջանէր Հուրըն յետին,
Եւ տեսանէ ըզձիանն արձակ զօրէն սովորական
Ճարակաւոր ընդ արօտն. յայնժամ Նիսոս բարբառի սուղ,
ՍանձաՀարեալ զազաՀակամըս ծայրայեղ կոտորածին,
Եւ ասէ. Դադարեսցուք արդ. տիւն ոսոխ գայ Հասանէ.
Վաստակեցաք շատ, Հորդեցաք ուղի ընդ մէջ թըշնամեաց:
Թողուն բազում առնաղէն արծաթակուռ արուեստակեալ,
Եւ խառնարանըս բազում ընդ տապաստակըս գեղանիս.
Բայց Եւրիալ յաւարի առնու ըզզէնըս Հըռամնեայ
Եւ ըզկամարն ոսկեղէն պալարակապ, զորս ի պարգև
Հըռեմուլեայ տիբուրացւոյ մեծափարթամըն Կեդիկոս
Էր յըղեալ՝ ասպընջական զօգիւ պատուեալ ըզբացակայն.
Սա ի մաՀուն եթող թոռինըն զայնոսիկ, ապա Հռուտուլք
Կալան մարտիւ ի ճակատու. արդ զայնոսիկ Եւրիալեայ
Յափըշտակեալ, ըզկորովի անձամբն ի զուր արկանէ,
Եւ զսաղաւարտըն Մեսապեայ ըզգիւրակիր անէ ի գլուխ
Ի զարդ մանակ գեղազարդ. և ելանեն ի բանակէն,
Դիմեն յանքոյթ ուրեք տեղի: Յայնըմ վայրի այրուձին,
Ի Լաւրենտեայ քաղաքէ յըղեալ կանուխ՝ մինչ կայր դեռ կազմ
Միւս լէգէոնն ի դաշտի, ասպարաւորք առՀասարակ
Երեքարիւր երթային ընդ Վոլսկենտեաւ զօրավարաւ,
Դարձուցանել առ Տուրնոս արքայ զըրոյց. և մերձեցեալ
Ի ճամբարն, Հասեալ ի մուտըս պատնիշաց, աՀա տեսին
Ի բացեայ՝ զի դառնային նոքա յաՀեակ կոյս խոտորեալ,
Եւ սաղաւարտն ի Հակառակ ճառագայթից լուսնի փայլեալ
Ի ստուեր մըռայլ գիշերոյն մատնեաց յանգէտըս զԵւրիալ:
Յայնժամ Վոլսկենտ առ Նիւրսն ասէ. Չէ իսկ և չէ տեսիլդ ունայն,
Եւ գոչէ առ պատանիս. Կացէք ո՛ արք, յո՛վ երթայք,
Ո՞յք էք դուք, և ընդէ՞ր ըսպառազէնք, զի՞նչ աստ խնդրէք:
Նոքա ոչ ինչ կըրկնեալ անդրէն, ճեպին յանտառ անդր ի փախուստ՝
Ապաստանեալ ի գիշեր. աստի անտի Հեծելազունդ
Հըմուտ ուղեացըն կայ ի պաՀ, շըրջափակեալ զելս ամենուստ:
Էր անտառ անտառ մեծ մացառախիտ, և աՀաւոր՝
Նըսեմաստուեր սըղոցեօք, շուրջ թանձրախիտ պատեալ փըշովք,



Դողուղէք էին ի նմա Հետք նըւազունք. ծըմակ ստուոց
Եւ կողոպուտ ծանրաբեռըն խափանեն զԵւրիալ,
Ըստերիւրէ ըզնա երկիւղ յուղիղ Հետոց մոլորել:
Նիսոս յաՀէ թըշնամեաց կանխեալ ի բաց ել անխորՀուրդ,
Ի վայրաց՝ որ կոչեցան ապա Ալբէք յանուն Ալբայ,
Ուր Լատինոս արքայ յայնժամ կառուցանէր բարձր ապաստան.
Եւ զկայ առեալ խընդրէր ընդվայր ըզբարեկամըն բացակայ.
Ո՛վ Հէք Եւրիալէ, ո՞ւր թողի զքեզ, յո՞ երթայց:
Յետըս դառնայ, Հետազօտէ ընդ կեղակարծ ուղին ողջոյն
Մոլորաշէտ անտառին. և թափառեալ ընդ լուռ մացառս,
Լըսէ զըընդիւն ձիոց և շռինդ, և գիմելոց փողաներշան.
Սուղ ինչ ընդ մէջ ապա անցեալ տեսանէ զՀետ աղաղակին
ԶԵւրիալ, և ի վերայ Հասեալ յանկարծ ըզգունդն ողջոյն
Խառնաձայն աղմըկաւ, մինչ նա դաւեալ ի գիշերոյ
Եւ ի վայրաց անտի՝ գործէր ճիգըն բազում ի նանիր:
Զի՞նչ առնել էր, որո՞վ ուժով, որո՞վք զինուք իշխել թափել
Ըզնա ի բաց, դիմագրաւե՞լ ի մէջ խըռան թըշնամեաց,
Եւ կարեվէր ըզգեղեցիկ ի յանձն առնուլ անդէն ըզմաՀ:
Նա կորովի ճօճեալ բազկաւ խոյոյն զաշտէ, և վերակնեալ
Բարձր ի լուսին՝ այսպէս գոչէր. Դու լետովեանըդ դիցուՀի,
Պետ անտառաց, շուք աստեղաց, Հաշտ ի վաստակ մեր ակնարկեա.
Եթէ ի քոյդ Հայրն Իրտակ եդ ի բագին վասն իմ նըւէր,
Եթէ ես ինքն ինչ յաւելի յորսոց իմոց, կամ կախեցի
Ըզկամարացդ ինչ, կամ ի սուրբ խորանդ յեռի ձօն արգադիր,
Տուր ինձ ցըրուել զամբոխդ ի բաց, անդր ընդ այերս ուղղեա զաշտեայս:
Ասաց, և յեց բոլոր անձամբն ի տէգն՝ ի բաց զայն արձակեաց.
Սլանայ աշտեայն, Հերձու զըստուերըս գիշերոյ, և պատաՀեալ
Ի թիկնամէջըս Սուլմոնի՝ որ կայր շըրջեալ, թափ անցանէ
Ի փորատին՝ տիգարնիւըն Հերձելով. անկանի նա
Դի ցուրտ յերկիր, ջերաջերմ ուղխ ի կըրծոցըն ժայթքելով,
Եւ ի Հև երկարաձիգ բաբախեն կուշտքն ի ներքուստ:
Դառնայ որեարըն շուրջ Հայի. նա խրախուսեալ յաջողուածով,
Միւս այլ անդրէն ընդ վերկոյս ունկանըն տէգ սատուցանէ:
ԶաՀի որեարն Հարկանի, զըռնայ երկաթըն շըկաՀմամբ
ՕդաՀերձ, և ընդ քունսըն Տագոսի թափանցանց
Եղկ յուզդարոյն անդըր կառչի. և զայրագին մոլեալ Վոլսկենտ,
Ոչ զարդնընկեցըն գիտելով ձեռն և ոչ ուր ամրանալ,
Հատո, ասէ, զերկոցունցըդ ջերմ արեամբ ըզվրէժ,
Եւ յարձակի յԵւրիալ սուսերամերկ. յայնժամ Նիսոս
Անըզգայեալ առ աՀին, ոչ ևս ի ստուերս անդ կալ անտես,

Ոչ այնքանոյ ժուժել ցաւոցըն կարացեալ, աղաղակէ.
Զիս ո՛ Հռուտուլք, զիս հարէք, աւասիկ կամ յիս դարձուցէք
Ըզզէնըս ձեր, յիս ի հաւակ դաւոյդ, և մի՛ ի պատանիդ՝
Որ ոչ իշխեաց, և ոչ առնել ինչ ձեզ կարաց, վկայեն երկինք
Եւ աստեղք. դա զբարեկամն եւեթ ըզհէք կարի սիրեաց:
Այլ ի խօսել զայս Նիսեայ՝ մխի սուսերն ուժգին ի կող
Եւրիալեայ, հերձանէ զկուրծսըն ձիւնաթոյր, անշունչ յերկիր
Թաւալի Եւրիալ, ընդ անդամսըն գեղանիս
Գընայ արիւն, գըլուխն ի յուսըն խոնարհի, որպէս ծաղիկ
Ծիրանագեղ հատեալ ի խոփ նուաղեալ անկեալ մահացեալ,
Որպէս կակաչ անձրեւաթաց հակեալ ըզգլուխ իւր ծանրակիր:
Դիմէ ի մէջ յայնժամ Նիսոս, խընդրէ զՎոլսկենա ի խըռան
Դէտակն ի նա. համախըմբին շուրջ ըզնովաւ թըշնամիք,
Նեղեն ըզնա ամենուստ. ինքըն ձըգնի ոչ ինչ ընդհատ,
Ճօճէ զնիզակըն շանթաձեւ, և ի գոչել Հռուտուլին՝
Վարսէ նորին զայն ի բերան, նախ քան ըզմահ իւր ըզնա
Մատնեալ ի մահ. ապա զմարմնով անշընչացեալ բարեկամին
Անկեալ կարեվէր, քաղցըր մահուամբ մեռանի:
Երջանիկք երկոքեան. և եթէ տաղք իմ կարասցեն,
Անպուրծ յուշոյ յիշատակաց դարուց ի դարս յաւէրժասջիք,
Ցորչափ զաւակն Ենէական ի ժայռ անշարժ Կապիտոլին
Բնակեսցէ, ցորչափ Հռովմայ հայրն իշխեսցէ ընդ տիեզերս:
Առնուն Հռուտուլք յաղթօղք զաւարն և ըզկապուտ, և ողբալով
Բարձեալ տանին ի բանակետղ անդր ըզդիակնըն Վոլսկենտեայ:
Ոչ ինչ նըւազ ի բանակի անդ էր ողբումն. անկեալ Հռամնէս,
Եւ ի միում գիշերի սպանեալ բազում աւագորեար,
Եւ Սերրանոս և Նումա. խըռնի ամբոխ ըզդիակամբք
Ի տեղւոջ անդ՝ դեռ եւս եղկ կոտորածին այնուիկ նորով,
Եւ զկիսամեռ անկելովք ի գետեղերս անդ ողողեալս
Ի փըրփրախառն արեանէ. և միաբան ըզկողոպուտն
Աւար առեալ ճանաչեն, ըզսաղաւարտըն Մեսապեայ
Բազմափայլ, և զառնազէնս յոլով քըրտամբք թափեալս անդրէն:
Մինչ այն ինչ ի քըրքմագոյն առագաստէն Տիթոնի
Ծաւալէր նորանըշոյլ այգ ի յերկիր, այն ինչ ծագէր
Արփին լուսովն ի տեսիլ ածէր անդրէն ըզհամագոյս,
Զինեալ Տուրնոս ձայն ետ իւրոցըն զինուորել, և զօրապետ
Իւրաքանչիւր զիւրսըն վառեալս պղընձեօք մըղէր ի մարտ
Զայրագնեալս խառնաձայն աղաղակաւ. և բարձր ի ծայր
Նիզակաց ամբարձելոց, ողո՜րմ տեսիլ, ցըցեալ ըզգլուխ
Եւրիալեայ և ըզՆիսեայ, ուժգին գոչմամբ խուժեն ըզհետ:



Յահեկակողմըն պարըսպաց կային Ենեանք կուռ ճակատեալ,
Զի զաջակողմըն պատէր գետ. պահ ունէին ձորոց խորոց,
Եւ տըխուրք յաշտարակաց անտի բարձանց տեսանէին
Ըզկառափունսըն զերկոսին, որք քաջ ծանօթ հիքացն էին,
Ըզբեւեռեալս ի տեսիլ՝ թորթորելով թուխ ապաժոյժ:
Յայնժամ համբաւ արագաթեւ գընայ դուժկան ընդ քաղաքն
Ահաբեկեալ, և յունկըն մօրն Եւրիալեայ գայ հասանէ.
Ցուրտ զոսկերօքըն ընթանայ տառապելոյն, և անկանի
Բարաւն ի բաց ի ձեռանէ, և ըստորին թաւալի.
Ալանայ թըշուառըն փետելով ըզգէս՝ բարձեալ ճիչ կանացի,
Եւ դիմէ խելայեղեալ յառաջապահ գունդս ի պարիսպս
Արշաւասոյր ընդդէմ զօրաց, ընդդէմ զինուց և վտանգաց
Դիմագրաւ, լընու զերկինս ողբովք ձայնէ. Եւրիալէ,
Որպիսի՜ զքեզ տեսանեմ. դու ծերութեան իմում վերջին
Պահեալ հանգիստ՝ լըքեալ թողեր զիս միայնակ, ո՜վ անողորմ,
Ե՞ր ոչ տըւաւ մօրըս հէքի խօսել ընդ քեզ ի նուագ յետին
Մինչեւ դիմեալ քո ի վտանգն օրհասական. եղո՜ւկ զինեւ,
Անկեալ դընիս արդ ի յաւար շանց Լատինաց և գէշ թըռչնոց
Յերկիր օտար, և ոչ մայր քոյին ըզքեզ ածի յուղարկ,
Ոչ զաչըս քո կափուցի, և ոչ լուանալ կարացի
Ըզվէրըս քո, ոչ ծածկել ըզքեզ ձորձով զոր վասըն քո
Ջըտիւ և ըզգիշեր ճեպ ի ճեպոյ հիւսէի
Ոստայնիւ ըզպառաւոյս վըշտակրութիւն բափոփելով:
Արդ յո՞ երթայց, ո՞ր երկիր բարձեալ բերէ արդ ըզնորին
Յօշ յօշ անդամս, և ըզդիակնըն գիշադէշ պատառոտեալ.
Զա՞յդ ինձ, որդեակ իմ, ըզքոյին թողուս նըշխար, ա՞յդր աղագաւ
Ընդ ծով և ընդ ցամաք եկի ըզհետ. ո՜վ Հըռուտուլք,
Թէ է ի ձեզ գութ, հարէք զիս, յիս զամենայն զէնըս ձեր
Տեղացէք, զիս նախ ի սուր սայր երկաթոյ սատակեցէք.
Կամ դու ո՜վ մեծ հայրդ աստուածոց ինձ ողորմեա, և հար ընկեա
Շանթիւք քովք ի տարտարոս ըզգլուխ իմ զայս քեզ դըժպըհի,
Եթէ չիցէ ինձ մարթ այլազգ զըրաւել ըզկեանս իմ դըժընդակ:
Շարժին յողբոց անտի ոգիք, և ընդ բանակն ողջոյն գընայ
Տըխուր հեծութիւն, նուաղի կորով նուաղի խրախոյս.
Յայնժամ Իդէ և Ակտոր ըստ հրամանին Իլիոնեայ
Եւ Ասկանեայ՝ որ արտասուէրըն յոյժ ածէն ըզնա ի տուն,
Ի բազուկս իւրեանց բարձեալ զառիթն ողբոց զօրականին:
Բայց ի հեռուստ ահեղագոչ փող պըղընձի հընչէր կերկեր,
Գայր աղաղակ ըզհետ փողոյն. և արձագանգ տային երկինք:
Ասպարափակ հօվանեաւ պատըսպարեալ ճեպին Վոլսկեանք,

Լնուլ ըզփոսըս ձեռնարկեն և ըզպատնէշըս կործանել.
Այլք մուտս ի ներքըս խընդրեն, ելս ի պարիսպըս սանդըղովք
Ընդ որ ցանցառ էր ճակատն, և ոչ մարդկամբ կուռ պըսակեալ:
Անտի տեւկրեանք տեղան ընդդէմ ազգ ազգ զինուց, և կարծրապինդ
Մըխըրդօք յետս ըզնոսա վանեալ ի բաց ընկըրկեն,
Սովորք ի պաշտ պարըսպաց երկար մարտիւ պատերազմել.
Վէմըս ծանունըս սատակիչըս թաւալեն, բեկանել
Ըզճակատն ամրածածուկ. իսկ Հըռուտուլք ի ներքոյ
Թանձրախիտ հովանւոյն ընդդէմ բնաւից կան արկածից,
Այլ ոչ ի սպառ ժուժկալեն. զի ուր խըռնէր ըստուարագոյն
Գումարտակ, անդըր տեւկրեանք ժայռս անհեդեդըս գըլէին.
Որ ըզՀռուտուլս ընկճեալ՝ քակտէր զասպարափակըն պատըսպար:
Ոչ եւս կայր Արիսիւ ճըգնին նոքա յանդըգնաբար,
Այլ գուն գործեն նետիւք վանել ըզտեւկրացիս ի պատնիշաց.
Այլուր Մեզենտոս ահեղակերպ ճօճէ զսարոյն ետրուրական,
Եւ ծըխամած արկանէ բոց. նուաճող ձիոց այլուր Մեսապ
Աստուածորդին Պոսիդեայ, ըզհողակոյտն հերձեալ պատնէշ,
Խընդրէ սանդուղս առ ի պարիսպս ընդոստ ի վեր ելանել:
Ըզձեզ, Մուսայք, աղաչեմ, և ըզքեզ ով Կալլիոպէ.
Ազդել երգողիս՝ զոր անդ Տուրնոս նախճիրս արեանց,
Քանի՞ մահունըս գործեաց, ո՞ զով ի վիհն արկ ի ստորին,
Ընդ իս զահեղ կարգ մարտին ի լոյս ածել. զի զամենայն
Յիշէք դուք դիցուհիք, և քաջ հըմուտք էք ի պատմել:
Եր աշտարակ ի դէպ վայրի, բարձր ի կամուրջս յաղթ ի տեսիլ,
Զոր ամենայն ճըգամիք Իտալք առնուլ մարտիւ և կործանել
Գուն գործէին. իսկ տրովացիք վէրամարտիկք վէմս ի նոսա
Եւ թանձրախուռն ընդ պատուհանըս խորափորս տեղային նետ.
Տուրնոս նախկին ջահ բոցավառ ձըգեալ ի կող աշտարակին
Էարկ հըրդեհ. որ զայրացեալ հողմով, տիրեալ փայտակերտին,
Ի կիսայրեացս անդր ի դրանդիս բոցածաւալ ճարակեցաւ:
Խռովեալ ի ներքըս տեկրացիք ահաբեկեալք, խընդրեն ի զուր
Փախչել ի բաց. և համախումբ այն ինչ յետկոյս ամփոփէին
Ուր չև ժանտախտն էր ճարակեալ, ահա շինուածըն կործանի,
Դըղըրդին որոտաձայն չորեքծագեան երկնից բեւեռք,
Ընդ անհեդեդըն բեռամբ ընկճի որեարըն կիսամեռ
Յիւրոց զինուցըն վիրաւոր, կարծր ի փայտիցըն հարուածեալ:
Լիկոս միայն և Եղենոր ի բաց խուսեն. երիցագոյն
Եղենոր, զոր էր երկնեալ ի գողացիկ հարսանիս
Լիկիմնեայ նաժըշտի ի Մէոնեան թագաւորէ,
Եւ յարգիլեալ զինուորութիւնն ի Տրովադա էր յըղեալ:



Եղնա մեկնակազէն սուսերամերկ ի պատերազմ,
Եւ ըսպիտակ կրելով ասպար անփառունակ, իբրև ետես
Զանձն ի մէջ բիւրաւորաց շըրջապատեալ զօրաց Տուռնեայ,
Եւ ամրակուռ աստի ճակատ, ճակատ անտի լատինական.
Որպէս գազան շուրջ ի խուռնէ ասպականեաց ի նեղ անկեալ՝
Խիզախէ զայրագին ընդդէմ զինուց յանշուշտըն մահ,
Վազեալ ըզշամփրօք, ոչ ինչ ընդհաւ՞օրհասական
Պատանին ի թըշնամիս՝ ուր թանձրախիտ խըռնէին զէնք՝
Զանձն էարկ. իսկ Լիկոս, արագընթաց յոյժ քան ըզնա,
Ընդ մէջ զինուց և թըշնամեաց անդր ի պարիսպս հասանէ,
Գուն գործէ ըզբարձրաբերձ մահարձանաց բուռն հարկանել,
Ունել զաջոյ ընկերաց. այլ զուգընթաց նըմին Տուռնոս
Հասեալ գուպարայաղթ զինուք ըզհետ, ասէ ի նա.
Զերծանե՞լ յուսայիր յինէն, անմիտ. և ընդ բանին
Բուռն հարեալ ըզնըմանէ՝ մինչ կայր ի կախ ըզպարըսպէն՝
Զըգէ ըզնա, խըլէ ի բաց հանդերձ ըստուար մասամբ որմոյն.
Որպէս յորժամ զինակիրն Արամազդայ բարձրաթըռիչ
Ցափըշտակէ ըզնապաստակ, կամ ըզկարապ բառնայ սպիտակ.
Կամ որպէս գայլ արիւնեան ափշոպէ զգառն ի փարախէ,
Մօրն ըստէպ ըզհետ նորա բառաչելով ի խընդիր:
Դիմեն յայնժամ ամենուստ խրախոյս բարձեալ աղաղակաւ,
Կէսք փոսոց լիր արկանեն, հուր ըզբարձանց հարկանեն այլք.
Իլիոնէ վիմով և ստուար ժայռիւ լերին ըզԼուկետ,
Որ առ դըրամբըն մատուցեալ հըրձիգ առնէր, էարկ տապաստ.
Լիգեր զէմաթիոն, և Ասիլաս ըզՔորինէ,
Մին աջողակ յարդընկէց, միւսն ի ձըգել նետս ի բացէ.
Կենէոս զՕրտիգիոս, և զյաղթականն Օրտիգեայ
Հար սատակեաց անդ Տուռնոս. Տուռնոս զԻտի և ըզԿլոնի
ԸզԴիոքսիպ, ըզՊրոմոլ, ըզՍագարիս, և զԻդաս՝
Որ զառաջեաւ բարձրաբերձ աշտարակացն առնոյր ըզկայ.
Եւ Կապիս ըզՊրիւերնոս՝ որ աշտէիւըն Թեմիլլեայ
Թեթեւակի յառաջագոյն վիրաւորեալ, մինչ անըզգոյշ
Թողեալ ի բաց ըզվահան՝ ձեռամբ ըզվէրսըն յանձանձէր,
Նետ երագաթեւ ըզձեռն ընդ կողըն կարեաց,
Եւ թափանցանց մըխեալ ի ներքըս՝ մահացու ըզնա վիրօք
Հարեալ ի թոքս ի շընչարանս հոգւոյն, արար հեղձամահ:
Կայր Արկենտեայ անդ որդին ի զէն ի զրահ երեւելի,
Արկեալ քղամիդ ասղնէնըկար յիբերական ձանձախարիթ.
Փայլեալ մանուկ գեղեցկադէմ, զոր Արկենտեայ հօրն էր յըղեալ,
Ըզօրնեալն յանտառին Արեայ զգետովըն Սիմեթեաւ,

Ուր պարարտ և հաշտարար կանգնեալ բագին էր Պալիկեայ։
Մեզենտ ի բաց եդեալ ըզգէնս, և զպարսատիկըն շառաչուկ
Երիցս ի հիւ ըզգըլխով պարսատուամըբն պըտուտկեալ
Եւ զջերմ ի քունսըն կըշռակն դիպեցուցեալ գունտ կապարեայ,
Ընդ մէջ ըզպատանւոյն ի հանդիպոյ հերձ ըզկառափն,
Եւ արկ ըզնա գիաթաւալ ի լայնալիր աւազին։
Աստ նախ ասի ձըգեալ Յուլեայ զերագաթև նետ ի մարտի,
Սովոր ցայնվայր ահաբեկ առնել զերէս փախըստականս,
Եւ ըզհուժկուն հարեալ Նուման՝ որ յորջորջէրըն Հըռեմուլ,
Որոյ այն ինչ ըզՏուրնեայ ածեալ էր հարսն ըզքոյր կըրտսեր։
Նա սիգաճեմ անդ ըզպատեհ և զանպատեհս բարբառէր
Առաջի ճակատուն, խըրոխտ ի նորն արքայութիւն,
Որոտալով բարձրաձայն. Ո՞չ ամաչէք ո՛ փռիւգացիք
Կալ միւսանգամ պաշարեալ չըրջապատնէշ, և համարել
Արգել մահու ըզպարիսպ՝ մատնեալք երկիցս ի պարտութիւն.
Ահա որեար քաջ, որ մարտիւ յափըշտակեն ըզհարսանիս.
Ո՞ ի դից, և որպիսի՞ անմըտութիւն վարեաց ըզձեզ
Յիտալիա. չէն աստ ոչ Ատրեայ, ոչ Ոդիսեւ
Ճարտարախօս խաբուսիկ, այլ ազգ ի ծնէ քաջակորով,
Որ ըզորդիս այն ինչ ծընեալս ածեմք ի գետ և յալիս,
Եւ ի խիստ սառամանի պընդակազմեմք ըզնոսա.
Որոց մանկտին մեր պարապէ, և ի յանտառս ասպատակել.
Նըմա զբօսանք ձիավարել է և ձըգել եղջերբ ըզնետ.
Պատանիք մեր սակաւապէտք, տոկունք յակօս և ի նուաճել
Մարտիւ ըզքաղաքս. կըրթի հասակ ամենայն
Ի զէն, շըրջեմք ըզնիզակ՝ զեզնամոլին խըթել զաւակ,
Եւ ոչ յամր ալեւոյթ մեղկէ զոգիս ընկճէ զկորով։
Սաղաւարտիւ ճըմլեմք զալիս, ախորժելի է նորանոր
Բարձեալ բերել միշտ կողոպուտ, քաղցր է մեզ կեալ միշտ աւարաւ։
Ձեզ սիրելի է քըրքմաներկ ձորձ, ծիրանի ձեզ կարմիր,
Ախորժելի է կեալ անգործ, հաճոյ ի պարըս պարապել,
Թեզանաւոր կըրել լոդիկ, և նարօտիւք կապել ըզխոյր,
Ո՛ փռիւգուհիքդ իսկապէս, զի չէք իսկ դուք փռիւգացիք.
Փութայք ելէք ի բարձունըս Դինդիմեայ, ուր կըրկնաձայն
Նըւագ ի սրինգ, ուր թըմբուկ, և գիցամօրն իդական
Բերեկինթեանըն տօսախ, սովորելոցդ առնէ հրաւէր։
Այսոցիկ դըժընդակ երգիծանաց և խրոխտապանծ
Բանից ի լուր պատանին Ասկանիոս ոչ հանդուրժեալ,
Լարեաց ի ձար ըզնետն ընդդէմ, մուտ ընդ աղեղըն բազկօք,
Եւ զկայ առեալ՝ աղերս ուխտիւք առ Արամազդ եարկ այսպէս.



Ամենակալ Արամազդ, ակն ի յանդուգն արկ ի ձեռնարկ,
Ածից ի տաճար քո պատարագս հանդիսիւ
Զըւարակ ըսպիտակ քեզ առ բագնաւըդ կացուցից,
Մօրն ի տիպ, բարձր ի գըլուխ, ոսկիազարդ ճակատու,
Որ վաղ եղջերըք ոգորի, վաղ կըճղակօք հողահանէ։
Լըւաւ Նըմա հայրն որոտաց ի պարզ կուսէ ընդ ահեակ,
Հընչեաց աղեղըն մահաբեր միահաղոյն, նետն ի չըչիւն
Ահագին սահեալ սլացաւ, հարաւ ի գըլուխ Հռեմուլեայ
Թափանց ի խոր իրանունս ընդ սայր սլաքին, գոչեաց Յուլոս.
Ե՛րթ խաղ արա յոխորտ բանիւք ըզզօրութիւն, զայս փռիւգացիք՝
Մատնեալք երկիցս ի պարտութիւն՝ պատասխանի տան Հռուտուլաց։
Յայս վայր Յուլոս. բայց տեկրացիք աղաղակաւ ցընծութեան
Խրախոյս բարձեալ՝ ամբառնան ըզքաջութիւնն յաստեղս ի վեր.
Յայնժամ յանկարծ ի վերուստ վարսաւորին Ապոլոնի
Յաւսոնական անդր ի բանակ և ի քաղաքն ակնարկեալ,
Վերանըստեալ յամպս՝ առ Յուլոս յաղթող՝ այսպէս զայս բարբառի.
Յաւել մանուկդ ի զօրութիւն, աստուածորդիդ և աստուածոց
Հանդերձեալ հայր, ընդ այդ վերելք են ի յաստեղս, ի դէպ իսկ մարտք
Ճակատագրեալք լըռեսցեն ընդ զաւակաւն Ասարակեայ,
Եւ մի՛ նորայդ Տրովադայ լիցի ըզքեզ շուրջ պարագրել։
Եւ ընդ բանին էջ ի բարձանց, հերձեալ զայեր կենդանարար,
Առ Ասկանի՝ ըզծերունւոյն Բուտայ առեալ ըզկերպարան,
Որ Անքիսեայ դարդանացւոյն եղեալ երբեմն էր զինակիր,
Հաւատարիմ սեմոցն ի պահ, և զնա յայնժամ հայրն Ենէաս
Տըւեալ մանկանն էր համհարզ. և զամենայն ինչ ըզծերոյն
Ըզձայն ըզգոյն և զալիս, քաջահընչող զինուքն հանդերձ
Յանձին սարասեալ, այսպէս առ նա յաւել խօսել.
Շատ լիցի քեզ, զաւակդ Ենեայ՝ զի անպատիժ դու ըզՆուման
Արարեր նետահար. զայս առաջին ետ քեզ պարծանս
Մեծն Ապոլոն աննախանձ ընդ հաւասար փառըս զինուց.
Բայց ըզգոյշ այսուհետև լեր ի մարտէ, ով պատանի։
Զայս ասացեալ եարկ յանձնէ ըզկերպարան մահկանացուի,
Եւ ի նուրբ յեղաշըրջեալ այեր՝ անտես եղև յանկարծ։
Ծանեան զաստուածըն զօրավարք դարդանացիք՝ ի հընչիւն
Կապարճիցըն շաչելոյ ի խուսափել նորա ի բաց.
Եւ արգելեալ ի մարտէ ըստ հրամանին Ապոլոնի
Ըզպատանին Ասկանի զվառեալըն յեռանդն արիական,
Ինքեանք զոգի ի բուին կալեալ դառնան յանշուշտ ի վըտանգ։
Աղաղակ ընդ պարիսպն և ընդ մարտկոցս ընթանայ.
Լարեն ըզկարծր աղեղունս, և զփոկակապ ճօճեն աշտեայս.

Ծածկի երկիրն ի նետից, և գոգելոց սաղաւարտից..
Եւ փաչանաց հընչէն կոփիւնք, սաստկանայ մարտ պատերազմին.
Որպէս տոփեն տարափք յերկիր՝ ամպրոպայոյզն յորժամ ծագէ
Այծ ի մըտից, զոր օրինակ տեղան ամպրոպք կարկտաւ ի ծով,
Յորժամ աչեղն Արամազդ հարաւահողմ ածէ մըրրիկ
Անձրևաբեր, և լուծանէ զանդընդախոր ամպս արփայինս:
Պանդար և Բիտիաս որդիք Իդեանն Ալկանորի,
Զորս յանտառին Արամազդայ սընոյց վայրագ բորենի,
Պատանիք հանգէտք մայրեացըն հայրենեաց, հանգէտք լերանց,
Վըստահք ի զէն, բացին ինքնին ըզդրունս որ յանձն էին նոցա
Ի հրամանէ արքային, հրաւիրելով ըզթըշնամին
Ի ներքս ի պարիսպս. ինքեանք ընդ աջ և ընդ ահեակ
Կան առընթեր աշտարակաց ըսպառազէն վառեալ, փայլեալ
Ցըցունազարդ գարգմանակօք ի բարձրաբերձ գագաթունս,
Իբր առ գետով ի գնացըս ջուրց կաղնիք կըրկին եթերաձեմք,
Կամ առ եզեր Երիդանեայ և առ ախորժ Աթեսեաւ,
Ամբառնան ընդ երկին ըզգլուխ իւրեանց սաղարթախիտ,
Ցարաճօճ տատանեալ վըսեմաբերձ գագաթամբք:
Դիմեն հապճեպ Հըռուտուլք ընդ տեսանելն ըզմուտս ազատ,
Տըմար յանդուգն և Կըւերկենտ գեղեցկազէնըն Եկուիկոլ
Եւ Հեմոն պատերազմող. այլ կէսք կապարճըս դարձուցին
Ի գումարել գընդաց, և կէսք անդէն ի սեամս անկան տապաստ:
Ոխերմագոյն յայնժամ զայրոյթ վառի ի սիրտ տրովացւոց.
Համախըմբին գունդ կազմեն, և ճակատու պատերազմի
Խրախուսեն հեռագոյնըս հալածել ըզթըշնամին:
Լուր առ Տուրնոս եհաս, մինչ ինքն այլուր կըռուէր զայրագին
Զի թըշնամիք վերջնոյն այնուիկ կոտորածիւ յանդըգնեալ
Բացեալ անդրէն էին ըզդրունս, եթող ըզմարտն ըսկըսեալ՝
Եւ ահագին սըրտմըտութեամբ դիմեաց ի դուռնըն դարդանեան
Ընդդէմ եղբարց երկոցունց խրոխտացելոց. և նետահար
Տալաստ էարկ նախ զԱնտիփատ՝ որ զանձն յառաջ էր մատուցեալ,
Հարճորդին Սարպեդոնի մեծին ծընեալ ի Թեբուհւոյ:
Թըռեաւ նետն ի չըմենւոյն իտալայնոյ ընդ նուրբ այեր,
Եւ խոր ի կուրծսըն բեւեռեալ՝ ի յախոնդանսըն թափ էանց.
Ժայթքէ փապար թուխ վիրին փըրփրատեսակ ալիս արեան,
Տապի երկաթըն մուխ ի վերս: Ապա զՄերոպ և զԵրիմանթ
Հարեալ բազկաւ և զԱփիդնոս թաւալցըլոր տախտապարէ.
Եւ ըզհրաչեայն Բիտիաս ըզփոքրատողըն զայրագին,
Ոչ նետահար ըզնա, զի չէր մարթ հարկանել ըզնա նետիւ,
Այլ փալարիկ ձըգեալ աշտեայ՝ զոր ոչ կըրկնակ արջառենի



Եւ ոչ ճօշ բարդ ի բարդ ի վէրտ ոսկի զօրէր վանել.
Սահի չկաճմամբ տէգն, և կործան ըզյաղթանդամն արկանէ.
Հեծէ երկիր, և զասպարաւն անկեալ թընդայ բեռն անարդիւ.
Որպէս երբեմն յեւբեական եզերս ի Բայս անկանի
Քարակարկառ թումբ ի ծովու ի սուսար վիմաց կառուցեալ,
Եւ յանկանելն ածեալ աւեր՝ բազմի ամբողջ ինքն ի հուն.
Յայնժամ խռովի ծով ալէկոծ, յառնէ ի վեր թուխ աւազ.
Սարսի Պրոքիտ ի խորոց դըղըրդելով, և Ինարիմ՝
Այն որ սաստիւն Արամազդայ կարծր ի խըշտի անկեալ Տիփեայ:
Ամենազօրն յայնժամ Արէս յաւել խրախոյս և կորով
Ի սիրտըս Լատինաց, տըւեալ մըտրակ սուր ի կուշտ.
Եւ ահ տըխուր ի տեւկրացիս արկ և տագնապ ի փախուստ:
Դիմեն Լատինք ամենուստ ի տալ տեւկրեանց նոցա տեղի,
Եւ աստուածըն զօրութեանց քաջալերէր ըզնոսին:
Իբրև եւես Պանդար զիրան հարազատին անկեալ տապաստ,
Եւ ըզմարտին ելս ի վտանգի, և ուր արկածքըն մըղէին
Ըզտեւկրացիս, ուժով մեծաւ շըրջեալ ըզդուռն ըզծըղխնեօք,
Եւ զլայն թիկունս ի յետկուսէ՝ արկեալ նեցուկ, եթող արտաքս
Ի պարըսպաց զյոգունս յիւրոցն ի սաստկացեալ պատերազմի,
Եւ զկէսս ընդ իւր ի ներքս էառ, տալով և մուտըս դիմելոց,
Ոչ տեսեալ ցնորելոյն զի և զարքայն Հըռուտուլ
Մուծանէր ի քաղաքն ըզյարձակեալն ընդ ամբոխին,
Որպէս վագըր կատաղի ի մէջ անզօր հօտի խաշանց:
Յայնժամ լոյս նորանըշոյլ փայլէր յաչացըն Տուրնոսի,
Հընչէին զէնքն ահաւորք, տատանէին արիւներանգ
Ցըցունքն ի գագաթան, հատանէին փայլատակունք
Հրացայտք ի վահանէն: Ծանեան եռեանք արհաւրօք
Ըզկերպարանըն դըժպըհի և զյաղթանդամն յանկարծ իրան:
Ոստնու հըսկայն Պանդար ի վեր՝ ընդ մահ եղբօրըն զայրացեալ,
Եւ ձայնէ. Ոչ օժիտք են Ամատայ աստ արքունիք,
Ոչ ի պարիսպս հայրենիս ունի զՏուրնոս Արդէա,
Ի բանակի թըշնամեաց շըրջափակեալ կաս անփախուստ:
Նըմա Տուրնոս ձայնէ ընդդէմ ժըպտի ի քիմս անխըռով.
Մատիր թէ է ի քեզ կորով, և աջ ընդ աջ խառնեա ի մարտ,
Տարցիս զըրոյց Պրիամու՝ զի է և աստ իսկ Աքիլլէս:
Ասէ, և բուռըն զօրութեամբ կըշռէ զնիզակ իւր ոստալից,
Ըզկարծրատոր ի կեղև. օդահերձիկ սլանայր աշտեայն,
Բայց սատուրնեանն Հերա զհարուածն ի բաց դարձոյց ընդ օդս ի թիռ,
Եւ մըխեցաւ տէգն ի դուռըն պարըսպացըն տարադէպ:
Իսկ Տուրնոս կըրկնեաց անդրէն. Այլ դու ի սրոյ աստի խմէ,

Զոր կըշռէ աջս այս զօրութեամբ, ոչ ապրեսցիս. զի չէ իսկ չէ
Զինուն և հարուածոյն հեղինակ նոյն: Եւ ընդ բանին
Յեց ի սուսերըն վերամբարձ՝ ընդ աչամէջս իջուցանէ՝,
Եւ ճեղքէ ըզճակատ նորին յերկուս բուռն ի հարուած,
Այտիւքն հանդերձ՝ յոր չև աբրուճքն էին հասեալ ի փըթթիթ:
Հընչէ թընդիւն, և ընդ ծանու բեռամբն երկիր սասանի,
Անկանի անշընչացեալ իրանն ի հող. թաթաւի
Վաղակաւորն ի յուղեղն արիւնախառն, յայսկոյս և յայն
Կախի գըլուխըն զուգովք ի հաւասար հերձեալ մասունս:
Ահիւ խուճապեալ ցըրուին տեկրեանք ի փախուստ.
Եւ ուշ ի կուրծըս թէ անկեալ էր յաղթողին՝ անդէն և անդ
Ըզնիգըս դրանցըն խորտակել, և զնիրս ի ներքըս մուծանել,
Յետին օրն այն և մարտին և տրովական ծագէր ազին.
Այլ զայրոյթ և իղձ անսանձ կոտորածի մըղէ զՏուռնոս
Ըզհետ թըշնամեաց ի հրաբորբոք եռանդեան:
Առաջին ըզՓալարիս էարկ տապաստ, և ըզԳիգէս
Հարեալ յազդերըսն կարեվէր. և զգեղարդունս ի նոցանէ
Յափըշտակեալ եհար վարսեաց փախըստէիցն ի թիկունս.
Ազդէր Հերա դիցուհին կորով ի նա և քաջալեր:
Յաւել ի նոսին և ըզՀալիս զինուորակից,
Եւ զՓեգէոս ընդ վահանըն թափանցանց եհար զինու.
Ապա զանդէտս անցից իրացն՝ որք ի վերուստ ի պարըսպաց
Զայն տային ի պատերազմ, զՀալիոս և զԱլկանդրոս
Եւ ըզՆոյեմ էարկ տապաստ. ապա Լինկեայ՝ որ դայրն ընդդէմ
Եւ կոչ առնէր մարտակցաց՝ յաջմէ կուսէ հողակուտին
Հասեալ ի վերայ, և զմիայնոյն ի մի հարուած
Փայլուն սուսերբ հատեալ ըզգլուխ՝ սաղաւարտին հանդերձ էարկ
Զայն ի բաց. ապա զԱմիկ ըզսատակիչըն գազանաց,
Քան զոր չեկաց ճարտարագոյն ոք ի դեղել ըզսըլաք,
Եւ ի մըխել ըզդէն ի թոյն. և զԿլիտեայ որդին եհար
ԸզԿլիտի, ըզկրետացին ըզբարեկամըն Մուսայից,
ԸզՄուսայիցըն պարակից, ում ըզտաղից և ըզքնարաց
Էին միշտ հոգք ի սըրտի, և յարմարել լարիւք ըզչափ,
Որ ըզձիան միշտ և ըզդէնս արի արանց երգէր և զմարտ:
Ապա ի լուր կոտորածի իւրեանցայոցըն զօրավարք
Տեկրեանք եկեալ ի մի վայր, Մընեսթ և քաջըն Սերեստոս
Ցըրուեալ ըզզօրսըն տեսանեն, մըտեալ ի ներքս ըզթըշնամին,
Եւ գոչէ Մընեսթ. Ո՛ արք, յո՞ խուսափէք, յո՞ դիմէք,
Ո՞ր այլ պարիսպք իցեն ձեր, ո՞ր այլ ամրոց. այր մի փակեալ
Ի պատնէշըս ձեր աստ, քաղաքակիցք իմ, զիա՞րդ



Այդքան նախճիր ի քաղաքիդ գործել կարաց անպատուհաս
Եւ արկանել ի դըժոխս այդքան մանկտի ազատորեար.
Ո՞չ ձեզ ամօթ համարիք, և ո՞չ գըթայք անփոյթք ի հէք
Հայրենիս, ի դիս նախնիս, և ի դիւցազն Ենէաս:
Ի բանից աստի վառեալ, և գունդ կազմեալ կան ամրակուռ.
Յայնժամ Տուռնոս վերջանեալ տակաւ ի յետս ի ճակատէն,
Ամփոփեցաւ ի գետըն կոյս ի կողմըն շուրջ պատեալ յալեաց.
Անդըր մեծաւ աղաղակաւ հասեալ տեկրեանք զայրագին,
Խըռնին համագունդ: Որպէս առիւծ ամեհի
Ի թըշնամեաց զինուց պատեալ, անկեալ ի նեղ՝ և խուճապեալ,
Կատաղի դժնէհայեաց յետըս կասի, այլ ոչ զայրոյթ
Ոչ քաջութիւն ներեն նըմա թիկունս ի բաց դարձուցանել,
Եւ ոչ իշխէ, թէպէտ ցանկայ, դիմագրաւել ընդդէմ զինուց
Եւ որերոյ, ոչ ինչ ընդհատ անկեալ Տուռնոս ի տագնապ,
Յամր ընկըրկի, այլ եռայ ի նմա ցասումըն զայրագին.
Նա աւանիկ դիմեալ երկիցս առիւծաբար ի թըշնամիս,
Յետս ի փախուստ ըզյարձակեալ գունդս ի պարիսպս անդըր վարէ:
Այլ իբրև զօրքն ի բանակէ անտի հասեալ համախըմբին,
Ոչ ևս օգնէ կրոնեանն Հերա անբաւական ընդդէմ նոցին.
Զի Արամազդ զոգայինն յայնժամ յերկնէ յըղեաց զԻրիս,
Ահեղ՝ առ քոյր իւր պատուէր ըսպառնական, թէ ոչ Տուռնոս
Նահանջէր ի տեկրեանցըն բարձրաբերձ պարըսպաց:
Ոչ ևս ըզդէմ ունել զօրէր, անդ պատանին, ոչ ասպարաւ
Եւ ոչ բազկաւ, ընկճեալ ի խիտ շուրջ ի զինուց տեղացելոց.
Սաղաւարտըն խոր թընդայր ըզգագաթամբն անդուլ բաղխեալ,
Հերձոտէին ի վիմաց պղընձակերպքն ամրակուռք.
Ցըցունք ցըրուեալ ի գագաթան, կըմբեայն տեղի տայր հարուածոց:
Յաճախէին ըզգեղարդունս և տրովացիք և Մնեսթ ինքնին
Շանթօրէն. քիրտն ըզբոլոր անձամբն հոսեալ՝ թուխ կըպրային
Իջանէր ուղխ, չէր ի նմա և կար շընչոյ ի տուրևառ,
Եւ զոգեսպառ շարժէր զանդամսըն տաժանեալս ի հև տըկար.
Յայնժամ ընդոստ զանձն ի գետ հոսեալ մըղէ զինուքն հանդերձ.
Ընդունին ծուփք զանկեալն ի գետ անդր ի խարտեաշ, և հեղասահ
Լուացեալ ալեօքն ի վերայ, զուարթ առ իւրսն ըզնա ածէ:

# ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵՍՅ ՄԱՐՈՆԻ

# Ե Ն Է Ա Կ Ա Ն Ի Ն

## ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Արամազդ ժողով գումարէ դից. և 'ի զուր ջանացեալ 'ի հաշտութիւն ածել զՀերա ընդ Աստղկան, զգժտեալսն ընդ միմեանս վասն պատերազմին տրովացւոց ընդ Հռուտուլս, վճռէ չօգնել և ոչ միում յերկաքանչիւր կողմանց, այլ զամենայն 'ի հարկ ճակատագրին ապաստան առնել: Դառնան Հռուտուլք 'ի հարկանել զքաղաքն, և տրովացիք 'ի պաշտպանել զայն: Ենէաս զանգի առեալ զաւուրս ինչ յԵտրուրիա, և գումարեալ անտի զօրս յօգնականութիւն, դարձ առնէ առ իւրսն յաւելուածով երեսուն նաւաց. և 'ի գալն ընդ առաջ լինին նմա որք 'ի նաւաց իւրոց 'ի յաւերժհարսունս այլակերպեալ էին: Ի նոցանէ իրազեկ լեալ վտանգի իւրոցն, նաւէ ընդ այգն զառաջեաւ թշնամեաց, և 'ի ծովեզր անդր զզօրսն հանէ: Հասանեն Հռուտուլք ընդդէմ նոցա, և սաստիկ լեալ անդ պատերազմ, Պալլաս 'ի Տուռնեայ սպանանի: Եւ 'ի խնդրել Ենեայ զվրէժ մահու նորա հարուածով մեծաւ, և 'ի համախըմբել Ասկանեայ ընդ հօրն 'ի յարձակումն, զերծուցանէ Հերա զՏուռնոս 'ի մօտալուտ վտանգէն, երևեցուցեալ նմա զստուերս Ենեայ: Խուսէ 'ի նմանէ Տուռնոս մինչև 'ի նաւ իւր. և խզեալ 'ի Հերայ պարան նաւուն, վարի մրրկաւ 'ի մերձակայ ծովեզերս Արդեայ: Մեզենտեայ հանդերձ որդւովն իւրով Լաւսոսիւ յաջորդեալ զհետ Տուռնեայ 'ի մարտ, սպանանին յԵնեայ:

# ԵՆԷԱԿԱՆ

## ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Հեզօրին Ոլիմպեայ բանան յանժամ արքունիք,
Հայրըն դից և թագաւորըն մահացուաց կոչէ ժողով.
Յաստեղազարդ տաճարին, ուստի զերկիր լըրիւ իւրով
Եւ ըզբանակըն Դարդանեան և զԼատինաց գումարեալ ազգ
Բարձր ի կայիցըն տեսանէր. բազմին ի յարկըն երկրացիկ:
Ինքըն նախ բարբառի. Ընդէ՞ր ով վեհք երկնաբընակք,
Յեղաշըրջեալ յածին ի միտըս ձեր խորհուրդք հակառակք.
Յե՞րբ ընդ իրեարըս պայքարիք՝ ընդդիմամարտ բերեալ կարծիս.
Իմ խոկ էր վաղ արգելեալ Իտալիոյ մի մարտընչել
Ընդ տևկրացիս. առ իմ՞ հերձուածքդ ընդդէմ պատուիրանիս.
Ո՞ր այն երկիւղ ըզսոսա կամ ըզնոսա դըրդէ ի զէն,
Եւ յորդորէ ձայն տալ ի մարտ. զի՞ վաղվաղէք, ոչ յամեսցէ
Դիմեալ ժամանակ՝ զի դըժնեայն Կարքեդոն ծանր ածցէ վտանգ
Հռովմէական դըղեկաց՝ հերձեալ զԱլպիս. յայնժամ հեռի.
Պատերազմել, յայնժամ օրէն լիցի աւեր իրաց ածել.
Դադարեցէք արդ, և հաշտ կռեցէք դաշինս յորդորամիտք:

Սուղ ինչ ցայս վայր Արամազդ. այլ ոչ սակաւ աղերս ընդդէմ
Աստղիկն ոսկեակ արկանէ. Ո՛ հայր, ով դից և մահացուաց
Յաւէրժականդ ապաւէն, զի առ ո՞ այլ դիմել կարեմք.
Տեսանես քանի Հռուտուլք ըստահակեն, որպէս Տուռնոս
Ձիախրոխտ անցեալ ի մէջ, և փըքացեալ յաջող մարտիւ
Շահատակէ. և ոչ պարիսպք ամրափակեալք պատըսպարեն
Ըզտևկրացիս. նա աւանիկ և ի ներքս անդ մըղի մարտ
Ի պատուարըս պարըսպաց, և փոսք արեամբ ողողանին.
Ի բաց անտի կայ Ենէաս անգէտ անցիցն անդ անցելոց.

Մի՛ թէ ի սպառ ոչ՚ներեսցես պաշարելոցըն զերծանել։
Ճըգնի դարձեալ թըշնամին, և վերըստին հասեալ՚ բանակ
Ընդդէմ պարըսպաց նորաձնելոյն Տրովադայ.
Միւսանգամ Տիդիդէս յառնէ ընդդէմ տեկրեանց ոսոխ
Ցետոլականն ի յԱրպեայ. մընան դարձեալ անշուշտ ինձ վէրք,
Զիցեմ անշուշտ դուստըր քոյին զերծ ի զինուց մահկանացուաց։

Եթէ տեկրեանք ինքնահրաման ընդդէմ կամաց քոյոց մըտին
Յիտալիա, լուծցեն վըրէժ, և մի նոցա ձեռըն տացես.
իսկ թէ յոգումըք պատգամօք՝ զորըս վերինք և ըստորինք
Նտուն դէք, ո՞րդ իշխէ յեղաշըրջել ըզքո՞ հրաման,
Եւ որպէս Ճակատագիր նոր իշխեսցէ ոք սահմանել։
Զի՞ է ինձ ըզհըրդեհ նաւատորմին յիշատակել
Յերիքսեան ծովեզեր, զի՞ իսկ զարքայն մըրըրկայոյզ,
Զի՞ զըստահակ հողմս յարուցեալս յԷոլիոյ, զի՞ իսկ զԻրիս
Ամպախաղաց. դըղըրդին արդ և ոգիք ըստորաընակք,
Զի այն եւեթ մասն էից մընայր անփորձ, և Աղեկտով
Ելեալ յանկարծ ի խորոց՝ մոլի՚նդ քաղաքս Իտալիոյ։

Ոչ ի խընդիր արքայութեան գամ. այդ յայնժամ էր յուսալի,
Յորժամ մեզ բախտն էր աջողակ, թող յաղթեսցեն՝ որոց կամիս
Տալ յաղթանակ. եթէ չիք ուրեք երկիր՝ զոր շնորհեսցէ
Տեկրացւոց դըշխոյ քոյին անհաշտելի, յաղերս աձեմ
Ո՛ հայր, զաւերակս այրեցաւերըն Տրովադայ.
Տացի փըրկել ինձ ի զինուց ողջ ըզթոռնեակն իմ Ասկանի,
Թող Ենէաս յածիցի ընդ անծանօթ կոծեալ ալիս
Ցո՛ր վայր և բախտըն վարեսցէ ըզնա, այլ ինձ լիցի օրէն
Պահպանել ըզսա, և զերծ ի ժանտ մարտէն կացուցանել։

Է Ամաթոս ինձ և Պափոս, է Կիթերա բարձրակառոյց,
Եւ իդալեանն օթեւան. կեցցէ նա անդ անփառունակ՝
Ըզզէնս ի բաց ընկեցեալ. տուր, հայր, հրաման, և Կարքեդոն
Ծանու բազկաւ՚նըւաճեսցէ զԱւսոնիա, մի ինչ ընդդէմ
Տիւրական քաղաքանւոյն արկցի կըրճիմն ի նմանէ։
Զի՞նչ շահ զի խոյս ետ ի մարտին ողեռանէ, և ի միջոյ
Արգոլեան հըրդեհին, և զի ընդ ծով լայնածաւալ
Եւ ընդ ցամաք զերծ յայնքաննեաց եղ յարկածից, մինչ դեռ տեկրեանք
ԸզԼատիոն և զՊերգամայս կըրկնակործանըս խընդրեն։
Ո՞չ լաւագոյն էր՚նոցա կալ ի մոխիրըս հայրենեաց,
Յերկիր՝ ուր կայրըն Տրովադա. յիս հայր, դարձո՛ ւաղելեացն
ԸզԲըսանթոս և զՍիմոյիս, և թողացո դարձեալ տեկրեանց
Ընդ արկածըս վերըստին իլիականըս թաւալել։

Ծանրացասումն յայնժամ դըշխոյն խօսի Հերա. Ա՛ռ իմ՛



Բուռն ինձ առնես լուծանել ըզլըռութիւն խոր, և յայտնել
Ըզծածկեալ մորմոք սըրտի. մի՛ թէ ստիպեաց ոք յաստուածոց
ԶԵնէաս, կամ ոք ուրեք ի մարդկանէ ի պատերազմ
Ընդդէմ Լատինեայ թագաւորի յառնել ոսոխ։
Ճակատագրին հրամանաւ, այո, գիմեաց յԻտալիա,
Զառանցանօքըն Կասանդրեայ անդըր վարեալ. այլ ո՞ խրատեաց
Մեկնել՚նըմա ի բանակէն, և մըրըրկաց դիմագրաւել,
Թողուլ ի ձեռըս պատանւոյ զամուրըս իւր և ըզմարտին
Վարչութիւն, ըստիւրեննեանսըն պըղտորել զուխտըս դաշանց,
Եւ ըզհանդարտ խռովել ազինս։ Ո՞ յաստուածոց, և կամ ո՞ր
Զօրութիւն մեր բըռնի մըղեաց ըզնա յայնքան վըտանգ.
Ո՞ւր անդ Հերա, և ո՞ւր Իրիս ամպախաղաց երկնառաք։
Եթէ չիցէ պարտ Իտալաց ըզնորածինըն Տրովադա
Բոցովք պատել, և ոչ Տուրնեայ ի հայրենին իշխել յերկիր,
Տուրնեայ՝ ում հաւ է Պիլումնոս, մայր դիցուհին Վենիլիա,
Է՞ր ծըխամած ջահիւք տեկրեանք գան ի վերայ լատինացւոց՝
Բըռնակալել յերկիր օտար, առնուլ ածել աւար ի բաց,
Պատրել զաներս, և ըզհարսունս՝ յափըշտակել ի գըրկաց,
Բաղկատարածք ի խընդիր խաղաղութեան եկաւորել,
Եւ ի խելըս նաւաց բարձեալ բերել զէնս առ ի մարտ։

Դու զԵնէաս ի ձեռանէ Յունաց կարես զերծուցանել՝
Ամպ ըզնովաւ շուրջ ածեալ և սին այեր ի պատըսպար.
Դու ըզնաւս ի յաւերժհարսունս կարես այլակերպել,
Իսկ մեզ չիցէ՞ օրէն օգնել փոքու իւիք Հռուտուլաց։
Ենէաս անգէտ իւրաց կայ ի բացեայ, թող իսկ կացցէ.
Են քեզ Պափոս, Իդալիոն, և Կիթերա բարձրակառոյց,
Է՞ր ըզքաղաքըն գոռ ի մարտ և ըզգըժնեայ գըրգռես զոգիս.
Մե՞ք ինչ թերեւըս զուն գործեմք ըզխարխարեալըն պետութիւն
Փըռիւգիոյ տապալել, մե՞ք ինչ արդեօք թէ ինքըն նա՝
Որ ըզհէք տըռվացիս ընդ Յոյնս եարկ, որ յարոյց
Ի պատերազմ զԵւրոպէ և զԱսիա, որ ծածկաբար
Եա լուծանել զուխտըս դաշանց. դարդանացին այն շընացող
Յինէ՞ն դըրդեալ առ զըՍպարտա, եւ ինչ ետու՚նըմա զէն,
Ե՞ս տածեցի տըռփանօք ըզպատերազմ. յայնժամ էր պարտ
Երկընչել քեզ ըզքոյոց, այժմ անագան և տարապարտ
Յառնես ի բողոք, և ի՚նանիր շարժես արդ վէճ։

Եւ ի ճառել զայս Հերայ՝ հըծծէին դիք առհասարակ
Երկպառակեալ ի կարծիս. զերդ սօսաւիւն ի յանտառի
Մըրմըռայ ի սկըզբան և ի շըշունջ աղօտաձայն
Գուշակ նաւորդաց ըզմօտալուտ ազդէ մըրրիկ։

*Յայնժամ հայրն ամենակալ, այն որ ընաւից իշխէ իրաց,*
*Սկսաւ խօսել. և ի խօսել նորա՝ լռէ դիցըն տաճար*
*Երկնակառոյց, և սասանեալ դողայ երկիր խոր ի հիմանց.*
*Լռէ եթեր բարձրակամար, ըզկայ առնուն յայնժամ զեփիւռք,*
*Եւ ծով ծայրածաւալ ի հարթարդակ դառնայ ի դաշտ.*
*Լուարուք ըզբանս իմ զայսոսիկ, և սերտ յուշի կալարուք,*
*Քանզի տեւկրեանց ընդ աւսոնեանըս չէ օրէն հաստատել ուխտ,*
*Եւ չեք վիճիցըդ վախճան, որ ինչ արդ բախտ է երկոցունց,*
*Որ ինչ յոյս երկաքանչիւր, ինձ անխըտիր այսուհետև*
*Լիցի Հռուտուլն և տրովացի. թէպէտ բանակն իտալական*
*Ըստ հարկի ճակատագրին շուրջ պաշարեալ, թէպէտ Տրովա*
*Զախողակ ի հըմայս կամ ի վրիպակ անկցի ի չար.*
*Հըռուտուլք իսկ ի հարկէ ճակատագրին մի՛ լիցին զերծք.*
*Իւրաքանչիւր ուրուք ձեռնարկ իւր հատուցէ բաղդ կամ աղէտ,*
*Անաչառ Արամազդ կացցէ արքայ բոլորեցունց.*
*Հորդեսցեն արահետ ճակատագիրք անըստերիւր:*
*Յայնժամ երդուեալ ի ստիւգական ալիս եղբօրն, ի դարափունս*
*Ընդ որըս թուխք ընթանան ուղխք, ի կըպրայինս անդր ի յորձանս,*
*ԶՈլիմպ համօրէն ի սաստ յօնիցըն դողացոյց.*
*Եւ զբաւ բանիցն աստ արարեալ, ի գահոյիցն ոսկեղինաց*
*Յարեաւ Արամազդ, և պար առեալ դիք ըղնովաւ*
*Երկնաբնակք՝ յիւրայինս ածեն ըզնա յարքունիս:*
*Յայնըմ վայրի Հռուտուլք ի դրունըս ճըգնէին շուրջանակի*
*Զօրեարըն կոտորել, պատել բոցովք ըզպարիսպս.*
*Իսկ ենեանցըն լեգէոն կայր ի պատնէշս անդ պաշարեալ*
*Անյոյս անփախուստ. զուր ի մարտկոցըս կան ի պահ*
*Եշկէլէք, պըսակ ցանցառ ըզպատուարօքըն շուրջ ածեալ:*
*Նախամարտիկ կազմեն ճակատ Իկետաւոն և Թիմյետ,*
*Իմբրակեանն Ասիոս, և երկոքին Ասարակեանք,*
*Երիցագոյնըն Տիմբրիս ընդ Կաստորի, աւագք զընդին:*
*Ըզհետ նոցա հարազատք Սարպեդոնի երկաքանչիւր,*
*Եւ Կլարոս և Եմոն ի Լիկիոյ անտի բարձուէ*
*Եկաւորք, և Ակմոն լիրնեսացի՝ ոչ ինչ ընդհատ*
*Ի հօրէ իւրմէ Կլիտեայ և ի Մնեսթեայ եղբօրէ,*
*Յեցեալ բոլոր անձամբ ի գիլ ըստուար՝ գըլէ զայն ի ստոր*
*Ոչ փոքր ինչ մասըն լերին. կէսք արդնընկէց, այլք քարաձիգ,*
*Վերամարտիկք պարըսպաց, ճիգըն գործեն. և կէսք ջահիւք*
*Հըրընկէց, այլք սըլաքս ի լայնալիճըս լարէին:*
*Ինքն ի միջի դարդանիկըն պատանի, արժանապէս*
*Սիրելին Աստղկան, չըքնաղ գըլխովն հոլանի,*



*Փայլեալ իբր ակըն գոհար՝ որ ի խարտեաշ յեռեալ ոսկի*
*Զարդ ըզգըլխով յօրինէ, կամ շուրջ զուլամբ քառամանեակ.*
*Որպէս փըղոսկր ի տօսախի կամ յորիկեան բեւեկնի*
*Ճարտարարուեստ զըրուագեալ՝ լուսատեսիլ արձակէ փայլ:*
*Եւ զըսպիտակ պարանոցաւ նորին անկեալ ըսփիւռս հերաց*
*Շուրջանակի զըսպէ ճապուկ ոսկեղինիկ վարսակալ:*
*Եւ ըզքեզ, ո՛ Իսմարէ եւես յայնժամ գունդ քաջազանց*
*Չի զեղէգն օծանէիր դեղով, զի վէրս արձակէիր*
*Արիդ իմար, ի մէոնեան երկրէ՝ ուր մըշակէ որեար զերկիր*
*Արգաւանդ, և զոր Պակտոլ ոսկի ալեօքն ոռոգանէ:*
*Անդ էր և Մնեսթ, այն՝ զոր փառք իւր կանխակալ ի պարըսպաց*
*ԸզՏուռնոս հալածելոյ գէր ի վերոյ ամբարձին.*
*Եւ Կապիս, յորմէ կոչումն էառ քաղաքըն կամպանեան:*
*Մինչդեռ սոքա ընդ իրեարըս մարտ սաստիկ աստ մըղէին,*
*Անտի ի խոր գիշերի հերձոյր ըզծով գայր Ենէաս.*
*Քանզի մեկնեալ յԵւանդրեայ՝ եկն ի բանակն ետրուրական,*
*Եւ մըտեալ առ արքայն՝ ծանոյց զանուն իւր և զազգ,*
*Որ ինչ խընդրէրն և զոր ածէր, և զի՛ս Մեզենտ զինէր ընդ իւր.*
*Եւ ըզՏուռնեայ ցուցեալ նըմա սիրտ ամեհի, աղերսանօք*
*Ազդ առնէր՝ իբր յեղյեղուկ մահկանացուաց իրաց է բախտ:*
*Վաղ ընդ փոյթ արքայն Տարքոն ըզզօրութիւն իւր ընդ նըմա*
*Ուխտիւ դաշանց գումարեաց, և լիւդականն յայնժամ զըրոհ,*
*Զերծ ի հարկէ ճակատագրին՝ ըստ աստուածոցըն հրամանի*
*Ընդ օտար զօրավարաւն ի նաւատորմ անդըր ել:*
*Ենէականըն խաղայր նաւ յառաջընթաց, փըռիւգայնոց*
*Առիւծուց կճյին ի ցռուկ նորին ամօլք, և ամբառնայր*
*Ի նմա Իդաս, փախըստէիցըն տեւկրացւոց յոյժ սիրելի:*
*Անդ բազմեալ մեծն Ենէաս՝ ըզբազմադէմ ի միտըս իւր*
*Մարտին արկածս յեղյեղէր. և առընթեր կացեալ Պալլաս՝*
*Մերթ ըզթուխ գիշերոյ զըննէր զաստեղս ուղեցոյց,*
*Մերթ ըզվըտանգս ածէր ի յուշ կըրեալս ընդ ծով և ընդ ցամաք:*
*Բացէք ինձ արդ աստուածուհիքըդ զՀելիկոն, տուք ինձ երգել*
*Քանիք ըզհետ Ենեայ յայնժամ ի սահմանաց Ետրուրիոյ*
*Գումարտակք՝ ըզպառաղէն լաստափայտիւք գային ընդ ծով:*
*Նախ Մասիկոս հերձոյր զալիս ի պղընձապատըն Տիգրիս,*
*Գունդ հազարաց ընդ իւր մանկանց, ի կլոսական քաղաքէ*
*Եւ ի Կոսայ եկաւորք, զինեալք ի սլաք, կրելով ի յուս*
*Կապարճ թեթև, և աղեղըն մահահօտ: Գայ զհետ նոցին*
*Ահեղն Աբաս, և գունդ ի նմա ի բոցանիշ առեալ ի զէն,*
*Ապոլոն ոսկեղէն փայլէ ի խելըս նորին.*

Ում պատանիս Պօպղոնէ մայր ետ հըմուտս ի պատերազմ
Վեցհարիւր այր, և հարիւրեակս յաւել երիս կղզեակն Իլուա,
Առատաձեռն ի քաղիբեան բովս անըսպառըս հրահալից:
Երրորդ ըղհետ գայր Ասիլաս, դից և մարդկան կիւսահըմայ,
Որում անսան ընդերք խաշին, ում հնազանդին կըռինչք հաւուց,
Աստեղք երկնաճեմք, և բոցք շանթից նախագուշակք·
Ըղհազարաց նիզակախուռն և ամրակուռ ճակատ արանց
Բարձեալ բերէ, որոց Պիսա ետրուրականըն քաղաք՝
Ներեալ յԱլփեայ՝ հրաման տըւեալ էր զինուորել ընդ Ասիլաւ:
Ըղհետ սոցա չըքնաղագեղըն գայր Աստուր, վառեալ ի զրահ
Երփնագոյն, ձիախրոխտ Աստուր ընդ իւր միաբանեալ
Երեքարիւր այր ի Կերեայ, և ի դաշտաց Մինիոնի,
Համամիտք ամենքին. և որ հասեալ գային այլք
Ի վաղընջուցըն Պիրգայց և ի մըղձկուտըն Գրաւիսկեայ:
Մի և ըղքեզ, զօրավարըդ Լիգուրաց, զանց արարից,
Քաջամարտիկըդ Կինիրա, մի և ըղքեզ ով Կուպաւոն,
Որ սակաւուք գաս արամբք, և կարապոյ յառնեն փետուրք
Ի քում գագաթան, որոյ յանցանք են սէր գրոհիդ,
Որոյ դըրոշմ է պըլակերպըդ կերպարան հայրենի·
Քանզի վիպեն զի մինչ կարապ զողբ սիրելւոյն փայետոնի
Ընդ սաղարթիւք կաղամախեաց երգէր ընդ քերցըն հովանեաւ՝
Ըսփոփելով ըղսէր տըխուր, ալեօրեալ նուրբ ի փետուր՝
Եթող զերկիր, յաստեղս ի վեր նըւագելով դէմ եդեալ:
Գայր և որդին նաւատորմաւ ածեալ ընդ իւր գունդս համաթիւ,
Մըղելով թիակօք ըղԿենտաւրոսըն վիթխարի,
Որ ի վերայ կացեալ ծովու սպառնայր ալեաց ըստուար ժայռիւ,
Ակօսելով զանդընդախորըն ծով երկայն օղնափայտիւ:
Գայր և Ոկնոս որդի ըղձին Մանտեայ տօսկեան երկն ի գետոյ,
Զայն տըւեալ իւրոյ գըղդին ի հայրենեացըն սահմանաց,
Ոկնոս՝ որ ետ քեզ, ով Մանտուա, ըղմայրենին իւր անուն,
Որ ետ պարիսպըս քեզ, Մանտուա, յոգումբք փարթամըդ նախա-
Այլ ոչ բնաւից ի միոջէ յառաջ եկեալ ազգատոհմէ. (հարբք,
Ազգ երրեակ, ընդ մէն միով ազգաւ քառեակ ժողովուրդ,
Ինքըն գըլուխ ժողովրդոց, և զօրութիւն բոլորեցունց,
Ի տոսկեան արենէ ազգախառնեալ առհասարակ:
Անտի Մեզենտ ընդդէմ իւր յարուցանէ հինգհարիւր այր,
Եւ պընակեանըն Մինկիոս ըսքօղարկեալ խաժ եղեգամբք
Ածէ ի ծով ըղնաւսն ի թըշնամի եղենափայտ:
Գընայ Աւլետ ծանրաքեռըն բաղխելով զալիս ձաղկօք
Հարիւրովք. փըրփրեն կոհակք, ալէկոծի ծով վեր ի վայր·



Մըղէ Տրիտոն զայն ամէհի, ահ կոնքեղաւն իւրով արկեալ
Ի ծով կապուտակ. ինքըն կողիւք չափ խորասոյզ,
Դէմք մարդկեղէն թաւարծի, փոր ի վիշապ ձուկն աւարտեալ,
Եւ ընդ կըրծովք խառնագազան հրէշին մըրմռածուփք փըրփրագէզ,
Այքա ընտիր զօրավարք յերիս տասնեակ գային ի նաւս,
Յօգնութիւն Տրովադայ, ըղլոյծն հերձեալ դաշտ պըղընձեաւ:
Վաղ ի յերկնից անդի տըւեալ տիւ, մինչ լուսին բարերար
Ի միջակէտ Ողիմպեայ գիշերագնաց կառօքըն գայր,
Բազմեալ ի խելս ինքըն Ենէաս ղեկավարէր, ինքըն և ուղղէր
Զառագաստ, զի ոչ տային հոգք իրանաց նորա հանգիստ.
Եւ ահա նաւք իւր ի կէս ասպարիզին գան ընդ առաջ
Յաւերժհարսունք, զորս անմահըն Կիւբելեայ դիցուհիս
Կացուցեալ էր ընդ ծով, և ի նաւաց ի հարսունս
Հրամայեալ յեղաշըրջել: Գային ի լիւղ զուգահետք,
Այնք՝ որ յառաջ պըղընձապատք կային զափամբք նաւկընեար:
Ծանեան զարքայն ի հեռուստ, և պար առեալ շուրջանակի,
Ճարտարախօսն ի նոսա Կիմոդոկէ յեց ի յետուստ
Կալաւ աջոմն ըղխելըդ, և ուսովք չափ վերամբարձեալ,
Զախումն ի լոյզ ընդ լուռ ալիս, ասէ ցանդէտն Ենէաս.
Հըսկե՞ս աստուածորդիդ, հըսկեա և թոյլ թող ըղպարանդ.
Եղենափայտք սըրբազանք իդականին եմք գագաթան,
Երբեմըն նաւք եղեալ քոյին, յաւերժհարսունք արդ ծովայինք.
Հաւատադրուժն ըղմեզ Ռուտուլ հըրով և սրով մինչ հալածէր,
Ըզսարիս ակամայ խըզեալ ըղհետ քո ի խընդիր
Եկաք ընդ ծով. զայս Կիւբելէ մայր գըթացեալ ի մեզ՝ շնորհեաց
Կերպարան, տալ ըղմեզ աստուածուհիս՝ կեալ ընդ ալեօք:
Պատանին Ասկանի պատեալ փոսովք և պատուարօք
Ի մէջ ահեղից ի պատերազմ Լատինաց.
Վաղ հեծելազն արկադացի եհաս ընդ քաջ ետրուրացիս
Ի սահմանեալ անդր ի տեղիս: Տուռնեայ խորհուրդ է ի մըտի
Ըզդէմ ունել նոցա զօրօք, զի ի բանակըն մի մըտցեն.
Արի արդ, և ընդ այգուն ծագել՝ հրաման տուր կոչել
Զընկերս ի զէն. առ դու զասպարն անպարտելի զոսկեծիր՝
Զոր քեզ Հըրազօրըն պարգևեաց, և արեգակըն վաղորդեան,
Եթէ ոչ բանք իմ վայրապար քեզ թըւեսցին, ըղՌուտուլաց
Տեսանիցէ շեղջակոյտըս դիականց: Զայս ասացեալ,
Ըզբարձըր խելըս նաւուն ի գնալն ի բաց մըղեաց աջով
Ոչ անհըմուտ արուեստին. սահի երագ նաւն ընդ ալիս
Քան ըզնետ, քան ըզսըլաք, հանդիտարագ մըրըրկի:
Ճեպեն և այլք զընթացս ըղհետ. ապշի անդէտըն տրովացի

Ջաւակն անքինեան, այլ խրախուսէ զնւրս ի հրմայս ։
Յայնժամ հակիրճ էարկ աղերս, ի խորանարդն երկնից յառեալ.
Ո՛վ անմահ ծննողդ դից, բնակեալդ ժիդա, ում սիրելի
Են Դինդիմայք, և քաղաքք աշտարակեայք, ում առիծուց
Ամոլք ի սանձըս լծեալք, դու առաջնորդ լեր մարտիս,
Դու յաջողեա ինձ ըղհըմայս, լեր բարիօքն Փռիւգաց
Ո՛վ դիցուհի ։ Եւ յաղօթելըն զայս ցայս վայր, լուսապայծառ
Հասանէր ակն արեւուն, հալածելով ըզգայդ ի բաց ։
Հրաման իսկոյն ետ իւրոցն ըղհետ դրօշուց դիմել, ի զէն
Խրախուսել կազմք ի մարտ. այն ինչ ապա ըղտեկրացիս
Եւ ըզճամբար իւր յանդիման բարձր ի խելաց անտի ետես,
Ի վեր անդէն աճեկաւն ամբարձ զասպարըն բազմափայլ.
Բարձին տեկրեանք աղաղակ ի պարըսպաց յաստեղս ի վեր.
Յոյս յաւելեալ՝ զըրգռէ զըպայրոյթ, և բըռնալիր դընեն ձիգ.
Որպէս կռընկունք ըստրիմնեանք ընդ սեաւ ամպովք տանըրշանակ
Փախըստեայք ի հարաւոյ, արփիագնացք զուարթ ի կռինչ ։
Մինչ զարմացեալ կային ընդ այն արքայն հռուտուլ և զօրավարք
Աւսոնացիք, տեսանեն շըրջեալ ըզկայմս ի ծավափունս,
Եւ ըզծով բովանդակ պարածածկեալ նաւատորմաւ ։
Վառի զըմբէթ սաղաւարտին, հատանի բոց ի ցըցունից
Գարգմանակին. ժայթքէ հուր ոսկիկըմբեայն շուրջ համասփիւռ.
Որպէս երբեմըն չառագոյն փայլէ վարսամ աղխսարեր
Ի խոնաւուտ գիշերի արիւնըռուշտ. կամ բոցակէզ
Ծագեալ շընիկ, ածէ երաշտ և ախտ ըռկար մահկանացուաց,
Տըխրութիւն չարագուժիւն արկեալ լուսով ի դէմս երկնից ։
Այլ յանդուգն արքայն Տուրնոս ոչ ի յուսոյ լըքաւ այնուիկ.
Գրաւել կամէր ըզծովեզերս, և զեկաւորս ի բաց վանել.
Քաջալերէր ինքնին զօգիս, ինքնին իւրոցըն տայր խրախոյս.
Որ ինչ ուխտիւք խընդրէիք, առ ձեռն է ձեզ արդ կատարել.
Ի ձեռըս ձեր է պատերազմ. յուշ լիցին ձեզ կանայք ձեր արդ
Եւ ընտանիք, յիշեցէք ըզմեծամեծ գործըս ձեր,
Եւ ըզնախնեաց ձերոց ըզփառս. հասպա ի ծով դիմեսցուք մե,
Մինչդեռ հետք առաջինք աղմըկելոցըն դեդևին.
Յանդըգնելոյ օգնէ բախտ ։ Զայս ասացեալ, խորհէր յանձին.
Զոյս ընդ իւր ածել ընդդէմ Ենեայ, և ոյց յանձնել ի պահ
Ըզպարիսպըն պաշարեալս ։ Յայնժամ իջոյց Ենէաս
Բարձր ի խելաց զիւրսն ընդ կամուրջս. յոգունք ընդ ծով հողմախաղաղ
Ի տալ ալեացըն տեղի, խընդրեն ընդոստ ելս ի ծանծաղ,
Եւ կէսք ի թեւըս թիակաց ։ Դէտ ի ծովեզր անդըր Տարքոն,
Ուր ոչ կարծէ զտանել խըրոււտ, ուր ոչ բեկեալ մըռնչեն ալիք,



Այլ ուռուցիկ յորձանօք անալէկոծ ծըփի ծով,
Շըրջէ զառաջըս նոյնհետայն, խրախոյս իւրոցըն տայ, գոչէ.
Հուժկուն՝ արդ թի՛ վարեցէք, ով գունդ ընտրեալ, առէք ածէք
Ըզնաւատորմ, հարէք ցըռկօք հերձէք զերկիրըդ թըշնամի.
Ինքեանք ինքեանց ողնափայտք բացցեն ակօս, ոչ իսկ խնայեմ
Թող բեկցին նաւառաջք՝ յափըշտակեալ գամ մի զցամաք ։
Եւ զուգընթաց բանին ի թի բուռն հարկանեն իւրքն և մըղեն
Ըզփըրփրաճեմ եղէնեայս ի ծովափունըս Լատինաց.
Յենուն ցըռուկք ի ցամաք, ըզկայ առնուն խելք համօրէն
Անվըթարք. այլ ոչ և քոյդ, Տարքոն, զի քոյդ խըրեալ ի հուն
Ցաւազակոյտ ամպարիշտ՝ եկաց ի կախ, և ձիգ ի տեկ
Ընդդէմ ալեաց տատանեալ՝ լուծաւ, ամաց զորեարն ի ծով.
Խափանէին ըզծովածուփս հատորք թիոց և յենարանք
Անկեալք ի լողս, և խոչընդոտըն երրադարձ ձըգեալ կոհակք ։
Եւ ոչ Տուրնոս դանդաղեալ, ածէ զճակատն ողջոյն իսկոյն
Ընդդէմ տեկրացւոց, կայ ըզծովեզերըն ի հանդիպոյ.
Ազդ առնէ փող, և Ենէաս նախայարձակ դիմեալ ի գունդ
Գեղջկաց, և նախաձեռն ինքն արարեալ պատերազմի.
Տապաստ ի Լատինաց ըզքաջ արանցն արկ ըզԹերոն,
Ըզյարձակեալն ի վերայ իւր, վարսեաց ի կող նորա ըզսուր,
Ընդ զըրահն ոսկեվերտ ընդ ասպարաւըն պըղընձեաւ ։
Ապա զԼիկաս եհար զապրեալն յանշընչացեալ մօրն արգանդէ,
Ըզնըւիրեալըն քեզ, Փեբէ, իբր ընդ արկածըս սուսերոյ
Անցեալ ի ծնէ, և զկիսէոս վայրագ՝ որ կայր մերձ առ նըմին՝
Հար ընդ Գիաս անարգիլ, որոց լախտիւ ամբոխ բազում
Էր սատակեալ. ոչ օգնեցին նոցա՝ ոչ զէնք Հերակլեայ,
Ոչ բազուկ կորովի, և ոչ Մելամպ հայրն աջակից
Ալկիդեայ ի ճըգնունս՝ զոր ետ երկիր նըմա ծանունս ։
Եւ ի փարոս ձըգեալ ըզտէգ, մինչ նա անգործ ըսպառնալեօք
Ցոխորտայր, էարկ կըշիռ զայն ի գոչելըն ընդ բերան ։
Եւ դու՝ Կիդոն եղկելի, ի գնալըն քո ըզհետ Կլիտեայ
Քումըդ նորոյ մըտերմի, ում աղուամազք դեռ ըզծնօտիւ
Խարտիշագեղք փըթթէին, աներկեան ընդ սէր նորին
Անփոյթ յայնժամ ըզմանկըտւոյ՝ որ սիրելիք քեզ միշտ էին,
Անկեալ արդեօք էիր և դու ի դարդանեան աջոյն տապաստ,
Թէ ոչ բամեալ գունդ եղբարց եօթանեացուն որդւոց Փորկեայ,
Ընդ առաջ եկեալ Ենեայ ձըգէին նետըս եօթնաթիւ.
Այլ կէսք հարեալ ի սաղաւարտն և ի վահան՝ յետս ի նանիր
Ոստեան, և ըզկէսս առ իրանաւ Ենեայ քերեալս
Ի բաց շեղեաց անմահն Աստղիկ. յայնժամ առէ Ենէաս

Առ մտերիմն իւր Աքատ. Ա՛ռ ինձ ըզզէնս ի տրովական
Դաշտավայրի թացեալս յարիւն հելլենական. զի մի և մի
Յայնցանէ ի Հռուտուլս անկցի վըրէպ յաջըղ իմմէ։
Եւ առեալ ձըգէ գեղարդն ըստուարաստուր. թռանի աշտէն
Թափ անցանէ ընդ ասպարըն Մէօնի պըղընձակերտ,
Ընդ լանջապահն և ընդ լանջ. նըմա եղբայր իւր Ալկանոր
Դիմեալ յօգնութիւն՝ ի վեր զանկեալն ունի աջով,
Սահի աշտեայն՝ զարիւնըռուշտ պահեալ ըզթափ, և կայ ի կախ
Ջուստ բազուկըն կիսամեռ, ներդիւքն ևեթ կից ընդ անրակ։
Յայնժամ ըզտէգն ի վիրաց անտի եղբօրըն Նումիտոր
Յափըշտակեալ, ի նա ինքըն յՆնէաս յարձակեցաւ.
Այլ ոչ թողաւ նըմա մըխել զայն ի դիւցազնըն փոխարէն,
Զազդըր ևեթ Աքատեայ մեծին կարաց երգիծանել։
Յայնըմ վայրի անդր ի Կորաց հասեալ Կլաւսոս, վըստահ յառոյգն
Ի հասակ, կարծր աշտէիւ հար ի բացուստ ըզԴրիոպէս
Ընդ ծնօտիւըն կարեվէր, ըզձայն նորա և զոգի
Խըլեալ համայն ի բարբառելն ընդ կոկորդին վիրաբերան։
Նա ընդ երկիր հարեալ ճակատ, թանձր ընդ բերան ժայթքէ արիւն։
Եւ թրակացիս երիս ի վեհ վոռէական ազգատոհմէ,
Եւ երիս՝ զորս Իդաս և Իսմարա առաքէին
Հայրենիք, այլեայլ օրինակաւ արկ դիտապաստ։
Հասանէ և Հալեսոս ընդ Աւրունկացըն գումարտակ.
Եւ զաւակն հեփեստեան, և որ ի նուոս երիվարի
Քաջահըմուտն էր Մեսապոս. է զի ատոյ, է զի անտի,
Վանեն զիրեար. մարտին ի մուտս Աւսոնիոյ էր ասպարէզ.
Որպէս յորժամ հողմք հակառակք հանդէպք ի շունչ հանդէպք ի թափ
Ելանեն ընդ եթեր լայնածաւալ ի պատերազմ,
Ոչ ինքեանք տան իրերաց տեղի, ոչ ամպք և ոչ ալիք,
Պատերազմըն երկուստեք կայ ընդերկար անպարտելի,
Եւ ամենայն ինչ յամառեալ ըստահակէ. ոչ ինչ ընդհատ
Ճակատըն դարդանեան ընդ Լատինացն հարեալ ճակատ
Մարտընչէին, ոտք ընդ ոտից, և այր ընդ այր, խառնեալք ի կռիւ։
Բայց այլուր, ուր ի յուղխից շուրջանակի թաւալեալ վէմք,
Եւ տապալեալ արմատախիլ թուփք ի յափանց, խափանէին
Զարկադացիս՝ անսովորս ի պատերազմ հետևամարտ,
Տեսեալ Պալլասայ՝ զի փախչէին հալածականք
Ի Տուռնեայ՝ յէջս ի ձիոց ի խափանաց տեղւոյն հարկեալ,
Մերթ աղօթիւ, մերթ ըլրտառուչ վառէր զորեարն ի քաջութիւն,
Յանհընարինս անդ այն ևեթ ճնալով նոցա յոյս, և ասէր.
Զինուորակիցք իմ, յո՞ փախչիք, երդմնեցուցեալ ըզձեզ ի ձեզ,



Եւ յարութիւնըս ձեր, յանուն զօրավարին ձեր Եւանդրի,
Ի յաղթանակըս կանխակալս, ի յոյս՝ որ արդ զարթնու ի յիս,
Ի նախանձ նըմանութեան փառաց մերոցըս հայրենեաց,
Մի յոտըս ձեր վըստահիք. բացէք զինուք ձեզ ճանապարհ
Ընդ մէջ թըշնամեաց՝ ուր թանձրախիտ խըռնի օրեար.
Ի սոյն ըզձեզ և զառաջնորդ ձեր ըզՊալլաս արդ հրաւիրեն
Վեհ հայրենիք. ոչ ոք ի դից բուռն առնէ մեզ, այլ մահացուք
Ի մահացուաց թըշնամեաց ըռնադատիմք. է հաւասար
Եւ ի մեզ արիութիւն և զօրութիւն. փակէ ըզմեզ
Ահա ծով շուրջանակի արգելեալ զալեաց կըրճիմն ահեղ.
Չիք տեղի փախըստեան, ի ծով դիմել թէ ի Տրովա։
Ասաց և գրոհ ետ ընդ մէջ հերձեալ ըզխուռըն թըշնամեաց։
Նախկին նըմա ընդ առաջ Լագոս ըստ խիստ ճակատագրին
Պատահէ, և ի խըլել իւր ծանրաբեռըն գիլ ի ձիգ՝
Նա գեղարդեամբըն ճօճելով հարկանէ զսա ի յողնայարն,
Ուր ընդ իրեար պառակք կողիցն ի թիկնամէջըս համբուրին,
Եւ յետս անդրէն առնու ըզտէգն հասեալ յոսկերան ըզկայ առեալ.
Եւ ոչ Հիսբոն՝ յոր յուսայրըն զօրացաւ խափանել զայն.
Քանզի կանխեաց Պալլասայ՝ հար զանըզգոյշն, որ զայրացեալ
Ընդ անողորմ մահ զինակցին՝ գայր ի վերայ իւր յարձակեր.
Եւ ըզսուսերըն մըխեաց ընդ ուռուցիկ թոքըս նորին։
Դիմէ ապա ի Հելենոս, և յԱնքեմոլ ի վաղընջուց
Հռետեան տոհմէ, որոյ զմօրուին իւրոյ պըղծեալ էր զառագաստ.
Եւ դուք Տիմբեր և Լարիս, որդիք Դաւկեայ համանըմանք,
Ծընողացդ իսկ ձերոց անխըտրելիք, և քաղցրախորժ
Նոցին պատրանք, ի հռուտուլեան դաշտավայրի անկայք տապաստ.
Դըժընդակ սուր ի ձեզ կարաց Պալլաս դընել խըտիր.
Զի զքո, Տիմբրէ, Եւանդրեայն էարկ սուսեր ըզգլուխ ի բաց,
Իսկ քոյդ, Լարիս, ի բաց հատեալ աջ՝ տակաւին զիւրըն խընդրէր,
Եւ կիսամեռ մատունքըդ քո տատանէին զեռ ըզսուսեր։
Զարկադացիս՝ որք ի խրատուց, և ի մեծաց զօրավարին.
Արութեանց վառեալքն էին, զինեաց ամօթ խառն ընդ կըսկիծ
Ընդդէմ թըշնամեաց։ Յայնժամ Պալլաս ըզՀռետէ,
Որ երկձիովքըն խուսափէր, եհար. և այն սոյն ինչ վայրկեան
Մազապուր արար զԻլոս. քանզի յԻլոս էր արձակեալ
Պալլասայ ի հեռուստ ըզկորովին իւր ըզնիզակ,
Եւ Հռետէ՝ մինչ անցանէրն ընդ մէջ հարաւ ի փախըստին
Ի քէն, արանց քաջ Տևթրաս, և յեղբօրէ քումմէ Տիւռեայ,
Եւ կիսամեռ ի կառաց կործան անկեալ թաւալգըլոր,
Եհար գարշապարօք ըզդաշտավայր հռուտուլեան։

Որպէս հովիւ ի շնչել ախորժ հողմոյ յամարայնի
Հուր արկեալ ընդ անտառ, ի ծաւալել արագ արագ
Ընդ լայնալիր վայրն աշխոյժն հեփեստական ճակատուն,
Ինքըն բազմեալ յաղթական՝ ըզյաղթանակ բոցոյն դիտէ.
Ոչ ինչ ընդհատ զինուորակցացըդ զօրութիւնք համախըմբեալ՝
Օգնեցին քեզ, ո՛վ Պալլաս: Բայց Հալեսոս գոռ ի մարտի
Դիմէ ի ճակատ՝ վառեալ ի զէն և ի զրահ,
Եւ սպանանէ ըզԼադոն ըզԴեմոդոկ և ըզՓերէս,
ԶըՍտրիմոնեայ աջն ամբարձեալ ի պարանոց իւր ի հարուած՝
Փայլուն սուսերըն հատանէ, և զԹովասայ հարեալ վիմով
Ըզճակատ՝ ցըրուէ զոսկերս արիւնախառն ուղղովն ի բաց:
Հայրըն գուշակ հանդերձելոց ծածկեալ յանտառս էր ըզՀալես.
Այլ իբրև զաչըն զառամ փակեաց մահուամբ ծերունին
Մատնել ըզնա Եւանդրի ձեռն ըզնովաւ արկին Պարկայք:
Ի նա Պալլաս յարձակեցաւ, մատուցեալ նախ աղօթս այսպէս.
Տուր երկաթոյս՝ զոր ձըգեմ, հայրըդ Տիբեր, յաջողութիւն,
Թափ ի ներքս անցանել ընդ կարծըր կուրծըս Հալեսայ.
Եւ լըսելի լեալ աստուածոյն, մինչ Հալեսոս պատըսպար էր
Զիմաւոն, եւ հէքըն ըզլանջըն անզէն՝ զինուն արկադացւոյ:
Բայց Լաւսոս, այն՝ որ մարտին էր զօրավիգըն մեծագոր,
Չեթող զօրուն վըհատել ընդ մահ քաջին. այլ նախ զԱբաս
Զոտխն ըսպան, որ էր կըրճիմ և յամեցումն ելից մարտին.
Անկաւ մանկտին Արկադացի, անկան Ետրուրք, անկայք և դուք
Տեկրացիքդ, ի զինուցըն Հելլենաց անպարտելիք:
Խըռնին գունդք վերջապահք, և ոչ ներէ ամբոխն ըզզէն
Եւ ոչ ըզձեռըն շարժել. աստի Պալլաս նեղէ ստիպէ,
Անտի Լաւսոս, ոչ ինչ գեղով ոչ ինչ ընդհատ հասակաւ,
Այլ երկոցունց ևըս ժըխտեալ էր բախտ ըզդարձ ի հայրենիս.
Եւ որ իշխէն յՈլիմպ՝ չեթող նոցա ի կռիւ գալ ընդ իրեար,
Զի առաջի կայր նոցա յաւագագոյն ոսոխէ մահ:
Յայնժամ ազդ առնէ Տուրնեայ քոյր իւր անմահ օգնել Լաւսեայ.
Նորա անցեալ թեթև կառօքն ի մէջ խուռնըն ձայնարկէ.
Ժամ է զինուց դուլ առնելոյ, ես ինքն ելից ի մենամարտ
Ընդդէմ Պալլասայ. ինձ միայնում պարտի Պալլաս.
Իցիւ այժմիկ աստ ի զըննին կայր հայր նորա: Եւ ընդ բանին
Տեղի ետուն խըքն ի բաց ի սահմանեալ ասպարիզէն:
Իսկ պատանին յապուշ հարեալ ընդ հրաւուրեանցըն նահանջ,
Եւ ընդ յոխորտ սաստ Տուրնեայ, յառեալ ի նա կայր զարմացմամբ,
Ընդ յաղթանդամ զաչս ընդ իրանն ողջոյն յածեալ դըժնէհայեաց.
Եւ ընդդէմ ըսպառնալեաց բըռնաւորին կըրկնէ այսպէս.



Կամ ի ճոխ աւար ընդ հուպ, կամ գերապանծ մահուամբ գըտայց
Գովելի. առ երկոսին ևըս բախտ կայ հայր իմ պատրաստ.
Թող անդր ի բաց ըզյոխորտանս: Զայս ասացեալ՝ ել յասպարէզ:
Խուժեալ ի սիրտ Արկադացւոց մածեաւ արիւն ցըրտասառոյց.
Ոստեաւ Տուրնոս յերկձիոյն, կազմէր ի գնացըս մերձ մատչել:
Որպէս առիւծ ի տեսանել բարձր ի վայրէ ի դաշտ հեռի
Ըզցուլ պատրաստեալ ի պատերազմ, դիմէ ի նա.
Ոչ ինչ այլազգ յարձակմանըն Տուրնոսի էր կերպարան:
Իբրև ետես ըզնա Պալլաս ի տէգընկէց իւր հասեալ մերձ,
Դիմեաց նախայարձակ ինքն ի կորով անհաւասար,
Յուսով թերևըս բախտին ձեռըն տալոյ յանդըգնութեան,
Զայս օրինակ ընդ աստղն եթեր ի վեր աղերս արկեալ.
Ո՛վ Ալկիդէս, վասն հիւրընկալ սեղանակից սիրոյ ծնողիս,
Օգնել մաղթեմ ինձ ի ձեռնարկս յայս աշագին. տեսցէ Տուրնոս
Կիսամեռ զարիւնաներկըս իւր կապտեա՛լ յինէն ըզզէնս,
Տեսցեն օրհասական աչք իւր յաղթօղ ըզՊալլաս:
Լըւաւ Ալկիդ ըզպաղատանըս պատանւոյն. և հեղձուցեալ
Խոր ի սըրտի ըզհառաչ մեծ, եհեղ արտօսըր տարապարտ:
Յայնժամ Հայրն ողոք բանիւք ասէ ցորդին. Է իսկ և է
Անձնիւր օրհաս, սուղ և անդարձ կենաց ընաւից է ժամանակ.
Առաքինի վաստակոց է յերկարել զանձին համբաւ.
Աստուածորդիք առ բարձրաբերձ Իլիոնովքըն պարըսպօք
Անկան յոգունք, և որդեակն իմ Սարպեդոն ի միասին.
Ընդ հուպ և ըզՏուրնոս ճակատագիր իւր կոչեսցէ,
Ի նըպատակ կենաց իւրոց հասցէ և նա: Զայս ասացեալ
Ի դաշտորայս հըռուտուլեանս ըզհայեցուած իւր շըրջեաց:
Պալլասայ ուժով մեծաւ նախ ըզգեղարդն իւր արձակեալ,
Մերկեաց ի խոր պատենէն ապա զսուսերըն փայլունակ.
Թռանի գեղարդն, հարկանի յուսն՝ ուր ծայրք զրահիցըն կըցորդին,
Եւ թափանցեալ ընդ եզերըս վահանին՝ դոյզն ինչ գործէ
Վէրս ի Տուրնեայն յաղթ իրան. յայնժամ Տուրնոս ճօճեալ ի ձիգ
Ըզկաղնին զինեալ ի սուր տէգ ի ծայրին՝ արկ ի Պալլաս.
Տես, ասէ, թէ է նիզակն իմ քան ըզքոյդ թափանցական:
Անցանէ տէգըն շեշտակի ընդ բարդ ի բարդ կուռս ասպարին,
Ընդ երկաթեայս, ընդ պըղընձիս, ընդ խաւ ի խաւ արջառենիս.
Եւ ընդ ճօշիցն արգելս անցեալ, մըխի ի կուրծսըն լայնալանջ:
Ինքն ընդունայն ի խոցոյն խըլէ զնիզակըն ջերաջերմ,
Ընդ արիւնն համայն ի բաց ընդ նոյն ուղի շունչն ելանէ.
Գըլորի անկեալ ի վէրին, ձայնք ի զինուց անտի հընչեն.
Եւ խածանէ օրհասական ի շունչ յետին զերկիրն ոսոխ

Արիւնըռուշտ տատամմըք. յայնժամ կացեալ մերձ առընթեր,
Այսպէս Տուրնոս բարբառի. Յուշ լիցին ձեզ արկադացիք,
Եւ ածէք Եւանդրի զըրոյց ըզբանս իմ զայսոսիկ.
Դարձուցանեմ ի նա զՊալլաս, որպիսի պարտն էր և արժան.
Շնորհեմ նըմա որ ինչ թաղմանն է սփոփումն, որ ինչ շիրմի.
Մե՛ծ գիւրագնի լիցի նըմա հիւրոյթ Ենեայ: Ասաց, և եդ
Զոտն իւր ահեակ ի դիակն, և զծանրակիրն եբարձ կամար
Դրոշմեալ ոճրաւն ի նմա անգութ կոտորածի մանկըտւոյն
Ի հարսանեացըն գիշերի, և արիւնեալ առագաստին.
Զոր Եւրիտեայ ճարտարի ոսկիակուռ էր քանդակեալ:
Սովին Տուրնոս աւարաւ արդ ճոխացեալ յաղթանակէ.
Ա՜յլ ո՜վ անգէտ միտք մահացուաց հանդերձելոյ ճակատագրին
Եւ կալոյ ի չափու յաջող բախտիւ խրոխտացելոց.
Գայցէ ժամանակ, զի ցանկալի լիցի Տուրնեայ
Փոխանակել մեծագնի՝ թէ չէր երբէք մեղուցեալ
Պալլասայ, և զօրըս զայս և զկողոպուտ նըզովեսցէ:
Բայց ընկերացըն Պալլասայ բարձեալ ըզնա ի վահանի
Կոծով և արտասուօք, ածեն ի բաց խուռն ամբոխիւ:
Ո՛վ որ դառնաս ի սուգ ծնողիդ և ի չուք մեծ, օրս այս նախկին
Էած ըզքեզ ի պատերազմ, սոյն այս ըզքեզ դարձուցանէ.
Սակայն ըստուար թողուս ըզհետ հըռուտուլաց դիակոյտ:
Ոչ զըրոյց ինչ՝ այլ ըստոյգ եհաս դուժկան առ Ենէաս,
Զի մօտալուտ կորուստ իւրոցն ի վերայ կայր, և զի ժամ էր
Հասանելոյ յօգնութիւն փախըստէիցըն տեկրացւոց:
Նա անդէն ճեպ ի ճեպոյ ըզմերձակայս հարեալ սուսերբ,
Զայրագին երաց ուղի լայն ի խըռան անդ երկաթով,
Քեզ Տուրնէ ի խընդիր, սիգացելումդ ի նորն հարուած:
Պալլաս, Եւանդր, և ամենայն ինչ յանդիման աչացըն դայր,
Սեղանըն նախընծայ՝ ուր հիւր երբեմըն բազմեցաւ,
Եւ աջն ի յուխտ տըւեալ դաշին. յայնժամ եառ մանկունըս չորս՝
Ի Սալմոնեայ ծընեալս, և չորս՝ որոց Ուփենտ լեալ էր դայեակ,
Ըստուերաց մեռելոյն մատուցանել ողջակէզ,
Եւ զփայտակոյտ խարուկին թանալ ըզըրոց գերի արեամբ:
Ապա զգեղարդն ոխերիմ ձըգէ ի բաց ի Մագոս,
Եւ ի ցածնուլ նորին երագ՝ թըռչի զգըլխովն աշտէն ճօճուն.
Նա ըզծընգովքըն փարեալ աղաչաւոր հեզոյր աղերս.
Երդմնեցուցեալ ըզքեզ ի ստուերըս հայրենիս և յԱսկանի
Յոյս քո զարգուն. խնայեա յիս, թող զանձն իմ ինձ և հօր իմում.
Է իմ դըղեակ բարձրաբերձ, ծածկեալ ի նմա կան արծաթոյ
Տաղանդք դրօշեալք, և կըշիռք ոսկւոյ անգործք և գործուածոյք.



Ոչ յիս տեւկրեանցդ է յաղթութիւն, մի ոք չածէ ինչ ձեզ վտանգ:
Որում զայս Ենէաս կըրկնեաց ընդդէմ. Կացցեն որդւոց
Քոց արծաթոյ և ոսկւոյ, զոր խօստանաս կըշիռ բազում.
Վաղ իսկ Տուրնոս կանխեալ մահուամբըն Պալլասայ եբարձ ի բաց
Ըզդաշինսըդ մարտի. զայս Անքիսեայ խընդրեն ըստուերք,
Զայս և Ասկանի: Ասաց, և բուռն հարեալ ձախով
Ի սաղաւարտ նորին, մինչ նա հեզոյր աղերս, արկ ըզսուսեր
Ի թեքեալըն պարանոց, ցերախակալ անդըր մըխեաց:
Ոչ ինչ հեռի կայր Եմոնիդ քուրմըն Փեբեայ և Արտեմեայ,
Սըրբազան ժապաւինաւ արտախուրեալ ի ճակատուն,
Լուսափայլ հանդերձիւ և պերճ զրահիւք պարածածկեալ:
Ի նա դիմեաց Ենէաս, և հալածեալ ըզնա ի դաշտ,
Ի սայթաքել նորին եհաս ի վերայ հար ըսպան ըզնա,
Ծածկեալ մեծաւ խաւարաւ: Սերեստ ըզզէնսըն կողոպտեալ
Ըստանձնէ, ախոյեան կանգնել քեզ զայն իշխեցողիդ
Պատերազմաց ո՛ Արէս: Զայն տան անդրէն ի պատերազմ
Ի հեփեստեան տոհմէ Կեկուլ, և եկաւորն ընդ իւր Ումբրով
Ի լերանցըն Մարսից. ընդդէմնոցա եւ զայրագին
Դարդանացին, և եհատ սուսերբ զահեակ ձեռն Անքսուրեայ,
Եւ ի հարուած երկաթոյն եբեկ զոլորտըս վահանին:
Նորա մեծ ինչ էր երգեալ, և զօրութիւն ինչ կարծելով
Ի տաղըս իւր, երկնաչափ գոգցես ի վեր զանձն ամբառնայր,
Ալիս ինքեան խոստանայր և պարագայս յամայր ամաց:
Տարկուիտոս, զոր երկնեալ յաւերժհարսին էր Դրիոպեայ
Ցանտառաբնակըն Փաւնեայ, զայրացելումըն եւ ընդդէմ
Փայլուն զինուք. նա զՏարկուիտեայն շեղեալ նիզակ, արգել նովաւ
Ըզլանջապան և զծանրաբեռն ասպար նորին, և հար ընկեց
Ըզգլուխն ի բաց, մինչ աղաչէր նա ի նանիր. և պատրաստէր
Ասել բազում ինչ ծընողին. և զեղկ կառափըն թաւալեալ
Ոտընհար, զայս յոխերիմ սըրտէ ասաց. Անկիր արդ աստ
Ախոյեանդ ահարկու, մի բարեգութ մայր քո ըզքեզ
Տացէ հողոյ, մի զքո դիցէ դի ի շիրիմ հայրենական.
Թողցիս հաւուց կերչաց ի գէշ, կամ ի յորձանըս ծովավէժ
Բերցիս յալեաց, և լիցին վէրք քո սովելոց կիտից ճարակ:
Ապա եհար զԱնտէոս և ըզԼիկաս, և հալածեաց
Զառաջապահ գունդըս Տուրնեայ. էարկ տապաստ զարին Նումա,
Եւ ըզԿամերտ խարտիշագեղ ըզՎոլսկենտեայ քաջին զաւակ,
Ճոխագունին անդաստանօք յԱւսոնիա, որ թագաւոր
Ի լուռն եկաց Ամիկլա. և օրինակ իմն՝ Էգէոն,
Որում հարիւր էին բազուկք ըստ զըրուցաց, և ձեռք հարիւր,

Եւ բոցաշունչ հարիւր բերանք, յորժամ խլխեաց որոտողին
Արամազդայ շանթիցն ընդդէմ շաչել յոգումբքըն վահանօք
Գոռալ ի մարտ, և սուսերօքըն շըկահել ընդդէմ բազմօք.
Նոյնպէս յաղթօղն Ենէաս ի ջերմանալ անդ սուսերին
Շահատակէր ընդ դաշտն ողջոյն. նա աւանիկ յարձակեցաւ
Ի քառաձիսըն Նիփէի. այլ ի բացուստ այն ինչ տեսին
Զիանն ըզնա՝ զի յարձակէր դայր զայրագին մըռընչելով, —
Խըրտեան ահիւ, և յետս ընդ կրունկըն նահանջեալ ըմպահկելով
Արկին կործան ըզկառավարն, յափըշտակեալ վարեալ ըզկառս
Ի ծովեզերս. յայնըմ վայրի դիմեաց ի մէջ անդըր Լուկագ
Երկձիովք ըսպիտակօք, հանդերձ եղբարբըն Լիգերաւ.
Լիգեր ըզձիսըն վարէր, և ամեհին Լուկագ ըզմերկ
Ճօճէր սուսեր. չըհանդուրժեալ Ենէասայ ընդ այնպիսի
Նոցին եռանդըն մոլեգին, յարձակեցաւ հըսկայաբար
Ի նոսա, բոտուարասուրըն նիզակաւ դիմակալել.
Առ որ Լիգեր. Ոչ ըզձիանն աստ տեսանես Դիոմեդեայ,
Եւ ոչ ըզկառս Աքիլլի, և ըզփռիւգեանսըն դաշտորայս.
Այլ ի տեղւոջ աստ և կենաց քոց և մարտին լիցի զըրաւ։
Այս ի շըրթանցըն Լիգերի թըռեաւ յայնժամ յանդուգըն բան,
Եւ ոչ դիւցազնըն տեւկրեան կըրկնեաց առ նա բան ընդունայն,
Այլ ձըգեաց յոսոխն ըզտէգ. և մինչ Լուկագ դեռ կորացեալ՝
Ըզձիանըն մըտրակէր, և զահեակ ոտն յառաջ ձըգտեալ
Կազմէր ի կռիւ, եանց աշտեայն ընդ բոտորին եզըր փայլուն
Վահանին, և վարանեցաւ ի յահեկեայ երան նորին.
Նա կիսամեռ ի կառաց կործան անկեալ՝ մինչ ընդ երկիր
Թաւալէր, խօսի գըթածն անդ Ենէաս դառըն բանիւք.
Ոչ ի դանդաղ գնացից ձիոցըդ մատնեցան կառք քո, Լուկագ,
Եւ ոչ ըստուերք սինք դարձուցին զայն յերեսաց ախոյենաց,
Այլ դու քեզէն ընդոստ յանուոց՝ թողեր լըքեր ըզլուծն ի բաց։
Ասաց զայս, և զերկձիոցն յափըշտակեաց զերասանակ,
Անկաւ ի նոյն ի կառաց եղբայր նորա հեք և թըշուառ.
Եւ զձեռըս իւր ի վեր առեալ անզէնս՝ հայցէր. Ո՛ տրովացիդ
Երդմնեցուցեալ յարև քո զքեզ և ոյց ի լոյս ածին ըզքեզ,
Խնայեա յիս, թող ինձ ըզշունչ իմ, ողորմեա աղերսարկուիս։
Եւ մինչ աղերս դեռ ևս յոլովս հեղոյր, յաւել Ենէաս.
Ոչ այդպիսի ցարդ խօսէիր, մեռիր և մի մեկնիք եղբայր
Յեղբօրէ։ Եւ զուգընթաց բանին ի սայր սուր սուսերի
Փեռեկեաց զըշտեմարան հոգւոյն ըզկուրծըս Լիգերի։
Մինչ զայսոսիկ զօրավարըն տրովացի ի դաշտի անդ՝
Զայրացեալ զօրէն ուղխի կամ մըրըրկի՝ գործէր մահունս,



Յարձակեցան ի վերջէ ի պատնիշէց անտի ի դուրս
Պատանին Ասկանի, և պաշարեալն ի զուր մանկտի։
Յայնժամ, Դիոս ինքըն նախ առնու խօսել առ Յունոյի.
Ո՛վ քոյր և հարսն իմ սիրելի, իցէ՞ Աստղիկն որպէս կարծես
Զօրավիգըն տեւկրացւոց, և ո՛չ կասկած քո զքեզ խաբէ.
Զիցէ՞ արդեօք նոցա բազուկ քաջակորով ի պատերազմ
Եւ սիրտ ամեհի ի տոկ ընդդէմ վըտանգաց։
Առ որ Հերա ցածութեամբ. Ո՛ հրաշագեղ փեսայդ իմ, հե՛մ
Լընուս դառնութեամբ ըզվըշտահար անձն իմ, որ կայ
Յերկիւղի ի քոյոց այտի տըխուր պատգամաց.
Եթէ և արդ՝ որ ինչ երբեմն էր, և վայել իսկ էր լինել,
Սիրոյ իմոյ զօրութիւն, ոչ ամենազօրըդ ժըխտէիր
Ինձ ըզշընորհ բառնալոյ ըզպատանին Տուռնոս ի բաց
Ի մարտէ, և պահելոյ ողջամբ ծնողի իւրում Դաւնեայ.
Այլ կորիցէ նա արդ, տացէ արեամբ իւրով վըրէժ տեւկրեանց, —
Այն՝ որ յազգէ մերմէ զանուն իւր ընկալեալ, և Պիլումնոս
Նըմա չորրորդ է նախահայր, այն՝ որ յաճախ ի սեամըս քո
Ածէ մատուցանէ առատաձեռըն պատարագ։
Առ նա բարձուն Ողիմպեայ յայնժամ արքայն յաւել հակիրճ.
Թէ յամեցումըն մօտալուտ մահուն խընդրես, և ժամանակ
Օրհասական պատանւոյն, և համարիս թէ իցէ մարթ
Զայդ ինձ այդպէս սահմանել, փա՛րձ փախըստեամբ ըզնա ի բաց,
Ի հասեալ ճակատագրէն զերծո ըզնա. մինչև ցայսվայր
Օրէն է ինձ ներել քեզ. այլ եթէ շնորհ ինչ աւելի
Ընդ աղերսիւքըդ քօղք ծածկի, և համարիս յեղափոխել
Զամենայն, և ըզմարտին ելըս շըրջել, ի զուր յուսաս։
Յայնժամ Հերա արտասուախառն ասէ. Յանկա՛րծ որ ինչ բանիւք
Ծանրանաս, հաճոյ թըւէր քեզ ի սըրտէ շնորհել ինձ,
Եւ այսպէս պատանւոյն յերկարէին կեանք անվըտանգ.
Այլ անմեղին անպարտակիր արդ ի վերայ կայ կորուստ,
Եթէ չիցեմ ելից իրացն ըստուգութեան անգիտակ,
Թող ունայն երկիւղի գըտայց անկեալ ի պատրանս,
Այլ զըսկըսեալըն շըրջեսցես ամենազօրդ ի լաւագոյն։
Զայս ասացեալ էջ ի բարձանց երկնից ամպով շըրջապատեալ,
Ցուցեալ մըրրիկ ընդ այերս, և ի ճակատն իլիական
Ի լաւրենտեանըն ճամբար դիմեաց իսկոյն։ Յայնժամ կազմէ
Նուրբ և անզօր ինչ ըստուեր ի սին ամպոյ աստուածուհին,
Տեսիլ զարմանահրաշ, ի տիպ Ենեայ ի դարդանիկ
Վառեալ ի զէն և ի զարդ, կեղծէ ասպար, ածէ ցըցունս
Ըզդիւցազնըն գագաթամբ, բարբառ նըմա տայ անէակ,

Տայ հնչումն անիմաստ, և գնացս հանգոյն ճեմոցի,
Որպէս ուրուաց յետ մահու վիպեն գընալ ընդ օդս ի թիռ,
Որպէս երազք պատրեն զանկեալ ըզգայութիւնս ի թմբիր։
Զառաջեաւ առաջապահ գընդից պատկերն ի ճեմ զուարթ
Գըրգռէ ի զէն ըզՏուրնոս, ձայն տայ նըմա ի պատերազմ.
Ընդդէմ նորին դիմեալ Տուրնեայ, ձըգէ զգեղարդն ի բացուստ.
Դարձուցանէ նա ըզթիկունս, շըրջէ ըզհետս ի յետս ընդդէմ։
Յայնժամ Տուրնեայ կարծեալ զի խոյս տայր Ենէաս, քաջալերէ
Զաղմուկ սըրտին ի նանիր, ձայնէ առ նա. Ո՛վ Ենէաս,
Յո՞ խուսափես, զի՞ զառագաստըն պայմանեալ ի բաց թողուս։
Ըզխընդրեալն ի քէն ընդ ծով աջս այս տացէ քեզ արդ զերկիր։
Եւ հետամուտ եղեալ ճօճէր փայլակնաձև ըզսուսեր մերկ,
Ոչ իմանայր՝ զի հողմք ընդ օդս ըզբերկրութիւն իւր ցընդէին։
Անդ առ եզեր բարձու ժայռի կազմ և պատրաստ ըստ դիպուածոյ
Կամըրջօք և սանդըղովք արձակելովք կայր լաստափայտ,
Որով արքայն Ոսինիոս էր ժամանեալ ի կլոսայնոց
Սահմանաց. անդր աճապեկ պատկեր Ենեայ փախըստեի
Ապաւինի ի ներքս ի խոր. անդր և Տուրնոս ճեպի ըզհետ
Բարձր ընդ կամուրջն անցեալ ընդոստ. այլ ընդ կոխել նորա ի խելս՝
Խըզէ զպարանըն սատուրնեան դըշխոյն, և գնաւն արձակ մըղէ
Վարէ ի ծով մըրրկայոյզ։ Բայց Ենէաս ձայն տայր ի մարտ
Բացակայեն յիւրմէ Տուրնեայ, և արկանէր դիաթաւալ
Որեար բազում, որ առաջի պատահէին. ոչ ևս յայնժամ
Պատկեր ուրուատիպ խընդրէր ըզխորս, այլ բարձրաթռիչ
Ընդ ամպըս թուխըս խառնէր. իսկ ըզՏուրնոս վարէր մըրրիկ
Ի խոր անդունդըս ծովու. նա զաչըս շուրջ զիւրև ածեալ
Անգէտ իրին և ընդ կեանսըն դըժկամակ, ամբարձ ի վեր
Զերկաքանչիւր ձեռս ի յաստեղս, և զայս բողոք արկանէր.
Ամենակալ Հայր, պարտաւո՞ր զիս եղեռան դատիս մեծի,
Եւ այսպիսի՞ հարկ առնես հատուցանել ինձ պատուհաս.
Ուստի՞ ելի, ո՞ւր վարիմ, ո՞ւր զիս փախուստ և որպիսի՞
Տարեալ արկցէ. լեցի՞ դարձեալ ինձ ըզբանակ իմ տեսանել
Եւ ըզպարիսպըս լաւրենտեանս. և զի՞նչ նոցա պատահեսցէ
Որք ընդ իս ի միասին ըզհետ զինուց իմոց եկին,
Զորըս թողի զամենեսին ի մահ անգութ. ո՛վ ոճիր մեծ,
Հայիմ ցըրուեալս արդ ըզնոսա, և անկելոցըն հեծութիւն
Յունկն իմ ազդի. զի՞նչ արարից, ո՞ր ինձ երկիր բացցի խորին.
Գըթացարուք հողմք ի վերայ իմ, մըտադիւր երկըրպագէ
Ձեզ Տուրնոս. հարէք ըզլաստըս զայս ընդ ժայռ և ընդ պարեխ,
Մըղեցէք ըզսա ի խրուտըս վայրենիս, ուր ոչ հասցեն



Ըզհետ իմ, ոչ Հըռուտուլք, և ոչ համբաւ գիտակից։
Եւ ի խօսելըն զայսոսիկ՝ ի ծուփըս մտք իւր յուզէին,
Զիւրովին արդեօք երթալ, ձըգել զանգութ ի կող սուսեր,
Խելայեղեալ առ վըշտին ընդ այնքան գառըն նախատինս,
Թէ ծովամո՞յն դիմեալ ի լող ի կորափիտըն ծովեզե՞ր
Ի զէնըս տեկրացւոց դիմագրաւել վերըստին.
Երիցըս գուն գործեաց ի փորձ երկաքանչիւր, երիցս Հերա
Դիցամայր ի գութ շարժեալ ընդ պատանին արգել ըզնա։
Սահի յայնժամ ծովահերձ, օգնեն ալիք և հոսանք.
Ի վաղեմին վարեալ բերի ի քաղաք հօր իւրոյ Դաւնեայ։
Յայնըմ վայրի ազդեալ Մեզենտ յԱրամազդայ՝ յառաջ վարէ
Ըզպատերազմըն սաստկութեամբ ընդդէմ տեկրեանց ցընծացելոց.
Համախըմբելին տիւրենականք ընդդէմ միոյն գումարտակք,
Հեռևի ընդդէմ միոյն վառեալք. տեղայ զնովաւ զէն թանձրախիտ։
Նա որպէս ժայռ մեծ ի ծովու՝ որ անսասան ընդդէմ ալեաց
Սըրտմըտութեան և հողմոց ըզսաստ երկնից և ըզծովու
Արհամարհէ, այսպէս զորդին Դոլիքոնեայ ըզՀեբրոս
Տապաստ յերկիր արկ, և ըսպան ըզԼատագոս և զերագոյն
ԸզՊալմոս. ըզԼատագեայ ջախջախեալ ըզդէմս և ըզբերան
Մեծաւ լերին հատորով, իսկ ըզՊալմեայ ըզբարձս ի բաց
Հատեալ, եթող ըզնա անկեալ՝ յամր ընդ երկիր թաւալել,
Եւ ետ Լաւսեայ կըրել յանձին ըզզէն նորին և՞ըզզարդ,
Եւ ըզցըցունըս գագաթան ի գարգմանակ սաղաւարտին։
Հար և զԵւաս փռիւգացի, և ըզՄիմաս ըզհասակ
Եւ ըզհամշարդ Պարիսի, զոր Թեանով հօրն Ամիկեայ
Ի լոյս ածեալ էր ի նըմին իսկ գիշերի՝ յորում դըշխոյն
Դուստըր Կիսեայ, երկն ի ջահէ առեալ ծընեալ էր ըզՊարիս.
Սա ի քաղաք իւր հայրենի լեալ կենազրաւ, իսկ Միմաս
Ի ծովեզերս անդ ի Լաւրենտ յեղակարծում տապաստ անկեալ։
Եւ որպէս կինճ ճարակաւոր ի շամբ՝ զոր լիճըն լաւրենտեան
Եւ Վեսուլ մայրեէտ պատըսպարէր յամաց բազմաց,
Ընդ բարձրաբերձ ապա լերինս ի խածանող շանց հալածեալ,
Եւ անկեալ ի թակարդ՝ կայ մըռընչէ զայրագին.
Քըստմնին պառակքըն թաւատեալք, չիշխէ ստնանել ոք կամ մօտել,
Այլ շամբրօք ի բացուստ և անկասկած գոչմամբք գոռան.
Ինքն աներկիւղ շուրջ հայեցեալ կըրճըտելով զատամունս,
Թօթափէ զնետս ի թիկանց, այսպէս և ոչ ոք յայնցանէ՝
Որոց զայրոյթ իրաւացի էր ընդ Մեզենտ՝ իշխէր դիմել
Սուսերամերկ ի վերայ, այլ բարձրագոչ աղաղակաւ
Եւ հեռաձիգ գեղարդեամբք ընդդէմ նորա գուն գործէին։

Ի Կորիտեայ փախըստական ի վաղեմի քաղաքէ,
Թողեալ Թերի ըզհարսանիս, եկեալ էր անդր Ակրոն Հելլէն.
Իբրև եւես ի հեռուստ ըզնա Մեզենտ՝ զի աղմըկէր
Ըզգումարտակս ի միջի, կարմրացըցուն վառեալ ի գլուխ,
Եւ ըզհարսինըն խօսելոյ արկեալ զանձամբ ըզծիրանի,
Որպէս առիւծ անսըւաղ՝ որ ի սատրիկ սովոյ ըլկեալ՝
Դիմէ յաճախ ի բարձր ի գոմս, և հանդիպեալ նըմա յանկարծ
Այծեամըն թեթև կամ եղջերու բարձրեղջիւր,
Խայտայ բացեալ զըրկորն ահեղ, բաշիւքն ի վեր խըրձացելովք,
Եւ անկեալ ըզնովաւ՝ խանձի յաղիս երէոյն,
Եւ ըզժանիս իւր ժանտաժուտըս թաթաւէ ի սեաւ աւիշ,
Այսպէս Մեզենտ յարձակի սլացեալ ի խուռըն թըշնամեաց.
Հէքըն անդ Ակրոն անկանի. և ի փըշել զոգին՝ հարեալ
Գարշապարօք ըզթուխ երկիր, ներկէ զըեկեալ տէգն ի յարիւն:
Բայց զՈրովդէս փախըստեայ ոչ իւր արժան վարկաւ Մեզենտ
Կոյր վիրօք տիգահար ըսպանանել, այլ դէմ ընդ դէմ
Հըզօր զինուք քան գաւով ել ի ճակատ. և տապալեալ
Ըզնա յերկիր, զոտն ի վերայ եդեալ, յեցեալ ի տիգաբունն,
Ասէ. Ո՛ արք, ահա անկաւ ոչ դուզնաքեայ մասըն մարտին
Հըսկայն Որովդ: Ցայնժամ ընկերքն աղաղակեն միաբարբառ,
Եւ կըցորդեն զուարթ ի նուագ զօրհներգութիւն յաղթողական:
Ինքն ի սպառել շընչոյն՝ ասէ. Յաղթօղդ որ ոք և իցես դու,
Մի ընդ քոյդ յաղթութիւն լիցի խընդալ քեզ ընդ երկար.
Ոչ անվըրէժ թողցեն զիս դիք, հասցէ քեզ նոյն ճակատագիր,
Եւ ընդ հուպ ի սմին վայրի անկցիս և դու դիաթաւալ:
Առ որ ընդ քիմըն ժըպտելով խառն ընդ զայրոյթ կըրկնէ Մեզենտ.
Մեռիր դու արդ, և հայրն աստ դից, և արքայն մահացուաց,
Տեսցէ վասն իմ: Եւ ընդ բանին խըլէ հանէ զտէգն ի մարմնոյն.
Բուռն երկաթի և հանգիստ մահահամբոյր ըռնադատեն
Ի գիշեր յաւերժական զարտեանունսըն փակել:
Անդ Կեդիկոս հար սատակեաց զԱլկաթով, և Սակրատոր
Ըզհիդասպ, Հըռապով ըզՊարթենի և զՈրսէս
Ըզհըզօրըն զօրութեամբ, և Մեսապոս ըզԿլոնի
Եւ զԵրիկետ լիկայոնեան, ըզնա զգետնեալ ձիոյն հանդերձ
Ամեհեաւ, ըզսա հետի ի հետիոտըս մարտուցեալ:
Եւ զԱգիս լիկիացի նախայարձակ ի Մեսապոս
Եհար Վալեր՝ ոչ անման ի հայրենի քաջութենէ.
Սալիոս ըզՏրոնիոս, և Նէալկէս ըզՍալիոս,
Այն որ հըմուտ ի գեղարդն և գիպաղեղն էր ի ձըգել
Ըզըազմավրէպ նետ ի հեռուստ: Վաղ դըժնէին սաստ Արիսի



Հաւասարէր զերկաքանչիւր կողմանց ըզսուգ և ըզմահուանս.
Ոչ այս ոչ այն կողմն ի փախուստ դառնայր, պարտեալք առհասարակ
Եւ յաղթականք, հարկանէին և հարուածեալ լինէին:
Բայց յարքունիս Արամազդայ յուզէին գութք դից ընդ զայրոյթ
Երկաքանչիւր կողմանցն ի զուր, և ընդ այնքան վիշտ մահացուաց.
Աստի Աստղիկն, անտի Հերա դըշխոյն կրոնեան հային ընդդէմ,
Եւ տըժգոյն Տիսիփոնէ մոլի ի մէջ բիւրաւորաց:
Ցայնժամ Մեզենտ դըժնէացեալ զըստուար նիզակ իւր ճօճելով
Ելանէ յասպարէզ, որպէս յորժամ մեծն Որիոն
Ընդ ծովալիճըն Ներեայ ճեմեալ հերձու իւր արահետ,
Ուսովք չափ ընդ ալիս երևելով գէր ի վերոյ.
Եւ յորժամ ըզհինօրեայ բարձր ի լեռնէ բերէ զորնի,
Ցածեալ զերկրաւ և յամպս ըզգլուխ իւր ծըրարեալ, այսպէս Մեզենտ
Ցառաջ մատեաւ ըսպառազէն: Ենեայ տեսեալ ըզնա ի մէջ
Երկայնաձիգ զընդին, կազմէր ընդդէմ նորա դիմել ի կռիւ:
Նա անվեհեր ի քաջասիրտն իւր ակնարկեալ յընդդիմամարտ,
Կայ յաղթանդամ իրանաւ, կըշռէ աչօք որչափ ինչ վայր
Բաւէր ի տէգընկէց, և ասէ. Աջս այս՝ որ սա
Է ինձ աստուած, և նիզակս այս՝ զոր ձըգեմ, օգնեսցեն ինձ.
Ախոյեան յաղթական, քեզ ո՛վ Լաւսէ, ուխտեմ կանգնել
Ի կողոպուտըս դիական յելուզակին ըզգեցուցեալ:
Ասաց և զտէգն արկ ի բացուստ. թըռեաւ երկաթըն շըկահմամբ,
Եւ ընդոստ ի վահանէն շեղեալ՝ եհար ըզքաջն Անթոր
Ի մէջ կողից և ամակըշտին, զԱնթոր զընկերըն Հերակլեայ,
Որ յօգնութիւն Եւանդրի յարգիացւոց անտի եկեալ,
Ըզկայ առեալ էր անդանօր յիտալականըն քաղաքի.
Անկանի հէքն ըզվէրս այլոյ յինքն ընկալեալ, հայի յերկինս
Եւ ի շունչ վախճանին ըզքաղցր ի յուշ ածէ զԱրգոս:
Ցայնժամ ձըգեալ երկիւղածին Ենեայ գեղարդն անց ընդ կըմբեայն
Ամրապատ վահանին, ընդ երրակի թերթս արուրեայս,
Ընդ կուղըս կըտաւիս, և ընդ թիթղունսըն երեքկին
Արջառենիս, գործ ամրակուռ, և ի ստորին կոզմ երանացն
Ըզկայ էառ, ոչ անդրադոյն ըզզօրութիւն իւր ածեալ:
Ի տեսիլ տիւրենացւոյն արեան բերկրեալ Ենէաս,
Եհան ըզսուր յազդերէ, և առ հարեալն ըզդողանի
Մատեաւ զայրագին. ի տեսանելըն զայն Լաւսոս,
Հեծեաց դառնապէս առ գութ ծնողին սիրեցելոյ,
Եւ արտասուք առուաբար ընդ դէմըս իւր իջանէին:
Ոչ լըռեցից աստ, պատանեակդ հըռչակելի, ոչ ըզքեզ,
Ոչ ըզմահուան քո դառն արկած, ոչ ըզվաստակըդ մեծամեծս,

Արիւթեան քո մեծի եթէ յետնորդք հաւատայցեն։
Մինչ նա յետս ընկրկէր հիւանդաքայլ, անզօր ի մարտ,
Ըզգեղարդն ոխերիմ ընդ վահանին բերելով,
Դիմեաց մանուկն ի մէջ զինուց, և ընդ սուսերըն Ենեայ մըտեալ,
Յիջուցանել նորա ըզձեռն ի հարկանել ըզՄեզենտ,
Յամեցոյց զահն և արգել. անդըր մեծաւ աղաղակաւ
Դիմեն ընկերքն, և պաշտպանեալ հայրն ապաւէն որդւոյն ապրի։
Զէնս արձակեն, ի հեռուստ նեղեն նետիւք ըզթըշնամին.
Խուճապի Ենէաս, ընդ վահանաւն ամփոփի։
Որպէս մինչ ամպք տեղան կարկուտ, խուսեն մըշակք յանդաստանաց,
Խուսէ հողագործ, ծածկի յամրի ուղևոր,
Կամ յանձրևելն՝ ընդ քըւաւ բարձու ժայռի կամ առ թըմբով
Պատըսպարին, առ ի փութալ ի դարձ արփւոյն յարդել ըզտիւ,
Այսպէս Ենէաս ի տարափոյ զինուց պատեալ,
Բերէ զամպրոպ պատերազմին մինչև անցեն դուլ որոտմունք.
Սակայն սաստէ անդադար ընդդէմ Լաւսեայ և ըսպառնայ.
Օրհասականըդ յո՞ դիմես, զի՞ քան ըզկար քո խիզախես.
Պատրէ յանդուգն ըզքեզ գութ։ Սակայն Լաւսոս ոչ ինչ ընդհատ
Խայտայ յանդուգն առ խընդիր. դըժնէագոյն զայրոյթ
Դարդանացւոյ զօրավարին, և ըզԼաւսեայ մանեն Պարկայք
Ըզթել յետին. ըզծայրասուր նիզակն յայնժամ Ենէաս
Ի մէջըս պատանւոյն ցըւիգաբուն անդըր մըխէ։
Տեղն ընդ ասպարն էանց թափանց, անց ընդ թեթև ճօչ ամեհւոյն,
Եւ ընդ նըրբենակ՝ զոր մօրն անկեալ էր ի ճապուկ ոսկեթել,
Ծոց լիր յարիւն թաթաւեալ, շունչն ըզմարմին լըքեալ տըխուր,
Էջ ընդ այերս առ ուրուս։ Բայց Անքիսեանն ի տեսանել
Ըզկերպարան մեռելոյն զարմանահրաշ այլագունեալ,
Յոգւոց եհան ողորմագին, աջ կարկառեաց, և հայրասէր
Գըթոյն գրաւեալ միտքն ի պատկեր, ասէ. Ո՛վ հէք դու պատանի,
Զի՞նչ քեզ գըթածն Ենէաս ընդ պարծանացըդ փոխարէն
Զի՞նչ այդպիսումըդ քաջութեան կարիցէ տալ արժանաւոր.
Քեզ ըզզէնըս քո թողում, որովք հըրճուեալ ցարդ խայտայիր.
Դարձուցանեմ ըզքեզ ի ստուերս և ի շիրիմըս հայրենիս,
Եթէ իցէ քեզ փոյթ ընդ այդ. սակայն այսուիկ հէքդ ընդ ողորմ
Մահ քո սփոփեաց, զի ի բազկէ մեծին Ենեայ դու անկանիս։
Ճեպէ զընկերսն ի վեր առնուլ զարեամբ դիակնըն շաղախեալ,
Եւ չուք վարսիցն ըստ օրինի յարդարելոց ապականեալ։
Բայց հայրն յայնժամ լուանայր ըզվէրըս իւր յալիս Տիբերի,
Եւ ըզմարմինըն դարմանէր, յեցեալ ի կոճըղ մի ծառոյ.
Սաղաւարտըն պըղընձի կախեալ կայր անդ ի բացէ,



Եւ ընդ արոտն անկեալ դնէին զէնք և զըրահք ծանրաբեռնինք.
Կայր ըզնովաւ մանկտի ընտիր, ինքըն տըկար հեծեծելով
Ի վեր ունէր ըզպարանոցն՝ արկեալ զերկայն ընդ կուրծս ի վայր
Ըզմօրուսն անյարդար, խընդրէր բազում ինչ ըզԼաւսեայ,
Յըղէր ըստէպ կոչել ըզնա, և ըզտըխուր ծնողին պատուէրս
Ածել առ նա։ Բայց ըզդիակնըն Լաւսոսի յայնժամ բարձեալ
Զինուորակիցքըն բերէին արտասուալիցք ի վահանի,
Ըզմեծն ի մեծ հարուածոյն յաղթահարեալ. զողբոցըն ձայն
Ծանեան չարեաց նախագուշակք միտքն հայրենի ի հեռուստ.
Զալիսն ի գարշ զազրեալ փոշի, և զերկոսին ձեռս ընդ երկին
Տարածեալ, և զդիակամբ որդւոյն զեղեալ աշխարէր.
Ընդէր կենաց զիս տենչ այսքան կալաւ, որդեակ իմ, զի տեսից
Մատնեալ ընդ իմ՝ զոր ծընայն՝ ի թըշնամի աջոյն ի մահ.
Ընդէ՞ր վիրօք քովք այդոքիւք կեանքս այս ինձ հօր քում պահեցաւ.
Դառնանայ այժմիկ հեքիս աքսոր, այժմիկ հարկանիմ
Կարեվէր. ես ըզհամբաւ քո մեղանօքս աղարտեցի,
Ես ինքն, որդեակ իմ, ընկեցեալ առ զօշաքաղ կեղեքմանց
Ի հայրենեացըս գահոյից, և կորուսեալ ըզգաւազան.
Պարտ էր պատիժըս լուծանել ինձ հայրենեաց, և զմեղապարտ
Անձն իմ մատնել ատելութեան ժողովրդոց իմոց ի վրէժ,
Կըրել մահուամբ ազգի ազգի. այլ կեամ ես արդ, չև ես ըզլոյս
Ի բաց թողեալ և ըզմարդիկ, սակայն թողից։ Եւ ընդ բանին
Յոտըն կացեալ ի խոց ազդերս, թէպէտ հաստոյք դանդաղէին
Ըզնա վէրք, ոչ ինչ լըքեալ՝ ածել ըզձին իւր հրամայէ,
Այն որ զարդ և զօրավիգն էր իւր, ըզձին՝ որով յաղթօղ
Միշտ ի մարտէ դառնայր, և զայս առ տըրտմակից իւր բարբառի.
Ո՛ Հռեբէ, եթէ իցէ երկարատև ինչ մահացուաց,
Կեցաք երկար. արդ կամ յաղթօղ այսօր ըզգլուխ Ենեայ բերցես
Եւ զկողոպուտ արիւնաներկ, խընդրեալ ընդ իս ըզվրէժ Լաւսեայ,
Կամ եթէ ոչ բացցէ կորով ինձ ճանապարհ, անկցիս ընդ իս.
Զի ոչ արդեօք ամեհիդ զայլոյ յանձին կալցիս հրաման,
Կըրել ըզգասատ տէկրական։ Ասաց և ել ի նուա ձիոյն
Ծանօթըն վերելեակ, ի սայրասուր վառեալ ի տէգ
Յաջ և յահեակ, պըղընձի փայլեալ ի գլուխ իւր սաղաւարտ,
Յըցունազարդ ըզգագաթամբն ի թաւ բաշից գարգմանակ։
Այսպէս Մեզենտ ի ճակատ դիմեալ գընայր երագամէտ.
Եռայր ի խորըս սըրտին ամօթ սաստիկ, յանդըգնութիւն
Խառն ընդ սուգ, խրախոյս՝ անձինըն քաջութեան գիտակից,
Եւ սէր յուզեալ կատաղանօք. ձայն ետ երիցս Ենէասայ
Գոչմամբ մեծաւ. և Ենէաս ծանեաւ ըզնա, և զուարթ ըզգիս

Կարդացեալ. Յանկարծ, աւէ, Հայրն աստուածոց Ապոլոն
Տայր զի գայիր ընդ իս ի կռիւ: Եւ զայս ևեթ ասացեալ,
Ըսպառնալից աշտէիւն ել ընդառաջ: Իսկ նա յաւել.
Բարձեալ զորդեակն իմ յինէն, ո՞հ արկանես ինձ ո՛ անգութ.
Ոչ երկընչիմ ի մահուանէ, թո՛ղ անդր ի բաց, և ոչ ի դիս
Արդ խնայեմ. ի մեռանել գամ, և բերեմ զայս քեզ ի նուէր:
Ասաց և զուէգն յոսոխն էարկ, միւս ևս ապա, և միւս ըղհետ
Արձակեաց, ճախր ընդարձակ առեալ ի բաց. այլ չետ տեղի
Ոսկիկըմբեայն. երիցս ոսոխն անդ ըղնովաւ ձիավարեալ
Ընդ ահեակ՝ տեղայր ի նա նետ թանձրախիտ, երիցս ընդ իւր
Դիւցազնըն տեկրացի ըղմըխնելոցըն սըլաքաց
Ի պըղընձի ասպարին զանտառըն մեծ շուրջ պարբերէր:
Ոչ ևս համբեր նա յամել, խըլել ըղնետըս տաղտկանայր.
Եւ ի խուճապ տագնապի անհաւասար պատերազմին
Յուզեալ ի ծուփըս խորհըրդոց, յետոյ ապա յարձակեցաւ,
Եւ ի մարտիկ ձիոյն ի քունսըն խորափիտ արկ ըղնիզակ.
Ի յետըս կոյս ուղղաբերձ քառասըմբակըն խոյացեալ,
Դափր ընդ այերս հարկանէ, և ընդ նըմին համակործան
Անկեալ գըլխիվայր, ապազինաւն ընկճէ ըզնա:
Դըղըրդեն աղաղակաւ զերկին լատինք և տեկրացիք.
Դիմէ Ենէաս սուսերամերկ, աղաղակէ.
Ո՞ւր ամեհին է արդ Մեզենտ, ո՞ւր նորա խրոխտ ըսպառնալիք:
Նա զաչս ի վեր ամբարձեալ, ոգի առեալ, ուշաբերեալ,
Բարբառի. Ոսոխըդ ժանտ, հե՞մ ի վերայ իմ խիզախես,
Ի՞ր ինձ մահ ըսպառնաս. չիք քեզ եղեռն ի մահու.
Ոչ ես առ այս եկի ի մարտ՝ զի խնայեսցես ոսոխդ ի յիս,
Եւ ոչ ընդ քեզ այդպիսի ինչ կըռեաց դաշինս իմըս Լաւսոս:
Ըզմի ևեթ զայս ի քէն խընդրեմ շընորհ, եթէ երբեք
Լիցի շնորհել ինչ ոսոխի ի պարտութիւն մատնելոյ,
Թո՛ղ ըզդիակն իմ ընդ հողով հանգուցանել. գիտեմ իսկ քաջ
Ըզգառն իմոցս ատելութիւն. զայս աղաչեմ, արգել ըզհեռ,
Եւ թաղակից լինել շնորհեա ինձ ընդ որդւոյս: Եւ մինչ խօսէր,
Ըզսուսերին էառ ի փող իւր ըզհարուած ոչ յեղակարծ.
Եհեղ ըզկեանս ընդ յորդահոս ալիս արեան ըզզինուք:

# ՊՈԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՆԻ.

# ԵՆԷԱԿԱՆԻՆ

## ԳԻՐՔ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի վաղիւ անդր յետ յաղթութեանն կանգնէ Ենէաս Արիսի 'ի զինուցն Մեզենտեայ ախոյեան. և զդիակնն Պաղլասայ մեծաւ հանդերձանօք յուղարկէ 'ի քաղաքն Եւանդրի, ուր դառն սգով ընդունի զնա հայրն: Հրեշտակք լատինք խնդրեն և ընդունին յԵնեայ դուլ զինուց զաւուրս երկոտասան. և յայնմ վայրի բանակք երկաքանչիւր թաղեն զդիակունս անկելոց իւրեանց պատուով: Վենուլ 'ի քաղաքէն Դիոմեդեայ դարձ արարեալ, պատմէ Լատինաց՝ զի չէք անտի և ոչ մի ինչ յոյս օգնականութեան: Լատինոս.արքայ անյոյս լեալ անտի, ժողով գումարէ, և խորհի յղել հրեշտակս առ Ենէաս յաղերս խաղաղութեան: Դրանկէս զօրավիգն լեալ կամաց Թագաւորին, յաւելու թշնամանել բանիւք բազմօք զՏուրնոս զառիթ պատերազմին. ընդ որ Տուրնոս դառնացեալ, այլ արիապէս 'ի բաց հերքէ զթշնամանսն, կամակար յանձն առեալ մենամարտիլ ընդ Ենեայ բառնալ զվէճանդ հասարակաց: Ի վիճել նոցա և ահա լուր հասանէ՝ կալեալ հեծելագնդին տրովացւոց զդաշտավայրս Լաւրենտոնի, և Ենեայ մնացորդօք բանակին անդր ընդ լեռնավայրս դիմեալ: Տուրնոսի գիտացեալ զխորհուրդս Ենեայ, երկընդէ և ինքն զբանակ իւր. զայրուձին ընդդէմ հեծելոցն տրովացւոց ընդ Կամիլլայ և ընդ Մեսապոսի արձակեալ, և ինքն զկիրճս լերանց այլովք զօրօքն գրաւէ, դարանակալ լինել Ենեայ: Անահտայ կանխատես լեալ մահուն Կամիլլայ, և ոչ կարացեալ խափանել զայն, խորհի 'ի վրէժխնդրութիւն. և արձակէ յերկնից զՈպիս յաւէրժահարսն՝ սպանանել զսպանող նորին: Ի ճակատամարտի ուրեք հեծելոց Արոնտ հարկանէ զԿամիլլա, և Ոպիս զԱրոնտ: Հռուտուլք խուճապեալ մահուամբն Կամիլլայ, դառնան 'ի փախուստ. և գոյժ աղետիցն հասեալ առ Տուրնոս, թողու նա ի կիրճս անդ զդարանակալս, և դիմէ յօգնութիւն իւրոցն: Անդր հասանէ և Ենէաս. և ի տարաժամել աւուրն՝ զօրք երկաքանչիւր յանդիման քաղաքին բանակ հարկանեն:

# ԵՆԷԱԿԱՆ

## ԳԻՐՔ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Յովկիական ի ծովէ մինչ արշալոյսն յառնէր ի վեր,
Յաղթականն Ենէաս մատուցանէր ուխտս աստուածոց,
Թէպէտ և հոգ անկելոցն թաղելոյ զնա ստիպէր,
Եւ էր խռովեալ սիրտ նորա ընդ գոյժ մահուանըն Պաղլասայ:
Կաղնի բստուար ոստաքանց կանգնել ապա ետ ի բլրի,
Եւ ի փայլուն առնազէնս, ի կողոպուտս Մեզենտեայ,
Ըզգեցոյց զայն, ծօնեալ քեզ դիցըդ զօրութեանց ախոյեան.
Զարիւնաթոր ետ ըզնովաւ անել ցըցունս, և զծայրաբեկ
Գեղարդունս, ըզմենջապահըն ծակոտկէն ի հարուածոց,
Եւ ըզվահանըն պղընձի յահեկակողմըն զետեղել,
Եւ կախել զուլանէ զվաղակաւորըն փըղոսկրեայ:
Խրախոյս ապա իւրոցըն տայր ցընծացելոց, շուրջ պատ առեալ
Յամբոխէ զօրապետաց ամենեցուն, և յորդորէր.
Ի բաց դիք արք զերկիւղ ի սպառ, ըզմեծագոյն տարայք ըզկէս
Յաղթութեան. ահա կապուտք երախայրիք ընդդէմ վիսին,
Ի բազկէ աստի իմմէ անկեալ զընի ահա Մեզենտ.
Ժամ է զընալ մեզ առ արքայն և ի պարիսպս Լատինաց.
Վառեցարուք արդ ի զէն, առէք խրախոյս ի պատերազմ.
Մի յամեցումն ըզձեզ կալցի յեղակարծում անպատրաստ,
Յակնարկել դից՝ խըլել ըզդրօշս, ի դուրս զօրբունս արձակել,
Մի զձեզ տարտամ միտք դանդաղկոտս աշխէ և յոյլս կացուսցէ:
Այլ նախ հողոյ տացուք զանթաղ զնկուորակցաց դիակունս,
Միակ ըապաս՝ որոց ի խորս Ակերոնի բնակեն ոգիք.
Հա՛պա երթայք տուք ըզյետին պատիւ քաջացն այնոցիկ,
Որք արեամբ իւրեանց գնեցին զերկիրըս զայս մեզ հայրենիս.

Աձցի Պալլաս նախ ի տըխուր անդր ի քաղաքն Եւանդրի,
Պատանին առաքինի՝ զոր երարձ սեաւ օր չարամահ:

Զայս ասացեալ արտասուօք, դիմեաց ի սեամս՝ ուր ծերունին
Ակետէս դիականըն Պալլասայ կայր պահապան,
Այն որ երբեմըն պարրասեանըն Եւանդրեայ էր զինակիր,
Իսկ յայնժամ սիրեցելոյ սանուն տըւեալ էր մարտակից,
Ոչ նոյնպէս ի յաջողակ հըմայս բախտին: Իւրքն համօրէն
Շուրջ կային անդ, և ծառայից գունդ և ամբոխ տրովացւոց,
Եւ տըրտմալից իլիոնհիք ըստ օրինի հերարձակք:
Իբրև եմուտ Ենէաս ընդ բարձրաբերձ դըրունս ի ներքս,
Ամբարձին յաստեղս ի վեր բաղխմամբ կըրծոց ողբ և աշխար.
Հընչէին արքունիք ի ձայն տըխուր հեծեծանաց:
Ի տեսանել Ենեայ ըզդէմըս ձիւնաթոյրըս պատանւոյն,
Եւ ըզգըլուխն անկեալ ի բարձ, և ըզբացեալ ի գիրգ կողըն
Յաւսոնացւոյ տիգէն ըզվէրս, ի գերարտասուր հարեալ ասէ.
Հէք պատանի, բախտն ի մատչելն առ իս զըւարթ, վասն այն արդեօք
Նախանձեալ յափըշտակեաց ըզքեզ յինէն, զի մի տեսցես
Զարքայութիւն մեր, և յաղթօղ ի հայրենիդ դարձցիս քաղաք.
Ոչ այսպէս հօր քում խոստացայ ի հրաժարելն իմ ի նմանէ,
Մինչ գըրկախառն համբուրիւ յուղարկելով զիս յետրուրեանն
Ի լայնատարըր պետութիւն՝ կասկածանօք ինձ ազդ առնէր
Զանգըլթութիւն օրերոյն, ընդ որպիսում վայրագ ազգի
Հասանէր ինձ տալ պատերազմ. ինքն ըմբըռնեալ ի յոյս ունայն,
Ուխտս արդեօք դից արդ վասըն քո մատուցանէ, ծանրաբեռնեալ
Նըւիրօք ըզբագինս. այլ մեք տըխուր յուղարկաւորք
Ի նանիր ըսպասուք զանշընչացեալըդ մեծարեմք
Ըզպատանիդ, որոյ ոչ ևս ընդ դիս վերինս է աղերս:
Տեսցես, ո՜վ հէք և թըշուառ, զորդւոյդ դիակն աղխողորմ.
Այսպիսի՞ պահէր մեզ դարձ, ա՞յս ըսպասեալըն էր յաղթանակ,
Ա՞յս իմ անշուշտ վըստահութիւն. այլ ոչ տեսցես դու, Եւանդրէ,
Անարգ վէրօք ըզնա հարեալ, ոչ չարաչուք կենօք որդւոյդ
Ըղձանայցես քեզ դաժըն մահ. աւա՜ղ քանի՜ դու զօրավիգն,
Աւսոնիա, կորուսեր. քանի՜ և դու, Ասկանիէ:

Այսպէս Ենեայ ողբս արկեալ, ետ ըզդիակնըն հէք բառնալ,
Եւ յամենայն զօրուէն ընտրեալ յուղարկաւորս ի սպաս յետին,
Արտասուացն հայրենի ետ ողբակիցս հազար այր.
Մեծի կոծոյն դոյզն ըսփոփումն, այլ արժանի հօրն եղկելւոյ:
Այլք դագաղըս ժիրաժիր և պատղարակ կազմեն ճապուկ
Վանդակեալ ի խըմորկեաց և ի ստեղանց կաղնեաց հիւսկէն,
Եւ զետեղեալ ի նմա մահիճըս՝ հովանի ի սաղարթաց



Ածեն ի վերայ, և բարձր ի նմա ըզպատանւոյն
Հանգուցանեն ըզդիակն ի գեղջային առագաստին.
Որպէս ծաղիկ ի կուսական մատանց քաղեալ, զերդ մանուշակ
Քընքուշ, յակինթ թալկահար, ըզփայլ և զգեղ չև կորուսեալ,
Այլ որում մայր երկիր ոչ ևս ընծայէ տած և զօրութիւն:

Յայնժամ էած ձորձըս կըրկին անկեալս ոսկւով և ծիրանեաւ,
Զորըս Դիդեայ սիդոնուհւոյն զըւարթ ընդ երկ իւր իւրովի
Գործեալ երբեմն էր նըմա, ընդելուզեալ յոսկիաթել.
Եւ ըզգեցոյց պատանւոյն տըխուր ըզմին ի զարդ յետին,
Ըզմիւսն ածեալ ի քող վարսիցն ի խարուկին ճարակելեաց:
Ած կուտեաց անդր ըզմըրցանակս ի լաւրենտեան մարտին առեալս,
Եւ հրամայեաց բարձեալ բերել յերկայնաձիգ զաւարն ի չու,
Եւ ըզկապտեալս ի թըշնամեաց յաւել ըզզէն և ըզձիան:
Կացոյց և զոհս ուրուականաց ըզձեռս ի յետըս կաշկանդեալ,
Ի ճապաղիս արեան իւրեանց թանալ ըզբոց խարուկին:
Հրամայէ և ինքեանց զօրագըլխաց բերել ի ձող
Ըզզէն և զըահըս թըշնամեաց, դրոշմեալ զանուանս անդ ոսոխիմն.
Ածի և հէքն անդր Ակետէս ընկճեալ յամաց, մերթ բաղխելով
Բըռընցի ըզկուրծըս իւր, և մերթ զերեսըս ցըտելով
Եղընգամբք, բոլոր անձամբըն տարածեալ ընդ երկիր:
Ածեն և զկառս ի հռուտուլեան ներկեալըս յարիւն, և Եթոն
Գայր ըզհետ երիվար պատերազմող՝ զերծ ի զարդուց,
Արտասուելով, և ի կայլակըս մեծամեծս ըզդէմըս իւր
Թանալով. այլք ըզնիզակն և սաղաւարտ ածէին,
Զի զայլս ի զինուց կըրէր Տուրնոս յաղթական:
Ապա փաղանգք տեկրացւոց լի տըրտմութեամբ ըզհետ գային,
Եւ Արկադք շըրջեալ ըզզէնս, և զօրավարք տիւրենացիք:

Իբրև անցին յուղարկաւորք առ հասարակ ի չու երկայն,
Եկաց Ենէաս, յոգւոց եհան և յաւել.
Ողջոյն ընդ քեզ, մեծըդ Պալլաս, մընա յաւէրժ խաղաղութեամբ.
Յայլ արտասուս նոյն ըզմեզ կոչէ մարտին բաղդ ոսոխալի:
Զայս ասացեալ բարձր ի պարիսպս և ի բանակ անդըր դիմեաց
Պատգամաւորք հասեալ յայնժամ ի լատինեան քաղաքէ,
Ոստ ձիթենի ի ձեռին ըզդիակունսըն խընդրէին
Անկելոցըն զինուք ընդ դաշտավայրն համասփիւռ,
Ներել ինքեանց տալ ըզնոսա հողոյ, և մի պատերազմել
Ընդ մատնեալս ի պարտութիւն և ընդ անկեալս յարեէ,
Խնայել յերբեմն ասպընջականս և համարեալս ի յանձինս:

Զորոց զըլթածն Ենէաս ոչ մերժելով ըզպաղատանս՝
Ետ հրաման, և յաւել. Ո՞ր այն ըզձեզ բախտ անարժան,

Ո՛վ Լատինք, դըրդեաց յայդքան աղետաւոր ճակատամարտ,
Մերժել ըզմեզ ըզբարեկամս, և աղերսել խաղաղութիւն
Մահացելոց և յարկածըս ճակատուն կորուսելոց.
Ձայդ կենդանեաց ևըս շնորհել հաճոյ է ինձ. և եթէ ոչ
Հրամանք ինձ աստ ըզկայ առնուլ սահմանէին, չէր իմ եկեալ.
Ոչ եկի ես մըղել ընդդէմ լատինացւոցըդ պատերազմ.
Նա ինքն արքայն ձեր հիւրոյից մերոց դըրժեաց, վըստահացեալ
Ի զէն Տուրնեայ. իրաւացի ևս էր նըմին ինքեան Տուրնեայ
Ի մահ դիմագրաւել. եթէ կամէր բազկաւ առնել
Մարտիս վախճան, եթէ վանել ըզտէկրացիքըս պատրաստէր,
Պարտ էր նըմա գալ ընդ իս սովին զինուք ի մենամարտ,
Ձի որում դիք և կամ բազուկ իւր տայր ըզկեանս, կեայր նա յաղթող:
Այլ արդ երթայք, տուք զեղկելի քաղաքակիցըս ձեր բոցոյ:
Եւ ի խօսել նորա զայս, ապշեալ կային նոքա անխօս՝
Ձախս և ըզդէմս ի միմեանըս դարձուցեալ. յայնժամ Դրանկէս
Ծերագոյնն ի նոցանէ, որ միշտ հեռիւ հակառակորդ
Եւ չարախօս ըզպատանւոյն լեալ էր Տուրնեայ, խօսի այսպէս.
Մեծդ համբաւով, և մեծագոյնըդ զինուք, քաջդ ի տրովացիս,
Որո՞վք ըզքեզ դըրուատեսք յաստեղս երկնիւք չափ ամբարձից.
Ընդ ո՞ր ինչ առաւել արժան իցէ ինձ զարմանալ,
Ընդ ուղղութի՞ւն թէ ընդ վաստակըս քո ի մարտ պատերազմի.
Շնորհապարտք զայդօրիկ ի հայրենիս մեր ածցուք.
Եւ ըզքեզ, եթէ միայն լիցի մեզ բախտըն ձեռնտու,
Արքային Լատինեայ նիզակակից կացուսցուք,
Թող այլս այլուստ խընդրեսցէ նիզակակիցըս իւր Տուրնոս.
Նա՝ ցանկալի իսկ է մեզ ըզսահմանեալըս ի հրամանաց
Կանգնել պարիսպս, ըզվէմս ի յուս քեզ տրովականըս բերելով:
Եւ յասել նորա զայս՝ ըզնոյն և այլք շըշընջէին.
Սահմանեցաւ երկվեցեակ աւուրըս դուլ առնել զինուց.
Յայնըմ վայրի կըռեցին ուխտ խաղաղութեան, և անվըտանգ
Ընդ Լատինս ի լերինըս տէկրացիք թափառէին:
Ի տապար երկաթի հընչէր հացին տախտապարեալ,
Տապալէր շո՞ երկնածայր արմատաքի խըլեալ յերկրէ.
Հերձոյր ի սեպըս կաղնի, և հոտեան հերձոյր մայրի,
Ի ճըռընչիւն անուոց սայլք կրէին զորնի: Թռանի համբաւ
Գուժաբեր սըգոյն մեծի ի լըսելիս Եւանդրի
Լընու զքաղաքն և զարքունիս, այն որ վայրիկ մի յառաջ
Յաղթական ըզՊալլաս ընդ Լատիոն հըռչակէր:
Յայնժամ ի դրունըս քաղաքին խուռըն դիմեն արկադացիք,
Յափըշտակեն եղերական ջահս ըստ նախնեացն օրինակի,



Երկայնաձիգ շուրջ բոցեղէն անջրպետէ ըզդաշտորայն
Ցարահետ լայն, և փռիւգացւոց գունդք ընդ առաջ ելեալ ողբովք
Համախըմբին ընդ նոսա. և կանանին ի տեսանել
Ըզմուտ նոցա ընդ յարկօքըն՝ դըղորդեն կականաւոր
Ըզքաղաքըն տըխուր ..դիմէ Եւանդր մրտաքս ի մէջ
Քաղաքին, ոչ ոք ըզդէմ ունել զօրէ թագաւորին.
Կացուցանէ ըզդագաղս, անկեալ զորդւովըն զեղանի
Լալահառաչ. հազիւ ուրեմն ապա ցաւոց թողեալ ազատ
Ելըս ձայնին, ողբաձայնէ. Ոչ զայս դու ինձ, իմըս Պալլաս,
Ետուր խոստումն, այլ ըզգուշեաւ դիմագրաւել խիստ Արեսի.
Ոչ անտեղեակ էի քանի՜ հըզօր են փառք նախկին ի զէն,
Եւ քանի՜օն քաղցըր պարծանք ի նախաձեռըն ճակատու.
Ո՛վ չարաբաստ ճիգըն նախկին պատանեկին, ո՛վ դառըն փորձ
Դրացւոյ մարտին, ո՛վ ի նանիր ուխտք և աղօթք յինէն հեղեալք:
Երանի՜ քեզ հարսն անբիծ՝ զի կանխեցեր դու մեռանել,
Եւ ոչ ի սուգս յայս պահեցար. իսկ ես ընդէ՞ր կեցի յաղթող
Իմում օրհասի, յերկարակեաց հայր քան զորդի:
Թող Հըռուտուլք, ի կալ իմում նիզակակից տրովացւոց,
Ձիս ընդ զինուք ծածկէին. տայի յօժար զանձն իմ ի մահ,
Ոչ զըղջայի, ո՜վ տէկրացիք, ոչ ընդ դաշինս, և ոչ ընդ աջ
Տըւեալ միմեանց ի հիւրոյթ. այլ ծերութեանըս մերում արդ
Այս պատրաստեալ էր աղէտ. թէ պատանւոյն վաղամեռիկ
Հարկ էր մահ, գէթ մուծեալ ի Լատիոն ըզտէկրացիս,
Եւ բիւրաւորս ի Վոլսկաց տապաստ արկեալ, ապա զըրաւէր:
Այլ ես ոչ այլ ինչ ըստպաս քեզ մատուցից, իմըս Պալլաս,
Քան զոր մատոյց Ենէաս և փռիւգացի ազատանին,
Զօրապետք տիւրենացիք և զօրք ողջոյն տիւրենականք.
Որք զանկելոցն յաջոյ քումմէ բարձեալ բերեն ըզմեծամեծ
Ախոյեանս. արդ և դու ձող զինազգեստ կայիր ըստուար,
Ո՛վ Տուրնէ, եթէ հասակ նա ի քումմէդ ոչ ինչ ընդհատ,
Եւ համեմատ հասակին եթէ յանկարծ բերէր կորով:
Այլ հէքս ընդէ՞ր արգանեմ խափան զինուցըդ տէկրացւոց.
Երթայք տո՛ւք արքային ձերում ըզբանս իմ ուշիւ.
Եթէ բաւեմ դեռևս ի կեանս յայս ատելի ինձ յետ մահուն
Պալլասայ, գիտես քաջ՝ զի խրախուսէ բազուկ քո զիս,
Որ զորդւոյ և ըզհօր պարտի խընդրել վրէժ ի Տուրնեայ.
Այսըմ եւեթ պարգևի մընամ ի քէն և ի բախտէն.
Ոչ վայելից կենաց ցանկամ, և ոչ օրէն է ինձ ցանկալ.
Այլ ըսփոփումն որդեկիս ածել ի խոր սանդարամետս:
Եւ մինչ այն ինչ արուսեակն ըզկենարար ծաւալէր լոյս

Ի հէք մանկանցուս՝ բերելով երկ և վաստակ.
Ենէաս հայրն և Տարքոն ի գոգաւոր ծովեզերին
Կանգնեցին փայտակոյտ, անձնիւր ըստ բարըս հայրենի
Ածեն զիւրեանցըն դիակոյտ, և ենթադրեն բոց ծըխամած.
Յաղջամուղջ մառախլապատ ծածկի երկին բարձրակառոյց.
Երիցս յայնժամ ի փայլուն վառեալ ի զէն զօրն հետևակ
Ընթանայ շուրջանակի ըզխարուկիւ խորբորբելով,
Եւ հեծելազն երիցըս շուրջ ձիավարէ կականաւոր
Ողբս առեալ ըզբոցով եղերական փայտակուտին.
Թանայ երկիր յարտասուաց, թանան և զէնք. հընչիւն փողոց
Եւ աղաղակ մարդկան յառնէ յերկինս ի վեր. կէսք անդանօր
Ըզկողոպուտս անկելոցըն Լատինաց, ըզսաղաւարտ
Ըզսուսերըս գեղեցիկս, երասանակս երիվարաց
Եւ անիւըս երագունս, աւար առեալս աման ի բոց.
Այլք ըզծանօթ մըրցանակս, և ըզդըժբաղդ զէնըս նոցին
Եւ զասպարս. յոգունք եզանց իրանք մատչին մահու ի զոհ,
Եւ խոզեան ըստեակլիր, և խաշն յանդոց յափըշտակեալ
Սրախողխող առնին ի հուր. և ընդ ծովափըն շուրջ բոլոր
Հայլին զընկերսըն բոցակէզ և զփայտակոյտըս կիսայրեաց.
Եւ ոչ ի բաց ի տեղւոջէն կարեն մեկնել, մինչև հասեալ
Գիշեր խոնաւուտ շըրջէ զերկին աստեղափայլ:
Եւ այլ ուրեք ոչ ինչ ընդհատ կանգնեն Լատինք չարաբաստիկք
Խարոյկս անհամար, և ըզբազում ի դիականց
Տըւեալ հողոյ, զայլս ի դաշտաց մերձակայից բարձեալ բերեն
Ի քաղաք, և ընդ այլըն խառն ի խուռն ամբարձեալ
Դիակոյտ մեծ, առանց թըւոյ, առանց պատուոյ, բոցակիզեն:
Յայնժամ փայլեն ամենուստ շուրջանակի դաշտք ընդարձակք
Մի քան ըզմի լուսաւորք ի խիտ ընդ խիտ բոց խարուկի:
Այն ինչ երրորդ հալածէր տիւ ըզցուրտ յերկնէ խաւար ի բաց,
Պեղէին ծանրաթախիծ զերկիրն ի խոր, և խառն ընդ հուր
Ընդ եղկ հողակուտիւըն զոսկրոտին ամփոփեն:
Մանաւանդ ի քաղաքի անդ Լատինաց ապարանք ճոխք
Հընչէին ի շռինդ ողբոց և սաստկագոյն ի կական.
Անդ մարք և նուք, անդ տըրտմալից քորք սիրելիք, և մանկտի
Որք ի ծնողաց նըզովէին ըզպատերազմըն ժանտաժուտ,
Եւ զհարսանիսըն Տուրնեայ. նըմա զինուք, նըմա սուսերք
Իւրովի սահմանել զէլըս մարտին հրամայէին,
Այնմ որ ըզգահ Իտալիոյ և զբարձրագոյն խընդրէր պատիւ:
Եւ ոխերիմն յաւել Դրանկէս՝ զի միայնումն էր ձայն տըւեալ
Տուրնեայ ի մարտ, և միայնումըն զէն առնուլ պարտ էր նըմա.



Այլ յօգունց ընդ հակառակն էին կարծիք ի նպաստ նըմին,
Եւ զըշխոյին՝ նըմա պաշտպան կայր մեծաստառըն զօրութիւն.
Օգնէր նըմա և ստացելոց ախոյենացն համբաւ մեծ:
Մինչդեռ հերձուածք յուզէին, և մինչ աղմուկըն զայրանայր,
Հասին հրեշտակք անդր ի մեծէն Դիոմեդեայ քաղաքէն,
Տըխրագին բերեալ զըրոյց՝ զի ամենայն ճիգըն իւրեանց
Լեալ ընդունայն, ոչ պարգևաց և ոչ ոսկւոյ զօրեալ էր ինչ,
Եւ ոչ խոնարհ աղերսանաց, զի հարկ այլուստ էր Լատինաց
Խընդրել օգնութիւն, կամ ի տևկրեանց թագաւորէն
Խաղաղութիւն: Ինքն իսկ յայնժամ արքայն Լատին առ յոյժ վըշտին
Վըհատեալ կայր, զի զայրոյթ դից և ակներև շիրիմք արդեք
Ճակատագրեալ ըզգալուստ Ենէասայ յայտ առնէին:
Հապա ժողով մեծ գումարեալ՝ ի բարձրաբերձ սեամս ի խորհուրդ
Զաւագանին իւր կոչէ. համախըմբեալ նոքա դիմեն
Խուռն ընդ փողոցս ի յարքունիս. անդ Լատինոս տըխուր դիմօք
Բազմի ի մէջ, երիցագոյն հասակաւ
Եւ նախագահ ի թագաւորս, և տայ հրաման հրեշտակաց
Յետոլական քաղաքէ դարձաւորաց՝ պատմել կարգաւ
Որ ինչ զըրոյց ածէին փոխան իւրոցըն պատգամաց:
Լըռէ ժողովն. յայնժամ Վէնուլ ըստ հրամանին առնու խօսել.
Տեսաք մեք, ո՛ քաղաքացիք, ըզԴիոմեդ և ըզբանակ
Արգիացւոց՝ ընաւից յաղթօղ լեալ արկածից ճանապարհին,
Եւ կալաք զաջն՝ իլիական արքայութեանըն կործանիչ.
Կառուցանէր ի յապիգեան երկրի զքաղաքն Արգիրիպա,
Յաղթեալ Գարգանեայ, յորջորջեալ զայն ի հայրենի
Անուն ազին: Մուծեալք առ նա, հրաման եղև մեզ խօսելոյ.
Մատուցանեմք ըզնըւէրս, պատմեմք զանուն և զհայրենիս,
Եւ ո՛յք ընդդէմ մեր զէն ածեն, և մեր ընդէ՞ր դիմեալ յԱրպոս:
Նորա լըւեալ զամենայն, ետ հեզ բանիւք պատասխանի.
Ո՛վ երջանիկ ազգ և երկիր կրոնեան, նախնի աւսոնացիք,
Ո՞ր ոխերիմ բախտ վըրդովէ զխաղաղութիւն ձեր, և զըրդէ
Ըզձեզ ի մարտ անընդել. որք միանգամ զէն ի ձեռին
Զանդաստանս իլիականս ապստամբեալ աւերեցաք,
(Թողում որ ինչ անդ ի մարտի կրեցաք առ բարձըր պարըսպօք
Եւ քանի՛ որեար ընկլաց ընդ յորձանօքըն Սիմոյիս),
Անպատում լուծաք վըրէժ մինչև ի ծագս աշխարհի,
Եւ լի բովանդակ ընդ եղեռանըն հատուցաք
Պատուհաս, ըզՊրիամու ազինն իսկ սիրտ յուզեալ ի գութ:
Գիտաց զայն և Պալլասայ աստղըն դըժնեայ, գիտացին մայրք
Եւրիականք, և վըէժխընդիրն ի միտ եառ զայն Կափարեւ.

Յանըմհեռէ հալածականք ի տարաբնակ ծովեզերս,
Վարեալ աւրեանըն Մենելաւ մինչև ցարձանըս Պրոտեայ,
Եւ զետականըն Կիկլոպայս ետես նա ինքն Ոդիսեւս:
Եւ զի՞ զՊիւռեայ պետութենէն և զանկելոցն Իդոմենեայ
Ապարանիցն ասիցեմ, և ըզԼոկրեաց ի Լիբիա
Վարելոց. ինքն իսկ արքայն միկենացւոց և զօրավար
Յունաց մեծաց առ սեամըս իւր, յետ զԱսիա նըւաճելոյ,
Անկաւ յաջոյ ժանտ ամուսնոյն՝ դաւաճանեալ ի հոմանւոյ:
Նախանձեցան արդեօք դիք, զի մի դարձայց ի հայրենիս,
Տեսից ըզհարսն իմ ցանկալի, և ըզչքնաղ Կալիդոնէ.
Խուճապք և արդ խոժոռադէմք յիս յարձակին, և տեսանեմ
Ըզզինակիցս իմ թեւածեալ աներևոյթ լեալ ընդ երկին,
Եւ ըզգետովք ի կերպ հաւուց թափառականըս շուրջ յածեալ,
Լըցեալ ըզժայռս ի կոծ ողբոց. ո՜վ խիստ իմոցըս պատուհաս:
Խիթալիք ինձ այսպիսի էին աղէտք, յորմէհետէ
Խոլ և ժըպիրհ ի յերկնայինս անդր ի մարմինըս յարձակեալ՝
Զաջ Աստղկանն հարի վիրօք յանսուրբ ի սայր սուսերի:
Մի՛ դուք արդ, մի՛ յայդպիսի պատերազմունըս տայք ինձ ձայն.
Ոչ ևս է իմ ընդ տևկրացիս յետ կործանման Պերգամայց
Առեալ զէն, և ոչ խորհիմ և ոչ խընդամ ընդ հին չարիս.
Դարձուցէք առ Ենէաս զորըս բերէք ի հայրենեաց
Ինձ ընծայս. կորովեաց զինուց նորա ելի ընդդէմ,
Կացի ի կռիւ ընդ նըմա. հաւատացէք փորձ եղելումս
Ի՛բր ամբառնայ նա զասպար, և շանթաձև շեչտէ զաշտէ.
Եթէ երկու այլ ևս այր ածէր Իդեան երկիր ի լոյս
Հանգոյն նըմին, գայր յարձակեր նա յինաքեան քաղաքանին,
Եւ ողբայր Եւլլադա զճակատագրին յեղաշըրջել:
Յորչափ կացաք ըզպարըսպօք յամառելոյն Տրովադայ,
Ի ձեռն Ենեայ և Հեկտորի ըզկայ եառ աքայեցւոց
Յաղթանակ, և մինչև ցամըն տասներորդ ընկըրկեցաւ.
Երկաքանչիւր քաջազէնք, մեծահոգիք երկաքանչիւր.
Այլ նա կրօնիւք գեր ի վերոյ. տուք աջ ի յաջ մինչդեռ կարէք
Յուխտ դաշինս. այլ զէն ընդ զէն ըզգոյշ լերուք մի՛ խառնել:
Լըւար արանց քաջ, արքայդ արքայից, զինչ պատասխանի
Եւ զինչ խորհուրդ է նորա վասըն մեծի պատերազմիդ:
Ի լըսելըն զայսոսիկ ի հրեշտակաց՝ շըշուինչ պէսպէս
Ընթանայր ընդ բազմայոյզ շուրթըն աւսոնեան հրապարակին.
Որպէս յորժամ զերագընթաց ուղխըս գետոց խափանեն ժայռք,
Խոխոջեն ջուրք, և մերձակայք ի ձայն ալեաց հընչեն եզերք:
Այն ինչ ապա զիջան ոգիք, և լըռեցին շըշուկք շըրթանց,



Աղօթս արքայն մատոյց դից, խօսեցաւ բարձր ի գահոյից.
Ցանկալի ինձ և լաւագոյն էր, ո՛վ Լատինք, ըզկարևոր
Գործոյս խորհել յառաջագոյն, և մի՛ ժողով արդ անագան
Գումարել, մինչ թըշնամին շուրջ ըզպարիսպըս պաշարէ.
Քաղաքակիցք իմ, դըժուարին մեզ առաջի կայ պատերազմ
Ընդ դիւցազնեայս և ընդ որեար անպարտելի, որք ի մարտի
Անխոնջք, և ի պարտելըն իսկ ոչ դընեն զերկաթ ի բաց.
Եթէ ի զէնս Էտոլաց՝ զորս ի թիկունըս կոչեցիք՝
Իցէ ձեր յոյս, թողէք զայդ. իւրաքանչիւր յինքն յուսասցի.
Տեսէք քանի՛ տըկար էր այն, և լի՛ր արդ իրք մեր կործանեալ
Անկեալ կան. յաչս ահա ձեր, ի ձեռըս ձեր է ամենայն:
Այլ ոչ ումեք մեղադրեմ, արկիք ի գործ որ ինչ ի ձեզ
Հըզօրագոյն էր զօրութիւն, աշխարհօրէն մըղեցաք մարտ.
Այլ արդ ցուցից որ ինչ ի միտս իմ կեղակարծ յածի խորհուրդ,
Ունկըն դիք, և դուզնաքեայ բացատրեցից ձեզ զայն բանիւք.
Է ագարակ ինձ վաղեմի ի տիւրեննեանըն մերձ ի գետ,
Թեւակոխէ ի սահմանըս Սիկուլեայ ի մուտս արփւոյն.
Աւրունկեցիք զայն վարեն, հերձու Ռուտուլ ըզկարծրապինդ
Բլուրս ի խոփ, և ըզխաշինս ի դըժուարուտս անդ արածէ.
Զայն ամենայն երկիր, և շուրջ ըզմայրեւէտըն զաւառ
Բարձու լերին, թողցուք տևկրեանց ի հաշտութիւն. և հաստատեալ
Արդար դաշինս՝ ընկալցուք ընդ մեզ յերկիր մեր ըզնոսա.
Բնակեսցեն անդանօր, եթէ այնքան իղձք են նոցա,
Կանգնեսցեն իւրեանց պարիսպ. իսկ եթէ այլ խընդրեն երկիր
Եւ այլ ազինս, և մարթ իցէ մեկնել նոցա յերկրէ աստի,
Կառուսցուք կըրկին տասնեակ նաւս ի կաղնեաց իտալըյնոց,
Կամ ևս յոդունըս՝ թէ լընուլ զամենեսեան կարիցեն:
Մերձ կայ ատաղձ ի ծովու, ինքեանք ըզթիւ և ըզձև
Ոճնափայտիցըն տացեն, մեք ըզպըղինձ և ըզվաստակ
Եւ զամենայն ինչ կարևոր ի կառուցումն հայթայթեսցուք:
Պատգամաւորք ապա հարիւր ազնըւատոհմք ի Լատինաց
Երթիցեն կալեալ ի վեր խաղաղութեան ոստ ի ձեռին,
Պատարագս ածցեն փըղոսկր, ածցեն ոսկւոյ կըշիռս ի նուէր.
Գահոյս և ծիրանի ըզնըշանակս արքունականս.
Խորհուրդ ի մէջ արդ առէք, ձեռն անկելոցըս տուք իրաց:
Յայնժամ Դրանկէս սոսկ Տուրնեայ, այն որ ընդ փառըս պատանւոյն
Գաղտնածածուկ նախանձու ի սայրասուր խայթըս խոցէր,
Ճոխ ընչիւք, և ճոխագոյն ի զըրոյց, այլ ցուրտ աջոյն ի զէն,
Ոչ դոյզըն ոք համարեալ խորհըրդական, և զօրաւոր
Ի յուզել աղմուկ և խռով. զոր մայրենին իւր ազդ տոհմիկ

Զաննըշանն առ ի հօրէ կացուցանէր Նըշանաւոր,
Յոտըն եկաց չարախօսել, գըրգռել ըզհեռ, և ասէ.
Ոչ անծանօթ ինչ ումեք և վիճակաց մերոց կարօտ
Առաջարկես մեզ, քաջ արանց. գիտեն ընաւք որ ինչ խընդրէ
Բախտ ազգիս, այլ թանգուզեն. թող ըզխրոխտումն ի բաց եդեալ,
Ազատութիւն խօսելոյ տացէ նա ինքն՝ այր չարաբախտ
Հըմայք և բարք ձախողակք կորուսանել ետուն մեզ,
(Ոչ լռեցից, թէպէտ և սուր թէպէտ և մահ ինձ ըսպառնան)
Այնքան ըսպայս լուսարփիս, և ըզքաղաքըն տեսանել
Նըստեալ ի սուգ, մինչ ինքըն փորձ փորձէ ընդդէմ տըռւզացւոց
Վըստահ ի փախուստ, ահ ըսպառնայ երկնից զինուք:
Մի՛ս այլ ինչ, քաջդ արանց, ի նուէրըս քո բազմայօլով
Եւ ի պատգամըս՝ զորս ածել առ տըռւզացիս հրամայես,
Յաւել մի՛ս այլ ինչ, և մի՛ ուրուք երբեք բըռնութիւն
Ընդդէմ կամաց քոց զօրեսցէ. տացես վեհագըն փեսային
Ըզդուստըր քո ի հարսանիս արժանաւորըս հայրենի
Բուռըդ պատուոյ, առնել յաւէրժ ըզզօդ ուխտի խաղաղութեան.
Իսկ եթէ ահ գրաւէ ըզմիտըս քո և զսիրտ, նըմին ինքեան
Արկցուք աղերս՝ տալ արքայի և հայրենեաց զիրաւունս:
Ընդէ՞ր ըզհէք քաղաքացիս, և այս քանիցս ի վտանգ անշուշտ
Արկանես, առիթ և գլուխ այսքան չարեաց Լատինի.
Չիք փըրկութեան յոյս ի մարտի. խաղաղութիւն ի քէն, Տուրնէ,
Խընդրեմք ազգովին, և ըզմիայն անդըրժելի
Առհաւատչեայ խաղաղութեան. ես իսկ նախկին, զոր համարիս
Քեզ թըշնամի, և ոչ ընդ այդ դըժկամակիմ, գամ յաղերս.
Խնայեա ի քոյս, ցածո զըայրոյթ, և կա՛ց ի բաց յաղթահարեալ.
Շատ իսկ տեսաք նախճիրս արեան, յաւէր մատնեալ երկիր անբաւ:
Եթէ փառք չարժեն ըզքեզ, եթէ այդչափ կըրես յանձին
Զօրութիւն, եթէ ցայդ վայր քեզ սիրելի են ի պըռոյգ
Արքունիք, աղէ տուր արիաբար ըզկուրծըս քո
Ոսոխին, ընդէ՞ր իցէ մեզ ամբոխի վատասըրտաց
Անթաղ և անպատիւ տապաստ ի դաշտս անկանել,
Զի տացի Տուրնոսի ի հարսնութիւն դուստր արքայի.
Այժմէն իսկ ե՛լ ի ճակատ, եթէ իցէ կորով ի քեզ,
Թէ հայրենիդ քաջութիւն արիական. ձայն տայ նա քեզ:
Ի բանից աստի վառեալ բորբոքեցաւ զայրոյթ Տուրնեայ,
Եւ ի խորոց սըրտէ այսպէս մըռընչելով բարբառեցաւ.
Միշտ իսկ ճոխամ ես դու ի բան, ուր պատերազմ խընդրէ բազուկ,
Ո՛ Դրանկէս, և առաջին ի գումարել հարց փութաս
Ի յատեան. այլ ի զուր է յարքունիս ճոխաբանել,



Եւ յամբի մեծամեծըս կոտորել, մինչդեռ պատուարք
Պարըսպաց անջըրպետեն ըզթըշնամին, մինչչև արեամբ
Լըցեալ են փոսք. որոտա արդ, որպէս է իսկ քեզ սովորոյթ,
Խըրոխտ բանիւք. ի վատութիւն կըշտամբեսջիր զիս ո՛ Դրանկէս,
Յորժամ բազուկ քո զտեկրացւոց կոտորելոց դիզէ զըռահանս,
Եւ խիտ ընդ խիտ պերճ ախոյեանըս կանգնեսցէ ընդ դաշտորայս:
Տուր ըզփորձ յոր ինչ եռանդըն քաջութեան է ձեռընհաս.
Ոչ է հարկ հեռաւոր խընդրել ոսոխ, մերձ կան աստէն
Ըզպարըսպօքս, ընդդէմ սոցա ո՛ն երթիցուք, զի՞ յապաղես.
Մի՛ արդեօք արիականըդ քաջութիւն ի փքոցուռոյց
Լեզուի քում, և ի յոտըս փախըստեայս իցէ միշտ:
Ե՞ս յաղթահարեալ, ո՞ խրատամիք կարիցէ
Յանդիմանել զիս, ո՛վ վատ, ուրեք երբեք յաղթահարեալ՝
Ի տեսանելն ըլիական արեամբ յորդեալ ըզՏիբերիս.
Եւ զԵւանդրի հանդերձ տոհմաւ իւրով ըզտուն կործանեալ,
Եւ կապտեալ ի զինուց զարկադացւոցըն բանակ:
Ոչ այդպէս զիս ծանեան, ոչ յաղթանդամըն Պանդար,
Ոչ Բիտիաս, ոչ բիւրք բիւրուց, զորս ի միում աւուր արկի
Յաղթանակաւ ի Տարտարոս, շըրջափակեալ ի պարըսպաց,
Պատեալ պաշարեալ ի թըշնամի պատնիշաց:.
Չի՞ք փըրկութեան յոյս ի մարտի. այլ դու ի գլուխ դարդանացւոյն,
Եւ հակառակ քո զայդպիսիս հըմայեսջիր, ո՛ խօթամիտ.
Մինչև ցե՞րբ ոչ դադարես ի խռովելոյ ահիւ մեծաւ
Զամենեսին, ի գեր ի վեր ամբառնալոյ ըզզօրութիւն
Ազգին երկիցըս մատնելոյ ի պարտութիւն, ըզԼատինեայ
Ընդ վայր ըզգէնս հարկանելով. իցէ՞ թէ արդ և զօրավարք
Միրմիդոնաց ի տըռւզական զինուց ահիւ սասանեսցին,
Տիդիդէս դըլխովին և լարիսեանն Աքիլլէս,
Եւ գետն Աւփիտ յադրիական ալեաց դարձցի փախըստական,
Մինչ յերեսաց ըսպառնալեաց իմոց ոճիր խորամանկին
Ահ կեղծաւորեալ՝ ծանրէ զեղեռն արհաւրօք:
Մի՛ ինչ խռովիր, ոչ կորուսցէ աջս այս զոգիդ այդպիսի,
Բնակեսցէ դա ի քեզ, կացցէ մնասցէ ի կուրծըս քո:
Արդ առ քեզ, ո՛ հայրըդ մեծ, և առ խորհուրդըս քո դառնամ.
Եթէ ի զէնըս մեր ոչ ևս իցէ քեզ յոյս, եթէ ցայդ վայր
Իցեմք լըքեալ անօգնական, եթէ ի սպառ իսկ կործանեալ՝
Զի միանգամ վարեցան զօրք մեր ի փախուստ, և ոչ շըրջան
Իցէ բախտին, խընդրեսցուք բազկատարած և զէնընկեցք
Խաղաղութիւն. սակայն յանկարծ եթէ աղօտ ինչ գոյր ի մեզ
Նախնին քաջութիւն, բարեբաստիկ ի ճիգըն իւր

Եւ գերազանց յարխութեան ըղձա քան զայլս համարէի,
Որ զի հանգոյն ինչ մի տեսցէ՝ անկեալ տապաստ եխած զերկիր:
Իսկ եթէ է մեր զօրութիւն, և կայ մանկտին մեր դեռ կանգուն,
Թէ կան մեզ ազգք և ժողովուրդք Իտալիոյ դեռ ի թիկունս,
Եթէ յոլով արեամբ տեկրեանք կալան ըզփառս յաղթութեան,
Եւ նոցին ևս մահունք և կոտորած ոչ ինչ ընդհատ,
Զի՞ առ սեամբս մարտին վատասըրտեալ վըհատիցիմք,
Ընդէ՞ր յառաջ քան ըզփող դողումն ըզսիրտըս մե՞ր ունի:
Ի լաւագոյն անդր ըզբազում ինչ ժամանակ և յեղյեղուկ
Ամաց վաստակ յեղաշրջէ. խաղ ըզյոգումբք արար բախտին
Դարձադարձ, և ի նոյն դարձոյց անդրէն կացոյց ի կայս:
Եթէ Ետոլք և Արպիք ոչ ևս իցեն մեզ ձեռընտու,
Իցէն Մեսապ և բարեբաստըն Տոլումնի, և զօրավարք
Ցազգաց բազմաց առ մեզ յըղեալք. և ոչ թեթև ինչ լիցին փառք,
Որոց յերկրէս Լատինի և Լաւրենտեայ զինուորեցին:
Եւ ի Վոլսկաց ահա քաջազնըն Կամիլլա ածէ ըզհետ
Հեծելազունդ, և գումարտակըս գունդագունդ փայլեալ ի պղինձ:
Այլ եթէ ձայն ինձ տան տեկրեանք ի մենամարտ, և ձեզ այսպէս
Իցէ հաճոյ, թէ վնասակար հասարակաց լիցեմ բարւոյ,
Ոչ այնպէս ի բաղկէ աստի խորշի արհամարհոտ
Յաղթութիւն, զի մի ի փորձ վասն այսպիսւոյ յուսոյ մատեայց,
Խրախուսեալ ելից ընդդէմ, թէպէտ և ինքըն զԱքիլլեայ
Բերէ ըզդէմըս մեծին, զէնս հանգունակս արկեալ զանձամբ
Ձեռակերտեալս ի Հեփեստեայ. ձեզ արդ ըզկեանըս իւր Տուրնոս,
Որ ոչ քան զոք ի նախնեաց արիութեամբ է ի ստորև,
Ձեզ և Լատինեայ նուիրէ իւրումն արդ աներոյ:
Ի՞նձ ևեթ ձայն տայ Ենէաս. թող իսկ տացէ, ոչ հրաժարեմ,
Քան թէ Դրանկէս՝ եթէ այս ի ցասմանէ դիցն է հրաման՝
Անկցի ընդ իս, կամ փառաց և քաջութեան լիցի հաղորդ:
Մինչ ի վարանս յայսոսիկ վէճ ընդ միմեանըս յուզէին,
Մըղէր յառաջ Ենէաս ըզգունդըս իւր և ըզճամբար.
Եւ ահա գուժկան ըզյարկըն դըղըրդէ արքունական,
Եւ արհաւրօք լնու ըզքաղաքն ածեալ ըզլուր հրոսի տեկրեանց
Ցափանցըն Տիբերի, և զտիրեննեան բանակին էջ
Ի դաշտավայրս համասփիւռ. խռովին ոգիք յեղակարծում,
Յուզի սիրտ ամբոխին, գըրգռի զայրոյթ ի սուր մըտրակ.
Ի զէն հապճեպ բուռն հարկանեն, և մըռընչէ մանկտին ի զէն.
Ողբան ըղխուր հըծծեն հարք, և աղաղակ մեծ ամենուստ
Ընդ երկին ամբառնայ, բարբառ պէսպէս և տարաձայն,
Որպէս յորժամ երամք հաւուց իջեալ ի խորս անտառաց,



Կամ կարապք ի ձըկնախուռն յորժամ ի գետն Երիդանոս
Կըռինչ կերկերաձայն ընդ շաղակրատ լիճս արձակեն:
Զայն պատեհ առեալ Տուրնեայ, աղաղակէ. Դուք ի ժողով
Բազմեցարուք, քաղաքացիք, ի գովեստս խաղաղութեան,
Նոքա զինեալ այսր աստսիկ դիմեալ ի ներքս յարձակին գան:
Ոչ առաւել ինչ ասացեալ՝ սրացաւ ի բաց, էջ փաղընդփոյթ
Բարձր ի յարկէն. Զայն տուր, ասէ, Վոլսկաց ի զէն, ո՛ Վոլուսէ,
Ած ըզհառուտըս, և դու Մեսապ ընդ Կորասայ քումըդ եղբօր
Ածէք զինեալ զայրուձին, տարածեցէք լայն ի դաշտիդ.
Կէսք ըզմուտըս քաղաքին խըցցեն, կալցին կէսք զաշտարակս,
Ըստպառազէն այլք եկեսցեն ընդ իս յոր վայր տաց հրաման:
Ճեպ ի պարիսպըս տայ որեարըն փաղընդփոյթ ի քաղաքէն.
Ինքն իսկ հայրըն Լատինոս խռովեալ ի շտապ տագնապի,
Ձեռընթափ ի սկըսելոցն իրաց մեծաց, թողու զժողովն,
Ըստըրջանայ յոյժ՝ զի ոչ ըզդարդանեանըն զԵնէաս
Եմոյծ ինքնին ի քաղաքն, ընդունելով իւր ի փեսայ:
Կէսք առ դըրամբք փոսըս պեղեն, վէմս և կոճեղըս կուտակեն,
Ցարիմըռուշտ ի պատերազմ ազդ առնէ փող կերկերաձայն.
Բազմապատիկ ըզպարըսպօքըն կանանիք և մանկտի
Կազմեն պըսակ, հրաւէր ի ճիգն առնէ հանուրց հարկըն վերջին:
Ցայնժամ և ինքըն թագուհին ընդ յոգնախումբըն մարց երամ
Ի մեհեան և ի դըղեակըս բարձրաբերձըս Պաղլասայ
Նըւիրաբերք ի վեր դիմեն, և այնքաննացն առիթ չարեաց
Օրիորդն ի միասին Լաւինիա՝ ըզգեղեցիկ
Արկեալ աչկունս ի խոնարհ. ըզհետ գան մարք, լընուն տաճարն
Ի ծուխ խընկոց, հեղուն ողխուր աղերս ի սեամս անդ ի բարձունս.
Հըզօրդ ի զէն, տեսուչ մարտից, ո՛ տրիտոնիկդ օրիորդ,
Ըզփռիւգացւոյ ելուզակին հար խորտակեա բազկաւդ ըզզէն,
Եւ ըզնա ինքն աստ առ դըրամբք քո բարձամբք արկ տապաստ յերկիր:
Ինքն իսկ Տուրնոս զայրագին զինավառի ի պատերազմ,
Ըզռուտուլեան ըզգեցեալ ճօշ՝ զինեալ ի վերտըս պըղընձիս,
Պատեալ ըզբարձս ի սըռնապան ոսկի, ի գլուխ դեռ հոլանի,
Սուսեր յագդեր, բարձր ի դղեկէն ոսկեփայլ գայ իջանէ,
Խրախոյս ի սիրտ և քաջայոյս իբր ըզձեռամբ զոսոխն ածեալ.
Որպէս ձի ի գոմոյ կապակոտոր խուսէ զերծեալ
Ի դաշտ արձակ, կամ յերամակ ճախրէ ճայկաց ընդ արօտ,
Կամ ի ծանօթ ալիս գետոյ սրանայ սովոր ի գնալ ի լոյղ,
Խըրխընջէ խայտալով ըզպարանոցն ի վեր առեալ
Կորովի. ծոճին ճեմին բաշքըն զուլամբ և զուսովք:
Ընդ առաջ ելեալ նըմա Վոլսիկ գընդաւըն Կամիլլա,

իջանէ ի ձիոյն ընդոստ ի դրունս անդ թագուհին.
Զանդոյն նըմին զօրքն ողջոյն հեղուն յերկիր յերիվարաց —
Յայնժամ դըշխոյն ասէ ցընա. Եթէ իցէ ինչ քաջացն
Վըստահութիւն յանձըն իւր իրաւացի, իշխեմ, Տուրնէ,
Եւ խոստանամ ըզդէմ ունել Ենեանց հրոսի, և միայնակ
Ի ճակատ տիւրենական հեծելազին դիմագրաւել.
Թո՛ղ նախաձեռն ըզփորձ առնուլ ինձ զարկածից պատերազմի,
Դու ի պարիսպս աստ առ ըզկայ, և կաց ի պահ քաղաքիդ:
    Առ որ Տուրնոս, յօրիորդըն սոսկալի յառեալ, ասէ.
Ո՛վ կոյսըդ փառք Իտալիոյ, զո՞ր քեզ շընորհըս մատուցից,
Զիա՞րդ ըզքէն գոհացայց. այլ զի է սիրտ քո գեր ի վեր
Ամենայն վըտանգաց, բաժանեսջիր ըզճիգն ընդ իս.
Խորամանկն Ենէաս, որպէս լըսեմք ի համբաւոյ,
Եւ յըղեալք ի մենջ լըրտեսք վըկայեն զայն, յըղէ այարէն
Այրուձի մեկնակազէն ասպատակել ըզդաշտորայս,
Ինքն անցեալ ընդ բարձունս, ընդ դըժուարուտս ամայիս,
Ի քաղաք այսըր փութայ. ըզդաւ մարտի ի կամակոր
Հետս անտառին պատրաստեմ, կալեալ զինուք զանցս երկուղեաց.
Դու համախումբ դրօշիւք ըզդէմ կա՛լ տիւրենեան հեծելազին,
Ընդ քեզ և գուըն Մեսապոս և գումարտակք լատինացւոց
Հասցեն, և գունդըն տիբուրեան. կացցես ընաւէց դու զօրավար:
Զայս ասացեալ, և ըզՄեսապ, և զդաշնակիցսըն զօրավարս
Զանդոյն բանիւք քաջալերեալ ի մարտ, խաղաց ի թըշնամիս:
    Է կորակոր ձոր քաջադէպ ի դաւ զինուց և ի դարան,
Զոր երկուստեք թանձրախիտ ոստովք ծածկէ անտառ նըսեմ,
Բերան անձուկ ընդ նըրբուղի տայ անդըր մուտ դըժուարին.
Ամբառնայ սարահարթ ի բարձր ի ծայր լերինն ի վեր
Գիտարան անծանօթ և ապաստան աներկեան.
Յաջմէ և յահեկէ է իջանել յօգնութիւն,
Կամ ի բարձու ըզկայ առեալ՝ ըստուար ի ստոր գլել հոլովել.
Անդր ընդ ծանօթ հետս ուղեաց ածեալ Տուրնոս, կալաւ հապճեպ
Ըզտեղին, և նըստաւ անդ յանտառախիտըս նենգաւորս:
    Յայնժամ ի կայս երկնաբընակաց դըշխոյն վեհից Լատովեան
Խօսի տըխուր առ Ոպիս երագաթեւ, մի ի կուսից
Ընկերելոց ի սպաս իւր, և զայս նըմա ազդէ հրաման.
Ո՛ օրիորդ, ահա ի մարտ անգութ գընայ արդ Կամիլլա,
Որ ինձ քան զայլս է սիրելի, զուր ի զինուց մերոց ծածկեալ.
Ոչ նոր ինչ այս ինձ Արտեմեայ պատահէ սէր՝ շարժել յանկարծ
Քաղցր ի գորով ըզսիրտ իմ, այլ անդըստին մինչ դեռ Մետաբ
Անկեալ հեռի յաթոռոյ, և ի գոռոզ բըռնութենէ



Հալածեալ՝ ի բաց գընայր ի Պրիւերնեայ հին քաղաքէ,
Յաքսոր ընդ իւր առեալ ածէր ըզդըստրիկն ընդ մէջ ռազմից
Ի փախուստ, Կամիլլա նըմա անուն յորջորջեալ
Ի Կասմիլլայ մօրն անուանէ մասին իրիք փոփոխմամբ,
Բարձեալ բերելով ըզնա ի գիրկս ընդ լերինս
Եւ ընդ անտառս անմարդիս, շուրջ յոխերիմ զինուց պատեալ,
Եւ ի հրոսից Վոլսկաց՝ որ անդ շուրջ յածէին համասփիւռ:
    Այլ ի փախչել իւրում յորդեալ գետն Ամասեն փըրփրադէզ,
Ծածկէր ըզդարափունս, այնքան հոսեալ ջաղըք ի յամպոց.
Ինքն ի լող պատրաստեալ, ի գութ մանկանըն նահանջէր.
Խիթայր ընդ բեռնըն ցանկալի, և զամենայն խորհէր հընարս:
Յետոյ ապա ուշ ի կուրծս ածեալ յանկարծ վըճռէ խորհուրդ.
Տէգ ըստուար ի յաղթ բազկին կրբէր մարտիկն ըստդիպուածոյ,
Յեփեալ և յատախիտ կարծր ի կաղնւոյ էր բուն տիգին.
Ի նմա զդըստրիկըն սընկենեաւ շըրջապատեալ վայրենեօք
Փակեալ ի կճղեփ կապէ ճարտար ի տիգաբնին,
Եւ կորովի աջով ճօճէ, զայս ընդ երկինս հեղեալ աղերս.
Քեզ Լատովեան կոյս բարերար, որ շահապետդ ես անտառաց,
Մատուցանեմ հայրս ինձէն ուխտեալ ըզսա քեզ յաղախին,
Ըզսա որ խոյս ընդ այերս ի թըշնամւոյն տայ փախըստեայ,
Զայս առաջին նըւագ ի զէն քո սպասաւոր աղաչաւոր.
Յիս, դիցուհի. ընկալ ըզքոյդ ի կեղակարծ հողմս աւանդեալ:
    Ասաց, և թափ տըւեալ բազկին ի բաց ըզտէգն արձակեաց,
Հընչեն ալիք, և Կամիլլա ալանայ ընդ նետըն շառաչուկ:
Բայց Մետաբոս մերձ ընդ մերձ տեսեալ զամբոխըն հետամուտ,
Տայ զանձն ի գետ. և յաղթական ի սիզաւոյս երկրէն խըլէ
Ըզնիզակն, եռուղենւոյն նըւիրական կուսին հանդերձ:
Ոչ ընկալան ընդ յարկաւ կամ ի պարիսպս ըզնա քաղաքք,
Եւ ոչ ինքն ի յանձն էառ տալ ի վայրագ կենաց հրաժեշտ,
Ի լերինս անմարդիս և հովուական վարէր կենցաղ.
Ի մացառուտս ըզդըստրիկն և ի փապարս, ի սոնանց զամբկի
Անդէոյ՝ սընուցանէր ըզնա կաթամբ երէոյն,
Ի շըրթունսըն մատաղս ինքնին ճըմլեալ հայրն ըզպըտկունս:
    Ա՛ն ինչ մանկիկն ըզնախկլին եդ ի յերկիր կընիքս ոտից,
Ի գեղարդըն սայրասուր անդէն ըզձեռսըն զինուորեաց,
Կախեաց զուսոյ դըստրըկանն աղեղն և նետ, և փոխանակ
Ոսկեզինիկ վարսակալի, փոխան երկայն արկանելոյ,
Վագրենի արկ ըզթիկամբքն ի գագաթնէ վերուստ ի վայր,
Ի փափկիկ դեռ ի ձեռին տըւեալ ճօճել զէն մանկական,
Եւ ըզգըլխովն ածել ի հիւ ոլորկ ստուամբ ըզպարսատիկ,

Զըստրիմոնեան խորդ կամ կարապ լուսափետուր պարսաքարել ։
Ըզնա յոգունք ի տիւրենեան քաղաքըս մարք փափաքէին
Ունել ի նու, այլ ի նանիր. ինքն Արտեմեաւ գոհ խընդամիտ՝
Զկնուց և կուսութեան յաւերժ ի սէր եկեաց ամբիծ ։
Երանի թէ չէր ի սիրտ նորա անկեալ տենչ այնպիսւոյ
Զինուորութեան, գուն գործել ի բաց վանել ըզտեկրացիս.
Սիրելի ինձ և մի յիմոցս յաւէրժ հարսանց լինէր այժմիկ ։
Այլ ըստիպէ ըզնա արդ ճակատագրին հարկ անհրաժեշտ,
Էջ դու յերկնէ, յաւէրժահարսն իմ, հաս յերկիր լատինական,
Ուր ի հըմայս չարագուշակ մըղի տըխուր ճակատամարտ,
Ընկալ դու զայս, հան դու նետ վըրէժխընդիր ի կապարճից.
Եւ որ զիրանըն գիցանուէր ժըպրհի վիրօք առնել անսուրբ,
Թէպէտ իտալ, թէպէտ Տրովիկ, տացէ դովաւ զարիւնն ի վրէժ.
Խորանաձև ապա ամպով ածից ըզնա ի գերեզման,
Զապաղէն մարմին հիքին ի հայրենիս իւր դարձուցից ։
Զայս պատգամ ընկալեալ յաւէրժհարսին, էջ ի յերկնից
Ընդ նուրբ այերըս շառաչմամբ, ի սեաւ ամպոց շըրջապատեալ ։
Բայց զօրականըն տրովացի, և այրուձին միահամուռ,
Ի պարիսպս յայնժամ մատչէր առ զօրավարս ետրուրացիս,
Բաշխեալ ի վաշտըս թըւով. ի լայնալիր անդ ի դաշտին
Սալասըմբակ խաղայր ձիանն ընդոստ ի վեր խըրխընջելով,
Եւ նըւաճեալ սանձիւք խեռէր դըժոխըմբեր յայսկոյս և յայն ։
Նիզակախուռն յայնժամ քըստմնի դաշտն երկաթով, և արտորայք
Զինուք բարձամբք շուրջ փայլէն. անտի և ինքըն Մեսապոս,
Լատինք երագունք, Կորաս եղբարբն ի միասին,
Եւ Կամիլլայ օրհորդին հեծելագունդ, երևէին
Ի դաշտին ընդդիմամարտք, և գեղարդունըս կըշռակի
Եւ տէգս ի բաց արձակէին՝ բազուկ ի յետըս նահանջեալ ։
Զայրանայ խուռն ամբոխին ընդ վըրընջիւն երիվարաց,
Եւ ճակատք երկաքանչիւր ընդ մէջ նետից յառաջ խաղան
Բարձեալ յանկարծ աղաղակ, և խրախուսեն ըզխըրխընջոտ
Երիվարս. շուրջ տեղան նետք որպէս տարափ ձեան թանձրախիտք,
Եւ ստուերացեալ ծածկի երկին. յայնժամ Տիւրէն և կորովին
Ակոնտես, յեցք ի նիզակս ընդդէմ միմեանց նախայարձակք,
Ահագին շառաչմամբ գիմեն ի մարտ, և ընդհարեալ
Ի թափոյ երիվարացըն լանջ ընդ լանջ խորտակին,
Եւ Ակոնտես որպէս շանթիւ հարեալ, գլերդ վէմ խոյիւ ձըգեալ,
Կործան ի բաց անկանի, փըչէ ըզշունչ իւր ընդ այերս ։
Խուճապեցան յանկարծակի լատինացիք, և ըզթիկամբք
Ածեալ զասպարս՝ անդր ի պարիսպըս դարձուցին ըզձիան ։



Յոյնժամ տեւկրեանք յառաջ խաղան, մըղէ ըզզօրս իւր Ասիլաս.
Այլ այն ինչ մերձ ի դրունս հասեալ, խրախոյս անդրէն բառնան Լա-
Եւ շըրջէն ըզճապուկ երիվարացըն պարանոց, (տինք
Ի փախուստ դառնան տեւկրեանք թողեալ ըզսանձս համարձակ.
Որպէս ծով զի երրադարձ առեալ հոսանս՝ մերթ ի յերկիր
Կուտէ զալիս և ի ժայռըս փըրփրադէզ, թանայ զաւազ
Յորձանօքըն շուրջ ի բաց, և մերթ ալիքն յետս ընկըրկեալ
Խուսեն ի ժայռից, թողուն զափունս, սահին ի հուն ։
Երկիցս Եարուրք ըզհառուտուլեան զօրս ի պարիսպս ընկըրկեցին,
Երկիցս ինքեանք վանեալ ի բաց՝ ածին զասպարս ըզթիկամբք.
Այլ յերրորդումըն ճակատու համախըմբեալ գունդք երկուստեք,
Այր ընդ այր եկին ի կռիւ. անդ էր լսել ըզհեծութիւն
Անկելոց, թաւալէին զէնք և իրանք յարիւն հոծ,
Եւ ձիանըն կիսամեռ խառն ընդ հեծեալըս տապալէր ։
Սաստկանայր ի տեղւոջն անագորոյն պատերազմ.
Արսիլոքեայ ոչ իշխելով յինքն ի Հռեմուլ յարձակել,
Զըգեաց ըզտէգ իւր ի ձին, թող ընդ ունկամբըն խորամուխ.
Ի կարեվէր հարուածոյն սալասըմբակն ըստահակեալ,
Եւ ի վեր խոյացեալ՝ դափ ընդ այերս հարկանելով,
Ընկէց ի բաց ըզվերելեակն. և թաւալէր նա ընդ երկիր ։
Կատիլլոս հար ըզՅոլաս, և զՀերմինի խարտեաշագեղ
Ըզյաղթն ոգւով, ըզյաղթ մարմնով և քաջազէն, որ գըլխիբաց
Եւ հոլանի ուսովք անահ ի հարուածոց՝ ընդդէմ զինուց
Անպատըսպար դիմագրաւէր. ի միջնողունըս նորա
Լայնաթիկունըս թափանցեալ նիզակն ի խորըս տատանէր,
Կարկամեալ զայրն ի ցաւոց. գընայր արիւն թուխ շուրջ ի բաց,
Որեարն ի մահ գեղեցիկ դիմէր վիրօք, գործէր նախճիր ։
Բայց Ամազոնըն Կամիլլա կապարճ ի յուս խայտայր անդ,
Ի նախճիրըս մարտին, մին ի կողիցն հոլանի.
Մերթ ըզճապուկ գեղարդանց սըփռէր ձեռամբ տեղ և տարափ,
Մերթ ըզհուժկու յափըշտակէր անխոնջ աջով վաղակաւոր.
Եւ թէ երբեք յետըս վանեալ տայր նա տեղի, զերագաթև
Ուղղեալ ըզնետս արձակէր շըրջեալ զաղեղն ի թըշնամիս ։
Գնային ընտիրք ըզնովաւ համհարզք, և կոյսըն Լարինա
Եւ Տուլլա, և պըղընձի սակրըբն ի ճօճ Տարպէա,
Իտալուհիք՝ զոյս դիւցազնըն Կամիլլայ ընտրեալ էր իւր
Նաժիշտս ի սպաս ի ցանկալի խաղաղութեան և ի մարտի,
Իբր Ամազոնք թրակուհիք մինչ նըկարէն վառեալ զինուք
Տան պատերազմ ըզգետափունս հընչեցուցեալ Թերմոդոնի,
Կամ պար առեալ զՀիպպոլիտեաւ. կամ մինչ ի դարձ առնել կառաց

Փաջաղինին Պենթեսիլեայ՝ լուսնաձեւքըն վահանօք
Պատի զնովաւ ճըչիւ մեծաւ և ամբոխիւ գունդ կանանւոյ։
Զո՞ արդ նախկին և զո՞ յետին, գոռ օրիորդ, հարեր ի մահ.
Եւ քանիօն ի մարտի անդ արկեր յերկիր դիակոյտ։
Զեւմենեայ զորդւոյ Կլիտեայ հար նախ ընդլանջ անպատըսպար,
Զերկայնաձիգ արկեալ մայրին թափանց ի սիրտ ախոյենին.
Նա ուղխօրէն ժայթքեալ արիւն և տապալեալ եխած զերկիր
Արիւնըռուշտ, և ըզվիրօքն ի մեռանելըն թաւալէր։
Ապա զԼիրիս և զՊագասոս, մինչդեռ Լիրիս ըղխոցելոյ
Ընդ իւրև երիվարին բուռն ըզսանձիցն հարեալ ձըգէր.
Մինչ անագան միւսն ապաղէն ձեռն անկելումըն կարկառէր.
Երկաքանչիւր թաւալգըլոր անկան տապաստ ի միասին։
Յաւել ի նոսին և զհիպպոտեանն Ամաստրոս.
Ապա յանկարծ ի բացէ հասեալ վարէր տէգ ի ձեռին
ԸզՏերէաս և զԱրպալիկ, ըզԴեմոփոն և ըզԿրոմիս,
Եւ որքանիս էարկ բազուկ օրիորդին գեղարդունս,
Նոյնքանիք ի փռուգացւոց անկան տապաստ արք ի յերկիր։
Յանժամ ի նոյն վայր ի հեռուստ, վառեալ ի զէն անծանօթ,
Յապիգեան երիվարաւ Որնիտ որսորդ գայր հասանէր.
Ծածկէր ըզլայն թիկունսըն մորթ, մարտիկ ցըլկի կողոպուտ,
Ծածկէր ըզգլուխ նորա կառափըն գայլենի անհեթեթ
փեռեկ շըրթամբք և ծնօտիւք, ըսպիտակօքն հանդերձ ժանեօք.
Զինէր գեղջուկ ըզձեռսըն տէգ, ըզգնայր ի մէջ գընդից զօրաց
Ուսովք չափ գեր ի վերոյ զամենեքումբք ամբարձեալ։
Յեղակարծում օրիորդն (ի խառն մարտին չէր դըժուարին)
Եհար ըզնա, և ի վերայ կացեալ՝ ասէ զայրագին.
Կարծէիր տիւրենացիդ վանել էրէ ի յանտառի.
Ահա եհաս ժամ զի տացէ խորոխտումըն քո վըրէժ զինու
կանացւոյ. այլ տարցիս ուրուականացըն հայրենեաց
Ըզփառըս զայս ոչ դուզնաքեայ, անկեալ տիգաւըն Կամիլլայ։
Յետոյ եհար զՈրսիլոք և ըզԲուտէս, ըզտեկրացիս
Յաղթանդամս. ըզԲուտէս ոսոխ ի տէգ նիզակին,
Ուր սաղաւարտըն համբուրի ընդ լանջապահ, ընդ որ փայլէ
Ուլն հեծլոյն, ուր ըզձախոյ ուսոյ ի կախ կայ վահան.
Իսկ զՈրսիլոք փախըստեամբ պատրեաց, զի մեծ առեալ շըրջան
Եւ ի ներքուստ հատեալ զըլորտն՝ ըզհետամուտն հալածելով,
Յանկարծ ի վեր կանգնեցաւ, և զկորովին էարկ սակուր
Երիցս ի զրահ ոսոխին, և ի յոսկերսըն զայն նըստոյց,
Մինչ նա աղերս և պաղատանս հեղոյր բազում, և ջերաջերմ
Ուղեղըն ընդ դէմըս նորին էջ ի վիրաց անտի հոսեալ։



Ապեննեանցըն բնակչի քաջամարտիկ որդին Աւնեայ,
Ոչ յետին ի Լիգուրս՝ ցորչափ ներէր ճակատագիր
Նըմա ըզդաւ, եւ ընդ առաջ. և ահաբեկ ընդ յեղակարծ
Տեսիլն եղեալ՝ ըզկայ եառ. տեսեալ զի ոչ ևըս կարէր
Խոյս ի մարտէն տալ փախըստեամբ, և ոչ վանել ըզդըշխոյն
Հասեալ ի կալս, մըտաբերեաց ի խորամանկ դաւ, և ասէ.
Զի՞նչ մեծ լիցի խրոխտալ իգիդ վըստահ ի ձի ամեհի.
Թող անդր ըզյոյս փախըստի, և պատրաստեաց հետի ընդ իս
Ելանել դէմ ընդ դէմ զուգահանդէտ ի մենամարտ,
Եւ ծանիցես ում ի սնապարծ յոխորտանացդ հասցէ կորուստ։
Ասաց զայս. իսկ նա վառեալ դառն ի զայրոյթ և ի մորմոք,
Տայ մարտակցին զերիվարն, և հաւասար ի զէն՝ հետի
Վահան փայլուն ի ձեռին, սուսերամերկ արձանանայ.
Այլ պատանին իբր յաղթական եղեալ դաւով, շըրջէ ըզսանձ
Փութանակի սրանայ ի բաց՝ երկաթազէն գարշապարաւ
Մըտրակեալ զերիվար երագընթաց ի փախուստ։
Լիգուրացիդ հաւատադրուժ, զուր ի յոխորտ սիրտ քո սիգաս,
Զուր խորամանկ հնարիւք զարուեստ քո հայրենի առնուս ի կիր.
Մի՛ ողջամբ ըզքեզ պատրանք առ խաբուսիկն ածցեն Աւնոս։
Զայս օրիորդն ասացեալ, հրաձև երագ գարշապարօք
Հասանէ զհետ երիվարին, բուռն ըզսանձուցն հարկանէ,
Դիմամարտի, և ոսոխիմ խընդրէ վըրէժ արեամբ նորին,
Այնու դիւրաւ՝ որպէս բազէ դիցանըւէր բարձր ի վիմէ
Ըզհետ մըտեալ աղաւնոյ ընդ ամպս ի վեր թըռուցելոյ,
Եւ ըմբըռնեալ ըզնա, մագըլօքըն կեղեքէ ըզփորոտին.
Յայնժամ արիւն և փետուրք խըլեալ թափին ընդ օդս ի ստոր։
Այլ որ նըստի՛ն բարձր ի կատար Ողիմպեայ Հայրըն բոլորից
Մարդկան և դից, ըզտիւրենեանն յարոյց Տարքոն յանդուգն ի մարտ,
Սայրասուր մըտրակաւ դըրդեալ ըզնա ի զայրոյթ.
Հապա Տարքոն ձիավարեալ ուր գործէին նախճիրք արեանց,
Ի մէջ զօրաց փախըստէից պէսպէս բանիւք քաջալերէր
Զայրուձին, յանուանէ զիւրաքանչիւր յորջորջելով,
Եւ վանեալսն անդրէն խրախոյս այսպէս ի մարտ մատուցանէր.
Զի՞ երկընչիք, ո՛ տրովացիք, տաղտուկքդ միշտ ի պատերազմ,
Եւ ոչ երբեք ըստ արժան բաւականին աւաղելք.
Ուստի՞ ի ձեզ այդ վատութիւն, կին որ ըզձեզ վարէ ի ցրիւ,
Եւ ըզբանակդ յողնախումբ յետս ի փախուստ դարձուցանէ.
Առ ի՞նչ երկաթ ի ձեռին, առ ի՞նչ կըրէք զէն ընդունայն.
Այլ առ Աստղիկըն չէք պըղերգ և ի ճակատ գիշերամարտ։
Ուր բաքոսեանըն կոր սըրինգ ըզձեզ ի պար հրաւիրէ,

Ի սպաս խորտկաց և ի բաժակըս լնուլ անշամոյ,
Ընդ սեր և ընդ եռանդն ի ձեզ, ուր դիցն աշող հաւաշընմայ
Զայնէ ի խորս անտառաց ի պարարակ զոհից զէնմունս:
Եւ զգոյդ ընդ բանին՝ մըտրակ ի կուշտ արար ձիոյն,
Ոգի ի բախն եշաս ի խուռն անդըր մարտին, և սպառնալեօք
Դիմեալ ընդդէմ Վենուլեայ, յափըշտակեաց զոստին աշով
Ի ձիոյն, և ուժգնապիրկ ունէր ըզնա զառաջեաւ:
Յառնէ յերկինս աղաղակ, շըրջէն Լատինք առհասարակ
Զաչս ի նա. ինքն ընդ դաշտըն ճախր առեալ հրաձև, ածէր
Զայրն և ըզզէն. յայնժամ բեկեալ ըզտէգն ի բնոյ նիզակին,
Յուզէ ըզկողմն անպատըսպար՝ տալ մահացու հարուած ընդ այն:
Իսկ նա ընդդէմ ճըգնեալ վանէր զաջն ի փողոյն, ուժով զուժոյ
Ըզդէմ կալեալ. որպէս արծուի շէկ զօձ յանկարծ յափըշտակեալ,
Բարձրաթըռիչ ունի զոտղունն ուժգին ոտիւք և մագլօք.
Նա կարեվէր, ի գալարըս կամակոր ցըցուէ ըզթեփս,
Եւ ուղղաբերձ ածէ շըչիւն. ոչ ինչ նըւազ ինքն ըստիպէ
Ըզդիմամարտըն կոր կըտցաւ, թևօքըն զօդըս բաղխելով.
Ոչ այլազգ խայտայր Տարքոն յաւարն առեալ ի տիբուրեանց:
Զօրավարին յաջողութեան ըզհետ դիմեն մէոնացիք.
Յայնժամ Արոնտ, ճակատագրեալըն ի մահ, պատի նախայարձակ
Տէգ ի ձեռին հնարիւք բազմօք ըզթեթևոտըն Կամիլլաւ,
Շըրջի խընդրէ ուր ըզքախտին էր գըտանել զևըս դիւրին.
Եւ յոր կոյս կոյսն ի մէջ գընդին կատաղաբար երթևեկէր,
Անդր հասանէր և ինքն Արոնտ՝ լուռ հետազօտ հետոց կուսին.
Եւ ուր յաղթօղն օրիորդ ի թըշնամւոյն խուսէր ի բաց,
Անդ պատանին ըզճապուկն երասանակ շըրջէր զանխուլ,
Եւ ընդ ըննաւ յայսկոյս և յայն շըրջան առեալ՝ մուտըս խընդրէր
Ճօճելով օսխրիմ զանխուսելին իւր ըզնիզակ:
Դիցանըւէրըն Քլորէ, երբեմըն քուրմըն Կիւբելեայ,
Վառեալ ի զէն փռիւգացի, յանկարծ փայլէր զայր ի հեռուստ՝
Ըզփըրփրերախ վարելով ձին, զոր յօսկեզօծ ի պըղընձոյ
Ի պալարըս փետրաձևըս դըրուագեալ ծածկէր քեմուխտ.
Ինքըն պայծառ ի կարմիր ձանձախարիթ չընաշխարհիկ,
Լիկիացի եղջերեաւ ըզկորտինեան արձակէր նետ.
Հընչէր աղեղն ոսկի զուսովք, ոսկեայ ըզձին էր սաղաւարտ.
Ոսկի խարտեաշ ըզքըղամիդըն քըրքմագոյն կերպասեղէն
Եւ զխորշաքաղըն խարշափունս հանգրիճաձև շուրջ ժողովէր.
Ասղնէնըկար արկեալ ներքնակ, բարձից խուժիկ սըռնապանս:
Զըմա և եթ օրիորդն ի խառն մարտին յանդըգնաբար
Ըզհետ մըտեալ, ընդ գունդն ոչջոյն շահատակէր անըզգոյշ.



Ի տենչ կանացի առնուլ աւար և կողոպուտ,
Զօն ի մեհեանս արգադիր կախել ըզզէնըս տեկրացիս,
Կամ յարշաւէլն ի յորս գընալ յոսկի կապուտըս ճոխաճեմ:
Յայնժամ Արոնտ պարապ առեալ ձըգէ զգեղարդն ի դարանէ,
Զայսօրինակ հեղեալ աղերս. Ո՛վ աստուածոց վեհդ Ապոլոն,
Սորակտեայ սըրբոյ լերինըն պահպանիչ, ում նախընծայ
Մատուցանեմք պաշտօն, ում հուր տածէ մայրեաց չեղջակոյտ,
Ոյր պաշտօնեայք վըստահք ի կրօն կոխեմք ըզփուշ կուտեալ ի բոց,
Ամենակալ Հայր, տուր ջընջել ըզնախատինըս մեր զինուք.
Ոչ ըզկուսին պարտելոյ խընդրեմ աւար և կողոպուտ
Յախոյեան. արութիւն ևեթ պարծանս ինձ յաւելցէ.
Անփառունակ դարձայց յօժար ի հայրենին իմ քաղաք,
Եթէ միայն ժանտս այս անկցի ի ձեռանէ իմմէ հարեալ:
Լուաւ Փեբոս մասին ուխտիցըն պատահել պատանւոյն,
Ըզմիւսն արար մասն ի դերև ի նուրբ այերըս ցընդեալ.
Եթող նըմա յանկարծ տապաստ զանըզգայեալըն Կամիլլա
Արկանել. այլ մի ըզնա խորոխտ հայրենեացն ողջ տեսանել.
Եւ ի հարաւըս մըրրիկք զաղերս նորա յեղաշըրջեն:
Ընդ շըկահել նիզակին շեշտեալ ընդ օդս ի ձեռանէն՝
Անդըր ճակատք ուշ ունէին. զաչս ի դըշխոյն շըրջեն Վոլսկք
Առ հասարակ: Իսկ օրիորդն ըզգաց ինչ ոչ ամենևին
Ոչ յուզելոյ այերց, և ոչ տիգին ընդ օդըս սըլացման,
Մինչև հարաւ այն ընդ կողիւըն հոլանեաւ, և խորամուխ
Զօրիորդին եարբ արիւն. ճեպին ընկերք իւր աշ ընդ աշ
Յօգնութիւն, և ի վեր զանկեալըն առնուն ըզտիրուհին:
Կանխէ անդէն խոյս տայ Արոնտ երկիւղախառըն խընդութեամբ,
Ոչ ևս իշխէ վըստահել ի տէգ, և ոչ զինուց կուսին
Ըզդէմ ունել, այլ որպէս գայլ չև թըշնամեացն ըզնա նետից
Հալածեալ՝ դիմէ յանկոխ բարձր ի լերինըս սուզանի
Ի սպանանել իւր ըզհովիւ կամ զըւարակ յաղթանդամ,
Գիտակից եղեռանն աշխէ ըզձետ իւր ընդ իւրև
Պարուրեալ ամփոփէ, և ի մայրիս ապաւինի.
Ոչ ինչ ընդհատ խուճապեալ Արոնտ խուսէ յաչաց ի բաց
Գոհ ընդ փախուստ, և խառն ի խուռն արկանէ զանձն ի մէջ զինուց:
Օրիորդըն կիսամեռ խըլէ զնիզակն ի վիրէն.
Այլ երկաթեայն ի խորս անդ կըռուեալ ի կողըն մընայ տէգ.
Անկանի ոդեսպառ, փակին աչկունքն ի ցուրտ մահուն.
Գունատին՝ դէմքըն երբեմըն ծիրանիք, և առ Ակկա
Մտերմագոյն և կարեկից իւր զայս ի շունչ վախճանին
Բարբառի. Յարդ կարացի քոյր իմ Ակկա, այլ արդ վէրք

Դառնակըսկիծ քաղըն զոգիս, արդ ամենայն ինչ շուրջ զինեւ
Նըսեմանայ խաւարաւ. փախիր եւ զայս դու առ Տուրնոս
Տարջիր վերջին յինէն խըրատ. տոկալ ի մարտ, վանել ի բաց
Ըզտրովացիս ի պարըսպաց. բարեաւ մընա: Եւ ընդ բանին
Թողեալ ըզսանձ, զանձն ակամայ հեղու յերկիր. ծաւալի
Ցուրտ ընդ մարմինըն տակաւ, զէնք ի ձեռաց իւրոց սահին.
Խոնարհի ուլըն թողացեալ, հակի գըլուխն ընկճեալ մահուամբ,
Եւ հոգին զայրացեալ խուսէ ի ստուերըս դառնահեծ:
Յայնժամ յառնէ յոսկեղէն աստեղս ի վեր աղաղակ մեծ.
Սաստկանայ պատերազմ ընդ անկանելըն Կամիլլայ.
Յարձակին համախուռըն տեւկրացիք առ հասարակ,
Զօրավարք տիւրենացիք, եւ Եւանդրի արկադացւոյ
Հեծելազօրք: Բայց Ոպիս Եռուղենւոյն դէտ ի կատար
Բարձու լերին աներկեան կայր ի զընին պատերազմին.
Իբրեւ ետես մըլեալ ի խառն աղաղակին ըզպատանին,
Եւ զԿամիլլայ ողորմ մահուամբ տուժել ըզկեանս, յոգւոց եհան
Եւ ի խորոց սըրտէ ձայնէր. Աւաղ կարի անգութ մահուամբ
Ո՛ օրիորդ լուծեր վըրէժ, ի խորտակումըն տեւկրացւոց
Ճըգնեալ մարտիւ. եւ ոչ օգնեաց քեզ լըքելումըդ յանտառի
Ըսպաս տանել Անահտայ, եւ ըզկապարճըս մեր բառնալ
Կըրել յուսի, այլ ոչ թողցէ անփառունակ ըզքեզ դըշխոյն
Յորհասի քում, ոչ մըթին ի մէջ ազգաց լիցի մահ քո,
Եւ մի անվըրէժ ըսպանելոյ թողցես համբաւ.
Զի որ ըզքոյդ թըշնամանեաց վիրօք մարմին նըւիրական,
Հատուսցէ զարժանին մահուամբ իւրով ըզպատուհաս:
Ի վաղեմըն Լաւրենտոն իշխեցողին անդ Դերկեննեայ
Ի ստորոտ բարձու լերին էր հողակոյտ շիրիմ մեծ
Հովանացեալ ի սըղոցեաց. անդ դիցուհին չըքնաղագեղ
Արագաթեւ հասեալ եկաց, եւ ի բարձուէ հողաբըլրոյն
Դիտեալ զԱրրոնտէս՝ զի պերճացեալ փայլէր զինուք,
Ընդէ՞ր, ասէ, գընաս ի բաց, այսր ըզգընացըս քո ուղղեա,
Յորհաս քո մատիր, զարժանապարտըն Կամիլլայ
Անահտական զինուք առնուլ վարձ, անկանել դիաթաւալ:
Ասաց, եւ նետ երագաթռիչ ձըգեալ յոսկեացըն կապարճից,
Լարեաց զեղջերեայն ուժգին ի ձեւ թըրակուհւոյ՝
Մինչեւ ծայրիցըն թեքելոց մատչել յիրեար գալ ի համբոյր,
Եւ ուղղաձիգ բազկօք ունել ձախոյն ըզսուր ծայր երկաթոյն,
Եւ զլարն աջոյն առ ըստեամբ, ընդ գեղարդեանըն շըկահել
Ի դըղըրդել այերաց՝ ըզգաց Արրոնտ զաղդ հարուածոյ
Նետին յանկարծ ի յանձին, եւ ի յետին իւր հեծութիւնս



Ըմպա ի շունչ վախճանին թողին ընկերքն անդ ի փոշւոջ
Ցածծանօթ դաշտավայրին իմոռացօնս արկեալ ի սպառ:
Յայնժամ Ոպիս յեթերայինըն թեւածէ յՈլիմպ ի վեր
Ի փախուստ. թեթեւոտինըն Կամիլլայ դառնայ խոկոյն
Հեծելազօր՝ կորուսեալ ըզտիրուհին, եւ Հըռուտուլք
Խուճապեալ փախչին ի բաց, փախչի եւ գոռն Ատինաս.
Խոյստան զօրավարք, եւ գունդք լըքեալ դիմեն յանքոյթ
Եւ ի պարիսպըս ձիարշաւ աճապարեն. ոչ ոք իշխէ
Ըզգէ՞ն ունել հետամըտիցըն տեւկրացւոց մահաբերից,
Կամ ճակատել ընդդէմ նոցա ի պատերազմ. այլ խոնջք կըրեն
Զաղեղըն թուլըզթիկամբ. քառոտանին սըմբակակոխ
Ընդ դաշտավայրըն դիւրափուխր արշաւասոյր դոփէ զերկիր,
Եւ մըրըըկեալ փոշին ի վեր ծածկէ զպարիսպըս թուխ ի մէգ.
Մարք ի բարձուէ դիտանոցաց մինչեւ ցաստեղս երկնից բառնան,
Ըզկուրծըս կոծելով, կանացական աղաղակ:
Որք փութային հասանել ի դրունս անփակըս ճեպընթացք,
Խառնամբոխ թըշնամին հաս ի վերայ, հար ըզնոսա.
Ոչ կարացին խուսել ի դառըն մահուանէ, այլ առ սեմովք
Պարըսպացն հայրենեաց եւ ի յամրի տանց կարեվէրք
Փըչեն զոգիս. կէսք արկանեն ըզդուրս ընդդէմ, ոչ տան մուտ
Ընկերաց. եւ ոչ ի ներքըս զայնոսիկ ընդունին,
Որք աղերս առ պարըսպօքն արկանէին զինուորակիցք:
Պատահէ անդ կոտորած աղիողորմ, որոց զինուք
Ի պահ մըտիցըն կային, եւ որք զինուցն ընդդէմ գային.
Կէսք ի նոցունց յանդիման արտասուալից աչաց ծնողաց
Տապալին համակործան ի փոս փըլուզեալ ի խըռանէն.
Ասպք յախուռըն սանձարձակ մըտրակելովք երիվարօք
Հարկանեն ըզդըրունս, եւ զամրափակ ինից դրանդիս:
Ի բարձուէ պարըսպացըն մարք ինքնին, ի ճըշմարիտ
Վառեալք ի սէր հայրենեաց, ի տեսանելըն ըզԿամիլլա
Ի յետնումն անդ ի մարտի՝ դողդոջ բազկօք նետս արձակեն,
Եւ կարծրակուռ վիրգըս կաղնեայս փոխան զինուց ճեպ ի ճեպոյ
Եւ կոճեղս եւ կիսայրեաց հանեն խանձողս, ըղձակերտեալք
Տալ նախկին զանձինս ի՛ մահ վերամարտիկ լեալ պարըսպաց:
Յայնըմ վայրի դառն առ Տուրնոս հասանէ բօթ յանտառի
Եւ ահագին ազդըկաւ լընու Ակկա ըզպատանին,
Գուժէ զվըլըսկաց հարեալ ճամբար, անկեալ տապաստ ըզԿամիլլա,
Ըզթըշնամիս ոխերիմըս մերձեցեալ, հաշտ Արիսիւ
Աւար հարեալ զամենայն, մինչ՝ ի պարիսպըս զահ հասեալ:
Նա զայրագին, զի հրամանք Դիոյ այսպէս կամէին խիստք,

*Թողու ըզըլուրըս պաշարեալս, և զդըժուարուտ թողու զանտառս։*
*Այն ինչ անցի ետ ինքն անտի և ել ի դաշտ, ահա եհաս*
*Ենէաս, և եմուտ յանտառախիտ անդր անխափան,*
*Եւ ել ի ծագ անդըր բըլրոյն՝ խոյս ի նըսեմ տըւեալ մայրւոյն.*
*Այսպէս երագ երկաքանչիւր գընդօք իւրեանց բոլորեքումբք*
*Մերձ ի պարիսպըս պատահեն, ոչ ի բացեայ յոյժ ի միմեանց։*
*Ի նըշմարել Ենեայ զհովիտըն շուրջ ծածկեալ ի ծուխ փոշւոյ,*
*Եւ զլաւրենտեան գունդս ի հեռուստ, և ի գիտելըն Տուրնոսի*
*Զամէհին Ենէաս ի մէջ զինուց, և ի լըսել*
*Զոտնաձայն և ըզխըրխինջ երիվարաց, լինէր անդէն*
*Ձեռն արկանել ի պատերազմ, փորձել նոցա ըզբաղդ զինուց։*
*Այլ վարդագոյն ահա փեբոս յիբերական ալիս թանայր*
*Ըզձիանն, ածէր անդրէն ըզցայգ, և տիւ սաշէր ի բաց.*
*Նըստին բանակք առ քաղաքաւն, ածեն պատնէշ շուրջանակի։*

---

# ՊՈՒԲԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՆԻ

# ԵՆԷԱԿԱՆԻՆ

## ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի պարտել Լատինաց յերկրորդ ճակատ, հաստատի Տուրնոս մենամարտել ընդ Ենեայ: Կուին հանդիսիւ մեծաւ պայմանք մարտին և դաշինք ընդ Լատինոս, ընդ Ենէաս և ընդ Տուրնոս: Աշմէ զուխտն Յուտուրնա քոյր Տուրնեայ, դրդեալ 'ի Հերայ. և Տոլումնիոս պատիր հմայիւք յաղթութիւն իւրոցն խոստացեալ, գիմէ նախայարձակ 'ի տրովացիս: Ենէաս հարեալ նետիւ, սակայն խուսել 'ի մարտէն. և 'ի մեկնել նորա, Տուրնոս գործէ կոտորած մեծ: Գիկտամնեաւ բանջարով գվէրս Ենեայ դարմանէ Աստղիկ: Ենէաս զօրացեալ դառնայ անդրէն 'ի պատերազմ, և ձայն տայ Տուրնեայ յասպարէզ. բայց Յուտուրնա, որ 'ի բաց վարեալ զՄետիսկոս կառավար Տուրնեայ՝ ինքն կառավարէր, շրջէ զերասանակ կառաց նորա յերեսաց Ենեայ, զի մի պատահեսցեն ընդ միմեանս 'ի մարտ. իսկ Ենէաս մղեալ զզօրսն 'ի պարիսպս անդր քաղաքին, հուր հարկանէ զմարտկոցաց: Անդ Ամատայ կարծելով ըսպանեալ զՏուրնոս, խեղդ ընդ անձն արկեալ մեռանի: Տուրնոս, առ 'ի զերծուցանել զքաղաքն 'ի ձեռաց Թշնամեաց, դառնայ 'ի մենամարտ: Մենամարտին Ենէաս և Տուրնոս, յաղթէ Ենէաս. և 'ի սրախողխողն առնել զՏուրնոս, 'ի դուլթ շարժի յաղաչանաց նորա. այլ տեսանելով զանձամբ նորա զկամար Պալլասայ, անդրէն զայրանայ, և սպանանէ զոսոխն:

# ԵՆԷԱԿԱՆ

## ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Տեսեալ Տուրնեայ՝ զի Լատինք ի ձախողել պատերազմին
Սըրտաբեկք, յինքըն կային յուսով խոստմանն ակընկառոյցք,
Եւ ի զայրոյթ անողոք վառեալ ի սիրտ իւր խիզախէր:
Որպէս առիւծ կարեվէր ի փիւնիկեան անապատի,
Հարեալ ի կուրծըս յորսորդաց զօրհասական շարժէ ըզզէնս,
Բաշխիքըն ծեծելով ըզպարանոցն աճառապատ,
Եւ խորտակեալ ըզշամփուր յելուզակին խորամուխ,
Մըռընչէ ամեհի արիւնըռուշտ կոկորդիւ,
Ոչ ինչ այլազգ յայնժամ Տուրնոս ի բարկութիւն բորբոքեալ,
Այսպէս զայրագին առ Թագաւորըն բարբառի.
Կազմ ուստիկ կայ Տուրնոս, չիք ինչ պատճառ իւ վասն որեար
Նահանջեսցէ ըզխոստումն՝ յետս ի կալեոց ուխտիցըն կալ.
Իջանեմ արդ ի մենամարտ, մատո հայր զոհ, և ուխտըս դիր,
Կամ աջովս ըզտրովացին փախըստական յԱսիոյ
Արկից ի Տարտարոս, և միայնակ ըզկեղտ հանուրց
Լատինաց բարձից սուսերս, կամ պարտելոցըս տիրեսցէ
Տրովացին, և տացի Լաւինիա նըմա ի կին:
Ում Լատինոս ի հանդարտել սըրտին արար պատասխանի.
Ո՛վ վեհազըն պատանի, որչափ մեծաւ դու քաջութեամբ
Խրախուսես, այնչափ ժրագոյն արժան է ինձ հոգ ունել քեզ,
Եւ զգուշագոյն քեզ յուշ ածել ըզպատահարըս խիթալիս.
Են քեզ սահմանք հօր քո Դաւնեայ, են և յոլովք զինու առացեալ
Ի քէն քաղաքք. են իսկ գանձք Լատինոսի և բարեկամք.
Իցեն և այլ օրիորդք, ոչ աննըշանք ի Լատիոն
Եւ ընդ երկիր Լաւրենտեան. Թող ինձ և զայն ասել անկեղծ,

Որ քեզ չիցէ արդեօք հաճոյ, այլ քաջ կըշռեա զայն ի մըտի.
Ձեր ինձ օրէն նախընծայից տարփաւորաց ըզդուստր իմ տալ
Ի հարսնութիւն, ի մարդկանէ և ի բնաւից ազդեալ ի դից.
Սակայն պարտեալ ի սէր քոյին, պարտեալ ի գութ համարիւն,
Եւ ի տըխուր արտասուաց հարսին իմոյ յաղթահարեալ,
Խըզի զկապանս ամենայն, չետու զխօսեալըն փեսային,
Եւ առի զէն անիրաւ. տեսեր Տուրնէ, քանի՛ արկածք
Ցայնըմ հետէ, և քանի՛ մարտք հասանեն ինձ. քանի՜ն
Դու ինքնին կըրես ճըգունս. երկիցս ահա մարտիւ մեծաւ
Նըկուն եղաք, և մազապուր ի քաղաք այսըր զերծուցաք
Զիտալիոյ յոյս. տակաւին արեամբ մերով եղկըս Տիբեր
Գըլէ զալիս, և լայնալիր դաշտք ի սպիտակ ծածկին յոսկերս:
Հի՞մ այսքանիցս յեղաշըրջիմ, և ցնորք ըզմիտս իմ փոփոխեն.
Եթէ ուխտ հաշտութեան մահուամբ Տուրնեայ ընդ տեկրացիս
Հարկ է կըռել, էր կենդանեաւ նորին չիցէ առնել զըրաւ
Պատերազմի. զի՞նչ ասիցեն զինէն Հռուտուլք համազգիք,
Եւ զի՞նչ Իտալիա առ հասարակ, եթէ երբեք
Ցանձն առից ի վտանգ մահու մատնել ըզքեզ, քաւ լիցի ինձ,
Որ խնամախօս ընդ իս՝ ըզդուստր իմ քեզ ի հարսըն խընդրես:
Ցիշեա զյողդողդ մարտին արկածս, ի ծերունի հայր քո խնայեա,
Զոր հայրենին իւր Արդեա ողբայ զթաղծեալն արդ ի բացեայ:
Այլ անողոք ի բանից աստի եկաց զայրոյթ Տուրնեայ.
Նա աւանիկ եւս քան զեւս ըսպեղանեօքըն զայրանայր.
Այն ինչ ապա ոգի առեալ, յաւել այսպէս. Հայր բարեկաւ,
Թո՛ղ անդր ի բաց, աղաչեմ, որ ինչ վասն իմ կըրես հոգ,
Թո՛ղ վասն իմ. ներեա ըզկեանս ինձ ընդ փառաց փոխանակել:
Զըգեմք և մեք ոչ գուղ և բութ երկաթ և նետ, հոսէ արիւն
Եւ ի մերոցս հարուածոց. հեռի կացցէ ի նըմանէ
Դիցուհին մայր, որ կանացեաւ ծածկէ ամպով ըզփախըստեայն,
Եւ ինքն ի ստուեր ծածկի ի սին: — Բայց Թագուհին զահի հարեալ
Ողբայր ընդ նոր պայման մարտին, և առ վըշտին տըրտմեալ ցըմահ,
Արգելոյր ըզփեսայն վառեալ ի մարտ, և ասէր.
Ո՛վ Տուրնէ, միակ ինձ արդ յոյս ծերութեան, հանգիստ հէքիս,
Ի քեզ են փառք Լատինեայ և պետութիւն, ի քեզ յենու
Տունն համօրէն կիսակործան. վասն արտասուացս այսոցիկ,
Վասըն պատուոյն Ամատեայ՝ եթէ իցէ քեզ փոյթ ընդ այն,
Մի ինչ խընդիր է ինձ ի քէն, հրաժարեսջիր ի կըռուելոյ
Ընդ տեկրացին. որ ինչ արկած ի մենամարտ պատերազմիդ
Հասցէ քեզ, նոյն և ինձ պատահեսցէ, իմըս Տորնէ,
Ի միասին ի դըժպըհի լուսոյս լիցի մեզ տալ տեղի,



Զի մի մատնեալ ի գերութիւն՝ տեսից փեսայ ինձ զԵնէաս:
Իբրև լըւաւ Լաւինիա ըզբարբառըն մայրենի,
Արտասուք ըզկարմրերփեան պտոյս նորա ողողեցին,
Եւ հուր յոլով ըզդիմօքըն ծաւալէր պատկառանաց.
Որպէս փըղոսկր հընդիկ յեռեալ ի ծիրանի բոսորային,
Որպէս շուշան բսպիտակ խառնեալ ի փունջ կարմիր վարդից,
Այնպիսի երեսք կուսին ընծայէին երանգ երփին:
Սէր ըզՏուրնեայ խռովէր զոգիս՝ յառեալ ի դէմս օրիորդին,
Եռայր և ևս առնուլ զէն. խօսի հակիրճ առ Ամատէ.
Մի՛ զիս, մի՛ մայր իմ, աղաչեմ, մի՛ արտասուօքըդ խափաներ,
Եւ մի՛ ի հմայս ձախողակս արգելուր զէջ իմ յասպարէզ
Գոռ Արիսին. ոչ ևս օրհաս Տուրնեայ ազատ է ի յամել:
Օ՛ն արդ, Իդմոն, տար յինէն առ բըռնաւորըն փռիգացի
Զըրոյց նըմա անհաճոյ, զի այն ինչ այգըն վաղորդեան
Փիւնիկ անուօք ընդ երկին ձիավարեալ կարմրանայցէ,
Մի՛ ևս ի մարտ ըզտեկրացիս ածցէ ընդդէմ Հըռուտուլաց,
Եւ տեկրականք և հռուտուլեանք լըռեսցեն զէնք. արեամբ մերով
Լիցի վախճան պատերազմին, յասպարիզի անդ խընդրեսցի
Լաւինիա ի հարսնութիւն: Ասաց, և ճեպ տըւեալ ի յարկ՝
Խընդրէ ձիան, և խայտայ ի տես նոցին և ի խըրխինջ.
Որիթեայ ընծայ տըւեալ ի զարդ էր Պիլումնեայ,
Սպիտակափայլըս քան ըզձիւն, արշաւասոյրըս քան ըզհողմ:
Շուրջ կան հապճեպ կառավարք, ըզլանջ ձիոցըն բաղխելով
Ափոյ ձեռին ի շըշափ, և սանդրելով զուլն հերապանծ:
Ինքն արկանէ զանձամբ զըրահ փայլուն յոսկի և ի սպիտակ
Պըղինձ ծըլխեալ, և ցըցանըս կարմրափայլ եղջերաձև
Ածէ ի գլուխ, ճահճաւորեալ զիւրև ըզսուր և ըզվահան.
Ըզսուր զոր վաղ հրազօրն աստուած ձեռակերտեալ էր Դաւնեայ հօր,
Եւ մըխեալ զայն տօրաշէկ ի ստիգականս անդր ի յալիս:
Բուռն ի հըզօրն ապա հարեալ նա ի նիզակ, որ անդ ի ստուար
Ցեց ի սիւն՝ կայր ի միջի ապարանիցն, յափըշտակեաց
Զաւրունկեանն Ակտորի զօրավարի կողոպուտ.
Ճօճէ ահեղ զայն և գոչէ. Ո՛վ որ երբեք ոչ ի դերև
Ըզկոչ իմ արարեր, ժամ է նիզակ իմ ժամ է արդ.
Վեհազն ըզքեզ կըրեաց Ակտոր, կըրէ Տուրնեայ ըզքեզ արդ աջ,
Տուր զտոսխին իմոյ զկիսայր փըռիւգացւոյն տապաստ ըզդի
Արկանել, ըզլանջապանն հուժկու բազկաւ կապտել ի բաց
Եւ խորտակել, ըզթաթաւեալ վարսըս նորա թուրմս ի զըմուռ,
Եւ ըզգանդըրեալըս շանթիւ, քարշել ընդ հող և շաղախել:
Այսպէս Տուրնոս էր կատաղեալ. ի հրաբորբոք դիմաց նորին

Կայծակունք հատանէին, լոյս ի գըժնեայ յաչսն փայլէր.
Որպէս ցուլ ահագին մինչ նախ քան ըզմարտ,
Ոգորի եղջերբք ընդ կոճըղ ծառոյ, ձայն առնէ հողմոց,
Բաղխէ զայերս, հողահանէ ի նախաձեռն առնել մարտին,
Ոչ ինչ ընդհատ Էնէաս, ընդ մայրենի ահեղ զինուք,
Գըրգըռեալ ի զայրոյթ կազմէր յայնժամ ի մենամարտ,
Հաճ ընդ վախճան պատերազմին ըստ պայմանեալ ուխտի դաշին:
Քաջալերէր զընկերս, և զահ տըրտմեցելոյն Յուլեայ սփոփէր,
Ցուցանէր ըզհրաման ճակատագրին, և պատուիրէր
Արանցն ածել առ Լատինոս արքայ անշուշտ պատասխանի,
Առաջարկել նըմա որ ինչ խընդրէր պայման խաղաղութեան:
Այն ինչ տիւըն վաղորդեան ծագէր ի ծայրըս լերանց,
Մինչդեռ արփւոյն ի խոր ալեաց ամբառնային նըժոյգք ի վեր,
Ի լայնելոց լոյս ի ռընգացըն շընչելով համասփիւռ,
Առ պարըսպօք քաղաքին մեծի Հռուտուլք և տրովացիք
Կազմէին բանակ ի մարտ, լուցեալ խարոյկս անդ ի միջի
Հասարակաց դից, և բագինս ի սիզաբոյս հողոյ կանգնեալ.
Այլք բերէին աղբիւր և հուր, ծածկեալք ի քօղըս կըտաւիս,
Ածեալ ի գլուխ աղանիճ: Աւսոնականըն լեգէոն
Յառաջ խաղայր. ի լիոց դըրանց արտաքըս դիմէին
Նիզակախուռըն գումարտակք. աստի տրովեան բանակն ողջոյն
Եւ տիւրեննեան հրոսէն ի զէնըս զանազան, բազառազէնք,
Որպէս յորժամ կոչ առնէ Արէս դըժնեայ ի պատերազմ:
Ընթանային անդ ի մէջ բիւրաւորաց ըսպարապետք
Ծիրանէփայլք վառեալք յոսկի, Մընեսթէոս ասարակեան,
Կորովին Ասիլաս, և Մեսապոս նուաճող ձիոց
Զաւակըն պոսիդեան. և կան ի տալ նըշանին
Ցանձնիւր ի կայս, յեցեալ յերկիր ըզգեղարդունս, հակեալ զասպար:
Յայնժամ արտաքս ի տանց զեղեալ մարք ապաժոյժ, ծերք ապիկարք
Ռամիկն անզէն ի զընին, կէսք յաշտարակըս խըռնէին,
Այլք ի տանիս, և կէսք ի դրունըս բարձրաբերձըս կային:
Բայց Հերա բարձր ի բըլրոյն՝ որ յորջորջի արդ Ալբայեան,
Այլ անանուն էր յայնժամ անփառունակ և աննըշան,
Ակնարկեալ ի դաշտավայր անդր ի քաղաքըն լատինեան
Եւ ի բանակս երկաքանչիւր լաւրենտացւոց և տեւկրացւոց,
Դիցուհին առ դիւցազնըն քոյր Տուրնեայ, որ լըճից
Եւ կարկաջուն գետոց բնաւից էր շահապետ, զի զայն նըմա
Արամազդ արքայն երկնից ամենամեծ ետ պատիւ
Ընդ կուսութեանըն բառնալոյ ի նըմանէ, և ասէ.
Ո՛վ փառք գետոց յաւէրժահարսըն, սիրելի սըրտի իմոյ,



Գիտես զի զքեզ զեր ի վերոյ լատինուհեաց բոլորեցունց
Ցանկըլէր առագաստ վեհին Դիոս մատուցելոց
Վերառեալ կացուցի ըզնակակից ինձ ի յերկինս.
Ուսիր արդ Յուտուրնէ, ըզտըրտմութեան քո ըզպատճառ,
Եւ մի լցիս ինձ մեղադիր. յորմէհետէ թըւէր բախտին
Անտես առնել, և Պարկայից թոյլ տալ անցից ի Լատիոն
Անցելոց, պաշտպան Տուրնեայ և պարըսպացըդ քոց կացի.
Այլ տեսանեմ արդ անհանգէտ ճակատագրիւ ըզպատանին
Դիմեալ ի մարտ, և զախերիմըն զօրութիւն և զՊարկայից
Մերձեալ օր, ոչ հանդուրժեմ ոչ ի տեսիլ ուխտի դաշանցն
Եւ ոչ մարտին. դու թէ ի նպաստ եղբօրդ իշխես ինչ, արասջիր,
Անկ խոկ է քեզ, դէպք ի բարի թերևս հիքացն յաջողեսցեն:
Եւ յասելըն զայսոսիկ աստուածուհւոյն, մինչ Յուտուրնա
Արտասուս հոսէր յաչաց, և երեքկին և չորեքկին
Ըզպարկեշտ կուրծսըն կոծէր, յաւել առ նա կրօնեանն Հերա.
Ոչ արտասուաց է ժամանակ, փութա զերծո՛ թէ իցէ մարթ՝
Ըզհարազատդ ի մահուանէ, կամ դու քեզէն ձայն տուր ի մարտ,
Լըքո զդաշինսըն թերի, ես հրամայեմ, մի երկընչիր:
Այսպէս ըզնա յորդորեալ՝ եթող յերկբայս վարանմիտ
Ի հոգըս տըխուր, և կարեվէր հարեալ ի սիրտ:
Գային յայնժամ թագաւորք. ածի սպասուք մեծաւ Լատին
Քառաձի կառավարեալ, և ի կըրկին վեցեակ ոսկի
Լուսաճաճանչ փայլէ ճակատն ի ճառագայթ՝ հաւոյն իւրոյ
Արեգականն նըշանակ. գայ և Տուրնոս յերկձի սպիտակ,
Աշտեայս կըրկին բատուարասուրըս ճօճելով ի ձեռին:
Անտի և հայրն Էնէաս հռովմէական ազինըն ծայր,
Ի զէն ու ի զարդ երկնային և յաստեղեայ վառեալ վահան.
Եւ Յուլոս առընթեր, մեծին Հռովմայ միւս այլ յոյս,
Խաղան գան իւրաքանչիւր հանդերձ իւրեանցըն բանակօք:
Քուրմն ի սպիտակ յայնժամ ի ձորձ ըզթաւաստեւ խոզի խոչքոր
Եւ գեղմնաւէտ ածէ ամիկ, և ի հրավառ խաշն ի բագին
Մատուցանէ. դառնան յարև նորանըշոյլ, տան մուրկ աղի
Բըռնալիր, ըզճակատ զենլեաց դրօշմեն երկաթով,
Եւ քաւեն ըզբագինս հեղեալ բաժակս ըզնոքօք:
Անդ երկիւղածն Էնէաս սուր յազդերէ հանեալ՝ մաղթէ.
Լեր մաղթողիս ինձ արփի, լիցի վըկայ և երկիրս այս,
Ոյր վասն այսքան կրեցի ճըգունս. դու իսկըն ինձ հայր ամենազօր
Եւ դու կրօնեանդ Հերա, մաղթեմ զաստուածուհիդ, հաշտ ես ընդ իս
Այսուհետև լեր, և դու փառաւորեալդ հայր Արէս,
Որ ըզհանուրց ելըս մարտից իշխանաբար յեղաշըրջես,

Եւ զձեզ կարգամ, աղբիւրք և գետք, ինձ ի վկայս, և՛որ այլ
Ի բարձունս և ընդ կապոյտ բնակեալ անեօք զօրութիւնք.
Եթէ երբեք աւսոնացւոյն Տուրնեայ տացի յաղթանակել,
Պարտելոցըս մեզ հարկ լիցի մեկնել ի քաղաքն
Եւանդրի. տեղի յերկրէ աստի տացէ Ասկանի.
Մի ևս Ենեանք զէն առցեն վրէժխնդիր լինել, մի ևս ի զէն
Զայն տացեն երկրիս այսմիկ. իսկ եթէ մեզ ըղյաղթութիւն,
Որպէս կարծեմս առաւել, որպէս հրամանք դից հաստատեն,
Ընծայեսցէ հաշտ Արէս, ոչ զայս գրաւել խնդրեմ երկիր,
Եւ ոչ զիտալս ընդ ձեռամբ կալ տեէկրացւոց հարկեցուցից,
Այլ աններկուն երկաքանչիւր կացեալ ազինք, ուխտ յաւէրժ
Հաւասար օրինօք հաստատեսցեն ընդ միմեանս,
Ես դիս նոցա տաց և կրօն, կալցի աներ իմ Լատինոս
Ըզհօր զինուց, կալցի նոյն ինքն ըզգերագոյն իշխանութիւն.
Տեկրեանք քաղաք ինձ կանգնեսցեն, Լաւինիա տացէ անուն:

Այսպէս նախ Ենէաս. յաւել ապա Լատինոս
Զաչս ի յերկինս ամբարձեալ, յաստեղս ի վեր ուղերձեալ զաջ.
Ըզնոյն և ես, ով Ենէաս, ուխտեմ երդուեալ յերկիր, ի ծով,
Ի յաստեղս, ի լետովեան ծնեալս կըրկին, և յերկդիմին
Ի Յանոս, ի զօրութիւն դիցըն ներքնոց, և դըժնէին
Պլուտոնի ի սըրբարան. լուիցէ զուխտ իմ հայրն ինքնին,
Որ կընքէ զուխտըս շանթիւք. աջ ի վերայ բագնաց եդեալ,
Եւ ի հուրն՝ որ ի նոսին, երդնում ի դիս. մի լիցի օր
Յաւուրս ամաց, որ բարձցէ յիտալաց զայս խաղաղութիւն,
Որ զուխտըս զայս խորտակեսցէ. որ ինչ և դէպք տացին իրաց,
Մի զօրութիւն ինչ շըրջեսցէ զիս կամակար յուխտից աստի,
Թէպէտ երկիր ընդ ալիս ջրհեղեղաւ խառնեալ լուծցի,
Թէպէտ երկինք խորասոյզ ի տարտարոս ընկըղմեսցին,
Ցորչափ ի ցպոյ աստի (զի ցուպ ըստ դիպուածոյ կրէր ի ձեռին)
Ոչ ծիլք արձակեսցին, և ոչ տերևք թեթևք ըստուերս
Արկանիցեն, ուր միանգամ հատեալ յարմէն յանտառի,
Եւ անսընունդ ի մօրէ կորոյս ի սայր զոստ և տերև,
Երբեմըն ծառ ելով՝ արդ աջ զայն ճարտարի ընդելուզեալ
Յարոյր գեղեցիկ, և Լատինաց հարց ետ ի ձեռս:

Հանդոյն բանիւք ակն յանդիման զօրավարաց կըռեն ուխտ,
Ըզսըրբազան խաշն ի հուր ըստ օրինի փողոտելով,
Եւ զընդերս ի ջերաջերմ զոհից անտի կորզեալ ի բաց՝
Ծածկեն ըզսեղանս ի լիուլի սանս արուրիս:
Բայց մնամարտն անդըստին թըւէր կարի անհաւասար
Հըռուտուլաց, և յայլևայլ ի հոգս յուզեալ աղմըկէին,



Մանաւանդ ի տեսանել անդ ըզխըտիր մարտկացն ուժոյ:
Յաւելոյր ըզկասկած Տուրնոս ի ճեմ իւր լռելեայն
Աշերսաւոր աչք ի խոնարհ ի մեհարանըս սեղանոյն,
Այտք կապուտակք, և գունատեալ պատանեկանըն կերպարան:

Իբրև ետես քոյրն Յուտուրնա՝ զի շըշնջիւնք զայրանային,
Եւ ռամիկըն յեղյեղուկ տարաձայնեալ պառակտէր,
Ի կերպարանըս Կամէրտեայ, որ ի հաւուց նախնեաց էր ազգ
Անուանի, հայրենականըն քաջութեան ի համբաւ մեծ,
Եւ քաջազէն ինքն ի մարտի, դիմեաց ի մէջ ճակատուց,
Զըրոյց պէսպէս՝ տեղեակ իրացն՝ էարկ ի զօրս, և գոչէր.
Չիցէ՞ ամօթ, ո՛ հռուտուլք, փոխան բնաւից արի արանց
Մատնել ըզկեանըս միոյն. մի թէ ստորնե՞ք իցեմք թըւով
Եւ զօրութեամբ. ահա Տըրովք աստ և Արկադք պռհասարակ,
Եւ ոխերիմըն Տուրնոսի ճակատագրեալըն Ետրուրիա.
Թէ կէս ի կէս ճակատեսցուք, հազիւ ոսոխք մեզ բաւեսցեն.
Ինքն ամբարձցի համբաւով առ դիս վերինս՝ ոյց առ բագնօք
Արդ նըւիրի, գնասցէ շըրթանց ի շըրթունս ինքն անմահացեալ.
Մեք կորուսցուք ըզհայրենիս, և ընդ ձեռամբ գոռոզ տերանց
Հարկեսցուք կալ, որ ծոյլք ըզկայ ի դաշտավայրս աստ արդ առնումք:

Ի բանից աստի վառեալ ևըս քան զևըս մանկըտւոյն
Միտք ի նոյն, զեռայ ընդ գունդըս բանակին քըրթմընջիւն.
Յեղափոխին նոքին ինքեանք լաւրենտացիք և Լատինք.
Որք հանգիստ ի զինուց և փըրկութիւն իրաց իւրեանց
Ըղձանային, ճակատամարտ արդ խընդրէին՝ ըստըրջացեալք
Յուխտից անտի, և գըթացեալ ի դըժընդակ բախտ Տուրնոսի:
Մեծագոյն ևս Յուտուրնա յերկնից բարձանց յաւել նըշան,
Քան զոր չըգոյր ազդողագոյն ինչ ի խռովել և ի պատրել
Զիտալացիս. քանզի չէկ հաւուն Դիոյ ընդ կարմրագեղ
Թռուցեալ երկին ըզհետ թըռչնոց ծովեզերեայց, հալածելով
Զամբոխ նոցին սաւառնաձայն, սահի անգութն յանկարծ յալիս,
Եւ կոր մագլօք յափըշտակէ ըզլուսափայլ կարապ ի վեր.
Յակճիռըս կան իտալացիք, և հաւքն անտի երամովին
(Տեսիլ հրաշալի) թռանին մեծաւ շառաչելով,
Մըթագնեն թևովք զերկին, և ամպ ընդ օդըս գումարեալ՝
Ըզթըշնամւովըն պատին, ընկճեն ըզնա, մինչև պարտեալ
Ի խռանէն՝ և յիւրմէ իսկ ի ծանրանէն՝ ըզքանի,
Եւ զաւարն ի մագլաց թողեալ ի գետ անդր ընկեցիկ,
Բացէ ի բաց թևածէ, ծածկի ի յամպըս փախըստեայ:

Յայնժամ հռուտուլք բազկատարածք՝ աղաղակեն ողջունելով
Ըզհըմայս, և Տոլումնի հաւահըմայ խօսի նախկին..

Այդ էր այդ, զոր ես ուխտիւք ըստէպ ի դիցըն խնդրէի,
Արդ ընդունիմ, և ճանաչեմ ըզդիս. ըզհետ իմ ո՛ն եկայք,
Զէն առէք ո՜ Հռուտուլք, յորըս մարտիւ հիւրն անօրէն
Իբր ի տըկար հաւս ազդէ ահ, և զծովեզերըս ձեր բըռնի
Առնու աւար. երթիցէ նա ի փախուստ բացէ ի բաց,
Պարզեալ յանդունդըս զառագաստ. դուք համախուռըն գունդ կազմեալ,
Զերծուցէք ըզթագաւորըն ձեր՝ ի ձէնջ յափըշտակեալ:
Ասաց, և դէմ ի թըշնամիս եդեալ ըզտէգն արձակեաց.
Հերձանէ չըմնին անվըրէպ զօդըս շըկահմամբ,
Յառնէ անդէն աղաղակ մեծ, աղմըկին ռազմք զօրականին.
Վառին ոգիք յաղմըկէն, թռանի նիզակըն դէպ ուղիղ՝
Ուր պատահէն եղբարք ինունք չըքնաղագեղք, զորըս միոյ
Երկնեալ էր մօր տիւրենուհւոյ արկադացւոյն Գիլիպպեայ
Հարսին հաւատարմի, և հարկանէ զմի ի նոցունց՝
Թափանցիկ կըշիռ ըզտէգն ընդ մէջ կողիցն հանեալ, ուր ծայրք
Կամարին հիւսածոյ գան ըզլանջիւք ի համբոյր,
Եւ խածանէ ճարմանդ զերկուց կցորդութիւն ընդ իրեար,
Անկանի պատանին չըքնաղագեղ կարեվէր
Ի շէկ աւազին, վառեալ ի զէն ի զրահ փայլուն:
Այլ արի հարազատաց գունդ ի մորմոք զայրագին,
Կէսք հարկանեն բուռն ի սուսեր, յափըշտակեն այլք զէն ի ձիգ,
Դիմեն յախուռն ի պատերազմ: Ընդդէմ նոցա յարձակին
Գունդք Լաւրենտեանց, և բազմախուռըն զօրք աստի դարձեալ հրոսեն,
Տրովացիք և Էտրուրք և նըկարէն զրահիւք Արկադք.
Նոյն տենչ ի սիրտ բոլորից՝ զինուք ըզմարտըն սահմանել:
Կողոպտեն ըզբագինս, ամպ խառն ի խուռըն զինուց
Եւ տարափ երկաթի համապարփակ ծածկէ զերկին,
Բաժակք և կրակարանք շուրջանակի կործան անկեալ:
Ինքն իսկ արքայն Լատինոս խուսէ՝ թողեալ զուխտըն թերի,
Եւ ըզդիսըն կործանեալս ածէ ընդ իւր անտի ի բաց:
Լըծեն ի կառս կէսք ըզձիան, այլք ոտն ածեալ հեծնուն ընդոստ
Յերիվար, և առ ետեղ հասանեն կան սուսերամերկ:
Անդըր Մեսապ՝ առ ի խռովել զուխտըս դաշանց՝ ձիավարեալ,
Զարքայն Աւլեստ տիւրենացի շըքեղ ի զարդ արքունական՝
Խռովէ ձիովն ըզդէմ կալեալ. ընկըրկի նա, և զարկանի
Ընդ բագինս ի յետկուսէ գըլուխ հիքին թիկամբքըն հետ
Եւ ըշտապեալ Մեսապոս գերանաձեւըն նիզակաւ
Հարկանէ զնա, մինչ նա աղերս հեղոյր բազում, և ասէ.
Վըճարեալ է, հաճոյագոյն դիցըն վեհից զոհ ի նըւէր:
Խըռնին, Իտալք շուրջ ըզնովաւ, կապտեն ըզդին դեռ ջերաջերմ:



Յայնժամ Եբոս գայր հարկանել ըզՔորինէ. սա ի բագնէն
Ըզխանձող բոցավառ յափըշտակեալ ել ընդդէմ,
Եհար յերեսըս զայն նըմին. բորբոքեցան մօրուքըն թաւք,
Եւ ի հրավառ հերացըն ցոլք հատանէին. ինքն ի վերուստ
Կալեալ ձախովն ըզվարսից խուճապելոյ ախոյենին,
Յեցեալ ծընգաւն ի վերայ, և տապալեալ ըզնա յերկիր,
Խոցեաց ըզկողըն խորամուխ պողովատիկ սուսերաւ:
Եւ Պոդալիր ըզհետ եմուտ Ալսեայ հովուի՝ որ յարձակէր
Ընդ մէջ զինուց յառաջապահըս բանակին սուսերամերկ
Եւ սպառնալից. նա ըզտապարն ածեալ ընդդէմ յարձակելոյն,
Հերձու զճակատն ընդ աչամէջըն երկճեղքեալ մինչև ի ծնօտ,
Համակեալ ըզզէնս ուղղովըն ցընդելով շուրջ ի սփիւռ.
Հանգիստ դառնանիրհ և երկաթի զաչըս նորա
Ընկճէ քուն, և ի գիշեր անարթնական բիբքըն փակին:
Բայց երկիւղածն Ենէաս բացաւ գըլխով և ապազէն
Աջ կարկառեալ, ձայնէր առ իւրան աղաղակաւ. Յո՞ արշաւէք,
Զի՞նչ յեղակարծ լցէ հերձուած, ո՛վ դուք ի բաց դիք ըզզայրոյթ.
Վաղ իսկ ուխտըն կընքեցաւ, հաստատեցան պայմանք դաշին,
Ինձ միայնոյ է արժան մենամարտել, թողէք ինձ արդ,
Մերժեցէք զերկիւղ ի բաց, բազուկ իմ այս արդ կացուսցէ
Անլոյծ ըզդաշինս, զոհս այս տացէ ինձ ըզՏուրնոս:
Մինչ դեռ այս ձայնք հընչէին, մինչ կային բանքըն ի բերանի,
Շըկահեաց նետ արագաթև, յումմէ՞ ձըգեալ ի ձեռանէ,
Որո՞վ թափով դէպ ուղիղ յայրըն մըղեալ, և հռուտուլեանց
Ո՞ զգերապանծ գործոյն ըզփառըս մատուցեալ, բախտըն թէ դիք,
Թաքոյց համբաւ, և ոչ ոք վիրօքն Ենեայ պարծել կարաց:
Իբրև ետես Տուրնոս խուսեալ ի բանակէն զԵնէաս
Եւ աղմըկեալ ըզզօրավարս, վառեալ յեռանդն անդէն յուսով,
Խընդրէ ձիան, խընդրէ զէն, և խրոխտ ի կառս ընդոստուցեալ,
Բուռն ըզսանձուց հարեալ, և ճախր ընդ զօրս առեալ, իրանս յոգունս
Մատնէր ի մահ կորովիս, զայլըս յոգունըս կիսամեռ
Տապալէր, կոխան ըզգունդս առնէր անուոց, և տէգս ըզհետ
Փախըստէից յափըշտակեալըս ի նոցանէ արձակէր:
Որպէս Արէս արիւնախանձ վառեալ առ ցուրտ ալեօք Եբրեայ
Ի զայրոյթ, շըկահելով տէգ ընդ վահան մըղէ ի մարտ
Ըզձիանն ամեհի. նոքա վարգին թեւթեւընթացք
Քան ըզնոտոս քան ըզզեփիւռ ընդ դաշտավայր լայնածաւալ,
Թընդան ծագք Թրակիոյ ի դըրընդիւն սըմբակաց,
Պար ըզնովաւ առեալ գընան զառաջաւորք աստուածոյն
Հեռ և դարան և արհաւրաց սեւատեսիլ կերպարան.

Այսպէս Տուրնոս ըզձիանն ի խռան մարտին վարէր հալածեալ
Ի քիրտըն ծըխաշունչ, սըմբակակոխ առնելով
(Տեսիլ ողորմ) ըզդիակունըս թըշնամեաց. ցօղէր արիւն
Սըմբակն երագ, կոխոտելով զարիւնախառըն փոշի:
Նախ ըսպան զըՍթենելոս, ըզԹամիրիս և ըզՓոլոս.
Ըզսոսա մօտ ի մօտ, զըՍթենելոս ի հեռաստ.
Ի բացէ, և զերկոսին որդիս Իմբրայ ըզԳըլաւկոս
Եւ ըզԼադէս, որոց ինքնին ի Լիկիա դաստիարակ
Կացեալ Իմբրաս, և համգունակ վառեալ զինուք էր զերկոսեան,
Մերթ բազուկ առ բազուկ չահատակել ի պատերազմ,
Եւ մերթ ձիարձակ գերազանցել ըզհողմովք:
Այլուր ընդ մէջ զինուց դիմեալ գայր Եւմեդէս, զաւակ նախնեացն
Դոլոնի, երևելւոյն ազգատոհմաւ ի ճակատու,
Որ ընդ անուան հաւոյն կըրէր զարիութիւն և ըզկորով
Հայրենի, այն որ երբեմն իշխեաց խընդրել ըզՊելիդեայ
Ըզկառս ի վարձ, վասն ըզբանակըն Հելլենաց լըրտեսելոյ.
Բայց Տիդիդէս այլ ինչ նըմա յանդըգնութեանըն փոխարէն
Հատոյց մըրցանակ, մինչև ոչ ևս այնուհետև
Իշխել նըմա զԱքիլլեայ երիվարացըն թեկն ածել:
Ըզնա տեսեալ Տուրնոսի հեռի յարձակ դաշտավայրի,
Նախ ի բացէ թեթև նետիւ ընդ սին այերըս հալածեաց.
Ապա ընդոստ ի կառաց յերկիր՝ զերկձիսըն կացուցեալ,
Եհաս ի վերայ կիսակենդան կործանելոյն,
Եւ կոխեալ ի պարանոց նորա՝ խըլեաց յաջոյն ի բաց
Ըզսուսերըն փայլուն, և խոր ի փողն արկեալ՝ յաւել.
Ահա երկիրն երեկորնեայ՝ զոր խընդրէիր պատերազմաւ,
Չափեա արդ զայն անկեալ տապաստ ո տրովացիդ. այս լիցի վարձ
Որոց զինուք զիս հալածեն, այսպէս պարիսպըս կանգնեսցեն:
Մահակից սըմա զԲուտէս և ըզՔըլորէ, ըզՍիբարիս,
ԸզԴարէս և զԹերսիլոք արար ի տեղ նիզակին,
Եւ ըզԹիմէս սահեալ ընդ ուլն ընդվըզելոյ երիվարին:
Որպէս յորժամ եդոնականն հընչեալ հիւսիս յեգեան անդունդ,
Վարէ զալիս ի ծովեզերս, և ուստ ուստեք հողմըն շընչէ՝
Խուսեն ամպք, այսպէս ուր ճահ գործէ Տուրնոս՝ տեղի տան գունդք
Անտի ի բաց, և ի փախուստ դառնան ճակատք քայքայեալք:
Մըղէ սաստիկ ըզնա թափ, և սիւք կառացն ի հանդիպոյ
Ծոծեալ տատանէ զօդաթըռիչ նորին ցըցունս:
Ոչ հանդուրժեաց Փիգէոս ի տեսանելըն ըզնա զի գայր
Մըռընչելով յիւր վերայ, ընդդէմ կառացըն խիզախեաց,
Եւ բուռն հարեալ ըզսանձուց մըտրակելոցն երիվարաց,



Դարձոյց ըզփըրփըրախ դէմըս նոցա աջովն ի բաց.
Այլ երբև ինքն ի կառացն յափըշտակեալ, և խոնարհեալ
Կայր կորովի ըզլըծովք, գեղարդն ըստուար հասեալ ըզհետ,
Եւ մըխեալ յանպատըսպարն, եհերձ ըզձօշըն կըրկնավերտ,
Վէր ի վերոյ վէր ի մարմնին գործեալ. իսկ ինքն ի թըշնամին
Յայնժամ շըրջեալ, զասպարն ընդդէմ կալեալ երթայր սուսերամերկ,
Օգնութիւն կարդալով. այլ անդ յանկարծ սեռն և անիւ
Ի սաստիկ վարելոյ ըզձեպընթացն ընդոստուցեալ
Յերկիր տապալեն. և ի վերայ հասեալ Տուրնոս,
Ընդ մէջ վահանակի սաղաւարտին ի վայր կուսէ,
Ուր ընդ վերին զօդի շըրթունըս լանջապահ տախտակին,
Եբարձ սուսերը ըզգլուխն ի բաց, թողեալ զիրանն անդ ի փոշւոջ:
Բայց ի գործել Տուրնեայ զմահունըս զայսոսիկ ի դաշտին,
Հաւատարիմն Աքատ, Մընեսթ, զոյգ ընդ նոսին և Ասկանի,
Ածին ի բանակըն զԵնէաս արիւնալից,
Ի տեգ նիզակին ըզքայլափոխս հաստատելով:
Զայրագին ինքն ըզբեկեալ ծըզօտին ըզտեգ ջուն գործէր
Խըլել ի բաց, և փաղագոյն հընարս իրացըն խընդրէր,
Լայնել ըզվէրսըն սուսերաւ, բանալ ըզխորշ երկաթոյն,
Դարձուցանել զինքն ի ճակատ: Մերձ անդ յասեանըն կայր Յապիս,
Սիրելին ի վեր քան զայլըս Փեբոսի, որ ի սաստիկ
Հարեալ երբեմն ի նա սիրով, զարուեստըս իւր և զզօրութիւն
Շնորհել նըմա յօժարէր, զերգ և զհըմայս և զնետ երագ.
Այլ Յապիս, առ ի յամել զանըրուժելւոյ հօրն օրհաս,
Ըզբանջարոց ընտրեաց գիտել ըզզօրութիւն, և ըզնոցին
Պէտս ի դարման, և վարել լուռ արուեստին անփառունակ:
Կայր Ենէաս յեց ի նիզակն ըստուարաբուն, և մըռընչէր
Դառնահեծ. և առ նմա Յուլոս տըխուր, և մանկըտւոյ
Բազմութիւն, անդըրդուելի ինքն ի նոցին արտասուաց:
Ընդ ծերունին ի պէոնեան հանդուշն ի ձև, ի նանիր
Բըժըշկական բազմահընար ձեռամբ փութայր մատուցանել
Ապոլոնեան բանջար յոլով, աջովն ըզզայրըն տարապարտ
Տառանելով, աքցանիւ կալեալ զերկաթըն կարծրապինդ.
Այլ ոչ հընարս ինչ ընծայեր բախտ, ոչ օգնէր հայրն Ապոլոն:
Բայց ի դաշտին արհաւիրք անհընարինք յաճախէին,
Եւ կայր առ դուրըս վըտանգ. տեսանէին ծածկեալ զերկին
Ի փոշւոյ, հասանէին հեծեալք, տեղայր նետ թանձրախիտ
Ըզճամբարաւն, և աղաղակ տըխուր գընայր յերկինս ի վեր
Պատերազմիկ մանկըտւոյն և անկելոց խիստ Արիսիւ:
Յայնժամ Աստղիկըն մայր շարժեալ յանպարտակիր ցաւոց որդւոյն

Ի կրետականն Իդայ քաղէ ըզխանթէփար, աղաւամազիւք
Պատեալ ծըղօտըն տերևովք, շուրջ ի փըթիթըս վարսաւոր
Աղփաեալ ծաղկունք ծիրանիք, ոչ անծանօթ բոյս այծեմանց
Ի նետ երագաթև ընդ թիկնամէջըս հարելոց:
Զայն Աստղիկ առեալ բերէ, շուրջ ի նըսեմ պատեալ ամպոյ.
Եւ ի փայլուն հեղեալ ի կոնք ալիս, և անդըր փըրկաւէտ
Խառնեալ հիւթ ամբրոսեան և պանակէս անուշահոտ,
Եւ թաթաւեալ զայն ի նըմա՝ գաղտնածածուկ պատրաստէ դեղ:
    Բայց ծերունւոյն Յապեայ ի նոյն լուացեալ ի ջուր յանգէտս ըզ-
Նոյնհետայն փարատեցան ցաւք ամենայն ի մարմնոյն. (վէրս,
Դադարեաց անդէն ի սպառ արիւն ի խորըս վիրին,
Նետն առանց ձըգելոյ ըզհետ ձեռին եկն արտաքս.
Դարձան ի նա որպէս յառաջըն զօրութիւնք. գոչեաց Յապիս.
Արկք, զի՞ կայք, զէն դիւցազինն ածէք փութով. և ինքըն նախ
Ընդդէմ թըշնամեաց քաջալերեալ զոգին, յաւել.
Զեն մարդկեղէն զօրութեան, չեն արուեստին ճարտարութեան
Արգասիք. և ոչ ըզքեզ, ո՛վ Ենէաս, աջ իմ կեցոյց.
Դիք հըզօրք ներգործեն աստ, առ մեծագոյնս ըզքեզ պահեալ:
    Նա յեռանդըն մարտի ըզսըռնապանս ոսկեղէնս
Պընդէ զբարձիւք, ոչ ևըս ժոյժ ունի յամել, ճօճէ զնիզակ,
Ականու զասպար առ կողիւ, և զըահ զանձամբ արկեալ, փարի
ԸզՅուլեաւ ըսպառազէն. և ի ներքուստ սաղաւարտին
Ըզշըրթանց նորին ըզծայրըս համբուրեալ՝ Ուսիր, ասէ,
Որդեակ յինէն ըզքաջութիւն և ըզվաստակ ճըշմարիտ,
Յայլոց ըզբախտ. աջ իմ քեզ արդ պաշտպանեսցէ ի ճակատու,
Ընդ մեծամեծ մըրցանակս ածցէ և զայս արդ ի համար.
Եւ յաւագոյթ հասակիդ յորժամ հասցես, յուշ լիցին քեզ
Քոյոցդ օրինակք. Ենէաս հայր քո, և Հեկտոր
Քեռի քոյին խրախուսեսցեն ըզքեզ: Եւ զայս իբրև ասաց,
Յարձակեցաւ արտաքս ի դրանց՝ տատանելով ի ձեռին
Ըզտէգն անհեթեթ, և ընդ նըմա կուռ ըսպայիւ
Անտէոս և Մընեսթ և համօրէն ամբոխ զօրուն
Խուժէ ի պատնիշաց. մըրըրկէր դաշտն ի կոյր փոշի.
Եւ երկիր ի բաղխիւն ոտից սարսեալ դըղըրդէր,
Ետես Տուրնոս բարձր ի բըլրոյն՝ որ կայր հանդէպ զեկաւորս,
Տեսին իտալք, և ցուրտ սարսուռ գայր զոսկերօքըն խորովք.
Ի Լատինաց անտի լըւեալ նախ ըզշըռինդն Յուտուռնա,
Ծանեաւ և խոյս ետ դողալով. ըզհետ նորա մըտեալ Ենեայ,
Ձըգեաց ըզզօրսըն բազմախուռն ի բացարձակ դաշտավայր.
Որպէս յորժամ ամպրոպ ընդ ծով դիմէ յերկիր ի մըրըրկի,



Սարսէն, աւա՜ղ, ի հեռուստ սիրտք մըշակաց կասկածաւորք.
Նա աւեր անդաստանաց և կոտորած ածէ ծառոց,
Եւ տապալէ շուրջ զամենայն. թռանին հողմունք, ածեն կանուխ
Ի ծովափունս ըզմըռընչիւն. այսպէս հռետեանըն զօրավար
Մըղէ ընդդէմ թըշնամեաց ըզգունդըն կուռ պընդակազմ.
Անդ Թիմբրէոս սուսերաւ ըզվիթխարին հար Ոսիրիս,
Մընեսթ զԱրքետ սատակեաց, Աքատ զԵպուղ, Գիաս զՈփենտ.
Եւ Տոլումնի իսկ անդ անկաւ հաւահըմայն, այն որ նախկին
Զէն արձակեաց ի թըշնամիս. գընայր յաստեղս անդըր աղաղակ.
Եւ հռուտուլեանք ըզփոշելից շըրջեալ թիկունս ընդ դաշտորայս,
Դառնան փոփոխ ի փախուստ. բայց Ենէաս ոչ յանձն առնու
Մատնել ի մահ ըզփախըստեայս, ոչ կալ ի կռիւ ընդ դիմակայս
Ոչ զարդնընկէցըս վանել, այլ ըզՏուրնոս ևեթ խընդրէր
Հետազօտեալ թանձր ի միգին, ձայն միայնումըն տայր ի մարտ:
    Խռովեալ այսու կասկածանօք սիրտ Յուտուռնայ օրիորդին,
Ընկենու ի կայից ըզկառավար Տուռնեայ զՄետիսկ
Խառն ընդ սանձուց ի բացեայ քան ըզքեղին, և ինքըն անցեալ
Բուռն հարկանէ զերասանացըն ծըփելոց, բերեալ յանձին
Ըզկերպարան ըզձայն ըզզէն և զամենայն ինչ Մետիսկեայ:
Որպէս ծիծառըն սևաթոյր ընդ բարձրաբերձ և ընդարձակ
Սըրահս ապարանից ճոխից ճախրեալ պարէ փետրովք,
Ճաշակրատից ձագուց իւրոց խընդրել ճարակ ճըճուելով,
Մերթ ըզխոնաւ լըճիւ և մերթ ընդ սին գաւիթ թևածեալ,
Ըստ նըմին օրինակի ի մէջ զինուց Յուտուռնա
Զըգեալ ի ձիոց սրընթաց կառօքըն ճախր առնոյր
Ընդ ամենայն, ՛է զի աստ, և է զի անդ ըզհարազատն
Ի ցոյց ածեալ յաղթական, և ոչ ներէր խառնել ի մարտ,
Արտաղի սրավարեալ: Ոչ ինչ ընդհատ և Ենէաս
Կամակոր առեալ շըրջան հետազօտէր ըզպատանին
Զայնիւ մեծաւ կոչելով ի մէջ գընդացըն ցըրուելոց.
Քանիցըս զաչս ի թըշնամին արկեալ սլանայր արշաւասոյր
Հանդէպ ձիոց օդապարից, նոյնքանիցըս Յուտուռնա
Շըրջէր ըզկառս ի բաց. աւա՜ղ, և զի՞նչ առնել էր Ենեայ,
Զուր յուզէր, զուր հոգք ի ներհակ խորհուրդս ըզմիտսըն կոչէին:
Անդ Մեսապոս, զի ի ձախում կըրէր ճապուկ ըստ դիպուածոյ
Տէգըս կըրկին, թեթևընթաց արկ կըշռակի ճօճեալ ըզմին
ՅԵնէաս. նա զկայ առեալ և ընդդըճեալ ի յազդեր՝
Ընդ ասպարաւն ամփոփէր. այլ թափ ուժգին հերձեալ ըզկումբ
Սաղաւարտին, ուստոյց ի բաց բարձր ըզցըցունըս գագաթան:
Յայնժամ զարթեաւ զայրոյթ ի նմա, և ըմբոստեալ՝ զի զնա դաւով

Վարէին տարադէմ կառքն և ձիան, մեկայ ըստէպ
ԶԱրամազդ և զդըրժելոյ ուխտին բագինըս կարդայր:
Դիմեալ ի խուռն ապա մարտին հաշտ Արևսու աճընկեց,
Գործէր նախճիրս անխըտիր՝ Թողեալ ըզսանձ ցասմանն ի սպառ:

Ո՞ արդ ի գից զայնքան աղէտս ինձ ըզդաւինս, ո՞ արդ տաղիւք
Ըզկոտորածըս պատմեսցէ, և զայնքանեաց զօրավարաց
Ըզմահուանս, զորս ի դաշտի անդ զայրագին՝ է զի Տուրնոս,
Է զի գիւցազնըն տրովացի փոխանակաւ գործէին:
Ա՞յսպէս ուրեմըն քեզ, ո՛վ մեծդ Արամազդ, հաճոյ Թուեցաւ,
Զի այնքանեաւ ազմըկաւ մարտ ընդ իրեարըս մըղեսցեն
Ազգք՝ որ յաւէրժ խաղաղութեամբ ապա կալոց էին ի մի:
Ոչ յամէ Ենէաս, ի հաւատալեանըն Սուկրոնի
Դիմէ ի կող, և ուր է մահ արագագոյն՝ արկանէ
Ըզտէգըն կարծր ընդ մէջ կողիցն և ընդ կըրծոցըն ցանկապատ.
Այն նախ ճակատ եռ անդ տեկրեանցըն խուժելոց ըզկայ առնուլ:
ԶԱմիկոս եհար Տուրնոս՝ արկեալ ըզնա յերիվարէն,
Եւ ըզԴիոր զեղբայր նորին հետևամարտ. ըզսա ի տէգ
Երկայնաբուն նիզակին ի գալն ընդդէմ, ըզնա սուսերբ.
Եւ զկառափունս երկաքանչիւր հատեալ կախեալ ըզկառաց
Արիւնաթորըս բերէր. աստ Ենէաս մատնէ ի մահ
ԸզՏալոն, ըզՏանայիս, ըզկորովին Կեթեգոս,
Զերեսին ի միասին, և ըզտըխուրն եգէոնիկ
Ոնիտէս ի Պերիդեայ մօրէ ծընեալ. անդ զեկաւորս
Ի Լիկիոյ յապոլոնեան երկրէ եղբարս ըսպան Տուրնոս,
Եւ զպատանին արկադացի ըզՄենիտէս, զուր ի մարտի
Եղեալ առելի՝ որ ի խըրճիթ իւր աղքատին
Առ ձըկնախիտ լերնեան լըճիւ վարէր արուեստ ձըկնորսական,
Անգէտ ոսմոց աւագանւոյ, հայր իւր վարէր երկիր վարձեալ:

Որպէս հուր ի ցամաքուտ ուրեք մայրւոջ աստ անդ արկեալ,
Եւ ի առեղունըս ճարճատունըս սարդենեաց, կամ յորժամ գետք
Արագահոսք բարձր ի լերանց գահավիժեալ դիմեն ի ծով
Խոխոջելով փըրփրադէզ, երկաքանչիւր աւար հարեալ
Ըզճանապարհ ընդ որ գընան, այսպէս Տուրնոս և Ենէաս
Դիմեն ի պատերազմ. եռայ զայրոյթ ի սիրտ նոցին,
Եւ առաջի բուռըն ճըղան արշաւելոցն ի հարուած
Բեկանին լանջք անպարտելիք: Անդ Ենէաս ըզՄուրրանոս,
Որ պանծայրն ի նախահարս, և ի հաւուց նախնեաց անուանս,
Որ ընդ արքայս Լատինաց իջուցանէր զազգն համօրէն,
Արկ ի կառաց Թաւալգըլոր յերկիր ժայռիւ, և մըրըրկեալ
Ըստուար վիմով. ընդ սանձիւք և ընդ լըծով ըզնա անիւք



Տապալէին, սըմբակակոխ առնէր ձիանըն մըտրակեալ
Ի խիտ ընդ խիտ ոտից գոփիւն, ոչ ևս ի յուշ ըզտէրն ածեալ:
Իսկ միւսն Հիլլեայ՝ որ յարձակէրըն զայրագին մըռընչելով
Դիմեալ ընդդէմ, արկ յերանուանն ոսկիապատս ըզնիզակ.
Եմուտ երկաթն ընդ սաղաւարտն, և յուզզարդոյն նորին կառեաւ.
Ոչ զերծոյց աջ քո ըզքեզ հըզօրդ ի Յոյնս, ո՛ Կրետևս,
Ի Տուրնեայ. ոչ Կուպենկեայ պաշտպանեցին հաշտք ընդ իւր դէք.
Յերևսաց Ենեայ որ գայր, հարաւ ի կուրծ իւր երկաթով,
Եւ ոչ վահանըն պըղընձի խափան եղեալ օգնեաց հէքին:
Եւ ըզքեզ, Եւոլէ, լաւրենտականք տեսին դաշտք
Դիմեալ ի մահ, և իրանաւ քով լայնասփիւռ ծածկեալ զերկիր.
Եւ զոր ոչըն կարացին ըզքեզ փաղանգք հելլենականք
Հարկանել, ոչ Պրիամու արքայութեանըն կործանիչ
Աքիլլէս, անկար աստ, աստ քեզ մընայր մահուն օրհաս.
Տուն բարձրաբերձ քեզ ի ստորոտ լերինն Իդայ, տուն բարձրաբերձ
Էր ի Լերնես. քեզ գերեզման է արդ երկիրըն լաւրենտեան:

Խառնին ճակատք երկաքանչիւր համախըմբեալ ընդ իրեար,
Գունդք Լատինաց, գունդք դարդանեանց, Մընեսթ և գուռըն Սերեստոս,
Կորովին Ասիլաս, ձիոց նուաճողըն Մեսապոս,
Փաղանգք Տոսկաց և հեծելազօրըն Եւանդրի արկադացի,
Իւրաքանչիւր ոք բոլորով ճիգըն գործեալ զօրութեամբ
Անդուլ անդադար դիմեալք մեծաւ պատերազմաւ:

Յայնժամ ի միտըս Ենեայ չըքնաղագեղըն մայր ագդէ
Շըրջել ըզզօրսըն վաղ ընդ փոյթ դէպ ի պարիսպըս քաղաքին,
Եւ յանկարծ կոտորածիւ խռով՝ ի Լատինս անդր արկանել:
Նորա դիտեալ յայսկոյս և յայն, և ըզՏուրնոս տեսանելով
Ի գնդէս ի բաց, և յանխըռով խաղաղութեան ըզքաղաքն
Ի մարտամբոխ ազմըկէն զերծ, վառի ի սիրտ նորա անդէն
Պատկեր մեծի պատերազմին. ձայնէ զՄընեսթ և ըզՍերգեստ,
Եւ ըզՍերեստ քաջակորով. ի բլուրն ի վեր ելանէ,
Անդըր և այլ գունդք տեկրացիք համախըմբին ըսպառազէնք
Տէգ ի ձեռին և վահան. ինքն ի բարձու ամբարտակին
Կալով ի միջի, այսպէս առ իւրսըն բարբառի.

Մի ի հրամանս իմ դանդաղէք, զի ի մեր կոյս է Արամազդ.
Մի ի ձեռնարկ իմ յանկարծ գըտցի ոք յամր և անպատրաստ.
Քաղաքն առիթ պատերազմիս և պետութիւն իսկ Լատինեայ
Անկցի այսօր, կործանեսցին հարթայատակ յարկք ծըխաշունչ,
Եթէ ոչ թըշնամիք սանձահարեալ հնազանդեսցին:
Ընդէ՞ր իցէ ինձ ըսպասել մինչև հաճոյ լիցի Տուրնեայ
Ըզմենամարտ յանձն առնուլ, մինչև մատնեալ ի պարտութիւն՝

Յայնժամ կլռունըլ կամիցի. քաղաքս այս, ո՛վ քաղաքացիք,
Սա ըսկիզբն և սա լիցի եղեռնաւոր մարտիս վախճան։
Փութայք առէք ջահ, և բոցով ըզվրէժ ուխտին խընդրեսջիք։
Ասաց, և զօրքն համօրէն միով ոգւով կազմեն ճակատ
Կուռ կոնաձև, և ի պարիսպս անդըր մատչի բանակըն մեծ.
Սանդուղք յանկարծ երևին, յանկարծակի ջահք բոցավառք.
Կէսք ի դրունըս դիմեն, ըզդիմամարտս ի մահ մատնեն
Զառաջինս, այլք տեղան զէն, զօդըս նետիւք մըթագնեն։
Ինքն Ենէաս ընդ նախամարտս անդր ի պարիսպըս մատուցեալ,
Աջ կարկառէ, բարձրաձայն ըզԼատինոս յանդիմանէ,
Նըդուեալ ի դիս՝ զի գայր բըռնի ի պատերազմ, զի թըշնամիք
Վերըստին խռովեցին՝ երկիցս ուխտիցըն դըրժելին։
Հերձուած ի մէջ ահաբեկեալ քաղաքայնոցն յայնժամ անկաւ.
Կէսք հրամայեն բանալ ըզդրունըս քաղաքին առ տրովացիս,
Եւ ի ներքս ի պարիսպս ըզթագաւորըն հրաւիրեն.
Այլք զէն առեալ, ձայն իրերաց տան պարըսպաց դիմել ի պահ.
Որպէս յորժամ ըզմեղուաց հովիւ ըզքոյն հետազօտէ
Ի խորշկէն չէչաքար, և դառն ի ծուխ լընու զայն,
Նոքա ի ներքս անդ խուճապեալ յուզին յամրոցըն մոմակերտ,
Եւ մեծաւ բըզզանօք սըրեն զայրոյթ վըրէժխընդիր,
Հոտ թուխ ի յարկըս ծաւալի, և ի ներքուստ ժայռից հընչեն
Փապարք ի կոյր սօսաւիւն, գընայ ընդ սին ծուխ ընդ այերս։
Տաժանելոցըն Լատինաց յայնժամ և այլ ինչ արկած
Պատահեալ, խորին սըգով լընու զամբոխն առ հասարակ.
Քանզի դըշխոյն ի տեսանել մերձեալ ի յարկս ըզթըշնամին,
Ըզպարիսպըս վըտանգեալ, հուր ի տանիս բոցածաւալ,
Եւ ոչ ուրեք ըզհաւատուլեան երևեալ զօրս ընդդիմամարտ,
Եւ ոչ ըզգունդըս Տուրնեայ, կարծէ եղուկն ըզպատանին
Անկեալ մենամարտիւ, և առ յանկարծ վըշտին խռովեալ,
Զարեացպատճառ զանձըն գոչէ և եղեռանըն պատճառ.
Խօսի բազում ինչ մոլեգին ի կըից անտի խելայեղեալ,
Եւ ըզհանդերձսըն ծիրանիս պատառոտէ օրհասական,
Ըզհանգոյց տըգեղ մահուն բարձր ի գերան պարանդեալ։
Եւ իբրև ազդ եղև հիքաց լատինուհեաց մահ դըշխոյին,
Դըստրիկըն նախ Լաւինիա խըզէր ըզվարսըն գեղձանիկս,
Եւ զվարդագեղ այտսըն ցըտէր. ապա և այլ ամբոխն ըզնոյն
Գործեն մոլեալ, շուրջ ապարանքն հընչեն ի յողբ կականաւոր,
Ընդ քաղաքն ամենայն գոյժ աղետիցըն ծաւալի,
Բեկանին սիրտք, ի ձորձ հերձոտ գընայ Լատին ահաբեկեալ
Ընդ ամուսնոյն ճակատագիր, և ընդ աւեր քաղաքին,



Զագրեալ զալիսըն փոշւով, և դառն անձին կըշտամբանօք,
Զի չընկալաւ իւր ի փեսայ ըզտրովացին Ենէաս։
Մինչդեռ Տուրնոս ի բացեայ պատերազմեալ, հալածէր
Ըզնըւազունըս փախըստեայս, ոչ ևըս բուռն, ոչ ևըս զոհ
Ընդ երկձիոցն արշաւան, ազդէն ի յունկն իւր մըտադիր
Օդք ըզշըըթնդըն քաղաքին, ըզկեղակարծ արհաւիրս,
Ըզխառնաձայն աղաղակ, և զողբ տըխուր կեղերջական։
Աւա՜ղ, ընդէ՞ր այդքան սըգով խռովեալ պարիսպքըդ դըղըրդին,
Եւ քանի՞ ի հեռուստ անտի հընչէ աղաղակ.
Զայս ասացեալ, և առ ահին սանձեալ ըզկառս՝ ըզկայ առնու։
Բայց քոյր նորին, այն որ ի դէմըս Մետիսկեայ կառավարի
Նըրասանակ ի ձեռին վարէր ըզկառս և ըզձիան՝
Այսպէս առ նա ձայնէ. Մըտցուք, Տուրնէ՛, ըզհետ տրովացւոց
Ընդ որ նախկին մեզ յաղթութիւն հորդէ ուղի. են իսկ այլք
Որ կարասցեն պատերազմաւ պահ ունել տանց. մինչ Ենէաս
Ընդդէմ Իտալաց դիմեալ այլուր մըղէ ճակատ,
Հարցուք ըզտեկրացիս ծանու ձեռամբ. չես ի ստորև
Ոչ թըւով և ոչ փառօք պատերազմի։ — Առ որ Տուրնոս. (Նախկին
Վաղ իսկ ըզքեզ, քոյր իմ ծանեայ յորժամ հնարիւք զուխտ մեր
Խափանեցեր ի պատերազմս յայս դիմադրաւ. արդ ընդունայն
Հնարիս պատրել զիս դիցուհիդ. այլ դու յումմէ՞ առեալ պատուէր՝
Ի դիւցընկէց բարձանց իջեր այդքան բազում կըրել ճըգունս.
Ի տե՞ս թերևս աղխողորմ մահու հիքի հարազատիդ.
Զի՞նչ գործեցից, ո՞ր բախտ տացէ այսուհետև ինձ փըրկութիւն.
Տեսի աչօք իմովք ըզյաղթըն Մուրրանոս, քան զոր չէր ոք
Սիրելագոյն ինձ, ի հասայր վիրաց պարտեալ՝ զիս կարդալով.
Եւ չարաբաստն անկաւ Ուփենտ, զի մի՛ տեսցէ զմեր նախատինս,
Ունին ըզզէնըս նորին և ըզդիակնըն տեկրացիք.
Արդ և զյարկա՞ց տեսից աւեր, այս և եթ ինձ պակասէր.
Զաջի՞ց վըրէժ ի Դրանկեայ ըզլուտանաց. տեսցէ՞ երկիր
Թիկնադարձոյց ըզՏուրնոս փախըստական. ա՞յդքան դըժնեայ
Իցէ մահ. դուք հաշտք ընդ իս լերուք ո՛վ դիք ըստորնակա՛նք,
Զի ինձ վերնոցն հակառակ պատահեն կամք, իջից առ ձեզ
Ի մեղաց ատտի անփորձ, վեհիցս հաւուց ոչ անարժան։
Մինչդեռ նա զայս խօսէր, ահաս Սագէս ի ձի փըրփըրերախ,
Սլացեալ ընդդէմ թըշնամեաց, և խոց ի դէմըս նետահար
Կարդալով ըզՏուրնոս, և զայս առ նա հեգոյր աղերս.
Խնայեա ի քոյս, ի քեզ միայն է փըրկութիւն մեր ո՛վ Տուրնէ.
Շանթէ զինուք Ենէաս, և կործանել ահա սպառնայ
Զխաղական ըզբարձրաբերձ մատնել պարիսպս ի կորուստ.

Թուանին արդէն ջահք ըզտանեօք, ի քեզ են աչք Լատինաց,
Ակընկառոյց կան ի քեզ. յերկբայս արքայն կայ Լատինոս
Զո՞ ի փեսայ իւր կոչել, ընդ ո՞ւմ լինել նիզակակից.
Ահա չոգաւ զիւրովին հաւատարիմըն քո դշխոյն,
Խոյս ի լուսոյ ետ աչարեկ. գոռն Ատինաս ընդ Մեսապոս
Ըզդէմ ունին առ դըրան, շուրջ զերկոքումբքըն կան փաղանգք
Ամրակուռք, նիզակախուռն յառնեն ի վեր հունձք երկաթիք.
Իսկ դու ըզկառս ընդ ամայի աստ ընդ արօտ հոլովես:
Յապուշ հարաւ Տուրնոս՝ խռովեալ պէս պէս ի միտըս խորհըրդովք,
Եւ պըշուցեալ կայր անշըշունջ. եռայր ամօթ խոր ի սըրտին,
Եռայր զայրոյթ մոլեգին խառն ընդ մորմոք, սէր գըրգըռեալ
Ի ժանտից դըժոխային, և քաջութիւն ծանօթ անձին:
Այն ինչ ըստուերքը փարատեցան, և լոյս ի միտըս իւր դարձաւ,
Դառնացեալ ըզհրացայտ աչս ի պարիսպս անդըր շըրջեաց,
Հայեցաւ ի կառաց անտի ի մեծըն քաղաք,
Եւ ահա ուղխ բոցեղէն ընդ փայտակերտըս փոթորկեալ
Ցերկինըս կըցէր, շըրջապատեալ ըզմարտկոցաւ,
Զոր իւր իսկ պահանգակապ անուաշըրջիկ էր կառուցեալ,
Կամուրջս ի վերայ բարձրաւանդակս հաստատեալ:
Համա՛ յաւէ, մի՛ ևս յամեր քոյր իմ, յաղթէ ճակատագիր.
Երթիցուք ուր դէք և բախտըն դըժընդակ կոչեն ըզմեզ.
Պատրաստ կամ արդ ի մենամարտ ընդդէմ Ենեայ, պատրաստ կրել
Կամ աւասիկ որ ինչ դառնինք ինձ առաջի կան ի մահու.
Մի՛ ևըս զիս անփառունակ, քոյր իմ, տեսցես. թող ինձ, խընդրեմ,
Նախ քան ըզմահ մոլեգնել զայս մոլեգնութիւն: — Եւ ընդ բանին
Ընդոստ յերկիր էջ ի կառաց, դիմեաց ընդ զէնս ընդ թըշնամիս՝
Լըքեալ ըզքոյրըն տըխուր, եհերձ ըզգունդս արշաւակի.
Եւ որպէս ժայռ ի բարձանց լերին կործեալ ի մըրըրկէ,
Կամ ի թօնից ողողմանէ կամ ի տարեաց հոլովելոյ,
Սաստիկ ոլորմամբ վայրաբերի գահավէժ
Լեառն աչագին ըզդեռնի հարեալ թափով ոստնու ի վեր,
Զայր և զանդեայ և ըզմայրիս աղխաղխելով ընդ իւր բերեալ.
Այսպէս Տուրնոս ցըրուեալ ըզգօրս՝ դիմէ յամուրըս քաղաքին,
Ուր բազմագոյն ճապաղիք արեանց զերկիր ողողէին,
Ուր ի շկահիւն գեղարդեանց հընչէին օդք, և ձեռամբ
Նըշանացի արարեալ՝ աղաղակէ ձայնիւ մեծաւ.
Խնայեցէք, ո՛ Հռուտուլք, ամփոփեցէք Լատինք ըզզէնս,
Իմ է որ ինչ սահմանէ բախտ, ինձ կատարումն ուխտին է անկ
փոխանակ ձեր, ինձ զէնուք զելըս մարտին է սահմանել:
Որք ի միջի անդ կային զօրք, ի բաց կացին, ետուն տեղի,



Եւ հայրն Ենէաս ի լուր անուանըն Տուրնոսի
Թողեալ զամուրս, և զբարձրամուր թողեալ դըղեակըս վաղընդփոյթ,
Եւ ձեռընթափ ի բնաւից լեալ ի հնարից, դիմեաց զուարթ
Ցասպարէզ. շառաչէին զէնքըն զիւրև զարհուրելի.
Որպէս Աթոս, որպէս Երիքս, որպէս ինքնին հայրն Ապենին,
Յորժամ շարժեալ սըղոցիւքըն մըրմըռայ յոքնատատան,
Եւ բերկրի ըզձիւնապատ գագաթն ընդ օդս ամբարձեալ:
Յայնժամ Հռուտուլք և Իտալք և տրովացիք առ հասարակ
Այլ քան զընկեր պըշուցեալ ակընկառոյցք ի նա կային:
Որք պարըսպացըն բարձանց կային ի պահ, և որք խոյիւ
Զըստորոտս հարկանէին, եդին ըզզէնս յանձնէ ի բաց.
Ինքն իսկ ապշեալ կայր Լատինոս ընդ երկոսին իսկ յաղթ հըսկայս,
Ի տարակոյս կողմանց երկրի զինուք հասեալս ի մենամարտ:
Իսկ նոքա, իբրև բացաւ յարձակ դաշտի անդ ասպարէզ,
Ձըգեալ գեղարդն ի հեռուստ՝ յարձակին բուռըն դիմեցմամբ,
Եւ ի շաչիւն վահանացըն պըղընձեայ՝ նախաձեռն
Առնեն մարտին. հընչէ երկիր, նոքա կըրկնեն խիտ ընդ խիտ
Ըզբաղխիւն նիզակաց. խառնի անդ բախտ ընդ քաջութեան.
Իբր ի սիլեան մեծ անտառի, կամ յերկնաբերձըն Տիբուրնոս,
Յորժամ կըրկին ցուլք ոխերիմք ընդդէմ միմեանց դիմեն ի մարտ.
Ահաբեկեալ խուսեն հովիւք, և համր աչիւ կայ ի զընին
Նախիրն համօրէն, հըծծեն երինջք, ո՞ յերկոցունց
Իշխեսցէ անդէոյն, ո՞ւմ հօտն ողջոյն հետևեսցի:
Նոքա՛ եղջերբքըն խեթկելով տան իրերաց վէրըս բազում,
Ըզպարանոց և ըզթիկունըս ներկանեն ի յորդ արեան.
Հեծէ անտառըն շուրջ ի բաց կըրկնեալ անդրէն ըզմըռընչիւն:
Ոչ ինչ այլազգ դաւնեան դիւցազն և տրովացին Ենէաս
Բաղխին յիրեար ասպարօք, շըռինդն ահեղ լընու զեթեր:
Ինքն Արամազդ բառնայ զկըշիռ ի մէտ ուղղորդ առ ի փորձ,
Ի նըժարըս բարձեալ զերկաքանչիւր ճակատագիր,
Զո՞ մարտն առնէ դատապարտ, յո՞ ծանրաբեռըն մտէ մահ:
Յայնժամ Տուրնոս յառաջ մատեաւ սուսերըն ի վեր կացեալ ուղ-
Բոլոր անձամբ, և ըզհարուածն իջոյց յատոխն իբր անվըտանգ: (ղորդ
Աղաղակ հարկանեն աչիւ Լատինք և տրովացիք,
Ճակատք երկաքանչիւր յակճիռըս կան. այլ խորտակեալ
Սուսերըն նենգաւոր, մատնէր զեռանդն ի հարուածին,
Եթէ ոչ հասանէր նըմա փախուստ յօգնութիւն:
Արագագոյն քան զԵւրոս արտաւ ի բաց, և տեսանէ
Անսովոր ի ձեռին երախակալ սուսերի,
Եւ զաջն ապազէն. զի ի լըծել իւր ըշտապաւ

Ի կառս ըզձիան՝ յախուռն ի մարտ դիմադրաւեալ,
Վ իպեն զըրոյցք Թողեալ նորա ըզհայրենին իւր ըզսուսեր,
Եւ զՄետիսկեայ կառավարին վաղակաւոր ածեալ յազդեր.
Բաւեաց երկաթն այն ընդ երկար ի գնալ տեկրեանց փախըստական,
Այլ ապա ի Հեփեստեան աստուածակերտ զինուցն ի փորձ,
Մահկանացուի վաղակաւորըն ձեռագործ՝ խորտակեցաւ
Ի հարուածի անդ որպէս սառըն դիւրաբեկ, և փայլէին
Բեկորքն ի շէկ աւազի. յայնժամ Տուրնոս յապուշ հարեալ,
Խոյս ետ ի դաշտըս տարադէմ, և այսր և անդր յածէր տարտամ.
Զի ամենուստ տեկրացիք խիտ բակ առեալ պաշարէին,
Եւ լիճ աստի լայնածաւալ, անտի պատէր բարձըր պարիսպ:
Ոչ ինչ նուազ Ենէաս, (Թէպէտ և ծունգ իւր նետահար
Դանդաղէր, և ոչ ներէր ճեպել զընթացս) ըզհետ մըտեալ
Ոտն ընդ ոտին պակուցելոյն հարեալ՝ զստոխըն խուճապէր.
Որպէս բարակ ասպականի ի գըտանելըն զեղջերու
Արգելեալ ի գետոյ, կամ ի խըրտուիլ կարմիր փետրոյ,
Յարձակի հաչելով. նա յերկիւղէ որոգայթից
Եւ բարձր ափանց խուսափէ դարձադարձիւ ընդ բիւր ուղի,
Այլ ումբրեանն ամեհի ահա հասեալ բերանաբաց,
Իբր ունելով զորսն ի շըրթունս՝ ըզկըլափունսըն կափկափէ
Ի զուր խածմունըս պատրեալ: Յայնժամ գոչեն զօրքն երկուստեք,
Ափունք և լիճք տան արձագանգ, և որոտայ երկին բոլոր.
Ինքըն փախչի, և ի փախչել անդ կըշտամբէ ըզՀըռուտուլս.
Ձայնէ ըզմի յանուանէ, խընդրէ զսուրն իւր ըզսուսեր:
Իսկ Ենէաս վըճռէ մահ և առ ետեղ այնըմ կորուստ,
Որ Տուրնեայ մերձիցէ. և արհաւիրս ի պակուցեալս
Արկանէ, կործանումըն քաղաքին ըսպառնալով.
Եւ Թէպէտ խոց, ոչ դադարէ ի վանելոյ ըզպատանին:
Հընգեակ ոլորտըս շուրջ գործեն արշաւանօք, և դարձ անդրէն.
Նոյնքանիցըս մերթ յայսկոյս և մերթ յայնկոյս երթևեկեալ,
Զի ոչ Թեթև ինչ կամ խաղուց կայր առաջի մըրցանակ,
Այլ ըզկենաց և զմահուանէն Տուրնեայ մըղէր պատերազմ:
Էր ձիթենի անդ ըստ դիպաց դառնասաղարթ վայրենի,
Նուիրեալ Փաւնեայ և ի պաշտօն երբեմն առեալ ի նաւորդաց,
Ուր փըրկեալ ի մըրըրկէ՝ սովոր էին լաւրենտեան դից
Տախտակ արգադիր կախել և ձորձս ի նուէր.
Բայց տեկրացւոց անխըտիր հատեալ ըզբունն էր սըրբազան,
Առ ի կարել յանխափան դաշտավայրի տալ պատերազմ.
Անդ կայր նիզակն Ենեայ՝ մըղեալ անդր ի Թափոյ, խորամուխ
Ի կարծր արմին. զայն դարդանեանըն գուն գործէր կորզել ի բաց,



Հասանել ախոյան ըզհետ, որում չէհաս ընթացիւք:
Յայնժամ Տուրնոս խելացնորեալ յահէն, գոչէ. Ցեա ո՛վ Փաւնէ,
Ողորմեա ինձ. և դու երկիրդ բարերար, մի Թողուր
Զերկաթդ ի բաց, եԹէ զպատիւ քո անարատ միշտ կալայ,
Զոր անսուրբ արարին Ենեանք զինուք: Ասաց, և ոչ
Ընդունայն եղև նըմա կարդալ զաստուածն յօգնութիւն.
Զի Ենեայ ընդ երկար առ կարծր արմին գուն գործեալ,
Ոչ զօրացաւ ըզկոճեղըն լուծանել ըզխածուած:
Եւ մինչդեռ նա ճըգնէր ուժգին, ահա դարձեալ անդր հասանէ
Դաւնեանըն դիցուհի ի կերպարանըս Մետիսկեայ
Եւ անդրէն ըզսուսերն եղբօր իւրում մատուցանէ:
Ցասնու Աստղիկն ընդ այնքան յաւերժհարսին յանդըգնութիւն,
Եւ մատուցեալ խըլէ ըզտէգըն խորամուխ ի կոճեղ:
Շնչա վառեալ խըրոխտք ի զէն և ի խրախոյս, մին ի սուսեր
Վըստահացեալ, միւսն ի նիզակ իւր ամեհի յոխորտացեալ,
Անժոյժք ի փորձ Արիսին արձանանան կան դէմ ընդ դէմ:
Ամենազօրն յայնժամ արքայն երկնից խօսի առ Յունոյ,
Որ ի վերայ խարտեաշ ամպոյ կայր ճակատուցն երկուց ի զնին:
Ո՞ր ինչ մարտիդ, դըշխոյ տիկին, յետոյ ապա եղիցին ելք.
Գիտես զայն, և ոչ ժըխտես, զի Ենէաս կացցէ ընդ դիս
Ի յերկինս, ճակատագիր ըզնա յաստեղս ամբարձցէ.
Զի՞ ես հնարիս, որո՞վ յուսով կաս ի վերայ ցուրտ ամպոյդ.
Էր ինչ արժան դիւցազին ի մահացուէ առնուլ հարուած,
Դարձուցանել Տուրնեայ զսուսերն յափըշտակեալ, և կազդուրել
Զայժ պարտելոց. զի իմ առանց քո Յուտուրնա էր ձեռընհաս.
Արդ դադարեա, և յաղերս մեր խոնարհեա, մի անմըռունչ
Մաշիր հոգով, քաղցր ի շըրթանց քոց յայտնեսցին մեզ ըստէպ
Վիշտք քո տըխուրք. եհաս վախճան. շատ իսկ ընդ ծով և ընդ ցամաք
Յածեցուցեր ըզտրովացիս, լուցեր ըզմարտն եղեռնաւոր,
Քակտեցեր զարքունիս, խառնեցեր սուգ ընդ հարսանիս.
Ոչ ևըս փորձ ներեմ փորձել: — Այսպէս կընքեաց Արամազդ:
Իսկ սատուռնեան դիցուհին աչք ի խոնարհ կըրկնէ այսպէս.
Քանզի ծանօԹ իսկ էին կամք քո ինձ, ո՛վ մեծդ Արամազդ,
Ակամայ Թողի զՏուրնոս, Թողի զերկիր. ապա Թէ ոչ,
Ոչ զիս արդ յամպեղէնս յայս ի դահոյս տեսանէիր
Մընացեալ՝ կրելով զարժանն և զանարժան. կայի մնայի
Ի նըմին իսկ ճակատու բոցովք պատեալ, և ձայն տայի
Տեկրեանց ի մարտ ոխերիմ. յորդորեցի ըզՅուտուռնա,
Ոչ ժըխտեմ, հասանել հեքի եղբօրն յօգնութիւն,
Եւ ուր նըմա յանդըգնել վասըն կենաց հարազատին

Ի մեծագոյնս, այլ մի՛ ձգեւլ նեա, մի՛ զաղերըն լարել:
Ա.յլ արդ երդուեալ յաղթերակն ըստիւգական անմեղկելի,
Ի միայն աշխարկու գիցըն վերնոց, հրաժարեմ արդ.
Եւ ատեցեալըս տամ տեղի այսուհետեւ ի մարտէ.
Զայս եւեթ, զոր չարգելուն ճակատագիրք, խնդրեմ ի քէն
Վասըն փառաց քոց պարգեւել Լատինի. զի ի կըուել
Ուխտ ընդ իրեարըս հաշտութեան, (թող կըռեսցեն), եւ ի զօդել
Օրէնօք եւ դաշամբք ըզբարեբաստ հարսանիս,
Մի՛ Լատինաց բընիկ բնակչաց հրամայեսցես փոխել զանուն,
Մի՛ տրովացիս եւ տեւկրացիս տացես կոչել, մի՛ փոփոխել
Ըզձեւ եւ ըզբարբառ. այլ Լատին կացցէ յաւէրժ,
Կացցեն արքայք ալբայեցիք, հռովմէական կացցէ զըրոհ
Իտալայնով քաջութեամբ. անկաւ Տրովա, թող զի անկցի
Եւ տրովականն ընդ իւր անուն: — Ա.ռ որ ընդ քիմըս ժըպտելով
Հաստիչն էից եւ մարդկան, յաւել. Ո՛վ քոյրդ Արամազդայ
Եւ տիկին, ո՛վ կրօնեանըդ դու զաւակ, ի՞բր այդքան
Յուզին մըրրիկք ի քեզ ցասման. զի՞ջո զքոյին տարապարտուց
Զայրոյթ բորբոքեալ. տամ զոր կամիս, պարտեալ ի քէն,
Տամ մըտադիւր. ըզհայրենի կալցին Ա.ւսոնք ըզսովորոյթ
Եւ ըզբարբառ, նոյն կացցէ նոցա անուն որ ինչ է արդ,
Ա.զգախառնեալ եւեթ տեւկրեանք բընակեսցեն ի միասին,
Օրէնս եւ ծէս ի կատարումըն սըրբութեանցըն յաւելից,
Տաց միաշուրթըն Լատինաց զօլ բոլորից. եւ որ անտի
Արենակից Ա.ւսոնաց յարիցէ ազգ, տեսցես ըզնա
Գեր ի վերոյ մահկանացուաց, գեր ի վերոյ կրօնիւք եւ դից.
Ոչ ոք յազգաց ջերմագոյն հըռչակեսցէ ըզքոյդ պաշտօն:
Ողոքեցաւ այսուիկ Հերա, շըրջեցան միտքն ի զուարթութիւն,
Եւ մեկնեալ երկնաճեմ, եթող յայնժամ զամպս ի ներքոյ.
Բայց ինքըն հայր յայնըմ վայրի այլ ինչ ի միտըն յեղյեղէր,
Բառնալ ի մարտէ անտի եղբօրն ըզՅուտուռնա:
Են եղերունք կըրկին, որ ժանտք ըստ զըրուցաց յորջորջին.
Զորըս գիշեր տարաժամ ընդ Մեգարայ գըժոխայնոյ
Ի նոյն երկունս եած ի լոյս, եւ ի հանգէտ պարոյրս իժից
Շըրջապատեաց, թեւս ի նոսա արագաթռիչըս յաւելեալ.
Յաթըռնիս Արամազդայ, առ սեամըս խիստ թագաւորին
Կան սոքա, մահկանացուաց ահ եղկելեաց արկանել
Յորժամ արքայն դից պատրաստէ ժանտախտ եւ մահ զարհուրելի,
Եթէ սպառնայ պատերազմ քաղաքանւոյ արժանահաս:
Դիւս ըզմին յայնցանէ երագաթեւ յերկնից բարձանց
Ա.րձակէ ի չարագոյժ գըտնալ ի հմայս առ Յուտուռնա.



Նա թեւածեալ սահի յերկիր երագամէտ որպէս մըրրիկ,
Ոչ ինչ այլազգ քան ըզաըլաք ամպախաղաց, զոր կիդոնիկ
Կամ պարթեւաղն աղեղնաւոր չարաթունիւ դեղեալ լեղեաւ
Զըդէ ի հարուած անբուժելի. նեան անծանօթ
Զըստուեր երագունըս շառաչմամբ հերձանէ:
Ա.յսպէս էջ գիշերածինն յերկիր ի ստոր. եւ ի տեսիլ
Իլիական բանակին եւ հռուտուլեանցըն ճակատուց՝
Ա.մփոփեցաւ յանկարծակի ի կերպ հաւուն փոքրըկան,
Որ ի շիրիմս յածեալ երբեմն եւ մենաւոր ի տամալիս,
Ի մըթան գիշերի տըխուր եղերս յեղանակէ.
Ի նոյն շըրջեալ կերպարան, եւ թեւածեալ ժանտըն ծըչիւ,
Ըզդիմօքըն Տուռնեայ ճախր անդադար առնոյր ի հիռ,
Թեւոցն ի բախիւն զասպար նորին բաբախելով.
Լուծանին արհաւրօք անդամքն ի նոր ինն ի թըմբիր,
Հերքն ի վեր դիզանին, ձայն ի հագագըն կըցի:
Իբրեւ ծանեաւ ի հեռուստ հէքըն Յուտուռնա ըզճիչ ժանտին,
Փետէր զարձակ վարսըս գըլխոյն, ցըտէր ըզդէմս եղնգամբք,
Կոծէր ըզկուրծս ասելով. Ի՞ւ արդ, Տուռնէ, քոյր քո օգնել
Քեզ կարիցէ. զի՞նչ հէքիս մընայ առնել, որո՛վ հնարիւք
Ընդերկարել քեզ ըզլոյս. ի՞բըր կարեմ ըզդէմ ունել
Ա.յնպիսումըն ծիւաղի. մեկնիմ ահա ի ճակատէս.
Մի՛ յաւելուք ինձ արհաւիրս հաւքըդ դըժնեայք. ոչ անծանօթ
Է ինձ թեւոցըդ բաղխիւն, եւ ոչ կըռիչ ձեր մահագոյժ.
Ոչ պատրեն մեծասաստ պատգամք վեհին Արամազդայ:
Զա՞յս ինձ նա հատուցանէ ընդ կուսութեանըս փոխարէն.
Ընդէ՞ր յաւէրժ ետ ինձ կեանս, է՞ր կորուսի զմահու՞ն պայման.
Մարթ էր ինձ այսքանեաց առնել վըշտաց իմոց վախճան,
Եւ ի ստուերս ընդ եղբօր իմում հէքի իջանել,
Եթէ էի մահկանացու. չէ ինչ յիմոց ատի հաճոյ
Եղբայր իմ, ինձ առանց քո. ընդէ՞ր իսկ ոչ բանան ինձ վիհք
Ա.նդընդոց, եւ չընկըղմուն ըզդիցուհիս ի ստուերս ի խոր:
Զայս ասացեալ աստուածուհին, եւ կապուտակ ածեալ քօղ
Ըզգըլխով, հեծեծանօք ընկլաւ ի գետըն խորասոյզ:
Բայց Ենէաս ըստուարաբուն ճօճելով տէգ ի ձեռին
Կայր ընդդէմ ոսոխին, եւ զայրագինըս բարբառէր.
Ո՞ւմ կաս, Տուռնէ, զի՞ յապաղես. ոչ ընթացիւք
Ա.յսուհետեւ է աստ պայքար, այլ մերձ ընդ մերձ ի սայր զինուց.
Փոխեա՛ց ի բիւր կերպարան, եւ արկ ի կիր որ ինչ հնարիւք
Որ ինչ զօրես քաջութեամբ. բարձր ի յաստեղըս թեւածեալ
Ա.մբարձիր, կամ խորասոյզ թագիր ի խորշըս երկրի:

Իսկ նա ըզգլուխ իւր շարժեալ. Ո՛չ, ասէ, բանք քոյին խրոխտք,
Ո՛վ վայրագ, ահ արկանեն զիս. այլ ի դից և ի ատելոյ
Արամազդայ երկիւղ է ինձ: — Եւ ոչ ևս այլ ինչ յաւել.
Այլ զաչս յածեալ՝ ետես ըստուար վէմ անհեթեթ վաղեմի,
Որ ըստ գիպաց ի դաշտին անկեալ դնէր սահմանաչափ՝
Խափան վիճից անդաստանաց, զոր դժուարաւ զօրէին
Բառնալ բերել շալակեալ կըրկին վեցեակ արք ընտրանաւ,
Որպիսիս արդ բերէ երկիր, դիմեաց դիւցազն արշաւասոյր
Յափշտակեաց զայն, և ի վեր կացեալ ձըգեաց ի թըշնամին.
Ոչ ըզգացեալ, ոչ զարշաւել իւր և դիմել, ոչ ըզբառնալ
Բաղկաւ ի վեր և ձըգել ըզվէմ ըստուար և անարգել:
Ծունկքըն գըթեն, պաղի արիւնըն մածանի ցուրտ ի սարսուռ.
Վէմ ինքնին հոլովեալ ընդ սին այեր, ոչ կատարել
Ըզխըստորոցն, և ոչ ածել ըզհարուածոյն զօրէ ըզթափ.
Որպէս յանուրջս, յորժամ ընկճէ զարտևանունս հանգիստ թըյլ
Ի գիշերի, ընդունայն թըւիմ ի ճեմ կամք ըղձակերոյք,
Անզօրք ի ջանս անդ գըտանիմք, և ոչ լեզու զօրէ ի զրոյց:
Ոչ ի մարմնի բաւէ կորով ընդելական, ոչ ձայն օգնէ
Եւ ոչ բարբառ. այսպէս Տուռնեայ՝ որ ինչ հնարէրըն քաջութեամբ՝
Ժանտ դիցուհին խափան եղեալ, անգործ առնէր զամենայն:
Յայնժամ խորհուրդք այլևայլ ի սիրտ նորա յուզեալ յածին.
Ի Հռուտուլս և ի քաղաք անդր ակնարկեալ յամէ ահիւ,
Եւ ի տեսիլ ըսպառնալեաց տիգին հարեալ ըզդողանի,
Յո՛ խուսել, եւ զօրութեամբ դիմել յոսոխըն վարանէր.
Ոչ ըզկառս և ոչ ըզքոյր իւր տեսանէր կառավար:
Մինչդեռ յամէր նա, Ենէաս ճօճէ ըզտէգըն մահահոտ,
Դիտէ զպատեհ, ձըգէ բոլոր անձամբըն զայն ի հեռուստ:
Ոչ այնպիսի թընդեն բոմբիւն քարինք ձըգեալք ի խոյոց,
Եւ ոչ այնպէս ճայթեն շանթիք. թռանի նիզակըն մահաբեր
Համգունատիպ թուխ մըրըրկի, և հերձանէ ըզլանջապահ
Զրահին եզերս, և զոլորտ եօթընկաշեանըն վահանի,
Մըխի շըկահելով ցոսկըր զըստին թափանցանց.
Կործանի հըսկայն խոցեալ ընդգըծելովք բարձիւք յերկիր:
Յառնեն յոտին կան Հռուտուլք հեծեծելով, մինչև լեառն
Համօրէն, կըրկնեն անտառք խորք արձագանգ. ինքըն խոնարհ
Աղաչաւոր աջ կարկառեալ, զաչս ամբարձեալ հեզու աղերս.
Պարտաւոր եմ յիրաւի, չիշխեմ ըզկեանըս պաղատել,
Արկ ըզբախտ քո ի կիր. այլ թէ իցէ սիրտ քո երբեք
Ընդ վիշտ ծնողի կարեկիր, խընդրեմ խնայել յալիս Դաւնեայ,
Զի հայր և քեզ եղև համգոյն Անքիսէս, տուր խնդրոյս զիս,



Կամ եթէ կամք այսպէս իցեն, զուրկ յարևէ ըզդիակն իմ.
Յաղթեցեր, տեսին Աւսոնք զիս քեզ նըկուն աջ կարկառեալ.
Քո հարսն է արդ Լաւինիա, մի՛ անդրագոյն ձըգեր ըզհեռ:
Յայնժամ դիւցազնըն քաջազէն ըզկայ առեալ, և զաչս ի բաց
Դարձուցեալ, ամփոփէր զաջ. այլ այն ինչ գութք ի սիրտ նորա
Ընդ աղերսն յուզէին, փայլէ զուսովք Տուռնեայ թըշուառ
Կամարըն մեծ պալարակապ պատանեկին Պաղլասայ,
Զոր տիգախոց տապաստ արկեալ նորա՝ կըրէր զայն ըստ անձին,
Նըշանակ սխերիմ՝ որ ճարմանդիւքն էր ծանօթ.
Ընդ ակնարկել դիւցազինն ի յիշատակ դառըն վըշտին,
Բորբոքեալ ի զայրոյթ զարհուրելի. Զերծանիցիս,
Ասէ, յինէն վառեալդ յիմոցըն կողոպուտ. Պաղլաս քեզ զայս
Կըշռէ հարուած, Պաղլաս ըզքեզ ստուերըս այսուիկ սատակէ,
Ի ժանտաժուտ արենէդ խընդրեալ վըրէժ: — Եւ ընդ բանին
Մըխէ զերկաթն ի սիրտ նորին. լուծան անդամքըն ցըրտահար,
Դառնահեծ ի ստուերըս կեանքըն զայրացեալ ետուն խոյս:

СОРА. им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0306962